Հ. Մ. ՈՒԹՄԱՋՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԸ IX-X ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9(47.925)
Ռ-27

Հ. Մ. ՈՒԹՄԱԶՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԸ IX—X ԴԱՐԵՐՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР
12479
ՀՍՍՀ Գ. Ա. Ա. Ի. Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1958

Տպագրվում է
Երևանի Պետական համալսարանի
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

19269

Айкарам Мурадович
УТМАЗЯН

СЮНИК В IX—X ВВ.

(На армянском языке)

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН — 1958

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

«Սյունիքը 9—10-րդ դարերում» աշխատությունը գրելիս ղեկավարվել ենք այն համոզմունքով, որ միջնադարյան Հայաստանի ամբողջական պատմությունն ստեղծելու համար անհրաժեշտ է նրա առանձին նահանգների պատմության մշակումը:

Այդ անհրաժեշտությունը առավել զգալի է դառնում նրանով, որ ուսումնասիրողները հետազոտել են գերազանցապես Բագրատունիների պատմությունը, աչքաթող անելով միջնադարյան Հայաստանի մյուս հատվածների (Սյունիք, Վասպուրական և այլն) պատմությունը:

Աշխատությունը գրել ենք 1948 թվականին: Հրատարակության հանձնելուց առաջ այնտեղ կատարել ենք խմբագրական բնույթի ուղղումներ:

Հ. Ուր.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տվյալ թեմային վերաբերող սկզբնաղբյուրները երկու կարգի են՝ հայկական և օտար։ Հայկական աղբյուրներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ մատենագրական և վավերագրական։ Հայ մատենագիրներից մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի Սյունիքի մասին վկայություններ ունեն Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Վարդան Արևելցին, Մովսես Կաղանկատուացին, Շապուհ Բագրատունին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ։ Սրանցից մեզ համար ամենակարևոր աղբյուրներն են առաջին երկուսը, որոնք ընդարձակ տեղեկություններ են տալիս մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի Սյունիքի մասին։ Իսկ մնացածները տվյալ թեմայի համար երկրորդական նշանակություն ունեցող պատմիչներ են, որովհետև նրանք տալիս են հատուկենտ, երբեմն պատահական վկայություններ։ Ուստի, իբրև սկզբնաղբյուրի, պետք է խոսենք միայն առաջին երկուսի մասին։

Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյան։ Սյունյաց տոհմային պատմիչ։ Ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսին, մահացել՝ 1305 թվին։ Նա սյունեցի է. «Ի մօրէ ծնեալ Սիսական,— վկայում է ինքը իր մասին,— և ի հօրէ՝ Օրբելեան, որ Տարսայիճ կոչի»։ Թեև նա Տարսայիճ իշխանի որդին էր, բայց իր հորեղբայր Սմբատը, որդի չունենալու պատճառով, որդեգրում է նրան։ Ստեփանոս Օրբելյանն ստանում է կրոնական կրթություն։ Պատանի հասակից դառնում է դպիր, ապա՝ սարկավագ, քահանա, իսկ 1285 թվին գնում է Կիլիկիա

և օծվում եպիսկոպոս ու դառնում Սյունիքի մետրոպոլիտ։ Իր ժամանակի համար նա կրթված և առաջադեմ մարդ էր։

Ստեփանոս Օրբելյանը գրել է մի շարք աշխատություններ, բայց նրանցից կարևորագույնը, որը նրան դարձրել է առաջավոր մատենագիր, «Պատմութիւն նահանգին Սիսական»[1] աշխատությունն է։ Թեև այդ աշխատությունը, ինչպես ցույց է տալիս վերնագիրը, նվիրված է Սիսական նահանգի պատմությանը, բայց կարևոր աղբյուր է նաև, ընդհանրապես, մեր ժողովրդի պատմության համար։ Որպես Սիսական տոհմի ջատագով, Ստեփանոս Օրբելյանը որոշել է գրավոր մի հուշարձան կանգնեցնել իր աշխարհիկ և հոգևոր նախորդների գործունեության մասին։ «Վաղ աւուրբք,— խոստովանում է ինքը,— և յոլով ժամանակօք՝ եռայր յիս տարփումն բաղձանաց, և խորհէի, խոկայի, խնդրէի, սակաւ ինչ գրէթէ ընդ լոմային պղտաբերել ի սուրբ եկեղեցիս երգնահանգէտ և աստուծաբնակ տանս Սիսական, այսինքն ընձեռել գրով ըստ իմում կարի զպայազատութիւն նախարարութեան և զմեծ նահապետութիւն բարձր իշխանութեանս Սիւնեաց, և զնախագահութիւն վսեմական և աստուածամեծար աթոռոյ հայրապետութեանս այսմ»[2]։

Եվ իրոք, Ստեփանոս Օրբելյանի աշխատությունը մի կողմից Սիսական տոհմի նախարարների ու մեծամեծ իշխանների, մյուս կողմից՝ Սյունյաց եպիսկոպոսների զուգահեռ պատմությունն է։ Ինչպես ինքն է ասում. «Սկսեալ յառաջին նահապետէն Սիսակայ մինչև ի բաց բարձումն նոցին։ Եւ յառաջին եպիսկոպոսէն Սիւնեաց ի Գրիգորէ մինչև ի մերս ժամանակ թշուառութեան»[3]։ Սիսական տոհմի վերացումից հետո նա ամբողջապես կանգ է առնում եկեղեցու և, հատկապես, Տաթևի հայրապետական աթոռի պատմության վրա։ Ճիշտ է, նա տալիս է նաև Օրբելյան տոհմի և 12—13-րդ դարերի

[1] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911 թ.։ Մեր հետագա բոլոր մեջբերումները կատարված են այս հրատարակությունից։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 8։

[3] Նույն տեղում, էջ 11։

Սյունիքում գերիշխող իշխանական այլևայլ տոհմերի պատմությունը, սակայն այդ անում է համառոտ ու թեթևակի։

Մատենագրական արժեքի տեսակետից Ստեփանոս Օրբելյանի պատմությունն առավել վստահելի է և արժանահավատ, քան շատ և շատ մատենագիրների պատմությունները։ Բանն այն է, որ Ստեփանոս Օրբելյանը մեր մատենագրության այն բացառիկ դեմքերից է, որը գրել է ո՛չ թե ի լրոյ, այլ իրական փաստաթղթերի, վավերագրերի, նախորդ մատենագիրների, այլևայլ սկզբնաղբյուրների հիման վրա։ Նա նախ հետաքրքրվել է, թե արդյո՞ք իրենից առաջ ոչ ոք չի գրել Սիսական աշխարհի պատմությունը. «Յոլով երկօք որոնեալ՝ ոչ գտաք յառաջնոցն զյիշատակ սոցա ընդ գրով արկեալ, և զկնի եկելոցս թողեալ արձան գովելի»[1]։ Չգտնելով այդպիսի «արձան գովելի», ինքը ձեռնարկել է գրելու այդ աշխարհի պատմությունը։ Բայց ի՞նչ աղբյուրների հիման վրա գրել. ահա առաջին հարցը, որ ծառացել է նրա առաջ։ Նա սկզբից հետախուզել է այլ երկրների աղբյուրները. «Բազում խոյզ քննութեան ի մէջ առեալ՝ տեղեկացայ յաշխարհս հեռաւորս և մօտաւորս, ի վանորայս և յարկեղս կտակարանաց, այլև ի գիտունս և ի տեղեակս հնագէտ պատմութեանց, և ոչ ինչ գտաք յիշատակ զրուցաբանութեանց ուրոյն այսմ աշխարհի և կամ տեղեկութիւն իրաց»[2]։ Այդ աղբյուրներում չգտնելով բավարար տեղեկություններ իր աշխարհի մասին, նա որոնումներ է կատարել հայ մատենագիրների մոտ։ Նա օգտագործել է «հին և նոր պատմագրաց հայոց»։ Դրանք են Ագաթանգեղոս, Եղիշե, Ղազար Փարպեցի, Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Ղևոնդ, Ներսես, Սամվել Կամրջաձորեցի, Պետրոս Սյունյաց եպիսկոպոս, Ուխտանես, Մաքենացոց առաջնորդ Սողոմոնի թղթերը, Հովհաննես պատմագիր, «Աղվանքի պատմութիւն» (Մ. Կաղանկատուացի), վրաց «Քարթվլիս Ցխովրեբա» թղթերը[3]։ Սակայն, ինչպես երևում է, մատենագիրներն անհրաժեշտ տեղեկություններ չեն տվել (իրոք,

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 8։

[2] Նույն տեղում, էջ 10։

[3] Նույն տեղում, էջեր 24, 25, 38, 39, 63, 88, 89, 99, 100, 106, 505։

հիշյալ մատենագիրների մոտ չկան բավարար տվյալներ Սյունիքի ամբողջական պատմության վերաբերյալ), ուստի Ստեփանոս Օրբելյանը դիմել է նոր աղբյուրների։ Այդ աղբյուրներն են՝ Սյունյաց կաթողիկոսների շրջաբերականները, գավառների եկեղեցական հարկերի հին դավազանները (հարկացուցակներ), եկեղեցիների և տաճարների պատերի վրա եղած արձանագրությունները, Տաթևի վանքում պահպանվող եկեղեցական վավերագրերը (սիգելներ) և հրովարտակները, հայոց թագավորների, կաթողիկոսների և Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների հին նամակները, որոնք մնացել էին Տաթևի վանքի արխիվում։ Նա օգտագործել է նաև ձեռագրերի հիշատակարաններ, ժողովրդական ավանդություններ, ակնատես մարդկանց վկայություններ և այլն[1]։

Այս կարգի աղբյուրների օգտագործումը Ստեփանոս Օրբելյանի աշխատությունը ոչ միայն դարձնում է հավաստի ու արժանահավատ, այլև իրեն՝ յուրահատուկ մատենագիր, գիտնական պատմիչ։

Նա ո՛չ միայն ինքն է օգտագործել արխիվային այդ աղբյուրները և դրանց հիման վրա շարադրել իր պատմությունը, այլև նրանց մի մասի բնագրերը ամենայն բարեխղճությամբ, առանց աղավաղումների, լրիվ մեջ է բերել իր պատմության մեջ և հասցրել մեզ։ Դրանցից շատերին մենք ծանոթ չէինք լինի առանց Ստեփանոս Օրբելյանի, քանի որ հետագա ավերումների ժամանակ դրանք մեծ մասամբ ոչնչացել են։ Այդ տեսակետից նրա աշխատությունը նաև արխիվային նյութերի կենդանի շտեմարան է։

Բնական է, որ Ստեփանոս Օրբելյանն իր տեսած արխիվային և վիմագիր բոլոր նյութերը չէ, որ մեջ է բերել։ Նրանց մի մասը արդեն նրա ժամանակ անվերծանելի է եղել և, բացի այդ, ինքը, որպես հետազոտող, քննադատաբար է մոտեցել իր աղբյուրներին, ընտրություն է կատարել և մեջ է բերել, իր կարծիքով, պիտանին ու օգտակարը։ Ինչ խոսք, որ շատ նյութեր, որոնք նրան, որպես կղերական պատմիչի, պիտանի չեն

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 10, 11, 23, 72, 105, 505։

թվացել, պիտանի կլինեին մեզ համար։ Նա խոստովանում է՝ «Պիտանիքն միայն ի մէջ անցեալ արձանացին մեզ»[1]։ «Ի բաց ձգեալ և զունայնախոյզ զրաբանութիւնն զի մի տաղտկասցին լսողք. և կարճաբան վիպասանութեամբ ցուցաք համառօտիւ զառաւել պիտանին և զճահագոյնն»[2]։ Եվ էլի. «Զոր և տեսեալ մեր զայս ամենայն նամակ վճռի ձեռագիր իւրեանց իսկ շնորհողացն հնացեալ և ծայրատեալ, զոր ի բազմացն զսակաւն կարացաք ընթեռնուլ. և վասն երկարութեանն տաղտկութիւն համարեցաք լսողացդ (և ոչ) եղաք ի մատենիս»[3]։ Սակայն թեկուզ այն փաստաթղթերն ու արձանագրությունները, որոնք նա մեջ է բերել իր աշխատության մեջ, մի պատկառելի թիվ են կազմում, և որոնք շատ կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում հատկապես սոցիալ-տնտեսական հարաբերությունները, աշխատավոր մասսաների իրավական ու սոցիալական դրությունը լուսաբանելու համար։

Այնուամենայնիվ, Ստեփանոս Օրբելյանի մոտ կան ավանդություններ, առասպելներ, չափազանցություններ, հատկապես նրա աշխատության առաջին մասում, մինչև ԼԳ գլուխը, ուր տալիս է Սիսական իշխանների պատմությունը՝ սկզբից մինչև 9-րդ դարի սկիզբը։ Այդ մասը շարահյուսված է նախորդ մատենագիրների վկայությունների, առասպելների հիման վրա։ Միայն ԼԳ գլխից հետո նրա աշխատությունը պատմական տեսակետից դառնում է հավաստի և արժանահավատ, որովհետև այն շարահյուսում է արխիվային փաստաթղթերի հիման վրա։

Որպես մեր թեմայի հիմնական սկզբնաղբյուր, մենք չենք կարող բավարարվել Ստեփանոս Օրբելյանի միայն մատենագրական արժանահավատությունը նշելով։ Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև նրա աշխարհայացքը։

Անվիճելի է, որ մեր մատենագիրները, ճնշող մեծամասնությամբ, եղել են հոգևորականներ, ուստի նրանց աշխարհայացքը հարազատ ու ընդունելի էր կղերա-ֆեոդալական

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 14։
[2] Նույն տեղում, էջ 505։
[3] Նույն տեղում, էջ 229։

պատմագրության համար։ Այդ է պատճառը, որ նրա ներկայացուցիչները որպես անառարկելի ճշմարտություն ընդունել են պատմիչների վկայությունները և նրանց հիման վրա «մշակել» մեր պատմությունը։ Ֆ. Էնգելսը, ծաղրելով 19-րդ դարի գերմանական պատմաբանների ու պետական իմաստունների դյուրահավատությունը, գրում է, որ նրանք հալած յուղի տեղ են ընդունում «այն բոլոր մտապատրանքները, որ դարաշրջանն (խոսքը միջնադարի մասին է — Հ. Ուր.) ինքը կամ այդ ժամանակի իդեոլոգներն ստեղծում են այդ նույն ժամանակաշրջանի վերաբերմամբ»[1]։

Էնգելսի խոսքերը լիովին վերաբերում են նաև հայ ժողովրդի պատմությամբ զբաղված կղերա-ֆեոդալական պատմաբաններին ու բանասերներին։ Դրա հետևանքը եղել է այն, որ պատմության բազմաթիվ հարցերի շուրջ ստեղծվել է ավանդական կայուն տրադիցիա։

Բուրժուական պատմագիտությունը փորձեց որոշ հարվածներ հասցնել կղերա-ֆեոդալական այդ ավանդական պատմագիտությանը, սակայն չկարողանալով հաղթահարել այն, ինքն էլ գնաց նրա հետքերով՝ կառչեց նրա ստեղծած ավանդական կայուն տրադիցիաներին։ «Տրադիցիան,— գրում է Էնգելսը,— մեծ արգելակ է, դա իներցիայի ուժն է պատմության մեջ։ Բայց նա միայն պասիվ է և այդ պատճառով պետք է կործանվի»[2]։

Միայն սովետահայ պատմագիտությունը, զինված մատերիալիստական մեթոդոլոգիայով, սկսեց կործանել կարծրացած ավանդական տրադիցիաները և մշակել հայ ժողովրդի իսկական պատմությունը։

Պարզ է, որ մեր դպրության սկզբից նրա մենաշնորհն իր ձեռքը վերցրեց հոգևորականությունը։ Հայագիտական երկերում հաճախ գովասանքի և երախտագիտության խոսքեր են ասվել եկեղեցու և հոգևորականության հասցեին այն բանի համար, որ նրանք ստեղծել են դարավոր կուլտուրա, համաշ-

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 44։

[2] «Պատմական մատերիալիզմի մասին», տես Մարքսի-Էնգելսի ընտիր երկերի 1-ին հատոր, Երևան, 1941, էջ 464։

խարհային հռչակ վայելող մատենագրություն, որ նրանք տվել են Եղիշե, Եզնիկ, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի և այլն։ Բայց մոռացվել է և չի խոսվել այն մասին, որ հենց այդ հանգամանքն ունի նաև մի խոշոր պակասություն՝ մեր հոգևորական պատմիչները մեր ժողովրդի պատմությունը տվել են խիստ միակողմանի։ Նրանք փաստորեն շարադրել են ոչ թե ժողովրդի պատմությունը, այլ տիրող իշխանների, թագավորների, կաթողիկոսների և եպիսկոպոսների պատմությունը։ Ժողովուրդը, որպես «տգետ» և «ռամիկ», դուրս է գցվել նրանց «քաղցրաբան պատմութեան» էջերից։

Մեր պատմիչները դեպքերի սոսկ էմպիրիկ շարադրողներ չեն։ Նրանք ոչ միայն տոհմիկ պատմիչներ են և խիստ կողմնապահ իրենց տոհմի հանդեպ, այլև ընդհանրապես տիրող դասակարգի շահերի և տիրող քրիստոնեական գաղափարախոսության արտահայտիչներ են։ Նրանց գաղափարական զինանոցը աստվածաշունչն է, որտեղից վերցնում են իրենց բոլոր զենքերը։ Էնգելսը գրում է, որ միջնադարում «հոգևորականներն իրենց ձեռքն առան մտավոր կրթության մենաշնորհը, և դրանով իսկ կրթությունը գերազանցապես աստվածաբանական բնույթ ստացավ, ինչպես դա տեղի է ունենում զարգացման բոլոր սկզբնական աստիճանների վրա։ Քաղաքականությունն ու իրավագիտությունը, ինչպես և մնացած բոլոր գիտությունները, հոգևորականների ձեռքում աստվածաբանության հասարակ ճյուղեր դարձան և նրանց հիմքում դրվեցին նույն սկզբունքները, որոնք տիրում էին աստվածաբանության մեջ։ Եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին»[1]։

Ուստի ամեն անգամ որևէ պատմիչի մասին խոսելիս, պետք է նախ և առաջ պարզել, թե ո՞ր դասակարգի ներկայացուցիչ է նա, սոցիալական ինչպիսի՞ դիրքերում է կանգնած, ի՞նչ աշխարհայացքի տեր է և ի՞նչ մեթոդոլոգիա ունի։ Երբ մենք հարցին մոտենանք այս տեսանկյունով, այդ ժամանակ

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 45—46։

պատմիչների բազմաթիվ վկայություններ կհասկացվեն բավականաչափ այլ կերպ, քան ուզում են նրանք հավատացնել մեզ։ Այս տեսակետից մոտենալով, Ստեփանոս Օրբելյանի մասին պետք է ասել հետևյալը։

Ինչպես տեսանք, Ստեփանոս Օրբելյանը իր ծագումով ազնվական է. նա ունեցել է մեծաքանակ կալվածքներ, բացի այդ, քսան տարի շարունակ եղել է Սյունյաց եկեղեցու մայր աթոռի առաջնորդ և հենց իր այդ առաջնորդության ժամանակ գրել է իր գիրքը։ Նա հավատացնում է, որ ինքը, լինելով իր տոհմի հայրենասեր, ցավ է զգացել, որ մոռացության են մատնվում իր աշխարհի իշխանների և հայրապետների մարմնավոր և հոգևոր գործերը, որ ժամանակի փոշին ծածկում է նրանց մասին եղած գեղեցիկ զրույցներն ու գովասանքի արժանի գործերը։ Հենց այդ պատճառով էլ ինքը ցանկացել է նախնիների այդ «պիտանիս» և «գովելիս» հաղորդել գալիք սերունդներին։ «Մեք ոչ կամեցաք,— ասում է նա իր աշխատության նախաբանում,— անփոյթ առնել և ընդ անգիտութեան խաւարաւ թողուլ և կորուսանել զորպիսութիւն այսց իշխանութեանցս, և զանազան զրոյցքս պիտանիս և գովելիս հոգևոր և մարմնական գործոց իշխանաց և հայրապետաց. և այս երկու պատճառաւ. մի՝ զի մի կորիցէ առաջնոցն գովելի գործ քաջութեանցն։ Եւ մի՝ զի մի բնաւին ջնջեսցի, և յանգիտութիւն անկցի յզկնի եկելոցս յիշատակ առաջնոցն, և ժառանգութիւն եկեղեցեացս»[1]։

Սակայն, իր տոհմի իշխանների և բարի գործերը մոռացության չտալու մարմաջը չէ միայն, որ ստիպել է Ստեփանոս Օրբելյանին գրել Սիսական աշխարհի պատմությունը, այլ քաղաքական դասակարգային որոշակի նպատակը։ Նա գիտակցել է պատմության նշանակությունը և այն օգտագործել որպես զենք՝ իր ժամանակի քաղաքական և տնտեսական կնճռոտ հարցերը լուծելու համար։ Շարադրելով նախարարների և եկեղեցու պատմությունը, նա առաջարկում է իր և հաջորդ սերունդներին, որպեսզի նրանք չշփոթեն Սյունյաց իշխանությունների սահմանները և զանազան «բարբաջանքներով»

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 8, 9։

շպառակտվեն, որպեսզի չհափշտակվեն եկեղեցու և իշխանների ժառանգությունները՝ հողերը, որպեսզի ճանաչվեն Սյունյաց իշխանների և հոգևոր առաջնորդների բարձերն ու պատիվները և նրանց սահմանած բոլոր կարգերը։ «Զի մի... շփոթեսցի սահման իշխանութեանս և խանդարեալ քակտեսցի և պառակտեսցի ի զանազան բարբանջմանց որպէս և եղև իսկ բազում անգամ։ Եւ զի ծանիցեն զպատիւ և ըզբարձ իշխանաց և հայրապետաց Սիւնեաց և զամենայն կարգ սահմանի նոցա, և մի զրկեալ կողոպտեսցի յազգահողաց և ի դիւապատիր մարդկանէ»[1]։ Ուրեմն պատմությունը նրա ձեռքում միջոց էր տիրող դասակարգի և եկեղեցու քաղաքական ու տնտեսական տիրապետությունը սրբագործելու և անխախտ պահելու համար։

Ստեփանոս Օրբելյանի տեսական հիմքը իդեալիստական է։ Նա իր գրքի հենց առաջին տողերում գրում է՝ «Սկիզբն ամենայն գոյացութեանց՝ Աստուած։ Սկիզբն ամենայն բարեաց՝ սէր։ Սկիզբն ամենայն շնորհաց՝ խոհականութիւն»[2]։ Ապա ավելացնում է, թե ո՛չ միայն ամեն գոյություն աստծուց է առաջացել, այլև աստված է բաժանել երևացող և աներևույթ արարածներին «Ըստ իւրաքանչիւր պատշաճի ի ձևս, ի կերպս և յորակս»։ Աստված մարդուն ստեղծեց և նրան տվեց «զարարչութիւնն, զսէրն, զխոհականութիւնն որ է բանականութիւն», որպեսզի նա, մարդը արարչությունով ստեղծագործի, սիրով բաղձա ցանկալին և խոհականությամբ (բանականությամբ) կարողանա «ընտրել զպիտանին և զանպիտանն, զվնասակարն և զօգուտն»[3]։ Մարդկանց գործունեությունը նրա մոտ բացատրվում է այս երեք գործոնների հաջորդական շաղկապումով[4]։

Այսպիսով, Ստեփանոս Օրբելյանի համար պատմության շարժիչ ուժը աստծուց մարդուն տրված այս երեք պարգևներն են։ Նրա կարծիքով պատմությունն ստեղծում են բանա-

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 9։
2 Նույն տեղում, էջ 5։
3 Նույն տեղում, էջ 6։
4 Նույն տեղում, էջ 7։

կանությամբ, սիրով և արարչությամբ լի, հավատքով բարեպաշտ իշխաններն ու հայրապետները։ Ահա թե ինչու «Պատմութիւն նահանգին Սիսական» բազմախոստում անվան տակ մենք փաստորեն տեսնում ենք Սյունյաց աշխարհի առանձին իշխանների, գահերեց իշխանների և հատկապես եկեղեցու ու Տաթևի առաջնորդների գործունեության պատմությունը։ Ոչ մի խոսք ժողովրդի մասին, պատմության իսկական ստեղծողի մասին։ Ինչպես բոլոր պատմիչների, այնպես էլ Ստեփանոս Օրբելյանի մոտ հայերը ներկայանում են մի հոտ և մի հոտվով, առանց հակադիր դասակարգերի։ Աստված ի սկզբանե անդի ստեղծել է իշխաններ ու հպատակներ։ Հպատակների ամեն մի ըմբոստացում իշխանների դեմ որակվել է որպես ավազակություն, ելուզակություն, արյունարբություն։

Այսպիսով, մատենագիր Ստեփանոս Օրբելյանը երկու ոտքով կանգնած է իր դարաշրջանի տիրող դասակարգերի վահանի վրա։ Նա տիրող դասակարգին է պատկանում ոչ միայն իր ծագումով, խոշոր կալվածատեր և Սյունյաց եկեղեցու մետրոպոլիտն ու գաղափարախոսը լինելով, այլև իր պատմաաշխարհայացքով։ Նա տիրող դասակարգի ձգտումների ու շահերի արտահայտիչն է, այդ շահերի գաղափարական պաշտպանը։ Այդ պատճառով էլ, որպես աղբյուր օգտագործելով «Պատմութիւն նահանգին Սիսականը», մենք միշտ նկատի ենք ունեցել նրա հեղինակի պատմաաշխարհայացքը և քաղաքական ու գաղափարական ձգտումները։

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի. ապրել է 9-րդ դարի վերջում և 10-րդ դարի առաջին քառորդում։ 897 թվին դառել է հայոց կաթողիկոս և այդ դիրքում էլ մնացել մինչև իր մահը, որը տեղի է ունեցել 925 թվից հետո։ Իր կյանքի վերջում, խոր ծերության հասակում, գրել է «Հայոց պատմութիւն» աշխատությունը[1]։ Դա մի ամբողջական հայոց պատմություն է՝ սկսած ի սկզբանե անդի մինչև 924 թիվը։ Մեր թեմայի համար չափազանց կարևոր է նրա պատմության այն

[1] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ.։ Մեր հետագա բոլոր մեջբերումները կատարում ենք այս հրատարակությունից։

մասը, ուր խոսվում է 850-ական թվերից հետո եկող ժամանակաշրջանի մասին, այսինքն՝ 9-րդ դարի վերջին քառորդի և 10-րդ դարի առաջին քառորդի պատմական անցքերի մասին։ Այդ ժամանակաշրջանին վերաբերող նրա վկայությունները միանգամայն հավաստի ու արժանահավատ են ոչ միայն այն պատճառով, որ նա իբրև ժամանակի կաթողիկոս իրազեկ էր երկրում կատարված անցուդարձերին, այլև նրանով, որ նա անմիջականորեն ականատես ու մասնակից էր իր նկարագրած դեպքերին, հատկապես 10-րդ դարի առաջին քառորդի դեպքերին։ Այդ ժամանակաշրջանի Սյունիքի վերաբերյալ նա ունի հարուստ և կարևոր վկայություններ։ Դեռ իր ժամանակին Ստեփանոս Օրբելյանը հավաստի համարելով Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունները, օգտագործել է դրանք իբրև միակ և կարևոր մատենագրական աղբյուր։ Սակայն նրա վկայությունները վերաբերում են բացառապես Սյունիքի քաղաքական պատմությանը, Սյունյաց իշխանների, Բագրատունի թագավորների ու Արծրունի իշխանների փոխհարաբերություններին, բայց ոչ երբեք Սյունիքի ներքին կյանքին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին։

Մենք Դրասխանակերտցու, ինչպես նաև մյուս պատմիչների, վկայություններին ևս մոտեցել ենք ո՛չ միայն նրանց մատենագրական արժեքի տեսակետից, այլև պատմիչի սոցիալ-քաղաքական դիրքի, պատմական աշխարհայացքի տեսակետից։

Հովհ. Դրասխանակերտցին իր պատմական աշխարհայացքով բացառություն չի կազմում մեր մատենագրության մեջ. նրա մոտ ևս պատմության կերտողները թագավորներն ու իշխաններն են, որոնց բարի և չար գործունեությունից է կախված պատմական երևույթների ընթացքը։ Նրա մոտ ևս ժողովուրդը արհամարհված է, դիտված է իբրև «ստոր ռամիկ» և դուրս մղված պատմության միջից։ Ճնշված ժողովրդի տիրող դասակարգի ու եկեղեցու դեմ ունեցած ամեն մի ընդվզում նրա մոտ ևս դիտված է իբրև «ավազակություն», «գողություն», «անաստվածություն»։ Բացի այդ, թեև իբրև կաթողիկոս նա աշխատում է բոլոր իշխաններին ու թագավորներին դիտել հավասար աչքով, բայց նրա ամբողջ համակրանքը Բագրա-

տունյաց Սմբատ 1-ին թագավորի և նրա որդի Աշոտ երկրորդի կողմն է։ Վերջին հաշվով նա մնում է իբրև Բագրատունյաց տոհմի պատմիչ։

* * *

Ինչպես ասացինք սույն թեմայի համար չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են նաև վավերագրային և արխիվային փաստաթղթերը, որոնց մի մասը պահել և մեզ է հասցրել Ստեփանոս Օրբելյանը, իսկ մի չնչին մասը կանգուն է մնացել եկեղեցիների պատերի վրա մինչև այսօր էլ։ Մեր թեմային են վերաբերում այդ փաստաթղթերից ավելի քան քսանը, որոնց ցուցակը տրված է վերջում՝ սկզբնաղբյուրների ընդհանուր ցուցակի հետ։ Դրանք իրենց բովանդակությամբ կալվածքներ, հողեր նվիրաբերելու, փոխանակելու, վաճառելու ու գնելու իրավական ակտեր են, պայմանագրեր։ Աշխատության հատկապես 2-րդ և 3-րդ գլուխներում ամենալայն չափով օգտագործված են այդ նյութերը, իբրև առավել արժանահավատ աղբյուրներ։

Իբրև սկզբնաղբյուր օգտագործել ենք նաև ՀՍՍՌ Պետական մատենադարանի մի շարք ձեռագրեր։ Նայել ենք ոչ միայն Ստեփանոս Օրբելյանի աշխատության 9 ձեռագրերը, այլև մի շարք ուրիշ ձեռագրեր (№ № 7822, 3409, 7584)։

Օտար սկզբնաղբյուրներից օգտվել ենք հիմնականում արաբ հեղինակներից։ Չսահմանափակվելով Հայաստանում եղած արաբ հեղինակների (Յակուբի՝ Մարկվարտի մոտ, և Կուդայամա և այլ հեղինակներ՝ Կարաուլովի մոտ) թարգմանություններով, օգտագործել ենք նաև Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում եղած արաբական 7 հեղինակներից պրոֆ. Ժուզեի կատարած թարգմանությունները, նյութեր, որոնք հատկապես վերաբերում են խուրրամիտների շարժմանը[1]։

---

1 Այդ հեղինակներն են.

ա) Աբու-լ-Ֆարաջ իբն-Ահրուն իբն-լ-Իբրի, կարճ ձևով՝ Աբու-լ-Ֆարաջ,

բ) Ահմեդ իբն-Դաուդ ադ Դինավարի, կարճ ձևով՝ Ադ Դինավարի,

գ) Մուհամմեդ Տաբարի, կարճ ձևով՝ Տաբարի։

Արաբական այդ աղբյուրներին նույնպես մոտեցել ենք քննադատաբար, որովհետև նրանցից մի քանիսը ոչ միայն ի լրո գրողներ են, այլև բոլորը միասին վերցրած արաբական տիրող շրջանների պաշտոնական հեղինակներ են, նրանց շահերի արտահայտիչներ և մահմեդականության ջատագովներ։ Խուրրամիտների շարժման վրա, իբրև իրենց դեմ ուղղված շարժման վրա, նրանք նայում են հակառակորդի աչքերով, տիրողի դիրքերից և այն ներկայացնում որպես «ավազակների» ու «արյունարբուների» շարժում։

Սակայն նշենք, որ արաբ հեղինակներից մի քանիսը՝ Տաբարին և այլք, եղել են Ադրբեջանում, Հայաստանում, պաշտոնավարել այս տեղերում, մոտիկից տեսել ու շփվել այդ երկրների ժողովուրդների հետ և գրի առել իրենց տեսածն ու լսածը։ Ինքնին հասկանալի է, որ նրանք իրերն ու երևույթները գրի են առել սուբյեկտիվ ընկալումով, դրանց նայել գերիշխողի հայացքով, բայց և այնպես, իբրև դեպքերին ու վայրերին ականատես հեղինակներ, նրանց վկայությունները հաճախ հավաստի են ու արժեքավոր։

Ընդհանուր գրականության գծով նայել ենք հայագիտությանը վերաբերող բազմաթիվ աշխատություններ և նկատի ենք առել նրանցում եղած՝ Սյունիքի 9—10-րդ դարերի պատմությանը վերաբերող բոլոր մտքերն ու կարծիքները, փաստերն ու դատողությունները և ցույց տվել մեր վերաբերմունքը։ Հայտնի է, որ հայագիտության մեջ այդ դարերի Սյունիքի պատմությանը վերաբերող սիստեմատիկ շարահյուսված որևէ աշխատություն չկա։ Ղ. Ալիշանի ավելի աշխարհագրական, քան պատմական բնույթ կրող «Սիսական» աշխատության մեջ հիշյալ ժամանակաշրջանի Սյունիքի քաղաքական պատմությանը վերաբերող մասը չափազանց քիչ է ու ոչ սիստեմա-

---

գ) Մասուդ,

ե) Աբու-Թահիր ալ-Մակդիսի, կարճ ձևով՝ Ալ-Մակդիսի,

զ) Աբու-Մանսուր Աբդուլկահիր իբն-Թահիր իբն-Մուհամմեդ Բաղդադցի, կարճ ձևով՝ Աբու-Մանսուր,

է) Ալի-աբու-լ-Հասան ալ-Մասուդ, կարճ ձևով՝ Ալ-Մասուդ։

Սարի մեջերում մների ժամանակ մնացին կարճ ձևերը։

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

տիկ, իսկ սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին ընդհանրապես ոչ մի խոսք չկա։

Հայտնի է նաև, որ հայագիտության մեջ Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված, գիտական լուրջ արժեք ներկայացնող երկու մենագրական աշխատություններ կան՝ Ն. Ադոնցի և ակադ. Հ. Մանանդյանի աշխատությունները[1]։

Ն. Ադոնցը քննության է ենթարկել Հայաստանում ֆեոդալիզմի ծագման ու ձևավորման հարցը, իսկ ակադ. Հ. Մանանդյանը՝ Արշակունյաց և մարզպանական շրջանի նախարարական կազմակերպության կառուցվածքն ու բովանդակությունն իր առանձնահատկություններով։

Ֆեոդալական հարաբերությունները հիշյալ գիտնականների մոտ ուսումնասիրված են մինչև 7-րդ դարի կեսերը, մինչև արաբների նվաճումը։

Այդ աշխատությունները ո՛չ միայն տարածությամբ իրենց մեջ չեն ընդգրկել հետագա արաբական, Բագրատունյաց և հաջորդ էպոխաների Հայաստանի, այսինքն՝ բուն միջնադարյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրությունը, այլև այդ աշխատությունների մի շարք դրույթներ չեն համապատասխանում Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների հետագա էությանը, քանի որ արաբների տիրապետության և հետագա պատմական մի շարք շրջադարձերի ու երկրի ներքին զարգացման հետևանքով Հայաստանի ֆեոդալական հարաբերությունները կրել են որոշակի փոփոխություններ։ Հետևապես, վերոհիշյալ աշխատություններն ամենևին չեն սպառել Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների ընդհանուր և լրիվ ուսումնասիրությունը։

Գոյություն ունի մենագրական նաև մեկ ուրիշ գործ՝ պրոֆ. Խաչիկ Սամվելյանի «Հին հայ իրավունքի պատմություն» աշխատության 1-ին հատորը։ Թեև իր առարկայի գծով դա առաջին լուրջ ամփոփ աշխատությունն է և միակ գործը, որն ընդգրկում է իր մեջ միջնադարյան Հայաստանը, բայց հեղինակը, մեր կարծիքով, սխալ մի կոնցեպցիայի հետևելով, միջնադարյան և, հատկապես, Բագրատունյաց շրջանի Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների մի շարք հարցեր լուսաբանում է անընդունելի ձևով։

Այնուհանդերձ սոցիալ-տնտեսական հարաբերությունները լուսաբանելիս քննադատաբար օգտվել ենք այդ կարևոր աշխատություններից։

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С.-Петербург, 1908; Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934։

ԳԱՌԻԽ ԱՌԱՋԻՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 9—10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

9-րդ դարը հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալից դար է։ Դա քաղաքական կյանքի բեկման այն դարն է, երբ հայ ժողովուրդը 400 տարվա մաքառումներից հետո վերականգնեց իր քաղաքական անկախությունն ու ինքնուրույնությունը՝ ստեղծելով սեփական պետականություն, հանձին Բագրատունիների թագավորության։ Արշակունիների շրջանի պետականության անկմանը հաջորդած այդ 400 տարիների ընթացքում հայ ժողովրդի պատմության մեջ, բացի դասակարգային պայքարից, կարևոր դեր է խաղացել նաև ազատագրական պայքարը։

Նախորդ 8-րդ դարը լի է արաբական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հերոսական դրվագներով, որոնք, սակայն, խալիֆաթի կողմից ճնշվեցին հրով ու սրով։ Հատկապես 774—775 թթ. ապստամբության պարտությունից հետո արաբական խալիֆաթը դաժան դատաստան տեսավ այդ ապստամբությանը ակտիվ մասնակցած նախարարական տների հետ։ Այդ հաշվեհարդարից հետո պատմության թատերաբեմից դուրս եկան մի շարք նշանավոր նախարարական տներ, որոնց թվում Մամիկոնյանների, Ամատունյաց, Կամսարականների, Խոռխոռունիների տները։ Այդ պարտությունից հետո ստեղծված մղձավանջային դրության մասին ժամանակակից և ժամանակով մոտիկ պատմիչների մոտ կարդում ենք.

«Եւ վասն զի սպառսպուռ հաղարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայս և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և մնացեալք զօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց»[1]։ «... յայնմհետէ ոչ որ էր տէր ընչից իւրոց. այլ առհասարակ վարէին յաւարի։ Եւ բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս և զանդեայս, և գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղետիցն...։ Ապա իբրև այնպէս թափուրք ի ստացուածոց մնային, մերկք և բոկք և սովամահք, և ոչ գտանէին ապրուստ անձանց՝ դէմ եդեալ տարադէմ գնացին փախստեայ յաշխարհն Յունաց»[2]։ Պատմելով Շապուհ Ամատունու ղեկավարությամբ 12 հազար բնակչության Բյուզանդիա արտագաղթելու դեպքը, նա շարունակում է. «Իսկ կէսք ժողովրդեանն որք մնացին՝ առ սաստիկ կարօտութեանն անձնատուրք եղեն ի ծառայութիւն ստրկի, փայտակոտորք և ջրաբերք»[3]։

Պատմիչների այս պերճախոս վկայությունները մեկնաբանումներ չեն պահանջում։ Թվում էր, թե հայ ժողովրդի ազատագրական պայքարը վերջնականապես թաղված էր ավերակների ու մոխիրների տակ։ Բայց այդ թվում էր միայն։

8-րդ դարի վերջում և 9-րդ դարի սկզբում միջազգային իրադրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, այն է՝ խալիֆաթի ու Բյուզանդիայի միջև մղվող կռվի աշխուժացումը, խալիֆաթի և խազարների միջև սկսված կռիվները և իր՝ խալիֆաթի ներսում կենտրոնական իշխանության դեմ բարձրացած ծայրամասային ապստամբությունները, ստիպեցին խալիֆաթին փոխել իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ։

9-րդ դարի ընթացքում հայ ժողովրդի ազատագրական կենսական նոր ուժերը աստիճանաբար աճեցին և համախմբվեցին։ Ժողովրդական ազատագրական պայքարը ստացավ նոր թափ, նոր ձևեր։ Հայ ժողովրդի մղած հերոսական

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 111։

[2] «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի Վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887 թ., էջ 168։

[3] Նույն տեղում, էջ 169։

աղատագրական պայքարի շնորհիվ արդեն դարավերջում վերականգնվեց հայ ժողովրդի պետականությունը, որի գլուխը կանգնեց Բագրատունիների ֆեոդալական տունը։

8-րդ դարի պատմական անցքերի մասին գրող մեր պատմիչները, ինչպես նաև այդ դարի պատմիչ Ղևոնդը, ոչ մի բան չեն հաղորդում Սյունիքի մասին։ Կարծես 8-րդ դարում Սյունիքը գոյություն չի ունեցել։ Ինքը՝ Սյունյաց պատմիչը ևս ոչ մի տեղեկություն չի հաղորդում 8-րդ դարում Սյունիքում տեղի ունեցած դեպքերի մասին։ Սյունյաց նախարարությունը, որի սկզբնական պատմությունը թաղված է դարերի խորքում, Արշակունիների ու մարզպանական շրջանում հայ նախարարական տների կազմում նշանակալից կշիռ ունեցող նախարարություն էր, ուներ ռազմական մեծ ուժ, «դահնամակում» և «զորանամակում» գրավում էր առաջնակարգ դիրք, ակտիվ կերպով մասնակցում էր երկրի քաղաքական կյանքին։ Հայտնի է նրա քաղաքական կշիռը և խաղացած դերը 4-րդ և 5-րդ դարերում, ինչպես նաև հայտնի է, որ նա 6-րդ դարի վերջում դուրս եկավ Հայաստանի կազմից ու մտավ Ատրպատականի կազմի մեջ, բայց 7-րդ դարում, արաբների նվաճման ժամանակ, նորից մտավ Հայաստանի կազմի մեջ։ 7-րդ դարի վերջում և ամբողջ 8-րդ դարի ընթացքում երկրի քաղաքական կյանքում նրան այլևս չենք տեսնում։ 8-րդ դարի ապստամբությունների, կոտորածների, ավերումների մասին եղած հիշատակությունների մեջ Սյունիքը, նրա իշխաններն ու հեծելազորը, նրա բնակչությունը մասնակցություն չունեն։

8-րդ դարում լռության մատնված Սյունիքը կրկին մեր առջև ներկայանում է 9-րդ դարի սկզբին, որտեղից էլ մենք սկսում ենք մեր ուսումնասիրությունը։

1. ՍՅՈՒՆԻՔԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ստեփանոս Օրբելյանը Սիսական նահանգի պատմությունը՝ սկզբից մինչև 10-րդ դարի վերջին քառորդը, բաժանում է երկու մասի, կապելով դրանք իր առաջադրած իշխանների երկու ցուցակի հետ։

Առաջին ցուցակն սկսվում է Անդոկ Սյունու որդի Բաբիկից և վերջանում է Քուրդ իշխանով[1]։ Այս ցուցակում հիշվում են 21 իշխաններ, որոնց իշխանության ժամանակաշրջանները, ընդմիջումների հետ միասին, կազմում են 332 տարի, որը հենց իր՝ Ստեփանոս Օրբելյանի տվյալներով տեղադրվում է 377—709 թվերի միջև՝ ներառյալ նաև առաջին ու վերջին իշխանների տարիները[2]։

Առաջին ցուցակի[3] վերջին իշխանից (709 թվից) մինչև 2-րդ ցուցակի առաջին իշխանը՝ ընկնում է մոտ 100 տարվա բաց ժամանակաշրջան, որն ընդգրկում է ամբողջ 8-րդ դարը։ Նա ինքը դանդատվում է, որ Քուրդից հետո՝ «Անծանօթ մնացաք երկուց կամ երից իշխանաց»[4]։ Այս նշանակում է, որ Ստեփանոս Օրբելյանը ևս 13-րդ դարում ոչ մի աղբյուր կամ հատ ու կենտ վկայություն չի գտել 8-րդ դարի Սյունիքի մասին։

Երկրորդ ցուցակի առաջին իշխանի անունը Վասակ է, որը գործել է 9-րդ դարի սկզբում։

Նախքան այդ Վասակի և նրա շրջանի պատմական անցքերի շարադրումը, անհրաժեշտ ենք համարում նշել, թե ինչպես է պատկերված նրա իշխանությունը հայագիտության մեջ։ Ղ. Ալիշանն այդ Վասակով սկսվող իշխաններին անվանում է «Նոր նահապետք և թագաւորք Սիւնեաց» և անմիջապես ավելացնում է. «և Վասակայ միապետական իմն ձեռներեցութեամբ նուաճեալ զրաղում կողմանս աշխարհին՝ անուանի նոր նահապետ տոհմին, որ դարս երիս և կէս աղդաւ պայազատեաց»[5]։ Դուրս է գալիս, ուրեմն, որ Վասակը նախկին Սիսական տոհմի ներկայացուցիչ է, իսկ նրա իշխանու-

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 51,5։

[2] Ս. Օրբելյանը վկայում է, որ Բաբիկն իշխանությունը ստացել է Շապուհ Երկարակյացից՝ նրա թագավորության 68-րդ տարում (տես էջ 50). ինչպես գիտենք Շապուհը թագավոր է դառել 309 թվին։

[3] Առաջին ցուցակի իշխանների շուրջը հյուսած իր պատմությունը Ս. Օրբելյանը վերջացնում է ԼԱ գլխով։ ԼԴ գլխից սկսում է երկրորդ ցուցակի իշխանների պատմության շարադրումը, իսկ ցուցակը տալիս է ԾԵ գլխում։

[4] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 296։

[5] Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 14։

թյունը՝ այդ նույն Սիսական տոհմի վերանորոգված նահապետությունը (նախարարությունը)։ Որպեսզի ցույց տա, որ այս Վասակը, իրոք, նախկին Սիսական տոհմի շառավղից է, Ալիշանը աշխատում է ծածկել վերոհիշյալ հարյուրամյա բացը՝ ստեղծելով Փիլիպպե — Ատրներսեհ — Փիլիպպե մտացածին կամուրջը՝ Բուրդից մինչև Վասակը[1]։

Ըստ Ալիշանի դուրս է գալիս, որ ի սկզբանե անդի մինչև Բաղաց թագավորության հիմնումը (10-րդ դարի վերջին քառորդը) Սյունիքում միշտ իշխել է Սիսական տոհմը, միշտ գոյություն է ունեցել Սիսական նախարարությունը։ Ավելի՛ն, անգամ Բաղաց թագավորները, ըստ Ալիշանի, Սիսական տոհմից են։ Ասենք, որ Ալիշանի այս կարծիքը, որը բխում է Մովսես Խորենացու Հայկյան Սիսակի ավանդությունից, կիսում են կղերա-ֆեոդալական պատմագրության բոլոր ներկայացուցիչները, որոնք ընդունում են ավանդական Սիսակի ցեղի, իբրև իշխանական տան, հարատև գոյությունը Սյունիքում։

Ալիշանի այս կարծիքին դեմ է Լորանը։ Վերջինիս կարծիքով 8-րդ դարում Բագրատունի Աշոտ Կույրի մոտիկ ազգականները գաղտնի եկել են Սյունիք, ուր թաքուն, աննկատ մնացել են մինչև Բաբեկի Սյունիք գալը, որից հետո նրանցից մեկը՝ Վասակը Բաբեկի աջակցությամբ ամրացրել է իր տան դիրքը և տիրել Սյունիքին[1]։

Լորանի կարծիքով, նախկին Սյունյաց նախարարական այդ տոհմը 8-րդ դարի ընթացքում ոչնչացվել է Բագրատունիների կամ Բաբեկի կողմից։ Լորանի տեսակետը, ինչպես կտեսնենք, միանգամայն անընդունելի է։ Փաստերը ցույց են տալիս, որ Բագրատունիներին երբեք չի հաջողվել թափանցել Սյունիք, ինչպես նաև Վասպուրական։

Մենք ասացինք, որ Ստեփանոս Օրբելյանն առաջին ցուցակից հետո հարյուրամյա մի ժամանակաշրջան բաց է թողնում և անմիջապես շարունակում է՝ «Իսկ դարձեալ եղեն զահակալ իշխանք Սիւնի, առաջին՝ Վասակ որ էր մեծ նահապետ Սիւնեաց. և ապա երկու որդիք նորա Փիլիպպէ և Սահակ և միւս իշխանն Գրիգոր ի նոյն ցեղն, որ ունէր մասնաւոր ժառանգութիւն ի սեպհական հայրենեացն։ Եւ զի ի ցեղէ հայկական յոլովք էին զարմք և ազինք. բայց մեզ փոյթ զգլխաւոր զահակալ իշխանացն միայն էր. վասն որոյ և տարժանեալ զտաք և կարգեցաք ասել»[2]։ Տվյալ հարցի մասին միակ աղբյուրը հանդիսացող այս վկայությունից երևում է.

Առաջին. հարյուրամյա բաց ժամանակաշրջանից հետո, 9-րդ դարի սկզբին Սյունիքում ստեղծվում է ո՛չ թե մի «նահապետություն», ինչպես կարծում է Ալիշանը, այլ մի քանի զահակալ իշխանություններ կողք-կողքի. երկրորդ, բոլորովին նոր կոչում է «զահակալը», որի նշանակությունը կտեսնենք ստորև. երրորդ, այդ իշխանները Սյունի են, այսինքն Սյունի ցեղից և ոչ թե Բագրատունի. չորրորդ, զահակալ այս իշխաններն ունեցել են իրենց սեփական հայրենական ժառանգությունը. հինգերորդ, գոյություն է ունեցել ոչ թե մի տոհմ, մի ցեղ, այլ «ի ցեղէ հայկական յոլովք էին զարմ և ազինք».

---

[1] Ալիշանը գրում է, Բուրդից հետո իշխան է եղել «Ատրներսեհ որդի Փիլիպպէի, որ յիշի ուրէք «ասատուածապահ և ընիկ տէր Սիւնեաց» կոչմամբ, կեայր ի կէս Ը դարու, և յետ կեսոյն», իսկ այս Ատրներսեհն էլ ունեցել է Փիլիպպե անունով մի որդի, որին պետք է համարել այս Վասակի հայրը (տես «Սիսական», էջ 14)։ Ուրեմն հարյուրամյա բացի ժամանակ. Բուրդից մինչև Վասակը իշխաններ են եղել Փիլիպպե-Ատրներսեհ-Փիլիպպե Սիսակյանները։ Այս բանը չի ապացուցվում աղբյուրների փաստական վկայություններով։ Ալիշանի մատնացույց արած «Ասատուածապահ և ընիկ տէառն Ատրներսեհը», որին Օրբելյանը կոչում է նաև «Սիւնեաց տէառն և հայոց իշխան» (տես Ս. Օրբելյան, էջ 48), գործել է 4-րդ դարի վերջում կամ 5-րդ դարի սկզբում։ Բացի այդ, Ս. Օրբելյանը ոչ այս Ատրներսեհին և ոչ էլ մի այլ Ատրներսեհի Փիլիպպեի որդի չի համարում։ Ուստի Ալիշանն անտեղի է այս Ատրներսեհին տեղափոխել 8-րդ դարի կեսերը և, առավել անտեղի, նրան համարել Փիլիպպեի որդի։ Փիլիպպե անունով հայր ունեցող Ատրներսեհ չգիտեն նաև Սեբեոսը, Դրասխանակերտցին, Կաղանկատուացին, Ղևոնդը։ Վերջապես, թե այս պատմիչները, թե Ս. Օրբելյանը չգիտեն նաև Ատրներսեհ հայրանունով որևէ Փիլիպպեի (կամուրջի վերջին անդամը)։ Այսպիսով, Ալիշանի Փիլիպպե—Ատրներսեհ—Փիլիպպե սխեման արհեստական է։

[1] I. Laurent, L'arménie entre Byzance et l'islam, Paris, 1919, էջեր 110, 111, 115։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 296։

վեցերորդ, Ստեփանոս Օրբելյանը ցանկացել է ոչ թե բոլոր գահակալ իշխանների պատմությունը տալ, այլ նրանցից գլխավորներինը. յոթերորդ, գահակալ այդ իշխաններից առաջինը եղել է Վասակը, որը միաժամանակ եղել է Սյունյաց «մեծ նահապետ»։

Ստեփան Օրբելյանի այս ուղղակի վկայությունից, ինչպես նաև սույն աշխատության հավելվածում կատարված շարադրանքից, պարզ երևում է, որ 9-րդ դարի առաջին կեսին Սյունիքում գոյություն ունեին ինքնուրույն գահակալ իշխանների հինգ հետևյալ ճյուղերը.

ա) Վասակի ճյուղը, որի տիրապետության տակ էր Սյունիքի մեծագույն և կարևոր մասը՝ Գեղաքունի գավառը Սևանա լճի շրջակայքով, Բաղքը, Վայոց ձորը, Սյունիքը (Ծղուկ), Ճահուկը, Հաբանդը.

բ) 821 թվին, Վասակի մահվանից հետո, նրա Սահակ որդին Գեղաքունի գավառը բաժանում է հայրական ժառանգությունից և ստեղծում առանձին գահակալական իշխանություն.

գ) Գրիգորի ճյուղը, որն ունեցել է «մասնաւոր ժառանգութիւն ի սեպհական հայրենեացն», բայց ինչքա՞ն և ո՞ր գավառում էր այդ ժառանգությունը, պարզ չէ։ Հավանաբար նրա կալվածքները եղել են ավելի քիչ և գտնվել են Սյունյաց աշխարհի հարավային մասերում.

դ) Սահակյանների ճյուղը, որի տիրապետության տակ են Կովսական և Քաշունիք (միւս Բաղք) գավառները.

ե) Եվ վերջապես 9-րդ դարի վերջում ստեղծվում է նաև Զաքիկյանների ճյուղը[1]։

Եթե սրան ավելացնենք նաև Ստեփանոս Օրբելյանի այն վկայությունը, թե «յոլովք էին զարմք և ազինք», որոնք անկասկած պիտի հասկանալ ֆեոդալ ինքնուրույն իշխանների իմաստով, պարզ կլինի, որ մենք 9-րդ դարի Սյունիքում գործ ունենք բազմաթիվ ֆեոդալ ինքնուրույն իշխանների հետ։ 9—10-րդ դարերի Սյունիքը ոչ թե նախարարական, այլ իշխանական երկիր էր[2]։

[1] Տես հավելվածի համապատասխան ճյուղերը։

[2] 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի սկզբի վրացական պատմիչ

Ստեփանոս Օրբելյանը, ինչպես ինքն է խոստովանում, գրել է ոչ թե այս բոլոր գահակալ իշխանների պատմությունը, այլ նրանցից գլխավորների պատմությունը։ Եվ իրոք, նրա պատմության 9—10-րդ դարերին վերաբերող մասը, ինչպես և մեր մյուս աղբյուրների վկայություններն այդ դարերի Սյունիքի մասին, վերաբերում են գահակալ վերը հիշված իշխանների հինգ ճյուղերին և հատկապես Ծղուկ — Վայոց ձորի և Գեղաքունիքի ճյուղերին։

Հավանաբար 8-րդ դարի ընթացքում Սյունիքի նորելուկ այդ ֆեոդալ իշխանների միջև գնացել է միջֆեոդալական անողոք մրցակցություն՝ առաջնության և գերիշխանության համար։ Պետք է ենթադրել նաև, որ այդ մրցակցությունը վերջացել է նրանով, որ իշխաններից մեկը, ավելի ազդեցիկն ու հզորը, վասալական հպատակությամբ իրեն է ենթարկել մյուսներին ու նրանց նկատմամբ ինքը դարձել «իշխանաց իշխեցող»։ Այդպիսին 9-րդ դարի սկզբում Վասակն էր, որին հաջողվել էր իր գերիշխանությանը ենթարկել մյուս իշխաններին։ Սակայն Վասակը «նախարար», «նահապետ» («տանու-

Ստեփան Տրեթցին իր «Գորբոնի վկայաբանությունը» գործի մեջ 10-րդ դարի Հայաստանի աշխարհագրական-վարչական վիճակն արտահայտել է հետևյալ կերպ. «Եւ այս են նրա (Հայքի) սահմանները և (այլ և այլ) կողմանց (ձորերի) անունները. Վանանդ (Վանդի), Աշորնիք (Աշոռնա), Ապահունիք (Այապունիսի), Ծաղկոտն (Կալկիտնի), Ճակատք (Ճակատի), Կոգովիտի (Գոկավիտի) երկու ձորը, Շարուրը (Շարույր), /Վ/աստ/ /պ/ուրականի (Ասուրագանի) տասներկու ձորը, Վայ/ոց/ձորի /Վայձորի/ չորս ձորը, Դվինադաշտի (Դափին, Ադաշտի?) երեք ձորը, Գեղարքունեաց (Գելբունիա) չորս ձորը, Սյունյաց տաս ձորը, Տաշիրն ու Կողբաձորը (Կաքսպաքարը)»։ (Տես Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան, 1934 թ., հ. 1-ին, էջ 91)։ Պրոֆ. Մելիքսեթ-բեկը 4-րդ ծանոթության մեջ Հայաստանի աշխարհագրական այս պատկերը իրավամբ համարում է շատ հետաքրքիր։ Նման բան չկա ոչ մեր, ոչ էլ օտար պատմիչների մոտ։ Հետաքրքիր է, որ Սյունիքն այստեղ տրված է 3 միավորով, բոլորը միասին ունեն 18 ձոր։ Մեր կարծիքով «ձորի» տակ պետք է հասկանալ առանձին ու ինքնուրույն ֆեոդալ իշխանների սեփականությունը համարվող կալվածքները։ Եթե ընդունելի է մեր այս կարծիքը, ապա 9—10-րդ դարերի Սյունիքն ունեցել է ֆեոդալական, գահակալ իշխանների 18 ինքնուրույն իշխանություններ։

տեր») չէր բառիս հին իմաստով, բայց նա սովորական իշխան էլ չէր, այլ մյուսների նկատմամբ սյուզերեն դիրք ունեցող իշխան՝ գահերեց։

Ինչպես դժվար չէ տեսնել, տեղի էր ունեցել լուրջ փոփոխություն։ 9-րդ դարի սկզբում Սյունիքը մեր առաջ կանգնում է ոչ թե իբրև մեկ իշխան-նախարարի պատկանող մի «նահապետություն», ինչպես որ էր մինչև Քուրդը, այլ մի շարք գահակալ իշխանների պատկանող մասնատված ֆեոդալ-իշխանական մի երկիր։

Տեղի ունեցած այդ փոփոխությունն ըմբռնելու համար պետք է մի հայացք գցել նախորդ դարերի խորքը։

Ինչպես հայտնի է, ֆեոդալիզմի սկզբնական շրջանը Հայաստանում պատմաբաններն անվանում են «նախարարական սիստեմ», «նախարարություն»։ Այդ սիստեմի հիմնական առանձնահատկություններից մեկը կայանում էր նրանում, որ Հայաստանը բաժանված էր մի շարք նախարարական տների, տոհմերի միջև, որոնց գլուխ կանգնած էր տվյալ տոհմի (տան) ավագը՝ «նահապետը» կամ «նախարարը»։ Այդ նախարարին էր պատկանում տվյալ տան հողերի սեփականության իրավունքը, որն ավանդության կարգով ժառանգաբար անցնում էր սերնդից-սերունդ և, որ ամենակարևորն է, այդ հողը սեփականության իրավունքի առումով բաժանման և օտարման ենթակա չէր։ Ն. Ադոնցը և ակադ. Հ. Մանանդյանը գտնում են, որ հետագայում այդ նախարարական սիստեմը քայքայվեց, այսինքն՝ նախարարական տան ավագի (նահապետ-նախարարի)՝ հողի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը և նրա անբաժանելիությունը ճեղք ստացավ՝ նախարարական տան անդամներ հանդիսացող սեպուհների կենտրոնախույս ձգտումների շնորհիվ։ Սեպուհները ձգտում են դուրս գալ տոհմական (նախարարական տոհմի) շաղկապից, տոհմի ավագ անդամի (նահապետի, նախարարի) դերիշխանությունից և դառնալ ինքնուրույն հողատեր իշխաններ։ Սեպուհների կենտրոնախույս այդ ձգտումների հետևանքով նախարարական հողերը բաժանվում են սեպուհների միջև, որոնց բաժին հասած հողերը կոչվում են սեպուհական։ Ժամանակի ընթացքում, երբ սեպուհները դառնում են այդ

հողերի ժառանգական սեփականատերերը և վերածվում առանձին ինքնուրույն հողատեր իշխանների, սեպուհական հասկացողությունը վեր է ածվում սեպհական—սեփական հասկացողության։ Իրերի այս ընթացքը փոխում է նաև սեպուհների սոցիալական դիրքը։ Եթե նախկինում նրանք նախարարական տոհմի սոսկ անդամներն էին, ենթակա նախարարին՝ տոհմի ավագ անդամին, ապա այժմ նրանք դառնում են հողատեր ազնվականների առանձին դաս, ընդ որում ինքնուրույն և անկախ։ Սոցիալական դիրքի այս փոփոխումը փոխում է նաև նրանց կոչումը. նրանք դադարում են «սեպուհ» կոչվելուց։ Եվ այսպես, փուլ է գալիս նախարարական սիստեմը։ Ն. Ադոնցն ու ակադ. Հ. Մանանդյանը տարակարծիք են նախարարական սիստեմի քայքայման, սեպուհների առանձին ազնվական դաս կազմելու ժամանակի հարցում։ Պարզ է, որ դժվար է մի կոնկրետ տարեթիվ սահմանել հասարակական նման երևույթի առաջացման համար, ինչպես անում է Ն. Ադոնցը[1]։ Նոր որակ կազմող հասարակական ամեն մի երևույթ ապրում է տևական էվոլյուցիոն մի ժամանակաշրջան։ Նկատի պետք է ունենալ և այն, որ նախարարական սիստեմի քայքայումը Հայաստանի նման մի երկրում չէր կարող միաժամանակ և հավասար չափով տեղի ունենալ Հայաստանի բոլոր մասերում։ Այդ անցումը կատարվել է ժամանակի և տարածության մեջ։

Նախարարական սիստեմի վերոհիշյալ քայքայումը, բնականորեն, ուշ թե շուտ պիտի ծայր առներ նաև Սյունիքի նախարարության մեջ։ Թե ե՞րբ սկսվեց Սյունյաց նախարարության քայքայումը, մենք չգիտենք և դժվար էլ է որոշակի ժամանակ սահմանելը։ Բայց նրա ավարտումը, այսինքն՝ նոր որակ դառնալը, մոտավորապես կարելի է ուրվագծել ժամանակի որոշակի տևողության մեջ։

Վերն արդեն նշվեց, որ Ստեփանոս Օրբելյանն իշխանների իր առաջին ցուցակը հասցնում է մինչև 709 թիվը։ Այդ ցուցակի բոլոր իշխաններն էլ նախարարներ են, այնտեղ կողքկողքի, մեկից ավելի իշխան չկա։ Հարյուրամյա բաց ժամա-

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 474։

նակաշրջանից հետո, 9-րդ դարի սկզբից, մենք Սյունիքում այլևս չենք հանդիպում Սյունյաց մի որևէ նախարարի, որը տեր լիներ ամբողջ Սյունիքին։ 9-րդ դարի սկզբում ոչ թե մի նախարար գոյություն ուներ, այլ իրար հետ կողք-կողքի մեկից ավելի գահակալ իշխաններ՝ իրենց առանձին «սեպհական հայրենի ժառանգությամբ» և ուրիշ բազմաթիվ «զարմք և ազգինք»։

Այսպիսով, 709 թվից մինչև 9-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանում, այսինքն՝ 8-րդ դարում, ավարտվել է Սյունիքի նախարարության քայքայումը և գոյացել նոր որակ։ Նախարարական տոհմի անբաժանելի սեփականությունը կազմող հողերը (սեփականության իրավունքի առումով) բաժանվել են այդ տոհմի անդամների՝ սեպուհների միջև, որոնք, դառնալով իրենց բաժին ընկած հողերի սեփականատերը, սոցիալապես ու քաղաքականապես բարձրացել են ու դառել ինքնուրույն ֆեոդալական իշխաններ։

Նախարարական հին սիստեմը փուլ գալով Սյունիքում, նրա դիակի վրա, գոյանում է ֆեոդալական աղնվականության մի նոր շերտ, որի քաղաքական վիճակը անկախ ինքնուրույն իշխանությունն էր, իսկ տնտեսական վիճակը՝ մասնատված, առանձին հողատեր կալվածատիրությունը։ Դա ֆեոդալական հարաբերությունների զարգացում ու խորացում էր, որը ոչ միայն հենց իր ֆեոդալիզմի զարգացման ներքին օրինաչափության արդյունքն էր, այլ դրամական և առևտրական հարաբերությունների աշխուժացման, քաղաքների առաջացման ու զարգացման հետևանքով հողը մեծ չափերով վաճառքի առարկա դառնալու արդյունքը։

Այս բոլորից երևում է, որ Ալիշանը սխալ է, երբ պնդում է, թե Վասակը Սիսական տոհմի ներկայացուցիչ է և 9-րդ դարի սկզբում նույնությամբ վերականգնել է նախկին Անդովքների ու Քուրդերի «նահապետությունը» («նախարարությունը»)։ Նա չի տեսնում և չէր էլ կարող տեսնել սոցիալ-տնտեսական այն խոշոր տեղաշարժերը, որոնք տեղի էին ունեցել Սյունիքում։

Սխալ է նաև Լորանը, որի կարծիքով 9-րդ դարի սկզբում Վասակի ձեռքով Սյունիքում հիմնվեց Բագրատունյաց իշխանություն։ Նրա օգտին չեն խոսում փաստերը։ Ո՛չ Բագրատունիները և ո՛չ էլ այլ իշխանական տներ այդ ժամանակ չէին կարող Սյունիք թափանցել, քանի որ այնտեղ կային բազմաթիվ տեղական նորելուվ իշխանական տներ, որոնք կարող էին հաջող դիմադրություն ցույց տալ նման ոտնձգություններին։

Նշեցինք, որ Վասակը մյուս գահակալ իշխաններին վասալական հպատակությամբ ենթարկել էր իրեն. թե ե՞րբ և ի՞նչպես էր իր հպատակությանը ենթարկել այդ իշխաններին, առայժմ հնարավոր չէ պարզել, ինչպես նաև հնարավոր չէ պարզել Վասակի գործունեությունը և նրա ժամանակի Սյունիքի իրադարձությունները։ Առկա է միայն մի փաստ, որով և սկսվում է 9-րդ դարի Սյունիքի մեզ հայտնի քաղաքական պատմությունը։

821 թվին Սյունիք է ներխուժում արաբական զորավարներից մեկը՝ Սևադա իբն-Աբդալ-Համիտ ալ-Դահհաքը, որը մեր աղբյուրներում ունի Ավառանշան մականունը։ Սյունիքն ասպատակող այդ Սևադա Ավառանշանի դեմ ակտիվ գործողություններ է սկսում ինքը, երկրի «իշխանաց իշխեցող» Վասակը։ Նա օգնության է կանչում Ադրբեջանի գյուղացիական շարժման առաջնորդ Բաբեկին ու նրա աջակցությամբ, նույն 821 թվին, Ավառանշան Սևադային դուրս վանում Սյունիքից։ Սակայն Վասակ «իշխանաց իշխեցողը» Սևադայի դեմ տարված հաղթանակից հետո երկար չի ապրում։ Հենց նույն 821 թվին անակնկալ կերպով մահանում է։ Նա թողնում է երեք տղա և երկու աղջիկ։ Նրա տղաների անուններն էին Փիլիպպե, Սահակ և Ատրներսեհ, իսկ աղջիկներից մեկի անունն էր Քուպղիդուխտ, իսկ մյուսի անունը չի պահպանվել։

Վասակի մահվանից հետո երկու մեծ որդիները իրար մեջ բաժանում են նրա տիրապետությունը. «Յետ Վասակայ,— գրում է Ս. Օրբելյանը,— բաժանեն զՀայրենի ժառանգութիւն իւրեանց երկու որդիքն՝ Փիլիպպէ եւ Սահակ, եւ լինի Փիլիպպէ գահերէց իշխան Սիւնեաց. և առնու Սահակ բաժին զդաւառն Գեղամայ բոլոր»[1]։ Մեծ որդին՝ Փիլիպպեն, ստանում է կալ-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 296—297։

Չնայած այս վկայության անչափ պարզությանը, Ալիշանը սխալ

վածների մեծագույն մասը և գահերեցությունը, իսկ կրտսերը՝ Սահակը, ստանում է Գեղամա ամբողջ գավառը, ուր 821 թվից հիմնադրվում է առանձին անկախ գահակալական իշխանություն։ Գեղաքունիք գավառը[1] դառնում է ֆեոդալական ինքնուրույն իշխանություն, ուր ոչ միայն Սահակը, այլև, ինչպես կտեսնենք, նրա ժառանգները իշխում են իբրև ինքնուրույն գահակալ իշխաններ, իրենց ինքնուրույն շահերով ու ձգտումներով։

Այս նշանակում է, որ Սյունյաց «իշխանաց իշխեցող» Վասակի տիրապետությունը տրոհվում է թե՛ տերիտորիալ, և թե՛ քաղաքական իմաստով։ Նրա որդիներ Սահակի և Փիլիպպեի ժառանգները հետագայում հանդես են գալիս երկփեղկված, իբրև առանձին իշխանական ճյուղեր՝ Փիլիպպեի ճյուղը, իբրև գահերեցների ճյուղ, իսկ Սահակինը՝ իբրև գահակալական ճյուղ[2]։

Հայագիտական երկերում Գեղաքունիքում հիմնված իշխանական այս ճյուղի ներկայացուցիչներին անվանում են Հայկազյան զարմ[3]։ Իսկ Չամչյանցը Գեղաքունիքի իշխաններին կոչում է «Սիւնիս» (Սյունեցիներ), իսկ Փիլիպպեի գահերեցների ճյուղին՝ «Սիսականս» (Սիսակյաններ[4])։ Ինճիճյանը պատճառաբանում է, որ պատմիչները (Հ. Դրասխանակերտցի, Ս. Օրբելյան) Գեղաքունի ճյուղն անվանում են Հայկազն իշխաններ։

Մեր կարծիքով սխալ են վերոհիշյալ հայագետները։ Ինչպես գիտենք «Հայկազունք», ինչպես նաև «Սիսականք» կոչումները գալիս են Խորենացու ծագումնաբանությունից։ Ըստ

կերպով ենթադրում է, թե Վասակը ինքն է իր կենդանության ժամանակ երկիրը բաժանել երկու որդիների միջև։ Տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 32։

[1] Մեր աղբյուրներում հիշյալ գավառը կոչվում է «Գեղամա», «Գեղարքունի» և «Գեղաքունի». մեր կարծիքով ճիշտ է վերջինը։

[2] Տես հավելվածի 1-ին և 2-րդ ճյուղերը։

[3] Տես Ալիշան, Սիսական, առոմածառը։

Հ. Ղ. Ինճիճյան, Ստորագրություն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 235 և այլուրեք։

[4] Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. 2-րդ, Վենետիկ, 1785, էջ 445։

պատմահոր ծագումնաբանության հայերի նախահոր Հայկի սերնդից է Սիսակը, որը եղել է Սյունիքի առաջին նահապետը, և որ նրա անունով երկիրը կոչվել է «Սիւնիք» կամ «Սիսական», իսկ նրա սերունդները՝ «Սիսակունք» կամ «Հայկազունք»։ Համաձայն այս ավանդության Սյունիքի բոլոր իշխաններն էլ պետք է կոչվեին թե՛ «Սիսակունք», և թե՛ «Հայկազունք»։ Ուստի անիմաստ է պատմաբանների կողմից կատարված վերոհիշյալ բաժանումը։

Միանգամայն անիմաստ է և անհիմն նաև Չամչյանցի բաժանումը։ Ինչպես տեսանք, Գեղաքունիքի իշխանները և Ծղուկ գավառի իշխանները մի հորից՝ Վասակից են սերել[1]։ Ուստի ինչպե՞ս կարելի է մի հոր երկու որդիներից մեկի ժառանգներին կոչել «Հայկազյաններ» կամ «Սիւնիս», իսկ մյուսի ժառանգներին՝ «Սիսականս»։ Սյունիքի պատմիչը «Հայկազուն» է կոչում ոչ միայն Գեղաքունիքի իշխաններին, այլ նաև մյուս իշխաններին։ Ավելորդ չենք համարում մեջ բերել Ստեփանոս Օրբելյանի բոլոր վկայություններն այս մասին.

ա) Աղվանից գահերեց իշխանի դուստր Շահանդուխտը «գնայր ի կընութիւն Հայկազուն իշխանացն»[2]։

բ) Խոսելով Յուսուֆի արշավանքի մասին, Գեղաքունիքի իշխանների մասին գրում է. «Ապա և Հայկազուն իշխանքն Սիւնեաց՝ եղբայրք Գրիգորոյ, որ Սուփան յորջյորջեր, Սահակ և Վասակ...»[3]։

գ) «Ապա տեսեալ և զայս մեծ իշխանին Հրահատայ՝ Սահակայ որդւոյ, և Գրիգորի՝ Արսամանայ եղբօր, Հայկազնի՝ ի նոյն Սիսական տոհմէ»[4]։

դ) Տաթևի կաթողիկե վանքի նավակատիկին հրավիրված-ների մասին խոսելիս Սյունիքի բոլոր գահակալ իշխանների հասցեին գրում է. «Ժողովին և համազգի Հայկազուն իշխանքն Սիւնեաց»[5]։

ե) Տաթևի վանքի համար Սյունյաց իշխանների կողմից

[1] Տես հավելված՝ իշխանների ցուցակի սխեման։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 163, 164։

[3] Նույն տեղում, էջ 189։

[4] Նույն տեղում, էջ 208։

[5] Նույն տեղում, էջ 231։

անջատվող նոր սահմանների սիգելի սկզբում մենք կարդում ենք. «Մեք նուաստ ծառայքս Աստուծոյ Հայկազնի իշխանքս Սիւնեաց» և թվարկվում են թե՛ Գեղաքունիքի, թե՛ գահերեցների, և թե՛ Զագիկյանների իշխանական ճյուղերի ներկայացուցիչները[1]։

գ) Բաղաց թագավորության հիմնադիր Սմբատ 2-րդի[2] մասին գրում է. «Թագ կապեն... առնն Հայկազնոյ Սմբատայ»[3], իսկ մի այլ տեղ նրա մասին գրում է՝

«Սմբատ Սեպուհ քաջազարմին
Ի Հայկազանցն այն առաջին»[4]։

Այս բոլորից երևում է, որ Օրբելյանը «Հայկազուն» է կոչում Սյունիքի բոլոր իշխաններին, թե՛ Գեղաքունիքի, թե՛ Վայոց ձորի, թե՛ Բաղքի և այլ գավառների իշխաններին։ Վարդանը Հայկազն է անվանում Բաղաց թագավորության թագավոր Սենեքերիմին — «Որք և խաբէութեամբ մտին անդր և սպանին զՍենեքերիմ արքայ Հայկազն, զի թագաւորք որ անդ՝ Հայկազունք էին»[5]։

Իրրև ամփոփում այս բոլորի, պետք է նշել, որ 9-րդ դարի առաջին քառորդում Սյունիքում արդեն քայքայվել էր նախարարությունը, որը հանդիսանում էր Հայաստանում ֆեոդալիզմի վաղ շրջանի արտահայտություն, և գոյացել էին բազմաթիվ ֆեոդալական ինքնուրույն իշխանություններ։

Այդ նշանակում է, որ ֆեոդալիզմը ստացել էր նոր կերպարանք, դարձել էր նոր որակ, թևակոխել իր զարգացման բարձր շրջանը։

2. ՍՅՈՒՆԻՔԸ ԵՎ ԲԱԲԵԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ակնարկեցինք արդեն, որ 821 թվին Սյունիք է հրավիրվում Բաբեկը։ Ստորև կտեսնենք նաև, որ ամբանալով Ծղուկ գավառում և հենակետ ունենալով այն, Բաբեկը որոշակի դեր է

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 231։
2 Տես Հավելվածի սխեման։
3 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 300։
4 Ս. Օրբելյան, Ողբ, Թիֆլիս, 1885, էջ 37։
5 Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջեր 337, 338։

խաղում 820—30-ական թվերի Սյունիքի և հարևան Արցախ նահանգի կյանքում։ Բաբեկի խաղացած այդ դերի, կամ Բաբեկի և Սյունիքի (ընդհանրապես Հայաստանի) հարաբերության հարցը հայագիտության մեջ մինչև օրս ինչպես հարկն է չի լուսաբանված։ Հայկական աղբյուրները, նրանց հետքերով նաև կղերա-ֆեոդալական պատմագրությունը, բացասական են ներկայացնում այդ դերը, իսկ իրեն՝ Բաբեկին բնութագրում խստագույն բառերով։ Սովետական պատմագրության նվաճումների հիման վրա փորձում ենք Բաբեկի և Սյունիքի փոխհարաբերության հարցին տալ նոր լուսաբանում։

Նախքան այդ հարցի լուսաբանմանն անցնելը, անհրաժեշտ է համառոտակի ծանոթանալ Բաբեկի և նրա ղեկավարած շարժման հետ, որը կհեշտացնի տվյալ հարցի լուսաբանումը։

Արաբական բռնակալական լծի դեմ Անդրկովկասի ժողովուրդները հաճախ են ընդվզել և ղենքը ձեռքներին պաշտպանել իրենց երկրի ազատությունը ռազմի դաշտերում։ Այդպիսի ազատագրական ու սոցիալական ապստամբություն էր Հայաստանի հարևան Ատրպատականում 9-րդ դարի սկզբում առաջացած ժողովրդական հուժկու շարժումը, որը հայտնի է խուրրամիտների կամ քուռամիտների շարժում անունով։

Տաբարու վկայությամբ այդ շարժումն սկսվել է 808 թվին[1]։ Շարժումը սկսվել է Ղարադաղում և այժմյան Թալիշի լեռներում։ Շարժման կորիզը կազմում էին լեռնային Ատրպատականի Թալիշյան ցեղերը՝ ղարադաղցիները, գիլանցիները, քրդերը, դեյլեմիտցիները և այլն[2]։ Շարժման գլուխ կանգնած էր մանր ազնվական Ջավիդանը, իսկ շարժման կենտրոնն էր Բաղ կամ Բաղդ քաղաք-ամրոցը, որը գտնվում էր

---

1 Տես Ադր. ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ, գույք № 578 (էջ 7), № 577 (էջ 35)։ „Материалы о Бабеке" (арабские авторы), выдержки, перевод П. К. Жузе.

Տաբարուց ու արաբական մի շարք այլ հեղինակներից ստորև կատարված բոլոր մեջբերումները վերցրել ենք արխիվային այս նյութերից։ Այսուհետև կնշենք միայն գույքի համարը։

2 Очерки по истории Азербайджана, տես „Известия" АН Азерб. ССР (Отделение общест. наук), выпуск № 1, Баку, 1946, էջ 51։

Թալիշի լեռներում։ Ջավիտանի բանակի մեջ է մտնում նաև Բաբեկը, որն ուներ գյուղացիական ծագում և ծնվել էր Բազում կամ նրա շրջակայքում։

Տաբարին վկայում է, որ Բաբեկը ծագումով Բազ գյուղից կամ քաղաքից է[1]։ Իսկ Աբու-Թահիր ալ-Մակդիսին պատմում է, որ Բաբեկը դեռ չափահաս չդարձած մտնում է հասարակական կյանքի մեջ։ Նրա մայրը ծառա էր և աղքատ կին Ատրպատականի գյուղերից մեկում։ Նրան գայթակղում է մի նաբատ, որը սպանվում է մինչև Բաբեկի ծնվելը։ Մանուկ Բաբեկն իր հայրենի գյուղում հովվություն է անում։ Այդ լեռներում ապրող խուրրամիտների առաջնորդ Ջավիտանը մի անգամ գյուղից անցնելիս տեսնում է Բաբեկի հաղթանդամ հասակը, և Բաբեկին վերցնում-տանում իր հետ[2]։

Խուրրամիտների մեջ տարածված մի ավանդության համաձայն գալու էր Աբու-Մուսլիմ Խորասանցու ժառանգներից մեկը՝ Մահդին, մի սուրբ մարդ, որը նվաճելու էր ողջ աշխարհը և Աբբասյաններից խլելով թագավորությունը, ստեղծելու էր հավասարություն[3]։ Ջավիտանն իրեն հայտարարել էր Մահդի, որի ետևից անհերթ կռվի էին գնում խուրրամիտներն ընդդեմ արաբների։ Երբ 816 թվին սպանվում է Ջավիտանը (ուշագրավ է, որ ըստ սիրիական աղբյուրների Մահդի-Ջավիտանը փախչում է Հայաստան, ուր, Տարոնում նրան սպանում է Բագրատունի Սահակը), նրա փոխարեն խուրրամիտների առաջնորդ է դառնում Բաբեկը։ Տաբարու վկայությամբ նա հայտարարում է խուրրամիտներին, որ Մահդի-Ջավիտանի ոգին անցել է իր մեջ[4], իսկ Ալ-Մակդիսու վկայությամբ այդ բանը հայտարարում է Ջավիտանի կինը, որը սիրո զգացմունք ուներ Բաբեկի նկատմամբ[5]։ Այսպիսով, Ջավիտանից հետո Բաբեկն էր հայտարարվում այն սուրբ մարդը՝ Մահ-

1 Գույք № 578, էջ 8։

2 Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 60—61, № 1088, էջ 83։

3 Նույնը, գույք № 578, էջ 64, տես նաև З. И. Ямпольский, Восстание Бабека, Баку, 1941, էջ 13, Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947, էջ 427։

4 Գույք № 578, էջ 8։

5 Գույք № 578, էջ 61, գույք № 1088, էջ 83։

դին, որն ի կատար էր ածելու խոստացվածը, այն է՝ տապալելու էր արաբական լուծը և ստեղծելու հավասարություն։ Բաբեկի առաջնորդ դառնալուց հետո խուրրամիտների շարժումը ստանում է մեծ թափ և այդ օրվանից խուրրամիտները կոչվում են նաև բաբեկյաններ։

Բաբեկի առաջին ելույթը տեղի է ունենում, ըստ Տաբարու, 816 թվին, իսկ ըստ Մասսուդի՝ 815—16 և կամ 816—17 թվերին[1]։ Նա «հրամայում է իր հետևորդներին, որոնց արհամարհում էին, և որոնց նա բաժանեց սրեր և խանչալներ, որ վերադառնան իրենց տները և երրորդ գիշերը հարձակվեն ու կոտորեն մարդկանց (մուսուլմաններին)։ Այդպես էլ արին»[2]։ Կոտորում են խալիֆայի ներկայացուցիչներին։ Նրա այս առաջին ելույթը տեղի է ունենում Բազի շրջակայքում. «Բաբեկը ապստամբության դրոշ բարձրացրեց,— վկայում է Աբու-Մանսուրը,— Բազի կողմերում», ուր «նրա հետևորդների թիվը մեծացավ»[3]։

Բաբեկյանների (խուրրամիտների) սոցիալական կազմը հիմնականում արաբական և տեղական իշխողների շահագործման մեքենայից ճզմվող գյուղացիությունն ու քաղաքային չքավորությունն էր։ Այդ երևում է արաբական աղբյուրների հետևյալ վկայություններից. «Նա, Բաբեկը դեպի ինքը գրավեց թափառաշրջիկներին և խռովության սիրահարներին։ Այդ տիպի մարդկանց թիվն այնքան մեծացավ, որ միայն հեծյալները 20.000 էին, էլ չասած հետևակի մասին»[4]։ «Բաբեկին են միանում բանդիտները, ռազմիկները, կռվարարները, խռովարարները և զանազան կեղծ ուսմունքներին հետևողները։ Նրա ոհմակի թիվը մեծանում է այնքան, որ միայն հեծելազորը նրա մոտ կազմում է 20.000, չհաշված հետևակը»[5]։ Տաբարին վկայում է, որ 834 թ. խուրրամիտների հավատը ընդունել են Լեռնային Համադան, Իսպահան և այլ մարզերից շատ ժողո-

1 Գույք № 578, էջեր 8, 59։

2 Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 61։

3 Գույք № 578, էջեր 66, 67, գույք № 1088, էջ 89։

4 Աբու-լ-Ֆարաջ, գույք № 578, էջ 1։

5 Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 61, տես նաև գույք № 1088, էջ 84։

վուրդներ[1]։ Ալ-Մակդիսու վերև մեջբերված վկայությունից երևում է, որ Բաբեկի հետևորդները նրանք էին, «որոնց արհամարհում էին»։ Ալ-Մասուդի մի վկայությունից երևում է, որ Բաբեկն իր գրված շրջաններում, մարզերում բնակվող ժողովուրդներից կազմում էր բանակ և համախմբում իր շուրջը[2]։

Մեջբերված վկայություններից դժվար չէ եզրակացնել, որ Բաբեկի բանակը կազմված էր բուն ժողովրդից, արհամարհվածներից, որոնց արաբական տիրող շրջաններն իրենց պատմիչների բերանով անվանում են «ավազակներ», «խռովարարներ», իսկ Բաբեկի ամբողջ բանակը՝ «ոհմակ»։ Ուշադրավ է, որ Բաբեկը հենց որ գրավում էր մի շրջան, գյուղ, քաղաք, ամրոց և այլն, այնտեղ բնակվող ժողովրդին համախմբում էր իր շուրջը։ Ոչ միայն բանակը, այլև նրա նշանավոր զորավարները ևս գյուղացիներ էին, ինչպես, օրինակ, Տարխունը[3]։

Բաբեկի շարժմանը հարել են նաև մանր ու միջին հողատերերը, դեհկանները և անգամ խոշոր ֆեոդալ-ազնվականները։ Արաբական աղբյուրներից երևում է, որ Սյունիքի և Ադվանքի իշխաններ՝ Սահլը, Վասակը, Արլասադը, ինչպես նաև Շաքի և Փայտակարան քաղաքների տիրակալները[4] ժամանակավորապես դաշնակցել են Բաբեկի հետ և նրա միջոցով աշխատել են տապալել արաբական գերիշխանությունն իրենց «աշխարհներում», վերականգնել արաբների կողմից ոտնահարված իրենց արտոնությունները։

Բաբեկյանների գաղափարախոսության, ինչպես նաև սոցիալ-քաղաքական հասկացողությունների մասին իրենց ձեռքով գրված աղբյուրներ չեն հասել մեզ, թեև այդպիսիք եղել են[5]։ Եղած կցկտուր տվյալները նրանց հակառակորդների վկայություններն են։ 10-րդ դարի արաբ հեղինակ Ադ-Դինավարու վկայությամբ դեռ այն ժամանակ խուրրամիտների

1 Գույք № 578, էջ 8։

2 Գույք № 578, էջ 70, գույք № 577, էջ 93։

3 Տաբարի, գույք № 1088, էջ 29։

4 Տես „Известия" Академии Наук Азербайджанской ССР, № 1, էջ 81։

5 Ալ-Մակդիսին գրում է. „Я читал в книге хуррамитов, что...", գույք № 578, էջ 63։

«ուսմունքի մասին» եղել են «տարբեր կարծիքներ»[1]։ Այդ տարակարծությունը, հավանաբար, բխել է նրանից, որ խուրրամիտների շարքերում եղել են մի քանի տարբեր հոսանքներ[2]։ Բայց այդ հոսանքներն իրար է միացրել հոգու փոխանցման ուսմունքը և նրանց ամուր հավատը՝ հետագայում իրենց թագավորության վերականգնման մասին։ «Խուրրամիտները բաժանվում էին տարբեր աղանդների և տարաճյուղությունների, բայց նրանց բոլորին միացնում է հոգիների փոխանցման (վերադարձման), անունների փոփոխման և մարմինների վերաբերման ուսմունքը»[3]։ «Նրանք բոլորը երազում են ապագայում իրենց թագավորության վերականգնումը»[4]։

Հոգու փոխանցման այս ուսմունքից էր, անշուշտ, բխում այն հասկացողությունը, որ Մահդու մահվանից հետո նրա հոգին անցել էր Ջավիտանին, սրանից էլ Բաբեկին։ Մարմինն ու անունը փոխված է, բայց հոգին նույնն է, նույն Մահդու հոգին, որը ի վիճակի է իրականացնելու իրենց շարժման հաղթանակը և ստեղծելու սպասվող ազատ թագավորությունը։ Այստեղից էլ, հավանաբար, խուրրամիտների մոտ բարի ու չար հոգիների հասկացողությունը, քանզի ոչ միայն բարի, այլև չար հոգին կարող էր փոխանցվել։ Այդ կապակցությամբ Յամպոլսկին գրում է, որ այդ ժամանակ խուրրամիտների հասկացողությամբ բոլոր տեսակի անարդար և չար երևույթները, ըստ որում նաև սոցիալական երևույթները, տեղի են ունենում կամ ծնունդ են առնում չար հոգուց։ Հետևապես, երկրում կատարվող սոցիալական ամեն մի անարդարության դեմ պետք է կռվել զենքով[5]։

Աբու-Մանսուրը հաղորդում է, որ բաբեկյանները իրենց կրոնի սկզբնավորումը կապում են ոմն էմիրի հետ, որի անունն էր Շիրվան, և որն ապրում էր դեռ մինչև Մուհամեդը։

1 Գույք № 578, էջ 59։

2 Մասուդի, գույք № 578, էջ 59։

3 Ալ-Մակդիսի, գույք 578, էջ 64, տես նաև գույք № 1088, էջ 87։

4 Մասուդի, գույք № 578, էջ 59։

5 З. И. Ямпольский, Восстание Бабека, էջ 17։ Մենք այս մասին արաբական աղբյուրներում որևէ տվյալ չգտանք։

Նրանք հավատացնում են, որ Շիրվանը բարձր է Մուհամեդից և այլ մարգարեներից[1]։ Այդ նշանակում է, որ գաղափարական հակադրություն կա ապստամբ ժողովրդի կրոնի և խալիֆաթի պաշտոնական կրոնի՝ մահմեդականության միջև՝ նրանց նախասկզբնավորումից սկսած։

Հոգու փոխանցման հասկացողությունից խուրրամիտները գնացին կրոնների ազատության ուղիով։

Ալ-Մակդիսին վկայում է, որ խուրրամիտները բոլոր տեսակ կրոնների նկատմամբ ցուցաբերում էին հանդուրժողական վերաբերմունք և գտնում էին, որ բոլոր կրոններն էլ ունեն աստվածային ոգի։ Շարունակության մեջ Ալ-Մակդիսին պատմում է, որ խուրրամիտներն ամեն կերպ խուսափում են արյուն թափելուց, բացառությամբ այն դեպքից, երբ ապստամբություն են բարձրացնում։ Նա վկայում է նաև, որ ինքը խուրրամիտների մի շարք գիտնականներից լսել է, որ Մարիամը ունեցել է հարաբերություն (սեռական), բայց դրան միացել է նաև աստծու ուղարկած ոգին, այլապես Մարիամը միայն ներփչումով չի ծնել Քրիստոսին[2]։

Ուրեմն, ըստ խուրրամիտների, աստծո բոլոր պատգամները, անկախ նրանից, թե ի՞նչ կրոնի են պատկանում նրանք և ո՞ւմ են օգտակար, միևնույն հոգին են, այդ առումով էլ բոլոր կրոնները իրավացի և ճշմարիտ են նրանց հետևորդների համար։ Ուստի, խուրրամիտների ըմբռնմամբ այլ կրոնների դեմ կռվելը, արյուն թափելն ավելորդ է, եթե միայն նրանք վնաս չեն պատճառում իրենց։ Բայց եթե մի կրոնի հետևորդները վնասում են ուրիշ կրոնի հետևորդներին, և այդ կրոնն արդարացնում է իր հետևորդների նման քայլը, ապա պետք է ապստամբվել այդ կրոնի ու նրա հետևորդների դեմ և այս անգամ արյուն թափելն անհրաժեշտ է[3]։

Դժվար չէ հետևցնել, որ խուրրամիտները մահմեդական կրոնի դեմ կռվում էին ոչ թե այն պատճառով, որ նա ճիշտ չէր, այլ միայն նրա համար, որ այն վնասում էր իրենց,

[1] Գույք № 578, էջ 67։
[2] Նույն տեղում, էջ 64, 65։
[3] Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 64, 65։

վնասում էր նրանով, որ ալլահի անունով արդարացնում էր արաբների կողմից հպատակ ժողովուրդների ճնշումը, գյուղացիների շահագործումն ու կեղեքումը։

Միջնադարյան խուրրամիտ գյուղացին ուրիշ կերպ չկարողացավ, և չէր էլ կարող բացատրել իր սոցիալական շահագործումը և արդարացնել իր ապստամբությունն այդ շահագործման դեմ, քան այս ձևի կրոնական ըմբռնումով։

Խուրրամիտների կրոնների նկատմամբ ունեցած նման ըմբռնումը հերքում է բուրժուական պատմաբանների պնդումն այն մասին, որ իբր խուրրամիտների շարժումը զուտ կրոնական շարժում էր, որ նրանք հերետիկոսներ էին, ինչպես նաև մի շարք հայագետների կարծիքն այն մասին, թե խուրրամիտները աղանդավորներ էին, իսկ Բաբեկը՝ աղանդապետ։

Խուրրամիտներն արաբական բռնակալների և տեղական շահագործողների դեմ չէին կռվում որևէ կրոն փրկելու համար, այլ կռվում էին սոցիալական անարդարության, գույքային անհավասարության և շահագործման վերացման համար։

Խուրրամիտների՝ աշխարհը բացատրելու փիլիսոփայական հիմքը լույսն է. «խուրրամիտները... ասում են, որ աշխարհի սկիզբը՝ լույսն է և որ նրա մի մասը փոխվելով վեր է ածվել խավարի»։ «Նրանց կրոնի հիմքը լույսի և խավարի ուսմունքն է»[1]։ Ալ-Մակդիսին վկայում է նաև, որ ինքը խուրրամիտների մի գրքում կարդացել է, որ աստղերի էությունը գունդ է և անցքեր, որոնք հավաքում են մարդկանց հոգիները և հանձնում դրանց լուսնին, որից և առաջանում է լուսնի աճը։ Երբ արդեն լուսինը դառնում է լիալուսին, նա գնում է և հանձնում դրանց իրենից վերև կանգնած աշխարհին, և ազատված իր բեռից, վերադառնում է նոր հոգիներ հավաքելու[2]։ Այս փաստերը խոսում են այն մասին, որ խուրրամիտներն ունեին նաև իրենց փիլիսոփայական հայացքը՝ աշխարհը բացատրելու համար։ Թեև այդ հայացքը թույլ ու երերուն է,

[1] Ալ-Մակդիսի, գույք № 578, էջեր 63, 65, գույք № 1088, էջեր 87, 88։
[2] Գույք № 578, էջ 63, գույք № 1088, էջ 87։

բայց նա մի գլխով բարձր է ժամանակի մահմեդական ու քրիստոնեական ըմբռնումներից, ըստ որոնց աշխարհի սկիզբն ալլահն է կամ աստվածը։ Խուրրամիտները մի կողմ նետելով ալլահի արարչությունը, գտնում են, որ աշխարհի սկիզբը մատերիական է, լույսը, որի մի մասը փոփոխվելով վեր է ածվել խավարի։ Սա նախվ մատերիալիզմ է։ Թերևս այս ըմբռման մեջ արտահայտված է հաղթանակող խուրրամիտների օպտիմիզմը։

Խուրրամիտների սոցիալ-քաղաքական հասկացողությունները գալիս էին մազդակյաններից։ Աբու-Մանսուրը վկայում է, որ «խուրրամիտները բաժանվում էին երկու խմբի, նրանցից մեկը դեռ գոյություն ուներ մահմեդականությունից առաջ, այդ մազդակյաններն էին, որոնք իրենց համար թույլատրելի էին համարում բոլոր արգելվածները և հաստատում էին, որ բոլոր մարդիկ համատեր են գույքի և կանանց նկատմամբ»[1], ճիշտ է, մազդակյանները ճնշվել էին դեռ 6-րդ դարում, սակայն նրանց իդեաները չէին մեռել։ Այդ ուսմունքին շատ հետևողներ կային Բազի շրջակայքում, որոնք խուրրամիտների շարժման մեջ մտան հենց սկզբից։ Ինքը, հենց նույն հեղինակը վկայում է, որ Բազի լեռների բնակիչները «խուրրամիտներ էին, որոնք ունեին Մազդակի ուսմունքը»[2]։

Մեջբերված վկայությունները պարզ ցույց են տալիս, որ խուրրամիտները պաշտպանում էին գույքի հավասարության գաղափարը, և ոչ միայն գույքի, այլ նաև կանանց և այն բոլորի հավասարության գաղափարը, որը կարող է մարդկային հոգուն բավականություն պատճառել։

Բայց չպետք է մոռանալ, ինչպես այդ անում են բուրժուական պատմաբանները, որ կանանց, ինչպես նաև մարդու հոգուն բավականություն պատճառող ամեն ինչի հավասարությունը խուրրամիտների մոտ ինչ-որ համատարած պարտադիր վայելք չէր։ Կանանց նկատմամբ տղամարդկանց համատերության իրավունքը թույլատրելի էր միայն կանանց համաձայնության պայմանով, ինչպես նաև մարդկային հոգուն բավականություն պատճառող ամեն ինչի վայելքը թույլատրելի էր միայն այն դեպքում, եթե այդ վայելքը ոչ ոքի վնաս չէր պատճառում[1]։

Այս բոլորից երևում է միայն այն, որ խուրրամիտների մոտ դրվում էր մարդու ազատության հարցը, գույքային սեփականության ոչնչացման հարցը և բնության վայելքների նկատմամբ բոլորի հավասար իրավունքի հարցը։ Իրավացի է Լեոն այս տեսակետից, երբ գրում է՝ խուրրամյան վարդապետության «նպատակն էր ուսուցանել, թե մարդիկ հավասար են, միասին պիտի վայելեն աշխարհի բոլոր բարիքները, առանց մասնավոր սեփականության»[2]։

Բուրժուական պատմաբաններից ոմանք (Մյուլլեր, Կրիստենսկի և այլք) խուրրամիտների հավասարության այս գաղափարը համարում են կոմունիստական հավասարեցում։ Լեոն ևս խուրրամիտների այդ «վարդապետությունը» համարում է «կոմունիստական — ընկերավարական վարդապետություն»[3]։ Այս գրույթը հիմնովին սխալ է։ Խուրրամիտների հավասարությունը ոչ մի կապ չունի գիտական կոմունիզմի հավասարության թեորիայի հետ։ Խուրրամիտների հավասարեցման ուսմունքը բխում էր հենց իրենց շարժման մասնակիցների գյուղացիական մտածելակերպից։ «Հավասարեցման աղբյուրը,— ասում է Ի. Վ. Ստալինը,— գյուղացիական մտածելակերպն է, բոլոր բարիքները հավասարապես բաժանելու հոգեբանությունը, գյուղացիական պրիմիտիվ «կոմունիզմի» հոգեբանությունը»[4]։ Արաբական և տեղական շահագործողների դեմ ելած ապստամբ գյուղացիները սոցիալական ուրիշ ծրագիր չէին կարող առաջադրել, քան իրենց մտածելակերպին հատուկ՝ բոլոր բարիքները հավասարապես բաժանելու գաղափարը։

Դժվար չէ եզրակացնել, որ խուրրամիտների շարժումը լոզունգ ուներ՝ ոչնչացնել շահագործող ազնվականությունը,

---

1 Աբու-Մանսուր, գույք № 578, էջ 66, գույք № 1088, էջ 90։
2 Նույն տեղում, գույք № 578, էջ 67։

1 Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 65։
2 Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, 1947, էջ 427։
3 Նույն տեղում։
4 Ի. Վ. Ստալին, Զրույց գերմանական դրող Էմիլ-Լյուդվիգի հետ, Երևան, 1938, էջ 24։

գույքային խոշոր սեփականությունը և ստեղծել պայմաններ, որպեսզի բոլոր մարդիկ հավասարապես վայելեն բնության բարիքները և ազատ պաշտեն իրենց կրոնը։ Աբու-Մանսուրի՝ «իրենց համար թույլատրելի էին համարում բոլոր արգելվածները» վկայությունը խոսում է ո՛չ միայն այն մասին, որ խուրրամիտները թույլատրելի էին համարում իրենց համար այն ամենը, ինչ արգելում էր խալիֆաթի պաշտոնական կրոնը, ինչպես ենթադրում է Յամպոլսկին[1], այլ նաև այն, ինչ արգելում էին տիրող շահագործող դասակարգերը իրական, տնտեսական կյանքում։ Այդ նշանակում էր, որ խուրրամիտները թե՛ սոցիալական, և թե՛ իդեոլոգիական պայքար էին ծավալում շահագործող դասակարգի դեմ ընդհանրապես, արաբների լծի դեմ՝ մասնավորապես։

Խուրրամիտների քաղաքական հայացքների մասին մենք շատ քիչ վկայություններ ունենք։ Թե ինչպիսի քաղաքական կարգեր ստեղծեցին իրենց 20 տարվա տիրապետության ժամանակ, ինչ ձևով էին վարում իրենց կյանքը, որոշակի ոչինչ չգիտենք։ Այդ մասին եղած կցկտուր վկայությունները հետևյալներն են՝

1) «Նրանք հաճախ աղոթում էին Մահդիին», «նրանք ունեին իմամներ, որոնց դիմում էին իրենց կրոնա-իրավաբանական գործերի համար և պատգամավորներ, որոնք շրջում էին նրանց մեջ և որոնց նրանք անվանում էին հրեշտակներ»[2]։

2) «Նրանք ոչինչ չէին գերադասում այնպես, ինչպես գինին և խմիչքները»[3]։

3) «Բաբեկյաններն ամեն տարի իրենց լեռներում տոնում են գիշերը գինով և երգերով...»[4]։

4) «Նրանք իրենց լեռներում շինում են մեջիթներ մուսուլմանների համար, ուր նրանք էշան են կարդում, գաղտնի չեն

[1] З. И. Ямпольский, Восстание Бабека, էջ 18։
[2] Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 65։
[3] Նույն տեղում։
[4] Աբու-Մանսուր, գույք № 578, էջ 67, գույք № 1088, էջ 90։ Սա ըստ երևույթին հեթանոսական մի տոն էր, որ կատարվում էր տարին մեկ անգամ։

պահում ռամազանի ծոմը և իրենց համար պարտադիր չեն համարում ոչ հավատացյալների դեմ պատերազմելը»[1]։

5) «Խուրրամիտներից նրանց, որոնց մենք տեսանք իրենց երկրում... բավականաչափ խիստ պահպանում էին մաքրությունն ու հստակությունն և մարդկանց հետ վարվում էին քաղաքավարի՝ ձգտելով ծառայություն անել նրանց նկատմամբ»։

6) «Նրանց մեջ մենք տեսանք և այնպիսիները, որոնք թույլատրում էին կանանց համատիրությունը, բայց միայն նրանց համաձայնությամբ, և օգտվում էին այն ամենից, ինչը կարող էր բավականություն պատճառել հոգուն, եթե միայն այդ վնաս չէր պատճառում ոչ ոքի»[2]։

7) «Ես կարդացի խուրրամիտների գրքում...», «Ես լսել եմ, թե ինչպես խուրրամիտների դիտակաները հաստատում էին, որ...»[3]։

Այս վկայություններից թեև չի կարելի որոշել խուրրամիտների ստեղծած քաղաքական կյանքը, նրանց պետական և կառավարական ձևը, բայց կարելի է պնդել, որ նրանք իրականացրել էին իրենց երկու հիմնական սկզբունքները։ Նախ, կրոնի հանդուրժողականությունը.—ազատ պաշտում են իրենց հավատքը, աղոթում են Մահդիին, ռամազանի ծոմը չեն պահում, մուսուլմանների համար շինում են մեջիթներ, չեն կրում իրենց մոտ եղած ուրիշ կրոնների՝ նրանց հասկացողությամբ ոչ հավատացյալների դեմ. երկրորդ, համատիրության—հավասարության իրավունքը.—այդ իրավունքով նրանք տիրում են մարդու հոգուն բավականություն պատճառող ամեն ինչին։ Հավանաբար նրանք իրականացրել էին նաև բնության բարիքներից (հողից, ջրից և այլն) հավասար օգտվելու սկզբունքը, գույքային խոշոր սեփականության (այսինքն՝ գույքի անհավասարության) վերացումը, որի համար թեև, դժբախտաբար, կոնկրետ վկայություններ չունենք, բայց ինքնին հասկանալի է դառնում։

Մեջ բերված վկայությունները նաև ցույց են տալիս, որ

[1] Աբու-Մանսուր, գույք № 578, էջ 67, գույք № 1088, էջ 90։
[2] Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 65, № 1088, էջեր 87, 88։
[3] Նույն տեղում, գույք № 578, էջեր 63, 64։

խուրրամիտները սիրում են գինի, խմիչքներ, կենցաղում պահում են մաքրություն, հստակություն, քաղաքավարի են, համեստ, ունեն գիտնականներ, գրքեր։ Ունեն իմամներ ու պատգամավորներ, որոնք շրջում են ժողովրդի մեջ և լուծում կրոնա-իրավաբանական հարցերը։

Աղբյուրների վկայություններից նաև երևում է, որ Բաբեկն ստեղծել է պետություն, որի ղեկավարն էր ինքը, և որին, գոնե, տիրող դասակարգի ներկայացուցիչներն անվանում են թագավոր։ Նա ստեղծել է կազմակերպված բանակ, որն ունեցել է խիստ կարգապահություն։

Միջնադարյան գյուղացիական այս շարժումը, ինչպես և նրա առաջնորդ գյուղացի Բաբեկը, չէր կարող այդ ժամանակ պետական մեքենայի նոր ձև առաջադրել հենց միայն այն պատճառով, որ այդ շարժման ողջ էությունը և գաղափարախոսությունը գյուղացիության նախի հավասարության սկզբունքի վրա էր հիմնված։ Ապստամբ գյուղացիներին ուրիշ ոչինչ չէր մնում, բացի այն, որ իրենց առաջնորդ Բաբեկին թագավոր հռչակեին, քանի որ այդ ժամանակ նրանց տեսած և նրանց գաղափարին մատչելի քաղաքական կառուցվածքը թագավորությունն էր։ Բայց նրա թագավորությունը ամենևին էլ միջնադարյան ֆեոդալ ազնվականների դիկտատուրան, ինքնակալական միապետությունը չէր, այլ, հավանաբար, ժողովրդական ու դեմոկրատական բնույթ կրող մի թագավորություն, որի մեջ կիրառվում էր ապստամբ խուրրամիտների պրիմիտիվ ընդհանրության և նախի հավասարության սկզբունքը՝ բնության բարիքների հավասար օգտագործումը։

Սոցիալական այս հիմքին, անշուշտ, համապատասխան պիտի լիներ նաև նրա վերնաշենքը՝ քաղաքական կառուցվածքն ու իդեոլոգիան։ Մեր այս հետևության օգտին է թերևս խոսում արաբ հեղինակի այն զարմանքը, թե քիչ մնաց Բաբեկին հաջողվեր ոչնչացնել «մի ամբողջ պետություն, շուտով կրոնը և փոխարինել այն ուրիշով»[1]։

Մենք չենք կարող հաշտվել բուրժուական մի շարք պատմաբանների, ինչպես նաև ակադ. Հ. Մանանդյանի այն պնդման

[1] Ալ-Մասուդի, գույք № 578, էջ 72։

հետ, թե խուրրամիտները ձգտում էին «վերահաստատել պարսկական նախկին աշխարհակալությունը»[1]։ Խուրրամիտները չէին կռվում ոչ նախկին պարսկական թագավորության, և ո՛չ էլ, ինչպես ճիշտ նշում է Բարդոլդը, հին կրոնը վերականգնելու համար։

Բաբեկյանների շարժումը, բացի սոցիալական լինելուց, նաև ազատագրական շարժում էր, քանի որ նրա սուր ծայրն ուղղված էր արաբական զավթիչների դեմ։ Արաբական աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ ապստամբ բաբեկյանները բռնում ու ոչնչացնում էին թե՛ արաբ, և թե՛ տեղական ֆեոդալ-կալվածատերերին[2]։ Նշենք նաև, որ եթե Բաբեկին հաջողվեց որոշ ժամանակով Ատրպատականից դուրս վանել արաբական զավթիչներին, ապա նրան չհաջողվեց տեղում լիովին ոչնչացնել ֆեոդալական հարաբերությունները և փոխարինել այն որևէ այլ հասարակարգով։ Նա այդ չէր կարող անել ոչ միայն նրա համար, որ դեռ այդ ժամանակ ֆեոդալիզմը տապալելու համար անհրաժեշտ պատմական նախադրյալներ չկային, այլև այն պատճառով, որ գյուղացիական շարժումները, ինչպես ուսուցանում է մարքսիզմը, չեն կարող հասնել շոշափելի հաղթանակների, եթե նրանց չղեկավարվի բանվորական շարժումը և չղեկավարվի բանվոր դասակարգի կողմից։

Բնական է, որ Բաբեկի գլխավորած խուրրամիտների շարժումը, որը 20 տարի շարունակ ծավալվում էր Հայաստանին անմիջապես հարևան երկրում, չէր կարող իր արձագանքները չգտնել Հայաստանում։ Իրավացի է պրոֆ. Լեոն, երբ գրում է, թե «Այս մեծ խռովություններից մեկն սկսվել էր Հայաստանի սահմանակից Ատրպատական նահանգում և ներկայացնելով մի շատ հետաքրքրական երևույթ հասարակագիտական տեսակետից, կրկնակի ուշադրության արժանի է մեզ

[1] Հ. Մանանդյան, Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939, էջ 24։

[2] Его люди (солдаты) резали и убивали без разбора всех... как мусульман, так и зиммиев (не мусульман)", տես Աբու-լ-Ֆարաջ, գույք № 578, էջ 1, Ալ-Մակդիսի, նույն տեղում, էջ 61 և այլն։

համար, մանավանդ այն պատճառով, որ խոր արձագանքներ է տվել նաև Հայաստանում»[1]։

Հայաստանից առաջինը Բաբեկի հետ դաշնակցեց Սյունյաց Վասակ «իշխանաց-իշխեցողը»։ Մենք նշեցինք արդեն, որ տիրող դասակարգի ներկայացուցիչները Բաբեկի հետ դաշնակցում էին որպես այդ ժամանակաշրջանում արաբական տիրապետության դեմ գործող ամենաուժեղ գործոնի։ Այն բանը, որ բաբեկյան շարժման սուր ծայրն ուղղված էր արաբական լծի դեմ, հրապուրում էր տիրող դասակարգի այն ներկայացուցիչներին, որոնք խիստ տուժել էին արաբական արշավանքներից։ Սյունյաց Վասակ իշխանի երկիրը 821 թվին ենթարկվել էր Ավառանշան Սևադայի արշավանքին։ Այդ նվաճողը գրավել էր Ծղուկը և պատրաստվում էր ասպատակել ողջ Սյունիքը։ Իշխանաց-իշխեցող Վասակը, հավանաբար, չկարողանալով սեփական ուժերով ետ շպրտել օտար նվաճողին և Հայաստանում չգտնելով մի զորավոր դաշնակից, ստիպված դիմում է Բաբեկին, որն այդ ժամանակ արդեն շարդել ու փախուստի էր մատնել խալիֆայի մի քանի բանակներ։ Նա արդեն ճանաչված էր իբրև արաբների դեմ գործող ուժերից ամենազորավորն ու հեղինակավորը։

Վասակն ինքը գնում է Ատրպատական՝ անձամբ Բաբեկի հետ բանակցելու համար։ Բանակցությունները վերջանում են հաջող և նա Բաբեկի հետ միասին, բաբեկյան բազմաթիվ զորքերով, գալիս է Սյունիք։ Բաբեկի և Վասակի ուժերը սաստիկ ջարդ են տալիս Սևադա Ավառանշանին ու նրան դուրս շպրտում երկրից։ «Եւ Վասակ Սիւնեաց տէր,— պատմում է Մովսես Կաղանկատուացին,— ածեալ զԲաբան (Բաբեկին— Հ. Ուր.) ի Պարսից՝ էհար զնոսա և արար փախստական»[2]։ Իսկ Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Ապա Վասակ՝ Սիւնեաց տէր և իշխանաց իշխեցող, գնայ փութանակի և ածէ զԲաբան պարսիկ բազում զօրու յԱտրպատականէ, և եհար զՄրվան (Սևադային — Հ. Ուր.). սաստկապէս, և փախստական արար»[3]։

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 426։

[2] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 375։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 158։

Վասակի հետ դաշնակցելու գործում, անշուշտ, Բաբեկն էլ ուներ իր հաշիվը։ Լեոն իրավացի կերպով նկատում է, որ Բաբեկը, իհարկե, նկատի ուներ իր գործի օգուտը, երբ ընդունում էր Վասակ իշխանի հրավերը։ Արաբների դեմ կռվելու համար, անշուշտ, նա հաշվի էր առել և Սյունյաց երկրի փոխադարձ օգնությունը[1]։ Մեր հերթին ավելացնենք, որ Բաբեկը նկատի ուներ նաև Սյունիքի, ինչպես նաև Արցախի ու Աղվանքի, ստրատեգիական նշանակությունը։ Այդ տեղերից արաբները միշտ կարող էին խփել Բաբեկի թիկունքին։ Բաբեկի համար ստրատեգիական խոշոր բաց կլիներ, եթե նա անտարբեր մնար այն փաստի նկատմամբ, որ Սյունյաց ու Արցախի լեռներում գտնվեին արաբական զորքերը։ Բայց նրա համար Սյունիքի լեռներից արաբական զորքերի վանումը քիչ էր։ Անհրաժեշտ էր մշտապես Սյունիքն ու Արցախն ունենալ իր կողմում։ Այդ էր պատճառը, հավանաբար, որ Վասակի անակնկալ մահվանից հետո նա ամուսնանում է նրա դստեր հետ, որը գուցէ և նախատեսված էր Վասակի հետ վարած իր բանակցությամբ։ «Բայց ինքն Վասակ ի նմին ամի (821 թ.— Հ. Ուր.) վախճանի։ Եւ նոյն ժամայն առնու Բաբան զդուստրն նորա ի կնութիւն իւր. և առնէր ընդ ձեռամբ զզաւառն»[2]։ Եվ, որպես նորատի կնոջ ժառանգություն, նա իր ձեռքն է վերցնում Ծղուկ գավառը, որից հետո նա իր ազդեցությունը տարածում է նաև Սյունիքի մյուս գավառների վրա։

Նման նկատառումներով Բաբեկը դաշնակցության մեջ է մտնում նաև Բաղասականի և Աղվանքի այլ իշխանների հետ։ Հայտնի փաստ է, որ նույն 821 կամ 822 թվին Բաղասականի իշխան Ստեփանոսը, որը կոչվում էր Արլասադ, նույնպես Բաղասական է հրավիրում Բաբեկին իր դիրքերն այնտեղ ամրացնելու համար[3]։

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 431։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 158։ Տես նաև Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 375։

[3] Ս. Օրբելյանը վկայում է, որ Բաբեկը Բաղասական էր եկել «ձեռընտուութեամբ Արլ-Ասադայ Աղվանեցւոյ» (էջ 159)։ Իսկ Մ. Կաղանկատուացին վկայում է՝ Արլասադ կոչված Ստեփանոսը «էած զԲարան ու էհար զԲազակեցիսն», տես Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 376։

Այդ նույն ժամանակաշրջանում Բաբեկը, հենարան ունենալով Սյունիքն ու Բաղասականը, հավանաբար, ազգակցական և դաշնակցային կապերով մուտք է գործում նաև Արցախ նահանգի Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք և Տրի գավառները[1]։ Բաբեկի մուտքն Արցախ, պետք է ենթադրել, որ տեղի է ունեցել ոչ թե 827—828 թվերին, ինչպես ենթադրում է Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը[2], այլ 824—825 թվերին, այլապես անհասկանալի է դառնում Մովսես Կաղանկատուացու վերոհիշյալ գավառների մասին ասած «կալեալ զգաւառսն ամս տասն և երկու» (824—836) վկայությունը, որը, անշուշտ, Բաբեկին է վերաբերում։ Բաբեկն այս երկրներն էր եկել ոչ իբրև նվաճող։ Այդ երևում է ո՛չ միայն այն բանից, որ այդ երկրների իշխաններն իրենք են հրավիրել նրան ու դաշնակցել նրա հետ, այլև նրանից, որ Բաբեկն ազգակցական կապեր է ստեղծում նրանց հետ առանց նվաճողական նպատակների։ Տարարու ուշադրավ մի վկայությունից երևում է, որ Բաբեկն ամուսնացել էր այդ իշխանների աղջիկների և քույրերի հետ ու նրանցից ունեցել էր զավակներ։ «Շրջապատի բոլոր բատրիկները քեզ մոտիկ մարդիկ են,— կարդում ենք այդ վկայության մեջ,— և դու ունես նրանցից երեխաներ»[3]։

---

[1] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 376։

[2] Մ. եպիս. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղուանից, հ. 1, Վաղարշապատ, 1902, էջ 133։

[3] Տարարի, գույք № 578, էջ 48, գույք № 1088, էջեր 65, 66։ Ի միջի այլոց Տարարին շարունակության մեջ Բաբեկի ունեցած երեխաների փաստը բացատրում է նրանով, որ իբր թե Բաբեկը բռնությամբ քաշել-տարել է իշխանազուն հայ և աղվան գեղեցիկ օրիորդներին։ Իսկ Աբու-լ-Ֆարաջը հաղորդում է, որ նա բռնաբարում էր բոլոր գերի կանանց։ Արաբական աղբյուրների այս բացատրությունը տենդենցիոզ է և ոչ ճիշտ։ Այդ երևում է, օրինակ, նրանից, որ Բաբեկը, համաձայն մեր աղբյուրների, Վասակի աղջկան ոչ թե բռնությամբ տարավ, այլ օրինական ձևով ամուսնացավ նրա հետ։ Բացի այդ, ինքը Տարարին մի այլ տեղ խոստովանում է, որ Բաբեկը գերի ընկած նշանավոր կանանց հետ լավ է վարվել։ Նա պատմում է, որ Բաբեկի պարտությունից հետո Աֆշինի ճամբարում էին Բաբեկի մոտ գերի ընկած արաբ ազնվական կանայք, որոնք, երբ տեսնում են ճամբար բերված

Առժամանակ իր թիկունքն ապահովելով Սյունիքում, Արցախում և Աղվանքում, Բաբեկը նորից իր զենքն ուղղում է արաբների դեմ և մի շարք պարտություններ պատճառում նրանց[1]։

Սակայն, ինչպես երևում է, Սյունյաց և Աղվանքի իշխանները երկար չեն հանդուրժում Բաբեկի դաշնակցությունը, մինչև վերջը հավատարիմ չեն մնում խուրրամիտների առաջնորդին։ 825—827 թվականներին նրանք ապստամբություններ են բարձրացնում նրա դեմ, որի հետևանքը լինում է այն, որ Բաբեկն ստիպված զենք է գործադրում ժամանակավոր այդ դաշնակիցների դեմ։ Հայկական աղբյուրներում այդ մասին ունենք հետևյալ վկայությունները։

Բաղքի մասին.— «Յետ այսորիկ անհրամանակատար եղև գաւառն Բաղաց՝ յանօրէն Բաբանայ. և էլ նա ի Պարսից և էառ աւերեաց զերկիրն և ի սուր սուսերի էարկ զկանայս և զմանկունս Բաղաց»[2]։ Այս տեղի է ունեցել 826 թվին[3]։

Գեղամունիքի մասին.— 1) «Եւ անտի ի միւս տարին էանց Բաբան ի գաւառն Գեղարքունի և էարկ ի սուր զբնակիչսն ոգիս իբրև տասն և հինգ հազարս. և զմեծ Մաքենացւոց մայրաքաղաքն այրեաց. մնաց միայն ջրաղացն և այլ ոչ ինչ. և

շղթայակալ Բաբեկին, խփելով իրենց երեսներին, լաց են լինում։ Աֆշինի այն հարցին, թե դուք երեկ բողոքում էիք նրանից, որ նա ձեզ գերել է, իսկ այսօր լաց եք լինում նրա համար, կանայք պատասխանում են՝ «Բայց նա լավ էր վարվում մեզ հետ» (Տես գույք № 578, էջ 52)։

[1] Տարարին վկայում է, որ 824 թվին Մամուն խալիֆը Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ է նշանակում Սադուկ-իբն-Ալիին (Զուրայք մականունով) ու նրան հանձնում Բաբեկի դեմ մղվող կռվի գլխավոր հրամանատարությունը։ Բաբեկն առաջին իսկ ճակատամարտում ջարդում է նրան ու պարտության մատնում արաբական բանակը։ (Տես գույք № 578, էջ 7 և այլն)։

[2] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 375։

[3] Համաձայն Մ. Կաղանկատուացու մի տարի առաջ, քան Գեղաքունիքի կոտորածը, իսկ այն տեղի է ունեցել Հայոց 276 (= 827) թ վին։ Տես նույն տեղում։

էր թիւն Հայոց երկու հարիւր եօթանասուն և վեց»[1]։ Այսինքն՝ 827 թվին։

2) «Իսկ-ի գալ ամին[2] գնաց Բաբան ի գաւառն Գեղաքունեաց և էարկ ի սուր սուսերի զընակիչսն ոգիք իբրև 15.000, և զյոգնապայծառ մենարանն և զհռչակելի ուխտն Մաքենոցաց յաւարի առեալ զամենայն ստացուածն՝ այրեաց և քանդեաց զամենայն շինուածն»[3]։

3) «Յաւուրս յայսոսիկ այր մի յազգէն Պարսից ելեալ ի Բաղդադայ՝ Բար անուն[4], արկանէր զբազումս ի սուր սուսերի յազգէն Իսմայելի՝ գերելով զբազումս, և ասէր զինքն անմահ. և ի միում նուագի սատակէր երեսուն հազար ի պատերազմելն իւրում ընդ Իսմայելի։ Եւ եկն մինչև ցԳեղարքունի և մաշէր սրով զմեծ և զփոքր»[5]։

4) «Յաւուրս Աշոտու (՞) ոմն Բաբ (ազգէն իլիմացոց և կոչեաց զանուն զօրաց իւրոց անմահից զօրք)[6] և ի Բաբիլոնի աշխարհէն և զբազումս էարկ ի սուր սուսերի որ ի մի օր ԼՈ անձն կոտորեաց ազգէն Իսմայելի և դա մինչ ի Գեղաքունի»[7]։

Բաղասականի մասին.— «Յետ այսր (այսինքն՝ Ներսեհի ձեռքով Վարազ-Տրդատին սպանելուց, 821 թվից, հետո — Հ. Ուր.) անհնազանդ եղև գաւառն Բաղասականայ հրամանի և օրինաց Բաբանայ, որոյ եկեալ ձեռնտուութեամբ Աբլ-Ասա-

---

[1] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 375։

[2] Այսինքն՝ Մրվանի Սյունիք մտնելու հաջորդ տարին՝ 728 թ., որն ակներևաբար շփոթված է մոտ 100 տարով։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 159։

[4] Բաբեկին պարսիկ անվանելը զուտ այն սովորության հետևանք է, որ մեր պատմիչները պարսկական թագավորության մեջ մտած տերիտորիաները միշտ կոչել են Պարսկաստան, իսկ բնակիչներին՝ պարսիկ։ Մենք վերևում տեսանք, որ ըստ Կաղանկատուացու Վասակը Բաբեկին բերում է «ի Պարսից»։ Դիտենք, որ այդ ժամանակ պարսկական թագավորություն չկար։

[5] Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջեր 108—109։ Մ. Զամչյանցի մեջ բերած՝ Վարդանի վկայությունը մի փոքր այլ է (տես Մ. Զամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. 2-րդ, էջ 442)։

[6] Այս ծանոթությունը գրված է ձեռագրի լուսանցքում։

[7] ՀՍՍՌ Պետական մատենադարան, № 7584 ձեռագրի հիշատակություն, էջ 692։

դայ Աղվանեցւոյ, կոտորեաց սաստիկ և անողորմ զգաւառն Բաղասականայ. և մաշեաց մինչ ի կանայս ու մատաղ մանկտիս»[1]։

Մովսես Կաղանկատուացու աղոտ ու անորոշ վկայությունից երևում է, որ Աղվանքում Բաբեկի նկատմամբ եղած անհնազանդությունը տևում է երկար՝ մերթ հանդչելով, մերթ բորբոքվելով[2]։

Հայկական աղբյուրներից մեջ բերված այս վկայությունները մինչև օրս քննադատական վերլուծման չեն ենթարկվել։ Բոլոր ուսումնասիրողները նույնությամբ մեջ բերելով այս վկայությունները, Բաբեկին դիտել են որպես սովորական օտար մի նվաճողի, որը գործել է հրով ու սրով։ Կաղանկատուացին պարզ ու որոշակի ասում է, թե Բաբեկն Ատրպատականից նորից եկել է Սյունիք ու Բաղքի դեմ զենք կիրառել այն բանի համար, որ Բաղաց գավառն «անհրամանակատար» է եղել «անօրէն Բաբանին»։ Իսկ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Բաղասական գավառը նույն վիճակին է արժանացել, որովհետև «անհնազանդ եղև... հրամանի և օրինաց Բաբանայ»։ Պատմիչների այս ակամա խոստովանությունների մեջ է հենց Բաբեկի զենք կիրառելու պատճառը, այդ հարցի լուծման ամբողջ գաղտնիքը։ Թե ի՞նչ օրենքներ ու հրամաններ է տվել Բաբեկն այդ գավառներին, որոնց նրանք չեն ենթարկվել, անհնազանդ են դառել, սկզբնաղբյուրները չեն հայտնում։ Սակայն, ծանոթ լինելով բաբեկյան շարժման սոցիալական, քաղաքական ու իդեոլոգիական գաղափարներին, դժվար չէ կռահել այդ օրենքներն ու հրամանները։

Մենք տեսանք արդեն, որ խուրրամիտները (բաբեկյանները) դեմ չէին ուրիշ կրոնների և թշնամանք չունեին նրանց նկատմամբ, ուստի, այստեղ Սյունիքի հայ և այլազգական բնակիչների կրոնական զգացմունքներին դիպչելու մասին խոսք լինել չի կարող, և Բաբեկին այս իմաստով չէ, որ անվանում են «անօրեն»։ Մեր կարծիքով, այստեղ խոսքը խուրրամիտների սոցիալական գաղափարների մասին է։ Մտնելով

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 159։

[2] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 376։

Սյունիք, Արցախ և Աղվանք, խուրրամիտների բանակը, բնականաբար, իր հետ այդ երկրները բերեց բնության բարիքները ընդհանուր ու հավասար օգտագործելու, գույքային խոշոր սեփականության ոչնչացման, կրոնի ազատության գաղափարները։ Գաղափարներ, որոնք կարող էին խիստ վտանգավոր լինել Սյունյաց հայ գյուղացիության համար և իբրև գյուղացիական մտածելակերպ՝ դյուրըմբռնելի։ Որ իրոք խուրրամիտների հայացքներն ընկալվել են հայ գյուղացիների կողմից, այդ երևում է արաբական հեղինակ Մասուդի վկայությունից։ Նա պատմում է, որ խուրրամիտներ ապրում էին շատ երկրներում, ընդ որում նաև Հայաստանում[1]։

Կարող են մեզ առարկել, թե մենք ինչ երաշխիքներ ունենք Հայաստանում ապրող խուրրամիտների հայ լինելու մասին։ Թեկուզ նրանց մի մասը հայ էլ չլիներ, կասկածից դուրս է, որ նրանց զգալի մասը հայեր էին, որովհետև տիրող դասակարգը չեր կարող երկար հանդուրժել օտարազգի խուրրամիտների գոյությունն իր երկրում, եթե նա հենարան չունենար տվյալ երկրի ժողովրդի մեջ։

Մեր աղբյուրները խուրրամիտների և կամ նրանց հայացքների Հայաստանում տարածված լինելու մասին վկայություններ չունեն, և մենք չէինք էլ կարող նրանցից սպասել նման վկայություններ. բայց այդ չի կարող կռվան ծառայել Հայաստանում խուրրամիտյան գաղափարների ու շարժման տարածված լինելու փաստի դեմ։

Մենք որոշ ակնարկներ ունենք նաև այն մասին, որ Սյունիքի գյուղացիությունը մտել է նաև Բաբեկի բանակի մեջ։ Վարդանը վկայում է, որ Բաբեկն իր անկման ժամանակ գալիս է Սյունիք «միւս անգամ» զորք կազմելու համար։ Արաբական աղբյուրներում էլ ունենք մի ակնարկ այն մասին, որ երբ Բաբեկը պարտվում և գալիս է Սյունիք, Աֆշինը խիստ միջոցների է դիմում, որպեսզի նա այնտեղի բնակչությունը չհավաքի իր շուրջը և նոր բանակ չկազմի։ Ուրեմն Բաբեկը մինչ իր անկումն արդեն զորք կազմել էր Սյունիքից և Հայաստանի այլ վայրերից։ Հասկանալի է, որ նրա բանակի

[1] Մասուդ, գույք № 578, էջ 59, գույք № 1088, էջեր 81, 82։

մեջ մտնում էին խուրրամիտյան գաղափարներն ընկալած հայ գյուղացիները։ Հիշենք, որ Բաբեկը, համաձայն արաբական աղբյուրների, իր բանակի մեջ, իր դրոշի տակ էր առնում իր նվաճած, տիրած վայրերի բնակչությանը։ Նա նույնը արած պիտի լիներ նաև իր ձեռքն առած Ծղուկ գավառում և այլ գավառներում։ Եվ վերջապես անտրամաբանական է ենթադրել, որ Սյունիքի ու Հարակից նահանգների գյուղացիները 10—15 տարի իրենց երկրի հետ շփում ունեցող խուրրամիտներից չընկալեին նրանց պրիմիտիվ ընդհանրության ու հավասարության գաղափարները, գաղափարնե՛ր, որոնք արտահայտում էին նաև հայ գյուղացու մտածելակերպը։

Անշուշտ, 9-րդ դարում Հայաստանում տարածվող թոնդրակյանների շարժումը գաղափարական աղերս ուներ խուրրամիտների գաղափարախոսության հետ։ Մասամբ իրավացի է Լեոն, երբ պնդում է, որ Սմբատ Զարեհավանցուն «խոր ներշնչումներ էր անում պարսկական այն ազատ միտքը, որ մի՛ կողմից Բաղդադի արքունիքում անաստվածություն էր հաստատում, մյուս կողմից՝ խուռամյանների ընկերավարական վարդապետությունն էր տարածում Ատրպատականի լեռներում։ Այս վարդապետության հռչակավոր և քաջարի ներկայացուցիչ Բաբանի ժամանակակիցն էր Զարեհավանեցին, որը և անկասկած, շատ բան է ուսել և յուրացրել նրա աղանդի քարոզություններից[1]։

Հասկանալի է, որ Սյունիքի, Արցախի և Աղվանքի տիրող ֆեոդալ ազնվականությունը դժգոհելու էր Բաբեկից ու նրա դաշնակցությունից։ Նրանք չէին կարող չզգալ, որ բաբեկյան շարժման սոցիալական պայքարի սլաքը ուղղված է ֆեոդալական հողատիրության դեմ։ Եթե բաբեկյան շարժման ազատագրական բնույթը տվյալ իշխաններին մերձեցնում էր Բաբեկին, ապա նրա սոցիալական բնույթը վանում էր նրանց Բաբեկից։ Եվ հենց այս նկատառումով է, որ Բաբեկը նրանց աչքում

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. 2 րդ, էջ 475։ Մի այլ տեղ Լեոն գրում է, որ Բաբեկը «Հայաստանի նկատմամբ նվաճողական դիտավորություններ չուներ և իր արշավանքներն, երևի, ավելի քարոզչական (պրոպագանդի) դեր էին կատարում» (տես «Կոմունիզմը Հայոց պատմության մեջ», «Նորք», 1922, № 1, էջ 141)։

անօրեն էր։ Այս էր ահա պատճառը, որ այդ իշխանները շուտով մեկը մյուսի ետևից ապստամբեցին Բաբեկի դեմ՝ լինելով «անհնազանդ» նրա «օրենքներին ու հրամաններին»։ Բաբեկի և Սյունյաց ու Աղվանքի իշխանների 820-ական թվերի կեսերի ընդհարումներն ունեն դասակարգային բնույթ։

Պատմիչների այն հայտարարությունը, որ Բաբեկը Գեղաքունիքում 15.000 մարդ է սպանել, խիստ չափազանցված է։ Ամենանողկալի նվաճողն անգամ այդ ժամանակ, այդ մի գավառում չէր կարող 15.000 մարդ սպանել։ Շատ ուշագրավ է Մաքենացոց վանքի ավերման փաստը։ Բաբեկյանների մասին եղած ողջ գրականության մեջ այդ առաջին եզակի դեպքն է, որ խոսում է նրանց կողմից կրոնական կենտրոններ ավերելու մասին։ Պիտի ենթադրել, որ Մաքենացոց վանքը, որպես Գեղաքունի իշխանների հոգևոր կենտրոն և որպես հողատեր ֆեոդալ, խիստ թշնամաբար է ընդունել բաբեկյանների սոցիալական և, հատկապես, կրոնական հայացքները։ Քրիստոնյա հայերի համար պիղծ էր թվալու խուրրամիտների Մարիամ աստվածածնի մասին տված «հանցավոր» բացատրությունը, նրանց կողմից բոլոր կրոնները ճշմարիտ հայտարարելը և այլն։ Նրանց դուր չէր գալու այդ «պիղծ» բացատրությունների տարածումը՝ իրենց հոտը կազմող բնակչության մեջ։ Այդ պատճառով էլ, հավանաբար, Մաքենացոց վանքի վանականները պայքար են ծավալել խուրրամիտների կրոնական և սոցիալական հայացքների դեմ, պաշտպանել են ֆեոդալական դասի տիրապետությունն ու Գեղաքունի իշխանների Բաբեկի դեմ բարձրացրած ապստամբությունը։ Իսկ դա խուրրամիտների ըմբռնմամբ նշանակում էր վնաս պատճառել ուրիշին, ուստի և ենթակա էր ոչնչացման։

Հետաքրքիր է, որ խուրրամիտները թալանի նպատակով անակնկալ հանկարծակիությամբ չեն հարձակվել Մաքենացոց վանքի վրա. այդ երևում է Ստեփանոս Օրբելյանի հետևյալ խոսքերից. «Բայց կրօնաւորքն նախխմաց եղեալ և յերկուս բաժանեալ՝ կէսքն գնացին ընդհօրն Սաղօմի... ի գաւառն Շիրակայ...։ Իսկ կէսքն գնացին ի յԱղվանս առաջնորդ կալեալ զմի ոմն եղբարցն»[1]։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 159։

820-ական թվերի վերջերում Բաբեկը սաստելով Սյունիքի, Արցախի և Աղվանքի իշխանների իր դեմ կատարած տրնձգությունները, կրկին ամրացնելով իր թիկունքը, զենքը նորից ուղղում է արաբների ուղարկած նորանոր բանակների դեմ։ 820-ական թվականների վերջում և 830-ական թվականների սկզբում բաբեկյան շարժումը հասնում է իր գագաթնակետին։ Նա ամբողջ Ատրպատականից, գյուղացիական երկաթյա ցախավելով, մաքրում է արաբական զավթիչներին։ Ավելին, օգտվելով բյուզանդական սահմանում խալիֆաթի զբաղվածությունից, դաշնակցած Բյուզանդիայի հետ, Բաբեկը 830 թվին հարձակվում է Կենտրոնական Իրանի մարզերի վրա և, նվաճելով Համադանը, այն դարձնում է իր ճամբարը։ 830-ական թվերին խալիֆաթը առնված էր աքցանի մեջ. մի կողմից Բաբեկը, մյուս կողմից Բյուզանդիան քայլ առ քայլ սեղմում էին այդ աքցանի ծայրերը։ Խալիֆաթը կծկվում էր։

Փոխված այս իրադրության մեջ առժամանակ փոփոխվում է նաև Սյունիքի ու Աղվանքի իշխանների վերաբերմունքը Բաբեկի հանդեպ։ Արաբների դեմ բաբեկյանների մղած ազատագրական պայքարի հաղթարշավը, Ատրպատականի ազատագրումը ոգևորություն առաջացրին նաև Հայաստանում, Վրաստանում և այդ երկրներին ազատագրական պայքարի հանեցին արաբական տիրապետության դեմ։

830-ական թվերի առաջին կեսը Անդրկովկասի ժողովուրդների արաբների դեմ մղած ազատագրական համատեղ պայքարի շրջանն է։ Այդ պայքարին ակտիվորեն մասնակցեց նաև Հայաստանը, նրա կազմում և Սյունիքը։

Ապստամբությունների այդ ընդհանուր շղթայի մի օղակն էր կազմում Հայաստանում Հոլ ոստիկանի դեմ բարձրացված ապստամբությունը։

Այդ ապստամբությունը հայագիտության մեջ թերի է պարզաբանված, ուստի մենք հարկ ենք համարում հանգամանորեն կանգ առնել նրա վրա։ Մեր սկզբնաղբյուրներում այդ մասին ունենք հետևյալ վկայությունները։

1) Հովհաննես Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», էջ 113.

«Իսկ Սևադա ոմն... ընդվզեալ և խանդացեալ ընդ ոստի-

կանին Հօլայ՝ գումարտակ ընդդէմ նորա զօրաց բազմաց ունէր, ընդ որս էր և մեծ սպարապետն Հայոց Սմբատ, և Սիւնեաց տէր և այլ ևս ազատագունդ տեարք։ Եւ ապա հնարի կամ ըմբռնել զՀօլ կամ դրժել ի մահ»։

2) Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգի Սիսական», էջ 167.

«Սա (Սևադան — Հ. Ուր.) ընդվզեալ և խանդացեալ ընդ Հալն միաբանութեամբ Սմբատայ Բագրատունւոյ և Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գումարտակ պատերազմի խմբեալ կամէր կռուել»։

3) Վարդան, «Պատմութիւն տիեզերական», էջ 109—110.

«Յորում աւուր (Դավիթ կաթողիկոսի — Հ. Ուր.) ոստիկան ոմն ել ի Հայս՝ Հալ անուն, որում ընդդէմ դարձեալ՝ մեռան Սմբատ և Սահակ՝ Սիւնեաց տէր»։

Հոլ անունը, հավանաբար, արաբ ոստիկաններից մեկի մականունն էր։ Մարկվարտի կարծիքով Հոլը Իսա-իբն-Մուհամեդ-իբն-Աբու Խալիդ ոստիկանն էր[1]։ Մարկվարտի այս կարծիքը հիմնովին սխալ է։ Մարկվարտին և շատ ուրիշների շփոթության մեջ է գցել Յակուբիի վկայությունը այն մասին, որ Իսա-իբն-Մուհամեդ-իբն-Աբու Խալիդի դեմ 820—21 թվերին Հայաստանում ապստամբել է ոմն Սևադա Իբն-Աբդ Համիդ-ալ-Գահհաֆի։ Այս Սևադային նույնացնելով հայկական աղբյուրների վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված կայսիկ Սևադայի հետ, նա ենթադրել է, որ Հոլը Իսա-իբն-Մուհամեդ-իբն Աբու-Խալիդն է։ Աղբյուրների ուշադիր զննումը ցույց է տալիս, որ Իսայի դեմ 820—21 թվերին ապստամբած Սևադա իբն-Աբդ-Համիդ-ալ-Գահհաֆին կայսիկ Սևադան չէ, այլ, ինչպես տեսանք վերևում, արաբական մի ուրիշ զորավար, որին հայերը կոչել են Ավառանշան մականունով։

Մարկվարտի առաջարկածի նման եթե ընդունենք՝ մի կողմից կայսիկ Սևադայի և Սևադա իբն-Աբդի կամ Ավառանշանի, իսկ մյուս կողմից՝ Հոլ ոստիկանի և Իսա-իբն Մուհամեդ իբն-Աբու Խալիդ ոստիկանի նույնացումները, ապա պետք

[1] Մարկվարտ, Բագրատունեաց ծագումը, էջ 49։

է ընդունենք նաև, որ Հոլի դեմ բարձրացված ապստամբությունը տեղի է ունեցել ոչ թե 825 թվին, ինչպես կարծում են Մ. Չամչյանցը[1] և Մարկվարտը, այլ 820—821 թվին, ինչպես վկայում է Յակուբին[2], և կամ ամենաուշը՝ 824 թվին, այսինքն՝ Իսա-իբն-Մուհամեդ իբն-Աբու Խալիդի Հայաստանից հետ կանչվելու տարում[3]։

Սակայն հայկական սկզբնաղբյուրներից վերևում մեջ բերված վկայություններից երևում է, որ Հոլի դեմ բարձրացված ապստամբությունը չէր կարող տեղի ունեցած լինել 826 թ. առաջ, քանի որ նրան մասնակցել էր նաև «մեծ սպարապետն Հայոց» Սմբատ Բագրատունին, որը իր հորը՝ Աշոտ Մսակերին հաջորդել էր 826 թվականին։ Բացի այդ հայտնի է, որ Մանազկերտի կայսիկների էմիր Սևադան դեռ 823—24 թվերին կատաղի կռիվներ էր մղում Աշոտ Մսակերի ու նրա եղբոր դեմ, մի կռիվ, որը հոր մահվանից (826 թ.) հետո խաղաղ բանակցությունների միջոցով ավարտեց ինքը՝ Սմբատ սպարապետը։ Այստեղից հասկանալի է, որ Սմբատ Բագրատունին Կայսիկ Սևադայի հետ համատեղ կերպով Հոլի դեմ ապստամբություն կարող էր բարձրացնել միայն 826 թվականից հետո։

Յակուբիի մի ուշագրավ վկայությունը, որի վրա ուշադրություն չեն դարձրել նախորդ ուսումնասիրողները, մեզ հնարավորություն է տալիս պարզելու ոչ միայն Հոլ ոստիկանի իսկական անունը, այլև նրա դեմ բարձրացված ապստամբության մոտավոր թվականը։

Արաբ պատմիչը խոսելով 830—833 թթ. ընթացքում Հայաստան ուղարկված հինգ ոստիկաններից երրորդի՝ Խալիդ-իբն-Եզիդ-իբն-Մազիադու մասին, վկայում է, որ սա Հայաստան գալուց անմիջապես հետո հարձակվում է Վրաստանում ապստամբություն բարձրացրած ծանների վրա և հաղթում

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. 2-րդ, էջ 429։

[2] Յակուբի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», էջեր 45—46։

[3] Տաբարի, գույք № 578, էջ 7 և Յակուբի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», էջ 46։

նրանց։ «Բայց մի քիչ հետո,— շարունակում է Յակուբին,— նրանք (պակասում է) նրանց հետ գլուխ բարձրացուցին նաև Քայսիանները...[1]։ Սրանք Խալիդի դեմ ապստամբություն էին գրգռում։ Թշնամիների մեջ էր նաև Ալի-իբն-Եահիա-ալ-Արմանին, որին Խալիդը ուրիշ շատերի հետ միասին բռնեց ու ալ Մամունին ուղարկեց»[2]։ Ինչպես տեսնում ենք, Յակուբին ուղղակի ասում է, որ ծանների շարժումը ճնշելուց մի քիչ հետո կայսրիկներն ինչ-որ ուրիշների հետ միասին գլուխ են բարձրացրել Խալիդի դեմ։ Յակուբու այս վկայությունը հար և նման է մեր աղբյուրների վերևում մեջբերված վկայություններին։

ա) Յակուբու մոտ ասված է, որ կայսրիկները «ապստամբություն էին գրգռում» Խալիդի դեմ, այսինքն՝ դեռ չէին ապըստամբել, այլ գրգռում էին, պատրաստվում։ Նույնն են ասում և մեր աղբյուրները՝ «Սկադա ընդվզեալ խանդացեալ ընդ ոստիկանին Հօլայ», զորքեր էր գումարում և «կամէր կռուել», նպատակ ունենալով կամ «ըմբոնել զՀօլ կամ զրժել ի մահ»։ Հոլն իմանում է և Դավիթ կաթողիկոսին միջնորդ դարձնելով, նրա բերանով հարցնում է. «Թէ ընդէ՞ր և կամ վասն է՞ր իրիք այդպէս զօշաքաղութեամբ փմիք հպարտացեալ խրոխտացք դաւել դիս»[3]։ բ) Յակուբու վկայությունից երևում է, որ կայսրիկներից բացի նրանց հետ եղել են ինչ-որ ուրիշներ, որոնք կարծես թե ավելի ակտիվ գործողություններ են սկսել, կամ նախաձեռնողներ են եղել, «որոնց հետ գլուխ են բարձրացրել» նաև կայսրիկները։ Թերևս այդ ուրիշները հենց Սմբատ սպարապետն ու Սահակ իշխանը լինեին։ Ի դեպ, այս բանի օգտին է խոսում նաև Վարդանի վկայությունը, ըստ որի, Հոլին դիմադարձ են եղել Սմբատն ու Սահակը։ գ) Յակուբու մոտ ապստամբություն գրգռողների մեջ հիշվում է մի Ալի-իբն Եահիա-ալ Արմանին։ Սա անշուշտ հայ է, որն ունի արաբա-

[1] Մարկվարտն իրավացիորեն կարդում է «կայսրիկներ» և ցույց է տալիս, որ Մանազկերտի կայսրիկներն են։ Տես նրա «Բագրատունեաց ծագումը» էջ 49, ծանոթ. 1։

[2] Յ ա կ ո ւ բ ի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», էջեր 48, 49, նույնը տես Տ ա բ ա ր ի, գույք № 577, էջ 37։

[3] Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն Հայոց, էջ 114։

կան անուն, մի բան, որն ընդունելի է այդ ժամանակների համար։ Մեր աղբյուրների վկայությամբ ապստամբների բանակում կային «այլ ևս ազատագունդ տէրք»։ Հավանաբար այս ազատագունդ տերերից էր այդ ալ Արմանին, որը ուրիշների հետ միասին գերվել ու խալիֆաթին էր ուղարկվել։ Յակուբու և հայկական սկզբնաղբյուրների վկայությունների գրեթե հար և նման լինելը, թվում է, թե այլևս ոչ մի կասկած չի թողնում, որ Հոլը ոչ այլ ոք է, եթե ոչ Խալիդ-իբն-Եզիդ ոստիկանը[1]։

Իմանալով Հոլի ով լինելը, հեշտությամբ որոշվում է ապըստամբության տարեթիվը։ Քանի որ 830—833 թթ. ընթացքում Արաբական խալիֆաթի կողմից Հայաստանում նշանակված հինգ ոստիկաններից երրորդն է Խալիդ-իբն-Եզիդը, ապա հաստատ կերպով պետք է ընդունել, որ նա Հայաստան է եկել 831—832 թվերին, ուստի նրա դեմ ապստամբության փորձն էլ տեղի է ունեցել այդ թվերին։ Որ իսկապես այս թվերին է տեղի ունեցել ապստամբության փորձը, երևում է նաև Հովհ. Դրասխանակերտցու աշխատությունից։ Նա այս ապստամբության մասին խոսելուց անմիջապես հետո գնում է Դավիթ Կակաղեցի կաթողիկոսի մահը, որը տեղի է ունեցել 833 թվին[2]։

Բացի վերևում նշված փաստերից, պետք է նշել նաև, Հայաստանում արաբական լծի դեմ ապստամբելու համար ամենանպաստավոր ժամանակը 830-ական թվերի սկիզբն էր, որովհետև Արաբական խալիֆաթը առնված էր աքցանի մեջ և Բաբեկն իր հաղթական շարժումով իջել էր Իրանի կենտրոնական մարզերը ու ճամբարել Համադանում։ Օրինակը վառակիչ էր, պայմանները նպաստավոր։ Այդ էր պատճառը, որ անգամ Շիրակի տեր Սմբատ սպարապետը հրաժարվելով իր անգամ Շիրակի տեր Սմբատ սպարապետը հրաժարվելով իր անգամ, Աշոտ Մսակերի, արաբների կողմում մնալու քաղաքականությունից, այս անգամ, իր գործունեության մեջ եղակի

[1] Հոլի անձնավորության մասին մեր վերև շարադրված տողերը գրված էին արդեն, երբ մենք կարդացինք Ա. Շահնազարյանի „Двин, историко-географический очерк" (Երևան, 1940 թ.) աշխատությունը. նա ևս Հոլ ոստիկանը համարում է Խալիդ-իբն-Եզիդ-իբն-Մազիադին (տես էջ 102)։

[2] Հ ո վ հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, Պատմութիւն Հայոց, էջ 115։

անգամ, զենքի դիմեց արաբների դեմ՝ իրեն միացնելով նաև Գեղաքունիքի իշխանին, որն, ինչպես կտեսնենք, սերտ համագործակցության մեջ էր նրա հետ։ Որ իրոք, Հայաստանում էլ արաբների ոտքի տակ հողը այրվում էր, երևում է Հոլի Դավիթ կաթողիկոսի բերանով Սմբատին, Սահակին և Սևադային հայտնած վերոհիշյալ խոսքերի շարունակությունից. «Թէ ոչ զիս՝ ասէ, կամիք ընդունել, վայրացդ ելիցդ իմ տեղի տուք ի բաց գնալով, զի ի ձէնջ աներկիւղաբար չու արարեալ երթեալ գնացից»[1]։ Հոլի այս վարմունքը ոչ թե բխում էր նրանից, որ «Հոլը խաղաղասեր մարդ էր», ինչպես ջանում է հավատացնել Լեոն[2], այլ նրանից, որ խալիֆաթը նեղ դրության մեջ էր և նրա ոստիկանը չէր կամենում, որպեսզի Հայաստանն էլ բռնկվի ապստամբություններով։ Լեոն մոռանում է, որ այդ նույն ոստիկանը, հենց այդ ժամանակ, առանց քաշվելու թափեց ապստամբ ծաների արյունը, և ապա, հենց իրենց՝ հայ ապստամբների արյունը։ Նվաճողները խաղաղասեր չեն լինում իրենց դեմ ապստամբածների նկատմամբ։

Հետևյալ կերպ է ընթանում Հոլի դեմ բարձրացած ապըստամբությունը։ Ապստամբության մասնակիցներն իրենց բանակները կենտրոնացնում են Հրազդանի ափին։ Հոլն իմանալով այդ մասին, իր մոտ է հրավիրում Դավիթ կաթողիկոսին և նրան իր կողմից պատգամավոր ուղարկում ապստամբների մոտ ու փաստորեն աղերսում, որ նրանք ետ կանգնեն ապըստամբությունից, դավեր չնյութեն իր դեմ, որ եթե նրանք ուզում են իր հեռացումը ինքը կհեռանա։ Դավիթ կաթողիկոսը գալով ապստամբների մոտ, սկսում է համոզել նրանց, որպեսզի նրանք ետ կանգնեն իրենց մտադրությունից։ Բայց ապստամբները չեն ուզում լսել կաթողիկոսին։ Իմանալով ապստամբների հաստատ որոշումը, այն է՝ «կամ ըմբռնել զՀոլ կամ զրժել ի մահ», Հոլը դիմում է կարուկ միջոցի։ Որոշում է կանխել ապստամբներին, լինել նախահարձակ, քանի դեռ նրանք չեն դիմել ակտիվ գործողությունների։ Երկու հազարանոց հեծյալ ջոկատով նա գաղտագողի, անսպասելի կերպով

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 114։
[2] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 431։

խփում է Հրազդանի ափին, Կավակերտի դիմաց ճամբարած ապստամբներին ու խուճապի մատնելով, ցրում նրանց բանակը։

Այդ մասին Հովհաննես Դրասխանակերտցու մոտ կարդում ենք «Հոլ... վաղվաղակի ելանէր ընդդեմ նոցա ի պատերազմ։ Եւ բանակ նոցա նստէր առ եզերբ Հուրաստան գետոյ հանդէպ դաստակերտին Կաւակերտի։ Իսկ իբրև Հոլ ուժգին իմն ասպատակ սփռէր ի վերայ նոցա և ի բախիլն ընդ միմեանս՝ ի փախուստ դառնային զօրք նոցա առաջի զօրուն Հոլայ»[1]։ Այդ կռվում սպանվում է Սահակ Սյունին, իսկ Գեղաքունիքի իշխանը, Սմբատ սպարապետն ու Սևադան հազիվ կարողանում են փախչել ու ազատվել։ Արագությունն ու անսպասելի նախահարձակ լինելը, գործոններ, որոնք պատերազմներում վճռական նշանակություն ունեն, օգնեցին Հոլին։ Նա Դվին է վերադառնում մի շարք գերիներ վերցրած, որոնց հետո ուղարկում է խալիֆին։

Անկախ հետևանքից, այս ապստամբությունն ուներ ազատագրական բնույթ, այն ուղղված էր արաբական տիրապետության լծի դեմ և կազմում էր մի օղակն ազատագրական այն մեծ պայքարի, որ այդ ժամանակ մղում էին Անդրկովկասի՝ արաբական լծի տակ հեծող եղբայրական ժողովուրդները։ Չենք կարող համաձայնվել Ինճիճյանի հետ, որը սույն ապստամբությունը համարում է «անխորհուրդ»[2]։

Կավակերտի ճակատամարտից հետո ազատագրական պայքարը Հայաստանում չմարեց։ Յակոբին վկայում է, որ Հոլին հաջորդած ոստիկանը Հայաստան հասնելուն պես (հավանաբար 832 թ.) մահանում է՝ փոխանորդ կարգելով իր որդուն. «Երկիրը (Հայաստանը — Հ. Ուր.) վերստին շփոթության մեջ ընկավ»[3]։ Մամուն խալիֆն ուղարկում է նոր ոստիկան՝ Ալի-ալ-Բաղդիսին (հավանաբար 832—833 թվերին), որը «երբ եկավ, երկիրը (Հայաստանը — Հ. Ուր.) շփոթության մեջ էր։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 114։
[2] Հ. Ղ. Ինճիճյան, Հնախոսութիւն Հայաստանեայց Աշխարհի, հ. 1, Վենետիկ, 1835 թ., էջ 446։
[3] Յակոբի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», էջ 49։

Բերդակալներուն դեմ կռվեցավ. բերդը գրավեց և Դաբիլ (Դվին) քաշուեցավ և հոն մնաց»։ Սա արշավում է նաև Թիֆլիս[1]։ Ուրեմն Հոլի դեմ բարձրացած ապստամբությունից հետո, հաջորդ տարիները՝ մինչև 833 թ., Հայաստանը «շփոթության» մեջ էր, ոստիկաններն ստիպված էին կռվելու բերդակալների և ամրոցների դեմ, այսինքն՝ ազատագրական պայքարը շարունակվում էր։

Խալիֆաթի համար այսպիսի ծանր ժամանակաշրջանում, երբ մի կողմից Բյուզանդիան, մյուս կողմից հաղթական Բաբեկը սեղմում էին խալիֆաթի տիրապետության սահմանները, իսկ երրորդ կողմից Հայաստանը, Վրաստանը ալեկոծվում էին խալիֆաթի դեմ ուղղված ապստամբություններով, մահանում է Մամուն խալիֆը (833 թվին)։ Խալիֆաթի համար ամենավտանգավոր թշնամին մնում էր Բաբեկը, դրա համար էլ մեռնող խալիֆն իր հաջորդ Մուսթասիմին կտակ է թողնում՝ «Բաբեկի դեմ պայքարը շարունակիր վճռաբար, համառ, եթե պայքարն երկարի ինքդ անձամբ արշավիր»[2]։

Եվ իրոք «Մուսթասիմն իր ամբողջ ուժը ուղղում է Բաբեկի դեմ»[3]։ Նրա խալիֆության առաջին տարում բաբեկյան շարժումը տարածվում էր ու ընդարձակվում։ Տաբարու վկայությամբ 834 թվին խուրրամիտների հավատքն ընդունել են շատ ժողովուրդներ Համադանի, Իսպահանի և այլ շրջաններում[4]։ Նոր խալիֆը 835 թ. Բաբեկի դեմ մղվող կռվի գլխավոր հրամանատար է նշանակում իր նշանավոր զորավար Աֆշին Հայդար-իբն Կաուսին՝ տալով նրան իր ողջ վարձկան զորքը, որի մեջ մեծ դեր էին կատարում վարձկան թուրքերը, և անսահման իրավունքներ ու անհամար փող[5]։ Աֆշինին է տրվում նաև Հայաստանի կառավարիչներ նշանակելու իրա-

---

1 Յակուբի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», էջ 49—50։

2 Տաբարի, գույք № 1088, էջ 9։

3 Ադ-Դինավարի, գույք № 578, էջ 4։

4 Գույք № 578, էջ 8։

5 Տաբարի, գույք № 578, էջ 8, գույք № 1088, էջ 9, տես նաև Ադ-Դինավարի, գույք № 578, էջ 4, Աբու-լ-Ֆարաջ, գույք № 578, էջ 1 և այլն։

վունքը։ Աֆշինն ինքը Հայաստան չի գալիս. նա Բաբեկի դեմ գործողություններ է սկսում Իրանից՝ Համադանի շրջանում, ուր այդ ժամանակ գտնվում էր Բաբեկի ճամբարը։ «Աֆշին Ատրպատական հասնելեն ետքը (835 թ.) Հայաստանի կառավարությունը Մուհամմադ Բ. Սուլեյման ալ Ազդի աս Սամարքանդի հանձնեց։ Ասիկա այն միջոցին հասավ երբ Սահլ Բ. Սունբաթ Առանի մեջ ապստամբած էր եւ երկրին բռնացած։ Արդ երբ իր (Սահլի — Հ. Ուր.) երկիրն հասավ Սահլ գիշեր ժամանակ հարձակեցավ իր (Սամարքանդի — Հ. Ուր.) վրա և հաղթեց»[1]։

Սուլեյման ալ Ազդին, փաստորեն, Աֆշինի կողմից նետվում էր Բաբեկի թիկունքը, Սյունյաց և Աղվանքի լեռները՝ թիկունքից խփելու համար։ Սակայն Աղվանքի իշխան Սահլը ապստամբվում է արաբների դեմ ու ջարդում Սուլեյման ալ Ազդին։ Այս դեպքին է վերաբերում, անշուշտ, Մարկվարտի և Բարխուդարյանցի կողմից էջմիածնի № 633 ձեռագրից մեջբերված հետևյալ վկայությունը. «Իսկ երկու ՃՁՁ (=837) Հայոց՝ Բժան (երկոտասան) հազար (հեծելոց յանկարծահաս ելեալ ի Բախտատա՝ արշաւէին յերկիրս Աղուանից։ Անդ ակն ի վէր հարեալ Սահլի Սմբատեան, որ յարքայից Զառմիհրական տոհմէն էր, գործակից իսկ կալեալ զմեծ նահատակն Գէորգիոս, դիմէ ի վերայ որպէս արծուի խոյացեալ ի տկար թըռչունս, այսր անդր ցրուեալ տապաստ դաշտացն արկեալ վանէր»[2]։ Ի դեպ, այս վկայության մեջ Սահլի ապստամբության տարեթիվը 1—2 տարով շփոթված է։ Հիշյալ վկայության շարունակության մեջ ասված է, որ նույն 837 թվին Սահլը բռնել է Բաբեկին։ Իրոք, նա այդ թվին բռնեց Բաբեկին, բայց արաբական այս բանակը նա ջարդեց ոչ թե այդ նույն՝ 837 թվին, այլ, ինչպես Յակուբին է վկայում, 835 թվին։

---

1 Յակուբի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», էջ 50։

2 Մ. եպիս. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղուանից, հ. 1, էջ 134։ Տես նաև Մարկվարտի՝ Բագրատունեաց ծագումը, էջ 55։ Այս հեղինակների մատնացույց արած ձեռագրում, որը ՀՍՍՌ Պետական Մատենադարանի № 615-ն է, մենք չգտանք հիշյալ վկայությունը, հավանաբար, ձեռագրի համարը սխալ է մատնացույց արված։

Այս տարիների մասին Մովսես Կաղանկատուացին պատմում է, որ արաբական մի քանի զորամասեր ասպատակում են Աղվանքը, Արցախը և Սյունիքը։ Նա Սյունիքի մասին գրում է. «Յետ այնորիկ արշաւանս առնէր (խոսքը ոմն արաբ զորավարի մասին է — Հ. Ուր.) յաշխարհն Սիւնեաց և գերի վարեալ զԲաղաց սահմանս, դայ իջանէ յԱղահեջ գաւառ...»[1]։ Յակոբին նույնպես վկայում է, որ Սուլեյման ալ Աղդիից հետո Աֆշինը Հայաստանի կուսակալ է նշանակում մի քանի այլ զորավարների և նրանց հանձնում այդ կողմերից Բաբեկի դեմ մղվող կռվի հրամանատարությունը։ Սուլեյմանին հաջորդած կուսակալը «Հայաստան երթալեն ետքը» նորից «Ծանարցիներին դեմ կռուեցավ և Տփխիս անցավ»[2]։

Վերոհիշյալ բոլոր փաստերից բխում են հետևյալ հետևությունները.

Արաբական գլխավոր հրամանատարությունը Բաբեկի դեմ մղվող կռվում միշտ էլ իր բանակը բաժանել է երկու մասի. հիմնական մասը գործողություններ է վարել Բաբեկի դեմ ճակատից՝ Համադանից, իսկ մյուս մասը ուղարկվել է Հայաստան, Աղվանք, Վրաստան՝ Բաբեկին թիկունքից խփելու, ինչպես նաև այդ երկրներում ծավալվող ազատագրական պայքարը ճնշելու համար։

830—835/36 թվերին ազատագրական ապստամբություններ են բարձրացել Հայաստանում, Աղվանքում (Արցախում) և Վրաստանում. այդ մասին են խոսում Հոլի դեմ բարձրացած ապստամբությունը, դրանից հետո Հայաստանում տիրող խառնաշփոթ դրությունը, Սահլի ապստամբությունը, ծաների կրկնակի ելույթը և արաբ զորավարների արշավանքը Թիֆլիս։ Անդրկովկասի ժողովուրդների այս համատեղ ազատագրական պայքարը ոգեշնչում ու մղում էր ստանում բաբեկյան գյուղացիական ազատագրական շարժման հաղթարշավից, մանավանդ, որ 835 թվին Բաբեկը մի քանի անգամ պարտության մատնեց Աֆշինին Համադանի տակ[3]։

---

[1] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 378։

[2] Յակոբի, տես Մարկվարտի՝ Բագրատունեաց ծագումը, էջ 82։

[3] Աբու-լ-Ֆարաջը վկայում է, որ Բաբեկի դեմ նշանակված Աֆ-

Մյուս կողմից Հայաստանում, Աղվանքում ու Վրաստանում բարձրացած ապստամբությունները փաստորեն ապահովում ու պաշտպանում էին բաբեկյան շարժման թիկունքը։

Ահա, ազատագրական պայքարի այս ընդհանուր վերելքի ժամանակ (830-ական թվերի առաջին կեսին), երբ թվում էր, թե մոտ է արաբական լծի անկումը, Հայաստանի, Վրաստանի, ինչպես նաև Սյունիքի, Արցախի, Աղվանքի իշխանները առժամանակ մոռանում են խուրրամիտների շարժման սոցիալական վնասակարությունը, Բաբեկի նկատմամբ ունեցած իրենց թշնամությունը և ընդհանուր թշնամի հանդիսացող արաբների դեմ մաքառում են համատեղ, լռակյաց համերաշխությամբ։

Բայց իրադրությունը արմատապես փոխվում է 836 թվականից։

Մուսթասիմ խալիֆը զորահավաքի ենթարկեց իր ամբողջ ուժերը, մինչև իսկ իր խոհարարին ու դերձակին (Տաբարի) և այդ ամբողջ բանակը նետեց Բաբեկի դեմ։ Նա իր ողջ գանձարանն ի սպաս դրեց Բաբեկի դեմ մղվող պատերազմին, քարավաններով փողեր ուղարկեց Աֆշինին իր վարձկան բանակը մեծացնելու ու Բաբեկի կողմնակիցներին կաշառելու համար։

Աֆշինը Բաբեկի դեմ ստեղծում է երկաթյա բռունցք և առաջին լուրջ հարվածը հասցնում նրան 836 թվին, որից հետո նա փախչում է Մուղան[1]։ Աֆշինը կտրուկ միջոցների է դիմում նաև Բաբեկի թիկունքը քայքայելու համար։ Նա նորանոր բանակներ է ուղարկում Սյունիք, Աղվանք, միաժամանակ խոստանալով այս շրջանների հայկական իշխաններին տալ ինքնավարություն, ազատել խարաջից, խոստանում է հսկայական գումարներ, պատիվներ ու արտոնություններ, եթե նրանք կռվեն իր կողմում և բռնեն Բաբեկին։ Խալիֆի կողմից Բաբեկը գնահատվում է. կենդանի՝ 2 միլիոն դիրհեմ, իսկ գլուխը՝ մեկ միլիոն[2]։

շինը Բաբեկի հետ կռվում է մեկ ամբողջ տարի ու մի քանի անգամ փախչում է նրա առջևից (տես գույք № 578, էջ 1)։

[1] Տաբարի, գույք № 578, էջ 11։

[2] Ալ-Մակդիսի, գույք № 1088, էջ 85, նույնը՝ Տաբարին։

Այս հանգամանքները փոխում են Սյունիքի, Արցախի և Աղվանքի իշխանների վերաբերմունքը Բաբեկի նկատմամբ։ Ինքնավարության, ապահարկության և այլ արտոնությունների մասին Աֆշինի տված խոստումները, երկու միլիոն դռամարը այդ իշխաններին մղում են դեպի անձնական նեղ շահերը, իսկ Բաբեկի կրած առաջին պարտությունը և արաբների առաջխաղացումը հուսախաբություն է առաջացնում արաբական լծի մոտալուտ կործանման մասին նրանց ունեցած պատրանքների մեջ և նրանց մղում դեպի արաբներին դուր գալու, նրանց հետ գործակցելու դավաճանական ուղին։ Թերևս երկյուղ կրելով առաջիկա հաշվեհարդարից, նրանցից յուրաքանչյուրն այժմ ջանում է ապստամբել Բաբեկի դեմ, օգնել արաբներին նրան բռնելու և բաբեկյան շարժումը ճնշելու գործում։

Հավանաբար Բաբեկի Մուղան նահանջելու ժամանակին է վերաբերում Կաղանկատուացու այն վկայությունը, որ Արցախի Նասրի իշխանը (ըստ Բարխուդարյանցի Դիզակի իշխան, տե՛ս «Պ. Աղ», հ. 1, էջ 133), որը կոչվում էր Աբու Մուսե, Արլատադի քրոջ որդին, ապստամբվում է Բաբեկի դեմ ու իր իշխանությանը ենթարկում Արցախի Վայկունիք, Բերձոր, Սիսական և այլ գավառներ։ Բաբեկն ստիպված «Ի նոյն ամին էանց զգէտովն Երասխ ի Պարսից, և յԱմարաս գաւառ բնակեցաւ»։ Բռնի միջոցները ժամանակավոր համարելով, Բաբեկը «Բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի ի հնազանդութիւն նմա եկեսցեն». և իրոք, ոմանք «ժամադիւտ զըղջմամբ հնազանդեցան», բայց հետո նորից «դաւեալք անհնազանդ եղեն»[1]։ Բաբեկը թողնում է այնտեղ (Ամարասում) կայազոր և ինքը վերադառնում։ Կայազորին հանձնարարում է, որ ակտիվ գործողություններ չկատարի ապստամբների դեմ, այլ «զի սէր համակել, զի հնազանդեսցին»։ Բայց կայազորի հրամանատար Ռոստոմը խախտում է նրա այս հանձնարարականը և սկսում է ակտիվ գործողություններ, որոնց հետևանքը լինում է այն, որ կայազորը ջարդվում ու դուրս է վանվում այդ գավառից։

1 Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, էջ 270։

Տաբարու վկայությամբ Մուղանից հետո (հավանաբար Ամարասից վերադառնալուց հետո) Բաբեկը գնում է Բազ ամրոցը[1]։ Հենց այդ ամրոց-քաղաքում էլ Աֆշինը նրան հասցնում է վերջնական հարվածը ու գրավում քաղաքը, ըստ Տաբարու 836 թվին[2]։ Արաբական աղբյուրները մանրամասն նկարագրում են այդ կռիվները։ Դրանցից հետո, արաբական աղբյուրների միահամուռ պնդումով, Բաբեկը փախչում-գնում է Հայաստան, Սյունիքի ու Արցախի լեռները[3]։ Հասան ալ-Մասուդը պատմում է, որ Բաբեկը, փրկության հույսը կորցրած, իր եղբոր երեխաների (ըստ ոմանց՝ եղբոր), կնոջ և իր մարտիկների հետ միասին ճանապարհորդի տեսքով մտնում է Հայաստան։ Բանը նրանումն է, որ Աֆշինը վախենում է, թե Բաբեկը «կփախչի մի անմատչելի վայր, կամբանա որևէ ամրոցում և նորից իր շուրջը կհամախմբի այդ մարդի բնակիչ ժողովուրդներին և իր բանակի մնացորդներին, շնորհիվ որի նա նորից կկարողանա ուժեղանալ և վերադառնալ նույն վիճակին, ինչ որ առաջ էր»։ Այդ պատճառով Աֆշինը հետապնդում է նրան և հրամայում Հայաստանի ու Աղվանքի բոլոր բատրիկներին հսկել ճանապարհները ու բռնել նրան[4]։ Տաբարին ավելացնում է. «Աֆշինն այդ մասին հայտնում է Հայաստանի բոլոր թագավորներին ու բատրիկներին և զգուշացնում է, որ Բաբեկը կանցնի նրանց երկրներով։ Նա հրամայում է նրանց հսկել իրենց տեղամասերը և բռնել բոլոր նրանց, ովքեր կանցնեն այդ տեղերով, որպեսզի իմանան թե ով է նա»[5]։ Այս վկայությունները ցույց են տալիս, որ Բա-

1 Տաբարի, գույք № 1088, էջ 14։

2 Նույն տեղում, գույք № 578, էջ 25։

3 Տաբարի, «Երբ Բաբեկը պարտվեց իր ռեզիդենցիայում, փախավ Հայաստան տանող մի ճանապարհով...»։ «Բաբեկը մտնում է Հայոց երկիրը և գնում է իրեն Սմբատի երկրով»։ (Գույք № 578, էջեր 44, 45, 47. Ալ-Մակդիսի. «Բաբեկն իր ընտանիքով փախավ... Հայաստան» Նույն տեղում, էջ 62), տես նաև Ադ-Դինավարի, գույք № 578, էջ 6 և այլն։

4 Ալ-Մասուդի, գույք № 578, էջ 70, տես նաև գույք № 1088, էջ 93։

5 Գույք № 578, էջեր 44—45, տես նաև Ադ-Դինավարի, գույք № 578, էջ 6։

բեկը, գալով Հայաստան, մտադրություն է ունեցել, հավանաբար, այստեղ վերակառուցել իր ուժերը։ Այդ բանը Աֆշինի համար կասկածից դուրս է եղել, այդ է պատճառը, որ նա տագնապել է և որոշել՝ ինչ գնով էլ լինի թույլ չտալ այդ։

Բաբեկի փախուստը Սյունիքի և Աղվանքի կողմերը պատահական չէր։ Լեոն իրավացի է, երբ գրում է, թե Բաբեկը Սյունիք, Արցախ փախավ, որովհետև այնտեղ ուներ «ազգակցական կապեր, ծանոթներ, դուցե նույնիսկ գաղափարական կողմնակիցներ»[1]։ Մեր կարծիքով նա ավելի հույս ուներ գաղափարական կողմնակիցների վրա, քան ազգակիցների։ Զամչյանցը իրեն ծանոթ մի աղբյուրից վերցնելով, բայց այն Վարդան պատմիչին վերագրելով, պատմում է, որ Բաբեկը պարտությունից հետո «չուեալ գնաց ի կողմանս Տարոնոյ. և ապա էանց յաշխարհն Սիւնեաց, և եկն մինչև ի Գեղարքունիս. և անդ միւս անգամ յօրիներ կազմէր զզօրս իւր. և խորհէր նախ նուաճել զամենայն Հայս ընդ իւր, և հանել զնօսա ի տերութենէ հագարացւոց»[2]։ Եթե հավատի է Զամչյանցի բերած այս փաստը, ապա դուրս է գալիս, որ Բաբեկը իր գյուղացիական բանակների կործանումից հետո եկել է Սյունիք, Գեղարքունիք և ցանկացել է այնտեղ բանակ կազմակերպել։ Նա մտածել է նվաճել ամբողջ Հայաստանը՝ այն հանելով արաբների տիրապետությունից։ Այս քայլի մեջ Բաբեկի կերպարն ուրվագծվում է ոչ թե որպես նվաճող, այլ ինտերնացիոնալիզմի ոգով լցված ժողովրդական ազատագրական պայքարի անխոնջ մարտիկ։ Ատրպատականում կրած իր պարտությունից հետո նա ցանկացել է պայքարը տեղափոխել Հայաստան, այստեղ տեղում ստեղծել ժողովրդից կազմված բանակ, դուրս քշել արաբներին և ազատագրել Հայաստանն արաբական տիրապետությունից։ Դուցե

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 436։

[2] Մ. Զամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. 2-րդ, էջ 412։ Ի դեպ Զամչյանցը, ինչպես նաև Պալասանյանը (Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1890 թ.) Բաբեկի Գեղարքունիք գալու այս փաստը դնում են 839 թ.։ Սխալ է, քանի որ այդ թվին Բաբեկը կենդանի չէր արդեն։ Մեր կարծիքով, ինչպես նշում են արաբական աղբյուրները, նա Հայաստան է եկել Բազի անկումից հետո, իսկ Բազն ընկավ 836 թվին։

այս բանում նա ուներ նաև ստրատեգիական նպատակներ՝ նախ ազատել Հայաստանը և ապա կրկին իջնել Ատրպատական։

Բայց դա դեռ լոկ ցանկություն էր, որի իրականացումը կախված էր հայ իշխաններից, տիրող հայ ֆեոդալ ազնվականների վերաբերմունքից։

Ինչպես արդեն նշեցինք, իրադրությունները այժմ բոլորովին այլ էին։ Արաբները կրկին նվաճել էին Ատրպատականը և ամրացրել իրենց տիրապետությունն այնտեղ։ Հայ և աղվանից իշխաններին հայտնի էին Բաբեկին բռնելու մասին Աֆշինի տված հրամանները և խոստումները։ Մյուս կողմից հայ և աղվանից իշխանները չէին կարող թույլ տալ, որ Բաբեկն իր գործը տեղափոխի Հայաստան և իր շուրջը համախմբի հայ գյուղացիությանը։ Այդ պատճառով էլ Սյունիքի և Աղվանքի իշխանները ոչ միայն չընդառաջեցին Բաբեկի նոր ձեռնարկումին, այլև խանդարեցին նրան։ Այստեղ վճռական նշանակություն ունեցավ դասակարգային շահը։ Հայ ազնվականության համար ավելի լավ էր արաբական տիրապետության գոյությունը երկրում, քան թե գյուղացիական ընդհանրության և պրիմիտիվ հավասարության գաղափարների ամբողջացումը մի ընդհանուր շարժման մեջ։

Հուսաբեկված Բաբեկը, ինչպես ակնարկում են արաբական աղբյուրները, որոշում է գնալ Բյուզանդիա, կամ մի այլ վայր, տակայն Ճանապարհին, 837 թվին, նրան բռնում է Սահլ իշխանը։ Արաբական աղբյուրներն այդ մասին վկայում են՝ «Հայկական բատրիկ Սահլը՝ Սմբատի որդի, նրան վերցրեց գերի»[1]։ «Քրիստոնեա, հայկական բատրիկներից մեկը, Սմբատի որդի Սահլը, որը նրա (Բաբեկի — Հ. Ուր.) մոտ գերի էր եղել առաջ, բռնում է Բաբեկին»[2]։ Այդ դեպքը ավելի ման-

[1] Աբու-լ-Ֆարաջ, գույք № 578, էջ 1։

[2] Ալ-Մակդիսի, գույք № 578, էջ 62։ Ի դեպ Սահլի Բաբեկի մոտ գերի լինելու փաստը ճիշտ չէ. այդ երևում է ոչ միայն նրանից, որ մյուս արաբ հեղինակներն այդ չեն հիշում, այլև Տաբարու ստորև շարադրվելիք վկայությունից երևում է, որ Սահլը Բաբեկի հավատարիմ մարդն է եղել, երբեմնի դաշնակիցը, որը արաբ պատմիչին թվում է դերություն։

բամասն է պատմում Տաբարին։ Ավելորդ չենք համարում մեջ բերել նրա պատմածից, Սահլի ու Բաբեկի միջև տեղի ունեցած զրույցից մի դիալոգ։

Երբ պահակները հայտնում են Սահլին, թե անծանոթ մարդիկ են շարժվում ճանապարհով, նա շտապ սլանում է այնտեղ՝ «նայելով նրա (Բաբեկի — Հ. Ուր.) դեմքին, Սմբատը (պետք է լինի Սահլը)[1] ճանաչում է նրան, և իջնելով ձիուց մոտենում է նրան և համբուրում է նրա ձեռքը և ապա ասում նրան. «Ո՞ւր եք դուք ուղևորվում, իմ տեր»։ «Ռոմանների երկիրը (Բյուզանդիա — Հ. Ուր.),— պատասխանում է նա,— կամ ինչ որ ուրիշ տեղ, որի անունը նա կոչեց»։ «Բայց դու,— ասաց նրան Սմբատը (Սահլը),— չես գտնի ուրիշ մի տեղ և ուրիշ մի մարդ, որը քեզ ավելի գնահատեր և լիներ ավելի արժանի, որպեսզի դու կանգ առնեիր նրա մոտ, քան ես եմ։ Դու գիտես իմ դրությունը՝ ես ոչ մի գործ չունեմ սուլթանի հետ և ոչ մի հարաբերություն նրա մոտիկ մարդկանց հետ։ Քեզ հայտնի են իմ գործերն ու իմ քաղաքը։ Շրջապատի բոլոր բատրիկները քեզ մոտիկ մարդիկ են և դու նրանցից երեխաներ ունես»։ «Սմբատի որդին (Սահլը — Հ. Ուր.) Բաբեկին ասաց՝ մնա ինձ մոտ, իմ ամրոցում։ Այդ քո տունն է, իսկ ես՝ քո ծառան։ Անցկացրու այստեղ այս ձմեռը, իսկ հետո կորոշես ինչ պետք է անել»։ Բաբեկը, հավատալով Սմբատի որդի Սահլի խոսքերին, ասաց նրան՝ «ինձ անհարմար է իմ եղբոր հետ մնալ մի տեղում, որովհետև, եթե գտնեն և բռնեն մեզանից մեկին, ապա կմնա մյուսը։ Ես կմնամ քեզ մոտ մենակ, իսկ եղբայրս՝ Աբդուլլահը, կգնա Ստեփանոսի որդու մոտ, քանի որ մենք չգիտենք ինչ կարող է պատահի մեզ հետ, իսկ մենք չունենք հետնորդներ, որոնք շարունակեին մեր գործը»։ Այդ բանի վրա Սմբատի որդին ասաց Բաբեկին՝ «դու շատ երեխաներ ունես»։ Այո, պատասխանեց Բաբեկը, բայց նրանցում ոչ օգուտ կա, ոչ ուժ։

[1] *Սմբատ կոչելը պարզապես թյուրիմացություն է Տարարու մոտ, որը նա ուղղում է այս նույն դիալոգի վերջում։ Թերևս այս թյուրիմացությունն է հիմք տվել Այլիշանի հետևյալ սխալ պնդմանը. «Քաջն Սմբատ Առանշահիկ (Յաղուանի իշխանաց) կալաւ զնա (Բաբեկին—Հ. Ուր.) և մատնեաց ի ձեռն ամիրապետին («Սիսական», էջ 15)։*

Նա որոշեց իր եղբորը ուղարկել Ստեփանոսի[1] որդու ամրոցը, որին նա հավատում էր, իսկ ինքը գնաց Սմբատի որդու հետ նրա ամրոցը»[2]։

Ուշագրավ այս դիալոգը ցույց է տալիս, ինչպես արդեն պակնարկեցինք վերևում, որ ա) Բաբեկը բարեկամական, ազգակցական և դաշնակցային կապերով կապված է եղել այդ լեռնաշխարհի իշխանների հետ, նրանց դուստրերից ունեցել է երեխաներ. բ) Սահլը մինչ այդ քաջ ծանոթ էր Բաբեկին և հավատարիմ, նա անկախ էր խալիֆից ու նրա մարդկանցից և հիշեցնում է իր գործերը, այսինքն՝ արաբների դեմ բարձրացրած իր ապստամբությունը և Բաբեկի թիկունքը մտած բանակի շարքն իր կողմից (835 թ.), որի համար էլ Բաբեկը վստահում է նրա հավատարմությանը. գ) Բաբեկը պարտությունից հետո էլ իր գործը կորած չէր համարում, նա ցանկանում էր նորից այն շարունակել։

Սակայն Բաբեկը խաբվեց, նա երկու ոտքով ծուղակն ընկավ, հավատալով Սահլի փարիսեցիությանը։ Սահլը, հենց որ Բաբեկին տանում է իր ամրոցը, շղթայակապ է անում նրան և նամակով հայտնում Աֆշինին՝ Բաբեկի ձերբակալման մասին։ Հասան-ալ-Մասուդի վկայությամբ, երբ Սահլն իր դարբնի ձեռքով շղթա էր դնում Բաբեկի ոտքերին, վերջինիս այն հարցին, թե սա ի՞նչ դավաճանություն է, Սահլը պատասխանում է՝ «Դու ոչխարների և կովերի հասարակ շոբան, քո ի՞նչ բանն է պետություն ղեկավարելը և քաղաքականությամբ զբաղվելը»[3]։ Զայրագին այս բացականչության մեջ, Սահլի բերանով, արտահայտվում էր տիրող ֆեոդալական իշխանների դասակարգային ամբողջ ատելությունը՝ խուրրամիտների գյուղացիական շարժման և նրա առաջնորդ, նախկին հովիվ Բաբեկի նկատմամբ։

[1] *Այս Ստեփանոսը, ըստ մեզ, Բաղասականի իշխան Ստեփանոսն էր, որը կոչվում էր Արլասադ, և որը, ինչպես տեսանք, 821 թ. Բաբեկին հրավիրել էր Բաղասական, բայց հետո նա սպանվել էր իր թշնամիների կողմից, այժմ մնացել էր նրա որդին, որի անունը Տարարին չի հիշում այստեղ։*

[2] *Տ ա բ ա ր ի, գույք № 578, էջ 48—49, տես նաև Ա լ - Մ ա ս ո ւ դ, գույք № 578, էջ 70։*

[3] *Գույք № 578, էջ 70, № 1088, էջ 94։*

Սահլը Բաբեկին հանձնում է Աֆշինին 837 թվին։

Նույնպիսի դավաճանությամբ Աֆշինին են հանձնում նաև Բաբեկի եղբորը։ Որպես հատուցում Աֆշինը Սահլին տալիս է 2 միլիոն դիրհեմ փող, թույլ է տալիս, որ նա ինքը նշանակի իր մարզերի կառավարիչներին[1]։ «Աֆշինը նրա (Սահլի — Հ. Ութ.) դիրքը վերև բարձրացրեց, տալիս է նրան թանկագին նվերներ, հագցնում է պատվավոր շորեր և թագ, նրա առջևով անց է կացնում զորքեր և հանում նրանից խարաջը»[2]։ Իսկ էջմիածնի № 633 ձեռագրի վերոհիշյալ վկայության շարունակության մեջ կարդում ենք. «... Ընդ վաստակոցն մոնու յարքունեացն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»[3]։

3. ՍՅՈՒՆԻՔԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

Ինչպես տեսանք, Բաբեկը 821 թվին չդիպավ Սյունյաց իշխանների սուվերենությանը։ Իրենց հոր՝ Վասակի մահվանից հետո իրար մեջ բաժանելով հայրական ժառանգությունը, Սահակն ու Փիլիպպեն հիմնեցին իշխանական առանձին ճյուղեր, ընդ որում, Փիլիպպեն դառավ գահերեց իշխան (իշխանաց-իշխեցող) Սյունիքի մնացած իշխանների նկատմամբ։

Այժմ դիտենք այս իշխանությունների ներքին պատմությունը։

Գեղաքունի գավառը թեպետ 9-րդ դարի սկզբում գտնվում էր Վասակի գերիշխանության ներքո, բայց իր աշխարհագրական դիրքով և տնտեսական ուրույն շահերով այն ինքնուրույն, առանձին հատված էր։ 821 թվին այդ գավառը ժառանգություն ստացած Սահակը, դառնալով Գեղաքունիքի գահակալ իշխան, բնականորեն, պիտի ընթանար և ընթացավ տեղական շահերի ու ձգտումների ուղիով։ Եղած վկայություն-

[1] Ալ-Մակդիսի, № 578, էջ 62։

[2] Ալ-Մասուդ, գույք № 572, էջ 71, տես նաև Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջ 109։

[3] Տես Մարկվարտ, Բազրատունեաց ծագումը, էջ 55, և Բարխուդարյանց, Աղուանից պատմութիւն, հ. 1, էջեր 134—135։

ներից երևում է, որ նա իր իշխանության ընթացքում իր գավառը վարել է, բառիս լայն իմաստով, ինքնուրույն՝ անկախ գահերեց իշխանից, որի գերիշխող դիրքը, հավանաբար, արտահայտվել է շատ ձևական կերպով։

Փաստերը ցույց են տալիս, որ սկսած Սահակից և ապա նրա ժառանգների ժամանակ, Գեղաքունի գավառը գնացել է քաղաքականապես Շիրակի Բագրատունիներին մերձենալու ուղիով։ Քաղաքական այդ մերձեցման հիմքը դրեց ինքը՝ Սահակ իշխանը։ «Ի հայրապետութեան Հայոց Տեառն Դաւթի Կաղեցւոյ (806—833 թթ.), և յսպարապետութեան Սմբատայ Բագրատունւոյ էր իշխան Սիւնեաց մեծ նահապետն Սահակ որ արքունական ճոխութեամբ վարէր զտէրութիւն իւր. և յոյժ միաբան և միախոհուրդ գնայր ընդ Սմբատայ՝ սպարապետի Հայոց, յամենայն գործս պատերազմաց և յօդտակարութիւն աշխարհիս Հայոց»[1]։ Սմբատ Բագրատունու հետ «միաբան» և «միախոհուրդ» լինելու իրական արտահայտությունը եղավ այն, որ Սահակը Սմբատ սպարապետի և Սևադայի հետ միասին, անկախ իր գերիշխող գահերեց եղբորից, մասնակցեց Հոլի դեմ բարձրացած ապստամբությանը։ Հենց միայն այս հանգամանքը խոսում է այն մասին, որ Ծղուկի գահերեցությունն անվանական էր Գեղաքունիքի նկատմամբ։

831—32 թվերի Կավակերտի ճակատամարտում Սահակի սպանվելուց հետո Գեղաքունիքի իշխանական գահում նրան հաջորդում է ավագ որդին՝ Գրիգորը, որն ուներ Սուփան մականունը[2]։ «Իսկ զկնի Սահակայ պայազատէ զտէրութիւնն զայն Գրիգոր որդի նորուն, որ փաղաքշական անուամբ Սուփան անուանիւր»[3]։ Սահակն ուներ երկու որդի ևս՝ Հրահատ և Գագիկ[4]։

Օրբելյանը գովերգելով այս Սուփան 1-ինի անձնավորությունը, ավելացնում է. «Առաւել քան զնախնիս իւր կարգէր զգահ իշխանութեան իւրոյ. և տնօրինէր զշինութիւն աշխար-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 166։

[2] Տես հավելված, համապատասխան տեղը։

[3] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 115 և Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 166։

[4] Տես հավելված, համապատասխան տեղը։

հիս»[1]։ Գրիգոր Սուփան առաջինը ևս, իր հոր նման, սերտ բարեկամական ու համագործակցական կապ է պահպանում Սմբատ սպարապետի հետ և իր պարտքն է համարում խառնվել հայոց գործերին։ Հ. Դրասխանակերտցին և Ս. Օրբելյանը պատմում են, որ երբ Տարոնի իշխան Բագրատ Բագրատունին Հովհաննես Օվսեցուն զրկում է կաթողիկոսությունից, Սմբատ սպարապետը, Գրիգոր Սուփանը և այլք ժողով են գումարում և վերականգնում նրան իր կաթողիկոսական աթոռում։ Ուշագրավ է Օրբելյանի վկայությունը. «Զոր լուեալ մեծին Սուփանայ Սիւնւոյ՝ ոչ ժուժեաց մեծի վնասուցն և զրպարտութեանն. այլ գնացեալ առ սպարապետն Սմբատ խորհի ընդ նմա. և լինին վրէժխնդիր սրբոյ առն Աստուծոյ։ Եւ անդրէն ածեալ վերստին հաստատեն յաթոռն զՏէր Յովհաննէս»[2]։

Հ. Դրասխանակերտցու վկայությամբ Օվսեցու հարցը քննելու համար տեղի է ունենում ժողով Սմբատ սպարապետի, Գրիգոր Սուփանի «այլ ևս նախարարացն հայոց» մասնակցությամբ։ Այդ ժողովի թիվը որոշվում է հեշտությամբ։ Դրասխանակերտցին վկայում է, որ Հովհաննես Օվսեցուն գահից զրկում են նրա կաթողիկոսության 8-րդ տարին։ Մենք գիտենք, որ նա հաջորդել է Դավիթ կաթողիկոսին, որը կաթողիկոսել է 806—833 թվերին. ուրեմն՝ 833+8=841՝ հենց այս թվին էլ տեղի է ունեցել ժողովը։ Այս երկու դեպքը՝ ապրստամբություն Հոլի դեմ և կաթողիկոսի վերականգնումը, համահայկական հարցեր էին, դուրս Սյունիքի ներքին կյանքի սահմաններից։ Թվում էր, թե այս հարցերում անմիջական մասնակիցն ու նախաձեռնողը պետք է լիներ գահերեց իշխան Փիլիպպեն, մանավանդ, որ կաթողիկոսի հարցին վերաբերող ժողովը տեղի էր ունեցել Սյունիքի հողի վրա՝ Երնջակում[3],

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 168։

[2] Նույն տեղում։

[3] Արիստակես վարդապետ Սեդրակյանը գտնում է, որ Երնջակ քաղաքում է տեղի ունեցել 841 թվի ազգային ժողովը, ուր քննության է առնվել Հովհաննես Օվսեցու հարցը. տես «Հնութիւնք հայրենեաց ի գավառին Երնջակայ», Վաղարշապատ, 1872, էջ 100. տես նաև Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. 2, էջ 443։

բայց մենք նրան չենք տեսնում։ Համահայկական այս հարցերում Սյունիքը ներկայացնում են Գեղաքունի իշխան Սահակը և նրա որդի Գրիգոր Սուփան առաջինը։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ 830—40-ական թվերին Գեղաքունիքի իշխանները ձեռք են բերել ծանրակշիռ դիրք, մի բան, որի բնական հետևանքը լինելու էին այդ իշխանների ոտնձգությունները գահերեց իշխանական տան նկատմամբ՝ թե՛ գահերեցության իրավունքի, և թե՛ տերիտորիալ հարցերում։ Այդ բանը տանելու էր դեպի ընդհարում և մենք, իրոք, ականատես ենք այդ ընդհարմանը։

Սակայն մինչ այդ պետք է դիտել և գահերեց իշխանական տան վիճակը։

Մենք արդեն նշեցինք, որ Փիլիպպեն իր հոր մահվանից հետո ժառանգեց գահերեցությունը և Սյունիքի կենտրոնական գավառները։ Սկզբնաղբյուրները նրա իշխանության ժամանակաշրջանի մասին ոչինչ չեն հայտնում։ Ս. Օրբելյանը հաղորդում է միայն, որ նա մի քանի գյուղեր է նվիրել վանքին ու կառուցել եկեղեցի։ Այսպես՝ 839 թվին նա Տաթևի վանքին է վաճառել Արծիվ և Բերդկաներեչ գյուղերը[1], 844 թվին վանքին է նվիրել Տաթև գյուղը[2]։ Բացի այդ, Տաթևի հին վանքի կողքին շինել է մի նոր եկեղեցի Գրիգոր Լուսավորչի անունով[3], ուր և ինքը թաղվել է իր մահվանից (848 թ.) հետո[4]։ Փիլիպպեի այս և այլ բաղմաթիվ «երախտիքները» և եպիսկոպոսարանին նրա տված նվերներն ու «կարգ և որպէսութիւնք» հավերժացնելու համար Դավիթ եպիսկոպոսը թողել է գրավոր կտակ, որը մեջ է բերել Օրբելյանը, և որի մեջ եկեղեցու այդ բարերարի մասին ասված է այնպիսի գովեստ, որի նմանը չի վայելել Սյունյաց որևէ այլ իշխան՝ Տաթևի վանքի հայրերի կողմից[5]։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Փիլիպպեն թույլ

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 204, 205։

[2] Նույն տեղում, էջեր 206, 207։

[3] Նույն տեղում, էջ 211։

[4] Նույն տեղում, էջեր 211, 213։

[5] Նույն տեղում, էջեր 211—214։

ու ռազմական տեսակետից ապաշնորհ իշխան էր։ Նա ավելի շատ իր հոգու փրկության համար դյուղեր է նվիրել վանքին ու շինել եկեղեցիներ, քան հոգացել իր գահերեցության դիրքի մասին։ Նրա ապաշնորհության մասին է վկայում և այն փաստը, որ երբ, Վարդանի վկայությամբ, Սյունիք է արշավում ոմն Աբլհերթ, նրա դեմ է ելնում ոչ թե ինքը Փիլիպպեն, այլ նրա որդի Բաբկենը։ «Յաւուրս յայնոսիկ,— գրում է Վարդանը,— Աբլհերթ ոմն ի տանէն Զահասպայ ել շորս հազարիւք յերկիրն Սիւնեաց. և ել Բաբկէն ընդդէմ նորա երկու հարիւրօք և ջնջեաց զնա իսպառ»[1]։ Վարդանի ակնարկից երևում է, որ այդ դեպքը կատարվել է 840-ական թվերին Փիլիպպեի մահվանից (848 թ.) առաջ[2]։

Բայց դրությունը փոխվում է Փիլիպպեի մահվանից հետո։ Փիլիպպեն թողնում է երեք տղա՝ Բաբկեն, Վասակ և Աշոտ։ Գահերեցության գահն անցնում է երեց որդուն՝ Բաբկենին։

Փիլիպպեի մահը հարմար առիթ համարելով, Գեղաքունիքի իշխան Գրիգոր Սուփան առաջինը փորձում է մտնել գահերեց իշխանների ժառանգությունը հանդիսացող Վայոց ձոր գավառը, հավանաբար, նպատակ ունենալով նաև խլել գահերեցության իրավունքն ու տիտղոսը։ Նա այդ անում էր, ըստ երևույթին, ոչ միայն իր ագրեսիկ դիրքի մղումով, այլ նաև կարող էր իրեն համարել գահերեցության գահի ժառանգ իր հորեղբորից (Փիլիպպեից) հետո։ Մեր ենթադրությանը հիմք են տալիս հետևյալ վկայությունները.

1. Ս. Օրբելյան, «Պատմութիւն նահանդի Սիսական», էջ 168.

«Յետ այս գործոյ մինչ վարէր զիշխանութիւնն ճոխաբար Գրիգոր, ոչ ժուժացեալ չարին. այլ արկ նախանձ չար ի սիրտ Բաբգէնի՝ եղբօր[3] Փիլիպպեի... և խանդացոյց և գրգռութիւն չար ի մէջ նոցա զարթոյց զօրէն Կայենի և Հաբելի»։

[1] Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջ 109։

[2] Ալիշանն այս Աբլհերթին համարում է ոմն արաբ Իբն-Խալիդ, իսկ արշավանքի թիվը դնում է 846—47 թթ., Մ. Չամչյանը՝ 851 թ., երկուսն էլ սխալվում են։

[3] Ս. Օրբելյանը այստեղ սխալ է, պետք է լինի՝ որդի, տես հավելված, համապատասխան տեղը։

2. Նույնը, էջ 297.

«Իսկ յետ ատուրց վասն դոյզն պատճառի ի վերայ հայրենեացն պատերազմին ընդ իրեարս Բաբգէն՝ երէց որդի Փիլիպպէի, և Գրիգոր՝ որդին Սահակայ»։

3. Հ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», էջ 118.

«Զայսու ժամանակաւ Գրիգոր Սիւնեաց տէր, որ Սուփանն յորջորջիւր, և Բաբգէն Սիսական նահապետն զբրդրոութիւն չար ի մէջ իրեանց զարթուցեալ»։

Մեր տեսակետից խիստ ուշագրավ են «արկ նախանձ չար ի սիրտ Բաբգէնի» և «ի վերայ հայրենեացն՝ պատերազմին ընդ իրեարս» դարձվածքները, որոնք ցույց են տալիս, որ վեճը, տարաձայնությունը նախ և առաջ տերիտորիալ բնույթ էին կրում։ Ըստ երևույթին, Բաբկենն իր հոր հակատիպն էր, եռանդուն և ռազմունակ։ Նա չի հանդուրժում իր հորեղբոր որդի Գրիգորի ոտնձգությունները, որը ըստ երևույթին որոշ տերիտորիաներ գրավել էր գահերեց իշխանների ժառանգությունից, և չի կարողանում տանել նրա դիրքի բարձրացումը։ Նրա սրտում բուն է դնում «չար նախանձը» և գրգռում է Գրիգոր Սուփանի դեմ։ Այս հակամարտությունը չէր կարող վերջանալ առանց արյան և, իրոք, նրանք դիմում են զենքի։ Նրանք «գումարդակ ի վերայ իրեարց կարգեալ պատերազմեցան»[1]։ Միջֆեոդալական այս պատերազմը Սյունիքը բաժանում է երկու մասի։ Ըստ երևույթին իշխանների մի մասը հարում է Սուփանին, իսկ մյուս մասը՝ Բաբկենին։ Չամչյանը կարծում է, որ հայոց մեծամեծների մի մասը նրանց հորդորում է խաղաղվել և հաշտվել, իսկ մյուս մասն էլ, ընդհակառակն, իրար դեմ է գրգռում նրանց։ Այս է պատճառը, որ պատերազմը տևում է բավականաչափ երկար ու դառնում ավերիչ, հատկապես աշխատավոր ժողովրդի համար։ Նրանք ասպատակում են գյուղերն ու ավանները, այրում ու գերեվարում տղամարդկանց ու կանանց, ծայրակոտոր անում և այլն[2]։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանդին Սիսական, էջ 168, տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 118։

[2] Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. 2-րդ, էջ 44—57։

Մեր կարծիքով միջֆեոդալական այդ պատերազմն սկսվել է 1849 թվի գարնանը։ Այդ երևում է հետևյալից։ Փիլիպպեն մահացել էր 848 թվին, նրա հանգստյան հիշատակի պաշտամունքը նշանակված էր քաղոցի 15-ը, որը, հավանաբար, նրա մահվան օրն էր։ 848 թվի քաղոցի 15-ը՝ մեր հաշվումներով սեպտեմբերի 13—14-ն է։ Հասկանալի է, որ 848 թ. սեպտեմբերին գահերեց դարձած Բաբկենը հենց անմիջապես չէ, որ սկսեց պատերազմը, այլ հավանաբար հաջորդ, 849 թվին։ Պատերազմի վերջը ավելի հեշտ է որոշել։ Թե՛ Ս. Օրբելյանը, և թե՛ Հ. Դրասխանակերտցին վկայում են, որ պատերազմը վերջացավ նրանով, որ Բաբկենը սպանեց Գրիգոր Սուփանին[1], իսկ Կաղանկատուացին գրում է. «Եւ տէր Սուփան վախճանեցաւ ի Վայոց ձորն ի նոյն ամի (ի լնուլ 300 թուոյն Հայոց=851)։ Եւ ի միւս տարին եկն Բուխայ ի Հայս»[2]։ Կաղանկատուացու այս վկայությունից նաև երևում է, որ վերջին, վճռական ճակատամարտը տեղի է ունեցել գահերեց իշխանությանը պատկանող Վայոց ձորում, և այդ ճակատամարտում էլ սպանվել է Գրիգոր Սուփան առաջինը։

Լեոն միջֆեոդալական այս պատերազմը համարում է «ազգամիջյան պատերազմ», որը տեղի է ունեցել Բուղայի արշավանքի ժամանակ։ «Այսպես, հենց այս ժամանակին է վերաբերում,— կարդում ենք Լեոի մոտ,— ազգամիջյան այն պատերազմը, որ բորբոքվեց Սյունյաց նախարարության երկու գլխավոր ճյուղերի միջև։ Գրիգոր Սուփան իշխանը, ներկայացուցիչ մի ճյուղի, կռվի մեջ սպանվեց մյուս ճյուղի ներկայացուցիչ Բաբկեն իշխանի ձեռքով»[3]։ Նախ, Լեոն ճիշտ չէ, երբ

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 168, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 118։

[2] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, էջեր 379, 380։ Մ. Չամչյանցը գրում է. «ի նմին ամի՝ յորում սպանին Սպասունք զԱպուսէթ, զրդուեցան գործ դառնութեան ի մէջ երկուց հզոր նախարարաց՝ Բարգենի Սիսականի և Գրիգորի Սիւնեաց» (տես հ. 2-րդ, էջ 445)։ Կաղելով Արտասեթի սպանման հետ, Չամչյանցը միջֆեոդալական այս պատերազմի տարեթիվը ճիշտ կերպով դնում է 849 թվին։

[3] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 449։

այս պատերազմը դնում է Բուղայի արշավանքի ժամանակ։ Հանրահայտնի փաստ է, ըստ որում և Լեոյի կարծիքով, որ Բուղան Հայաստան արշավեց 852 թվին, այնինչ, ինչպես տեսանք, այս պատերազմը վերջացավ 851 թվին, և մանավանդ, որ Կաղանկատուացին ուղղակի վկայում է, թե Սուփանի մահվանից մեկ տարի հետո Բուղան արշավեց Հայաստան։ Երկրորդ, Լեոն ճիշտ չէ, երբ այս պատերազմը համարում է ազգամիջյան։ Գնահատել այդպես, նշանակում է չըմբռնել այդ պատերազմի սոցիալական էությունը։ Ձևականորեն ճիշտ նշելով, որ դա Սյունյաց իշխանների երկու ճյուղի միջև մղվող պատերազմ էր, Լեոն չի տեսնում և չի բացահայտում այդ ճյուղերի հակամարտության բուն պատճառը, սոցիալական էությունը։ Նրա կարծիքով այդ պատերազմն առաջացել էր Բուղայի արշավանքի ահի տակ։ Ավելին. այս հիման վրա նա կատարում է մի սխալ ընդհանրացում՝ «առհասարակ Բուղայի արշավանքի ահը հայ ավատական կալվածատիրության մեջ ավելացնում էր կենտրոնախույս ձգտումները»[1]։ Այս ընդհանրացումը հայագիտության մեջ տեղ գտած վնասակար այն կոնցեպցիայի արտահայտությունն է, որի համաձայն հայ ժողովրդի պատմության շատ հարցերի դրդապատճառը, շարժիչ ուժը, դրսի վտանգն է, օտարի միջամտությունը և ոչ թե բուն երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, դասակարգային և միջդասակարգային հակասություններն ու հակամարտությունները։ Այդ կոնցեպցիայի կողմնակիցները նեղություն չեն կրում ամեն մի կոնկրետ դեպքի, երևույթի պատճառը որոնել նախ և առաջ երկրի ներսում, ներքին կյանքում, այն միջավայրում, ուր ծնվել ու ընթացել է տվյալ երևույթը, պատմական դեպքը։

Տվյալ դեպքում, Սյունիքի այս միջֆեոդալական պատերազմի դրդապատճառը ոչ թե Բուղայի արշավանքի ահն էր, այլ ֆեոդալական հասարակարգին հատուկ ֆեոդալ ազնվական դասակարգի մեջ եղած միջդասակարգային գզվռտոցը, որը սովորաբար մղվում էր իրարից կալվածքներ, առաջնության դիրք նվաճելու համար։ Դա ավելի մեծ կալվածքներ

---

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 449։

ունենալու և գահերեցության դիրք նվաճելու տենչից բխող կռիվ էր։ Դա սյուղերենի և վասսալի միջև մղվող կռիվ էր։

Ներքին, միջդասակարգային հակասությունից բխած, միջֆեոդալական այս պատերազմը դատապարտելի էր ոչ միայն այն պատճառով, որ աշխատավոր ժողովուրդը Սյունիքում տառապեց, նահատակվեց, նրա տնտեսությունը քայքայվեց, այլև այն բանի համար, որ նա թուլացնում էր երկրի պաշտպանական ուժը՝ արաբական արշավանքների ահռելի վտանգի առաջ։ Չմոռանանք, որ այդ պատերազմը տեղի էր ունենում այն պահին, երբ 850 թվին Վասպուրականն ու Տարոնը ազատագրական պատերազմներ էին մղում արաբական Աբուսեթ ոստիկանի դեմ, երբ 851 թվին Սասունի լեռնցի ժողովրդական մասսաները ժողովրդական ազատագրական պատերազմ էին մղում Յուսուֆի դեմ՝ խութեցի Հովնանի ղեկավարությամբ։

Լեոն և ուրիշները մոռանում են, որ 9-րդ դարի կեսերին ավատական կալվածատիրության մեջ կենտրոնախույս ձգտումներն ավելանում էին ոչ թե օտարի ահից, այլ կալվածատերերի, ինչպես նաև հին նախարարական «աշխարհների», նահանգների (Վասպուրական, Սյունիք, Տարոն, Շիրակ և այլն) տնտեսական ու քաղաքական շահերի տարբերությունից, ոչ միասնականությունից։ Մի՞թե փաստ չէ, որ Տարոնի և Շիրակի նույն Բագրատունիներն անգամ, նույն Սյունյաց աշխարհի, նույն Վասպուրական աշխարհի իշխաններն անգամ ունեին տարբեր շահեր, հետևապես և վարում էին տարբեր քաղաքականություն։ Շահերի ու ձգտումների տարբերություն կար ոչ միայն տարբեր նահանգների միջև, որոնց գոմարը տալիս է մեզ այդ ժամանակվա Հայաստան հասկացողությունը, այլև յուրաքանչյուր նահանգի ֆեոդալ իշխանների միջև։ Ամեն մեկը կառչում էր իր նեղ շահերից, իր կալվածքից և վարում ինքնուրույն քաղաքականություն՝ անջատ կերպով ընդհանուր լեզու որոնում նվաճողի կամ հզոր հարևանի հետ՝ իր այդ նեղ շահերը, իր կալվածքն անվնաս պահելու համար։

Միշտ չէ, որ մեր ավատական կալվածատիրությունը օտար նվաճողների հանդեպ ընդհանուր լեզու է գտել ինքն իր մեջ

և զորավիգ դարձել հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին։ Հաճախ նրանք, տարված իրենց նեղ շահերով, անջատ քաղաքականությամբ, ջլատել են հայ ժողովրդի ուժը և երկիրը թողել անպաշտպան՝ օտարի սրի առաջ։

Դա ընդհանրապես ֆեոդալիզմի էությունն է, օրինաչափությունը, որը առավել հատուկ է Հայաստանի միջնադարին, երբ նախարարական սիստեմին փոխարինել էր խոշոր կալվածատիրությունը, խորացել էր ֆեոդալիզմը։ Հազար անգամ իրավացի էր Ստեփան Շահումյանը, երբ գրում էր, թե «...Հայաստան կոչվածը ներկայացնելիս է եղել իրոք բազմաթիվ ինքնուրույն պետական մարմիններ, տարբեր տնտեսական վիճակով, տարբեր սոցիալական հարաբերություններով, հետևապես տարբեր շահերով»[1] (ընդգծումը մերն է — Հ. Ուր.)։

Խոսելով արտաքին դեպքերի ու արտաքին միջամտությունների մասին, Շահումյանը շարունակում է. «... երևույթներին միայն թեթև կերպով... նայող պատմաբանին կարող է թվալ, որ միակ կարևորը պատմության մեջ այդ դեպքերն են։ Ժողովուրդների կյանքը, նրանց պատմության ընթացքը պայմանավորողն ու որոշողը (ընդգծումը Շահումյանինն է — Հ. Ուր.) ո՛չ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ աղմկահույզ և էֆեկտավոր լինեն նրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերությունները»[2] (ընդգծումը մերն է — Հ. Ուր.)։

Իմաստուն այս դրույթները կիրառելի են հայոց պատմության հին և միջին շրջանի բոլոր էպոխաներում էլ։

Ահա թե ինչն էր առաջացնում կենտրոնախույս ձգտումներ ավատական կալվածատիրության շարքերում, և ոչ թե «Բուղայի արշավանքի ահը»։ Եթե չլինեին այդ նեղ շահերը և նեղ տեղայնությունը, ապա կպաշտպանեին երկիրը, թույլ չէին տա, որ Բուղան մեկիկ-մեկիկ նվաճի Վասպուրականը, Տարոնը, Սյունիքը և այլն։ Սյունիքում տեղի ունեցած միջֆեոդալա-

---

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 214։

[2] Նույն տեղում, էջ 215։

կան այս կռիվը, որը հավանաբար եղակի դեպք չէր, առավել դատապարտելի է, որ ջլատեց երկրի պաշտպանական ուժը՝ մատչելի դարձնելով նրա կիրճերն ու լեռնանցքները քիչ հետո Սյունիք արշավող Բուղայի հրոսակների համար։

4. ՍՅՈՒՆԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (9-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ)

Վայոց ձորի ճակատամարտից հետո հաղթանակը մնում էր գահերեց իշխանների կողմը, բայց ինքը Բարկենն էլ դրանից հետո երկար չի ապրում։ Ս. Օրբելյանի մի վկայությունից երևում է, որ նա մահացել է հենց նույն 851 կամ 852 թվին. «և ինքն (Բարկենը — Հ. Ուր.) յետս կործանեցաւ շարաշար դայթակղութեամբ ի տիրաւանդ օրինաց սիրոյն»[1]։ Էլի «եւ նա փոթաթէս ջնջի ի կենաց»[2]։ Այս վկայություններից նաև երևում է, որ Բարկենն իր բնական մահով չի մեռել, հավանաբար, զոհ է դնացել Գեղաքունի իշխանների ձեռքով նյութված մի դավադրության։ Բարկենից մնացել է մի որդի՝ Վահան անունով, իսկ Գրիգոր Սուփանից՝ երկու որդի՝ Վասակ և Հրահատ[3]։

Գրիգոր Սուփան առաջինից հետո Գեղաքունիքի իշխան է դառնում նրա երեց որդին՝ Վասակը, որն ուներ Գարուռ մականունը, իսկ Բարկենին հաջորդում է նրա եղբայր Վասակը, որն ուներ Իշխանիկ մականունը[4]։

Գեղաքունիքի այս նոր իշխան Վասակ Գարուռը ևս ընթանում է Շիրակի Բագրատունիների հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու ուղիով։ Ավելի առաջ դնալով, նա այդ բարեկամությունը վեր է ածում խնամիական

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 168, 169։

[2] Նույն տեղում, էջ 297։

[3] Տես Հավելվածի համապատասխան տեղերը։

[4] Տես Հավելվածի համապատասխան տեղերը։

կապի։ Սկզբնաղբյուրներում այդ մասին կարդում ենք. «Սա փեսայացաւ Աշոտոյ Բագրատունւոյ՝ որդւոյ Սմբատայ, որ թագաւորեաց իսկ Հայոց, էառ զդուստրն նորա Մարիամ իւր ի կնութիւն։ Որ և ի տիրելն Աշոտոյ յոյժ հպատակ էր սա գործոց և կամաց իւրոյ աներոյն»[1]։

Գեղաքունի իշխանների և Շիրակի Բագրատունիների բարեկամությունը ցայտուն կերպով արտահայտվեց Սյունիքում Բուղայի կատարած արշավանքների ժամանակ։ Ինչպես գիտենք, Բուղան Վասպուրականն ու Տարոնը ասպատակելուց հետո եկավ Դվին և հաջորդ՝ 853 թվի գարնանը արշավեց Սյունիք։ Շիրակի տեր, Հայոց սպարապետ Սմբատը, որն ուղեկցում էր Բուղային երկրի խորքերն ու ամենուրեք, Բուղայի հարվածն ուղղեց ոչ թե ամբողջ Սյունիքի դեմ, այլ միայն Վասակ Իշխանիկի գահերեց իշխանության դեմ, ղերծ պահելով արաբական ցասումից իր բարեկամ Գեղաքունիքի իշխանին։ Այդ երևում է մեր աղբյուրների հետևյալ մանրամասն վկայություններից։

Բուղան 853 թվի գարնանը Դվինից հրոսակներ է ուղարկում Սյունիք, հրամայելով բռնել և իր մոտ բերել մեծ իշխան Վասակ Իշխանիկին, նրա եղբայր Աշոտին և «այլոց ևս տէրանց աշխարհի նոցա»[2]։ Այդ իշխաններն ամրանում են Բաղաց անառիկ ամրոցներում, իսկ ինքը՝ Վասակ Իշխանիկը, չվստահելով Բաղաց ամրոցներին և խուսափելով արաբներից, գնում է Կոտայք գավառը։ Բուղայի զորքերը հետապնդում են նրան, որը հանկարծակի ետ է դառնում ու մի ուժգին հարված տալիս նրանց և իր մարդկանցով անցնում Գարդման՝ այն հույսով, որ այնտեղ ապահովություն կգտնի։ Բայց Գարդմանի Կտրիճ իշխանը, Բուղային դուր գալու և նրա ցասումից իրեն ապահովելու համար, դավաճանաբար շղթայակապում է Վա-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 169, 297։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 135։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 125, 126։ Տես նաև Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 170։

սակ Իշխանիկին և հանձնում Բուղային[1]։ Դրանից հետո Բուղան Սյունիք է ուղարկում նոր հրոսակներ[2], որոնք ասպատակում են ու գերեվարում նաև Վասակ Իշխանիկի եղբայր Աշոտին և նրանց մորը։ Սրանք շղթայակապ բանտարկվում են Դվինում և ապա ուղարկվում Սամարա։

Պատմիչները ոչ մի խոսք չեն ասում այն մասին, որ Բուղայի հրոսակները մտած լինեն Գեղաքունիք։ Գեղաքունիքի Վասակ Գաբուռ իշխանը ոչ միայն զերծ է մնում Բուղայի հարվածից և մնում իր երկրում, այլև Բուղայից հետո, երբ Սմբատ սպարապետի գերեվարման հետևանքով նրան է հաջորդում իր որդին՝ Աշոտը (Գաբուռի անները), նա նրա միջոցով ստանում է Սյունիքի գահերեցությունը։ Ս. Օրբելյանը գրում է. «... և նա (Աշոտ Բագրատունին — Հ. Ուր.) յոյժ մտերմաբար հոգայր վասն Վասակայ. սակս որոյ և անցեալ եղև փառօք և իշխանութեամբ ընդ նախնիս իւր խառնեալ ի թագաւորեալ ցեղն Բագրատունի»[3]։ Իսկ Հ. Դրասխանակերտցու մոտ կարդում ենք. «... վասն զի փեսայացեալ էր Աշոտոյ իշխանաց իշխանի, իշխան ապա Սիւնեաց զնա (Գաբուռին — Հ. Ուր.) կացուցանէր՝ յարքունուստ նմա առնելով պատիւ. որ բաղում ճոխութեամբ վարեալ զիշխանական պետութիւն իւր, տիրելով միանգամայն Սիսական ազգին»[4]։ Եթե վերծանենք աղբյուրների այս կցկտուր վկայությունները, կստացվի հետևյալ պատկերը։ Աշոտ Բագրատունու իշխան դառնալու հենց սկզբից Վասակ Գաբուռը դառնում է խիստ հպատակ իր աներջ գործերին ու կամքին։ Աշոտն էլ իր հերթին խիստ մտերմաբար հոգում է իր փեսայի՝ Վասակ Գաբուռի, մասին։ Աշոտը Վասակ Գաբուռին նշանակում է ողջ Սյունիքի, ամբողջ Սիսական ազգի իշխան, որն իր այդ նոր «իշխանական պետությունը» վարում է ճոխությամբ։

Դժվար չէ ըմբռնել, որ Աշոտ Բագրատունին Վասակ Գաբուռին նշանակել է ողջ Սյունիքի գահերեց իշխան։ Գեղաքունիքի իշխան կարգելու խմաստով չպետք է հասկանալ Հ. Դրասխանակերտցու այս վկայությունը, որովհետև Վասակ Գաբուռն արդեն Գեղաքունիքի իշխան էր և ոչ ոք նրան չէր զրկել դրանից։ Բացի այդ, Գեղաքունիքի իշխանը տիրում էր միայն Գեղաքունիքի գավառի վրա, իսկ Վասակ Գաբուռն այժմ, ինչպես տեսանք, տիրում էր ողջ Սիսական ազգին[1]։ Վասակ Գաբուռին գահերեց նշանակելու համար նպաստավոր էր նաև Սյունիքի ներքին վիճակը. գերեվարված էին գահերեց իշխան Վասակ Իշխանիկը, նրա եղբայր Աշոտը, մայրը և այլք։

Այս բոլորից դժվար չէ հետևցնել, որ նախ՝ Բուղայի արշավանքից հետո Սյունիքում գահերեցությունն անցավ Գեղաքունի իշխանական. ճյուղին, հանձին՝ Վասակ Գաբուռի և, երկրորդ՝ նորելուկ այդ գահերեցը ֆեոդալական կախվածությամբ ենթարկվեց Շիրակի Բագրատունիներին։

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք անցած քառորդ դարի (821—855 թթ.) պատմությունը, ապա կտեսնենք, որ մի կողմից Շիրակի տերեր Սմբատն ու Աշոտը ընթանալով իրենց եռանդուն նախորդի՝ Աշոտ Մսակերի ուղիով, բարեկամական կապերով իրենց կապելով Գեղաքունիքի իշխաններին, ի վերջո, նրանց միջոցով իրենց արքունիքին հպատակեցրին Սյունիքը, իսկ մյուս կողմից, Գեղաքունիքի իշխաններն անջատվելով Սյունյաց գահերեց իշխանությունից, հենվելով Բագրատունիների վրա, պայքարեցին գահերեց իշխանության տերիտորիալ և սյուզերեն իրավունքների դեմ և նրանց միջոցով հասան Սյունյաց աշխարհի սյուզերեն իրավունքին՝ գահերեցությանը։

Բայց շուտով փոխվում է դրությունը։ Գերեվարված Վասակ Իշխանիկը, Սյունյաց և Հայոց այլ իշխաններ մի քանի տարի անց մեկ առ մեկ վերադառնում են Սամարայից։ Ս. Օրբելյանը պատմում է, որ Վասակ Իշխանիկը, նրա եղբայր Աշոտը առերես մահմեդականություն են ընդունում, ազատվում գերությունից ու գալիս մտնում իրենց «սեփական աշխարհ Սիսա-

---

[1] Տես Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 126, Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 170, 171։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 171։

[3] Նույն տեղում, էջ 169։

[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 135։

[1] Զմոռանանք, որ Հ. Դրասխանակերտցին «Սիսական ազգ» ասելով հասկանում է Սյունյաց ամբողջ երկրի բնակչությունը։

կան»[1]։ Հենց որ հասնում են Սյունիք, Վասակ Իշխանիկը և նրա եղբայր Աշոտը մի կողմ են դցում մահմեդականության դիմակը և կրկին դառնում քրիստոնյա։ Այդպես էին վարվում հայկական բոլոր այն իշխանները, որոնք գերության մեջ առերես ընդունում էին մահմեդական դավանանքը, իբրև գերությունից ազատվելու միջոց[2]։ Աղբյուրներում թեև չունենք Վասակ Իշխանիկի Սյունիք վերադառնալու կոնկրետ թիվը[3], բայց դժվար չէ կռահել, որ նա վերադարձել է 856—860 թվերի ընթացքում[4]։

Թվում էր, թե Վասակ Իշխանիկի վերադարձով նորոգվելու էր զահերեցության համար մղվող կռիվը՝ նրա և Գեղաքունի իշխանների միջև։ Բայց այդպես չեղավ։ Նախ՝ կատարված փաստ էր արդեն այն իրողությունը, որ Սյունիքը ենթարկվել էր Բագրատունիների ազդեցությանը. երկրորդ՝ վերսկսել կռիվը Գեղաքունիքի իշխանի հետ նշանակում էր կռվել Բագրատունի Աշոտի հետ, որն արդեն այն ժամանակ ազդեցիկ դիրք ու համբավ ուներ Հայաստանում ու խալիֆաթի մոտ։ Մյուս կողմից, հակառակ կողմը ևս չէր կարող արդելք հանդիսանալ Վասակ Իշխանիկին տեր դառնալու իր հայրենական ժառանգությանը, որովհետև հենց այդ ժամանակ, 859 թվին, մահանում է Վասակ Գաբուռը։ Նա թողնում է երեք որդի՝ Գրիգոր, Սահակ և Վասակ[5]։ Վասակ Գաբուռը մահացել էր շատ երիտասարդ, «տղայ հասակաւ», բնականաբար, նրա որդիները դեռ երեխաներ էին։ Նրան հաջորդել էր երեց որդին, մանկահասակ Գրիգորը, որը նույնպես ուներ Սուփան

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 171։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 134։

[3] Չենք կարող համաձայնել Օրմանյանի հետ, որի կարծիքով Վասակ Իշխանիկն ու Աշոտը Սամարա չուղարկվեցին, այլ հենց Դվինում մահմեդականություն ընդունեցին և վերադարձան, այսինքն՝ 853—854 թթ. (տես «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912 թ., էջ 944)։ Ս. Օրբելյանի և այլոց վկայություններից պարզ երևում է, որ նրանք ևս ուղարկվել էին խալիֆաթի դուռը (տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանդին Սիսական, էջ 171)։

[4] Տես Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 339։

[5] Տես Հավելված, համապատասխան տեղերը։

(2-րդ) մականունը. բայց իրականում, գոնե սկզբնական շրջանում, իշխանությունը վարում էր նրա մայրը՝ Աշոտի դուստրը Մարիամը։ Աշոտ Բագրատունին, որը զբաղվում էր ավելի շատ խոհեմությամբ և գլխով, քան թե զենքով ու բռնությամբ, չէր կարող հենվել իր մանկահասակ թոռնիկի և դստեր վրա ու գժտություններ սկսել Վասակ Իշխանիկի հետ։ Եվ, ճիշտն ասած, իր վարած քաղաքականության տեսակետից այդ իմաստ էլ չուներ։ Նրա համար կարևոր էր Սյունյաց իշխանների բարեկամությունը և ոչ թե թշնամությունը։ Հավանաբար այս նկատառումներից ելնելով էր, որ թե՛ Գեղաքունիքի իշխանազունները, և թե՛ նրանց հովանավոր Բագրատունիներն արդելք չեն հանդիսանում Վասակ Իշխանիկին և նրա եղբորը մտնել իրենց հայրենի երկիրը, ժառանգել հայրական ժառանգությունը՝ Բաղք, Վայոց ձոր, Ծղուկ, Ճահուկ, Հարանդ և Շնհեր, այսինքն՝ այն բոլորն ինչ որ ուներ նրանց հայրը՝ Փիլիպպեն, ինչպես նաև ժառանգել զահերեցությունը։ Իսկ Գեղաքունի պատանի իշխանը և նրա եղբայրներն ու մայրը ժառանգում են իրենց հայրենական բուն դավառը՝ Գեղաքունիքը։ Թեև աղբյուրներում Վասակ Իշխանիկը զահերեց տիտղոս չի կրում, բայց նրա բոլոր հոլջոլջումները, ինչպես նաև գործունեությունը ցույց են տալիս, որ նա իր վերադարձից հետո ևս զահերեց իշխան էր։

Այսպիսով, Բագրատունի Աշոտը, ինչպես և Գեղաքունիքի իշխանությունը խաղաղ ու լուռ ձևով հաշտվել են այն բանի հետ, որ զահերեցությունը նորից անցնի զահերեցների ճյուղին՝ Վասակ Իշխանիկին։ Աշոտ Բագրատունու այս հեռատես վարմունքը, իրոք տալիս է իր դրական արդյունքը։ Վասակ Իշխանիկը ոչ միայն թշնամական որևէ դիրք չի բռնում Գեղաքունիքի իշխանության ու Շիրակի՝ տիրոջ նկատմամբ, այլ ընդհակառակն, դառնում է Աշոտ Բագրատունու բարեկամն ու հպատակը։ Այս մասին են խոսում հետևյալ վկայությունները։

1. Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 136.

«Մեծ իշխանն Սիւնեաց Վասակ, որ ըստ փաղաքշականին Իշխանիկ անուանիւր՝ յաւէտ իմաստութեամբ և հեզահամբոյր հանդարտութեամբ և հաւանութեամբ մե-

ծաւ հնազանդէր Աշոտոյ իշխանին իշխանաց, և խրատու նորա զունկն մատուցանէր խնամով՝ իբրև զօրէնս միշտ ի սրտի իւրում պահելով։ Եւ ի ձեռն այնորիկ յաւէտ իմն ընդարձակագոյն զտուն տէրութեան իւրոյ յարդարէր ի բոլոր բարեմասն լրութիւնս. և կայր բաղում խաղաղութեամբ ըստ ամենայն հանդիսի բարեպաշտութեան»։

2. Ս. Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 172.

«Եւ այսպէս ճոխացեալ երևելի փառօք՝ բաղումս ցուցանէր գործս արութեան յայսմ ժամանակի ի ձեռնտութենէ նոյն Աշոտոյ իշխանի, որ և թագատրեաց»։

Դժվար չէ հետևցնել, որ Վասակ Իշխանիկի և Աշոտի հարաբերությունը ո՛չ թե սոսկ բարեկամություն էր, այլ պարզապես հպատակություն, որ նա հավետ հեղահամբույր հանդարտությամբ հնազանդվում էր Աշոտ իշխանաց իշխանին, որ լսում էր նրա խրատներն ու որպես օրենք պահում իր սրտում։ Եթե հիշենք և այն փաստը, որ Աշոտ Բագրատունին 859 թվին դառնալով իշխանաց իշխան, ստանում է նաև ամբողջ Հայաստանի հարկերը հավաքելու իրավունքը[1], ապա պարզ կլինի, որ Վասակ Իշխանիկը դառնում է Շիրակի Բագրատունիներին հպատակ ու ենթակա, վասալ։ Եվ այսպես, թեև Վասակ Իշխանիկը վերադարձից հետո ստացավ իր հայրենական ժառանգությունը և դահերեցության իրավունքը, բայց Սյունիքն ամբողջապես վերցրած դուրս չեկավ Շիրակի Բագրատունիների ազդեցությունից, որի մեջ նա ընկել էր Բուղայի արշավանքից հետո։ Ընդհակառակն, ֆեոդալական կախվածությունն ավելի օրինական ու տևական դարձավ։

Այս երևույթը չքայքայեց Սյունիքի ներքին երարխիան։ Տեղական դահակալ իշխանները դարձյալ հպատակվում էին դահերեց իշխանին, իբրև սյուզերենի։ Որոշ առումով բացառություն էր կազմում Գեղաքունիքը, որի նկատմամբ Բագրատունիներն ունեին նաև ժառանգական իրավունք։ Այդ դավառը, ինչպես կտեսնենք, միաժամանակ էլ մնաց հարաբերական իմաստով ինքնուրույն իշխանություն, սակայն հարյուրդ դարի առաջին քառորդում գրավվեց արքունիքի կողմից և դարձավ Բագրատունիների կալվածքը։

Ինչպես գիտենք, Բուղայի արշավանքը 9-րդ դարում Արաբական խալիֆաթի կենտրոնից եկած վերջին փոթորիկն էր, որը հողմածեծ արեց Հայոց աշխարհը։ Այդ հողմածեծությունից հետո երկիրը շահեց խաղաղության մի քանի տասնյակ տարիներ, որոնց ընթացքում հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ իր խաղաղ ստեղծագործության համար։ Կաթողիկոս պատմիչն այդ շրջանը նկարագրում է այսպես՝ «Հերկեցին հերկս և ոչ ի վերայ փշոց։ Եւ ապա ձայն խրախճանաց ցնծացելոց ի յարկս ճոցա լինէր՝ և ձայն հարսին և փեսայի։ Մնան որդիս և արարին պտուղ, և բնակեցան իւրաքանչիւրօք ի ժառանգութեան իւրեանց»[1]։ Տնտեսական այս խաղաղ վիճակին ու շինարարությանը մասնակից էր նաև Սյունիքը. «և այն ինչ ժամանակս յոլով խաղաղութիւն բերէր ընդ բոլոր Հայաստանեայս. սակս որոյ ամենեքեան շինութեան եկեղեցեաց պարապէին»[2]։ Շարունակության մեջ Ս. Օրբելյանը վկայում է, որ շինարարական գործունեությամբ առավել աչքի են ընկնում Գեղաքունիքի տերերը՝ Գրիգոր Սուփան 2-րդը, նրա եղբայրները և մայրը՝ Մարիամը։ Նրանց ծավալած շինարարությունը գերազանցապես եկեղեցական էր[3]։

Այս խաղաղ տասնամյակների ժամանակ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, Հայոց իշխանների պահանջով, ստանում է թագ և հիմնադրում Բագրատունյաց թագավորությունը։ Մեր նյութից դուրս է շարադրել Բագրատունյաց թագավորության հիմնադրման հանգամանքներն ու պատճառները։ Նշենք միայն, որ այդ ակտով հայ ժողովուրդը վերականգնում էր իր ինքնուրույնությունն ու անկախությունը։ Սյունյաց իշխաններն ակտիվ մասնակցություն են ունենում այդ գործում։ Ավելի՛ն, Սյունիքը հանդես է գալիս իբրև նախաձեռնող։ Ս. Օրբելյանի մոտ մենք կարդում ենք՝ «Իսկ ապա յայնմ ժամանակի խոր-

---

1 «զի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի», (Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 133)։

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 134, 135։

2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 176։

3 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 137։

հուրդ ի մէջ առեալ աստուածային իմն տեսչութեամբ Գրիգորի Սուփանայ և Վասակայ Իշխանիկ կոչեցելոյ՝ տէրանցն Սիւնեաց, ընդ Գրիգորի Դերենիկ կոչեցելոյ, որ էր իշխան տանն Արծրունեաց, և ընդ այլ իշխանաց Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր-Ահմատայ և կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց»[1]։ Աշոտին թագավոր են օծում «Տէր Գէորգ՝ Հայոց կաթողիկոս, և Տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, այլովք եպիսկոպոսօք ի 334 թուականին Հայոց (=885 թ.)»[2]։ Սյունիքի այս ակտիվ ու նախաձեռնող մասնակցությունը չի կարելի դիտել այլ կերպ, քան այն, որ նա կողմնակից էր կենտրոնացած իշխանության ստեղծմանը երկրի ներսում։

Այդ է ցույց տալիս նաև հետևյալ փաստը։ Հայտնի է, որ Ատրպատականի էմիր Աֆշինը Բագրատունյաց նորաստեղծ թագավորությունը չլատելու նպատակով ջանաց իր կողմը գրավել Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունուն։ Վերջինս գնաց նրա մոտ և իր հպատակությունը հայտնեց նրան։ Այդ նույն թակարդի մեջ է ընկնում նաև Սյունիքի Վասակ Իշխանիկը, բայց անմիջապես զգում է իր սխալը ու վերադառնում Բագրատունյաց հպատակության ներքո։ Աղբյուրներում այդ մասին կարդում ենք.

«Յետ սակաւ աւուրց ինչ,— գրում է Հ. Դրասխանակերտցին,— և մեծ իշխանն Սիւնեաց ըստ սորին սակի զսոյն զայս գործեալ՝ երթայր և նա առ Աֆշինն, յորմէ և նա թափուր իբրև զնա դարձեալ եկեալ։ Եւ ապա այնուհետև զղջացեալ զփեռեկտիլն ի միաբանութենէ արքայի՝ խաղապատելով աղերսէր՝ մի ունել նմա ի բանի զյանցուածս իւր կամ մերժել յառաջին խնամոցն հայրաբուն սիրոյն։ Իսկ արքայ Սմբատ ոչ ինչ անջրպետ ի մէջ արկեալ նախկի այցելութեանն՝ զրկալիր սիրով առ ինքն յանձանձէր ածել՝ իբրև զորդի սիրելի մեծապատիւ պերճութեամբ զնա շքեղացուցեալ»[3]։ Խոսելով այն մասին, որ Արծրունիները, վրաց բդեշխ Ադներսեհը, Աղվանից Համամը պատակավելով Բագրատունյաց թագավորությունից, թագ կապեցին ընդդեմ նրա, Ս. Օրբելյանը գրում է՝ «Մեծարէ Աֆշինն զՎասակ Սիւնի թագ կապեալ. և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել»[1]։

Վասակի գնալը Աֆշինի մոտ տեղի է ունեցել 890-ական թվերի առաջին կեսում, հավանաբար, Սմբատ Բագրատունու թագադրման շրջանում։

890-ական թվերի առաջին կեսին մահանում է Վասակ Իշխանիկը։ Գահերեցության գահում նրան հաջորդում է ոչ թե նրա որդին՝ Փիլիպպե 2-րդը, այլ եղբայրը՝ Աշոտը։ Նրա մահով գահերեց իշխանների հայրենական ժառանգությունը ենթարկվում է նոր տրոհման։ Որդին, Փիլիպպե 2-րդը ստանում է Հաբանդ գավառը և Շնհերը, իսկ մնացած կալվածքները ժառանգում է եղբայրը՝ Աշոտը։ Այս նոր տրոհման արդյունքը դինում է այն, որ գոյանում է վարչական նոր միավոր, նոր գահակալ իշխանություն Փիլիպպե 2-րդի ղեկավարությամբ՝ Հաբանդ և Շնհեր կալվածքներում։ Այդ է պատճառը, որ աղբյուրներում Փիլիպպե 2-րդը հիշվում է «տէր» և «իշխան» տիտղոսներով[2]։

Նոր գահերեց Աշոտ իշխանը ևս շարունակում է մնալ իբրև հավատարիմ վասալ Բագրատունիներին։ Հ. Դրասխանակերտցին նշելով Վասակ Իշխանիկի մահը, ավելացնում է. «Եւ ապա եղբայր նորուն Աշոտ ընդ նմա պայազատէր զիշխանութիւնն զայն. այլ հեղահամբոյր և խաղաղասէր, բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ և ամենայնիւ յամենայնի շինութեան զինքն պարապեցուցեալ հայրենի տէրութեան իւրոյ»[3]։ Այս Աշոտ գահերեց իշխանն էր, որ մասնակցեց Սմբատ թագավորի օծման հանդեսին։

Սյունիքի հավատարմության ու վասալության մասին պերճախոս են նաև հետևյալ փաստերը, որոնք միաժամանակ վասալական պարտավորության փաստեր են։ Երբ Սմբատ 1-ին թագավորը պատերազմ էր մղում Ահմեդ Ամդացու դեմ,

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 175։

2 Նույն տեղում։ Տես նաև Թովմա Արծրունի, Պատմութիւն տան Արծրունեաց, էջ 370։

3 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 172։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 299։

2 Տես հավելվածի համապատասխան տեղը։

3 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 142։ Նույնը տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, է 175։

նրա զորքերի մեջ էին իր բոլոր վասալների զորախմբերը, որոնց թվում նաև Սյունիքի զորախումբը։ Այդ երևում է նրանից, որ Թուխ գետի ճակատամարտում սպանվածների թվում է նաև «Աշոտ Հայկազնեաց Գեղաքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր»[1]։ Եվ ապա, երբ Սմբատը կռվում էր Աբխազաց թագավորի դեմ, նրա բանակում էր նաև «Իշխան Վայոց ձորոյ Ապուշամբ բազում զգուաք»[2]։ Ապուշամբը, հավանաբար, Աշոտ գահերեցի վասալներից էր, որը վարում էր Սյունիքի զորքը հիշյալ կռվում։ Նույն դեպքի մասին խոսելիս Ասողիկը վկայում է, թե արխազական թագավորի դեմ կազմված կոալիցիային մասնակցում էին Դավիթ Կյուրոպաղատը, Հայոց Սմբատ արքան «եւ ամենայն զօրն Վրաց և Վասպուրականի, Սիւնեաց և Աղուանից իշխանքն»[3]։

Եվ այսպես, բոլոր վերոհիշյալ ասվածներից դժվար չէ եզրակացնել, որ 9-րդ դարի 2-րդ կեսում Սյունիքը ներգրավվեց Շիրակի Բագրատունիների քաղաքականության ոլորտը, դառավ Բագրատունիների բարեկամն ու հպատակը և ամեն կերպ օժանդակեց Բագրատունյաց թագավորության, կենտրոնական իշխանության ստեղծմանն ու ամրացմանը։ Թագավորության ստեղծումից հետո դարձավ նրա վասալը՝ ճանաչելով նրա քաղաքական գերիշխանությունը։ Այդ արդյունք էր՝ մի կողմից Սյունիքի նկատմամբ Բագրատունիների վարած ճկուն քաղաքականության, մյուս կողմից Սյունիքի կենտրոնական իշխանություն ստեղծելու գործում ցուցաբերած շահագրգռվածության։ Այդ շահագրգռվածությունը առաջին հերթին բխում էր արաբական ներխուժման վտանգի դեմ համատեղ կերպով պայքարելու անհրաժեշտությունից, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Սյունիքն անմիջականորեն սահմանակից էր Ատրպատականի արաբական էմիրությանը։ Դրանում, անշուշտ, դեր էին խաղում նաև Շիրակի ու կենտրոնական նահանգների հետ Սյունիքի ունեցած տնտեսական փոխհարաբերությունները։

---

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 382։
[2] Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921, էջ 81։
[3] Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջ 252։

Հայագիտական որոշ երկերում Սյունիքի և Բագրատունիների 9-րդ դարի վերջում եղած փոխհարաբերության մասին կա սխալ պատկերացում։ Օրինակ, Լեոն գտնում է, որ Սմբատ 1-ին թագավորը դրավել է Սյունիքը, Նախիջևանը, Երնջակը և այլն ու կցել Բագրատունյաց տիրապետությանը[1]։ Լեոն հենվում է Շապուհ Բագրատունու մի վկայության վրա, որի մեջ իրոք կարդում ենք. «Եւ նայ (Սմբատ 1-ին թագավորը— Հ. Ուր.) տիրեաց ամենայն աշխարհին Հայոց և ընդ ձեռամբ էած զՀայք... և զԱրևիս, և զԲաղս... և զՎայոց ձոր և զՆախջեվան։ Եւ էառ յամրոցն զԵրնջակայ...»[2]։ Մեր կարծիքով Լեոն սխալ է մեկնել այս վկայությունը։ «Տիրեաց» և «ընդ ձեռամբ էած զՀայք» չի նշանակում, որ Սմբատ 1-ինը նվաճել է, գրավել է հիշյալ գավառները և դարձրել Բագրատունիների սեփական կալվածքները։ Մենք ստորև կտեսնենք, որ թե՛ իր՝ Սմբատ 1-ին թագավորի ժամանակ, և թե՛ նրանից հետո Վայոց ձորը, Բաղքը և այլն հանդիսանում էին Սյունյաց գահերեց իշխաններ Աշոտի ու նրա որդիներ Սմբատի, Սահակի և այլոց հայրական ժառանգությունը նաև 10-րդ դարի ընթացքում։ Մենք կտեսնենք նաև, որ Արևիք գավառը, Նախիջևանը, ինչպես և Երնջակը Սմբատ 1-ինի սեփականությունը չէին։ Ուստի պնդել, որ 9-րդ դարի վերջում Սյունիքն արդեն կցված էր Բագրատունյաց տերությանը, սխալ է։ Շապուհ Բագրատունու վերոհիշյալ վկայության «տիրեաց» բառը մենք հասկանում ենք գերիշխանության իրավունքի տեսակետից, այսինքն՝ Սյունիքը, որն առաջ ինքնուրույն ամբողջական իշխանություն էր և ոչ մի հպատակություն չուներ Շիրակի Բագրատունիներին, այժմ վասալական հպատակությամբ ենթարկվում էր նրանց, մտնում նրանց քաղաքական գերիշխանության ներքո։ Այդ վկայությունը եթե մի բան ցույց է տալիս, ապա միայն այն, որ Բագրատունիները ձեռք բերեցին Սյունիքի նկատմամբ քաղաքական գերիշխանության իրավունք։

Չենք կարող համաձայնվել նաև Մ. Սմբատյանցի այն պնդման հետ, որ իբր 895 թվին Գեղաքունի գավառը բաժանված էր Սյունյաց նահանգից և միացել էր Արարատյան նա-

---

[1] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջեր 531—537։
[2] Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, էջ 65։

հանդի հետ[1]։ Սմբատյանցն իր այս կարծիքը «հիմնավորում է» Ս. Օրբելյանի պատմության 12 գլխով։ Բայց այդ գլխում նման ոչ մի բան չկա։

* * *

9-րդ դարի վերջին տասնամյակում Սյունիքի ներքին կյանքում նկատելի պատմական տեղաշարժեր չկան։ Ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Սյունիքում տիրում էր խաղաղություն և ծավալվում էր շինարարություն։ Աչքի ընկնող շինարարական մեծ գործը Տաթևի կաթողիկե եկեղեցու հիմնադրումն էր 895 թվին։

Սյունիքի գահերեց իշխանն էր Աշոտ իշխանը, իսկ Գեղարքունիքում շարունակում էր իշխել Գրիգոր Սուփան 2-րդը իր մոր ու եղբայրների հետ միասին։ Այս տասնամյակում արդեն նկատելի կերպով ազդեցիկ դիրք ուներ նաև Բաղքի գահակալ իշխանների տան ներկայացուցիչ Զաքիկ 1-ին իշխանը[2]։ Սյունիքի և Բագրատունյաց բարեկամական հարաբերությունները փոքր-ինչ խախտվում են 10-րդ դարի սկզբում։ Ընդհարում է տեղի ունենում Բագրատունի թագավորի և Սյունիքի գահերեց իշխանի միջև։ Վասալի ու սյուզերենի ընդհարման պատճառը երկուսն էր. նախ՝ Սյունյաց գահերեց իշխանի թերացումն իր հարկային պարտավորության մեջ, երկրորդ՝ Նախիջևանի կոնֆլիկտը։

Նախիջևանն ընկած էր Վասպուրական և Սյունիք նահանգների սահմանագլխում և 9-րդ դարի վերջում ու 10-րդ դարի սկզբում հաճախ դառնում էր կռվախնձոր այդ նահանգների միջև՝ դառնալով մերթ մեկի, մերթ մյուսի սեփականությունը։ Զբաղվելով Նախիջևանի հնագույն պատմության մեջ, մեզ անհրաժեշտ է դիտել նրա վերջին դարերի պատմությունը, պարզելու համար, թե ինչո՞ւ նա դառավ 10-րդ դարի սկզբում մի աղետալի կոնֆլիկտի առիթ։ Վերջին երեք դարերում Նախիջևանի պատկանելության մասին ունենք հետևյալ վկայությունները։

---

[1] Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանց, Տեղագիր Դեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895 թ., էջ 424։

[2] Տես հավելված։

Ըստ Ստեփանոս Շիրակացու «Աշխարհացույց»-ի թե՛ «Գողթն դինեվետ գավառը», և թե՛ «Նախճավանը» մտնում են Վասպուրական նահանգի մեջ[1]։ Ղևոնդի վկայությամբ ևս, արաբների նվաճման շրջանում, Նախիջևանը մտել է Վասպուրականի մեջ[2]։ Թ. Արծրունու վկայությամբ 8-րդ դարի սկզբում այն դուրս է եկել Վասպուրականի կազմից։ Նա, խոսելով Աշոտ Արծրունու մահվանից[3] հետո Արծրունիների տիրապետությունը նրա երկու եղբայրների (Գագիկի և Գուրգենի) միջև բաժանելու մասին, ասում է. «Իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բաղում ժամանակօք յառաջ, ՄԺԱ. ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց։ Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՀՀ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն»[4]։ Ինչպես տեսնում ենք, Նախիջևանը Վասպուրականի կազմից դուրս գալու մասին Թովմա Արծրունին տալիս է երկու թիվ. մեկը՝ 211 տարի (սկսած 905 թվից) առաջ, այսինքն՝ 905—211=694 թ., մյուսը՝ Գրիգորի եկեղեցու այրման և Հայոց զորքի վտանգավոր մահվան, մեր կարծիքով Նախիջևանի աղետի ժամանակ, որը տեղի է ունեցել 705 թվին։ Այս թվերից որն էլ ընդունենք, փաստն այն է, որ Նախիջևանը դուրս էր եկել Վասպուրականի կազմից 8-րդ դարի սկզբում, իսկ Գողթանը՝ Հայոց ՃՀՀ թվին, այսինքն՝ 737 թվին։ Սակայն, ո՞ւմ են անցել դրանք, ո՞ր նահանգի կազմի մեջ են մտել, պարզ չէ։ Ալիշանը գտնում է, որ դրանք անցել են Սյունիքին[5], սակայն նրա այս կարծիքը լոկ ենթադրություն է, չհիմնավորված սկզբնաղբյուրներով։ Մենք ոչ մի հիմք չունենք պնդելու, որ 8-րդ դարում, Վասպուրականի կազմից դուրս գալուց հետո, Նախիջևանը մտել է Սյու-

---

[1] Տես Ս. Աբրահամյանի «Շիրակացու մատենագրությունը», 1944, էջ 350։

[2] Ղևոնդ, Պատմութիւն Հայոց, էջ 11։

[3] Ըստ Թ. Արծրունու Աշոտը մահացել է 905 թ., տես Թ. Արծրունի Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 399։

[4] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 404։

[5] Ղ. Ալիշան, Սիսական, էջեր 498, 311, 312։

նիքի մեջ, որովհետև, նախ՝ ինչպես տեսանք, 8-րդ դարում Սյունիքի մասին մենք ոչ մի վկայություն չունենք սկզբնաղբյուրներում և, երկրորդ՝ Նախիջևանը, որպես Սյունիքի քաղաք, կամ անգամ կալվածք, ինչպես նաև գավառ չի հիշվում ո՛չ Ս. Օրբելյանի հարկացուցակում, ո՛չ էլ նրա պատմության սկզբում տրված գավառների ցուցակում, ինչպես նաև չի հիշվում 9—10-րդ դարերի իշխանների կալվածքների թվում։

Մեզ թվում է, որ Վասպուրականի կազմից դուրս գալուց հետո Նախիջևանը մնաց արաբական զորավարների ձեռքում։ Այդ են ցույց տալիս աղբյուրներում եղած հատ ու կենտ վկայություններն այն մասին, որ Նախիջևանում գտնվում էին արաբական զորքեր ու արաբ բնակչություն, իսկ ավելի ուշ կազմակերպվեց արաբական էմիրություն։ Այս տեսակետից իրավացի է Ալիշանը, որը, հակասելով իր վերոհիշյալ կարծիքին, գրում է, թե 654 թվին Նախիջևանը գրավում են արաբները և այդ օրվանից նա դառնում է մահմեդականների նստատեղերից մեկը[1]։ Այդ մասին է խոսում նաև այն փաստը, որ մենք չունենք մեր պատմության մեջ մնացած Նախիջևանի հայ իշխանների ինքնուրույն տոմ[2]։

Նախիջևան քաղաքի հետագա պատկանելիության մասին մենք ունենք վկայություններ միայն 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին վերաբերող։ Կցկտուր այդ վկայություններից, որոնք մեջ կբերենք ստորև, երևում է, որ 9-րդ դարի վերջում Նախիջևանը գտնվում էր Բագրատունիների գերիշխանության ներքո։ Հավանաբար արաբական տիրապետության թուլացման շրջանում Բագրատունիները գրավել են այդ քաղաքը և այն իբրև նվեր տվել են մերթ Վասպուրականի, մերթ Սյունիքի իշխաններին՝ նրանց հավատարմությունը շահելու նպատակով։

Ի դեպ, Բագրատունիների գերիշխանությունը Նախիջևանի վրա լոկ քաղաքական իմաստով էր և ոչ թե հողի գերագույն

[1] Ալիշան, Սիսական, էջ 498։

[2] Գողթան գավառի վարչական հետագա պատկանելիության մասին վկայություններ չունենք։ Կտեսնենք միայն, որ 10-րդ դարի սկզբում այնտեղ գոյություն ուներ արաբական էմիրություն։ Նրա եկեղեցական պատկանելիության մասին խոսք կլինի ստորև։

սեփականության իմաստով։ Վերջին իմաստով Նախիջևանը պատկանել էր Արծրունիներին մինչև իրենց ձեռքից դուրս գալը։ Երբ արդեն այն անցել էր Բագրատունիներին, Արծրունիները բողոքում են Սմբատ առաջինին, ասելով, թե «ի հաւու և ի հօրէ նոցանց իսկ տան և ազգի պատշաճեալ՝ ի նուաճեալ ունէր զնա. և զրկութիւն իւր զորոշումն քաղաքին առ ի յիւրմէ վարկանէր»[1]։ Ավելորդ չենք համարում 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին Նախիջևանին վերաբերող վկայությունները մեջ բերել ամբողջապես, ցույց տալու համար, թե ինչպես է Նախիջևանը ձեռքից ձեռք անցել. «Իսկ արքայ (Սմբատ 1-ին Բագրատունին—Հ. Ուր.) վասն զի յառաջագոյն տուեալ էր (խոսքը Նախիջևանի մասին է — Հ. Ուր.) ձիրս պարգևաց Սմբատայ իշխանին Սիսականի, որ արտաքս բերէր միշտ զինքն յընդունայնակարծ հպարտութենէ և մտերմական ծառայութեամբ կատարէր զբոլոր սպասահարկութիւն նորա՝ ոչ կամեցաւ զձեռագիրն իւր ի ձեռաց իշխանին յափշտակել և ոչ զընծայեալսն նմա մեծարանս յանարդանս արհամարհանաց դարձուցանել»[2]։ Նախ նշենք մի անճշտություն։

Ինչպես տեսնում ենք, համաձայն այս վկայության Բագրատունի Սմբատ 1-ին թագավորը Նախիջևանը տվել է Սյունիքի Սմբատ իշխանին նրա հավատարիմ հպատակության, «մտերմական ծառայության» և թագավորի նկատմամբ ունեցած բոլոր սպասահարկությունները պարտաճանաչ կատարելու համար։ Բայց բանն այն է, որ Սմբատ 1-ին Բագրատունի թագավորը Նախիջևանը չէր կարող տալ Սյունիքի Սմբատ իշխանին, որովհետև, ինչպես կտեսնենք, անժխտելի է, որ Սմբատ Սյունին դահերեց է դառել իր հոր մահվանից հետո՝ 908 թվի վերջում, կամ 909 թվի սկզբում, որից հետո, հենց 909 թվի գարնանը, այսինքն՝ Յուսուֆի արշավանքի ժամանակ, նա փախչում է Սյունիքից Վասպուրական՝ առանց Սմբատ Բագրատունու նկատմամբ ունեցած իր հավատարմությունը գրեթե ակտով ապացուցելու։ Այդ անելու համար, նա ժամանակ էլ չունեցավ։ Սմբատ Բագրատունուն այդպիսի հավատարմություն ցուցաբերել էին Սմբատ Սյունու նախորդները՝ նրա

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 209։

[2] Նույն տեղում։

հայրը՝ Աշոտը և հորեղբայրը՝ Վասակ Իշխանիկը։ Հետևապես Սմբատ Բագրատունին Նախիջևանը տվել է ոչ թե Սմբատ Սյունուն, այլ նրա հորը՝ Աշոտին, կամ հորեղբորը՝ Վասակ Իշխանիկին, և այն էլ հատկապես 9-րդ դարի վերջին տասնամյակում[1]։

Թովմա Արծրունին հետագա դեպքերի մասին պատմում է հետևյալը։ Աշոտ Արծրունին ևս հիասթափվում է Ատրպատականի էմիր Աֆշինից ու հեռանում նրանից։ Իր քեռու՝ Բագրատունյաց Սմբատ 1-ին թագավորի նկատմամբ ունեցած իր հանցանքը նա քավում է Սմբատ 1-ինի համար մի շատ վճռական մոմենտում։

902 թվին Մանազկերտի կայսրիկներն ապստամբվում են Սմբատ 1-ին թագավորի դեմ՝ հրաժարվելով տալ «հարկս և զինուորել որպես օրէն էր»։ Մանազկերտի տակ տեղի ունեցած վճռական ճակատամարտում կայսրիկները խիստ նեղ դրության մեջ են դնում Սմբատ թագավորին, որը դիմում է նահանջի։ Ճակատագրական այդ պահին Աշոտ Արծրունին իր, Մոկաց և Անձևացյաց զորքերով հարձակվում է թշնամու վրա, ջարդում նրան և Սմբատ թագավորին փրկում վերջնական պարտությունից։ Այս դեպքից հետո Աշոտ Արծրունին դիվանագիտական մի ճարպիկ մանևրով հպատակության է բերում կայսրիկներին[2]։ Այդ բանի համար Սմբատ թագավորը բազում նվերների հետ միասին նաև Նախիջևանը տալիս է իր քրոջ որդուն՝ Աշոտ Արծրունուն.— «Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւանին Կայսկի»[3]։ Իսկ Անանուն պատմիչը վկայում է, որ Աշոտը Նախիջևան քաղաքը «ընդ իւրումն կարգեալ էր իշխանութեամբ»[4]։ Ուրեմն 902 թվին Նախիջևանը Սմբատ թագավորի

[1] Մենք ավելի հակված ենք ենթադրելու, որ Նախիջևանը տրվել է Վասակ Իշխանիկին, երբ վերջինս Աշոտ Արծրունու օրինակով գնաց Աֆշինին հպատակվելու, բայց զղջաց ու վերադարձավ և իր հպատակությունը հայտնեց Սմբատ թագավորին։ Այդ տեղի ունեցավ 891—892 թվերի արանքում։

[2] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 394—396։

[3] Նույն տեղում, էջ 397։

[4] Նույն տեղում, էջ 453։

կամքով Սյունիքից անցնում էր Վասպուրականին։ Բնական է, որ այս անգամ դժգոհելու էր Սյունիքի գահերեց իշխանը և, անշուշտ, Սմբատ 1-ինի դեմ հաջորդ տարում նրա բարձրացրած ապստամբության մեջ դեր խաղաց նաև այդ դժգոհությունը։ Բայց շուտով, 905 թվին մահանում է Աշոտ Արծրունին։ Նրա տերությունը, ինչպես տեսանք վերևում մեջբերված Թ. Արծրունու վկայությունից, իրար մեջ բաժանում են երկու եղբայրները և այդ բաժանման ժամանակ Նախիջևանը նորից չկա Վասպուրականի կազմում[1]։ Հավանաբար, ինչպես ենթադրում է Լեոն, Սյունյաց իշխանները չեն հաշտվել Նախիջևանի կորստի հետ և Աշոտ Արծրունու մահվանից անմիջապես հետո Բագրատունի Սմբատ 1-ը նորից այն տալիս է նրանց[2]։ Այս անգամ արդեն դժգոհում են Վասպուրականի նորապսակ իշխանները՝ Գագիկն ու Գուրգենը. «Զայսու ժամանակաւ,— վկայում է Հ. Դրասխանակերտցին,— զլխաւոր և գահերէց իշխանն Գագիկ Արծրունի աղերսահայց յարքայէ Սմբատայ լեալ՝ առ ինքն զքաղաքն Նախչաւան խոկայր դարձուցանել»[3]։ Հետագա դեպքերը ցույց են տալիս, որ Սմբատ թագավորը լուռ է մնացել Գագիկի աղերսանքի հանդեպ. Նախիջևանը մնում է Սյունիքի կազմում։ Այս հանգամանքը շարժառիթ հանդիսացավ Գագիկի դեպի Հայաստանի երդվյալ թշնամու՝ Յուսուֆի կողմն անցնելու գործում[4]։ Այսպես է տհա

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջեր 403, 404։

[2] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 545։ Լեոն հիմնականում մոտավորապես ճիշտ նկատելով դեպքերի ընթացքը, գտնում է, որ Նախիջևանի հարցում Թ. Արծրունու և Հ. Դրասխանակերտցու մոտ հակասություններ կան։ Մեր կարծիքով, ինչպես տեսնում ենք, հակասություն չկա։ Բացի այդ, Լեոն չի տեսնում Սյունյաց Սմբատի և իր նախորդների վերևում մեջ նշած շփոթմունքն ու անախրոնիզմը սկզբնաղբյուրներում։

[3] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 208, 209։

[4] Լեոն գտնում է, որ Նախիջևանի կոնֆլիկտը դարձավ «ամբողջ ճերկրի համար աղետարեր» (Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջեր 544, 45), այսինքն ըստ Լեոյի՝ Գագիկ Արծրունու Յուսուֆի կողմն անցնելու հիմնական պատճառը Նախիջևանի միջադեպն էր։ Մեր կարծիքով,

Նախիջևանի կոնֆլիկտի հարցը սկզբնաղբյուրների համաձայն։

Մենք ասացինք, որ Նախիջևանի կոնֆլիկտի հետ որոշ առնչություն ունի Սյունյաց դահերեց իշխանի Սմբատ թագավորի դեմ բարձրացրած ապստամբությունը։ Այդ ապստամբության մասին մենք ունենք մի եզակի վկայություն Թովմա Արծրունու մոտ։ Ապստամբության պատճառը, անշուշտ, միայն Նախիջևանի կոնֆլիկտը չէր, այլ, Թ. Արծրունու պնդմամբ, նաև Սյունյաց դահերեցի թերացումն իր հարկային պարտավորության մեջ. «Եւ եղև ի պալ միւսոյ տարւոյն՝ (903 թ.— Հ. Ուր.) Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկած ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թելադրելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. և ինքն ժողովեալ զզօրս իւր ԺԸ արանց զօրաւորաց եկն եմուտ յամուրսն Վայոց Ձորոյ»[1]։

Նախ նշենք, որ այստեղ էլ գործ ունենք նույն անախրոնիզմի հետ։ Մենք արդեն նշեցինք, որ Սմբատ Սյունին, որի մասին է խոսքն այս վկայության մեջ, դահերեց է դառել 908 թվի վերջում, հետևապես նա, իբրև դահերեց իշխան, չէր կարող ապստամբվել 903 թ.։ Այդ ժամանակ դահերեց իշխան էր նրա հայրը՝ Աշոտը։ Այս բանը թերևս որոշ կասկած է հարուցում սույն վկայության ճշտության մասին, մանավանդ, որ նման ապստամբության մասին չեն հիշում ո՛չ Հ. Դրասխանակերտցին, ո՛չ էլ Ս. Օրբելյանը։ Բայց կասկածելու կարիք չկա, քանզի ապստամբության շարժառիթը, բուն պատճառը հանդիսացող երևույթը, առկա էր։ Թ. Արծրունու վկայությունից պարզ երևում է, որ Սմբատ իշխանը (ավելի ճիշտ՝ Աշոտը) ապստամբել է հարկի պատճառով։ Նա հրաժարվել է հարկը տալ Բագրատունյաց թագավորին և որոշել է այն մուծել պարսից բռնավորին, այսինքն՝ Ատրպատականի էմիրին։ Այդ քայլը Բագրատունիների կողմից դիտվում է իբրև ապստամբություն իրենց գերիշխանության դեմ և Սմբատ 1-ին թագավորը զորական արշավ է կատարում Սյունիքի վրա։

Ըստ Թ. Արծրունու, ապստամբությունը ընթանում է հետևյալ կերպ։ Սյունիքի դահերեցը իր 10-հազարանոց զորքով քաշվում է Վայոց ձոր գավառը ու ամրանում անառիկ բերդերում։ Սմբատ 1-ին թագավորն ավելի քան 25-հազարանոց բանակով գալիս է Երասխի ափը և լուր ուղարկում Աշոտ Արծրունուն, որպեսզի նա էլ գա օգնության, որի համար նրան տալիս է տերիտորիալ խոստումներ։ Աշոտ Արծրունին գալիս է և բանակ դնում Շարուրի դաշտում։ Փաստորեն Արծրունյաց իշխանը հաշտարարի դեր է կատարում։ Նա նամակ է գրում ապստամբ Սյունյաց դահերեցին և համոզում նրան, որ իզուր և անիմաստ է նրա քայլը։ Նա համոզում է երկու կողմերին ու հաշտեցնում նրանց։ Սյունիքի դահերեցն ուղարկում է հարկերը[1]։ Գործը վերջանում է առանց զինված ընդհարման։

Սյունիքի այս ապստամբության փաստը, անշուշտ, ետադիմական էր, որովհետև այն ուղղված էր Հայաստանի կենտրոնական իշխանության դեմ։ Դա կենտրոնախույս ուժի պայքարն էր կենտրոնական իշխանության դեմ, վասալի ընդվզումը սյուզերենի դեմ։

5. ՍՅՈՒՆԻՔԸ 10-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

10-րդ դարի հենց սկզբին Աֆշինի փոխարեն Ատրպատականում ոստիկան է նշանակվում նրա եղբայրը՝ Յուսուֆը։ Լսելով այդ փոփոխությունը, Բագրատունյաց Սմբատ թագավորը խնդրագիր է գրում խալիֆին, որ հարկը այլևս Ատրպատականի էմիրին չմուծի, այլ մուծի ուղղակի խալիֆի գանձարանը։ Խալիֆը համաձայնվում է[2]։ Յուսուֆը, զայրացած Սմբատի այս քայլից, արշավանք է սկսում նրա դեմ։ Ուտիք—

Արծրունիների պառակտիչ քաղաքականությունը 10-րդ դարի սկզբում պայմանավորված էր Նրանց ներքին տեղային նեղ շահերով ու ձգտումներով և ոչ թե Նախիջևանի միջադեպով։ Վերջինս լոկ առիթ էր։

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջեր 396. 397։

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջեր 397, 398։

[2] Տես Ասողիկ, էջ 163։ Նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 193։

Թիֆլիս—Շիրակ գծով կատարված այդ արշավանքը վերջանում է հաշտությամբ։ Յուսուֆը բազմաթիվ նվերներ ու թագ է ուղարկում Սմբատ թագավորին և վերադառնում է Ատրպատական։ Շուտով Յուսուֆն ապստամբում է խալիֆի դեմ։ Նրան ճնշելու համար խալիֆն ուղարկում է զորք և միաժամանակ պահանջում է Սմբատ Բագրատունուց, որ նա ևս զորք ուղարկի Յուսուֆի դեմ։ Երկու սրի մեջ ընկած Սմբատն ուղարկում է մի գունդ, բայց զգալով, որ դա խախտում է իր և Յուսուֆի միջև կնքված խաղաղության դաշինքը, մի նամակով հայտնում է Յուսուֆին, թե այդ գունդը գալիս է ոչ թե նրա դեմ, այլ թիկունքից նրան օգնություն ցույց տալու նպատակով։ Յուսուֆը չի հավատում դրան և չարությամբ է լցվում Սմբատ թագավորի դեմ։

Խալիֆի դեմ ապստամբած Յուսուֆը պարտվում է և բանտարկվում, բայց մի քանի տարի անց նորից դառնում Ատրպատականի էմիր (908 թ.)։ Չարությամբ լի Յուսուֆն անմիջապես մարդիկ է ուղարկում Հայաստան և Սմբատ թագավորից պահանջում Հայաստանի հարկը։ Բայց այդ նույն հարկը պահանջում է և խալիֆը — «յերկոցունց կողմանց՝ յամիրապետէ անտի և Յուսփայ ոստիկանէն,— վկայում է Հ. Դրասխանակերտցին,— բան պատգամաց առ արքայ սաստկանայր, կրկին ուժգնապէս հայցեալ տալ զսակն արքունի. այլ և զանուր լծոյ ծառայութեանն ծանրաբեռն դրեալ»[1]։ Սմբատ թագավորը նորից ընկնում է ծանր կացության մեջ։ Որի՞ն տալ հարկը, խալիֆին տար՝ Յուսուֆն էր թշնամանալու, Յուսուֆին տար՝ խալիֆն էր թշնամանալու։ Համոզված լինելով, որ չի կարող ընդդիմանալ դաժան հարկահաններին, որոշում է դիմել ծայրահեղության՝ սեղմել ներքին միջոցները, դոհացնել երկուսին էլ և ցրել Հայաստանի գլխին կուտակված ամպրոպը։ Նա կրկնապատկում է երկրի ներսում հարկերը. «Ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց՝ և տալ ի զրադատ տուգանս սակին...։ Եւ զայս ապա

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, էջ 204։

արարեալ զվճար՝ առնոյր այնմ ամի սակ»[1]։ Հարկահանության այս արտակարգ միջոցառումով թեև Սմբատին հաջողվում է դոհացնել խալիֆին և էմիրին, բայց իր դեմ է հանում ներքին ուժերին։ Հարկատու վասալ իշխանները թշնամանքով ու դավադրություններով են պատասխանում Սմբատ թագավորին, իսկ ժողովրդական մասսաները, որոնց ուսին էր վերջին հաշվով ընկնում հարկային այդ ծանր լուծը, խիստ դժգոհում են այդ անլուր կեղեքումից և մղվում դեպի դասակարգային պայքարը։ Ահա այս ծանր ժամին Գագիկ Արծրունին առաջ է քաշում Նախիջևանի հարցը։ Սմբատ թագավորից չըստանալով այն և այդ առիթով, բայց իրականում իր նեղ, տեղային ինքնուրույն շահերի մղումով, անցնում է Հայաստանի ընդհանուր թշնամու՝ Յուսուֆի կողմը և սկսում դավեր նյութել Բագրատունյաց պետության դեմ։

Սմբատ թագավորը նորից դիմում է ծայրահեղ միջոցների։ Ժամանակի կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն բազմաթիվ նվերներով՝ ձիերի և ջորիների երամակներով, զարդերով ու զենքերով, նաև «Գանձս ոսկւոյ և արծաթոյ» ուղարկում է Յուսուֆի մոտ։ Բացի այս բոլորը, կաթողիկոսն էլ իր հերթին եկեղեցու հարստությունից շատ նվերներ ու գանձեր է տանում իր հետ։ Պատգամախոս կաթողիկոսը Յուսուֆից հաշտություն է խնդրում։ Յուսուֆն սկզբում բարյացակամ ընդունելություն է ցույց տալիս կաթողիկոսին, բայց հետո ձերբակալում է նրան ու բանտ նետում։ Հենց այդ օրերին Յուսուֆի մոտ է սլանում Գագիկ Արծրունու եղբայր Գուրգենը և համոզում Յուսուֆին «վասն յաշխարհս մեր գալոյ և ելանելոյ»[2]։ Մի ամիս անց Յուսուֆի մոտ է գալիս ինքը Գագիկ Արծրունին։ Նա թագ է ստանում Յուսուֆից ու հռչակվում Վասպուրականի թագավոր[3], միաժամանակ Յուսուֆի հետ միասին մշակում է Սմբատ թագավորի վրա հարձակվելու ծրագիրը։ Նախապատրաստական այս աշխատանքները կատարվում էին 908 թվի աշնանը։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, էջ 205։
[2] Նույն տեղում, էջեր 211, 212։
[3] Նույն տեղում։

Հենց այդ աշնանը կամ ձմռանը, երբ Յուսուֆը, Ս. Օրբելյանի վկայությամբ «Զօր գումարէր, պատրաստութիւն կազմէր՝ ի գալ գարնան ելանել յաշխարհս Հայոց», մահանում է Սյունիքի գահերեց Աշոտ իշխանը[1], որի հուղարկավորությանը մասնակցում է նաև Սմբատ 1-ին թագավորը։ Աշոտի տեղը գահերեց իշխան են նշանակում նրա երեց որդուն՝ Սմբատին «Ի վերայ ամենայն Սիսական աշխարհին»[2]։ Հենց նույն գարնանաբացին (909 թ.) Յուսուֆն արշավում է Հայաստանի վրա՝ Օրբելյանի պատկերավոր արտահայտությամբ, այդ գարնանը բնության զարթոնքի շնչի փոխարեն «շնչեաց հողմ դառնութեան և ցոլաւ բոցն հարաւային յաշխարհս մեր»[3]։

Յուսուֆը հասնելով Նախիջևան, մի քանի օր դադար է առնում. նրա մոտ Նախիջևան են գալիս Գագիկ և Գուրգեն Արծրունիներն իրենց զորքերով։ Զորքը բաժանում են գնդերի, որից հետո արշավում Սյունիք[4], կամենալով ասպատակել ու ջնջել «Զգաւառն Սիւնեաց և զբոլոր ածել զիշխանսն»[5]։ Ինչո՞վ էր պատճառաբանվում այն հանգամանքը, որ Յուսուֆը փոխանակ Նախիջևանից ուղիղ գնալու դեպի Դվին, դեպի երկրի սիրտը, թեքվեց աջ և բարձրացավ Սյունյաց լեռները։ Անշուշտ այդ պայմանավորված էր ստրատեգիական նկատառումներով. նախ՝ Սյունիքը, որպես Բագրատունյաց թագավորների հավատարիմ վասալ, չէր կարող անտարբեր մնալ ծավալվող դեպքերի նկատմամբ, նա կարող էր խփել Յուսուֆին թիկունքից, ուստի անհրաժեշտ էր նախ հարվածել Սմբատի այդ հենարանին և չեզոքացնել այն։ Երկրորդ՝ դրանում մեծ դեր խաղացած պետք է լինեն Արծրունի իշխանները, որոնք, որպես մրցակիցներ, ցանկանում էին թուլացնել Սյունիքի ուժը և այդ պատճառով, հավանաբար, Յուսուֆին մղեցին դեպի Սյունիք։ Սյունյաց Սմբատ գահերեց իշխանը կազմակերպում է երկրի պաշտպանությունը։ Նա իր վասալ իշ-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 184։
[2] Նույն տեղում, էջեր 184, 185։
[3] Նույն տեղում, էջ 185։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213։
[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213։
[5] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185։

խանների զորքերով աճապարում է փակել կիրճերն ու ճանապարհները. «Իսկ գահերէց գլխաւոր իշխանն Սիւնեաց համագումն եղբարբքն իւրով և համագունդ զօրօք աճապարեալ ունէին զանցս մտիցն և զկիրճս ճանապարհացն արիական քաջութեամբ ըստ հոյակապ անուանակիր հռչակութեանն՝ զէն ի վեր առեալ, առ նա զէն վառեալ և զբազումս թաւալգլոր խաղացուցանէին»[1]։ Նույնը պատմում է նաև Ս. Օրբելյանը, ավելի պարզ նշելով գահերեցի իշխանության տակ եղած բոլոր իշխանների զորքերի մասնակցությունը[2]։ Չնայած համառ դիմադրությանը, Սյունյաց իշխանները չեն կարողանում կանգնեցնել թշնամու գերազանց ուժերի առաջընթացը. «ոչ զօրեցին զօրաւոր կատաղութեանցն թշնամեաց հերքել զնոսա», «ոչ կարացին զդէմ առնել»։ Սյունյաց իշխանները դիմում են փախուստի. փախչում են ամուր քարանձավները և լեռների ծործորները։ Յուսուֆը կրնկակոխ հետապնդում է իշխաններին, որոնցից մի մասին տեղազերծ անում, փախցնում է երկրից, իսկ ոմանց՝ սրի քաշում կամ գերեվարում։ «Եւ այս լինէր,— ամփոփում է այս դեպքերին անմիջապես ականատես կաթողիկոս պատմիչը,— յաւուրս տօնի մեծի պասէքի Զատկաց յերեքհարիւրերորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան Թորգոմեանս համարոյ»[3], այսինքն՝ 909 թ. գարնանը։

Առաջինը երկրից փախչում են Սյունյաց գահերեց Սմբատ իշխանը և նրա եղբայր Սահակը։ Իրենց մայր Շուշանին, Սմբատի կին Սոփիին, որը Գագիկ Արծրունու քույրն էր, նրա ծծկեր երեխային և Սահակի կնոջը, որը Գուգարաց բդեշխի դուստրն էր, տանում ամրացնում են Երնջակի ամրոցում, իսկ իրենք փախչում իրենց անբերների մոտ, Սմբատը՝ Վասպուրական, իսկ Սահակը՝ Գուգարք[4]։ Սմբատի մյուս եղբայրները՝ Բաբկենն ու Վասակը[5], ինչպես նաև Գեղաքունի իշխան Գրի-

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213։
[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185։
[3] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 213, 214։
[4] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 185, 186։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 237։
[5] Տես Հավելված։

գոր Սուփան 2-րդը և իր եղբայրներ՝ Սահակն ու Վասակը, մնում են երկրում պատսպարված «ի կատարս լերանց և ի ծործորս ծէրպից վիմաց»[1]։ Սյունիքի գահակալ մյուս իշխանների, այսինքն՝ Զագիկյանների և այլոց մասին տեղեկություն չունենք, բայց հավանաբար, նրանք ևս քաշվել էին անառիկ ամրոցները, թշնամու քմահաճույքին թողնելով իրենց կալվածքների բնակչությանը։

Յուսուֆը, Սյունիքի զորական ուժը արագությամբ շարքից դուրս բերելուց, իշխաններին բարոյալքելուց ու ցրելուց և երկիրն ասպատակելուց հետո, իջնում է Դվին և ճամբար դնում Երասխի ափին։ Շուտով Յուսուֆի այդ ճամբարն է գալիս Գեղարունիքի գահակալ իշխան Գրիգոր Սուփան 2-րդը և անձնատուր լինում «ի սպասաւորութիւն ոստիկանին»[2]։ Սյունյաց պատմիչը նրա այդ քայլն արդարացնում է այն բանով, որ փրկության բոլոր հնարքները վերջացել էին և միակ ելքը նա գտնում է անձնատուր լինելու մեջ, որպեսզի դրանով «թերևս հնար լիցի զերծանիլ»[3]։ Բայց իրականում, դա երկրի և ժողովրդի առաջ դավաճանությանը հավասար մորթապաշտ քայլ էր։ Շուտով նրա օրինակին է հետևում նաև Սմբատ գահերեցի կրտսեր եղբայր Վասակը, որը նույնպես գալիս կամովին անձնատուր է լինում[4]։ Յուսուֆը սկզբում սիրով ընդունում է այս իշխաններին, բայց շուտով շղթայակապում ու նետում է բանտ։

Այս բոլորից հետո Յուսուֆը պատգամավորների միջոցով տեղեկացնում է Սմբատին, որ իբր թե, եթե նա ամբողջ տարվա հարկը վճարի, ապա ինքը խաղաղություն կկնքի և կհեռանա Հայաստանից։ Սմբատը, թեև ըմբռնում է կեղծիքը, բայց տարիս է պահանջված հարկը՝ 60 հազար կշիռ դահեկան։ Ստանալով այդ գումարը, Յուսուֆը փոխանակ հեռանալու Հայաստանից, հարձակվում է Սմբատ Թագավորի վրա և հալածում նրան մինչև Կղարջք, իսկ Հովհաննես կաթողիկոսին բանտարկված պահում Դվինում։ Հակառակ բոլոր ջանքերին, Յուսուֆին չի հաջողվում բռնել Սմբատ Թագավորին և իզուր դեգերելուց հետո վերադառնում է Դվին։ Այնտեղ Յուսուֆի մոտ է գալիս Սմբատ Թագավորի եղբոր որդին, Հայոց սպարապետ Աշոտը և ինքնակամ անձնատուր լինում Յուսուֆին[1]։ Բագրատունյաց պատմիչը, կաթողիկոս Հ. Դրասխանակերտցին Աշոտի այս քայլը արդարացնում է նրանով, ինչով որ Ս. Օրբելյանը՝ Գրիգոր Սուփանինը[2]։ Բայց այդ ևս բարոյալքվածության, փառասիրության և մորթապաշտության մի նմուշ էր, որը կարծես այդ ժամանակ ընդհանուր երևույթ էր հայ իշխանների միջավայրում։ Ինքնակամ Յուսուֆի կողմն է անցնում նաև Սմբատ Թագավորի մյուս եղբորորդին՝ Սմբատը. «ինքնակամ դիմագրաւ դիմեալ ի ծառայութիւն Հաղարացւոյն»[3]։ Այժմ Յուսուֆի բանակին, բացի Գագիկ Արծրունու բանակից, միանում է նաև Աշոտ Բագրատունու բանակը, որը հլու-հնազանդ կատարում էր Յուսուֆի կամքը։

Ահա այս թշնամիների ահռելի ուժի դեմ մենակ մնում է Սմբատ Թագավորը։ Չնայած դրան, նա խիզախում է ճակատել թշնամու հետ։ Հաջորդ տարին (910 թվին) Նիգ գավառում, ըստ Ասողիկի, Զկնավաճառ կոչված վայրում, տեղի է ունենում ճակատամարտը թշնամական այդ միացյալ բանակի և Հայոց բանակի միջև։ Հայոց բանակը ղեկավարում էին Սմբատի որդիներ Մուշեղն ու Աշոտը։ Կռվի թեժ պահին, Հայոց բանակում եղած ուտիցիների դունդը դավաճանում է, լքում է Մուշեղի ղեկավարած թևը ու անցնում թշնամու կողմը։ Մուղակն ընկած Մուշեղը ձերբակալվում ու գերի է վերցվում։ Հայոց բանակը պարտվում է։ Ճշմարտության առաջ չմեղանչելու համար նշենք, որ Սյունյաց վերոհիշյալ իշխանները չմասնակցեցին Հայոց բանակի դեմ մղվող այս կռվին Յուսուֆի կողմում։ Նրանք անձնատուր էին եղել առանց բանակի

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 186։

2 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 214։

3 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 186։

4 Նույն տեղում, էջ 187։

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 213—215։

2 Նկատենք, որ տոհմային պատմիչները կողմնապահորեն արդարացնում են իրենց տոհմի իշխանների դավաճանական արարքները. Թ. Արծրունին՝ Գագիկի, Ս. Օրբելյանը՝ Գրիգոր Սուփանի, Հովհ. Դրասխանակերտցին՝ Աշոտի։

3 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 225։

և պահվում էին, ինչպես ասացինք, Դվինի բանտում։ Յուսուֆի կողմը չէին անցել նաև Սյունյաց Սմբատ և Սահակ իշխանները։ Շուտով Յուսուֆը զանազան միջոցներով սպանում է Գրիգոր Սուփան 2-րդին, Սմբատ արքայի որդի Մուշեղին և եղբորորդի Սմբատին, ինչպես նաև Հայոց ազատագնդից իր ձեռքն անցած շատ ուրիշների, բացի Գագիկ Արծրունուց և Աշոտ սպարապետից. «Եւ գրեթէ ի պատուաւորաց անտի ի մեծամեծացն յանձնառուր նմա եղելոցն և ընդ ձեռամբ անկելոցն ոչ ոք ապրեցաւ ի չարախտավատ և ի խարդաւանավան մահուն տուգանաց, բայց միայն խոհեմամիտ թագաւորն Գագիկ և չքնաղագեղ սպարապետն Աշոտ»[1]։ Յուսուֆի սպանությունից ազատվում է միայն Սյունիքի ամենաերիտասարդ իշխանը՝ Սմբատ գահերեցի կրտսեր եղբայր Վասակը, այն էլ իր անձնական քաջության պատճառով։ Նա, սպանելով պահակներին, փախչում է Դվինի բանտից։

Գեղարունի իշխան Գրիգոր Սուփան 2-րդի սպանությունից հետո նրա եղբայրներ՝ Սահակն ու Վասակը փորձում են առժամանակ խույս տալ արաբների սրից։ Նրանք, վերցնելով իրենց մորը՝ Մարիամ Բագրատունուն, կանանց, և ազատագունդ բանակով քաշվում ամրանում են Սևանա կղզում։ Արաբները, հետապնդելով նրանց, գալիս են լճի ափը։ Վախենալով, որ թշնամին կարող է ներխուժել կղզին, նրանք բազմաթիվ նավերով գիշերով փախչում են ու դուրս գալիս Միափոր գավառը։ Արաբները կղզին գրավելուց և կողոպտելուց հետո սկսում են հետապնդել փախչողներին։ Միափոր գավառում Գեղարունի այս իշխանները և զորքը հանկարծ շուտ են գալիս և մի սաստիկ հարված հասցնում հետապնդող թշնամուն և իրենք անցնում գնում են Գարդման ու Արցախ։

Այսպիսով, Յուսուֆին հաջողվում է մեկ առ մեկ հաշիվ տեսնել հայկական այս կամ այն չափով աչքի ընկնող իշխանների և իշխանական տների հետ։ Նրա «Բաժանիր, որ տիրես» սկզբունքն ունեցող քաղաքականությունը տվեց հիանալի արդյունք. ջլատված ու մանրատված էր հայոց զորական ուժը, պառակտված ու թշնամացված էին հայ իշխանական տները։ Այժմ Յուսուֆն անպատիժ ասպատակում էր երկիրը. «Իսկ անօրեն ոստիկանն,— կարդում ենք Հ. Դրասխանակերտցու մոտ,— տեսեալ, եթէ կուսակալք և կողմնապահք իւր ձեռնթափք լինին յաղթութեամբք մեծաւ յամենայն կողմունս երկրիս մերոյ՝ և ոչ ոք է որ ի դիմի նոցա հարկանի, այնուհետև ասպատակ չար հինից ընդ ամենայն կողմանս սփռէր ի Սիսական ազգս և յայնկոյս Տաշրայ և Կանգարաց և յեղը ծովակին Գեղամայ»[1]։

Մեկուսացված էր Հայոց թագավոր Սմբատը, որի հետ ավելի հեշտ էր այժմ հաշիվ տեսնելը։ Եվ ահա Յուսուֆը կըրկին սկսում է հետապնդել Սմբատին։ Նա բազմաթիվ զորքով ու զորապետներով Գագիկ Արծրունուն ուղարկում է Սմբատ թագավորի դեմ։ Համառ ու տևական դիմադրություն է ցույց տալիս Սմբատ թագավորն իր ձեռքում մնացած Հայոց բանակի փոքրաթիվ ջոկատներով Վաղարշակերտի և այլ ամրոցներում։ Ի վերջո Սմբատ թագավորը քաշվում է իր վերջին հանդրվանը, Երասխաձորի Կապույտ ամրոցը և ցույց տալիս օրհասական համառ դիմադրություն։ Բայց հանդուգն ջանքերն իզուր էին, ամեն ինչ տանուլ էր տրված։ Նրա պաշարված ամրոցի պարիսպների վրա էին գրոհում ոչ միայն արաբ հրոսակները, այլ նաև Գագիկ Արծրունու, Աշոտ սպարապետի հայ զորքերը։ Յուսուֆը գրոհողների առջևից բռնի կերպով քշում էր անզեն ռամիկներին, հայ աշխատավոր ժողովրդին՝ պարիսպներից նետված նետերի տարափին նրանց վրա ուղղելու և դրանով իր հրոսակներին պահպանելու նպատակով։ Եվ այդ եղեռնը տեսնում էին ծախված ու բարոյազուրկ Աշոտն ու Գագիկը։

Սմբատ թագավորը դիմում է վերջին անձնազոհ քայլին։ Ականատես պատմիչի վկայությամբ, նա որոշում է «զի ինքն միայն մեռցի, և մի ամենայն ժողովուրդն կորիցէ... լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս խղճիւ» և այս համոզումով դուրս է գալիս ամրոցից ու անձնատուր լինում թշնամուն[2]։

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 225, 226։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 230, 231։

[2] Նույն տեղում, էջ 235։

Սակայն դեռ մնում էր Սյունիքի հարավ-արևմուտքում մի ամրոց, ուր պատսպարվել էին Սյունյաց իշխանների կանայք և ազատներից այլ «պատուական» մարդիկ։ Դա Երնջակ ամրոցն էր[1]։ Յուսուֆը գալիս պաշարում է այդ ամրոցը, որը ցույց է տալիս համառ ու երկարատև դիմադրություն։ Յուսուֆը Երնջակ է բերել տալիս Սմբատ Թագավորին ու ստիպում նրան, որ հրամայի ամրոցը պաշտպանողներին անձնատուր լինել։ Սմբատը հրաժարվում է։ Նրան ենթարկում են անասելի տանջանքների և կրկին ու կրկին բերում ամրոցը պաշարող զորքի առաջ, որպեսզի պահանջվող հրամանը տա։ Բայց նա միշտ էլ հրաժարվում է։ Զայրացած Յուսուֆը հրամայում է գլխատել Հայոց Թագավորին և մարմինը կախել Դվինի պարսպից[2]։ Այս դեպքերը, ըստ Օրբելյանի, տեղի են ունենում հայոց 362 թվականին (=913 թ.)։

Երնջակը շարունակում է իր պաշտպանությունը նաև Սմբատի գլխատումից հետո։ Բայց ամեն կողմից մեկուսացած ամրոցը, ի վերջո, ընկնում է թշնամու ձեռքը։ Յուսուֆը կատաղաբար սրի է քաշում ամրոցի հանդուգն պաշտպաններին, ոմանց գերեվարում, իսկ ամրոցն ավերում։ Այնտեղ եղած Սյունյաց իշխանների և այլ ազատների կանայք գերեվարվում

---

[1] Արիստակես վարդապետ Սեդրակյանն իր «Հնութիւնք հայրենեաց է գաւառին Երնջակայ» աշխատության մեջ այդ բերդի տեղի ու դիրքի մասին պատմում է հետևյալը. «Երնջակ գետի ձախ ափին և Նորաշեն գյուղից 2—3 կիլոմետր հեռու միապաղաղ սյան նման ուղղակի վեր է բարձրանում Երնջակ բերդը» (էջ 98)։ Այժմ նկատելի են այդ ամրոցի պարիսպների հետքերը և հարյուրավոր գերեզմաններ ամրոցի ստորոտում։ Սեդրակյանը երեք անգամ բարձրացել է այդ ամրոցի գլուխը և երեք անգամ էլ զարմացել այնքան հոյակապ և բազմաթիվ արհեստահնար շինքերով։ Ժայռերի գլխին թառած այդ ամրոցը բարձրանալու համար եղել է երկու ճանապարհ։ Ամրոցն ունեցել է 3 տակ պարիսպ, նաև միջնաբերդ։ Պարսպի մեջ եղել են հարյուրավոր մեծ ու փոքր սենյակներ քարակիր և պղյուսից շինված։ Եղել է 9 ջրամբար։ Այս բոլորը գտնվել են լեռնագագաթի ցածր ճյուղի վրա, իսկ ավելի բարձր ճյուղի վրա գտնվել են բազմաթիվ շինքեր, համաբներ, գահլիճ, իշխանական արքունիքը և այլն (էջ 90—98)։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 237—240։ Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 190, 191։

ու տարվում են Դվինի բանտը։ Այդ կանանց տառապանքների լուրը հասնում է իրենց ամուսիններին՝ Սմբատ և Սահակ Սյունյաց իշխաններին, որոնք, ինչպես տեսանք, փախել էին Գուգարք և Վասպուրական։ Նրանք, որ լուռ ու անտարբեր էին մնացել Սյունիքի բնակչության տառապանքների, բնաջնջման ու գերեվարման նկատմամբ, անտարբեր չեն կարողանում մնալ իրենց փափկասուն տիկնանց տառապանքների նկատմամբ և կազմակերպում են զինվորական ջոկատներ՝ թշնամու վրա հարձակվելու ու գերի կանանց ազատելու համար։ Բայց «ոչ կարացեալ վաղվաղակի գումարտակս զօրաց կազմեալ և ոչ ի հեռաստանէ աճապարել» Դվին։ Դվինի բանտում մահանում են Սյունյաց մեծ տիկին Շուշանը և Սմբատ գահերեցի ծծկեր երեխան։ Իսկ Սմբատի և Սահակի կանանց Յուսուֆը տեղափոխում է Ատրպատական։

Այս դեպքերին հաջորդող ժամանակաշրջանը է՛լ ավելի է ծանրացնում երկրի ու ժողովրդի դրությունը։ Հետագա դեպքերը, ըստ աղբյուրների, պատկերվում են այսպես։ Սմբատ Թագավորի ձերբակալումից հետո Գագիկ Արծրունին Յուսուֆի ճամբարից հանկարծ փախչում է Վասպուրական և իր եղբոր՝ Գուրգենի հետ միասին ամրանում է Կորդված լեռներում ու սկսում կռվել Յուսուֆի դեմ, որը Ատրպատականի կողմից փորձում էր ասպատակել նաև Վասպուրականը[1]։ Յուսուֆի հրոսակների դեմ պայքար է սկսվում նաև Սյունիքում. «Այլ և զՍիսականացն տերանց և ազգաց ոչ սակաւ ինչ աղմուկ շփոթից շուրջ պատէր յոստիկանէ անտի, որք և ամրացեալք իսկ ի խոխոմս խորոցն ձորոց և յամուրս քարանձաւաց՝ բազում արշաւասոյր հէնս ի վերայ թշնամեացն հասուցանէին, և գումարտակս սփռեալ՝ արեանց ճապաղիս հեղուին»[2]։ Սյունիքում բարձրացած այդ պայքարի կազմակերպողները ոչ թե Սմբատ գահերեցը, նրա եղբայր Սահակը կամ Գեղաքունի իշխաններն էին, այլ գահակալ մյուս իշխանները՝ Բաղքի, Կովսականի և այլն, որոնք մնացել էին երկրում։ Յուսուֆի դեմ պայքար էր սկսվել նաև կենտրոնական գավառներում։ Այդ պայ-

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 245։

[2] Նույն տեղում, էջեր 245, 246։

քարը ղեկավարում էր Սմբատ 1-ինի որդին՝ Աշոտը։ Սա, իր հոր ձերբակալումից հետո, իր շուրջը համախմբելով համախոհների մի խումբ, սկսում է կռվել Յուսուֆի դեմ և մեկ առ մեկ ետ խլում հայրական ժառանգությունը հանդիսացող բերդերն ու ամրոցները։ Վրաց թագավորի ջանքերով Աշոտը հռչակվում է թագավոր Հայոց, որը հայտնի է նաև «Երկաթ» մականունով[1]։

Այսպիսով, Սմբատի գլխատումից հետո ստեղծվում է մի բեկում, որի իմաստն այն է, որ այդ ժամանակվա Հայաստանի գլխավոր երեք նահանգներում՝ Վասպուրական, Սյունիք և Շիրակ-Այրարատ, սկսվում է պայքար օտար նվաճողի դեմ։ Սակայն պետք է նշել, որ այդ պայքարն ընդհանուր միասնական ճակատ չէր կազմում, այլ անջատ, տեղային բնույթ կրող պայքար էր, ֆեոդալ առանձին իշխանների տեղային շահերից բխող թույլ ընդհարումներ, որոնք ոչնչով չփրկեցին երկրի ու ժողովրդի ավերումն ու կողոպուտը արաբական հրոսակներից։ Անգամ այդ թույլ շարժումը Յուսուֆը դիմավորեց կատաղի մոլուցքով։ Այս բոլորը տեսնելով,— ասում է կաթողիկոս պատմիչը,— չար ոստիկանը «զայրագնաբար մրոմրեալ մղձկեալ սրտիվ ի թեթևագոյնս անդր զթոյնսն թափէր»[2]։ Այնուհետև նա ավելի կատաղությամբ հետապնդում է բոլորին։ Նրանից փախչում են «ռամիկն և անռամիկն», մոլեգնում էր Յուսուֆի սուրը և ամենուրեք «լցեալ էր արեամբ»։ Ականատես պատմիչը էջեր շարունակ դառն հառաչանքով է նկարագրել երկրի ու ժողովրդի վիճակը, իրար հաջորդող, մեկը մյուսից արյունաներկ պատկերներ ու տեսարաններ է նկարագրել։ Բացի այդ, Յուսուֆն իր մոտ եղած Աշոտ սպարապետին թագ է տալիս և հռչակում Հայաստանի թագավոր, ընդդեմ օրինական թագավոր Աշոտ 2-րդի։ Սկսվում է մի ներքին ուժեղ ավերիչ կռիվ այս երկու Աշոտների միջև։

Աշոտ 2-րդի դեմ ապստամբվում են նաև այլ իշխաններ, որոնք երկիրը ողողում են ներքին արյունալի ընդհարումներով։ Այս բոլորին գումարած նաև սովը, որը վարակիչ հիվանդության նման ամեն տեղ մեկնում էր իր ոսկրոտ ձեռքը, կատարյալ է դարձնում մղձավանջային այն վիճակը, որն ապրում էր Հայաստանը 10-րդ դարի 2-րդ տասնամյակի կեսերին։ Հայ աշխատավոր ժողովուրդը բառացիորեն բնաջնջվում էր, երկիրն ավերվում ու մոխրակույտի էր վերածվում։ Հայաստան աշխարհը վեր էր ածվել սովից ու սրից ընկած աշխատավոր մարդկանց համատարած գերեզմանի։ Պոռթկում է ժողովրդի ցասումն իրեն կեղեքող և հարստահարող ազնվականության դեմ, որն այժմ ժողովրդի աչքում առավել ատելի էր իր ծախվածության, մորթապաշտության և երկրի պաշտպանությունը չկազմակերպելու համար։ Երբ Աշոտ 2-րդը ձեռք է բերում որոշ հաջողություններ, որպես երկրի օրինական թագավոր, նրա մոտ են գալիս Սյունյաց իշխաններն իրենց հպատակությունը հայտնելու և աջակցելու համար։ Առաջինը գալիս է Սմբատ գահերեց իշխանը։ «Յայսմ վայրի եկն ապա մեծ իշխանն Սիւնեաց առ արքայորդին Աշոտ. և բազում պատուասէր և սերտ հարազատութեամբ ընկալաւ զնա՝ մեծապանծ պատուով շքեղացուցեալ»[1]։ Ապա գալիս է Գեղաքունիքի Գրիգոր Սուփան իշխանի Վասակ եղբայրը. «Եկն և մեծ Հայկազունն Վասակ՝ եղբայր մանկաղրաւ իշխանին Գրիգորոյ, և զնա ևս ի նոյն պատիւ պերճութեան վայելչական կարգօք մեծարէր»[2]։ Իսկ Ս. Օրբելյանն ավելացնում է, որ Աշոտ 2-րդը այս Վասակին ընդունում է խնդությամբ և «վիճակեցոյց իւրոյ տերութեանն»[3]։

Այս վկայություններից երևում է, որ նախ՝ Սյունիքի գահերեց Սմբատ իշխանը, որպես Բագրատունիների վասալ, գալիս է իր հպատակությունը հայտնում նոր թագավորին ու նրանից ստանում շքեղ պատիվներ։ Երկրորդ՝ Գեղաքունիքը, այժմ համարյա ինքնուրույն է Սյունիքի գահերեցից և անմիջականորեն ենթակա Բագրատունիներին, որովհետև, ինչպես տեսնում ենք, Գեղաքունիքի իշխանական գահը ժառանգելու

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 245։
[2] Նույն տեղում, էջ 246։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 294, Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193։
[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 294։
[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193։

համար Վասակը գալիս է ոչ թե Սյունիքի դահերեցի, այլ Բագրատունի թագավորի մոտ, որը և նրան «Վիճակեցոյց իւրոյ տերութեանն», այսինքն՝ իշխան է կարգում Գեղաքունիքի դահում։ Հ. Դրասխանակերտցու և Ս. Օրբելյանի վկայությամբ վերադառնում են նաև Սյունիքի մյուս իշխանները՝ Սմբատ դահերեցի եղբայրներ Սահակը, Բաբկենը, Վասակը և Գրիգոր Սուփան 2-րդի մյուս եղբայրը՝ Սահակը։ Սրանք ուղղակի գալիս են Սյունիք, իրենց հայրենի ժառանգությունները, առանց ներկայանալու Բագրատունյաց նորապակ թագավորին[1]։ Այդ հասկանալի է, որովհետև սրանք Բագրատունի թագավորների անմիջական վասալները չէին, որպեսզի ներկայանային Աշոտ 2-րդին։

Աշոտ 2-րդին ներկայանալուց մի փոքր անց, Սմբատ դահերեցը թույլտվություն է խնդրում նրանից վերադառնալու իր երկիրը՝ եղբայրներին հանդիպելու նպատակով. «Հրաման առնու յարքայէ և դառնայ յԱրագած լեռնէ և գայ, գտանէ զեղբայր իւր. և խնդութիւն ոչ փոքր ինչ լինէր ի մէջ նոցա»[2]։ Շուտով գերությունից ազատվում ու վերադառնում են նաև նրանց կանայք։ Այսպիսով, վտանգի ժամին թե՛ երկիրը, թե՛ ժողովրդին լքած տիրակալ այս իշխանները այժմ, երբ վտանգը հեռացել էր անմիջական իրենց կալվածքներից, նորից վերադառնում ու վերականգնում են իրենց քաղաքական իշխանությունը, որպես հայրենի տերեր, ժողովրդին կրկին շահագործելու և կեղեքելու համար։ Ահա և տիրող դասակարգի բարոյականության տիպիկ օրինակ։

Եվ հիրավի, վերադառնալուց հետո Սմբատ դահերեցի առաջին գործը, ինչպես կտեսնենք ստորև, եղավ երկրում բարձրացած գյուղացիական ապստամբությունը դաժանությամբ ճնշելը, փախած եպիսկոպոսին վերադարձնելը և Տաթևի վանքի հեղինակությունը վերականգնելը։

---

1 Տես Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 297, 298։ Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 193, 194։

2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 297։

Այժմ կարող ենք նորից հետևել Սյունյաց գահակալ այս իշխանների պատմությանը առանձին-առանձին։

Գեղամունիքի գահակալ իշխանությունը.— Ինչպես տեսանք, վերադարձից հետո Գեղաքունիքի իշխան է դառնում Գրիգոր Սուփան 2-րդի կրտսեր եղբայր Վասակը։ Ալիշանը գտնում է, որ իշխան է դարձել ոչ թե Վասակը, այլ Սուփան 2-րդի միջնակ եղբայր Սահակը[1]։ Ալիշանը հենվում է, հավանաբար, Հ. Դրասխանակերտցու հետևյալ վկայության վրա. «Զայսու ժամանակաւ ապա իշխանն Սիւնեաց Սահակ, որ սեպհականաբար պայազատէր զգաւառսն առ ծովեղերքն Գեղամայ՝ վախճանեալ փոխի ի կենաց, թողով իւր ուստր մի մանկիկ տղայ փոխանորդ»[2]։ Որ իրոք, Սահակը վերադարձից մի փոքր անց մահանում է, վկայում է նաև Ս. Օրբելյանը. «Եւ սակաւ ինչ կեցեալ վախճանի»[3]։ Հ. Դրասխանակերտցու այս վկայության մեջ թեև Սահակը համարվում է Գեղամա երկրի իշխան և պայազատ, բայց այդ հակասում է իր և Ս. Օրբելյանի վերև մեջբերված վկայություններին, համաձայն որոնց Աշոտ 2-րդ Բագրատունուց այդ երկրի պայազատությունը ստացավ Վասակը և ոչ թե Սահակը։ Գուցե պատմիչին, նրա հետ միասին նաև Ալիշանին, շփոթության մեջ է գցել երեցության կարգը, քանի որ Սահակը երեց էր Վասակից, բայց ֆեոդալական հասարակարգում միշտ երեցությունը չէ, որ գործում է, գործում է նաև ուժը, կորովը և ռազմունակությունը։ Աշոտ Երկաթի համար այդ ժամանակաշրջանում ավելի կարևոր էր ռազմիկ ու կորովի վասալը, քան թե երեցության կարգը։ Իսկ այդ տեսակետից համեմատաբար ձեռնտուն Վասակն էր, քան Սահակը, որը մեր կարծիքով այդ ժամանակ շուրջ 70 տարեկան էր[4]։ Գուցե հենց այս էր պատճառը, որ նա վերադառնալուց սակավ ժամանակ անց մահա-

---

1 Ալիշան, Սիսական, էջ 33։

2 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 301։

3 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 194։

4 Եթե նա իր հոր՝ Վասակ Գարուռի մահվան ժամանակ՝ 859—860 թթ. անգամ 10 տարեկան լիներ, ապա այժմ 70-ին մոտ ծերունի էր։

նում է։ Եվ վերջապես, մենք ունենք Ս. Օրբելյանի ուղղակի վկայությունը. «Գրիգոր Սուփան... մեռանի... և պայազատէ զտերութիւն նորա Վասակ՝ եղբայր իւր։ Մեռանի և Սահակն»[1]։ Ուրեմն, անկասկած է, որ Գեղաքունիքի իշխան է դարձել Վասակը։ Սակայն, ինչպես երևում է, նա իր Սահակ եղբորը չի զրկել իշխանությունից, հավանաբար, նրանք կալվածքները բաժանել են իրար մեջ։ Այդ երևում է նրանից, որ սրանց կալվածների մասին խոսելիս, պատմիչները Սահակի մասին ասում են, որ տիրում էր ծովափի գավառներին, իսկ Վասակի մասին՝ «Պայազատէր, զտերութիւնն Գեղարքունւոյ»[2]։

Շուտով Գեղաքունիքի այս Վասակ իշխանը գժտվում է Աշոտ Երկաթ թագավորի հետ։ Այդ գժտության մասին աղբյուրները պատմում են հետևյալը։ Վասակը, ինչպես տեսանք, իր հպատակությունն էր հայտնել Աշոտ Երկաթին, բայց վախենում էր նրանից և չէր գնում նրա մոտ։ Երկյուղի պատճառը բավականաչափ հիմնավոր էր՝ նախ այն, որ Վրաց բդեշխ Գուրգենի փեսան էր և բավականաչափ մոտիկ հարաբերությունների մեջ նրա հետ, իսկ Գուրգենը Աշոտ Երկաթի ոխերիմ թշնամին էր. և երկրորդ՝ Վասակը մոտիկ հարաբերությունների մեջ էր նաև մյուս թագակիր Աշոտի հետ, որը նույնպես Աշոտ Երկաթի երդվյալ թշնամին էր։ Վասակ իշխանը խնդրում է կաթողիկոս Հովհաննեսից, որ նա Աշոտ Երկաթից «յետակար երդման» բերի, որ նա Վասակին ոչինչ չի անի, եթե վերջինս գնա նրա մոտ։ Կաթողիկոսին հաջողվում է Աշոտ 2-րդից վերցնել նման մի հավատարմագիր և Վասակը գնում է նրա մոտ ու իրոք լավ ընդունելություն գտնում։ Բայց շուտով բամբասվում է Աշոտ 2-րդի առաջ և մեղադրվում է այն բանում, որ նա կապեր է պահպանում մյուս Աշոտի հետ, և անգամ նրան ու իր աներոջ Գուրգենին հասցեագրված նամակներ են հայտնաբերում նրա մոտ։ Աշոտ 2-րդը անմիջապես շղթայակապում է Վասակին և նետում Կայեն կոչված ամրոցի բանտը։ Կաթողիկոսի բազմաթիվ միջնորդությունները, ազատման կապակցությամբ, իզուր են

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298։
[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305։

անցնում[1]։ Վասակին ձերբակալելուց հետո Աշոտ 2-րդը գրավում է նրա տերությունը, այսինքն՝ Գեղաքունին։ Միջադեպին մասնակից Հովհաննես կաթողիկոսը գրում է, որ ինքը սաստիկ հանդիմանել է թագավորին այն բանի համար, որ նա դրժել է իր խոստումը և «կապելոյ զՎասակն և ընդ իւրով ձեռամբ զտէրութիւն նորա նուաճելոյ»[2]։ Մի այլ ձեռագրում՝ «և կապելոյ զՎասակն և իւրոյ ձեռամբն զտէրութիւն նորա նուաճելով»[3]։ Գեղաքունիքի այս նվաճման փաստը Ս. Օրբելյանը չի հիշում, ավելի ճիշտ, նա դիտավորյալ չի վերցրել իր աղբյուրից, որը տվյալ դեպքում, հենց այս Հովհաննես կաթողիկոսի աշխատությունն է, բայց անկասկած է, որ Գեղաքունիքը միացվել է Շիրակի Բագրատունիների երկրին։ Թեև մի քիչ անց, աղբյուրների վկայությամբ, Վասակին Կայեն ամրոցից ազատում է Աշոտ 2-րդի աներ, բայց նրա դեմ ապստամբած, Դարդմանա իշխան Սահակ Սևադան և ուղարկում իր հայրենի տունը, սակայն Վասակին այլևս չի հաջողվում իշխել Գեղաքունիքում։ Այդ օրվանից մենք այլևս Վասակի և ընդհանրապես Գեղաքունիքի՝ որպես ինքնուրույն իշխանության մասին, ոչինչ չգիտենք։ Վասակը Գեղաքունի իշխանների տոհմածառի վերջին ճյուղն էր, որը հատվեց Բագրատունի երիտասարդ թագավորի կամքով։ Գեղաքունիքը տերիտորիալ իմաստով դուրս է գալիս Սյունիքի կազմից և դառնում Շիրակի Բագրատունիների տիրության մի մասը։ Այդ տեղի ունեցավ 10-րդ դարի 2-րդ տասնամյակի վերջում։

Վայոց ձորի գաճերեց իշխանությունը.— Ինչպես տեսանք, Յուսուֆի հալածանքներից փախած Սմբատ դահերեց իշխանը և նրա երեք եղբայրները՝ Սահակը, Բարկենը և Վասակը վերադարձան և նորից տիրեցին իրենց հայրենի ժառանգություններին, այն է՝ Ծղուկ, Վայոց ձոր, Բաղք, Ճահուկ գավառներին։ Վերահաստատումից հետո նրանք ընդհարվում են Գողթանի էմիրի հետ։ «Մեծ իշխանն Սիսական տոհմին՝ Սմբ-

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305։ Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 194, 195։
[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305։
[3] Նույն տեղում, էջ 391։

բատ, երիս ևս եղբարքքն հանդերձ ցասմնական իմն սրտիւ դժգմեալ ընդ Հագարացւոյն, որ յայնժամ զգաւառն Գողթան բռնակալեալ պայազատէր՝ խնդրէին առ ի նմանէն յինքեանս դարձուցանել զսեպհական իւրեանց ամրոցն Երնջակ և զառատորոտով նորա զգաւառն, զոր Յուսփայ ոստիկանին առեալ տուեալ էր ի ձեռս Գողթան բռնակալին. այլ նա իբրև յարքունուստ զայն նմա շնորհեալ համարէր և ոչ առնոյր յանձն տալ»[1]։ Այս և Ս. Օրբելյանի համանման վկայությունից երևում է, որ այդ ժամանակ Գողթան գավառը քաղաքական վարչական առումով չէր մտնում Սյունիքի մեջ։ Այն բռնակալել էր արաբ էմիրը և ստեղծել առանձին վարչական միավոր։ Բացի այդ, Յուսուֆի ձեռքով Գողթանի այդ էմիրին էր տրվել նաև Երնջակ ամրոցը և համանուն գավառը, այսինքն՝ այն ևս դուրս էր եկել Սյունիքի վարչական սիստեմից և ենթարկվել Գողթանի էմիրությանը։ Սյունիքի գահերեց իշխանը, ինչպես երևում է, ոչ մի կերպ չի հաշտվել Երնջակ գավառի և համանուն ամրոցի, որը Սյունիքի հարավում ամենաամուր բերդն էր, կորստի հետ և պահանջել է Գողթանի էմիրից այն իրեն վերադարձնել։ Սակայն Գողթանի էմիրը մերժում է այդ պահանջը, պատճառաբանելով, որ ինքը արքունիքից (Ատրպատականի էմիրությունից՝ Յուսուֆի ձեռքով) նվեր է ստացել այն, ուստի իր սեփականությունն է։ Բանը հասնում է զենքի. ի միջի այլոց, ընդհարման համար դրությունը նպաստավոր էր, որովհետև Յուսուֆը երկրորդ անգամ բանտարկված էր խալիֆի կողմից։

Երկու կողմից էլ պատերազմական պատրաստություններ են տեսնվում. հակառակորդները հավաքում և կազմակերպում են իրենց բանակները և դուրս գալիս ռազմադաշտ։ Սյունյաց բանակը ղեկավարում էին ինքը՝ գահերեց իշխանը և իր եղբայրները։ Վճռական ճակատամարտում թշնամու բանակը երերվում է, սկսում է փախուստի դիմել, բայց հենց այդ նույն պահին Սյունյաց բանակի թիկունքում կատարված մի

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 307, 308։ Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 195։

դավաճանություն հաղթանակ է ապահովում Գողթանի զորքին։ Այդ դավաճանության մասին աղբյուրները տարակարծիք են։ Ըստ Հ. Դրասխանակերտցու Սյունյաց բանակում էր Գաբավոնացի իշխան Սմբատի գունդը, որը կանգնած էր Սյունյաց բանակի ձախ թևի թիկունքում, ուր մարտը ղեկավարում էր Սմբատի կրտսեր եղբայր Վասակը։ Եվ ահա մարտի վճռական մոմենտին Գաբավոնյաց այդ գունդը թիկունքից խփում է Վասակին ու փախչում Նախիջևանի կողմերը[1]։ Իսկ ըստ Ս. Օրբելյանի Սմբատ իշխանն իր զորքի մեջ էր ընդգրկել իր աշխարհի շրջապատում ապրող թուրքերին, որոնք և կանգնած լինելով ձախ թևում, թշնամու հետ գաղտնի բանակցություն են վարում և թիկունքից խփում Վասակին ու փախչում Նախիջևանի կողմը[2]։ Սյունեցիները պարտվում են, սպանվում է Վասակ իշխանը։ Երնջակը մնում է Գողթանի վարչական սիստեմում։

Այդ անհաջողությունից հետո, մնացած երեք եղբայրները իրենց հայրենի ժառանգությունը բաժանում են իրար մեջ. «Աւագն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արևմուտս կողմն և զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արևելս մինչ ի Հակարի. բայց փոքրիկն Բարգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի»[3]։ Հ. Դրասխանակերտցու վկայությամբ Բարգենին ընկած այդ փոքրիկ բաժինը նրանից խլում է Սահակ եղբայրը[4]։

Այս վկայություններից երևում է, որ տասներորդ դարի երկրորդ տասնամյակի վերջում կրկին տրոհվում են Սյունիքի գահերեց իշխանական տան կալվածքները։ Այս և հետագա վկայություններից երևում է նաև, որ կալվածքների մեծ մասը անցնում է Սմբատին։ Սահակը, ստանալով արևելյան մասը,

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 308։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 195—198։ Այս հակասական վկայությունները զուցե բացատրում են միմյանց։ Կարող է պատահել, որ Գաբավոնյաց Սմբատը հենց այդ թուրքերի ղեկավարն էր. այդ դեպքում դուրս կգա, որ այդ ցեղն ապրում էր Գաբավոնյաց երկրում։

[3] Նույն տեղում, էջ 157։

[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 332։

փաստորեն բաժանվում է գահերեց եղբորից և ստեղծում վարչական մի նոր միավոր, գահակալ մի նոր իշխանություն, որի բուն կենտրոնը Բաղքն էր։

Բաբկենը դժգոհ այս բաժանումից, սպասում է հարմար առիթի իր եղբոր հետ հաշիվ տեսնելու համար։ Առիթը դալիս է։ Իր երկրորդ բանտարկությունից ազատվելուց (922 թ.) հետո Յուսուֆը նորից հաստատվում է Ատրպատականի գահում։ Նա այս անգամ Հայաստան է ուղարկում իր Նոր անունով զորավարին, որը հայտնի է մեր մատենագրության մեջ նաև Սրուկն անունով։ Նորը Հայաստան է մտնում Արաքսի հովտով և գալիս առժամանակ նստում է Նախիջևանում։ Այդ միջոցին Բաբկենը գալիս է Նախիջևան, Նորի մոտ և դանդատվում իր եղբորից, որ նա իրեն զրկել է ժառանգությունից։ Նորը Բաբկենին շատ լավ է ընդունում և խոստանում միջամտել նրա գործին և նրան վերադարձնել իր հայրենի ժառանգությունը։ Նորն իր մոտ է հրավիրում Սահակ իշխանին, որը և, խաբվելով նրա բարեկամական խոստումներից, գալիս է Նախիջևան։ Նորը սրան ևս ցույց է տալիս բարեկամական ընդունելություն ու առաջարկում է իր եղբոր՝ Բաբկենի հետ միասին գալ Դվին, այնտեղ հանդամանորեն եղելության մասին խորհրդակցելու համար։ Սակայն հենց որ սյունեցի եղբայրները հասնում են Դվին, Նորը անմիջապես շղթայակապում է նրանց ու գցում բանտ[1]։ Յուսուֆի պահանջով առժամանակ Ատրպատական գնալուց ու կրկին Հայաստան վերադառնալուց հետո Նորը որոշում է ասպատակել Սյունիքը և ձեռք գցել նաև Սմբատ գահերեց իշխանին. «Յետ բաղում աւուրց դառնայ (խոսքը Նորի մասին է— Հ. Ութ.) այսրէն մեծ սպայակոյտ զօրու. և խորհի ի միտս իւր գնալ զՍիսական կողմամբք և յաւարի առնուլ զաշխարհն. և թէ հնար գտցէ՝ ըմբռնեսցէ և զմեծ գահերեց իշխանն Սիւնեաց զՍմբատ, յանկարծօրէն աւազակաբար. և կամ մարտօրէն առաթուր հարուլ, գերել և աւերել զտուն նորա, և զինքն տանել առ եղբարսն ի Դվին»[1]։

Օտար բռնակալի այս նոր նվաճման փորձը Սմբատ իշխանը դիմավորում է կազմակերպված։ Տեղեկանալով սպառնացող աղետի մասին, նա համախմբում է իր հեծելազորը Վայոց ձորում, այն դասավորում է իր մայրաքաղաք Եղեգիսում, ամրացնում է ամրոցներն ու բերդերը։ «Իսկ մեծ և ամենիմաստն,— ասում է Ս. Օրբելյանը այդ մասին,— Սմբատ ի սեպհական դաւառին իւրում դարեալ, դադարեալ նստէր ի Վայոց ձոր։ Լուեալ ապա զհամբաւ գալոյ նորա, և ամրացուցեալ զտուն իւր և զամենայն դաւառն յամուրն Վայոց ձորոյ. և ինքն հորդան տուեալ զօրացն ամբոխս բազումս սպայակոյտ զօրու շուրջ զիւրեաւ կացուցանէր իւրում արքունական յապարանսն որ ի գիւղաքաղաքն յԵղեգիս»[2]։ Նա որոշում է վարել պաշտպանական մարտ և այն էլ իր սեփական գահանիստ գավառում՝ Վայոց ձորում։ Նորը մտնում է Սյունիք իր հրոտակախմբերով, բայց տեսնելով Սմբատի կազմակերպված ուժը, հրաժարվում է ռազմական գործողություններից և պատգամավորների միջոցով խաղաղության բանակցություններ սկսում Սմբատի հետ։ Նրանք տեսակցում են և կնքում հաշտության պայման, ընդ որում Սմբատը Նորին տալիս է բազմաթիվ «Օժիտս» և «պարգևս», իսկ Նորը խոստանում է նրա բանտարկված եղբայրներին ազատ արձակել, որը իրրև պայման առաջարկել էր ինքը՝ Սմբատը[3]։ Նորը, երբ վերադառնում է Դվին, բանտից ազատում է Բաբկենին, նրանից վերցնելով մեծ փրկագին, իսկ Սահակին առժամանակ պահում է, որովհետև նա պահանջված փրկագինն այդ պահին չի կարողանում տալ։ Սակայն շուտով նա ևս վճարում է «բազում կշիռս» ոսկի և ազատ արձակվում ու գալիս է իր «տէրութիւնը». «և խնդութիւն բազում լինէր ի մեջ եղբարցն ու աշխարհին։ Եւ

---

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 232, 233։ Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 197, 198։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 198, 199։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 358, 359։

2 Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 199։ Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 359։

3 Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 199։

կային միաբան խաղաղութեամբ պարապեալ շինութեանց և գովելի գործոց» եզրափակում է Ս. Օրբելյանն իր ասելիքը այս շրջանի մասին։ Մութ է մնում այն հարցը, թե Բաբկենը ի վերջո ստացա՞վ հայրենի ժառանգությունից իր համար բաժին։ Բայց դժվար չէ ենթադրել, որ եթե դրանից հետո եղբայրները հաշտ ու համերաշխ էին ապրում, ապա դա նշանակում է, որ Բաբկենն այս կամ այն կերպ բավարարվել էր։

Զաքիկյանների գահակալ իշխանությունը.— Ս. Օրբելյանը հայտնում է, որ 10-րդ դարի առաջին քառորդում Սյունիքում ծաղկում էր նաև գահակալ իշխանների մի այլ ճյուղ՝ Զաքիկյանների ճյուղը, որն ուներ իրեն բաժին Բաղաց գավառը և Կապան քաղաքը։

Այս ճյուղի հայրենական բաժինը կազմող Բաղքը ոչ թե գահերեցների ճյուղի բաժինը կազմող Բաղքն էր, այլ Բաղքի այն մասը, որը կոչվում էր Քաշունիք կամ՝ մյուս Բաղք և, ըստ Ս. Օրբելյանի հարկացուցակի, հանդիսանում էր Սյունիքի 9-րդ գավառը։

Ամփոփելով ասվածը, պետք է նշել, որ Սյունիքը վարչական և տերիտորիալ տեսակետից հսկայական փոփոխություններ կրեց Ատրպատականի ոստիկանների արշավանքների ժամանակ (909—920-ական թվերի կեսերը)։ 908 թվին, Աշոտ գահերեցի մահվան ժամանակ, տերիտորիալ և վարչական տեսակետից Սյունիքի կազմում էին հիմնական բոլոր գավառները՝ Գեղաքունի, Վայոց ձոր, Ծղուկ, Ճահուկ, Աղահեջ, Հաբանդ, Բաղք, մյուս Բաղք (Քաշունիք), Արևիք, Երնջակ, Զորք, Կովսական, Նախիջևան (որը ձեռք բերին 10-րդ դարի սկզբում), գուցե նաև Գողթն։ Սյունիքի տերիտորիան այդ ժամանակ իր առավել մեծությանն էր հասել, նման մեծություն նա չուներ ո՛չ դրանից առաջ, և ո՛չ էլ դրանից հետո։ Այդ ժամանակ մեծ էր նաև գահերեց իշխանական ճյուղի բուն սեփականությունը կազմող տերիտորիան։ Գահերեցների ճյուղին էին պատկանում՝ Վայոց ձորը, Ճահուկը, Ծղուկը, Բաղքը, Երնջակը և նրանց անցած Նախիջևանը։ Հաբանդն ու Շնհերը 9-րդ դարի վերջերում ժառանգություն էր հասել այդ ճյուղի

[1] Տես Հավելվածի համապատասխան տեղերը։

ներկայացուցիչ Փիլիպպե 2-րդին, որը կազմել էր առանձին գահակալ իշխանություն։

Սակայն Ատրպատականի ոստիկանների արշավանքներից հետո իրերի պատկերը զգալի չափով փոփոխված էր։ Տերիտորիալ և վարչական առումով Սյունիքից անջատվել էին Գեղաքունին, որն անցել էր Բագրատունիներին, Երնջակը, Նախիջևանը (նաև Գողթանը), որոնք անցել էին արաբներին՝ Գողթանի և Նախիջևանի էմիրություններին։ Նվազել ու փոքրացել էր նաև իրենց՝ գահերեցների ճյուղի բուն տերիտորիան։ Նրանից անջատվել էին ոչ միայն Երնջակն ու Նախիջևանը, այլև մնացած չորս գավառները տրոհվել էին երեք եղբայրների միջև, մի բան, որն իր հետ բերում էր նաև վարչական ու քաղաքական իշխանության տրոհում։ Սմբատ գահերեցի ձեռքում մնացել էին Վայոց ձոր և Ճահուկ գավառները, գուցե նաև Ծղուկի մի մասը։ Բնական է, որ նա այժմ քաղաքական գերիշխանության տեսակետից լուրջ հեղինակություն չէր կարող ներկայացնել մյուս գահակալ իշխանների աչքում, հատկապես, Սյունիքի հարավ-արևելյան մասի իշխանների աչքում։ Գահերեցի իշխանության տերիտորիալ և վարչական տրոհումը և նրա հեղինակազրկումը լուրջ փոփոխություն էր Սյունիքի ներքին կյանքում։ Ահա թե ինչո՛ւ Սմբատ գահերեց իշխանի մահվանից հետո Սյունիքի քաղաքական իշխանության ղեկավարությունը շուտով Վայոց ձորից տեղափոխվում է հարավ-արևելք՝ Բաղք։

6. ՍՅՈՒՆԻՔԸ ԲԱՂԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

10-րդ դարի երկրորդ տասնամյակի վերջում վերջացան Ատրպատականի ոստիկանների արշավանքները։ Խալիֆաթի և Ատրպատականի էմիրության խիստ թուլացման հետևանքով Հայաստանում և, ընդհանրապես, Մերձավոր Արևելքում տիրեց խաղաղություն։ Հայաստանը, փոքրիկ ընդհատումներով, հարյուրամյա տևական խաղաղության մի ժամանակաշրջան ապրեց։

Յուսուֆի արշավանքներին անմիջականորեն հաջորդող տասնամյակներում Հայոց կյանքի ընթացքի մասին մենք չունենք մանրամասն վկայություններ։ Ժամանակակից միակ պատմիչը՝ Ասողիկը չունի դեպքերի գոնե բավարար նկարագրություն։ Ստեփանոս Օրբելյանը ևս չգտնելով համապատասխան աղբյուրներ, համարյա ոչինչ չի հայտնում Սյունիքի հաջորդ տասնամյակների քաղաքական պատմության մասին։ Նրա կցկտուր վկայությունները գերազանցապես վերաբերում են եկեղեցուն։

Հիշյալ տարիներին, ինչպես Հայաստանի մյուս մասերը, նույնպես և Սյունիքը գտնում ենք խաղաղ շինարարության մեջ։ Շինարարությամբ զբաղվում էին և՛ իշխանները, և՛ եկեղեցին։ Շինվում են եկեղեցիներ, վանքեր, աշխարհիկ շենքեր, իշխանական դղյակներ, ջրանցքներ, ընդարձակվում է տոհման ցանցը և այլն։

Հիշյալ ժամանակաշրջանում, հատկապես Սյունիքի եկեղեցական թեմի կյանքում, հիշատակության արժանի դեպքերից մեկն էր Տաթևի եպիսկոպոսության «ապստամբությունը» Հայոց կաթողիկոսական աթոռի դեմ։ Հակոբ 1-ին եպիսկոպոսի այդ «ապստամբության» պատճառը Ս. Օրբելյանը համարում է հետևյալը։ Ատրպատականի ոստիկանների արշավանքների տարիներին Հայոց կաթողիկոսական աթոռն իր մշտական նստատեղից՝ Դվինից, դուրս էր եկել և թափառում էր ողջ Հայաստանով մեկ, երբեմն այն գտնվում էր Վասպուրականում, երբեմն՝ Շիրակում։ Սյունիքի Հակոբ եպիսկոպոսը «Վասն հեռաւորութեան» չէր կարողանում ամեն տարի գնալ Հայոց կաթողիկոսի մոտ մեռոն ստանալու, այդ պատճառով էլ նա մեռոնը ստանում է Աղվանքի Սահակ կաթողիկոսից։ Նա այդպես է վարվում նաև օտար արշավանքների դադարումից հետո։ Ավելին. Հակոբը մտերմանում է Աղվանքի կաթողիկոսի հետ ու դառնում համախոհ նրան։ «Եւ այս լինէր նմա մեծ դայթակղութիւն և անկանգնելի գլորումն զի սխալեաց ըստ դիւրախաբ բնութեանս մարդկային»[1]։ «Ապստամբության» բուն պատճառը, իհարկե, ամենևին էլ մեռոն ստանալու հանգամանքը չէր, ինչպես իզուր փորձում է մեզ համոզել եպիսկոպոս պատմիչը։ Կիրակոս Գանձակեցու մոտ «ապստամբության» պատճառների մասին մենք կարդում ենք. «Յաւուրս սորա (խոսքը Անանիա Մոկացի կաթողիկոսի մասին է — Հ. Ուր.) էր եպիսկոպոս մի ի կողմանցն Սիւնեաց, Յակոբ անուն, որ սկսաւ նորաձևութիւնս առնել խօսից և կարգաց. և այլ միւս եպիսկոպոս Խոսրով անուն»։ Սրանք պահանջում էին ա) տիրոջ օրը կոչել ոչ թե «կիւրակէ», այլ «կիւրիակէ», ինչպես կոչում են հույները, բ) տղաների մազերը չկտրել մինչև երկարի ու ոլորվի («պատ առցէ»). մինչ այդ անվանել պատանի և ապա կտրել և կոչել կտրիճ, գ) եպիսկոպոսը չպետք է ընծայարեր լինի կաթողիկոսին, որովհետև նա ավելի օրհնություն չունի եպիսկոպոսից, տարբերությունը միայն անվանակոչության մեջ է, «և այլ այսպիսի անիմաստ բանիւք լցոյց զաշխարհս, և խռովութիւն յարոյց ամենայն ուրէք վասն նորաձևութեան»[1]։

Հակոբը, ուրեմն, մեղադրվում է ինչ-որ նորաձևություն մտցնելու մեջ։ Սակայն Օրբելյանը հերքում է այդ՝ ասելով, որ Հակոբին բամբասել են քաղքեդոնականության մեջ, բամբասել են նաև այն բանում, որ իբր թե նա հորդորել է նաև Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսին՝ հարել քաղքեդոնական աղանդին, բայց «ես իսկ զրպարտանք համարիմ զայսպիսի բանս»[2]։ Մեր կարծիքով «ապստամբության» պատճառը ո՛չ Աղվանից եպիսկոպոսից մեռոն ստանալն էր և ո՛չ էլ Հակոբի կողմից ինչ-որ նորաձևություն մտցնելու ձգտումը։ «Ապստամբության» բուն պատճառը տնտեսական էր, իրական կոնկրետ շահը։ Սյունիքի եկեղեցին, հանձին նրա գլուխ Տաթևի վանքի, 930—40-ական թվերին ապրում էր իր տնտեսական ծաղկումը։ Նա ուներ ընդարձակ կալվածքներ, որի նմանը չէր ունեցել նախորդ շրջանում։ Նա ուներ 32-ից շատ ավելի գյուղեր՝ իր անմիջական սեփականությանը պատկանող, 500 հոգուց բաղկացած կղե-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 274, 275։

[1] Պատմութիւն Հայոց, Արարեալ Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1910, էջեր 79, 80։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 277։

բական անձնակազմ։ Հասկանալի է, որ տնտեսական այս հզորության հետևանքով ուներ նաև ամուր քաղաքական և հոգևոր դիրք։ Տնտեսական, քաղաքական ու հոգևոր այս հզորությունն էլ նրան մղում էր՝ տնտեսապես ու հոգևոր իմաստով անջատ ու անկախ լինել Հայոց կաթողիկոսից։ Հայտնի բան է, որ եպիսկոպոսությունները, ընդ որում նաև Սյունիքի եպիսկոպոսությունը, հարկատու և հոգևոր իմաստով հպատակ էին կաթողիկոսական աթոռին։ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Հակոբ եպիսկոպոսի կարծիքով կաթողիկոսն ավելի կոչում չունի, քան ինքը, ուստի չպետք է նրան հարկատու ու հպատակ լինել. «Ոչ է պարտ եպիսկոպոսի ընծայաբէր լինել եպիսկոպոսի, այսինքն կաթողիկոսի. զի աւելի օրհնութիւն ոչ ունի. բայց միայն զանուանակոչութիւնն»[1]։ Տընտեսական ու քաղաքական հզորությունը Հակոբ եպիսկոպոսին դարձնում է անձնահաճ և մղում դեպի ինքնուրույնություն ու անկախություն իր հոգևոր դերիշխողից։ Իհարկե, Հայոց կաթողիկոսարանը չէր կարող անտարբեր մնալ Հակոբի այս կենտրոնախույս ձգտումների նկատմամբ։ Նա չէր կարող հրաժարվել Սյունիքի եպիսկոպոսությունից ստացած հարուստ եկամուտներից։ Դրա համար էլ Հակոբի քայլը դիտվում է իբրև «ապստամբություն» և կաթողիկոսարանը դիմում է կոնկրետ միջոցառումների։ Ժամանակի Անանիա Մոկացի կաթողիկոսն անմիջապես իր մոտ է հրավիրում Աղվանքի Սահակ կաթողիկոսին[2] և Սյունիքի Հակոբ եպիսկոպոսին՝ բացատրություն տալու համար։ Նրանք հրաժարվում են ներկայանալ։ Անանիան ստիպված ինքն է գնում Սյունիք և Աղվանք։ Սյունիքում կաթողիկոսին դիմավորում են Սմբատ դահերեց և Բաղքի Ջևանշեր 2-րդ իշխանները ու մեծաշուք պատվով բերում են Տաթևի վանքը։ Հակոբ եպիսկոպոսը դալիս ներո-

[1] Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջեր 79, 80։

[2] Աղվանքի կաթողիկոսները ձեռնադրվում էին Հայոց կաթողիկոսի ձեռքով, մի բան, որը նրանց հպատակ էր դարձնում Հայոց կաթողիկոսարանին։ Վերջին տարիներին Աղվանքի կաթողիկոսները դադարում են իրենց օծումը Հայոց կաթողիկոսարանից ստանալը և իրենց հայտարարում են անկախ ու ինքնուրույն։ Այս բանը ևս դիտվում է որպես «ապստամբություն»։

զություն է խնդրում, մեղայի գալիս ու հայտնում իր հնազանդությունը։ Սմբատ իշխանից և Հակոբ եպիսկոպոսից մեծ պարգևներ ու առատ ընծաներ ստանալով, Անանիան վերադառնում է իր նստատեղին։ Բայց շուտով Հակոբ եպիսկոպոսը նորից է «ապստամբվում»։ Անանիա կաթողիկոսը, ինչպես նաև այլ գիտակ վարդապետներ, նամակներ են գրում Հակոբին ու հորդորում՝ ճիշտ ուղին վերադառնալ։ Բայց նա արհամարհում է այդ բոլորը և «ապստամբեալ ի կաթողիկոսէն՝ ամրանայր ի բերդն Սիւնեաց»[1]։ Անանիան նամակներ է գրում Սյունյաց տիկնոջը, որի բերդում, հավանաբար, ամրացել էր Հակոբը, որ Սյունյաց տիկինը իրեն հանձնի Հակոբ եպիսկոպոսին։ Բայց նա չի հանձնում, քանզի, ասում է Կիրակոս Գանձակեցին, Հակոբը նրան էլ դարձրել էր իրեն համակարծիք։ Անանիա կաթողիկոսն ստիպված երկրորդ անգամ դալիս է Սյունիք, Տաթև (949 թ.), բայց Հակոբ եպիսկոպոսը չկամենալով այս անգամ մեղայի գալ, փախչում է Բաղք՝ Ջևանշեր 2-րդ իշխանի մոտ։ Անանիան Տաթևից բազմաթիվ նամակներ է գրում Ջևանշեր իշխանին, որպեսզի նա ուղարկի Հակոբին, սակայն նա հովանավորում է Հակոբին և «ոչ տայր ի դուրս»։ Զայրացած կաթողիկոսը բանադրում է Հակոբին ու Ջևանշերին, ավերում, քանդում է եպիսկոպոսարանը. «սաստիկ ցասմամբ,— վկայում է Օրբելյանը,— բարկացեալ սուրբ կաթողիկոսին աւերիաց զտեղին և քանդեաց և չարաչար նզովիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց ի տոռունս կապանաց զիշխանն և զեպիսկոպոսն. և անց, գնաց իւր աթոռն»։ «Եւ այս լինէր ի թուականին Հայոց 338» (=949 թ.)[2]։ Ստեփանոս Օրբելյանի այլ վկայություններից երևում է, որ դրանից հետո 9 տարի, մինչև 958 թ., Տաթևի եպիսկոպոսարանը եղել է խափանված, իսկ նրա ժառանգությունը հափշտակված։ «Եւ վասն աւերման տեղւոյն,— ասում է Օրբելյանը,— բազում պայծառութիւնք շրջեալ լինէին և բազում բարեկարգութիւնք խափանեալ ի բազում ատրս. և յոլով ժառանգութիւնք պա-

[1] Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջեր 79, 80։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 283։

կասեալ ու յափշտակեալ յեկեղեցւոյն՝ ի մեծ մայրաքաղաքէն Տաթևոյ»[1]։

Բայց ի՞նչպես կարող էր կաթողիկոսը, որն իր հետ ոչ զորք ուներ և ոչ էլ նվաճող մի բռնակալ էր, ավերել, քանդել եպիսկոպոսարանը։ Այս հարցի պատասխանը տալիս է ինքը Օրբելյանը. «Քանդի Մաքենոցացիքն զԳեղաքունի էին յափշտակեալ, և ոմն մի զՎայոց ձոր, և եպիսկոպոս նստեալ. և ոմն մի՝ զԵրնջակայ գաւառն, և անդ նստեալ եպիսկոպոս յԵրնջակայ վանքն. և Գողթնացիքն՝ զԲոտեձորն և զԲուստ և զՕրդուստ։ Նմանապէս և իշխանքն զգեղանն էին բաշխեալ ազատաց իւրեանց»[2]։ Կաթողիկոսի բանադրանքը շղթայազերծ է արել Տաթևի վանքի դեմ ուղղված կենտրոնախույս ուժերը և նրա կալվածքներին նախանձով նայող աշխարհիկ ազնվականության ձեռքերը։ Պարզ տեսնում ենք, որ Տաթևի «վիճակի» մեջ մտնող մի շարք գավառներ դուրս են գալիս նրանից ու ստեղծում իրենց առանձին եպիսկոպոսությունները՝ Գեղաքունիքում, Վայոց ձորում, Երնջակում, Գողթնում։ Առանձին գավառական եպիսկոպոսական վիճակների ստեղծումն այս շրջանում, մեր կարծիքով, խիստ կապ ունի ժամանակի քաղաքական ու տնտեսական կացության հետ։

Մենք նշեցինք արդեն, որ Ատրպատականից եկած արշավանքներից հետո խիստ կերպով թուլացել էր Սյունիքի գահերեցի իշխանությունը, տեղական գահակալ իշխանները դառել էին ավելի ինքնուրույն և անկախ։ Կենտրոնախույս ձգտումները գահերեց իշխանության նկատմամբ ավելի ակնհայտ փաստ էին։ Դրան համապատասխան գահակալ այդ իշխանների վարչական առանձին միավորների, գավառների եկեղեցիներն էլ Տաթևի վանքի նկատմամբ համակվել են կենտրոնախույս ձգտումներով ու ջանացել ինքնուրույն և անկախ եպիսկոպոսություններ ստեղծել։ Նրանց այդ ձգտմանը օժանդակել են իրենց գավառների իշխանները։ Դրանը նպաստել է հավանաբար նաև այն, որ Գեղաքունիքը, Երնջակը, Նախիջևանը դուրս էին ընկել արդեն Սյունիքի վարչական սիստեմից։ Այսպես քայքայվել է Տաթևի վանքի «վիճակը», իսկ Տաթևի վանքի սեփական գյուղերը խլել և իրենց միջև բաշխել են շրջակա աշխարհիկ իշխաններն ու ազատները։

958 թվին մահանում է Հակոբ եպիսկոպոսը, հավանաբար Բաղքում։ Անանիա կաթողիկոսն այդ լուրն ընդունում է մեծ գոհունակությամբ և Սյունյաց եպիսկոպոսության ավեր «վիճակի» հետագա շարունակումը համարելով անպատշաճ, շտապում է Սյունիք։ Նա գալիս է «յանբնակ տեղի եպիսկոպոսարանին Սիւնեաց», հրամայում է կրոնավորներին հավաքվել և վերականգնել բնակությունը, իսկ ինքը գնում է Կապան Ջևանշեր 2-րդ իշխանի հետ բանակցելու։ Բանադրված այդ իշխանը, ընդառաջ գալով, դիմավորում է նրան քաղաքից դուրս և մեծ զղջումով «զմեղայ խոստովանէր»։ Կաթողիկոսի մոտ է գալիս նաև Սմբատ գահերեց իշխանին հաջորդած որդին՝ Վասակը, որը նույնպես մեղայի է գալիս։ Կաթողիկոսը ներում է նրանց և մեծ շուքով մտնում Կապան քաղաքը, որը Ջևանշերի արքունանիստն էր։ Տեղի է ունենում ժողով, ուր որոշվում է վերականգնել Սյունիքի-Տաթևի եպիսկոպոսությունը և եպիսկոպոս է ընտրվում Ջևանշեր 2-րդի հորեղբայր Վահան 2-րդը, որն այդ ժամանակ Վահանավանքի առաջնորդն էր[1]։ Պայմանավորվում են նաև, որ դրանից հետո Սյունյաց եպիսկոպոսները չպետք է Հակոբի նման շեղվեն Հայոց կաթողիկոսությունից և չպետք է մերձենան Աղվանքի կաթողիկոսին, իսկ Սյունյաց իշխանները չպետք է հովանավորեն շեղում կատարող եպիսկոպոսներին, այլ այդպիսիներին անմիջապես հանձնեն կաթողիկոսին։ Կնքվում է պայմանագիր, որը վերջանում է մեծ նզովքներով։ Այդ վճիռը կնքում են Սյունյաց իշխաններն իրենց մատանիներով ու տալիս Անանիա կաթողիկոսին[2]։ Օրբելյանն ինքը ունեցել է այդ պայմանագիրը իր ձեռքի տակ, բայց մեջ չի բերել։

Տաթևի եպիսկոպոս դառնալուց հետո Վահանի առաջին

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 287։
2 Նույն տեղում, էջ 304—305։

1 Տես Հավելված, համապատասխան տեղը։
2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 285։
Գ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 81։

գործը լինում է անմիջապես վերականգնել վանքի «պայծառությունը» և աստիճանաբար ետ վերցնել նախկինում վանքի անմիջական սեփականությունը հանդիսացող գյուղերն ու կալվածքները. «զոր և առ սակաւ սակաւ անդրէն դարձուցանէին իշխանքն ի ժամանակս»[1]։ Օրինակ, Սահակի որդի Սմբատ 2-րդ իշխանը 963 թվին վանքին է վերադարձնում «Ծաղարդ և Հաժիս» (Հարժիք) գյուղերը։ Վահանը և նրան հաջորդող եպիսկոպոսները պիտի հոգային, անշուշտ, նաև վերականգնել Տաթևի եպիսկոպոսության «վիճակը», բայց, ինչպես երևում է, այդ հեշտ չի հաջողվել նրանց։ Այն վերականգնվել է ոչ միանգամից, այլ աստիճանաբար։ Միայն 1006 թվականին Սարգիս կաթողիկոսի շրջաբերականով Տաթևին է վերադարձվում նրա նախկին ամբողջ «վիճակը»։ Այդ շրջաբերականում կարդում ենք. «Անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա. եւ վերստին հաստատեցաք զեղէալ պատիւ նոցա՝ զիսաչն զրագմականն և զգաւազանն»[2]։

10-րդ դարի 60—70-ական թվերին մենք Սյունիքում նկատում ենք ֆեոդալական ուժերի համախմբման մի նոր երևույթ, որը հանդեցնում է քաղաքական միավորման ու Սյունյաց-Բաղաց թագավորության ստեղծմանը։

Վերևում մենք տեսանք արդեն, որ Յուսուֆի արշավանքներից հետո գահերեցների տան ամբողջ կալվածքները ենթարկվեցին նոր տրոհման, բաժանվեցին Սմբատ 1-ին գահերեց իշխանի և նրա եղբայրների միջև։ Գահերեցությունը դարձյալ մնում էր Սմբատին, որը, սակայն, այժմ ձևական էր մյուս գահակալ իշխանների հանդեպ։ 940-ական թվերին այս Սմբատին գահերեցության գահում հաջորդել է որդին՝ Վասակը, ըստ կարգի 4-րդը, ժառանգելով իր հոր կալվածքները՝ Վայոց ձորը և Ճահուկը։ Սրա գործունեության մասին ոչինչ չգիտենք։ Մենք նրան գործի մեջ տեսնում ենք միայն մի անգամ. 958 թվին գալիս է Կապան, Անանիա կաթողիկոսից թողություն խնդրելու համար և մասնակցում է Կապանի ժողովում։ Աղ-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 287, 288։

[2] Նույն տեղում, էջ 310, նաև էջեր 285, 306, 308—311։

բյուրներում այս Վասակը գահերեց չի կոչվում։ Եթե անգամ նա ժառանգած էլ լիներ իր հոր գահերեց կոչումը, ապա այժմ այն առավել ևս, քան իր հոր վերջին շրջանում, ձևական կոչում էր։ Վայոց ձորի գահերեցների այս վերջին շառավիղը քաղաքական կյանքում այժմ երկրորդական դեմք էր։ Կարծեք քաղաքական գերիշխանությունը Վայոց ձորից տեղափոխվում էր Բաղք, անցնում Ջագիկյանների ներկայացուցիչ Ջևանշեր 2-րդի ձեռքը։ Այդ մասին են վկայում Հակոբի «ապստամբության» ժամանակ Ջևանշերի կատարած վճռական դերը՝ Հակոբ եպիսկոպոսին կաթողիկոսի հալածանքից պաշտպանելը, Հակոբի մահվանից հետո Տաթևի եպիսկոպոսությունը վերականգնելու հարցը քննարկելու համար Անանիա կաթողիկոսի Ջևանշերի հետ խորհրդակցելու համար Կապան գալը, ժողովը Կապանում հրավիրելը, Ջևանշերի ազգականին եպիսկոպոս ընտրելը և այլն։ Թեև Վայոց ձորի գահերեցների վերջին ներկայացուցիչ Վասակ 4-րդը ներկա էր այդ ժողովում, բայց չափազանց թույլ դիրքով։ Բանակցություններին տոն տվողը Ջևանշեր 2-րդն էր։ Սրանք փաստեր են, որոնք խոսում են Բաղքի իշխանների քաղաքական դիրքի մեծացման մասին։

Վասակ 4-րդ իշխանի մահվան մասին ևս ոչ մի կոնկրետ տվյալներ չունենք։ Ս. Օրբելյանի վկայությամբ բաղում տարիների իշխանությունից ու գովելի գործերից հետո մահանում է, հավանաբար, 960-ական թվերի վերջին։ Նրա մահով ընդհատվում է Վայոց ձորի գահերեց իշխանների ճյուղը։

Անհրաժեշտ է հետևել նաև Սահակ իշխանի և նրա հաջորդների գործունեությանը։ Մենք տեսանք, որ սա իր եղբայրներ Սմբատ 1-ին գահերեցի և Բաբկենի հետ բաժանելով հայրական ժառանգությունը, բաժին էր ստացել Ծղուկ և Բաղք գավառները և ստեղծել էր վարչական նոր միավոր, գահակալ նոր իշխանություն։ Նրա գործունեության մասին կոնկրետ ոչ մի բան չգիտենք։ Օրբելյանի մի ժլատ վկայության համաձայն Սահակը մահանում է և թաղվում Նորաղուսի եկեղեցում։ Նրան հաջորդում է որդին՝ Սմբատը, որին մենք ըստ հերթականության անվանել ենք Սմբատ 2-րդ։ Նա ժառանգում է իր հոր կալվածքները և պայազատում նրա փոխարեն։ Թե ե՞րբ է այս Սմբատ 2-րդը հաջորդել իր հորը, հայտնի չէ։ Մենք նրան

իբրև իշխան տեսնում ենք 963 թվին, երբ նա, ինչպես տեսանք, Ծածարդ և Հարժիք գյուղերը տալիս է Տաթևի վանքին։

Այսպիսով, 960-ական թվերին իրար հետ կողք կողքի ապրում ու իշխում էին հորեղբոր տղաներ Վասակ 4-րդը և Սմբատ 2-րդը, առաջինը Վայոց ձորում ու Ճահուկում, ընդ որում հավանաբար գահերեց կոչումով, իսկ երկրորդը՝ Ծղուկում ու Բաղքում։ Բայց շուտով, Վասակ 4-րդի մահվանից հետո, Սմբատ 2-րդն իր ձեռքն է գցում նաև նրա կալվածքները։ Ավելին. նա կարողանում է բարձրացնել իր դիրքը և համախմբել ողջ Սյունիքն իր գահերեցության ներքո. «Իսկ Վասակ ...մեռանի. և տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ»[1]։ Ուրեմն գահերեցությունը Վայոց ձորից անցնում է Սյունիք (Ծղուկ) և Բաղք։

Սմբատ 2-րդը, ըստ երևույթին, մեծ կամքի ու ուժի տեր մարդ էր, եռանդուն ու փառասեր։ Նա չի բավականանում գահերեցության փառքով։ Իր դիրքերն ավելի ամրացնելով, իր գերիշխանությանն է ենթարկում մյուս գահակալ իշխաններին և 970-ական թվերին իրեն հայտարարում թագավոր։ Դրանով հիմնադրվում է Սյունյաց լեռնաշխարհում մի թագավորություն, որը կոչվում է «Սյունյաց-Բաղաց թագավորություն», որի պատմությունը կարող է մի առանձին ծավալուն ուսումնասիրության նյութ դառնալ։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 299։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 9—10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

Սյունիքը որպես Հայաստանի «աշխարհներից» (նահանգներից) մեկը, 9—10-րդ դարերում չէր կարող ունենալ սոցիալ-տնտեսական այլ հարաբերություններ, քան հիշյալ դարերում Հայաստանի մնացած մասերում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները։

Մարքսիզմի հիմնադիրները սովորեցնում են, որ ֆեոդալական հասարակարգում հողը հանդիսացել է արտադրության հիմնական միջոցը և իբրև սեփականություն պատկանել է ֆեոդալներին։ Ֆեոդալական հասարակարգում սեփականության գլխավոր ձևը հողային սեփականությունն էր[1]։

Մեզ մոտ հողային սեփականության մասին գոյություն ունի երկու կարծիք։ Ն. Ադոնցի, ակադ. Հ. Մանանդյանի, Տուտներիզի և այլոց կարծիքով Արշակունիների ու Մարզպանական շրջանում Հայաստանում հողի սեփականության իրավունքը պատկանել է ֆեոդալ նախարարներին, իսկ պրոֆ. Խ. Սամվելյանի կարծիքով, ֆեոդալիզմի ծագման իսկ օրից մինչև ընդհուպ նրա անկումը, այն պատկանել է «պետությանը՝

[1] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, т. IV, 1938, էջ 15։

հանձին նրան գլխավորող թագավորի»[1]։ «Ֆեոդալական Հայաստանում,— գրում է պրոֆ. Խ. Սամվելյանը,— հողային սեփականության իրավունքը պատկանում էր բացառապես գերագույն սյուզերենին՝ թագավորին, որի իշխանության ներքո, որպես dominium directum գտնվում էին պետական տերիտորիան կազմող բոլոր հողերը։ Իսկ նախարարների, որպես վասալ իշխանների, հողային իրավունքն արտահայտվում էր սոսկ տիրության իրավունքով, այն է օգտագործմամբ, այսինքն՝ dominium utile»[2]։

Պրոֆ. Սամվելյանի կարծիքով իրերի դրությունը չի փոխվել ո՛չ Արշակունիների ու Սասանյանների տիրապետության անկումով, ո՛չ արաբների նվաճումով, ո՛չ էլ Բագրատունիների բարձրացումով ու անկումով։ «Բագրատունյաց Հայաստանում,— կարդում ենք նրա մոտ,— գերագույն հողային իրավունքի սկզբունքը հայ թագավորների կողմից անխախտ էր պահպանվում։ Ամբողջ հողային տերիտորիան համարվում էր պետական սեփականություն՝ հանձին սուվերեն թագավորի, որը հենվում էր իր դեսպոտական իշխանության վրա։ Թագավորն էր սովորաբար բաշխում հողերը և վավերացնում իրեն ենթակա ֆեոդալ իշխանների հողատիրության իրավունքը»[3]։

Բագրատունյաց շրջանի Հայաստանի հողային սեփականության մասին ունեցած իր այս կարծիքն «ապացուցող» 4 փաստերից 2-ը պրոֆ. Սամվելյանը վերցնում է Սյունիքից։ Այդ փաստերից առաջինն այն է, որ Սմբատ 1-ին թագավորը Նախիջևանը «տիրության իրավունքով հանձնել էր իր վասալ Սիսական իշխան Սմբատին»[4], իսկ երկրորդը այն, որ 906 թվի Սյունյաց իշխանների կողմից Տաթևի վանքին տրված կալվածքների սահմանները որոշող սիգելը «վավերացնում է թագավորը»[5]։ Պրոֆ. Խ. Սամվելյանն այս փաստերից եզրակացնում է՝ «վասալ իշխանների (տվյալ դեպքում նաև Սյունյաց

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 158, տես նաև էջ 172։

[2] Նույն տեղում, էջ 184։

[3] Նույն տեղում, էջ 173։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, էջ 174։

իշխանների — Հ. Ռ.) հողային իրավունքը սահմանափակված էր, նրանք կարող էին օտարել իրենց կալվածային հողերից իրենց սյուզերենի, այսինքն՝ թագավորի, հաճությամբ ու թույլատվությամբ, որ և վավերացվում էր վերջինի կողմից»[1]։

Ինչպես տեսանք վերևում, Նախիջևանը Սյունյաց իշխանների, ինչպես նաև Բագրատունիների, սեփականությունը չի եղել պատմականորեն, նա երբեմն միայն, շատ կարճ ժամանակով, անցել է Սյունիքի դերիշխանության տակ։

Իրենց բարձրացման ժամանակ Բագրատունյաց թագավորները Նախիջևանը նվաճել էին արաբներից ու տվել մերթ Վասպուրականի, մերթ Սյունիքի իշխաններին՝ նրանց հավատարմությունը շահելու նպատակով։ Հասկանալի է, որ այս փաստը չի կարող հաստատուն հիմք հանդիսանալ պնդելու, որ Բագրատունի թագավորները Հայաստանի, այդ թվում նաև Սյունիքի, հողերի նկատմամբ ունեին սեփականության գերագույն իրավունք։

Ավելի թույլ է երկրորդ փաստարկումը։ 906 թվի «գիրվճիռը» (սիգելը) գրված է եղել մագաղաթի վրա, Ստեփանոս Օրբելյանը տեսել է այն և մեջ բերել իր պատմության մեջ։ Ավելորդ համարելով ամբողջ տեքստի մեջբերումը, մենք ուշադրություն ենք հրավիրում այդ փաստաթղթի հետևյալ կետերի վրա։

ա) «Մեք նուաստ ծառայքս Աստուծոյ,— կարդում ենք այդ գիր-վճռի մեջ,— Հայկազնի իշխանքս Սիւնեաց՝ տէր Աշոտ՝ որդի Փիլիպպէի, և որդիք իմ Սմբատ, Սահակ և Բաբգէն, և տէր Գրիգոր Սուփան և եղբարք իւր Սահակ և Վասակ, և տէր Զագիկ և որդի իւր Զևանշէր, և այլ ազատք և համազգիք մեր, առաջի աստուածապահ թագաւորիս և սուրբ կաթողիկոսիս և Աղվանից հայրապետիս և իշխանացս, և տեառն Գագկայ և Գուրգենայ՝ Վասպուրականի իշխանացս, և այլ եպիսկոպոսաց և քահանայից և ազատաց և տանուտերաց արարաք զայս գիր պայմանի հաս-

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 174։

տատուն և անխախտ վճռի վասն շրջակայ սահմանի մեծի, սուրբ... աթոռոյն Սիւնեաց՝ մայրաքաղաքին Տաթևոյ»[1]։

Ինչպես տեսնում ենք, այս պայմանագրի հեղինակները Սյունիքի գահերեց և գահակալ իշխաններն են, որոնք այդ պայմանագիրը կնքել են («արարաք») թագավորի, կաթողիկոսի, Վասպուրականի և այլ իշխանների և եպիսկոպոսների ներկայությամբ, այսինքն՝ նրանց վկայությամբ։ Ուրեմն տրվյալ սահմանների մեջ ամփոփված հողերի օտարողի դերում հանդես են գալիս Սյունիքի հենց այդ իշխանները և «այլ ազատք»։ Այդ երևում է նաև սույն պայմանագրի տակ որպես առաջին վկա ստորագրող Հովհաննես կաթողիկոսի հետևյալ խոսքերից՝ «Վկայ եմ այսմ անխախտ և անխափան վճռոյս որ աւանդեցաւ ի մեծ իշխանացս Սիւնեաց»։

բ) «Եւ ընթերցաք,— գրում են սիգելի հեղինակները,— զնին նամակն զոր մեր հարցն և հաւուց գրեալ էին. և ծանեաք զժառանգութիւն սուրբ խաչիս և հոգևոր տէրանցս որ ի մերում իշխանութեանս, և զսահման տեղւոյս զոր և մեք վերստին հաստատեցաք և ընդարձակեցաք աստուածընկալ սուրբ խաչիս»[2]։

Ուշադրավ այս տողերը ցույց են տալիս, որ այդ սահմաններով Տաթևի վանքի օգտին անջատվող կալվածքների մի մասը նոր չէր, որ տրվում էր վանքին, այն արդեն նախկինում տրված էր Սյունյաց այս իշխանների հայրերի և պապերի կողմից համապատասխան «նամակ-վճիռներով», որոնք այժմ, այս հանդիսավոր օրը, կարդում են Սյունյաց իշխանները և վերստին հաստատում։ Բացի այդ, իրենք իրենց հերթին տալիս են նոր կալվածքներ։ Նախկինում տրված այդ կալվածքներից էին, օրինակ՝ Տաթև գյուղը, որը Փիլիպպե 1-ին իշխանը նվիրել էր 844 թվին, Խոտ գյուղը, որը հոգեցատուր էր արված Գևորգ եպիսկոպոսի ժամանակ (828—836 թթ.) և այլն։ Հիշյալ այս գյուղերը ժամանակին օտարվել էին, այսինքն՝ վանքին էին տրվել առանց որևէ թագավորի «հաճութեամբ» և «թույլատվութեամբ»[1]։ Իսկ նոր տրված կալվածքներից էին, օրինակ՝ Տանձատափ և Ցուր գյուղերը, որոնց հենց այդ նույն հանդեսին Աշոտ գահերեց իշխանն առանձին նիգելով նվիրում է վանքին։

գ) Սիգելից երևում է, որ նրա հեղինակները ոտքով անցել են և որոշել սահմանը[2]. «Ահա այս իսկ են սահմանք զոր մեք ոտիւք մերովք կոխեալ և աչօք մերովք տեսեալ և ձեռօք մերովք նշանեալ, առանց զրկութեան և յափշտակելոյ գրեցաք և կնքեցաք մատանեաւ մերոյ արքայիս և կաթողիկոսիս և մեր իսկ»[3]։ Ապա գալիս է անեծքը՝ «Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակդարաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ երրորդութենէն որոշեալ լիցի, և յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի...»[4]։

Վերջում գալիս են վկաների և իրենց սիգելի հեղինակների՝ Սյունյաց իշխանների, ստորագրությունները։ Առաջին վկան Հայոց կաթողիկոսն է, իսկ երկրորդը՝ Հայոց թագավորը, որը ստորագրել է այսպես. «Ես Սմբատ Բագրատունի՝ թագաւոր Հայոց, հաստատեցի իմով ձեռամբս զայս վճիռս և եդի ի վերայ զիմ թագաւորական մատանին ի ստորև»։ Իսկ կաթողիկոսն ստորագրել է այսպես. «...վկայ եմ այսմ անխախտ և անխափան վճռոյս որ աւանդեցաւ ի մեծ իշխանացս Սիւնեաց»[5]։

Պրոֆ. Խ. Սամվելյանն անտեսելով այս գիր-վճռի բուն իմաստը, փարվել է նրա վկաների ցուցակին և Սմբատ թագավորի ստորագրությունը համարել նրա՝ Սյունյաց իշխանների հողերի նկատմամբ «ունեցած» սեփականության գերագույն իրավունքի իրավական արտահայտությունը։ Դա ճիշտ չէ։ Գիր-վճռի ուշադիր ուսումնասիրումից երևում է, որ Սմբատ թագավորի ստորագրությունը սոսկ վկայություն է։ Մեր

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 231։
[2] Նույն տեղում, էջ 231։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 206, 207, 215։
[2] Սահմանագծի մասին տես նույն տեղում, էջ 232։
[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 232։
[4] Նույն տեղում, էջ 233։
[5] Նույն տեղում։

այս կարծիքի օգտին է խոսում նաև հետևյալ հանգամանքը։ Այդ նույն նավակատիկի ժամանակ, ինքը Սմբատ Թագավորը ևս երկու գյուղ է նվիրում Տաթևի վանքին. «Ընծայէ Թագաւորն ի սուրբ եկեղեցին զմեծ աւանն Կարճաւան յԱրևիք գաւառի, ի Մեղրաձորի ընդ գնոյ ստացեալ, գնէ և զՀարժիս ի տէրանցն Սիւնեաց և զայն ևս ընծայէ ազատ ամենայն հարկաց»[1]։ Ինչպես տեսնում ենք, Սյունիքի մեջ մտնող այս երկու գյուղերը Սմբատ Թագավորի սեփականությունը չեն եղել, նա դրանք գնել է Սյունյաց իշխաններից. Կարճավանը գնել է մինչև նավակատիկը, իսկ Հարժիքը՝ նավակատիկի ժամանակ։ Հարժիքը Աշոտ՝ գահերեցին պատկանող Մղուկ գավառի գյուղերից էր և ընկնում էր Տաթևի վանքի համար գծվող նոր սահմանի մեջ։ Թագավորի կողմից Սյունյաց իշխաններից հիշյալ գյուղերը փողով գնելու և ապա նոր վանքին նվիրելու փաստն ինքնին ցույց է տալիս, որ Սյունիքի հողերի նկատմամբ նա գերագույն իրավունք չի ունեցել։ Եթե Թագավորը առանց իրենց տերերից փողով գնելու նույնիսկ երկու գյուղ վանքին նվիրելու իրավունք չի ունեցել, ապա պարզ է, որ նա նման իրավունք չի ունեցել նաև հիշյալ «գիր-վճռով» Տաթևի վանքին տրված մյուս գյուղերի նկատմամբ։ Հետևապես, Թագավորի ստորագրությունը չուներ այն նշանակությունը, ինչ որ ջանում է նրան վերագրել պրոֆ. Խ. Սամվելյանը։ Փաստորեն Թագավորի, Հայոց և Աղվանից կաթողիկոսների և Հայոց մեծամեծ իշխանների ստորագրությունները սոսկ վկաների ստորագրություններ էին։ Նրանք իրավաբանական առումով վկայում էին Սյունյաց իշխանների և վանքի միջև կնքվող այդ պայմանագրի (սիգելի) խստության և անխախտության համար։ Թագավորն իր ստորագրությամբ ո՛չ թե որպես գերագույն սեփականատեր, որպես «սյուզերենն» իր «հաճությունն» ու «թույլատվությունն» էր տալիս Սյունյաց իշխաններին՝ իրենց հողերն օտարելու համար, ինչպես ենթադրում է պրոֆ. Խ. Սամվելյանը, այլ, որպես քաղաքական բարձրագույն իշխանությունը մարմնավորող անձ, հաստատում էր կողմերի

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 228, 229։

միջև կնքված վավերագրի, սիգելի անխախտությունը։ Այդ ակտի մեջ նկատելի է Թագավորի քաղաքական իշխանությունը, և ոչ թե սեփականության գերագույն իրավունքը[1]։

Պրոֆ. Խ. Սամվելյանի վերոհիշյալ կարծիքի անճշտության մասին են խոսում ոչ միայն իր այս երկու փաստարկումները, այլ նաև բազմաթիվ այլ փաստեր, որոնց կողքով նա լուռ անցել է։

Ստեփանոս Օրբելյանը պահել ու մեզ է հասցրել 9—10-րդ դարերին վերաբերող 20-ից ավելի վավերագրեր, որոնք կնքվել են Սյունյաց իշխանների կողմից եկեղեցուն տրված հողային նվիրատվությունների («հոգեցատուրների») և եկեղեցու կողմից կատարված հողի և ջրի գնումների գործարքների ժամանակ։ Ավելորդ չենք համարում մեջ բերել, թեկուզ նմուշի համար, դրանցից մի քանիսի սեղմ տեքստը։

1. 844 թվին Փիլիպպե 1-ին իշխանի կողմից Տաթև գյուղը վանքին նվիրելու կապակցությամբ թողած «գիր-վճռի» մեջ կարդում ենք.

«Յերկերիւր և իննսուն երեք թուականութեանս Հայոց որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ ... ետու զՏաթև վանն իմ հոգեացս ի ձեռ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս. յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ էր. անխուէշքարէ ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօք և ընկոյզեօք, մարգագետնովք և ջաղացանով և որ ինչ համօրէն սահմանք են. և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ և ի սուրբ խաչէդ...։ Ես ետու ամենայն սրտի մտօք ի ձեռ ի Տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոս, վայելել խաղաղական կենդանութեամբ, և որ յետ ձեր այլք նստին յաթոռդ վայելեցէք մինչև ցգալուստն Քրիստոսի...»[2]։

2. Հրահատ իշխանի թողած 844 թվագիր «նամակ-վճռի»

[1] Եթե Թագավորը ներկա չլիներ այդ նավակատիկին, կասկածից վեր է, որ նա որպես վկա ստորագրություն չէր ունենա այդ սիգելի տակ։ Ս. Օրբելյանի մոտ պահպանված նույնանման մյուս բոլոր սիգելների տակ Թագավորը «վավերացում» (ստորագրություն) չունի։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 206, 207։

մեջ կարդում ենք. «...ես Հրահատ... գեօղ մի ի Կովսական գաւառի Նորաշինիկ անուն... վասն իմ հոգեացս ի սուրբ խաչդ ապստուարեցի իւր բոլոր սահմանօք, լերամբ և դաշտաւ, ջերմաւ և ցրտով, ծառով և տնկով՝ որոյ սահմանքն են... և յայսմհետէ իշխան ես դու Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և որք յետ քո այլ հայրապետք յայդ յաթոռդ յաջորդին մի ըստ միոջէ, զայդ շէնդ՝ ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել և զինչ կամք են՝ առնել մինչև յաւիտեանս ժամանակաց։ Եւ այսուհետև ոչ ես Հրահատ և ոչ իմ եղբարք կամ իւրեանց որդիք չունիմք իշխանութիւն բանս և պայթար առնել...»[1]։

3. Փիլիպպէ 2-րդ իշխանի թողած 943 թվագիր «արձանանջինջի» մեջ կարդում ենք. «...ընձայեցի լիապտուղ հաւատով յիմ հալալ հայրենեացն զՅուբականխոռ... և զմիւս շէնն զՀղուերծ... ի սուրբ մայրաքաղաք եկեղեցիդ Տաթեւոյ, ի սուրբ Գրիգոր զոր իմ պապուն տէր Փիլիպպէի շինեալդ է...։ Եւ ետու իւր սահմանօքդ բոլոր՝ լերամբ և դաշտովք, հողով և ջրով, այգօք և ընկուզօք, ջրաղացովք և ամենայն մտիւք։ Եւ արդ՝ յայսմհետէ իշխանութիւն ունիք դուք ուտել և վայելել զայդ տեղերդ, վաճառել և գրաւական տալ մինչև յաւիտեանս ժամանակաց, և ազատեն զոքա յամենայն արքունի հարկաց»[2]։

Այս և մյուս վավերագրերից պարզ երևում է, որ այս և այլ գյուղերը, որոնք ձեռք են բերվել կամ իրենց նախնիներից ժառանգություն ստանալու, կամ գնելու միջոցով, համարվել են Սյունյաց իշխանների հայրենի ժառանգությունը։ Նրանք այդ գյուղերն օտարում են իրենց ողջ սահմաններով՝ լեռներով, դաշտերով, ջրերով, արոտներով, արտերով, այգիներով, տնկերով, շինություններով, ջրաղացներով, մի խոսքով՝ այն բոլորով, ինչ որ ունի տվյալ գյուղը։ Նրանք իրենց օտարած այդ հողերի նոր տիրոջը, եկեղեցուն, հայտնում են, որ այսուհետև դուք եք նրանց տերն ու իշխանը, կարող եք այն ուտել,

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 209, 210։

[2] Նույն տեղում, էջեր 269, 270։

վայելել, վաճառել, գրավ դնել, ժառանգություն տալ, միով բանիվ, ինչ որ կամենաք անել։ Հասկանալի է, որ նման պայմաններով հող կարող էր օտարել միայն նա, ով այդ հողի նկատմամբ ուներ սեփականության բացարձակ իրավունք։ Դժվար չէ կռահել, որ Սյունյաց իշխաններն ունեին այդ իրավունքը։ Այդ մասին է խոսում նաև այն, որ հողն օտարող իշխանն ամեն անգամ հավաստիացնում է նոր տիրոջը, որ այսուհետև ինքը, ինչպես նաև իր եղբայրներից, որդիներից, խոստակդարներից, օտարներից, ամենայն Հայոց կաթողիկոսներից ոչ ոք իրավունք չունի այդ հողի նկատմամբ որևէ հայց հարուցել, որևէ իշխանություն ունենալ, ետ գրավելու փորձեր անել և այլն։ Ուշագրավ է նաև այն, որ հողն օտարող իշխանն այն ազատում է «արքունական ծանրությունից», «բեկարից», «յամենայն հարկաց»։ Ինչպես գիտենք, ֆեոդալիզմի ժամանակ բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև հողային ռենտան, անմիջական հավաքողը հողի սեփականատերը հանդիսացող ֆեոդալ իշխանն է։ Ուստի հարկերից՝ հողային և այլ հարկերից, ինչպես նաև ռենտայից, կարող էր ազատել նա, ով այդ հողի վրա ուներ սեփականության իրավունք։ Նկատենք նաև, որ այս վավերագրերից և ոչ մեկի տակ չկա որևէ թագավորի ստորագրություն, կամ պրոֆ. Խ. Սամվելյանի բառով ասած, որևէ թագավորի «վավերացում», այդ նշանակում է, որ Սյունյաց իշխաններն իրենց հողերը օտարում էին առանց որևէ թագավորի «հաճության» և «թույլատվության»։

Մյուս կողմից, այս և մյուս վավերագրերից երևում է, որ օտարվող այդ հողերն ստացող եկեղեցին այժմ ինքն է դառնում այդ հողերի, կալվածքների բացարձակ տերն ու իշխանը։ Հողն օտարողը միանգամ ընդմիշտ հավաստիացնում է նրան «արդ՝ չկա այլ ուրուք իշխանութիւն ոչ մեր և ոչ զաւակաց մերոց և այլ ումէք իշխել ի վերայ դեղոյս»[1]։ Այդ նշանակում է, որ Սյունյաց իշխանները հողի նկատմամբ իրենց ունեցած բացարձակ սեփականության իրավունքը տալիս էին եկեղե-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 207, 210 և այլն։

ցուն։ Հողի վաճառքն այլ կերպ էլ չի կարելի պատկերացնել։

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք վերը մեջբերված փաստերը, կտեսնենք, որ 9—10-րդ դարերի Սյունիքում հողատեր իշխաններն առանց որևէ մեկի համքը հարցնելու օտարում են (վաճառում կամ ընծայում) իրենց կալվածքները։ Գոյություն ունի հողի ազատ առուծախ, ըստ որում, պայմանագրային՝ կողմերի մեջ իրավական վավերագրերով հաստատված առուծախ, որին մասնակցում է նաև ինքը՝ Բագրատունյաց թագավորը։ Հողը վաճառքի առարկա է։ Հետևապես, այստեղ որոնել հողի սեփականության պետական իրավունք, գտնել, որ թագավորն էր հողի սյուզերենն տերը, այդ նշանակում է ոչ միայն մեղանչել փաստերի նկատմամբ, այլև աղավաղել գոյություն ունեցող իրական վիճակը։

Եթե Հայաստանում Բագրատունիների ժամանակ գոյություն ունեցած հողային իրավունքը, Սյունիքի օրինակով, համեմատենք արևմտյան Եվրոպայի միջնադարյան հողային իրավունքի հետ, կտեսնենք, որ այստեղ գոյություն ունի ո՛չ թե թագավորների dominium directum, իսկ կալվածատեր իշխանների dominium utile իրավունքը, այլ գոյություն ունի մոտավորապես հողի allod-ային ձևը, ինչպես նախորդ Մարզպանական և Արշակունյաց ժամանակաշրջանի համար ընդունում են ակադ. Հ. Մանանդյանն ու Ն. Ադոնցը, համաձայն որի կալվածատեր իշխանների հողերը եղել են ժառանգական լիակատար սեփականություն[1]։

Հողի սեփականության իրավունքի հետ կապված է նաև ջրի սեփականության իրավունքը։ Մարքսիզմի հիմնադիրների գնահատությամբ ջուրն Արևելքի երկրներում ունեցել է կենսական նշանակություն։ Հայաստանի այն վայրերում, ուր գյուղատնտեսությունը վարվում էր ոռոգման միջոցով, հողի և ջրի սեփականության իրավունքը հանդես էր գալիս անխզելի միասնությամբ։ Սյունիքում ևս, չնայած իր լեռնային ռելիեֆին, կային վայրեր, ուր գյուղատնտեսությունը կապված էր ոռոգման հետ։ Ջուրը Սյունիքում ավելի մեծ նշանակություն

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 315, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 457։

էր ստանում, երբ եկեղեցուն և աշխարհիկ իշխանին անհրաժեշտ էր յուրացնել լեռնալանջերի նոր անմշակ հողերը։ Ամեն մի ջուր հոսում է, կամ կանգնած է այս կամ այն հողային տարածության մեջ, ուստի հողային իրավունքն իր մեջ ընդգրկում է նաև ջրային իրավունքը։ Ում որ պատկանի հողի սեփականության իրավունքը, նրան էլ պիտի պատկանի ջրի սեփականության իրավունքը։ Պրոֆ. Խ. Սամվելյանը, ելնելով հողի պետական սեփականության իր վերոհիշյալ կարծիքից, սխալ կերպով գտնում է, որ «ջուրը հանդիսանում էր նույնպես թագավորի dominium directum-ի անբաժանելի մասը»։ Հետևապես, ըստ նրա, «նախարարների և հետագա ֆեոդալ իշխանների dominium utile ինստիտուտի մեջ հողատիրության իրավունքի հետ օրգանապես կապվում է նաև ջրատիրության իրավունքը»[1]։ Որպես ապացույց նշում է Ս. Օրբելյանի պահպանած վավերագրերը, որոնց մեջ, իբր նվիրողները հողի տիրության իրավունքի հետ միասին տալիս են նաև ջրերի և առուների վրա ունեցած իրենց տիրության իրավունքը։ Եվ ավելացնում է՝ «այդ նվիրական վավերագրերը նույնիսկ հաստատված են թագավորի ստորագրությամբ ու կնիքով, որպես այդ հողերի ու ջրերի գերագույն սեփականատիրոջ»[2]։

Պրոֆ. Խ. Սամվելյանի մատնացույց արած վավերագրերից մեր ուսումնասիրության շրջանին վերաբերող 20-ից ավելի վավերագրերի մեջ մենք կարդում ենք՝ «արդ իշխան էք դուք... զայդ շէնդ... այդէօք, գետով և ցամաքով», «ետու շէնդ... արտով, գետով, ջրով և ցամաքով...», «ետու իւր սահմանօքդ... հողով և ջրով» և այլն։ Ինչպես արդեն տեսանք, այդ վավերագրերով օտարվող հողերի սեփականության իրավունքը պատկանում էր օտարող իշխաններին, բնականորեն, նրանց միջի ջրերի սեփականության իրավունքն էլ պատկանում էր նրանց։ Հողի հետ միասին տվյալ իշխանն օտարում էր նաև ջուրը, որպես իր ժառանգական սեփականություն։ Մենք արդեն նշեցինք, որ հիշյալ վավերագրերից և ոչ մեկը Բագրատունի և կամ մի այլ թագավորի կողմից վավերացված չէ,

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 201։
[2] Նույն տեղում։

ինչպես թյուրիմացաբար կարծում է պրոֆ. Խ. Սամվելյանը։ Դրանում համոզվելու համար բավական է աչքի անցկացնել վավերագրերի տեքստերը և վկաների ցուցակները։ Ավելորդ չենք համարում մեջ բերել այդ հարցի լուսաբանման համար շահավետ մի վավերագիր։ 932 թվին Փիլիպպե 2-րդ իշխանը Զագեձորի Վարարակ կոչված ջուրը (գետը) վաճառում է Տաթևի Հակոբ եպիսկոպոսին։ Գործարքը կատարող երկու կողմերն էլ թողնում են վավերագրեր («արձան-յիշատակք»), որոնք բարեբախտաբար հասել են մեզ։

«Կամաւն Աստուծոյ ես Փիլիպպէ՝ որդի տեառն Վասակայ, Սիւնեաց տեառն, իմ կամաւորութեամբ վաճառեցի զՎարարակն ջուրն սուրբ Գրիգորին... և գնեաց Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, ընդ 12.000 դրամի և մին մեծագին գոհարի, և վճարեաց զամենայն զինն ողջամբ. և ես առեալ եմ զգանձս և զմին գոհարն ի Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ. և ապիդար եմ ես և իմ զաւակք և այլ ազգայինք յայդ ջրոյդ յայսհետէ մինչև յափտեանս ժամանակաց. և չկայ Նորեցեաց կամ Խոտանանեցեաց կամ Շնհէրաց և Հալեցեաց յայդ ջրոյդ հաշիւ ոչ շատ և ոչ սակաւ, ոչ յարտ հատանել և ոչ ի մարդ զատել, որ մարդ եւ անասուն ջուր ըմպեն ի մատակէդ։ Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանէս ստեմք. և կամ յայդ ջրէդ կարել խորհիմք յարտ կամ ի մարդ կամ յայլ ինչ՝ յԱստուծոյ և ի սուրբ նշանէդ նզովեալ եղիցիմք, և զվերոյգրեալ անէծսդ Տեառն Յակոբայ անմահ կենօք ժամանագեսցուք»[1]։

Նույնանման բովանդակություն ունի նաև Հակոբ եպիսկոպոսի վավերագիրը, միայն այն տարբերությամբ, որ նա նշում է, թե ինքը ջրանցք է կառուցել և Վարարակի ջուրը բերել վանքի շրջանը[2]։

Ոչ մի թագավորի կողմից չվավերացված այս փաստաթղթի ոչ միայն բովանդակությունից, այլ անգամ ձևից երևում է, որ վաճառվող այս ջրի սեփականության իրավունքը պատկանել է Փիլիպպեին, իսկ վաճառելուց հետո՝ Տաթևի վանքին,

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 255, 256։

[2] Տես նույն տեղը, էջեր 254, 255։

որ ջուրը ևս հանդիսացել է առուծախի առարկա, այն վաճառվել է ոչ միայն հողի հետ միասին, այլ նաև հողից անջատ։ Փիլիպպեն իր ջուրը վաճառել է կամավոր համոզմունքով, որի նկատմամբ այնուհետև ինքը, իր զավակներից և ազգականներից ոչ մեկը սեփականության իրավունք չի ունենալու։ Ավելին, նրանք, ինչպես նաև հարևան գյուղացիները, անգամ այդ ջրից օգտվելու իրավունք չեն ունենալու մինչև «յափտեանս ժամանակաց»։ Ակներև է, որ նման վաճառք կարող էր կատարել միայն ջրի նկատմամբ սեփականության բացարձակ իրավունք ունեցող մարդը։ Ուշադրության արժանի է և այն, որ Սևանա լճի ջրային զանգվածը սկզբնաղբյուրներում համարվում է իբրև Գեղարունի իշխանների հայրենական ժառանգության բաղկացուցիչ մասը[1]։

Այս բոլորից հետո մենք համոզված կերպով կարող ենք պնդել, որ 9—10-րդ դարերում Սյունիքում հողի և ջրի սեփականության գերագույն իրավունքը պատկանում էր ոչ թե թագավորներին՝ պետությանը, այլ իրենց՝ Սյունյաց կալվածատեր իշխաններին և կալվածատեր եկեղեցուն։ Եվ որ վերջիններս հողի և ջրի նկատմամբ ունեին ոչ թե dominium utile իրավունք, այլ dominium directum իրավունք։

* * *

Ո՞վքեր էին կալվածատեր այդ իշխանները և ի՞նչ տերմիններով էին անվանվում նրանք։

Սկզբում ցույց ավեցինք, որ Սյունյաց նախարարության քայքայումով նախկին սեպուհները բաժանելի և ժառանգական իրավունքով սեփականացրին այդ նախարարության կալվածքները և դառնալով այդ հողերի բացարձակ սեփականատերեր նրանք վերածվեցին ինքնուրույն ֆեոդալ իշխանների։ Սոցիալական և քաղաքական այս բարձրացումը փոխեց նաև նրանց կոչումը։ Եվ իրոք, 9-րդ դարի սկզբում մենք այս իշխաններին գտնում ենք մի բոլորովին նոր՝ «զահակալ» կոչումով։ Մենք տեսանք նաև, որ 9-րդ դարի սկզբում առաջին զահակալ իշ-

[1] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 176 և Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 199։

խաններն էին Վասակը, նրա որդիներ Փիլիպպեն, Սահակը և Գրիգորը։ Փիլիպպեն և Սահակը գահակալ իշխաններ դառան իրենց հոր մահվանից հետո, երբ նրա ընդարձակ կալվածքները բաժանեցին իրար մեջ և ստեղծեցին առանձին իշխանություններ։ Գահակալ տերմինը եթե լիներ սոսկ Վասակի տիտղոսը՝ առանց որևէ սոցիալական հիմքի, ապա նրա մահվանից հետո այն չպետք է անցներ իր երկու որդիներին էլ, կամ լավագույն դեպքում պիտի անցներ մեկին։ Ուստի, մեր կարծիքով, գահակալ տերմինն ունի սոցիալական հիմք։ Ելնելով այն բանից, որ Վասակի թե՛ կալվածքները, և թե՛ գահակալ կոչումն իր մահվանից հետո իրար մեջ բաժանեցին նրա որդիները, սխալված չենք լինի, եթե ասենք, որ գահակալ տերմինը խիստ կերպով կապված է հող, կալվածքներ ունենալու հետ։ Եթե ընդունելի է մեր այս դիտողությունը, ապա գահակալ իշխան կոչվում էին բոլոր այն իշխանները, որոնք ունեին իրենց սեփական կալվածքները։

Եվ իրոք, Օրբելյանի հիշած բոլոր գահակալ իշխաններն ունեին իրենց առանձին, սեփական կալվածքները՝ «հայրենական ժառանգությունք»։ Բնական է, որ տվյալ իշխաններն իրենց այդ տիրապետություններում, հողի սեփականության հիման վրա, ունեին նաև քաղաքական իշխանություն, իրենց նստավայրը, քաղաքական կենտրոնը, գահատեղին։ Ըստ Հայկազյան Բառարանի «գահ» բառը նշանակում է նաև իշխանություն, հետևապես, գահակալ նշանակում է իշխանություն ունեցող, իշխանություն բռնող։ Ուստի «գահակալը» թեև քաղաքական տերմին է, բայց ունի սոցիալական հիմք, այն է՝ սեփականության իրավունքով հողային խոշոր կալվածքներ ունենալը։

Նախարարական սիստեմի քայքայումը և ֆեոդալիզմի նոր որակի վերածվելը Սյունիքում ծնեց ոչ միայն այս գահակալ նոր տերմինը՝ նոր բովանդակությամբ, այլև փոփոխության ենթարկեց նախարարական շրջանի մի շարք տերմինների բովանդակությունը։ Այսպես, օրինակ՝

ՆԱՀԱՊԵՏ.— 9—10-րդ դարերի Սյունիքում, թեև քիչ, բայց գործածական է «նահապետ» տերմինը։ Ս. Օրբելյանը «մեծ նահապետ» է կոչում Վասակ 1-ինին, Գեղաքունի գահակալ

իշխաններ Սահակին, Գրիգոր Սուփան 1-ինին և այլն։ Այլ կերպ ասած՝ նահապետ են կոչվում բոլոր գահակալ իշխանները։

Հայագիտության մեջ ֆեոդալիզմին նվիրված մի շարք աշխատություններում նահապետը համարվել է հոմանիշ «տանուտէր», «տէր» (նախարար) անվանումներին[1]։ Այդպես է կոչվել նա, ով «գլխաւոր էր իւրաքանչիւր տոհմի նախարարութեան, կոչելով տէր Սիւնեաց, տէր Մամիկոնէից, յորոյ ի ձեռին էր տէրութիւն երկրի նոյն տոհմին, ևս և տէրութիւն ի վերայ զօրաց այնր տոհմի»[2]։ Այս բացատրությունը վերաբերում է Արշակունյաց և Մարզպանական Հայաստանին, երբ կանգուն էր նախարարական սիստեմը։ Իսկ այժմ, 9—10-րդ դարերում, գոնե Սյունիքում, այդ տերմինների իմաստն այլ է։ Եթե նախկինում «նահապետ», «տանուտէր», կամ «տէր Սյունյաց» արտահայտության տակ հասկացվում էր միևնույն անձնավորությունը, որը հանդիսանում էր Սյունյաց ֆեոդալական տոհմի նախարարության գլխավորը, պետը, ապա այժմ «նահապետ Սիւնեաց» արտահայտությունն իր նախկին նշանակությամբ չէր կարող հասկացվել, քանզի, այժմ Սյունիքում չկար մի տոհմի, ցեղի նախարարություն։ Մի ամբողջական նախարարության փոխարեն գոյացել էին բազմաթիվ ինքնուրույն գահակալ իշխաններ, որոնք ոչ թե ֆեոդալական-տոհմային, այլ զուտ ֆեոդալական հատկանիշ ունեին։ Եթե նախկինում «նահապետ», «տանուտէր», «տէր Սյունյաց» արտահայտության տակ հասկանում էինք մի անձնավորություն, որի ձեռքում էր գտնվում Սյունյաց ֆեոդալական տոհմի, երկրի և զորքի իշխանությունը, ապա այժմ «նահապետ Սիւնեաց»

---

[1] „Синиор назывался соответственно *տէր* и *տանուտէր* или *նախարար* и *նահապետ*. В дошедших до нас исторических памятниках термины эти чередуются между собою, как реально синонимные понятия, с той лишь особенностью, что у одних авторов употребляются преимущественно одни из них, а у других—другие". Н. Адонц, „Армения в эпоху Юстиниана", էջ 463։

[2] Հ. Տ. Ինճիճյան, Հնախոսութիւն Հայաստանեայց աշխարհի, հ. 2-րդ, Վենետիկ, 1835, էջ 78. նույն կարծիքին է նաև И. Джавахов-ը, տես „Государст. строй древней Грузии и древней Армении", том I, С. Петербург, 1905, էջ 101—102։

ասելով չենք կարող այդպես հասկանալ, քանզի, այժմյան Սյունիքը մի տոհմի պատկանող ամբողջական տերիտորիա չէր, այլ ծվատված էր բազմաթիվ ֆեոդալական ինքնուրույն իշխանությունների, ուր թե՛ իշխանությունը, և թե՛ զորքի ղեկավարությունը պատկանում էր տվյալ իշխանության տեր գահակալ իշխանին։ Գրիգոր Սուփան 1-ինը, որը «նահապետ» է հորջորջվում, ո՛չ թե ողջ Սյունյաց ֆեոդալական տոհմի գլխավորն էր, այլ միայն Գեղաքունի գավառի գլխավորը, ո՛չ թե ամբողջ Սյունիքի տիրակալն էր, այլ միայն Գեղաքունիքի։

Այսպիսով, կասկածից դուրս է, որ «նահապետն» այժմ չունի իր նախկին իմաստը։ Նա նախարարական շրջանի տերմին է, որը վերապրուկի ձևով, շատ սակավ դեպքերում, գործածական է այժմյան գահակալ իշխանների նկատմամբ։ Վերջիններս հանդիսանալով իրենց երկրի կալվածքների սեփականատերերը, իշխանավորները և զորական ուժի հրամանատարները, ձևական նմանությամբ միայն կարող էին անվանվել «նահապետ» և կամ «նախարար»։ Եվ հենց այդ նմանության իմաստով էլ պետք է հասկանալ աղբյուրների կողմից նրանց այդպիսի անվանումը։

Սեպուհ.— Նման վերապրուկ է նաև «սեպուհ» տերմինը։ 9—10-րդ դարերում այս տերմինը համարյա ամբողջապես չքացել է Սյունիքում. ո՛չ աղբյուրներում, ո՛չ էլ վավերագրերում չենք հանդիպում դրան։ Այդ հասկանալի է, որովհետև այդ տերմինը նախարարական ինստիտուտի տիպիկ տերմին է։ Ինչպես գիտենք, Արշակունյաց և Մարզպանական շրջանի Հայաստանում սեպուհ էին կոչվում նախարարական տոհմերի և Արշակունյաց թագավորական տոհմի անդամները[1], իսկ դրանցից ավագը, որը հաջորդելու էր տանուտերին կամ նահապետին, կոչվում էր «աւագ սեպուհ»[2]։ Բնական է, որ նախարարական սիստեմի քայքայման հետ միասին չքացավ նաև նրան հատուկ այս տերմինը։ Այժմ Սյունյաց գահակալ իշխաններն իրենց որդիներին և ազգականներին անվանում էին ոչ թե սեպուհ, այլ իրերի բնական անունով՝ որդի, եղբայր,

[1] Ակադ. Հ. Մանանդյան, Դիտողություններ հին Հայաստանի շին. գրության մասին Մարզպ. շրջանում, Երևան, 1925, էջ 12։

[2] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջեր 472, 473։

ազգական և այլն[1]։ Բայց, այնուամենայնիվ, Մ. Օրբելյանը երկու անգամ գործ է ածում «սեպուհ» տերմինը։

Խոսելով Վասակ Գաբուռի մահվան մասին, նրան կոչում է «մեծ սեպուհ իշխանն Սիւնի»[2]։ Այստեղ «մեծ սեպուհ» («աւագ սեպուհ») տերմինը հին իմաստով հասկանալը կլիներ անհեթեթություն, որովհետև Վասակ Գաբուռը ոչ թե որևէ նախարարական տոհմի ավագ անդամն էր, որը պետք է հաջորդեր այդ տոհմի տանուտերին կամ նահապետին՝ նրա մահվանից հետո, այլ նա ինքն իշխան ու տիրակալ էր մի առանձին, ինքնուրույն գահակալ իշխանության։ Ջավախովը սեպուհ տերմինին տալիս է այլ բացատրություն ևս, այն է՝ «աւագ սեպուհ» անվանել են նախարարական տոհմի կարևորության համաձայն[3]։ Մեր կարծիքով Վասակ Գաբուռը հենց այս իմաստով է անվանված «մեծ սեպուհ»։ Իրոք, Սյունիքի գահակալ իշխանների մեջ, բուն գահերեց իշխաններից հետո, ամենաուժեղն ու ազդեցիկը Գեղաքունիքի իշխանությունն էր, որի իշխանն էր Վասակ Գաբուռը։

Օրբելյանն իր «Ողբ»-ի մեջ Սմբատ 2-րդ իշխանի մասին գրում է. «Սմբատ սեպուհ քաջազարմիս»[4]։ Եթե անգամ նկատի չունենանք, որ սա բանաստեղծական մի տող է, ինքնին պարզ է, որ այստեղ սեպուհ ասելով Օրբելյանն ուզեցել է ցույց տալ, թե Սմբատ 2-րդը վերջին գահերեց Վասակի անմիջական ժառանգը չէ, այլ գահերեցների ճյուղից անջատված և առանձին գահակալ իշխանություն կազմած Սահակի որդին է[5]։ Այս դեպքում էլ Սմբատ 2-րդին հին իմաստով սեպուհ համարելը կլիներ անհեթեթություն, քանզի նա ոչ միայն գահերեց իշխան դառավ, այլև թագավոր հայտարարեց իրեն։

ՏԵՐ և ԻՇԽԱՆ.— 9—10-րդ դարերի Սյունիքում «տէրը» ամենից շատ գործածված տերմինն է։ Մենք նրան հանդիպում

[1] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 207, 210, 236 և այլն։

[2] Նույն տեղում, էջ 172։

[3] И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, էջ 127։

[4] Ս. Օրբելյան, Ողբ, Թիֆլիս, 1883, էջ 37։

[5] Տես Հավելվածը և Սխեման։

ենք թե՛ պատմիչների մոտ, թե՛ վավերագրերում, և թե՛ վիմական արձանագրություններում։ «Տէր»-ի հին իմաստի հետ մենք արդեն ծանոթացանք վերևում։ Հին այդ իմաստով չէ, որ գործ է ածվում այժմ։ «Տէրը» այժմ հանդես է գալիս «իշխանի» հետ համազոր։ Բոլոր իշխանները կոչվում են թե՛ իշխան, թե՛ տեր։ Այսպես, օրինակ՝ «տեառն Փիլիպպէէ՝ իշխանէն Սիւնեաց» և կամ «ի տէր Փիլիպպէէ՝ ... Սիւնեաց տեառնէ»[1]։ «Իշխանն Սիւնի Սահակ» և կամ «Սահակ Սիւնեաց տեառն»[2]։ «Վասակ Սիսական իշխան» և կամ «տեառն Վասակայ Սիսնեաց տեառն»[3]։ Սկզբնաղբյուրներում «տէր» են անվանված բոլոր գահակալ իշխանները։ Այս տեսակետից խիստ ուշագրավ են մեզ հասած վավերագրերի վերջում եղած վկաների ցուցակները։ Հնարավորություն չունենալով բոլոր ցուցակները մեջ բերել, որպես նմուշ նշենք միայն մեկը։ Փիլիպպե 1-ինի 844 թվագիր վավերագիրն ունի վկաների մի ընդարձակ ցուցակ, որի մեջ վկաները բաժանված են երեք խմբի՝ տերեր, ազատներ և հոգևորականներ[4]։ Տերերը, որոնք ցուցակի սկզբում են և թվով 8 հոգի, բոլորն էլ մեզ հայտնի գահակալ իշխաններն են[5]։ Ազատները, թվով 18 հոգի, կազմում են 2-րդ խումբը, որոնց անուններին կից «տէր» կոչումը չկա[6]։ Այսպիսով, տեր են կոչվում, համարյա, միայն իշխանները։

Նույնը տեսնում ենք նաև այլ վավերագրերի ցուցակներում[7]։ Չնայած «տէրի» և «իշխանի» այս համազորությանը, այնուամենայնիվ գտնում ենք, որ դրանք ամենևին էլ նույնը չեն և արտահայտում են տարբեր բովանդակություն։ «Տէրը»

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 204, 205։

[2] Նույն տեղում, էջեր 170, 175, 185, 255։

[3] Նույն տեղում, էջ 125, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 136։

[4] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 207, 208։

[5] Համապատասխան անունները տես հավելվածում։

[6] Բացառություն են կազմում 5-ը, որոնցից 3-ը իր՝ Փիլիպպեի որդիներն են, իսկ երկուսը՝ «ազատներ»։

[7] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 175, 205, 210, 216, 220 և այլն։

արտահայտում է տվյալ անձի հողային սեփականության իրավունքը, իսկ «իշխանը» նրա տվյալ հողի վրա ունեցած քաղաքական իշխանությունը։

Մեր այս ենթադրությունը հավանական է դարձնում հետևյալ փաստը։ 906 թվի Տաթևի վանքի նոր սահմանը որոշող սիգելի մեջ տեսնում ենք, որ սիգելի հեղինակները Սյունյաց թեն իշխաններն են («մեք Հայկազնի իշխանքս Սիւնեաց...»)։ Դրանք են՝ Աշոտն իր երեք որդիներով, Գրիգոր Սուփան 2-րդն իր երկու եղբայրներով և Զագիկն իր մեկ որդիով։ Սրանցից միայն 3-ի՝ գահակալ իշխաններ Աշոտի, Գրիգորի և Զագիկի անուններից առաջ գրված է «տէր» կոչումը, իսկ նրանց որդիների և եղբայրների անունների առաջ՝ ոչ։ Բայց հետագայում, երբ Աշոտի և Զագիկի մահվանից հետո նրանց հաջորդում են որդիները, իսկ Գրիգոր Սուփանի մահվանից հետո նրան հաջորդում են եղբայրները, սրանք արդեն կոչվում են «տէր»։ Ավելի պարզ ասած, երբ դեռ կենդանի էր Աշոտ «տէր» և «իշխանը» նրա երեք որդիները չէին կրում «տէր» կոչումը. իսկ Աշոտի մահվանից հետո, երբ որդիները նրա կալվածքները բաժանեցին իրար մեջ, սկսեցին կրել նաև «տէր» կոչումը։ Դժվար չէ ըմբռնել, որ «տէրը» կապվում է հողային սեփականության իրավունքի հետ։ Անգամ ազատներից ոմանք, ովքեր սեփական հողեր ունեին, կոչվում էին «տէր»։ Այս տիպի ազատներ էին, օրինակ՝ Փիլիպպեի վերոհիշյալ սիգելի երկրորդ խմբի վկաների մեջ հիշատակված երկու ազատները։

Եվ այսպես, «տէր» տերմինը 9—10-րդ դարերում Սյունիքում կորցրել էր իր հին, նախարարական շրջանի իմաստը (համազոր տանուտեր, նախարար, նահապետ տերմիններին) և ստացել էր նոր իմաստ, այսինքն՝ այժմ այն արտահայտում է ավելի կոնկրետ միտք՝ հողի սեփականության ֆեոդալական իրավունքը։ Ով ուներ հողի նկատմամբ սեփականության ֆեոդալական իրավունք, նա «տէր» էր։ Մենք վերևում ասացինք, որ տերն այժմ հանդես է գալիս իշխանի հետ համազոր։ Ավելացնենք, որ այդ պետք է ընդունել որոշ վերապահումով։ Բոլոր տերերը չէ, որ կոչվում էին իշխաններ։ Իշխան էին կոչվում միայն այն տերերը, որոնք ունեին մեծ կալվածքներ, որոնց վրա նստած գյուղացիների նկատմամբ նրանք

կարող էին, իրենց «տէր» լինելու պատճառով, քաղաքական իշխանություն բանեցնել, «իշխան» դառնալ։ Իսկ այն տերերը, որոնք ունեին փոքր հողակտորներ, իբրև սեփականություն, որոնց վրա կա՛մ չէին նստած գյուղացիներ, և կա՛մ նստած էին ընչին քանակությամբ, չէին կարող ունենալ քաղաքական իշխանություն, հետևապես չէին կարող «իշխան» կոչվել, ինչպես, օրինակ՝ վերոհիշյալ երկու ազատները։ Այս է պատճառը, որ բոլոր իշխանները միաժամանակ անպայման տեր էին, իսկ բոլոր տերերը միաժամանակ անպայման իշխաններ չէին։

Գահերեց իշխան.— Այս տերմինը որպես այդպիսին նոր չէ։ Այն գոյություն ուներ դեռ Արշակունիների ժամանակ։ Սակայն արմատական տարբերություն կա այդ ժամանակվա գահերեց հասկացողության և 9—10-րդ դարերում Սյունիքում եղած գահերեց հասկացողության մեջ։ Ագաթանգեղոսի, Փավստոսի և այլ հին մատենագիրների մոտ գահերեց էին կոչվում այն մեծամեծ նախարարները, որոնք Արշակունյաց, իսկ նրանից հետո Մարզպանական շրջանում, հայկական և պարսկական արքունիքներում ունեին բարձր դիրք և գոյություն ունեցած գահնամակների հիման վրա գրավում էին առաջնակարգ բարձեր։ Մինչդեռ 9—10-րդ դարերի Սյունիքի գահերեցները կապ չունեն որևէ արքունիքի և նրա գահնամակի հետ։ Սյունյաց Փիլիպպե 1-ինը և այլ իշխաններ գահերեց էին կոչվում դեռ այն ժամանակ, երբ տակավին ստեղծված չէր Բագրատունյաց թագավորությունը։

Եվ բացի այդ, հնում գահերեց էին կոչվում նախարար իշխանները, ասենք Սյունիքի Անդոկ, Վասակ և այլ նախարար իշխանները, որոնք հանդիսանում էին ողջ Սյունիքի նախարարության տերերը, նահապետները բուխ նախարարական շրջանի իմաստով։ Մինչդեռ 9—10-րդ դարի Սյունիքում գահերեց էին կոչվում գոյություն ունեցող վերոհիշյալ գահակալ իշխանների ճյուղերից մեկի ներկայացուցիչները, որոնք չէին հանդիսանում ողջ Սյունիքի տերերն ու նահապետները։ Մենք արդեն տեսանք, որ Վասակի մահվանից հետո նրա կալվածքները բաժանելով իրար մեջ, երկու որդիներն էլ դարձան գահակալ իշխաններ, բայց նրանցից ավագը, Փիլիպպեն միաժամանակ դառնում է «գահերէց» իշխան — «Եւ լինի Փիլիպպէ

գահերէց իշխան Սիւնեաց»[1]։ Ինքնին հասկանալի է, որ «գահերէցը» միաժամանակ գահակալ էր։ Մեր կարծիքով գահերեց տերմինն իր մեջ բովանդակում է քաղաքական իշխանության իմաստ։ «Գահերէց» նշանակում է գահով (=իշխանությամբ) երեց։ Եվ իրոք, աղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս շրջանում Սյունիքում «գահերէց» իշխանն իր քաղաքական դիրքով ավելի բարձր էր կանգնած, քան գահակալ մյուս իշխանները։ Ֆեոդալական աշխարհում քաղաքական բարձր դիրք ունենալն, անշուշտ, կախված էր կալվածքների մեծությունից և զորական ուժի հզորությունից։ Սյունիքի գահակալ իշխաններից նա կարող էր դառնալ գահերեց, ով ուներ այդ միջոցները։ Մեզ հայտնի հինգ գահակալ ճյուղերից այդպիսիք ուներ առաջինը, Փիլիպպե 1-ինով սկսվող ճյուղը, որի ներկայացուցիչներն էլ հաջորդաբար դարձել են գահերեցներ 9—10-րդ դարերի ընթացքում[2]։ Ըստ որում նրանց կալվածքները եղել են Սյունիքի կենտրոնական գավառները[3]։ Թերևս այդ էր պատճառը, որ Ս. Օրբելյանը նրանց կալվածքները համարում է «բուն գահ իշխանացն Սիւնեաց»[4]։

9—10-րդ դարերում Սյունիքի գահերեց իշխանների քաղաքական բարձր դիրքը բնավ որևէ չափով սեփականատիրական իրավունք չի ընձեռել նրանց՝ մյուս գահակալ իշխանների հողերի ու ջրերի հանդեպ։ Համոզվելու համար բավական է նայել վերոհիշյալ վավերագրերը, ուր պարզ երևվում է, որ գահակալ իշխաններն ազատ կերպով, առանց գահերեց իշխանի հաճությունն ու թույլատվությունն առնելու, օտարել են, այսինքն՝ վաճառել, նվիրել, փոխանակել, ինչպես և գնել են հողեր ու ջրեր սեփականատիրական բացարձակ իրավունքով։ Ավելին. իրենք՝ գահերեց իշխանները, ինչպես նաև նրանց կանայք հողեր են գնել գահակալ իշխաններից,

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 296։

[2] Ս. Օրբելյանը միայն մեկ անգամ «գահերէց» է անվանում 3-րդ ճյուղի Գրիգորին, իսկ նրա որդուն էլ մեկ անգամ «իշխանաց իշխան»։

[3] Դեր է խաղացել նաև տերիտորիայի դիրքը, որը հնուց ի վեր Սյունիքի քաղաքական կյանքի կենտրոնն է եղել։

[4] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 176։

կատարել են փոխանակումներ։ Ուշագրավ է և այն, որ 906 թվի նավակատիկի ժամանակ գահակալ իշխանները գահերեց Աշոտ իշխանի, ինչպես և Թագավորի ներկայությամբ, իրենց կալվածքները նվիրել են վանքին իրենց նախաձեռնությամբ ու կամքով։ Այդ նույն տեղում Տաթևի նոր սահմանները որոշել են գահերեց և գահակալ իշխանները միասին։ Եթե Սյունյաց հողերի սեփականության իրավունքը պատկաներ գահերեց իշխանին, ապա նա այդ սահմանները և «գիր-վճիռը» կդրեր միայն իր անունից, այնինչ նա գրված է բոլորի անունից։ Գահակալ իշխանների կատարած հողի և ջրի առուծախի վերաբերյալ կնքված սիգելներից և ոչ մեկը չի վավերացված գահերեց իշխանի կողմից[1]։

Այսպիսով, հողի սեփականության իրավունքի տեսակետից, բոլոր գահակալ իշխանները, ներառյալ նաև գահերեցությունն ունեցող գահակալ իշխանը հավասար էին։ Գահերեցի սեփականության իրավունքը տարածվում էր միայն իր հողերի վրա, ինչպես և ամեն մի գահակալ իշխանինը՝ իր հողերի վրա։ Գահերեցի առաջնությունն ու քաղաքական բարձր դիրքը ոչ թե հողային սեփականության իրավունքի

[1] Գահերեց իշխան Փիլիպպե 1-ինի քույր Բուպդիզուխտը իր թողած վավերագրում (Ս. Օրբելյան, էջ 219) վկայում է, որ Մահ գյուղը սկզբում իր եղբայր Ադրներսեհը տվել էր իրեն, իսկ իր ամուսնությունից հետո այդ նույն եղբայրը նույն գյուղը վաճառել էր իր ամուսնուն, իսկ ամուսինն էլ իր հերթին վաճառել ու «հոգեցատուր» էր արել իրեն Բուպդիզուխտին։ Այս վկայությունը բացի գահերեց իշխանական տան անդամների և գահակալ իշխանների միջև վարվող հողային առևտուրը ցույց տալուց, նաև ցույց է տալիս, որ աղջիկը հայրական ժառանգությունից, ինչպես նաև ամուսնու ժառանգությունից հող ժառանգելու իրավունք չունի։ Նրա հարազատները (հայրը, եղբայրը), ինչպես նաև ամուսինը, կարող են նրան հող նվիրել կամ ծախել։ Եթե նա նման հողը ստացել է իր հայրական տանը, ապա ամուսնանալիս այդ հողի սեփականության իրավունքը չի կարող դուրս տանել։ Կարճ ասած, կինը չի կարող ժառանգական հող ունենալ, ժառանգությունն անցնում է արական սերնդին։ Կինը կարող է հողը գնել միայն։ Այդ մասին են ասում նաև այն բոլոր փաստերը, երբ այս կամ այն կինը (իշխանուհին), լինի դա գահերեց, թե մյուս գահակալ իշխանների կին, վանքերին նվիրած հողերը գնում է։ Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 174, 259—262 և այլն։

մեջ էր, այլ տնտեսական հզորության՝ հողերի քանակության մեծության մեջ։ Այդ պատճառով էլ գահակալ մյուս իշխանների վասալական հպատակությունը գահերեցին ոչ թե հողային կախում էր, այլ անձնական կախում։

ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐ.— 9—10-րդ դարերում Սյունիքում «նախարար» տերմինը, որպես նախարարական շրջանի տիպիկ տերմին, իսպառ չքացել էր։ Բացառություն է կազմում միայն մի դեպք, երբ Ս. Օրբելյանը մեկ անգամ Աշոտին կոչում է «մեծ նախարար Սիւնի գահերէց»[1]։ Ինչպես տեսնում ենք «նախարար» է կոչված գահերեց իշխանը։ Հասկանալի է, որ այստեղ «նախարարը» չունի և չի էլ կարող ունենալ իր նախկին իմաստը։ Նա ևս «նահապետ» տերմինի նման նախորդ շրջանի վերապրուկ է միայն։ Ուշագրավ է նաև այն, որ գահերեց Աշոտ Սյունին անվանված է ոչ թե նախարար, այլ «մեծ նախարար»։ Այդ բանը հեշտությամբ բացատրվում է։ Վերևում նահապետ տերմինի մասին խոսելիս ասացինք, որ գահակալ իշխանները լինելով իրենց երկրի, կալվածքների սեփականատերերը, իշխանավորներն ու զորական ուժի հրամանատարները, ձևական նմանությամբ միայն կարող էին անվանվել «նահապետ» և կամ «նախարար»։ Այս նշանակում է, որ 9—10-րդ դարերում Սյունիքի բոլոր գահակալ իշխաններին անցած նախարարական շրջանի տերմիններով անվանելու դեպքում, պետք է կոչեին «նախարար» կամ «նահապետ»։ Իսկ որովհետև գահերեց իշխանը իր քաղաքական դիրքով բարձր էր մյուս գահակալ իշխաններից, ուստի նրան պետք է կոչեին «մեծ նախարար» և կամ «մեծ նահապետ»։ Եվ իրոք այդպես էլ կոչել են. գահերեց Աշոտը կոչված է «մեծ նախարար», իսկ Վասակ 1-ինը՝ «մեծ նահապետ»։

Իշխանաց իշխան.— Այս կոչումը Հայաստանում հանդես է գալիս Արաբական խալիֆաթի տիրապետության շրջանում։ Արաբ խալիֆները նման կոչում էին տալիս հայ նշանավոր իշխաններից մեկին։ Այդ կոչման բովանդակությունն այն էր, որ տվյալ հայ իշխանին էր հանձնված լինում ողջ Հայաստանի կառավարումը և նա համարվում էր մնացած հայ

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 184։

իշխանների իշխանը։ Սյունիքում 9—10-րդ դարերում «իշխանաց իշխան» են կոչվում դահերեց իշխանները[1]։ Սակայն այստեղ այն չունի արաբների տիրապետության ժամանակվա վերոհիշյալ իմաստը։ Սյունիքի դահերեց իշխանը «իշխանաց իշխան» էր միայն Սյունիքի մյուս դահակալ իշխանների նկատմամբ և ոչ թե ողջ Հայաստանի իշխանների նկատմամբ։ Կարծես հենց այդ է շեշտել Ս. Օրբելյանը Վասակին բնութագրելով «իշխանաց իշխեցող»։ Նա քաղաքական սյուզերենի դիրք ուներ Սյունիքի մյուս դահակալ իշխանների նկատմամբ, և ոչ թե կառավարչական իրավունքներ՝ ողջ Հայաստանի նկատմամբ։ 9—10-րդ դարերում Սյունիքում «իշխանաց իշխանը» հավասար էր «դահերէց» կոչմանը։

Նշենք նաև, որ Բաղաց թագավորության հիմնումով «իշխանաց իշխան» կոչումը չվերացավ Սյունիքում, այլ մնաց և ընդունեց ուրիշ բովանդակություն, մեր կարծիքով, սպարապետի իմաստ։ Այդ երևում է Ս. Օրբելյանի հետևյալ վկայությունից։ Բաղաց Վասակ թագավորն իր եղբայր Սևադային «կացուցանէ իշխան իշխանաց ազատակոյտ զորաց իւրոց»[2]։ Նույն այս բովանդակությունն ստացավ «իշխանաց իշխանը» Բագրատունիների և Արծրունիների մոտ՝ նրանց թագավորությունների հաստատումից հետո[3]։

Սրանք էին ահա աշխարհիկ կալվածատեր իշխանները, որոնք dominium directum իրավունքով իշխում էին հողերին Սյունիքում 9—10-րդ դարերում։

Շահագործող այս դասակարգի օրգանական մասն էր կազմում նաև Սյունիքի եկեղեցական կազմակերպությունը։

Հայտնի է, որ քրիստոնեությունը, դառնալով ֆեոդալական հասարակարգի պաշտոնական կրոնը, կորցնում է իր սկզբնական պարզ, համեստ տեսքը և ֆեոդալանում է[1]։

Ն. Ադոնցը նշում է, որ քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն հայտարարվելուց, նախարարական միջավայր ընկնելուց հետո տնտեսապես և քաղաքականապես վերակառուցվում է, ֆեոդալանում է ըստ իր նախարարական միջավայրի[2]։

Բնական է, որ Սյունիքում էլ եկեղեցին պիտի ընթանար նույն արահետով։ Սկզբնաղբյուրների վկայությունից երևում է, որ քրիստոնեությունը Սյունիքում հաղթանակեց ավելի ուշ, քան Հայաստանի մնացած մասերում։ Հեթանոսությունը Սյունիքում իրեն կգալ էր տալիս ընդհուպ մինչև 7-րդ դարը։ Բայց այնուամենայնիվ, ֆեոդալ իշխանների օրինակով ու նրանց օժանդակությամբ եկեղեցին Սյունիքում ընդունեց ֆեոդալական կերպարանք։

Աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Սյունյաց եպիսկոպոսության ֆեոդալականացումը տեղի ունեցավ դանդաղ, դարերի ընթացքում։ Այնտեղ եղած հին եկեղեցիները՝ Շախատի, Գյուտքահանայի, Թանհատի, Մաքենոցաց և այլ եկեղեցիները, անշուշտ, ունեին իրենց հողակտորները՝ կալվածքները[3]։ Բայց ամբողջությամբ վերցրած, ինչպես շատ որոշակի երևում է Ս. Օրբելյանի վկայությունից, Սյունիքի եպիսկոպոսությունը մինչև 8-րդ դարը չի ունեցել ձևավորված ֆեոդալական տիպի մի ամբողջական կազմակերպություն՝ իր կենտրոնով ու հողատիրության հարուստ ժառանգությամբ։ Սյունիքի եպիսկոպոսները շրջել ու դեգերել են բնակավայրերում, հրապարակներում, դավառներում, իշխանական տներում, ապրել են քաղաքներում, գյուղերում, հոտի մեջ[4]։

---

1 Տես Հավելված՝ Սմբատի բաժինը։

2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 301։

3 Բագրատունյաց, Արծրունյաց և այլ թագավորությունների մեջ «իշխանաց իշխանի» այս նոր բովանդակության ուսումնասիրությունը մեր թեմայից դուրս է։ Բայց նշենք, որ մեր այս թռուցիկ դիտողությունն ապացուցող փաստեր ունենք մեր ձեռքի տակ։ Համաձայն չենք Ինճիճյանի այն կարծիքին, որ «իշխանաց իշխանը» Բագրատունիների ժամանակ գրաղվում էր միայն հարկեր հավաքելով, այսինքն՝ նա նման էր Արշակունիների շրջանի «2-րդ արքայի» կոչված անձին։ Տես «Հնախոս», հ. 2, էջ 217։

1 Տես Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 58։

2 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջեր 322, 323, 361։

3 Այդ հողերի մի մասը հին մեհյանների հողերն էին, որոնք գրավեց եկեղեցին, մի մասն էլ Սյունյաց նախարարությունն էր նվիրել։

4 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 201, 202, նաև 139, 143։

Միայն հետագայում արդեն անպատշաճ են համարել թափառումներն ու դեգերումները, անցել են նստակյաց կյանքի։ Իրենց համար կենտրոն են ընտրել Տաթևը, որը գտնվում էր «ի մեջ երկուց արքունական գահոյիցն Սիւնեաց և Բաղաց»։ Հատկապես այդ տեղն են ընտրել, որովհետև նա ապահով տեղ էր՝ գտնվում էր երկու «արքունական գահոյց» արանքում, ամուր և «հեռի յամենայն հինից թշնամեաց»[1]։ Տաթևը կենտրոն դարձնելու իրավունքը խնդրում են Սյունյաց (Ծղուկի) և Բաղաց իշխաններից։

Ս. Օրբելյանը մոտավորապես նշում է նաև Տաթևը կենտրոն դարձնելու ժամանակը։ Նա վկայում է, որ Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակ Տաթևը դեռ կենտրոն չէր։ Այդ Ստեփանոս եպիսկոպոսը Մողան կոչված վայրում սպանվում է մի կնոջ ձեռքով 728 թվականին[2]։ Խոսելով Տաթևը Սյունյաց եկեղեցու կենտրոն դարձնելու ժամանակի մասին Ս. Օրբելյանը վկայում է՝ «Բայց վերբն ու զառաջին եպիսկոպոսն որ աստ (Տաթև — Հ. Ուր.) եկն ոչ ծանեայ. միայն մի տէր Գեորգեայ և այսր դտայ նշան և կացի ծանօթ ամենայն որպեսութեանց նոցա. այլ զառաջինսն ոչ գիտեմ զի ոչ զոյր յիշատակ ինչ, բայց գիտեմ զի բաղում ժամանակօք բնակեալ էին»[3]։

Այս Գևորգ եպիսկոպոսը 728 թ. Մողանում սպանված Ստեփանոս եպիսկոպոսի հաջորդներից ութերորդն է, որը, ըստ Ս. Օրբելյանի տվյալների, եպիսկոպոսել է 828—836 թվերին։ Հետևապես Սյունյաց եպիսկոպոսների Տաթևում հաստատվելու ժամանակն ընկնում է 728—828 թվերի արանքում, այսինքն՝ 8-րդ դարում, հավանաբար այդ դարի երկրորդ կեսում[4]։

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 202, 203։

2 Նույն տեղում, էջ 143, տես նաև էջեր 138—142։

3 Նույն տեղում, էջ 204։

4 Չենք կարող համաձայնել Ե. Լալայանի այն պնդմանը, որ իբր Տաթևը Սյունյաց եպիսկոպոսության կենտրոն է դարձել 839 թվին՝ Փիլիպպե եպիսկոպոսի ժամանակ։ Տես «Զանգեզուրի գավառ» հ. 1, «Սիսական», էջ 12։

Այսպիսով, 8-րդ դարի 2-րդ կեսին արդեն եկեղեցին Սյունիքում վերջնականապես ընդունում է ֆեոդալական կերպարանք, ստեղծում իր կենտրոնը։ 9—10-րդ դարերում Սյունյաց եկեղեցին դառնում է էլ ավելի խոշոր ու կազմակերպված ֆեոդալական մարմին, խոշոր կալվածատեր։

9-րդ դարի ընթացքում և հատկապես 2-րդ կեսին կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ իրենց կից շինություններով։ Այդ նորակառույց եկեղեցիներին ֆեոդալ իշխաններն ու իշխանուհիները պարգևում են գյուղեր, կալվածքներ, այգիներ և այլն։ Որպես օրինակ վերցնենք Գեղաքունիքը։ Սևանա կղզում Մաշտոցի ձեռքով 874 թվին Մարիամը շինել է տալիս երկու եկեղեցի, հոգևորականների համար բնակարաններ։ Այդ եկեղեցիներին նվիրաբերում են 5 գյուղ, Կռակծինի որսը[1], այգիներ՝ Երևանում, Գառնիում և այլ տեղերում[2]։

Նույն Մարիամ իշխանուհին Շողուագում շինել է տալիս Պետրոս Առաքյալի անվան եկեղեցին, փողով գնում է Շողուագ և Գներ գյուղերը և նվիրաբերում այդ եկեղեցուն[3]։ Գրիգոր Սուփան 2-րդը շինել է տալիս Կոթ գյուղաքաղաքում Ս. Աստվածածնի եկեղեցին, որը «պարսպէ մեծամեծ վիմօք», կից շինել է տալիս երկու հարկանի 8 սենյականոց բնակելի շենք, տալիս է հողեր, ջրեր, յուրաքանչյուր քահանային սահմանում է տարեկան 50 դրամ և այլն[4]։

Գրիգոր Սուփան 2-րդը վերաշինել է տալիս նաև Մաքենացոց ուխտը։ Շինել է տալիս գմբեթահարկ եկեղեցի Ս. Աստվածածնի անունով և «պարսպէ վիմօք... և այլ բաղում շինուածս... զարդարէ զնա անխնա դանձիւք և փարթամացուցանէ բաղում ինչիւք. նաև գեղօք և ագարակօք և այգեստանօք ի Գառնի և յԵրեւան և յայլ տեղիս»[5]։ Տալիս է նաև կըրպակներ, կաբալային եկամուտ, եղներ, ոչխարների հոտեր։

---

1 Ս. Օրբելյանի տպագիր տեքստում (էջ 174) գրված է. «զորսն կռակծինն»։ Ձեռագիր տեքստի հիման վրա մենք ուղղում ենք՝ «զորսն Կռակծինն», ընդունելով, որ դա տեղանուն է։ Տես ձեռագիր № 5501, էջ 131։

2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 174։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջեր 177, 178։

5 Նույն տեղում, էջեր 179, 180։

Ամփոփելով Գեղաքունիքում 9-րդ դարի 2-րդ կեսին կառուցված եկեղեցական շինարարության մասին իր ասելիքը, Ս. Օրբելյանն ավելացնում է՝ «և ոչ միայն այս, այլև բազում էին շինեալ եկեղեցիք ի Սիսական աշխարհի»[1]։ Եկեղեցական շինարարությունը շարունակվում է նաև 10-րդ դարի ընթացքում։

Անշուշտ, կալվածքներ, գյուղեր, կրպակներ, կաբալային եկամուտներ են ստացել նաև Շողոգա, Կոթա, Խոտակերաց, Հովանու, Գնդեվանքի և այլ հին ու նորակառույց վանքերն ու եկեղեցիները։

Սակայն, Սյունիքում եկեղեցու ֆեոդալական կազմակերպության վերածման, խոշոր հողատեր դառնալու ամենատիպիկ օրինակը Տաթևի եկեղեցու պատմությունն է։ Նա դարձավ ոչ միայն Սյունյաց եպիսկոպոսության կենտրոն հոգևոր իմաստով, այլև խոշոր հողատեր-ֆեոդալ։ Նա իր հոգևոր ու մենեստական գերիշխանությանը ենթարկեց Սյունիքի բոլոր եկեղեցիներին ու դարձավ Սյունիքում հոգևոր երարխիայի գագաթը։ Այս տեսակետից էլ ավելորդ չենք համարում համառոտակի նշել Տաթևի վանքի հարստացման պատմությունը։

Ս. Օրբելյանը վկայում է, որ երբ առաջին եպիսկոպոսը եկավ Տաթև, այնտեղ գոյություն ուներ մի հնամաշ, խարխուլ եկեղեցի, հավանաբար մի չնչին հողակտորով։ Հայտնի չէ, թե Տաթևի առաջին եպիսկոպոսներն ի՛նչ միջոցներով են հողեր ձեռք բերել, բայց մեզ հայտնի Գևորգ եպիսկոպոսի ժամանակաշրջանում (828—836 թթ.) նա արդեն ուներ որոշ քանակությամբ հող՝ ընկած հենց իր Տաթևի եկեղեցու շուրջը։ 839 թվին Դավիթ եպիսկոպոսը նկատի ունենալով, որ «յոյժ նեղ և անձուկ էր սահման վանիցն Տաթևոյ, և ոչ էր բաւական պիտոյից աթոռոյն» 10000 դրամով գնում է Արծիվ և Բերդկանթերիշ ագարակները Փիլիպպե իշխանից[2]։ Հինգ տարի անց վանքը նվեր է ստանում Տաթև գյուղը[3]։ Հողերի ընդարձակման հետ միասին, որպես կրոնական կենտրոն, մեծանում է նաև Տաթևի ազդեցությունն ու դիրքը։ Այժմ նրան հողեր են տրվում նաև այլ գավառներից։ 844 թվին Հրահատ իշխանը նվիրում է Նորաշնիկ գյուղը Կովսական գավառում։ Այդ նույն թվերին Փիլիպպե 1-ին իշխանը հին խարխուլ եկեղեցու կողքին շինում է մի նոր եկեղեցի Գրիգոր Լուսավորչի անունով, որը կոչվում էր նաև «Ս. Նշան», անշուշտ նորակառույց եկեղեցուն տալով նաև նոր կալվածքներ։ 867 թվին Քուպղիդուխտը տալիս է Մաճ գյուղը Բաղք գավառում։ 871 թվին Ջևանշեր իշխանը Կովսական գավառից տալիս է Արուքս գյուղը (ավելի շուտ փոխում է Տաթևի վանքի Բաղք գավառում ունեցած Բեխ գյուղի հետ)։ Այդ ժամանակներում տրված էր և Բեխ գյուղը։ Սողոմոն եպիսկոպոսը գնում է Դարատափը և այլն։ Ի միջի այլոց սրանք այն գյուղերն են, որոնց մասին կնքված վավերագրերը Օրբելյանը գտել է արխիվում։

Այսպես, Տաթևի եկեղեցին մեծանում ու ուռճանում է որպես հողատեր, մեծանում է նրա եկամուտը, հեղինակությունը, ստեղծվում է հատուկ վարժարան և այլն։ Եվ ահա հին եկեղեցին թվում է նեղ ու փոքր, անպատշաճ է համարվում «այնպիսի մեծի մայրաքաղաքի և աշխարհագումար ժողովրդանի» համար «մեծ կաթողիկէ եկեղեցի» չունենալը։ Հովհաննես եպիսկոպոսը (880—918 թթ.) դիմում է ժամանակի գահերեց Աշոտ և գահակալ Գրիգոր Սուփան 2-րդ և Զաքիկ իշխաններին՝ նոր եկեղեցի կառուցելու առաջարկով։ Իշխանները համաձայնվում են և սիրով բաց անում իրենց գանձարանները[1]։ 895 թվին հիմնադրվում է այդ եկեղեցու շինարարությունը, որը տևում է 11 տարի և ավարտվում է 906 թվին։ Այս կառուցումը ոչ միայն Սյունիքի, այլ նաև այդ դարաշրջանի ողջ Հայաստանի համար խոշորագույն կառուցումներից մեկն էր։ Նա ուներ 100 կանգուն բարձրություն, 48 կանգուն երկարություն և 24 կանգուն լայնություն։ Ուներ 4 խորան, բացի ավագ խորանից։ Եկեղեցուն կից կառուցում են նաև 30 կանգուն բարձրությամբ մի սյուն՝ մանր քարերով պատած։ Վանքի

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 183։

[2] Նույն տեղում, էջ 204։

[3] Նույն տեղում էջ 206։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 223։

տակ կառուցում են նաև գետնափոր գաղտնարաններ, գաղտնի անցքեր, բազմաթիվ տներ, դարաններ, ամբարներ, սրբարաններ, գրատներ, գործատներ (արհեստանոցներ), եկեղեցու դռան առաջ աղոթքի տուն, դամբան՝ իշխանների և եպիսկոպոսների համար։ Եկեղեցին պարսպում են սրբաքարերով, պարսպում են նաև ողջ վանքը կոփածո քարերով, ձորից ի վեր կրաշաղախով բարձրացնում են պարիսպ և հարդարում վանքի ընդարձակ տարածությունը[1]։ Ինչպես տեսնում ենք, սա մի վիթխարի կառուցում էր, ճարտարապետության հիասքանչ կոթող, որի վրա 11 տարի շարունակ հազարավոր աշխատավոր ձեռքեր արյուն-քրտինք թափեցին, որպեսզի հետագայում էլ տերերի կամքով, իրենց աշխատանքով ստեղծված բարիքներով լցնեն նրա ամբարները ու գետնափորները, իսկ նրա կամարների խորհրդավոր ստվերների տակ խնկի բույրի հետ ներծծեն հաշիշը՝ իրենց հոգին թմրեցնելու համար։

Նորակառույց այս կաթողիկեի օծման հանդեսը, նավակատիկը, որը տեղի ունեցավ 906 թ., Տաթևի կալվածքների ընդարձակման գործում, վեր է ածվում ոսկե անձրևի։ Այդ օրը նա Սյունյաց իշխաններից և Բագրատունի թագավորից որպես նվեր ստանում է 2 վանք, մեկ գետ, 16 գյուղ՝ տարբեր գավառներում, անգամ Գառնի ձորում։ Բացի այդ, Սյունյաց իշխանները լայնացնում են վանքի սահմանը, հնի փոխարեն հաստատում են նոր, ավելի ընդարձակ սահման[2]։

Տաթևի վանքի հողատիրությունը, ինչպես և նրա տնտեսությունը իր ծաղկման գագաթնակետին հասավ 10-րդ դարում, եռանդուն ու գործունյա Հակոբ եպիսկոպոսի ժամանակ (918—958 թթ.)։

932 թ. Հակոբ եպիսկոպոսը Փիլիպպե 2-րդից գնում է Զանգեզուրի Վարարակ կոչված ջուրը[3] և ջրանցք կառուցում։ Ջուրը

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 224, 225։

[2] Նույն տեղում, էջեր 228, 229, 232։

[3] Ըստ Ե. Լալայանի Վարարակի ջուրը գտնվում է Զանգեզուր գավառում. նա բխում է երեք լեռներով շրջափակված մի ձորակից։ Նրա մեջ է խառնվում Շոռ ջուր կոչված վտակը։ Տես «Զանգեզուրի գավառ», հ. 2, «Զանգեզուր», Թիֆլիս, 1899, էջ 22։

բերում է վանքի դիմաց, գետի այն կողմում գտնվող Ցաքուտ կոչված վայրում գտնվող խոպան հողերը ոռոգելու, մշակելու համար։ Ոռոգված դաշտերում մի բլրի գագաթը հարթում է, պարսպապատակում ու շինում մի գմբեթահարկ խորան, դիտապարսպապատակում ու շինում մի գմբեթահարկ խորան, դիտաշնոց, որպեսզի այնտեղից դիտի շրջակա այգիներն ու կալվածքները[1]։

Հակոբը կառուցում է նաև եկեղեցիներ այլ վայրերում՝ Եղեգյաց ձորում, Քարեվանքում և այլն։

Նա ընդարձակում է վանքի կալվածքները, տնտեսությունը իշխաններից ստացած «հոգեցատուր»-ի միջոցով։ Սմբատ գահերեցը «հոգեցատուր» է տալիս Կոկույս գյուղը, Փիլիպպե 2-րդը՝ Աղուերձ և Հուրականխոռ գյուղերը Հարանդ գավառում։ Գնումների և այլ միջոցներով ձեռք է բերում բազմաթիվ գյուղեր, արտեր և ուրիշ կալվածքներ[2]։

Մեզ հասած վավերագրերի համաձայն, Տաթևի վանքն ունեցել է 32 գյուղ։ Բայց այդ բոլորը չէր։ Օրբելյանը ուղղակի վկայում է, որ «այլ ևս յոլովս ստանայ ընդ գնոց արծաթոյ ագարակս և անդս, հողս և մարդս և այգիս. նա և բազում տուրս յիշխանաց և յազատաց», որոնց վավերագրերը մեջ չի բերել, որպեսզի երկար ու տաղտկալի չդառնա իր պատմությունը, իսկ մյուս կողմից այդ վավերագրերի զգալի մասը մաշվել ու անընթեռնելի էր դարձել[3]։ Բնական է, որ այս բոլորի հետ ավելանում ու աճում էր նաև Տաթևի հոգևոր պարագիտների դասը։ Օրբելյանի վկայությամբ նա ուներ 500 կրոնավոր։ Վանքին կից կար նաև վարժարան, ուր կային փիլիսոփաներ, երաժիշտներ, կային նաև արհեստավորներ, նկարիչներ, գրողներ (հավանաբար գրիչներ)։

Տաթևի վանքը իր այդ կալվածքների բացարձակ սեփականատերն էր։ Նա գահակալ իշխանների նման իր հողերին իշխում էր dominium directum իրավունքով։ Այդ իրավունքը կենտրոնանում էր եպիսկոպոսի ձեռքում, բայց իրեն՝ եպիս-

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 253—255։

[2] Նույն տեղում, էջեր 258, 259, 267, 268, 268—270, 271—273։

[3] Նույն տեղում, էջեր 273—274, նաև 229, 252։

կոպոսի անձնական իրավունքը չէր։ Եթե եպիսկոպոսը մահանում էր, այդ իրավունքն անցնում էր ոչ թե իր եղբորը, այլ իրեն հաջորդող եպիսկոպոսին, որը կարող էր նրա ազգականն էլ չլինել։ Այլ կերպ ասած, եպիսկոպոսը հանդես էր գալիս իբրև եկեղեցու, Տաթևի վանքի dominium directum իրավունքի կրողը լոկ իր եպիսկոպոսության շրջանում։

Մեր կարծիքով Տաթևի վանքը նման իրավունք ուներ ոչ միայն անմիջականորեն իրենը համարվող կալվածքների, հողերի նկատմամբ, այլ նաև մյուս վանքերին ու եկեղեցիներին պատկանող կալվածքների նկատմամբ։ Այդ երևում է նրանից, որ 9—10-րդ դարերում կառուցվող բոլոր եկեղեցիները կառուցվում են եպիսկոպոսի թույլտվությամբ և համաձայնությամբ, ավելի ճիշտ նրա ձեռքով. օրինակ՝ Քարեվանքի, Եղեգյաց ձորի, Գնդեվանքի, Խոտակերաց և այլ եկեղեցիները, որոնց տրվում էին կալվածքներ իշխանների կողմից։

Բացի այդ, Տաթևի վանքն իրավաբանորեն և իրականորեն համարվում էր Սյունիքի բոլոր եկեղեցիների համար «սուրբ մայրաքաղաք», իսկ նրա եպիսկոպոսը՝ բոլոր եկեղեցիների վանահայրերի ու երեցների գլուխը։ Սյունիքի 12 գավառների եկեղեցիների հոգևոր ու տնտեսական գործերը Հայոց կաթողիկոսի կողմից, որպես հոգևոր «վիճակ», տրված էր Տաթևի վանքին և նրա եպիսկոպոսին։ Որպես կրոնական կենտրոն ու ողջ Սյունյաց եկեղեցու գլուխ, բնականաբար, Տաթևի վանքի ձեռքը պիտի կենտրոնանար եկեղեցական հողատիրության ամբողջ գերագույն սեփականությունը և իշխանությունը։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ կրոնական կենտրոնի ստեղծումից հետո Սյունիքի եկեղեցիները, հատկապես Տաթևի եկեղեցին, դառնում են խոշոր հողատեր-կալվածատերեր, հատկապես 9—10-րդ դարերում։ Նրանք տեր են դառնում ոչ միայն ընդարձակ կալվածքների՝ գյուղերի, այգիների, արտների, արտերի, ջրերի, ջրանցքների, այլ նաև ձրկնորսարանների, եզների, ոչխարների, կրպակների, ղապալի (կապալի), այսինքն՝ արտադրամիջոցների ու եկամուտների։ Կարելի է առանց չափազանցելու ասել, որ Սյունիքի եկեղեցիները և առանձնապես նրանց գլուխը կազմող Տաթևի վանքը, ավելի խոշոր կալվածատերեր էին, քան գահակալ շատ իշխաններ։

Ահա՛ աշխարհիկ և հոգևոր այն կալվածատերերը, որոնք կազմում էին ֆեոդալական Սյունիքի տիրող, շահագործող դասակարգը։

* * *

Սկզբնաղբյուրներում գահակալ իշխանների կալվածքները կոչվում են «հայրենի ժառանգութիւն», կամ ավելի ճիշտ, «հայրենիք»։ Այդպես են կոչվում ոչ միայն նրանց կալվածքներն ամբողջությամբ միասին վերցրած, այլ նաև նրանց առանձին մասերը՝ գյուղերը, արոտավայրերը և այլն։ Վավերագրերում այդ մասին կարդում ենք հետևյալը։ Փիլիպպեն Տաթև գյուղի մասին ասում է. «Յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ»։ Հրահատն իր Նորաշենիկ գյուղը համարում է «հայրենեացն սեբհական», որը ձեռք է բերել «ոչ ի յափշտակութենէ և ոչ ի զրկանաց ուրուք և ոչ յայլ ինչ անիրաւութեանց, այլ միայն յարդար վաստակոց ստացեալ գնոց տրծաթոյ»[1]։

Զևանշերն Արուքս գյուղի մասին գրում է. «Յիմ հօրէն և յեղբարց յիս հրիտակ հասեալ. և իմ հայրենի ժառանգութիւն էր»[2], իսկ Սմբատ իշխանը Կտկուս (Կտկով) գյուղի մասին՝ «զիմ հայրենի բաժին»[3]։ Փիլիպպե 2-րդը երկու գյուղի մասին գրում է. «ընծայեցի... յիմ հալալ հայրենացն... զոր գնեալ էի»[4]։

«Հայրենիքը» որպես հողային սեփականության ձև նոր չէր, նա գալիս էր հնուց։ Ն. Ադոնցը, խոսելով Արշակունիների շրջանի մասին, նշում է երկու կարգի հողեր, հողատիրության երկու ձև։ Դրանք են «հայրենիք» և «պարգևականք», այսինքն՝ «ոտշինաներ և բենեֆիցիաներ»[5]։ Եվ ապա նա տալիս է հետևյալ բացատրությունը. «Մերովինգյան դարաշրջանի allod-ը, որպես հողային գույքի տիպ, միանգամայն համընկնում է

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 207, 209։

[2] Նույն տեղում, էջ 217։

[3] Նույն տեղում, էջ 267։

[4] Նույն տեղում, էջ 269։

[5] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 157։

հայկական հայրենիքին. այդ երկուսն էլ ոտչիններ են, ժառանգական հողեր, որոնք անցնում են սերնդից սերունդ լիակատար սեփականության իրավունքով»[1]։ Իսկ «ինչ վերաբերում է պարգևականք հողերին, ապա, կարող է պատահի, որ այդ տերմինը, պատմիչի շուրթերում նշանակում է միայն ոչ մեծ հողամասեր (участки), դյուղեր և շեներ, որոնցով պարգևատրվում էին իշխաններն այս կամ այն ծառայության համար։ Բայց ավելի հին ժամանակ պարգևատրումների առարկա հանդիսանում էին ավելի ընդարձակ տերիտորիաներ»[2]։

Ադոնցը նշում է նաև հողատիրության մի երրորդ ձև՝ «քսակադինք», այսինքն՝ գնված կալվածքային սեփականություն[3], որը, ինչպես երևում է նրա բացատրությունից և մեր աղբյուրների վկայությունից, Արշակունիների ժամանակ եղին պրանի վրա էր։

Եվ այսպես, Արևմտյան Եվրոպայի հողատիրության ձևերի հետ համեմատելու դեպքում, ըստ Ն. Ադոնցի, «հայրենիքը» նույնանում է allod-ին, իսկ «պարգևականքը»՝ բենեֆիցիային (beneficium)։ Ակադ. Հ. Մանանդյանը համաձայնվելով Ադոնցի հետ «հայրենիքի» և allod-ի նույնացման հարցում, իր հերթին ավելացնում է, որ այդ կալվածքները եղել են «լիակատար» ու «անօտարելի» ժառանգական սեփականություն իշխանական (նախարարական — Հ. Ուր.) տոհմերի»[4]։ Եվ էլի «... նախարարական հողերը, նման ֆրանսիական francs-alleux[5] կոչված կալվածքների[6] կամ ռուսական «вот-

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջեր 457, 458։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 312, նաև 122, 315։

[5] Պետք է լինի fiefs-alleux, տես Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, էջ 460 և Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 311։

[6] Fiefs-alleux կամ fiefs-seigneuries կալվածքներն այն տիպի կալվածքներն են, որոնք նույնպես կոչվում են ֆեոդ, բայց իրենց իրավական դրությամբ որակվում են որպես սենյորներ, այսինքն՝ նրանց տերը ճանաչվել է որպես լիակատար սեփականատեր և ազատ կերպով ծառայել է նրան, ում ցանկացել է։ Տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 460։

չինա»-ների, եղել են փաստորեն ոչ թե պայմանական ֆեոդեր, այլ լիակատար ու անպայման սեփականություն[1]։ Ակադ. Հ. Մանանդյանը ոչինչ չի ասում «պարգևականքի» մասին։

Պրոֆ. Խ. Սամվելյանը, ելնելով հողի սեփականության պետական լինելու իր կարծիքից, չի համաձայնվում վերոհիշյալ գիտնականների այս նույնացման հետ։ «Հայաստանում,— գրում է նա,— գերագույն հողային իրավունքի տիրապետության հանգամանքներում, ալլոդական հողատիրությունը չէր կարող տեղ ունենալ։ Եթե, այնուամենայնիվ, Հայաստանի ֆեոդալիզմի պատմության մեջ կարող են հանդիպել ալլոդական թվացող հողատիրության երևույթներ, ապա դրանք հետնագույն ժամանակի են և բնավ չեն բխում նախարարական ֆեոդալիզմի էությունից»[2]։ Ուրեմն, ըստ պրոֆ. Սամվելյանի, նախարարական Հայաստանում, հատկապես Արշակունիների ժամանակ, ալլոդական հողեր չէին կարող լինել։ Բայց նա երկու տող ներքև, հակասելով իրեն, գրում է. «Հայաստանում, իրոք, ալլոդական հողային իրավունքը երևան է գալիս թագավորական իշխանության ժամանակից սկսած ու կոնկրետ ձև ստանում Արշակունիների անկումից հետո, առավելապես արաբական տիրապետության ժամանակից սկսած»[3]։ Ինչպես տեսնում ենք, ըստ նրա, մի կողմից Արշակունիների ժամանակ ալլոդական հողեր չկան, մյուս կողմից, հենց այդ Արշակունիների ժամանակ ծագել է ալլոդական հողային իրավունքը։ Եթե կա մի բանի իրավունքը, ապա կա նաև ինքը, այդ բանը։ Պրոֆ. Սամվելյանի այս հակասությունն ավելի ակներև կդառնա, եթե մենք տեսնենք, թե երբ է ծագում ալլոդը։

Ֆ. Էնգելսը, խոսելով Մերովինգների և Կարոլինգների շրջանում տեղի ունեցող ագրարային հեղաշրջման մասին, անդրադառնում է նաև ալլոդի առաջացման հարցին։ Նա հասկացնել է տալիս, որ ալլոդը, որպես հողային ազատ մասնա-

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 316։

[2] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, էջ 187։

[3] Նույն տեղում։

վոր սեփականություն, առաջացել է համայնական հողատիրության քայքայումից, և որ «ալլոդի միջոցով ստեղծվել էր հողային տիրապետությունների նախնական հավասարությունն իր հակադրությանը վերածելու ոչ միայն հնարավորությունը, այլև անհրաժեշտությունը»։ Շարունակության մեջ Ֆ. Էնգելսը գրում է՝ «Այն պահից, հենց որ ծագեց ալլոդը, ազատորեն օտարելի հողային սեփականությունը, հողային սեփականությունը որպես ապրանք, խոշոր հողատիրության առաջացումը դարձավ միայն ժամանակի հարց»[1]։

Ֆ. Էնգելսի այս դրույթը վերաբերում է նաև մեր իրականությանը, որ իրոք մեզ մոտ ևս ալլոդն առաջացել է համայնական հողատիրության քայքայումից, ցույց է տվել դեռ Ն. Ադոնցը[2]։ Կարծում ենք, որ ինքը՝ պրոֆ. Խ. Սամվելյանն էլ չէր առարկի, որ Արշակունիների ժամանակ համայնական հողատիրության վաղուց սկսված քայքայումը հասել էր որոշակի աստիճանի և ստեղծվել էր հողային խոշոր սեփականություն։ Ուստի այդ ժամանակաշրջանում ոչ թե խոսք պետք է լիներ ալլոդային հողատիրության իրավունքի ծագման մասին, այլ նման հողատիրության գոյության մասին։ Անկախ պրոֆ. Խ. Սամվելյանի այս հակասությունից, նրա կարծիքը վերջ ի վերջո այն է, որ նախարարական շրջանի Հայաստանում «հայրենիքը» նման չէ Մերովինգյան շրջանի ալլոդին, այլ նման է feod-ին։ Այսինքն՝ նախարարական կալվածքները ո՛չ թե նրանց ժառանգական լիակատար, անպայման սեփականությունն են, այլ իրենց ծառայությունների դիմաց թագավորից ստացած ոչ լիակատար, պայմանական սեփականություն, որոնք օգտագործման իրավունքով ժառանգաբար անցնում են սերնդից սերունդ։

Մեր կարծիքով ճշմարտությունը ոչ թե պրոֆ. Խ. Սամվելյանի, այլ Ն. Ադոնցի և ակադ. Հ. Մանանդյանի կողմն է։

[1] Маркс и Энгельс, т. XVI, часть I, էջեր 391—392։

[2] Аллоды, как вотчины, свободныя от по винностей наследственныя земли, восходят генетических тем земельным владениям, кой составляли когда-то принадлежность общин, а затем с распадом их перешли к главам или тем сильным элементам, из которых сложилась будущая знать. „Арм. в эпоху Юстиниана", էջ 456։

Սակայն փակագծերում ասենք, որ վերջիններիս կարծիքի մասին որոշ վերապահում պետք է ունենալ։ Արշակունիների ժամանակի «հայրենիքը» allod-ին նման է այնքանով, որքանով նրանք երկուսն էլ ռուսական վոտչինայի նման հանդիսանում են կալվածատեր իշխանի և նախարարի լիակատար, անպայման սեփականությունը և սեփականության լիակատար իրավունքով ժառանգաբար անցնում են սերնդից սերունդ։ Բայց նրանք ունեն նաև որոշ տարբերություն։ Ֆ. Էնգելսի վերոհիշյալ ցուցմունքից երևում է, որ ալլոդը Մերովինգների մոտ «ազատորեն օտարելի հողային սեփականություն է», որ հողային այդ սեփականությունը «ապրանք է», լիակատար կերպով առուծախի առարկա։ Իսկ «հայրենիքը» Արշակունիների ժամանակ, ինչպես վկայում են մեր աղբյուրները, «ազատորեն օտարելի» չէր, չէր վերածվել ապրանքի։ «Հայրենիքի» այս անօտարելիությունը նկատում է նաև ակադ. Հ. Մանանդյանը[1]։ Այս տարբերությունը, հավանաբար, բխում էր հայ նախարարական սիստեմի մի այլ առանձնահատկությունից՝ ֆեոդալական տոհմային հողատիրությունից։ Ինչպես սկզբում տեսանք, հայ նախարարները առանձին տներ, տոհմեր էին, որոնց հողերը, այսինքն՝ «հայրենիք»-ները կազմում էին ֆեոդալական տոհմի սեփականությունը, որը տնօրինում էր տոհմի ավագ անդամը և որը անբաժանելի էր տոհմի մնացած անդամների, սեպուհների միջև։ Բնական է, որ տոհմի սեփականությունը կազմող այդ հողը չէր կարող «ազատորեն օտարել» տոհմի որևէ անդամը, ներառյալ թերևս նաև ավագ անդամը։

Տարբերություն պետք է համարել նաև այն հանգամանքը, որ «գանձագինը» նախարարական Հայաստանում չէր մտնում «Հայրենիքի» մեջ, ինչպես այդ ընդունում է նաև Ադոնցը։ Այնինչ նա չէր կարող չմտնել Մերովինգյան allod-ի մեջ, քանի որ allod-ն ինքը, ըստ Ֆ. Էնգելսի, «ազատորեն օտարելի», «ապրանք» հանդիսացող հողային սեփականություն էր։

Մեր կարծիքով պետք է բացահայտել Արշակունյաց շըր-

[1] Տես Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 312։

ջանի «հայրենիքի» և Մերովինգյան շրջանի allod-ի այս կարևոր տարբերությունները, երբ խոսք է լինում նրանց նմանության մասին։ Նրանք նման էին, բայց ոչ նույնը։

«Պարգեւականքի» մասին պրոֆ. Խ. Սամվելյանը տալիս է համարյա նույն բացատրությունն, ինչ որ Ն. Ադոնցը։ Նա իր աշխատության մեջ գրում է. «Նրանք («պարգեւականք»— Հ. Ուր.) թագավորի կողմից պարգեվված, ընծայված հողեր էին։ Ուրեմն այդ հայկական տերմինը միանգամայն նույնանիշ է միջնադարյան ֆեոդալական beneficium-ին»[1]։

Այսպես էր իրերի դրությունը նախարարական և հատկապես Արշակունյան շրջանի Հայաստանում։ Բայց 9—10-րդ դարերում, գոնե Սյունիքում, մենք այն տեսնում ենք փոփոխված վիճակում։

Վավերագրերից վերևում կատարված մեջբերումները ցույց են տալիս, որ Սյունիքում մեր ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանում «հայրենիք» են կոչվել հորից, եղբորից «ճրիտակ» (ժառանգություն) ստացած հողերը և «գնոց արծաթոյ» ստացած հողերը, այսինքն՝ «գանձագին», «դրամագին» հողերը, ինչպես նաև ջրերը։ Այլ կերպ ասած, «հայրենիք» են կոչվում թե՛ ժառանգաբար ստացած հողերը, թե՛ «գանձագին» հողերը։

Ինքնին հասկանալի է, որ ժառանգաբար ստացված հողերը նախարարական շրջանի «հայրենիք» կոչված հողերն էին։ Սյունյաց նախարարության քայքայումով, նրա ֆեոդալական տոհմային սեփականությունը կազմող հողերը բաժանվեցին տոհմի անդամների, սեպուհների միջև, որոնցից յուրաքանչյուրը դարձավ որոշ հողամասի տեր մասնավոր լիակատար սեփականության, ազատ օտարելիության և հետագա բաժանելիության իրավունքով։ Նրանց այդ հողերը շարունակեցին կոչվել նախկին «հայրենիք» տերմինով։ Այս նշանակում է, որ

[1] Հիշենք, որ beneficium-ը եվրոպական ֆեոդալիզմում տրվում էր ցկյանս, իսկ feodum-ը՝ ժառանգական տիրության կարգով։ Եվրոպայում beneficium-ը կարող էր վերածվել և վերածվում էր feodum-ի, իսկ նախարարական Հայաստանում, մեր կարծիքով, կարող էր վերածվել «հայրենիքի»։

նախկին «հայրենիքը» կրեց փոփոխություն։ Եթե առաջ «հայրենիքը» ազատ կերպով օտարելի և բաժանելի չէր, ապա այժմ այն դառնում է թե՛ ազատ կերպով օտարելի, առուծախի առարկա, և թե՛ բաժանելի՝ տվյալ հողատեր իշխանի (գահակալ իշխանի) որդիների, եղբայրների միջև։ Բացի այս ներքին փոփոխությունից, նախկին «հայրենիքը» կրեց նաև արտաքին փոփոխություն։ Եթե նախկինում «գանձագին» հողերը չէին մտնում «հայրենիքի» մեջ և որպես հողատիրության ձև ետին պլանում էին, ապա այժմ «գանձագին» այդ հողերը, որոնք արաբական տիրապետության ժամանակ ավելի շատացան, ամբողջապես մտնում են «հայրենիքի» մեջ ու նույնպես կոչվում են «հայրենիք»[1]։

Նկատելի է, որ 9—10-րդ դարերում «հայրենիք» հասկացողությունը հավասարազոր էր հողային սեփականության իմաստին, կալվածքին, անկախ նրանից, թե ինչ ձևով էր այն ձեռք բերվում և ինչ մեծությամբ էր։ Ստորև կտեսնենք, որ նաև ազատների, անդամ գյուղացիների մասնավոր սեփականությունը հանդիսացող հողերն էլ կոչվել են «հայրենիք», իսկ իրենք՝ «հայրենի տերք»։

Եվ այսպես, եթե մենք 9—10-րդ դարերում գործածված «հայրենիքը» համեմատելու լինենք նախարարական շրջանում գործածված «հայրենիքի» հետ, ապա կտեսնենք, որ նրանք իրար հավասար չեն, թե՛ ներքին բովանդակությամբ, և թե՛ արտաքին կազմով, շնորհիվ նրա կրած այս ներքին ու արտաքին

[1] Այս շրջանի Սյունիքում մենք չենք հանդիպում նախկին «պարգեւականք» կոչված հողերի։ Ոչ մի վավերագրում չկա վկայություն, որ այս կամ այն թագավորը որևէ հող նվիրած լինի Սյունյաց իշխաններին։ Նախիջևանի դեպքը, ինչպես տեսանք, նման «պարգեւականք» չէր։ Նման «պարգեւականք» չէին նաև այլ զերեն իշխանների, ինչպես և Բագրատունի թագավորների կողմից Սյունյաց եկեղեցիներին տրված հողային ընծաները։ Նրանք տրվում էին ոչ թե որևէ ծառայության (ռազմական և այլն) հանդեպ, այլ ընծայողների հոգու փրկության համար («հոգեցատուր»)։ Մեր կարծիքով նման «պարգեւականքների» լինելու դեպքում անդամ նրանք կմտնեին «հայրենիքի» մեջ, քանի որ գահակալ իշխաններն իրենց բոլոր տեսակի հողերի («հայրենիքի») տերերն էին dominium directum իրավունքով, ազատորեն օտարելի և բաժանելիության իրավունքով։

տաքին փոփոխությունների։ Մյուս կողմից 9—10-րդ դարերում գործածված «հայրենիքը» եթե համեմատելու լինենք Մերովինգյան շրջանի allod-ի հետ, ապա կտեսնենք, որ այն այժմ լրիվ կերպով ու ամբողջապես համապատասխանում է նրան։ Այժմ «հայրենիքը» allod-ի նման ժառանգաբար անցնող լիակատար սեփականություն էր dominium directum իրավունքով, allod-ի նման բաժանելի և նրա նման «ազատորեն օտարելի», առուծախի առարկա։ Ուրեմն նախարարական սիստեմի քայքայումը ջնջեց նախկին «հայրենիքի» և allod-ի միջև եղած մեր վերևում ցույց տված տարբերությունները, դրանով իսկ փոփոխելով «հայրենիքը» ներքնապես և արտաքնապես՝ վերածեց այն իսկական allod-ի։ Այդ գործում, անշուշտ, լուրջ դեր խաղացին նաև արաբական տիրապետության ժամանակ քաղաքների, առևտրի զարգացումը, ապրանքային ու դրամական հարաբերությունների աշխուժացումը, որոնց հետևանքով հողը դարձավ զգալի չափով վաճառքի առարկա։

Ի դեպ, պրոֆ. Խ. Սամվելյանը, ընկատելով նախարարական սիստեմի քայքայման հետևանքով առաջացած վերոհիշյալ փոփոխություններն ու տեղաշարժերը, գտնում է, որ միջնադարյան Հայաստանում էլ, ներառյալ նաև Սյունիքում, «գանձագին» հողերն ի հայտ են գալիս «հայրենիքից» առանձին։ Նա գրում է. «գանձագին, դրամագին կամ քսակագին անվանված հողերն են, որ համարվելով կալվածատեր իշխանների անհատական սեփականություն, նմանվում են allod-ին, իսկ «հայրենիքն» իր սկզբնական ավատական նշանակությամբ feod-ն է, ֆեոդալական հողատիրության հիմնական տարրը, որով բնորոշվում է այդ սոցիալ-տնտեսական հասարակարգը»[1]։

Մենք արդեն տեսանք, որ 9—10-րդ դարերում Սյունիքում «գանձագինը» «հայրենիքից» առանձին չէ, նա հենց ինքը «հրիտակ» ստացված հողերի հետ միասին կոչվում է «հայրենիք»։

Սյունիքում 9—10-րդ դարերում եկեղեցական հողերը ևս

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, էջ 188։

կոչվել են «հայրենիք»։ Այդպես են կոչվել ոչ միայն հոգեցատուր ստացված կալվածքները, այլ նաև դրամով գնված «գանձագին» հողերը։ «Գնեցի ընդ հաղար ու երկերիւր դրամի,— գրում է Սողոմոն եպիսկոպոսն իր վավերագրում Դարատափի մասին,— ու սուրբ նշանիս հայրենիք արարի»[1]։

Եկեղեցական հայրենիքն էլ ժառանգական սեփականություն էր, բայց, ինչպես նշեցինք, այն անցնում էր ժառանգաբար, եպիսկոպոսից եպիսկոպոսին։ Հոգեցատուր կատարողները տվյալ եպիսկոպոսին ասում են՝ արդ դու ես տերը, իսկ քեզանից հետո «այլ հայրապէտք յայդ յաթոռդ յաջորդին»[2]։ Հետևապես այն ժառանգական սեփականություն է ոչ թե որևէ եպիսկոպոսի, այլ իր՝ Տաթևի վանքի։

Եկեղեցական հայրենիքի և աշխարհիկ իշխանների հայրենիքի միջև կար մի կարևոր տարբերություն. եթե աշխարհիկ հայրենիքը բաժանելի էր իշխանի ժառանգների միջև, ապա եկեղեցու հայրենիքը բաժանելի չէր։ Այս կարևոր հանգամանքն ունենում էր այն հետևանքը, որ աշխարհիկ հայրենիքները բաժանելիության պատճառով տրոհվում էին, մանրանում, իսկ եկեղեցական հայրենիքը՝ ոչ, նա միշտ մնում էր նույնը, ավելին, մեծանում էր նոր հոգեցատուրների և գնումների միջոցով։ Վերջին հաշվով եկեղեցին ավելի մեծ հողատեր էր դառնում, քան աշխարհիկ իշխանները։

Կալվածատեր իշխանները իրենց հողերի, «հայրենիքի» մի մասը տալիս էին իբրև «խոստակ»։ Խոստակդարությունը իբրև հողատիրության ձև, առկա էր 9—10-րդ դարերում Սյունիքում, և ո՛չ միայն Սյունիքում։

Ակադ. Հ. Մանանդյանն արդեն փայլուն կերպով ապացուցել է, որ Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի կառուցվածքը բնորոշող feod-ին, կամ Lehn-ին միջնադարյան Հայաստանում համապատասխանում է «խոստակը»։ «Խոստակ» են անվանվել,— գրում է ակադ. Հ. Մանանդյանը,— այն հողերը կամ անշարժ գույքերը, որոնք կալվածատեր սյուզերենի կող-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 215, 296։

[2] Նույն տեղում, էջ 210, տես նաև էջեր 207, 219 և այլն։

մից տրվել են «ազատ»-ներին կամ «ոստանիկ»-ներին իբրև dominium utile, այն պայմանով, որ այս վերջինները հողատու իրենց «տեր»-երի հանդեպ կատարելու էին զինվորական և այլ պատվավոր «ծառայության» պարտականություններ։ Այս իմաստով «խոստակ»-ը կատարելապես համապատասխան կլինի feod-ին (ֆրանս. fief, գերմ. Lehn)»։ Եվ էլի «խոստակ»-ն իրավական իր բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան feod-ին»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանի այս կարևորագույն դյուտի համար նյութ են ծառայել 9—10-րդ դարերի Սյունիքի հողային հարաբերություններին վերաբերող վերոհիշյալ վավերագրերը։ Ավելորդ համարելով կրկին ուսումնասիրության ենթարկել «խոստակ»-ին վերաբերող այդ նյութերը[2], պատրաստի ձևով ընդունելով ակադ. Հ. Մանանդյանի անհերքելի այս ապացույցը, մենք նկատում ենք, որ Սյունիքի գահակալ իշխաններն իրենց սեփականությունը հանդիսացող հողերի մի մասը առանձին կտորներով պայմանական օգտագործման համար տալիս էին ազատներին[3]։ Այդ հողամասերը կոչվում էին «խոստակ» (=feod, Lehn), իսկ այն ստացողը՝ «խոստակդար», այսինքն՝ խոստակ առու, խոստակ բռնող[4]։ Խոստակդարներն այդ հողերին տիրում էին dominium utile (օգտատիրության) իրավունքով։ Այսպիսով, գահակալ իշխանները մեր առաջ ներկայանում են իբրև կալվածատեր սյուզերեններ dominium directum իրավունքով, իսկ «ազատները» իբրև խոստակդար վասալներ dominium utile իրավունքով։ Խոստակը (feod-ը) գահակալ իշխանից գնում է դեպի ազատը։ Հողատիրության տիպիկ ֆեոդալական ձև։

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջեր 109, 110։

[2] Հարկ ենք համարում Հ. Մանանդյանի ապացույցներին ավելացնել Ս. Օրբելյանի մի ուղղակի վկայությունը։ Նա, խոսելով եկեղեցական հողերը կրկին իշխանների կողմից ետ դրավելու մասին, ասում է, որ իշխաններն այդ հողերը բաժանում են իրենց ազատներին։ Այս մասին խոսք կլինի ստորև։

[3] «Ոստանիկ»-ներ գոյություն չունեին 9—10-րդ դարերի Սյունիքում։

[4] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 110։

Ի դեպ պրոֆ. Խ. Սամվելյանի մոտ այս հարցը ևս ծուռ հայելու միջով է նայում մեզ։ Եվ դարձյալ մեղավորը Հայաստանում հողի պետական սեփականություն լինելու նրա սխալ կոնցեպցիան է։ Նա գտնում է, որ թագավորը իր սեփականությունը կազմող հողերից feod-ներ (խոստակներ) է տալիս գահակալ իշխաններին dominium utile իրավունքով։ Այսինքն՝ ըստ նրա feod-ը (խոստակը) թագավորից գնում է դեպի գահակալ իշխանը։ Եվ այս գիծը, ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի, «հանդիսանում է հիմնական հատկանիշներից մեկը, որով բնորոշվում է ֆեոդալիզմի ասիական ձևը»[1]։ Նախ, ֆեոդալիզմի ասիական ձևը և կամ ասիական տնտեսաձևը մերժված է գիտության կողմից, բայց եթե անգամ մի պահ ընդունենք նրա գոյությունը, միևնույն է feod-ի թագավորից դեպի իշխանը գնալը ֆեոդալիզմի ասիական ձևի հիմնական հատկանիշը չէ. մի՞թե այդպես չէր նորմանական Անգլիայում և այլ երկրներում, ուր թագավորական կենտրոնական իշխանությունը եղել է զորեղ և բոլոր հողերի սեփականատեր ճանաչվել է ինքը՝ թագավորը, որը և այդ հողերը feod-ի ձևով տվել իշխաններին։

Հողատիրության խոստակդարային ձև ուներ նաև Սյունիքի եկեղեցին։ Ակադ. Հ. Մանանդյանը վերոհիշյալ իր աշխատության մեջ ցույց է տվել, որ դեռ Արշակունիների և Մարզպանական շրջանում եկեղեցական հողերի սեփականության գերագույն իրավունքը պատկանել է իրեն՝ եկեղեցուն, որն այդ հողերը օգտագործման համար տվել է հոգևորականներին։ «Այդ հողաբաժինների վերաբերմամբ... հոգևորականներն ունեցել են միայն օգտատիրության իրավունք, իսկ գերագույն սեփականության իրավունքը պատկանել է եկեղեցուն։ Օգտատիրության այդ իրավունքը եղել է ժառանգական, այսինքն՝ այդ հողաբաժինները հոգևորականներն իրավունք են ունեցել թողնել իբրև ժառանգություն իրենց որդիներին կամ մերձավորներին»[1]։ Աղվանից Վաչագան արքայի 6-րդ

---

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, էջ 172։

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 108։

կանոնի[1] հիման վրա ակադ. Հ. Մանանդյանը ցույց է տվել, որ հոգևորականներին հատկացված այդ հողերն էլ կոչվել են «խոստակներ»։ «Խոստակ»-ը, ուրեմն,— գրում է Հ. Մանանդյանը,— ինչպես կարելի է ենթադրել,... այն հողաբաժիններն են, կամ անշարժ գույքը, որ հատկացվել են հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայության» համար իբրև dominium utile...։ Նույն հողաբաժինների նկատմամբ գերագույն սեփականության իրավունքը... պատկանել է եկեղեցուն»[2]։ Եթե Աղվանքի հոգևորականները հող էին տիրում «խոստակի» ձևով, ապա նույն ձևը պիտի լիներ նաև հարևան Սյունիքում, հատկապես, եթե նկատի ունենանք, որ Աղվանից և Սյունյաց եկեղեցիները 10-րդ դարում սերտ կերպով մոտեցան միմյանց։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել մի լրացուցիչ ապացույց ևս։

Մենք տեսանք, որ գահակալ իշխաններից խոստակ ստացողները, ըստ ակադ. Հ. Մանանդյանի, ազատներն էին։ Նա այդ բանն ապացուցում է Փիլիպպեի, Քուպպիդուխտի և այլոց վավերագրերի միջոցով։ Այդ վավերագրերի մեջ, համարյա առանց բացառության, հող նվիրող իշխանը կամ իշխանուհին գրում է. «և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանէլ զայդ գիւղդ»։ Իսկ վավերագրի վերջում թվարկում է վկաներին, որոնք, ինչպես վերևում տեսանք, սովորաբար բաժանվում էին երեք խմբի՝ տերեր, ազատներ և հոգևորականներ[3]։ «Վավերագրերի տակ,— ասում է Հ. Մանանդյանը,— սովորաբար ստորագրել են կամ հիշվում են իբրև վկաներ հենց վերոհիշյալ այն անձինք, որոնցից պահանջվում էր չառարկել կամ չընդդիմանալ նվիրատուի կամքին»։ Ըստ ակադ. Հ. Մանանդյանի ամենուրեք վերևի «խոստակդար»-ներին համապատասխանում են ներքևի «ազատ»-ները[1]։ Այլ կերպ ասած, խոստակդարներն ազատներն են, ավելի ճիշտ ազատներն են, որ գահակալ իշխաններից (տերերից) խոստակներ ստանալով դառնում են խոստակդարներ։

---

[1] Վաչագանի 6-րդ կանոնը հետևյալն է. «Վանացերեց կամ վանական որ՝ եթէ ի Վանացն զայթանք առնէ և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի տեղւոյն ի բաց արասցեն, զխոստակն յեկեղեցին կալցեն»։ Տես Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 99։

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջեր 108, 109։

[3] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 207, 208, 210, 220։

Բացի ակադ. Հ. Մանանդյանի այս հետևությունից, հիշյալ վկայություններից կարելի է անել նման կարգի ուրիշ երկու հետևություն ևս։

ա) Վավերագրերի մեջ ամենուրեք վերևի «որդիք» կամ «եղբարք» բառերին համապատասխանում են ներքևի «տեր»-երը։ Եվ իրոք, եթե նվիրատուն որպես վկաներ նշում է այն անձանց, որոնք չպետք է ընդդիմանան նվիրատուի կամքին, ապա նախ և առաջ պիտի նշեր իր եղբայրներին, որդիներին և այլ ազգականներին, որոնք թերևս ավելի մեծ շարժառիթներ ունեին ընդդիմանալու։ Իսկապես, Փիլիպպեի նշած վկա «տերերի» մեջ են իր եղբայր Ատրներսեհը, իր եղբոր որդի Գրիգոր Սուփան 1-ինը, իր երեք որդիները։ Քուպպիդուխտի վկա «տերերի» մեջ են իր Փիլիպպե եղբոր երկու որդիները՝ Վասակն ու Աշոտը, և Սահակ եղբոր երկու ծոռները՝ Գրիգոր Սուփան 2-րդը և Սահակը։

բ) Հայտնի է, երբ որևէ հող է օտարվում և այդ կապակցությամբ պայմանագիր է կնքվում կողմերի միջև, իրավաբանական տեսակետից վկաները պետք է լինեն երկկողմանի։ Եթե նվիրող կողմը վկաներ էր գրում այնպիսի մարդկանց, որոնք այս կամ այն ձևով առնչություն են ունեցել օտարվող այդ հողի հետ (տերեր և ազատներ=խոստակդարներ), ապա ստացող կողմը ևս իր հերթին վկաներ պետք է բերեր այնպիսի մարդկանց, որոնք այս կամ այն ձևով առնչություն պիտի ունենային ստացվող այդ հողի հետ։ Մեր կարծիքով, այդ տիպի մարդիկ էին վավերագրերում նշված 3-րդ կարգի վկաները՝ հոգևորականները, որոնք այդ հողն ստանալու էին եկեղեցուց իբրև «խոստակ», պայմանական օգտատիրության իրավունքով։

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջեր 112, 114։

Մեր այս լրացուցիչ հետևությունից էլ պարզ երևում է, որ եկեղեցու խոստակդարները հոգևորականներն են։

Բայց ո՞ր հոգևորականները։ Եթե աշխարհիկ խոստակդար հանդիսացող սոցիալական շերտի մասին աղբյուրներում ունենք «ազատ» տերմինը, ապա հոգևորական խոստակդարների սոցիալական շերտի մասին չունենք որևէ նման տերմին։ Մենք նշեցինք միայն, որ հոգևորական խոստակդարները 3-րդ կարգի վկաներն են, որոնք Փիլիպպեի վավերագրում անվանված են հետևյալ կերպ. «Եւ ի կրօնաւորաց Ահարոն՝ Երիցու վանական, և Գրիգոր քահանայ, Ստեփաննոս՝ Մաքենոցաց վանական, Յակոբ՝ Ուլծայ աւագերէց, Մանկիկ՝ Ծղկաց քորեպիսկոպոս, Ստեփաննոս՝ Ծիծառնոյ վանական, Գրիգոր՝ դրան երէց, Սիմէոն Շաղատոյ վանական, Գրիգոր Սիմեաց վարդապետ»[1]։ Սրանք բոլորն էլ եկեղեցական պաշտոնյաներ են՝ վանականներ, վարդապետներ, քորեպիսկոպոսներ, ավագերեցներ, քահանաներ և դրան երեցներ։ Այսինքն՝ հոգևորականության միջին և միջինից բարձր խավը։ Հիշենք, որ Վաչագան արքայի 6-րդ կանոնում խոստակդարներ հիշվում են վանական երեցները, վանականները։ Հոգևորականության սոցիալական այս շերտն էր, ահա, որ եկեղեցու կազմակերպության մեջ վարած իր պաշտոնի, ծառայության դիմաց եկեղեցուց ստանում էր հողակտորներ, «խոստակներ» օգտատիրության ու ժառանգական իրավունքով, իբրև dominium utile և դառնում եկեղեցու խոստակդարը։

Նշենք նաև, որ խոստակդարները բացի «խոստակից» ունեցել են նաև հողեր լիակատար սեփականության իրավունքով։ Ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ հնում ազատները միայն խոստակդարներ չէին, նրանք կարող էին ունենալ խոստակի հետ միասին նաև «ժառանգական լիակատար սեփականության իրավունքով կալվածքներ»[2]։ Այդ բանն ավելի լայն չափերով կարող էր գոյություն ունենալ 9—10-րդ դարերում Սյունիքում, երբ հողը մեծ չափերով առուծախի առարկա էր։ Այդ տիպի ազատներ էին, անշուշտ, Փիլիպպեի

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 208։
[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 122։

վավերագրում հեղած ազատներից երկուսը, որոնք «տէր» կոչումն են կրում։ Այդ տիպի ազատներ էին և նրանք, որոնք իշխանների նման «տուրս» էին կատարում՝ հողեր էին նվիրում եկեղեցիներին[1]։

Նման ժառանգական լիակատար սեփականության իրավունքով կալվածքներ են ունեցել, հավանաբար, նաև եկեղեցու հոգևորական «խոստակդարները» իրենց «խոստակի» կողքին։ Կան ուշագրավ փաստեր, որ հոգևորականները ևս «տուրս» են կատարել, հողեր են նվիրել վանքին։ Թեև այդ փաստերը վերաբերում են մի փոքր ուշ շրջանին, բայց հավանական է, որ 9—10-րդ դարերում էլ եղել են նման դեպքեր։

Այսպիսով, խոստակդարների (աշխարհիկ և հոգևորական) հողատիրությունը երկակի բնույթ ունի։ Նրանք և՛ խոստակի (feod) ձևով հող են ստացել դահակալ իշխաններից ու եկեղեցուց՝ օգտագործման իրավունքով, և՛ ունեցել են իրենց սեփական հողերը dominium directum իրավունքով, որոնք, հավանաբար, ձեռք էին բերում գնումների միջոցով։ Ե՛վ մեկը, և՛ մյուսը ժառանգաբար անցնում էին հաջորդներին, այն տարբերությամբ միայն, որ խոստակդարի որդին եթե շարունակեր սյուզերենի նկատմամբ իր հոր ունեցած ծառայության պարտականությունը։

Աշխարհիկ և հոգևորական կալվածատերերն իրենց բոլոր հողերը (ամբողջ «հայրենիքը») չէ, որ տալիս էին խոստակդարներին, ինչպես նաև ճորտ և կախյալ գյուղացիներին՝ հողային ռենտա ստանալու նպատակով, այլ իրենց հողերի մի մասի վրա նրանք վարում էին իրենց սեփական տնտեսությունը։

Ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ Արշակունիների և Մարզպանական շրջանում նախարարները չեն ունեցել իրենց սեփական ինքնուրույն տնտեսությունը։ Նախարարական Հայաստանի մասին հայտնված այս կարծիքը, որի ճշտությունը, մեզ թվում է, դեռ վիճելի է, չի կարելի տարածել հետագա ժամանակաշրջանի վրա, երբ փուլ եկավ նախարարական կա-

[1] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 273։

ուցվածքը։ Ակադ. Հ. Մանանդյանի այն պատճառաբանությունները, թե «մատենագրական աղբյուրներից բնավ չի երևում, որ նախարարներն իրենք ևս եղած լինեն գյուղատնտեսներ, այլ նրանց մեջ շեշտվում է միշտ նախարարների զորական կենցաղը և զինվորական բարքերը»[1], ամենևին չեն կարող ապացույց համարվել ֆեոդալական իշխանների սեփական տնտեսություններ չունենալու մասին, մանավանդ Բագրատունյաց դարաշրջանի Հայաստանում։ Եթե մատենագրական աղբյուրներում ուղղակի վկայություններ չլինելը չի կարող ապացույց հանդիսանալ իշխանական տնտեսությունների գոյության մասին, ապա նա, հավասար չափով, չի կարող ապացույց հանդիսանալ նաև նրանց չգոյության, չլինելու մասին։ Առավել ևս իշխանների զորական կենցաղը չի կարող նրանց տնտեսություն չունենալու մասին ապացույց ծառայել, քանի որ մենք ուրիշ երկրների (Լեհաստան, Ռուսաստան և այլն) օրինակով գիտենք, որ զորական կենցաղ ունեցող ֆեոդալ իշխանները ռազմիկ լինելով հանդերձ, ունեին իրենց տնտեսությունը։

Հետևյալ փաստերն ու վկայությունները ցույց են տալիս, որ 9—10-րդ դարերում Սյունիքում աշխարհիկ և հոգևոր կալվածատերերը իրենց հողերի մի մասի վրա վարում էին սեփական տնտեսություն.

1. Եկեղեցին, որը միշտ հետևում էր ֆեոդալական միջավայրին, ունեցել է իր սեփական տնտեսությունը։ Այդ երևում է Տաթևի վանքի օրինակից։ Արդեն տեսանք, որ Հակոբ եպիսկոպոսը Զաքիկ իշխանից գնել էր Վարարակի ջուրը և «բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ» ջրանցք կառուցել Վարարակի հունից մինչև Տաթևի վանքը ու ջուրը բերել վանքի մոտ գտնվող Ցաքուտն կոչված խոպան դաշտը։ Ջուր ստացած այդ խոպան հողում եպիսկոպոսը տնկում է «որթս սրբէկս[2] և այգիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պտղալիցս[3] ի վայելումն սուրբ հայրապետացն, որ ի սուրբ աթոռս

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 308։

[2] Խաղողի տեսակ։

[3] Այսինքն, «ձթենիս, թզենիս, նռնենիս. և յամենայն մրգաբերաց» (Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 253)։

հաստատին և սուրբ ժողովոյս և ամենայն հաւատացեալ Քրիստոսի»[1]։ Ուշագրավ է, որ նա այդ նորատունկ այգիների մեջ, մի բլրի գագաթի, որը հարդարել ու պարսպապատել էր, շինում է մի «դիտանոց, որ հայեր ի վերայ ամենայն այգեստանոյն»[2]։ Անշուշտ այդ միայն վայելքի համար չէր շինված, այլ այգիները, տնտեսությունը հսկելու նպատակով։ Ինչպես տեսնում ենք, նախ, Հակոբը «ի վայելումն հայրապետացն» ստեղծել է նոր այգի։ Այդեղծությունը տնտեսություն է։ Երկրորդ, նա այդ նոր տնտեսությունը ստեղծելու համար նոր խոպան հող է օգտագործել, նշանակում է Տաթևի վանքի շուրջ ընկած ընդարձակ սահմանները դարձյալ նեղ են եղել։ Երրորդ, այդ խոպան հողը յուրացնելու համար նոր ջրանցք է կառուցել, որի մասին նա իր թողած վավերագրում գրում է՝ շրջապատի բնակչությունն իրավունք չունի «ոչ յարդ կտրել և ոչ ի մարդ և ոչ պարտիզի ջուր տալ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ[3]։ Եւ թէ ոք յանդգնի և զայս ջուրս կտրէ այնպիսի նզովեալ լիցի»[4]։ Այս նշանակում է, որ ջրանցքը բերվել է միայն վանքի տնտեսության համար, որ այդ ջրանցքը վանքի սեփականությունն է, որից շրջապատի գյուղացիներն իրավունք չունեն անգամ իրենց մի մարդը ջրելու։ Կասկածից դուրս է, որ ջրանցքը գյուղատնտեսության երակն է։ Պրոֆ.-դ-ր Իվ. Զավախիշվիլին իրավացի կերպով նկատել է, որ «Սյունյաց եպիսկոպոսների գործունեությունը գլխավորապես տնտեսական և կալվածատիրական է եղել։ Այս կողմից զարմանալի է, որ նրանց մտավոր և հոգևոր գործունեության մասին համեմատաբար շատ քիչ տեղեկություններ կան»[5]։ Նման տնտեսություններ են ունեցել նաև այլ եկեղեցիներ՝ «ի վայելումն սուրբ եղբայրութեանց»։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 254։

[2] Նույն տեղում։

[3] № 5501 ձեռագրում. «...զատեալ ի մատէնեն ըմբելոյ մարդոյ և անասնոյ» (էջ 204), իսկ Զաքիկի վավերագրում «...ոչ մի մարդ զատել, որ մարդ և անասուն ջուր ըմպեն ի մատակէդ» (Ս. Օրբելյան Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 256)։ Իմաստն այն է, որ միայն թույլատրվում է մարդկանց և անասուններին ջուր խմել ջրանցքից։

[4] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 255։

[5] «Մի էջ գյուղացիական շարժման պատմությունից հին Հայաստ-

2. Մենք տեսանք, որ Գրիգոր Սուփան 2-րդը Մաքենացոց ուխտին կատարած «տուրս»-ի մեջ տալիս է նաև «որս ձկանց զԲողաշէն, սեղանոյն»[1]։ Ձկան որսը, անշուշտ, տնտեսության մի ճյուղ է։ Բողաշենը, հավանաբար, Սևանի ափին ձկնորսական մի կայան էր, որը գտնվում էր Սուփան իշխանի ձեռքում և որը նա այժմ նվիրում է Մաքենացոց ուխտին, նրան տնտեսապես ապահովելու նպատակով։ Հարկավ, Բողաշենը Սուփանի ձեռքում եղակի ձկնորսարան չէր, նման կայաններ էլի կլինեին Սևանի ափին։ Նույն ձևով պետք է մեկնել և այն փաստը, որ Բագրատունյաց Աշոտ իշխանաց իշխանը Սևանի եկեղեցուն է նվիրում ի թիվս ուրիշ կալվածքների նաև Կոակծինի որսը։

3. Այդ նույն Գրիգոր Սուփան 2-րդ իշխանը Մաքենացոց ուխտին է տալիս նաև «ջուլիրս եզանց և ջոկս զուարակաց և անդեայս և հօտս ոչխարաց»։ Այս փաստը հարկավ խոսում է Սուփան իշխանի անասնապահական տնտեսության մասին։ Ուշադրավ են եզների հոտերը։ Եզն արտադրական միջոց է, քաշող ուժ։ Որտե՞ղ էր օգտագործում այդ ուժը Սուփանը և կամ որտե՞ղ էր օգտագործելու վանահայրը. անկասկած գյուղատնտեսության մեջ։

4. Ինչպես կտեսնենք ստորև, Սյունիքում գոյություն ուներ կոռ։ Կոռային աշխատանքի գոյությունը (աշխատավճարային ռենտա), անշուշտ, ապացույց է կալվածատեր ֆեոդալների տնտեսության առկայության մասին։ Կարող են մեզ առարկել, որ կոռը կիրառվում էր հասարակական աշխատանքների մեջ՝ կամուրջների, ճանապարհների շինարարության վրա և այլն։ Բայց մենք կտեսնենք, որ այն կիրառվում էր նաև հողի վրա, անգամ մենք ունենք «կոռավար» տերմինը։

5. Ակադ. Հ. Մանանդյանը խոսելով Բագրատունյաց շրջանի քաղաքների մասին, գրում է. «Քաղաքային կյանքում կարևոր տեղ է ունեցել երկրագործությունը և քաղաքային

տանում» (տես Ի. Զավախիշվիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, Երևան, 1937, էջ 11)։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179։ Տես նաև Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 5։

բնակչության զգալի մասը կազմել են հողատեր ազնվական կամ ռամիկ քաղաքացիները, որոնք քաղաքի արվարձաններում ունեցել են այգիներ, բանջարանոցներ և հողագործական այլ տնտեսություն»[1]։

Հայագիտության մեջ կարծիք կա, որ աշխարհիկ և հոգևոր կալվածատերերի այն հողերը, որոնց վրա նրանք վարում էին սեփական տնտեսություն, կոչվել է «ագարակ» տերմինով։ Մեր ուսումնասիրած ժամանակաշրջանին վերաբերող վավերագրերում կան փաստեր, որ եկեղեցիներին նվիրված և կամ եկեղեցիների կողմից գնված գյուղերի, այգիների շարքում կան նաև ագարակներ[2]։ Մեր կարծիքով 9—10-րդ դարերում, գոնե Սյունիքում, այդ ագարակները մեծացել են, անդամ վեր են ածվել գյուղերի։ Այդ երևում է Ս. Օրբելյանի մի ուշագրավ վկայությունից։ Տաթևի վանքի Դավիթ եպիսկոպոսը տեսնելով, որ վանքի սահմանները «յոյժ նեղ և անձուկ» են, և «ոչ էր բաւական պիտոյից աթոռոյն», դիմում է Փիլիպպե իշխանին ու խնդրում մերձակա ագարակները ծախել («ընդ գնոյ տալ զմերձակայ ագարակսն») վանքին։ Իշխանն ընդառաջում է և վանքին է ծախում Արծիվ և Բերդկանարեչ գյուղերը[3]։ «Ագարակ»-ը այստեղ հոմանիշ է «գյուղ»-ին[4]։

Վերջում կարևոր ենք համարում հողատիրության հետ կապված երկու երևույթ ևս նշել։

Նախ, եկեղեցական հողատիրության մեծացման, նրա տնտեսական ու քաղաքական հզորացման վրա աշխարհիկ ազնվականությունը չէր կարող նայել սառն անտարբերությամբ։ Ինչպես նախորդ շրջանի Հայաստանում և Արևմտյան Եվրոպայի միջնադարյան ֆեոդալական երկրներում, այնպես

---

[1] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 9—10-րդ դարերում, Երևան, 1940, էջ 26։

[2] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 179, 229, 273, 352։

[3] Նույն տեղում, էջեր 204, 205։

[4] Արդյոք այդ մասին չի խոսում այն փաստը, որ Ս. Օրբելյանի հարկացուցակում նշված գյուղերի մեջ տարբեր գավառներում հինգ գյուղ կոչվում է Ագարակ, մեկ գյուղ՝ Ագարակիկ, մեկ գյուղ՝ Ագարակի ձոր։

էլ 9—10-րդ դարերում Սյունիքում աշխարհիկ ազնվականության դիմադրել է եկեղեցու հզորացմանը և պատեհ առիթներով հափշտակել եկեղեցական հողերը։ Ներդասակարգային այդ գզվռտոցի առկայության մասին պերճախոս ապացույց է այն փաստը, որ, ինչպես վերևում տեսանք, Հակոբ եպիսկոպոսի «ապստամբության» ժամանակ խափանված Տաթևի վանքի «ժառանգությունը» (հողերը) «պակասեցին» և հափշտակվեցին իշխանների ու ազատների կողմից։ Ֆ. Էնգելսը նշում է. «Ասպետները միանգամայն ավելորդ էին համարում այն ժամանակվա հոգևորականության ամբարտավանացած դասը և նախանձով նայում հոգևորականների լայնատարած կալվածքների, ինչպես և կուսակրոնության և եկեղեցական կազմակերպության շնորհիվ նրանց կուտակած հարստությունների վրա»[1]։

Երկրորդ, եկեղեցական հողատիրության, հատկապես Տաթևի հողատիրության, քաղաքական և հոգևոր իշխանության մեծացումով կենտրոնախույս ձգտումներ են առաջանում Սյունիքի եկեղեցական կազմակերպության մեջ։ Այդ հետևանք էր այն բանի, որ Սյունիքի եկեղեցին, հակառակ աշխարհիկ ֆեոդալական կազմակերպության, կենտրոնացած կազմակերպություն էր։ Տաթևի վանքը և նրա եպիսկոպոսը հանդիսանում էին ողջ եկեղեցիների և նրանց հողերի սեփականության տերը, գերագույն հոգևոր իշխանը։ Եթե առանձին գավառների տերեր հանդիսացող գահակալ իշխաններն ինքնուրույն և անկախ էին իրենց գավառներում (աշխարհում) և իրենց կալվածքների տերն էին dominium directum իրավունքով, ապա այդ նույն գավառների եկեղեցիներն ու վանքերը, նրանց վանահայրերը չունեին այդ անկախությունն ու իրավունքը։ Բայց, ինչպես երևում է, նրանք ձգտում էին դրան։ Եվ իրոք, ինչպես ցույց ենք տվել առաջին գլխում, 10-րդ դարում պատեհ առիթ համարելով Հակոբի «ապստամբությունը», հափշտակում են Տաթևի վանքի ժառանգությունը և իրենց հայտարարում առանձին եպիսկոպոսություններ իրենց գավառներում։

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 33։

* * *

Հողատիրության ձևերի հետ սերտորեն կապված է նաև ֆեոդալական երարխիայի հարցը։ Հայտնի է, որ ֆեոդալական հասարակարգում տիրող դասակարգն ամենուրեք բաժանվում էր երկու դասի՝ հողատեր ազնվականների և հողատեր հոգևորականների։

Վերևում կատարված վերլուծումից պարզ եղավ, որ Սյունիքում 9—10-րդ դարերում առաջին դասի մեջ մտնում էին գահակալ իշխանները, միջին ու մանր ազնվականությունը (ազատները), իսկ երկրորդ դասի մեջ՝ եպիսկոպոսները, վանահայրերը, վարդապետները, դրան երեցները և այլ հոգևոր վեղարավորները։ Տիրող դասակարգի այս երկու դասերն էլ ունեին իրենց քաղաքական ուրույն կառուցվածքը, աշխարհիկ ու հոգևորական երարխիան։ Քննենք դրանք առանձին-առանձին։

Աշխարհիկ երարխիա։— Հայտնի բան է, որ ֆեոդալական հասարակության մեջ երարխիան նման է աստիճանավոր մի բուրգի, ուր վասալները հպատակվում են սենիորին ներքևից դեպի վերև։ Սյունիքում աշխարհիկ երարխիայի բուրգը կառուցված էր հետևյալ կերպ։ Նրա ամենաստորին աստիճանում գտնվում էին ազատները, երկրորդ աստիճանում՝ գահակալ իշխանները, իսկ երրորդ աստիճանում էր՝ գահերեց իշխանը։ Սա Սյունիքի ներքին երարխիան էր՝ իբրև ֆեոդալական ինքնուրույն պետական մի օրգանիզմ։ Բագրատունյաց թագավորության ստեղծումից հետո, երբ Սյունիքը քաղաքականապես ենթարկվեց Բագրատունիների գերիշխանությանը, նրա երարխիայի բուրգին ավելացավ մի 4-րդ աստիճան ևս՝ Բագրատունի թագավորը, իբրև սյուզերեն իշխան։ Երարխիայի այս քառաստիճան ձևը նման չէր նախորդ, նախարարական շրջանի երարխիային։ Պրոֆ. Խ. Սամվելյանն իրավացի կերպով նկատում է, որ «արաբական իշխանության ներքո, երբ նախարարական սիստեմը քայքայվում է», նախարարական շրջանի երարխիան «կորցրեց իր նախկին յուրահատուկ բնույթը», որը «կազմակերպվել էր դարավոր տրադիցիաների և սովորույթի իրավունքի համաձայն՝ նախարարական հասարակական-քաղաքական պայմաններում»։ Եվ էլի «արաբական

տիրապետության շրջանում Հայաստանի ֆեոդալական հիերարխիան ընդունեց նոր կերպարանք»[1]։

Սակայն, պրոֆ. Խ. Սամվելյանը սխալ կերպով է պատկերացնում նախարարական սիստեմի քայքայման հետևանքով առաջացած այդ փոփոխության բուն էությունը։ Դարձյալ հանցավորը հողի սեփականության մասին նրա ունեցած սխալ կոնցեպցիան է։ «Ֆեոդալական հիերարխիան,—գրում է նա,—նոր պայմաններում կերպարանափոխվեց այն ուղղությամբ, որ ցաք ու ցրիվ եղած, ստորացված և ուժասպառ հին ֆեոդալներն, ինչպես և սոցիալ-քաղաքական իրադարձություններում նորելուկ հայ ֆեոդալները, ձգտում էին իրենց գոյությունն ապահովել հզոր ու ազդեցիկ իշխանների հովանու տակ։ Այդպիսի իշխաններ էին արաբական տիրապետության շրջանում Բագրատունի, Արծրունի և Սյունի նախարարական տոհմերը։ Սրանք ընդունակ եղան պահելու ոչ միայն իրենց վաղեմի հասարակական-քաղաքական նշանակությունը, այլև սկսեցին այժմ ղեկավար դեր խաղալ հայ ֆեոդալական միջավայրում՝ շնորհիվ իրենց տնտեսական հզորության և քաղաքական ազդեցության։ Նրանք դարձան ինքնուրույն սենիորներ, ունենալով իրենց ձեռքի տակ վասալական ու ենթավասալական ֆեոդալ իշխաններ, որոնց թիվը միշտ ավելանում էր վերոհիշյալ խոշոր իշխանների էքսպանսիայի շնորհիվ»[2]։

Միակ փոփոխությունը, ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի, այն է, որ Բագրատունի, Արծրունի և Սյունի նախարարական տոհմերը դառնում են ինքնուրույն սենիորներ, այսինքն՝ դառնում են իրենց հողերի սեփականատերը dominium directum իրավանքով և իրենց շուրջը համախմբում ցաք ու ցրիվ, ուժասպառ եղած, ինչպես նաև նորելուկ ֆեոդալներին իբրև վասալներ՝ էքսպանսիայի միջոցով[3]։ Պրոֆ. Խ. Սամվելյանի կոն-

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջեր 229, 230։

[2] Նույն տեղում, էջ 230։ Այստեղ և ամենուրեք ընդգծումները մերն են։

[3] Ի դեպ նկատենք, որ պրոֆ. Խ. Սամվելյանը, երբ խոսում է (տվյալ դեպքում) ֆեոդալական Հայաստանի թագավորներ չունեցած ժամանակաշրջանի մասին, գտնում է, որ «յուրերեն են դառնում «նախարարական տոհմերը», դրանով իսկ նա հերքում է իր հիմնական

դեպցիայի տեսակետից այդ, իրոք, մեծ փոփոխություն էր։ Բայց իրականում դա փոփոխություն չէր, որովհետև նախարարական այդ տոհմերը մինչ այդ էլ ինքնուրույն սենիորներ էին, հողի բացարձակ սեփականատերեր։

Շարունակելով իր միտքը պրոֆ. Խ. Սամվելյանը գրում է, որ սկզբում գերիշխող դիրք է գրավում Բագրատունիների նախարարական տոհմը, որի մեջ «ֆեոդալական հիերարխիան գլխավորում էր ավագագույնն այդ տոհմից։ Նրանք, ինչպես և մյուս նախկին նախարարները, սկսեցին կոչվել իշխաններ։ Բագրատունի տոհմի ավագը, որպես սենիոր մնացյալ վասալ իշխանների, կոչվում էր «իշխանաց իշխան», իսկ նույն տոհմի մյուս անդամները, որպես գերիշխող տոհմին պատկանողներ, կրում էին «մեծ իշխան» տիտղոսը։ «Նույն երևույթն ենք նկատում նաև Արծրունյաց և Սյունյաց ֆեոդալական իշխանություններում»[1]։ Եթե նույն երևույթն ենք նկատում նաև Սյունիքում, ապա, ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի, ստացվում է հետևյալը՝ ա) նախարարական սիստեմի քայքայումից հետո էլ Սյունիքում գոյություն ունի նախարարական տոհմ, որը դարձել է իր հողերի սեփականատերը և ինքնուրույն սենիոր. բ) նախարարական այդ տոհմն ունի վասալներ, որոնք նրան են ենթարկվել իրենց անվտանգությունը նրա հովանու տակ ապահովելու համար և կամ նա նրանց իրեն է ենթարկել էքսպանսիայի միջոցով (ե՞րբ և ո՞ւմ է էքսպանսիայի ենթարկել Սյունիքի նախարարը). գ) Սյունիքի նախարարության մեջ գերիշխող գլխավորում է նախարարական այդ տոհմի ավագը, որը կոչվում էր «իշխանաց իշխան», իսկ նույն տոհմի մյուս անդամները՝ «մեծ իշխան»։

Վերևում մեր կատարած ամբողջ վերլուծման հիման վրա կարելի է պնդել, որ պրոֆ. Խ. Սամվելյանը ճիշտ չի պատկերացնում նախարարական սիստեմի քայքայման բուն էությունը։ Մեր այդ վերլուծումից երևում է, որ նախարարական սիստեմի քայքայումից հետո Սյունիքում գերիշխող նախարարական տոհմը քայքայվեց. նրա անդամները, «սեպուհնե-

կոնցեպցիան այն մասին, որ ֆեոդալական Հայաստանում հողի գերագույն սեփականատերերը միշտ էլ եղել են թագավորները։

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 231։

ը» իրար մեջ բաժանեցին նախարարական «աշխարհը» և յուրաքանչյուր սեպուհ դառնալով իրեն բաժին ընկած հողի սեփականատերը, dominium directum իրավունքով վերածվեց գահակալ ինքնուրույն իշխանի, ինքնուրույն սենիորի։ Մեր վերլուծումից երևում է նաև, որ Սյունիքում երարխան ղեկավարում էր ոչ թե արդեն գոյություն չունեցող նախարարական տոհմի ավագը, այլ գահակալ իշխաններից ուժեղագույնը, գահերեց, որ «իշխանաց իշխան» կոչվում էր ոչ թե տոհմի ավագը, այլ գահերեց իշխանը և այլն։ Պրոֆ. Խ. Սամվելյանի ամբողջ սխալն այն է, որ նա նախարարական սիստեմի քայքայումը հանգեցնում է այն բանին, որ իշխող նախարարական տոհմն առաջ ինքնուրույն սենիոր չէր (հողի սեփականատերը չէր), իսկ այժմ դառնում է ինքնուրույն սենիոր, այսինքն՝ դառնում է ժամանակավորապես հողի սեփականատեր։ Ժամանակավոր ենք ասում, որովհետև ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի Բագրատունյաց թագավորության հիմնումից հետո հողի սեփականության իրավունքը նորից անցնում է Բագրատունի թագավորներին, պետությանը։

Եվ այսպես, պրոֆ. Խ. Սամվելյանի կարծիքով իր պատկերացրած փոփոխությունից հետո ֆեոդալական երարխան Բագրատունիների ժամանակ ստանում է հետևյալ կերպարանքը։ Բուրգի գագաթում «թագավորաց թագավորը», նրանից հետո «երկրորդ աստիճանում կանգնած էին Բագրատունիների գերիշխանությունը ճանաչող Արծրունի և Սյունի «իշխանաց իշխանները» (=նախարարական տոհմի ավագը, նախարարը—Հ. Ուր.) իրենց վասալներով հանդերձ (այսինքն՝ պրոֆ. Խ. Սամվելյանի նշած ցաք ու ցրիվ ուժասպառ եղած ֆեոդալները—Հ. Ուր.), որոնք, ինչպես Բագրատունիների նախկին այլ ենթավասալները, այժմ բռնում էին երրորդ աստիճանը»։ «Վերջապես չորրորդ աստիճանը բռնում էին ազատները»[1]։ Եթե այս ընդհանուրից ազատենք Սյունիքը, նրա երարխան, ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի, կստացվի՝ Բագրատունի թագավոր—Սյունիքի «իշխանաց իշխանը» (=նախարարական տոհմի ավագը)—նրա վասալները (ցաք ու ցրիվ, ուժասպառ եղած և կամ էքսպանսիայով հպատակված ֆեոդալները)—ազատները։

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 231

Երարխայի այս գծի մեջ նրա բոլոր աստիճաններում էլ վասալական հպատակությունը, ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի, խարսխված է հողային կախվածության վրա։

Իսկ մեր կարծիքով, նախարարական սիստեմի քայքայումից հետո Բագրատունյաց շրջանի Սյունիքի երարխան ուներ հետևյալ ձևը՝ Բագրատունի թագավոր — Սյունիքի գահերեց իշխան—գահակալ իշխաններ—ազատներ։ Մեր նշած ֆեոդալական երարխայի առաջին երկու աստիճանում վասալական հպատակությունը խարսխված էր անձնական կախվածության վրա, իսկ վերջին աստիճանում՝ հողային կախվածության վրա։ Ինչպես տեսնում ենք, թե պրոֆ. Խ. Սամվելյանի, թե մեր ցույց տված երարխան արտաքուստ նման են, երկուսն էլ քառաստիճան են, բայց արմատական տարբերություն կա նրանց միջև։

Երարխայի հարցի հետ սերտ կերպով կապված է վասալների սյուզերենի նկատմամբ ունեցած պարտավորությունների հարցը։

Ինչպես գահակալ իշխաններն իրենց քաղաքական սյուզերեն գահերեց իշխանի, այնպես էլ վերջինս իր քաղաքական սյուզերեն Բագրատունի թագավորի նկատմամբ, ունեին հատուկ պարտավորություններ, «ծառայություններ»։ Նրանք ունեին երեք կարգի պարտավորություն. ա) ռազմական պարտավորություն։ Որ իրոք Սյունիքի գահերեցը Բագրատունի թագավորի նկատմամբ ուներ ռազմական պարտավորություն, երևում է վերը մեր ցույց տված մի քանի փաստերից (տե՛ս վերևում, էջ 93—94). բ) գործակալական պարտավորություն։ Թեև այս մասին կոնկրետ փաստեր չունենք, բայց որոշ կրոնական խոսում են նրա գոյության մասին[1]. գ) հարկային

[1] Թերևս կովան կարող է հանդիսանալ այն փաստը, որ Սմբատ Իշխանը Յուսուֆի արշավանքից հետո վերադարձավ փախուստից, նախ գնաց Աշոտ Երկաթի մոտ, որը նրան ընդունեց «մեծաւ պատուով» և շքեղացուց «ազգի ազգի փառոք»։ Նույնը Գեղաքունիքի Վասակը Աշոտ Բագրատունու կողմից ստացավ «պատիվներ»։ Այս մասին հեռավոր փաստ կարող է ծառայել նաև Բագրատունյաց անկման տարիներում, նրանց արքունիքում վեստ Սարգիս Սյունեցու տխրահռչակ ծառայությունը։

պարտավորություն։ Այս հարցը լուրջ պրոբլեմատիկ հարց է, որն ունի ոչ միայն Սյունիքի, այլ համահայկական մասշտաբի նշանակություն։ Արդյոք Բագրատունյաց դարաշրջանում վասալ իշխանները հարկ տալի՞ս էին իրենց սյուզերենին՝ Բագրատունյաց թագավորին։

Ինչպես գիտենք, ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով, Արշակունյաց Հայաստանում վասալ ֆեոդալ նախարարները հարկ չէին տալիս հայոց թագավորին, այսինքն՝ նրանք հարկային պարտավորություններ չէին կրում իրենց քաղաքական սյուզերենի նկատմամբ։ Եթե այդպես էր իրերի դրությունը այն ժամանակ (թեև վիճելի է այդ), ապա այժմ այդպես չէր։ Թովմա Արծրունու վերը մեջբերված վկայությունից (տե՛ս էջ 100, 102) պարզ երևում է, որ Սյունիքը հարկ է մուծել Բագրատունիներին։ Հարկ են մուծել նաև կայսրիկները, որոնք Սյունիքից մի տարի առաջ, 902 թ., ըստ Թովմա Արծրունու, «ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին, տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր»[1]։ Մի այլ տեղ Թովմա Արծրունին վկայում է, որ Հայոց, Վրաց, Աղուանից տերությունների բոլոր կողմերը («սահմանս»), քաղաքացիները, հազարապետները, գավառակալները «սիրողաբար առ նա (Սմբատ 1-ին թագավորին—Հ. Ուր.) զհնազանդութեանն հարկ հարկանէին»[2]։ Հ. Դրասխանակերտցու վկայությամբ Եղերացվոց թագավորը ևս «ի սակս ծառայութեանն» մեջ է Սմբատ թագավորի նկատմամբ[3]։ Նման վկայություններ կարելի է գտնել նաև այլ պատմիչների մոտ, բայց այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ Բագրատունի թագավորների վասալ իշխանները հարկատու էին իրեն։

Մեզ կարող են ասել, որ այդ հարկերն արաբական խալիֆաթին մուծվող հարկերն են, որոնց հավաքումը, ինչպես տեսանք վերևում, հանձնված էր Բագրատունի թագավորներին (ոչ միայն Հայաստանից, այլև Վրաստանից ու Աղվանքից)։ Այդ երևում է նաև արաբական 10-րդ դարի հեղինակ Կուդամայի «Գիրք խարաջի մասին» աշխատությունից, ուր Տարոնից հյուսիս ընկած Հայաստանը, որի մեջ էին մտնում Ջուրզանը, Դաբիլը, Բերզենդը, Սիրաջտայրը, Արճեշը, Խլաթը, Սիասջանը, Առանը և այլ մարզեր հարկային մի միավոր էին կազմում[1], որի հարկահանումն էլ հենց հանձնված էր Բագրատունիներին։ Բայց հարցը միայն արաբական գանձարանը մուծվող հարկի մասին չէ։ Բագրատունիները լոկ հավաքողի տեխնիկական գործը չէ, որ կատարում էին։ Հավանաբար, այդ հարկերի որոշ մասը մնում էր իրենց օգտին։

Բացի դա, այդ հարկային հպատակությունն իր մեջ արտացոլում էր քաղաքական հպատակություն։ Այդ է պատճառը, որ հարկը Բագրատունիներին չմուծելը նշանակում էր ապրստամբություն նրանց գերիշխանության դեմ, որը ճնշվում էր Բագրատունիների կողմից մեծ կրքոտությամբ։ Մյուս կողմից, ինչպես տեսանք, այդ հարկը հավաքելու գործում Բագրատունիները թշնամանում ու կռվում էին Ատրպատականի ոստիկանների հետ, որոնք իրենց հերթին ձգտում էին Հայաստանի հարկահանության իրավունքին։ Խոսքն այստեղ, ուրեմն, ոչ թե տեխնիկական աշխատանքի մասին է, այլ իրական շահի մասին։ Թեև հարկային պարտավորության այս հարցը առանձին, մանրազնին ուսումնասիրության հարց է, որը դեռ սպասում է իր կատարողին, բայց այս բոլորի հիման վրա կարելի է շտապեցնել, որ Բագրատունի թագավորների վասալ ֆեոդալ իշխանները հարկատու էին իրենց նկատմամբ։

Սոցիալական ինչպիսի՞ շերտ էին «ազատները» 9—10-րդ դարերում Սյունիքում, որոնք, ինչպես արդեն նշեցինք, ֆեոդալական երարխիայի ստորին աստիճանն էին կազմում։ Այս հարցի լուսաբանման համար ավելորդ չենք համարում մեջբերել ազատների մասին եղած բոլոր վկայությունները։

1. «... Հաստատէ արձան անջինջ առաջի... և Գագիկայ՝ Սիւնեաց տեառն, և Հրահատայ՝ ... և այլ բազում ազատաց և իշխանաց»[2]։

---

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 394։

[2] Նույն տեղում, էջ 381։

[3] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 202։

---

[1] Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане (տես „Сборник материалов для описания местностей и племён Кавказа", Тифлис, вып. XXXII, 1903, էջ 29)։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 174—175։

2. «Իսկ գահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ ժողովեալ զեղբարս, զազգայինս իւր և զազատագունդ զօրս ամենայն իւրոյ իշխանութեանն՝ ել ընդառաջ իսմայելականացն»[1]։

3. «Եւ առեալ զնա գայ ի մարտ ընդ անառիկ ամրոցին Երնջակայ, յորում կային պատուական տիկնայքն Սիւնեաց Շուշան և Սոփի, և այլ բազում ազատ կանայք և ազատ որեար (մարդիկ—Հ. Ուր.)»[2]։

4. «Եւ վկայք լիցին... տէր Ատրներսեհ... տէր Վահան... նոյնպէս և յիմ ազատաց Հուռ, Քուրդոյ և այլն»[3]։

5. «Վկայութեամբ իմ եղբորորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց»[4]։

6. «Ապա հասեալ վախճան առաքինւոյն Սողոմոնի և ժողովեալ տէրանցն Սիւնեաց և ամենայն ազատաց նոցա»[5]։

7. «Մեք նուաստ ծառայքս Աստուծոյ, Հայկազնի իշխանքս Սիւնեաց՝... և այլ ազատք և համազգիք մեր...»[6]։

8. «Ստանայ... նա (Հակոբ եպիսկոպոսը—Հ. Ուր.) և բազում տուրս յիշխանաց և յազատաց»[7]։

9. «... Նմանապէս և իշխանքն զգեղանն էին բաշխեալ ազատաց իւրեանց»[8]։

Ազատների սոցիալական վիճակի մասին Արշակունյաց և Մարզպանական շրջանի ֆեոդալական հարաբերություններն ուսումնասիրող գիտնականների մոտ արտահայտված են հակասական կարծիքներ[9]։ Բայց ընդունված ու քաղաքացիական իրավունք է ստացած ակադ. Ի. Ջավախովի և ակադ. Հ. Մա-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185, տես նաև էջ 199։

[2] Նույն տեղում, էջ 190։ Նույնը տես նաև էջ 191։

[3] Նույն տեղում, էջ 207։

[4] Նույն տեղում, էջ 220։

[5] Նույն տեղում, էջ 222։

[6] Նույն տեղում, էջ 231։

[7] Նույն տեղում, էջ 273։

[8] Նույն տեղում, էջ 305։

[9] Ղ. Ինճիճյան, Հնախոսութիւն, հ. 2, էջ 77, 78։ Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, էջեր 451, 452 և այլն։

նանդյանի կարծիքը, համաձայն որի ազատները նախարարների և ռամիկների արանքում ընկած դաս են[1], այսինքն՝ մանր հողատեր ազնվականություն[2]։ Սոցիալական այս շերտի դրությունը և այն արտահայտող «ազատ» տերմինը, հիմնականում, ոչ մի փոփոխություն չի կրել, պահպանվել է նույնությամբ։

Վերոհիշյալ վկայությունները, և հատկապես 4, 5, 6 և 9 վկայությունները, պարզ ու որոշակի ցույց են տալիս, որ ազատներն այժմ Սյունիքում էլ ո՛չ թե հավասար են գահակալ իշխաններին, այլ ստորադաս և հպատակ նրանց, «ազատք նոցա»։ Մյուս կողմից, այդ վկայություններից երևում է, որ ազատները սոցիալապես բարձր են գյուղացիներից, ռամիկից, որովհետև սրանք մասնակցում են իշխանների գործարքներին, իսկ ռամիկը ոչ։ «Ազատների» իշխանների նկատմամբ ունեցած հպատակության հիմքը նրանցից օգտագործման համար ստացած հողն էր, խոստակը (feod-ը), որի դիմաց նա իշխանի հանդեպ կրում էր մի շարք պարտավորություններ, «ծառայություններ»։ Հիմնական պարտավորությունը զինվորական ծառայությունն էր։ Վերև մեջբերված երկրորդ վկայությունից պարզ երևում է, որ այստեղ Սյունիքում էլ գոյություն ուներ «ազատագունդ, զորք», կազմված հենց այս ազատներից։ Ամեն մի գահակալ իշխան իր ազատներից կազմում էր ազատագունդ զորք, այդ թվում նաև գահերեց իշխանն՝ իր ազատներից։ Հարկ եղած դեպքում բոլորը միացվում էին գահերեցի հրամանատարության ներքո։ Կասկածից դուրս պետք է համարել, որ Սյունիքի այս ազատագունդ զորքը ևս հեծյալ էր։ Դրան նպաստում էր նաև Սյունիքում ձիաբուծության զարգացած լինելը։ Պետք է ընդունել, որ այստեղ ևս «ազատներն արտաքին հատկանիշով ներկայացնում էին ձիա-

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 93։ Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, էջ 133։

[2] Նախորդ դարաշրջանում «ազատն» ունեցել է նաև լայն իմաստ (տես Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջեր 93, 94). այդ իմաստով 9—10-րդ դարերում Սյունիքում չենք հանդիպում

վորների դաս, նման... միջնադարյան Եվրոպայի գերմանական Ritter և ֆրանսիական chevalier դասերին»[1]։

Բացի զինվորական այս ծառայությունից ազատները, անշուշտ, ունեին նաև այլ ծառայություններ (պարտավորություններ), ասենք գործակալական և այլն, սակայն այդ ցույց տալու համար կոնկրետ վկայություններ չունենք։

Հոգևորական երարխիա։— Ֆ. Էնգելսը ցույց է տալիս, որ հոգևորականությունը բաղկացած էր միմյանցից տարբեր երկու դասակարգերից՝ «արիստոկրատիկ և պլեբեյական»։ Արիստոկրատիկ դասակարգը կազմում էին «եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, արքաները, պրիորները և մյուս պրելատները»։ Հենց այս արիստոկրատիկ դասակարգն էլ կազմում էր հոգևորական երարխիան[2]։ Նույնը մենք տեսնում ենք նաև Սյունիքում։ Հոգևորական բուրգի ստորին աստիճանում կանգնած էին հոգևորական «խոստակդարները», վարդապետները, քորեպիսկոպոսները, երեցները և այլն։ Իսկ նրանից բարձր կանգնած էր եպիսկոպոսը, իսկ բուրգի գլուխ՝ Հայաստանի մասշտաբով, կաթողիկոսը։ Նկատենք, որ եկեղեցական երարխիան չի կարելի անջատել հոգևոր կենտրոնական իշխանությունից՝ կաթողիկոսից։ Եթե 9-րդ դարի Սյունիքում, դեռ մինչև Բագրատունյաց թագավորության հիմնադրումը, կար առանձին աշխարհիկ երարխիա (նույնպես նաև Վասպուրականում և այլն), ապա եկեղեցական երարխիան միշտ էլ եղել է համահայաստանյան։ Նա իր մեջ ընդգրկել է Հայաստանի բոլոր նահանգների («աշխարհների») հոգևորականներին։ Կաթողիկոս — առանձին նահանգների եպիսկոպոսներ, կամ մետրոպոլիտներ — «խոստակդար» հոգևորականներ (բոլոր նահանգների, ըստ որում նաև կաթողիկոսարանի), ահա այս է հոգևորական երարխիան Հայաստանում։ Ինչպես տեսնում ենք, սա եռաստիճան երարխիա է և իր ձևով տարբերվում է աշխարհիկ երարխիայից։ Այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ Արշակունիների անկումից, ինչպես նաև նախարարական սիստեմի քայքայումից հետո, երբ կենտրոնական-քաղաքական իշխանությունը վերացավ, հոգևորական կենտրոնական իշխանությունը չվերացավ, նա մնաց կաթողիկոսի ձեռքում, կենտրոնացած ձևով։

Հոգևորական երարխիայից դուրս էր հոգևորական պլեբեյական դասը։ Կա՞ր արդյոք այդպիսի դաս Սյունիքում, մեր կարծիքով այո։ Սկզբնաղբյուրները տալիս են եկեղեցական պաշտոնյաների 9 «դաս», որոնցից վերջին երեքը վարում էին եկեղեցական ամենահասարակ պաշտոններ՝ սպասարկել տաճարին, կրել մոմեր, գավազան, պահպանել և պահակել եկեղեցիների դռները (7-րդ «դասը»), ընթերցել վարդապետական գրվածքները (8-րդ «դասը»), սաղմոսել և երգել (9-րդ «դասը»), որոնք փաստորեն ֆիզիկապես աշխատողներ էին[1]։ Բացի սրանցից, անշուշտ, կային նաև գյուղական հասարակ կիսագրագետ հոգևորականներ։ Պլեբեյական այդ տարրերը չէին մտնում եկեղեցու ֆեոդալական երարխիայի մեջ և այդ երարխիայի հարստություններից բաժին չունեին[2]։

Սյունիքի վերոհիշյալ աշխարհիկ և հոգևորական ֆեոդալական երարխիայի ամբողջ բուրգն իր ծանրությամբ կանգնած էր աշխատավոր ժողովրդի մեջքին։ «Ֆեոդալական այս կառուցվածքը — շահագործվող և արտադրող դասակարգի դեմ ուղղված ասոցիացիա էր»[3]։

2. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ամեն մի ֆեոդալական երկրում հիմնական շահագործվող դասակարգը աշխատավոր գյուղացիությունն է, որը և հանդիսանում է գլխավոր արտադրող դասակարգը։ Խոսելով այդ դասակարգի մասին, մեզ ամենից առաջ հետաքրքրում է այն

---

[1] Ս. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջերջ 219, 220։

[2] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 34։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 111, տես նաև Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագրգ գաւառի, էջեր 653—696, Մ. Օրմանյան, Ազգապատում, 1-ին մաս, էջ 230։

[2] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 36։

[3] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, т. IV, էջ 14։

հարցը, թե սոցիալական և իրավական տեսակետից ինչպիսի խավերի էր բաժանվում 9—10-րդ դարերում Սյունիքում գյուղացիությունը։

Հայագիտության մեջ ամենից դժվարին հարցերից է աշխատավոր դասակարգի՝ գյուղացիության, ինչպես նաև քաղաքային աշխատավորության սոցիալական և իրավական վիճակի ուսումնասիրությունը։ Դժվարությունը բխում է նրանից, որ սկզբնաղբյուրները բառացիորեն ուղղակի ոչ մի խոսք չեն ասում աշխատավոր դասակարգի մասին։ Թե Ս. Օրբելյանի, և թե այլ աղբյուրների մեջ մենք չենք գտնում որևէ կոնկրետ, կամ անգամ պատահական վկայություն Սյունիքի գյուղացիության մասին։ Միակ աղբյուրը կարելի է համարել մեզ հասած վավերագրերը, որոնց մեջ խոսվում է մոտ 20 գյուղերի օտարման պայմանների մասին։ Սյունյաց գյուղացիության սոցիալական և իրավական վիճակի մասին մեր դատողությունները հենված են վավերագրային այդ կցկտուր տվյալների վրա։

Ֆեոդալական հասարակարգում արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսանում է ֆեոդալի սեփականությունը արտադրության հիմնական միջոցներից մեկի՝ հողի նկատմամբ, որը նա օգտագործում է աշխատավոր գյուղացիությանը շահագործելու համար։

9—10-րդ դարերում Սյունիքում գյուղերի օտարման պայմանների մասին իրավական փաստաթղթեր հանդիսացող վավերագրերը ցույց են տալիս, որ տասնյակ գյուղեր օտարվում էին իրենց ամբողջ սահմաններով՝ լեռներով, դաշտերով, ոստերով, ջրարբիով, արտերով, պարտեզներով, արոտատեղիներով, մարգերով, այգիներով, ծառերով և տնկերով, ջրաղացներով, գետերով և ջրերով, եկեղեցիներով, բերդերով և այլ շինվածքներով, մի խոսքով, ինչպես իրենք են ասում, «ամենայն մաիւք»։

Այս նշանակում է, որ օտարվող այդ գյուղերի արտադրության հիմնական միջոցներից երկուսը՝ հողը և ջուրը պատկանում էին աշխարհիկ և հոգևոր կալվածատեր ֆեոդալներին։

Արդ, հարց է առաջանում՝ այդ գյուղերում նստած, հողն ու ջուրն օգտագործող, բուն արտադրապրոցեսը կատարող

գյուղացիությունն ի՞նչ էր լինում։ Օտարվո՞ւմ էր նա էլ հողի ու ջրի հետ միասին, թե ոչ։

Առողջ տրամաբանությունն այս հարցին տալիս է դրական պատասխան։ Հակառակը մտածել անհնարին է։ Տաթևի վանքի համար միանգամայն անիմաստ կլիներ տարբեր գավառներում գտնվող այդ գյուղերն ստանալ առանց այդ հողերը մշակող գյուղացիների։ Մյուս կողմից, օտարվող հողերն իշխանների կողմից հարկերից ազատելը ինքնին ցույց է տալիս, որ գյուղերն օտարվում էին բնակչության հետ միասին, որովհետև հարկը տալիս էին գյուղացիները։ Այստեղից բխում է երկու լուրջ հետևություն։ Նախ՝ այդ գյուղերը գյուղական համայնքներ են և երկրորդ՝ այդ գյուղերի գյուղացիությունը կապված է հողի հետ և կախում ունի կալվածատեր իշխանից, իսկ օտարումից հետո կալվածատեր եկեղեցուց։ Այս է ահա օտարվող այդ գյուղերի գյուղացիության իրավական վիճակի ընդհանուր գնահատականը։

Հողի հետ կապվածությունը և կախյալ վիճակը, անշուշտ, ճորտության նշան է։ Եթե հարցին մոտենանք ձևական տեսակետից, ապա պետք է ենթադրենք, որ օտարվող այդ գյուղերի գյուղացիությունը, այս ժամանակաշրջանում, արդեն համարյա ամբողջապես ճորտացած էր։ Ջավախիշվիլին հենց այդպես էլ դիտում է[1]։ Նման պնդումը կլիներ ձևական և սխալ, որովհետև հողի հետ կապված և կալվածատիրոջից կախված լինելը հարաբերական հասկացողություններ են և սպառիչ հատկանիշներ չեն ճորտ հասկացողության համար։ Ամբողջ խնդիրն այն է, թե ինչպե՞ս էր արտահայտվում հողի հետ նրա կապվածությունը և ինչպիսի՞ն էր նրա կախումը կալվածատիրոջից։

Ճորտ հասկացողության հիմնական հատկանիշը այն է, որ գյուղացին ոչ միայն նստած լինի կալվածատիրոջ հողի վրա, այլև ամրացած լինի հողին, որ գյուղացին ոչ միայն հողային կախում ունենա կալվածատիրոջից, այլև անձնական կախում ունենա, որ կալվածատերը իշխանություն ունե-

1 Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, էջ 12, 13։

նա գյուղացու նկատմամբ, որն արտահայտվի արտատնտեսական հարկադրանքով։ Խնդիրն հենց այն է, որ պարզենք օտարվող այդ գյուղերի գյուղացիության հողի հետ կապվածության և կալվածատիրոջից կախվածության բնույթը, որը և կորոշի նրանց սոցիալական ու իրավական վիճակը։ Որպես օրինակ, վերցնենք վերոհիշյալ գյուղերից երկուսը։

Ցուր[1].— Այս գյուղին մենք առաջին անգամ հանդիպում ենք 906 թ., երբ Աշոտ գահերեց իշխանն այն նվիրում է Տաթևի վանքին իր աղարակների, վանքի և համանուն գետի հետ միասին։ Օրբելյանի վկայությամբ Տաթևի վանքը անմիջապես ձեռնամուխ է լինում Ցուրի բնակիչներին հանելու գործին, բայց այդ չի հաջողվում, որովհետև բնակիչները «հին հայրենի տէրք էին և բարբարոս և պիղծ մարդիկ»։ Մի այլ տեղ բնակիչներն անվանվում են «անաստուածք, ժպիրք և ելուզակք»[2]։

Տամալեկ.— Այս գյուղը ևս գտնվում էր Տաթևի վանքի մոտ և մտնում նրա 906 թ. Սյունյաց իշխանների գծած նոր սահմանի մեջ, բայց որևէ իշխանի կողմից այն «տուրս» չի արվում։ 10-րդ դարի սկզբում (906—915 թթ.) սրան ևս Տաթևի վանքը չի կարողանում «սեպհականել, զի և նոքա (բնակիչները — Հ. Ուր.) նույնպիսիք էին», այսինքն՝ Ցուրի բնակիչների նման «հին հայրենի տէրք», բարբարոս, պիղծ, և ելուզակ[3]։ Մի այլ տեղ Ս. Օրբելյանն այս գյուղը բնորոշում է որպես «ապստամանոց»[4]։ Ուրեմն, այդ գյուղերի նկատմամբ

[1] Ուսումնասիրողներն այս գյուղն անվանում են Ցուրբաբերդ, ելնելով այն բանից, որ Ս. Օրբելյանի մոտ ակնարկ կա այն մասին, որ նա ուներ նաև բերդ։ Մեր կարծիքով Ցուրի բերդը իսկական, արհեստականորեն կառուցված բերդ չէր։ Ս. Օրբելյանը, ինչպես և մեզ հասած սիգելները, հաճախ այդ գյուղը կոչում են «Ցուրա քար» («Ցուրա բերդ»)։ Ըստ մեզ, այն բերդ է կոչվել լոկ այն պատճառով, որ գյուղը գտնվում էր մի մեծ քարի վրա, որը բնական բերդի տպավորություն էր թողնում և անառիկ էր։ Որ այդ այդպես է, երևում է «Ցուրա բերդ անուն քարին», «բնակիչս Ցուրա քարին», «...գոյուտ քարդ բերդ անուանել» վկայություններից։ Տես Հովհաննես եպիսկոպոսի սիգելը (Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 248, 249)։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 247։

[3] Նույն տեղում, էջ 230։

[4] Նույն տեղում, էջ 271։

սեփականության գերագույն իրավունք ունեցող վանքը չի կարողանում այդ գյուղերի բնակչությանը հանել տվյալ գյուղերից, որովհետև նրանք «հին հայրենի տէրք» էին։ Ստացվում է մի հակասություն՝ գյուղի նկատմամբ հանդես են գալիս երկու սեփականատերեր, մեկը կալվածատեր վանքը, որն ունի բացարձակ սեփականության իրավունք գյուղի հողերի, անտառների, ջրերի, արոտատեղիների նկատմամբ, իսկ մյուսը բնակչությունը, որն ունի սեփականության իրավունք իր «հայրենիքի» նկատմամբ։ Թվացող այդ հակասությունը կվերանա, եթե մենք պարզենք, թե իրավական տեսակետից ինչպիսի շերտ պետք է հասկանանք «հին հայրենի տէրք» տերմինի տակ։

Այդ «հին հայրենի տէրք» չէին կարող լինել ազատները (մանր ազնվականներ), որովհետև նախ, իշխաններն ազատներին չէին նվիրաբերի եկեղեցուն և երկրորդ, ազատները, որպես տիրող դասակարգի ներկայացուցիչներ, չէին կարող բնորոշվել «բարբարոսք», «պիղծք», «ելուզակք» և այլ ստորացուցիչ պիտակներով։ Նման պիտակներով բնորոշվում էին շահագործվող դասակարգի ներկայացուցիչները։

«Հին հայրենի տէրք» չէին կարող լինել նաև բոլորովին ազատ գյուղացիներ, որովհետև, ինչպես տեսնում ենք, նրանք գյուղի (հողի) հետ միասին նվիրաբերվում են (օտարվում) վանքին, մի բան, որը ցույց է տալիս նրանց կախվածությունը կալվածատեր իշխանից։

Նրանք չէին կարող լինել նաև ճորտ գյուղացիներ, որովհետև, ինչպես տեսնում ենք, կալվածատերը չի կարողանում նրանց հանել իրենց գրաված հողի վրայից, նշանակում է, որ նա սեփականության իրավունք չունի նրանց գրաված հողի նկատմամբ, նրանց «հայրենիքի» նկատմամբ, այսինքն՝ նրանք նստած չեն կալվածատիրոջ հողի վրա։ Այս հանգամանքն ասում է և այն մասին, որ կալվածատերը չունի իրավունք, իշխանություն նաև նրանց անձի նկատմամբ։

Այսպիսով, «հին հայրենի տէրք» ա) որոշ կախվածություն ունեն ողջ գյուղի սեփականատերը հանդիսացող կալվածատերից (իշխանից կամ վանքից), բ) նրանց անձի վրա կալվածատերը չունի որևէ իշխանություն, գ) նրանք ունեն իրենց հողակտորը — «հայրենիքը», որի վրայից կալվածատերը չի

կարող հանել նրանց, նշանակում է իրենք են նրա սեփականատերը։ Հին հայրենի տերերի իրավական այս վիճակը մեզ իրավունք է տալիս ասելու, որ նրանք սոցիալապես ոչ թե ազատ, կամ ճորտ, այլ կիսազատ, կախյալ գյուղացիներ էին։

Բայց ո՞րտեղից են գոյացել այս հին հայրենատերերը և նրանց «հայրենիքը»։

Մենք ուշադրություն ենք հրավիրում «հին» բառի վրա։ Արդյոք պատահա՞ն է այդ հայրենատերերին «հին» անվանելը։ Բնավ ոչ։ Մեզ թվում է, որ այստեղ «հինը» հակադրված է ինչ-որ «նոր» բառին, և որ այդ տերմինների առաջացումը կապ ունի գյուղական համայնքի քայքայման հետևանքով հողի մասնավոր սեփականության առաջացման, հողը առևտրի առարկա դառնալու հետ։

Էնգելսի տեսական մի ընդհանուր դրույթից գիտենք, որ համայնական հողատիրությունը հատուկ էր բոլոր ժողովուրդների նախնական պատմությանը[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը առաջինը ուշադրություն դարձրեց այդ կարևոր երևույթի վրա։ Նա գտնում է, որ համայնական հողատիրությունը անժխտելիորեն գոյություն է ունեցել Հայաստանի համայնական տոհմային հնագույն շրջանում։ Բայց այն գոյություն է ունեցել նաև նախարարական Հայաստանում, «Համայնական հողատիրության վերապրումներ գոյություն ունեցած պիտի լինեին հին Հայաստանում թե Արշակունյաց թագավորության ժամանակ և թե նրա անկումից հետո»[2]։

---

[1] Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Երևան, 1933, էջ 79։

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 191։ Հ. Մանանդյանն իր մի այլ աշխատության մեջ գրում է. „Наличность *общины* в аршакидской и багратидской Армении не подлежит никакому сомнению, так как в источниках удалось обнаружить отдельные характерные её элементы: мир и общинное землевладение или землепользование с пределами земли“. („Проблемы общественного строя доаршакидской Армении“, „Исторические записки“, 1945, № 15, էջ 21)։

Ակադ. Հ. Մանանդյանի փաստական նյութից բխող այս հետևությունը, անշուշտ, վերաբերում է նաև նախարարական շրջանի Սյունիքին, ուր համայնական կյանքն ավելի կայուն ու պահպանողական էր լինելու, քան Հայաստանի կենտրոնական գավառներում։

Մեզ թվում է, սակայն, որ համայնական հողատիրությունը, կրելով հետագա փոփոխություններ, շարունակեց մնալ նաև միջնադարյան Հայաստանում։

Մեզ հասած 9—10-րդ դարերի վավերագրով օտարված Սյունիքի բոլոր գյուղերը ձևափոխված, արդեն ֆեոդալներին ենթարկված գյուղական համայնքներ են։

Այդ ապացուցվում է նախ այն փաստով, որ այդ գյուղերն օտարվում են ողջ համայնքով՝ բնակչությամբ և ամբողջ սահմաններով։ Երկրորդ, 906 թ. Սյունյաց իշխանների կողմից Տաթևի վանքի նոր սահմանների մասին կազմված վավերագրից երևում է, որ շրջակա գյուղերի բնակիչները (համայնքով) իրավունք չունեին Տաթևի վանքի համար հաստատվող նոր սահմանի դեմ առարկելու. «եւ յայսմհետէ մինչև յափտեան այս լիցի սահման Տաթևոյ սուրբ ուխտիս. և մի ոք իշխեսցէ այսմ հակառակել մի՛ Բաղացիք և մի՛ Որոտնեցիք և մի՛ Վաղանդացիք, մի՛ Շնհէրացիք և՛ մի Նորեցիք»[1]։

Անշուշտ գյուղական նախնական ազատ համայնքի, համայնական հողատիրության սիստեմի քայքայումը ու ֆեոդալներին ենթարկվելը տարբեր երկրներում տարբեր ձևով և տարբեր ժամանակ է կատարվել, նայած տվյալ երկրի ներքին պայմաններին։ Բայց նկատելի են նաև ընդհանուր երևույթներ։ Ամենաընդհանուր երևույթն այն է, որ գյուղական ազատ համայնքի քայքայման առաջին աստիճանում համայնքի սեփականությունը կազմող վարելահողը, որը առաջ հողաբաժիններով պարբերաբար ու հավասարապես[2] բաժանվում էր համայնքի անդամներին ըստ շնչի (3, 6, 9, 12 տարին մի ան-

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 232, 233։

[2] Հետագայում այդ հողաբաժինները օտարելիության ու ժառանգականության հետևանքով դառնում էին անհավասար։

գամ) և համայնքի յուրաքանչյուր անդամ առանձին էր մշակում իր հողը, աստիճանաբար դառնում է գյուղական համայնքի անդամների մասնավոր սեփականությունը։ Եթե առաջ համայնքի անդամի մասնավոր սեփականությունն էր հանդիսանում նրա տնատեղը, կից բակը և տնամերձ հողը, ապա այժմ նրա մասնավոր սեփականությունն է դառնում նաև հողաբաժանումով նրան հասած վարելահողը։ Դրա հետևանքով նախկին համայնականը դառնում է ազատ գյուղացի։ Համայնքի քայքայման այս աստիճանում արոտավայրերը, անտառները, ճահիճները ու ջրերը դեռևս շարունակում են մնալ որպես համայնքի սեփականություն։

Որ մեզ մոտ Հայաստանում էլ այդպես է եղել, ցույց է տվել ակադ. Հ. Մանանդյանը։ Նա գտնում է, որ հին Հայաստանում գյուղացիներն ունեցել են հողաբաժիններ, որոնք չափված ու որոշված են եղել հավասար և ըստ մարդաթվի։ Եվ գյուղական նախնական համայնքներում հողերը պարբերաբար վերաբաժանվել են վիճակահանությամբ։ «Հին Հայաստանում գոյություն են ունեցել, հավանաբար, համայնական հողատիրության որոշ կարգեր և «հաւասար» հողաբաժանումն «ըստ մարդաթուի»[1]։

Ինչպես շատ երկրների, այնպես էլ մեր երկրի պատմությունը ցույց է տալիս, որ քայքայվող գյուղական համայնքն իսպառ չի կորցնում իր կազմակերպության ձևը։ Ճեղք է ստանում, շեղվում է համայնական սկզբունքից, բայց որպես կազմակերպություն պահպանում է իրեն՝ հարմարվելով նոր պայմաններին։

Նույնը նկատվում է և Հայաստանում։ Իրավացի է ակադ. Հ. Մանանդյանը, երբ գտնում է, որ «անհավանական չէ նույնիսկ, որ նախկին համայնական-տոհմական կյանքի ֆեոդալացումից հետո համայնական հողատիրությունը՝ որպես երկրագործական արտադրության ձև՝ կարող էր հարմարեցված լինել կալվածատիրական նոր պայմաններին և որոշ տեղերում պահպանած լինել իր գոյությունը, կրելով իր հիմնական բովանդակության մեջ ոչ այնքան խոշոր փոփոխություն-

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 195։

ներ[1]։ Իսկ համայնքի քայքայման երկրորդ աստիճանում իշխաններն ու թագավորները, հակառակ գյուղացիների համառ դիմադրության, իրենց ձեռքն են գցում գյուղական համայնքի սեփականությունը հանդիսացող արոտները, անտառները, ջրերը, լճերը, ընդերքը ու դրանք դարձնում իրենց սեփականությունը։ Հենց այդ հանգամանքի հետևանքով, ինչպես նաև գյուղացիներից նրանց հողերի գրավման միջոցով, համայնքն աստիճանաբար ենթարկվում է իշխանների, ֆեոդալ կալվածատերերի (աշխարհիկ, թե հոգևոր) գերագույն խնամակալությանը, նրանք դառնում են գյուղական համայնքների ֆեոդալ կալվածատերերը, նոր տերերը։ Գյուղական համայնքը կորցնում է իր ազատությունը։ Հավանաբար այսպես է եղել նաև Հին Հայաստանում։ Գոնե այդ մասին են խոսում Սյունիքում 9—10-րդ դարերում օտարվող գյուղերի վիճակը։

Վերևում արդեն նշեցինք, որ այդ գյուղերի նկատմամբ ի հայտ են գալիս երկու տերեր՝ կալվածատերեր և «հին հայրենի տերք»։ Ուշագրավ է այստեղ «հայրենիք» տերմինը։

Նախորդ ենթաթեմայում արդեն ցույց տրվեց, որ այս շրջանում «հայրենիք» էին կոչվում նաև գյուղացիների հողերը։ «Հայրենիք» գաղափարն իր մեջ մարմնավորում է հողին ազատ սեփականությամբ տիրապետելու իմաստ, սեփականության (հողային) իմաստ։ Ուստի պիտի ընդունել, ինչպես այդ կտեսնենք ստորև, որ Ցուրի, Տամալեկքի գյուղացիների «հայրենիքները» նրանց սեփականությունը համարվող հողաբաժիններն էին (վարելահողը)։ «Հին հայրենի տերերը» ազատ գյուղացիներ են եղել։ Բայց նրանք ազատ գյուղացիներ եղել են երբևիցե։

Վավերագրերը պարզ ցույց են տալիս, որ օտարվող գյուղերի անտառները, արոտները, ջրերը, ընդերքը, համայնքի անդամների կողմից չմշակված հողերը արդեն կալվածատերերի (հոգևորական և աշխարհիկ) ձեռքում են, իբրև նրանց սեփականություն։ Ավելին, այդ գյուղերը գտնվում են նրանց գերագույն խնամակալության ներքո, որի հիման վրա էլ նրանք ազատ կերպով օտարում են դրանք «ամենայն բա-

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 190։

նիւք» ու բնակչությամբ որպես իրենց մասնավոր սեփականություն։

Այդ բոլորը կատարվել էին մինչև մեր ուսումնասիրած ժամանակաշրջանը, դարերի ընթացքում։ 9—10-րդ դարերում Սյունիքում օտարվող բոլոր գյուղերը մեզ ներկայանում են արդեն որպես կալվածատեր ֆեոդալից (հոգևոր և աշխարհիկ) կախյալ գյուղական համայնքներ, իսկ նրանց գյուղացիները՝ կախյալ գյուղացիներ, որոնք, սակայն, շարունակում էին նրստած մնալ իրենց սեփականությունը կազմող «հայրենիքի» վրա և իրենց կոչում «հայրենատերք». բայց ի տարբերություն համայնքի «նոր» տեր կալվածատիրոջ, նրանք կոչվում էին «հին հայրենի տերք»։

10-րդ դարում Սյունիքում մենք ականատես ենք արդեն մի այլ երևույթի։ Դա այն է, որ կալվածատեր վանքը ջանում է հին հայրենատերերից խլել նրանց «հայրենիքը» ու դարձնել իր մասնավոր սեփականությունը։

Ահա թե ինչ են ասում աղբյուրներն այդ մասին։

«Բայց թէպէտ զայս ամենայն տուրս արարին, զբնակիչս բերդին Ցուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենի տէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ զՏամալէկս որ մերձ վանիցն էր ի հանդէպն, կարացին սեպհականել. զի և նոքա նոյնպիսիք էին։ Էր և աւազականոց մի Բերդ անուն հանդէպ վանիցն, ...և զայն ևս ոչ հալածեցին»[1]։ Կամ էլի, Հովհաննես եպիսկոպոսը (880—918 թթ.) «թէև բազում անգամ ջանաց, բայց ոչ կարաց հալածել զբնակիչսն (խոսքը Տամալեկքի մասին է — Հ. Ուր.) և սեպհականել զտեղին»[2]։

Ինչպես տեսնում ենք, վանքի նպատակն է եղել հանել, հալածել բնակիչներին իրենց տեղերից և «սեպհականել» դրանք իր օգտին, այլ կերպ ասած, դրանք վերածել տերունական հողի։ Բայց այդ բանը հեշտությամբ չի հաջողվում եկեղեցուն։ Բնակչությունը դիմադրում է, հենվելով իր հին հայրենատեր լինելու իրավունքի վրա։ Տեղին է հիշել Էնգելսի խոսքերը,

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 230։
[2] Նույն տեղում, էջ 271։

որ համայնքը իր դիրքերը միանգամից չի զիջում, նա «ծանր ու անընդհատ կռիվ է մղում հողատեր աղնվականության դեմ»[1]։ Հիշյալ գյուղերն ամբողջ 10-րդ դարի ընթացքում տևական դիմադրություն են ցույց տալիս եկեղեցուն։ Եկեղեցին դիմում է թշվառացնող միջոցների, սպառնալիքների, օգնության է կանչում դահերեց իշխանի զորական ուժը։ Բայց, ինչպես երևում է, այդ ևս չի օգնում առանձին դեպքերում, ստիպված գործի են դնում փողը։ Եկեղեցին հրամայում է դահերեց Սմբատ իշխանին ու նրա կնոջ Սոփիային Տամալեկքի հին հայրենի տերերից գնել նրանց տեղերը ու հանձնել իրեն «արդ՝ հնազանդեալ մեր հրամանացս տէր Սմբատ ու Սոփիա տիկին՝ առին ընդ գնոյ 1000 դահեկանի, և եւոուն ի սուրբ նշանիս»[2]։ Ուշագրավ է, որ Տամալեկքը գնել են ոչ թե որևէ իշխանից, այլ իրենց գյուղացիներից՝ «հին հայրենի տերերից»։

Այս փաստը խոսում է այն մասին, որ Տամալեկք գյուղը եղել է երբեմնի գյուղական ազատ համայնք, իսկ համայնքի անդամները եղել են ազատ գյուղացիներ, որոնք, սակայն, այժմ ենթարկվելով ֆեոդալին, վերածվել են կիսաազատ գյուղացիների։

Որ իսկապես վանքի ու գյուղացիների («հին հայրենի տերերի») միջև պայքարը գնում էր սեփականության իրավունքի համար, այսինքն՝ գյուղացիների «հայրենիքները» վանքի կողմից «սեպհականելու» համար, երևում է հետևյալից ևս։

Ստորև կտեսնենք, որ Ցուրի գյուղացիները զինված ելույթ են ունեցել վանքի դեմ և ձեռք բերել ժամանակավոր հաղթանակ։ Սակայն ինչպես խոստովանում է Հովհաննես եպիսկոպոսը, Սմբատ դահերեցը հալածելով ապստամբներին, ազատելով եկեղեցիները և հոգևորականներին ապստամբների կապանքից կրկին «աւանդեաց ի ձեռս մեր զտեղին» (Ցուրը — Հ. Ուր.)։ Այդ նույնի մասին Օրբելյանը գրում է՝ «և զտեղին իւր սահմանովն ետ ի սեպհական ժառանգութիւն եկեղեցւոյն. և աւանդեաց ի ձեռս Տէր Յովհաննիսի»[3]։ Մեզ հայտնի է, որ

[1] Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, էջ 88։
[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 271։
[3] Նույն տեղում, էջեր 248, 249։

Ցուրը որպես «սեպհական» ժառանգություն վաղուց էր տրված վանքին (906 թ.)։ Այժմ (915 թ.) հալածելով ապստամբ ցուրեցիներին, վերստին այն որպես «սեպհական ժառանգություն» վանքին հանձնելը լավագույն ապացույցն է այն բանի, որ նախ՝ Ցուրի բնակիչները 914—915 թվերին պայքարով ետ են խլել իրենց հողերը՝ «հայրենիքները», անգամ համայնքը։ Եվ երկրորդ, պայքարը, կռիվը, վանքի ու գյուղացիների միջև, ընթացել է սեփականության իրավունքի համար։

Տաթևի վանքին հաջողվում է 10-րդ դարի առաջին կեսում «սեպհականել» Տամալեկը և Բերդ գյուղերը։ Նա սեփականաշրկում է այդ գյուղերի «հին հայրենի տերերին» ու սեփականացնում նրանց հողակտորները։ Հակոբ եպիսկոպոսը (918—958 թթ.) Տամալեկի մասին գրում է. «Արդ՝ զայս տեղս, որ մեր մեծ ջանիւ թափեալս եմք և զհայրենատէրսն հանեալ, և անապատ հաստատեալ, և մտածէ ոք զսա ի հայրենատէրսն տալ կամ կանամբի մարդ ի սմա բնակեցուցանել կամ մին ծառոյ և մին թփոյ տէր առնել»[1]։ Եպիսկոպոսը խստիվ արգելում է այդ գյուղը նորից հայրենատերերին տալը՝ հողի սեփականության, հայրենատիրության իրավունքով, արգելում է նույնիսկ մի ծառի և մի թփի տեր դառնալը։ Սեփականության ամբողջ իրավունքը մնալու է եկեղեցուն։

Ի՞նչ էր անելու Տաթևի վանքը հայրենատերերից խլված հողերը, ո՞ւր էին գնալու սեփականաշրկված գյուղացիները։

Աղբյուրների ուշիմ զննումը ցույց է տալիս, որ վանքը այդ հողերի մի մասի վրա ստեղծում էր իր սեփական տնտեսությունը։ Մենք վերևում արդեն նշեցինք, որ վանքը վարում էր իր սեփական տնտեսությունը։ Երբ 906 թվին ավարտվեց Տաթևի նոր վանքի շինարարությունը, մեծացավ նրա կշիռը և Սյունյաց իշխանների առատաձեռնությամբ ընդարձակվեց նրա սահմանները, բնականաբար, վանքի հին տնտեսությունը չէր բավականացնելու, նա պետք է նոր ստացած գյուղերում, կալվածքներում ստեղծեր նոր տնտեսություն։ Ահա տնտեսական այս շարժառիթն էր, որ Տաթևի վանքը 10-րդ դարի տասական,

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 271, 272։

երեսնական թվերին տևական պայքարի մեջ է մտնում հիշյալ գյուղերի բնակիչների հետ՝ նրանց հայրենիքները՝ (հողակտորները) «սեպհականելու» համար։ Ճիշտ չեն բոլոր նրանք, ովքեր՝ Հակոբ եպիսկոպոսի «Հայրենատերերին հանեցինք ու անապատ հաստատեցինք» խոսքերից հետևցնում են, որ իբր թե, վանքն այդ գյուղերի բնակիչներին վռնդել է, քշել է իրենց հողերից կրոնական շարժառիթներով[1]։ Շարժառիթը տնտեսական էր։ Հիշենք, որ 932 թ. Հակոբ եպիսկոպոսը գնեց Վարարակի ջուրը, կառուցեց ջրանցք ու մշակովի դարձրեց նոր խոպան հողեր, վանքի տնտեսությունը ընդարձակելու համար։

Բացի այս հավանական է և այն, որ հայրենատերերի «սեպհականացված» հողերի մյուս մասը վանքը, հավանաբար, կրկին վերադարձնում էր հենց սեփականաշրկված գյուղացիներին բահրա և կոռ վճարելու պայմանով, այսինքն՝ ճորտ դառնալու պայմանով։ Հնարավոր է, որ սեփականաշրկված հայրենատերերի մի մասը հեռանում էին, գնում էին ագարակներ, քաղաքներ, որոնք այդ դարերում աճում էին,

1 Չենք կարող համաձայնել ակադ. Ի. Ջավախիշվիլու այն պատճառաբանության հետ, որի համաձայն Սյունիքի եպիսկոպոսները «ցանկանում էին, որ աթոռին կից ոչ մի բնակչություն չլինի, և դրա համար հարևան գյուղերի բնակիչներին ստիպում էին թողնել իրենց տեղն ու փոխադրվել ուրիշ տեղ» (էջ 13)։ Անգամ Սյունիքի եպիսկոպոսներն այսքան անմեղ պատճառաբանություն չեն տալիս իրենց կատարած սեփականաշրկումն արդարացնելու համար։ Եթե այդպես էր, ապա ինչու՞ վանքին ամենամոտ Տաթև գյուղի բնակիչներին չէին հեռացնում։ Իրենց խոստովանությամբ եպիսկոպոսների նպատակն է եղել «սեպհականել» բնակիչների տեղերը։ Այդ է պատճառը, որ այդ բնակիչները ապստամբվել են եկեղեցու դեմ ու նրա հայրերի կողմից ստացել «ապստամբ», «հելուզակ», «պիղծ» պիտակները։ Չենք կարող համաձայնվել Ի. Ջավախիշվիլու մի այլ պնդման հետ ևս, ըստ որի, հիշյալ գյուղերի բնակիչները վանքին նվիրատվելիս արդեն ճորտ էին (էջեր 12—13)։ Այդ դեպքում դուրս է գալիս, որ կալվածատեր եկեղեցին բռնի ուժով ճորտ դարձրեց գյուղացիներին քշում է իրենց հողերից, իսկ ճորտերը դիմադրում են։ Թեորիայից և այլ երկրների պատմությունից մեզ հայտնի է ճիշտ հակառակը՝ ճորտ գյուղացին ինքն էր փախչում կալվածատիրոջ հողից, իսկ վերջինս նրան բռնի ուժով բերում նստեցնում էր իր հողակտորի վրա։

բայց մեծ մասը մնում էր տվյալ գյուղերում, ճորտացման պայմանով։

Հակառակ դեպքում ինչպե՞ս հասկանալ աղբյուրների տվյալներն այն մասին, որ Ցուր, Բերդ, Տամալեկք գյուղերի բնակիչները 10-րդ դարի ընթացքում, ինչպես կտեսնենք ստորև, 3 անգամ ապստամբվել են վանքի դեմ։ Եթե այդ վայրերից բնակիչները իսպառ վռնդված լինեին, ապա որոշ ժամանակ անց այլևս ոչ ոք չէր ապստամբվի։

Որ իսկապես բնակչության մեծ մասը մնում էր ճորտացման պայմանով, երևում է նաև Հակոբ եպիսկոպոսի Տամալեկքը սեփականելու մասին թողած վավերագրից։ Այդ վավերագրում կա հետևյալ նախադասությունը՝ «և հոգւով և մարմնով զինքէանս մեզ յանձնեցին»[1]։ Այս խոսքերը մեր կարծիքով, վերաբերում են Տամալեկքի գյուղացիներին և վկայում են նրանց ճորտացման մասին։

Այստեղ մենք բացահայտորեն գործ ունենք «հին հայրենի տերերի» սեփականություն հանդիսացող «հայրենիքների» խլման, նրանց վանքի կողմից «սեպհականելու», իսկ իրենց՝ կախյալ գյուղացիներին, ամենայն հավանականությամբ ճորտացնելու պրոցեսի հետ։

Կախյալ համայնքներ էին նաև կալվածատեր իշխանների

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 271. «և հոգւով և մարմնով զինքէանս մեզ յանձնեցին» նախադասության մեջ, լեզվական կանոնների համաձայն, «զինքէանս մեզ յանձնեցին» բառերը վերաբերում են Սմբատ իշխանին ու նրա տիկնոջը։ Բայց վավերագրի ամբողջ շարադրանքից ու ոգուց երևում է, որ այն վերաբերում է գյուղացիներին, նրանց, ովքեր երկար ժամանակ դիմադրել էին վանքին՝ Տամալեկքը «սեպհականելու» գործում։

Բացի այդ, մյուս բոլոր վավերագրերում չունենք որևէ այլ օրինակ, որ «տուրս» կատարող իշխանը կամ իշխանուհին վանքին կամ եպիսկոպոսին նվիրված, հանձնված լինի նաև մարմնով։ Իշխանի և մանավանդ իշխանուհու մարմնով եպիսկոպոսին հանձնվելու նախադեպը չունեցող այս փաստը, ըստ մեզ, անհավանական է, հեռապես թյուրիմացություն։ Դժբախտաբար մեզ չեն հասել Ս. Օրբելյանի աշխատության հին ձեռագրերը, որոնցով ստուգեինք «զինքէանս» գերանունը։ Մեզ թվում է, որ այն պետք է եղած լիներ գերանվան այն ձևով, որը վերաբերեր գյուղացիներին։

կողմից իրենց ամբողջ սահմաններով ու բնակիչներով օտարված մնացած բոլոր գյուղերը (մոտ 20 գյուղ), որոնց բնակիչները հավանաբար նույնպես հին հայրենատերեր էին ու կախյալ գյուղացիներ, և որոնք կա՛մ ենթարկվել էին ճորտացման, և կա՛մ կանգնած էին ճորտացման ուղու վրա։

Ստորև կտեսնենք, որ Խոտ գյուղը դեռ 9-րդ դարի 1-ին կեսին ճորտացված գյուղ էր և պատկանում էր աշխարհիկ կալվածատիրոջը, կտեսնենք, որ գոյություն ուներ կոռ, բեկար (շահագործման ճորտատիրական ձև), կտեսնենք, որ ճորտացման դեմ Բերդ գյուղի մղած պայքարն ուղղված էր թե՛ եկեղեցու, թե՛ աշխարհիկ կալվածատերերի դեմ։ Այս բոլորը խոսում են ո՛չ միայն այն մասին, որ ճորտացումը փաստ էր և արդեն կային ճորտացած համայնքներ, այլև այն մասին, որ ճորտացնում էին նաև աշխարհիկ կալվածատերերը։ Ավելի շուտ, եկեղեցին այստեղ էլ ընթանում էր աշխարհիկ կալվածատերերի հետքերով։

Բացի այս փաստերից, հարկ է նշել նաև հետևյալը։ Պատմական զարգացումը ցույց է տալիս, որ համայնքի քայքայումից առաջ եկած ազատ գյուղացիները ի վերջո ենթարկվում են ճորտացման։ Համայնքի նկատմամբ գերիշխանություն ձեռք բերած կալվածատեր ազնվականների (հոգևոր, թե աշխարհիկ) ընչաքաղցությունը հասնում է այնտեղ, որ նրանք զանազան խարդախ, ուղղակի և անուղղակի միջոցներով գրոհում են ազատ գյուղացիների վրա՝ խլելու համար նրանց սեփականությունը համարվող հողերը։ Միջֆեոդալական ընդհարումները, արտաքին պատերազմները, խորացող դասակարգային շերտավորումը, դույքային անհավասարության խորացումը, շատ գյուղացիների սնանկացումն ու աղքատիկ վիճակը քայքայում էին ազատ գյուղացուն ու դարձնում խոշոր կալվածատեր ազնվականների կամքին ու քմահաճույքին ենթակա։ Այս բոլորը հատուկ էին նաև Սյունիքին։ Հիշենք, որ այս շրջանի Սյունիքում հողեր էին ձեռք բերում գնումների, հափշտակումների, զրկանքների, անիրավությունների և այլ միջոցներով[1]։ Սրան գումարած նաև առևտրի, ապրանքա-

---

[1] Տես Հրահատի թողած սիգելը (Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 209)։

յին փոխանակության և վաշխառության աճի հետևանքով հողի մեծ մասշտաբով վաճառքի առարկա դառնալը։ Հիշենք նաև Լաստիվերցու տրտունջները՝ «որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, և որ յափշտակէր՝ ասէր ես հզօր եմ. զտունս տնակից աղքատացն և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունք»[1], որը թեև ասված է ողջ Հայաստանի նկատմամբ, բայց այն պետք է վերաբերեր նաև Սյունիքին։

Այս բոլորի հիման վրա կարելի է շարակուսել, որ 9—10-րդ դարերի Սյունիքը մեր առաջ կանգնում է ազատ գյուղացիության քայքայման ու ճորտացման շարունակվող պրոցեսով։ Այդ պրոցեսը սկսվել էր 10-րդ դարից դեռ շատ առաջ և շարունակվում էր իր բնական ընթացքով։ Գյուղական համայնքը «կործանվեց,— ասում է Էնգելսը,— ամբողջ գյուղացիական թե բաժանված և թե չբաժանված հողի հափշտակության շնորհիվ աղնվականության ու հոգևորականության ձեռքով, երկրի տերերի բարեհաճ օժանդակությամբ»[2]։ Այս խոսքերը լիապես համապատասխանում են նաև Սյունիքի իրականությանը։

Այսպիսով, 9—10-րդ դարերի Սյունիքի գյուղացիությունը գտնվում էր ճորտացման պրոցեսում։ Ճորտությունը ֆեոդալիզմի սովերն է, որը նա իր եռևից քաշ է տալիս ամենուրեք։ Սակայն ճորտացման պրոցեսն իր ավարտին չէր հասել։ Քանի որ այդ պրոցեսը նշանակում է ազատ համայնքի ու ազատ գյուղացիության քայքայում և աստիճանական ճորտացում, ուստի, այստեղ իրար հետ կողք-կողքի գոյություն ունեին ազատ, կախյալ ու ճորտացած համայնքներ, համապատասխան դրան էլ՝ ազատ, կախյալ ու ճորտացած գյուղացիներ։ Գյուղացիական այս երեք շերտերի գոյությունը Սյունիքում երկար ժամանակ ընթացել է կողք-կողքի, հավանաբար, տարբեր դերակշռությամբ, իսկ մեր ուսումնասիրության ենթակա շրջանում գերակշռել է ճորտացման պրոցեսը։

---

1 Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 80։

2 Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, էջ 88։

Բնականորեն, ճորտացման այդ աճող պրոցեսը բորբոքելու էր ճորտացվող գյուղացու դիմադրությունը և ծնելու էր դասակարգային կատաղի պայքար։ 10-րդ դարի Սյունիքում ծավալված դասակարգային պայքարի հիմնական պատճառներից մեկը պետք է համարել ճորտացման այս աճող պրոցեսը։

Գյուղացիների այս շերտերի իրավական վիճակի տարբերությունը պայմանավորված էր, անշուշտ, նրանց սոցիալական վիճակի տարբերությամբ։ Իհարկե, դժվար է մանրամասնորեն ցույց տալ ազատ ու կիսաազատ, կախյալ («հին հայրենի տէր») գյուղացիների սոցիալական վիճակի տարբերությունը։ Միակ տարբերությունը, որը կարելի է հետևցնել վերև բոլոր ասվածներից, այն էր, որ մինչդեռ «հին հայրենի տերերը» լինելով կալվածատիրոջ գերիշխանությանը ենթարկված կախյալ համայնքի բնակիչներ, կախում ունեին համայնքի ընդհանուր տերը հանդիսացող ֆեոդալ կալվածատիրոջից, որոնց նա կարող էր օտարել համայնքի հետ միասին, իսկ ազատ գյուղացիությունը, ըստ երևույթին, ոչ մի կախում չուներ կալվածատիրոջից։

Իսկ ճորտ ու կախյալ գյուղացիների սոցիալական վիճակի մեջ կային հետևյալ տարբերությունները։ Մինչդեռ «հին հայրենի տէրք» նստած էին իրենց անձնական սեփականությունը հանդիսացող հողերի վրա, որի հետևանքով անմիջական կախվածություն չունեին կալվածատերերից, իսկ ճորտերը նստած էին կալվածատիրոջ սեփականությունը կազմող հողերի վրա և որի հետևանքով անմիջական կախվածություն ունեին նրանցից։

Մինչդեռ «հին հայրենի տերերի» անձի նկատմամբ կալվածատերը չուներ գերիշխանություն, իսկ ճորտերի «հոգու և մարմնի» (անձի) վրա՝ ուներ նման գերիշխանություն։ Այսինքն՝ ճորտն անձնական կախման մեջ էր, իսկ «հին հայրենատէրը»՝ ոչ անձնական։ Աղբյուրների բացակայության պատճառով մենք չենք կարող ճորտի անձնական կախվածության աստիճանը որոշել, սակայն պետք է ենթադրել, որ այն այնքան էլ խիստ չի եղել։ Հավանաբար, ճորտն ունեցել է անձնական որոշ իրավունքներ։

Եվ վերջապես, «հին հայրենատէրերի», որպես կիսաազատ

կախյալ գյուղացիների, կալվածատիրոջ նկատմամբ ունեցած հարկատվության պարտավորությունը համեմատաբար ավելի թեթև էր, քան ճորտ գյուղացիներինը։ Թե ինչ ձևի և ինչ մեծության էին հարկերը, ինչպես էր կատարվում ճորտի շահագործումը, կտեսնենք ստորև։

3. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԸ

«Ճորտատեր-կալվածատերը,— ասում է Վ. Ի. Լենինը,— չէր համարվում գյուղացու որպես իրի սեփականատերը, այլ միայն իրավունք ուներ նրա աշխատանքի նկատմամբ և կարող էր նրան ստիպել որոշակի պարհակ կրելու»[1]։ Ճորտը ստրուկի նման տիրոջ իրը չէր, այդ պատճառով էլ ֆեոդալը չէր կարող ճորտին սպանել, բայց կարող էր վաճառել։ Ի տարբերություն ստրուկի, ճորտի բանվորական ուժի վերարտադրման հոգսը ընկած էր իր՝ ճորտի վրա։ Որպեսզի ճորտ գյուղացին վերարտադրեր իր բանվորական ուժը և կալվածատիրոջը հողային ռենտա վճարեր, կալվածատերը նրան տալիս էր հողակտոր։ Ճորտ կամ կախյալ գյուղացու տնտեսությունը մասնավոր անձնական աշխատանքի վրա հիմնված տնտեսություն էր, որտեղ, բացի հողից ու ջրից, արտադրության մնացած բոլոր միջոցները՝ աշխատանքի գործիքները, լծկան անասունները, սերմացուն և այլն, պատկանում էին գյուղացուն։

Ֆեոդալական հողային ռենտան, ինչպես հայտնի է, իր զարգացման ընթացքում ունեցել է երեք աստիճան։ Այդ աստիճանները միաժամանակ հանդիսանում են ֆեոդալիզմի զարգացման աստիճաններ։ Մարքսն ու Լենինը հողային ռենտայի առաջին ձևը համարում են աշխատավճար ռենտան։ Սրա էությունն այն է, որ «անմիջական արտադրողը շաբաթվա մի մասը աշխատում է փաստորեն իրեն պատկանող հողի վրա, փաստացիորեն կամ իրավաբանորեն իրեն պատկանող գործիքներով (գութան, անասուն և այլն), իսկ շաբաթվա մնացած օրերին ձրիաբար աշխատում է հողատիրոջ կալվածքում,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 586։

աշխատում է հողատիրոջ համար»[1]։ Սա ռենտայի ամենահասարակ և սկզբնական ձևն է և համապատասխանում է ֆեոդալիզմի զարգացման ամենավաղ փուլին, որի ժամանակ կալվածատերն անմիջականորեն յուրացնում է գյուղացու ստեղծած հավելյալ արդյունքը միայն. ըստ որում այս ձևում արտատնտեսական հարկադրանքը կիրառվում է «ամենակոպիտ ձևերով»[2]։

Ըստ Լենինի, կոռային տնտեսության ձևի գերակշռությունը ենթադրում է՝ ա) բնատնտեսության տիրապետություն, բ) տեխնիկայի չափազանց ցածր մակարդակ, գ) անմիջական արտադրողն ստացած լինի հող և արտադրության այլ միջոցներ ու ամրացած լինի հողին, և դ) գյուղացին անձնապես կախում ունենա կալվածատիրոջից, վերջինս իշխանություն ունենա գյուղացու վրա, որն իրականացվում էր արտատնտեսական հարկադրանքով[3]։

Գոյություն ունե՞ր արդյոք աշխատավճարային ռենտան Սյունիքում 9—10-րդ դարերում։ Փաստերը դրական պատասխան են տալիս։ Այդ մասին Սյունիքին վերաբերող սկզբնաղբյուրներում ունենք միայն երեք կցկտուր, բայց արժեքավոր վկայություն։

ա) Սողոմոն եպիսկոպոսն իր 881 թվակիր սիգելում գրում է «... յառաջ ժամանակաց զխոտոյ կոռավարն տեառն Գէորգեայ[4] սուրբ նշանին հոգեցատուր էր արարեալ, զինչ պատճառոք և էր՝ այլ յափշտակեալ էին»[5]։

բ) Գագիկ 1-ինը Մրենում թողած իր 992 թվակիր արձանագրության մեջ գրում է. «Յանուն Աստուծոյ այս իմ հրա-

[1] Կ. Մարքս, Капитал, т. III, ч. II, Москва, 1929, էջեր 265, 266։

[2] Վ. Ի. Լենին, Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, հ. 3, էջ 267 (հայ. հրատ., Երևան, 1938)։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջեր 204, 205։

[4] Գևորգի եպիսկոպոսության շրջանն է 828—836 թթ.։

[5] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 215։ Կոռավարի մասին երկու վկայություն էլ կա 13-րդ դարում՝ «Ետու... երկու մեծ կոռավար» և «մեծ կոռավարն Աղարակի փայտաշենու կեանց»։ (Տես «Վիմական տարեգիրք», էջեր 80, 83)։

մանք են Գագկա Շահիազնշահի ազատեալ իմ զՄրենոյ կոռն, որ ի նախճաւանի էր, զմարդոյ և զեզին ի ձեռն խնդրոյ աստուածապատիւ տէառն Սահակայ Արշակունեաց եպիսկոպոսի...»։ Արձանագրությունն 992 թվագիր է[1]։

գ) Գրիգոր Սուփան 2-րդը Կոթավանքի պատին թողած իր արձանագրության մեջ ասում է, որ վանքի քահանաներին և այլ բազմաթիվ սպասավորներին՝ «ազատ արարի յարքունական ծանրութիւնէ և ի բեկարէ»[2]։

Հ. Աճառյանի «Արմատական բառարանում» «կոռն» բառի որպես բացատրություն նշված է. «պարտադիր ձրի աշխատութիւն», իսկ Ս. Մալխասյանի «Բացատրական բառարանում՝ «1. հարկադիր ձրի աշխատանք, մշակութիւն, որ գյուղացին պարտավոր էր կատարել կալվածատիրոջ հողի վրա, 2. Լծկան տավարի ձրի աշխատանք կալվածատիրոջ հողի վրա, 3. Ընդհանրապես՝ ընդհանուր հարկադիր աշխատանք, սովորաբար ձրի»։

«Կոռավար» բառը կազմված է «կոռ» գոյականից և «վարել» բայից։ «Արմատական բառարանում» «կոռավարը» բացատրված է.— «Այն արտը, որ գիւղացիք ձրի վարում են կալվածատիրոջ համար», իսկ «Բացատրական բառարանում՝ «1. իբրև կոռ՝ ձրի վարվող, մշակվող։ Կոռավար արտ։ 2. Իբրև կոռ ձրի վարող, ձրի աշխատող»։ Ակադ. Հ. Մանանդյանն ընդունելով կոռի գոյությունը Բագրատունյաց շրջանի Հայաստանում, գրում է. «կոռն» անտարակույս, այն պարտադիր աշխատանքներն էին, որոնք, ինչպես միջնադարյան corvea-ն, գերմ. Frohndienst-ը և ռուսերեն барщина-ն կատարվելու էին

[1] Կ. Կոստանյան, «Վիմ. տարեգիր», էջ 10։ 10-րդ դարի 2-րդ կեսին թեև Նախիջևանը Սյունիքի մեջ չէր մտնում, բայց թե նրա տերիտորիալ մոտիկությունը Սյունիքին և թե այս արձանագրության ժամանակի նույնությունը մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի հետ, մեզ իրավունք է տալիս այս վկայությունը ևս համարել անմիջականորեն մեր նյութին վերաբերող վկայություն։ Նամանավանդ Ս. Օրբելյանի վկայությամբ, մի ժամանակ Մրեն գյուղաքաղաքը մտել է Սյունիքի եկեղեցու վիճակի մեջ։ (Տես Ս. Օրբելյան, էջ 49)։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 178։

ձրի կալվածատիրոջ մոտ»[1]։ Ն. Ադոնցի կարծիքով ևս «կոռը» барщина-ի իմաստ ունի[2]։

Ելնելով այս բոլորից մենք, առանց տարակուսանքի, կարող ենք ասել, որ վերը մեջբերված առաջին վկայության մեջ կոռավարը նշանակում է ձրի, կալվածատիրոջ օգտին գյուղացու կատարած աշխատանքով մշակված հող, այսինքն՝ աշխատավճար ռենտայով մշակվող հող։ Իսկ երկրորդ վկայությունը ցույց է տալիս, որ 10-րդ դարում Նախիջևանի Մրեն գյուղի թե մարդիկ, և թե եզներն ունեցել են կոռային պարտավորություն, որոնց այդ պարտավորությունից ազատում է գյուղի կալվածատերը։

Առաջին վկայությունից երևում է, որ թե առաջին անգամ (828—836 թթ.), և թե երկրորդ անգամ վանքին է տրվել ոչ թե Խոտ գյուղն ամբողջապես, այլ նրա կոռով մշակվող վարելահողը, կամ նրա մի մասը[3]։ Խոտ գյուղը գտնվում էր Հաբանդ գավառում և այս շրջանում նրա տերն էր Վասակ Իշխանիկի որդի Գրիգորը։ Հենց այս Գրիգորն էլ, հավանաբար, Խոտի «կոռավարը» երկրորդ անգամ տվել է վանքին և ինքն էլ վերոհիշյալ սիգելի տակ ստորագրել է «Խոտոյ տէրս... վկայ եմ»[4]։ Ուրեմն Խոտ գյուղը պատկանում էր աշխարհիկ կալվածատիրոջ, ինչպես նաև նրա «կոռավարը»։

Այսպիսով, մեր առաջ ունենք աշխարհիկ կալվածատիրոջ պատկանող մի գյուղ, որի հողերը կամ նրանց մի մասը մշակվում էին կոռով, աշխատավճար ռենտայով։ Բայց ո՞վ էր քաշում այդ կոռը։ Իհարկե, հենց իրեն, Խոտ գյուղի ճորտացած գյուղացիությունը՝ իրենց եզներով ու գործիքներով, նախ կալվածատիրոջ, ապա վանքի օգտին։ Ուրեմն, դեռ 9-րդ դարի 1-ին կեսին Խոտ գյուղի երբեմնի ազատ գյուղացին ճորտացված էր աշխարհիկ ֆեոդալ կալվածատիրոջ կողմից։ Հարկավ

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջեր 209, 210։

[2] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 484։

[3] Խոտ գյուղը երբեք ամբողջապես «տուրս» չի տրվել վանքին։ Նա դուրս էր մնում նաև Տաթևի 906 թվի սահմաններից։ Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 232։

[4] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 216։

Խոտ գյուղը եղակի դեպք չէր։ Այս բանն առարկություն չվերցնող փաստ է այն մասին, որ ճորտացման պրոցեսը կատարվում էր ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ ֆեոդալների կալվածքների վրա, ինչպես մենք արդեն ակնարկեցինք վերևում։ Եկեղեցին հետևում էր, այստեղ ևս, իր ֆեոդալական միջավայրին։

«Հայկազյան բառարանում» «բեկար» բառը բացատրված է. «արքունի տուրք», «Արմատական բառարանում»՝ «հարկ, տէրութեան վճարուած տուրք», իսկ «Բացատրական բառարանում»՝ «հին ժամանակի հարկի մի տեսակ, հավանորեն հողային հարկ. հմմտ. բէգար, բէգեառ»։ Ն. Ադոնցի մոտ ստուգաբանված է՝ bekar amadan— «աշխատանքի գնալ»: Նույն իմաստով,— ասում է Ն. Ադոնցը,— «բեկարը» կոչվում է նաև kar, հայերեն «կոռ» — աշխատանք, երբեմն միասին «կոռ ու բեկար»։ Վերջին հաշվով, ըստ Ն. Ադոնցի, «բեկարը» նշանակում է ռուսական барщина (կոռ)[1]։ Ըստ ակադ. Հ. Մանանդյանի «բեկարը կարող է լինել հողային հարկ, որ արաբերեն լեզվով անվանվում էր խարաճ»: Մի այլ տեղ, «բեկարը... барщина-ի նշանակություն չունի այդ բառի այժմյան հասկացողությամբ։ ... Բեկարը կարող է լինել կամ արքունի հարկ, հավանորեն հողային, կամ զինվորական ծառայության պարտավորություն»[2]։

Համեմատելով «բեկարը» «բէգարի» հետ, բառարանները վերջինիս նշանակությունը բացատրում են՝ «Արմատական բառարան».—«տուգանք (եռու բէգար)», «ձրի պարտադիր աշխատանք»։ Այս վերջին իմաստով էլ հայերենից փոխ են առել վրացիները։ «Բացատրական բառարան».—«բեկար», «բէգեառ»-ը բացատրված են՝ «1. ձրի աշխատանք, որ գյուղացիները կատարում էին կալվածատերերի հողերի վրայ, 2. ձրի աշխատանք, որ վարչության կարգադրությամբ գիւղացիները կատարում էին օր. ճանապարհներ շինելու, բեռներ թափելու և այլն. հմմտ. կոռ»։

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 484։

[2] Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը Մարզպանության շրջանում (տես Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, 1926 թ., № 1, էջեր 34, 37)։

Մեր կարծիքով Հայկազյան և Արմատական բառարանների բացատրությունը՝ բեկարը իբրև «արքունի տուրք» կամ «տէրության վճարված տուրք», ընդունելի չէ[1]։ Ճիշտ են Ն. Ադոնցն ու Ս. Մալխասյանը, որոնցից առաջինը «բեկարը» համարում է «барщина» (կոռ), աշխատանքային հարկ», իսկ Ս. Մալխասյանը՝ «բեկար» — «ձրի աշխատանք, որ գյուղացիները կատարում էին կալվածատերերի հողերի վրա»։

Վերև մեջ բերված երրորդ վկայության մեջ «բեկարը» հենց այս իմաստով էլ պետք է հասկանալ. այն չի կարելի «արքունի տուրքի» իմաստով հասկանալ, որովհետև այնտեղ պարզ գրված է «աղատ արարի յարքունական ծանրութիւնէ և ի բեկարէ»։ Եթե «բեկարը» արքունի տուրք լիներ, ապա կարիք չէր լինի այն նորից հիշել, որովհետև դա կլիներ անիմաստ կրկնություն, քանի որ «յարքունական ծանրութիւն»-ը հենց ինքը արքունական տուրքն է, կամ տուրքերն են ընդհանրացված հասկացողությամբ։ Բացի այդ մեզ թող չշփոթեցնի քահանաներին և եկեղեցու այլ սպասավորներին «բեկար»-ից ազատելու հանգամանքը[2]։ Այստեղ խոսքը կամ հոգևորականության պլեբեյական խավերի ներկայացուցիչների մասին է, այդ դեպքում, ուրեմն, նրանք ևս ճորտային կախման մեջ են ընկել կալվածատիրոջից և կամ հոգևորականության բարձր խավի ներկայացուցիչների մասին, որոնց ենթակա կալվածքներում նստած ճորտ գյուղացին պարտավոր էր «բեկար» (կոռ)

[1] Ի միջի այլոց Աճառյանի Դրասխանակերտցու մոտ մատնացույց արած էջերում խոսքը ոչ թե «բեկարի», այլ «սակի» մասին է։ Տես Հ. Դրասխանակերտցի, էջ 169, 203։

[2] Հ. Մանանդյանը Ադոնցի հետ չի համաձայնվում միայն այն բանի համար, որ «եթե «բեկարը» հասկանանք իբրև «կոռ» կամ барщина՝ այդ բառերի սովորական այժմյան նշանակությամբ, այդ դեպքում վերոհիշյալ վկայություններից պետք է հետևցնենք, որ Աստուածածնի (խոսքը Կոթավանքի մեր վերը մեջբերած արձանագրության մասին է) քահանաները կամ սպասավորները մինչև 901 թիվը ոչ միայն հարկ են վճարել արքունիքին, այլև ենթակա են եղել «բեկարի», այսինքն՝ օգտագործվել են իբրև ձրի աշխատող ուժ»։ Իսկ այդ բանը Հ. Մանանդյանին թվում է անակնկալ։ (Տես «Հայաստանի արքունի հարկերը Մարզպանության շրջանում», էջ 33)։

քաշել կալվածատեր իշխանի (Սուփանի) օգտին, որից, սակայն, այժմ Սուփանն ազատում է նրանց։

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը, չնայած իրենց աղքատիկության, համարձակորեն ապացուցում են, որ 9-րդ դարում, ինչպես և 10-րդ ու հետագա դարերում գոյություն ուներ աշխատավճարային ռենտա, կոռ։ Ավելի վաղ շրջանի Սյունիքում նրա գոյության մասին փաստեր չունենք։ Ընդհանրապես ողջ Հայաստանում կոռի գոյության մասին առաջին վկայությունն ունենք 645 թ.՝ Դվինի ժողովի կանոններում։

«Կոռի» բուն բովանդակությունը և մեծությունը (ինչ ձևի աշխատանքներում էր օգտագործվում, քանակը, տևողությունը և այլն) հայագիտության մեջ լրիվ որոշված չէ աղբյուրների պակասության պատճառով։ Ակադ. Մանանդյանը նշում է նրա մի ձևը՝ «պահակություն»[1], և ապա ֆրանսիական corvée-ի և գերմանական Frohndienst-ի օրինակով ցույց է տալիս «կոռի» ընդարձակ իմաստը՝ «պետական ու հասարակական բնույթ ունեցող աշխատանքային պարտականություն»[2]։ Մենք չենք ժխտում «կոռի» կիրառումն այս ընդարձակ իմաստով նաև Սյունիքում 9—10-րդ դարերում։ Անշուշտ այդ դարերում ծավալված վանքերի, ջրանցքների, ճանապարհների և այլ կառուցումների մեջ օգտագործվում էր ճորտային աշխատանքը լայն մասշտաբով, բայց մենք այստեղ, Խոտ գյուղի օրինակով, ականատես ենք «կոռի» կիրառմանը իր իսկական իմաստով՝ կալվածատիրոջ հողի մշակումը գյուղացու կողմից ձրի, պարտադիր աշխատանքով, ականատես ենք աշխատավճարային ռենտայի գոյությանը։ Այս իմաստով ֆեոդալ իշխանը «կոռը» կարող էր օգտագործել նաև իր տնտեսության այլ բնագավառներում՝ անտառներում, ձկնորսարաններում, անասնապահության, այգեգործության մեջ և այլն։

Քանի որ ճորտի աշխատանքն անազատ էր, ուստի և ճորտը կալվածատիրոջ հողը մշակելիս շահագրգռված չէր իր աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ։ Դրա համար էլ ֆեոդալ կալվածատերը դիմում էր անմիջական հարկադրանքի՝ վերակացուի մտրակին, տուգանքի, բանտարկության և այլն։ Ֆեոդալական կալվածքում կենտրոնական դեմք էր դառնում կառավարիչ-գործակատարը։ Նա կալվածատիրոջ ծառայողն էր իր տնտեսության մեջ։ Գոյություն ունե՞ր նման կառավարիչ-գործակատար 9—10-րդ դարերում Սյունիքում, կամ ընդհանրապես հայ իրականության մեջ։ Կալվածատիրոջ սեփական տնտեսության առկայության պայմանում, անկասկած է, որ այն պետք է գոյություն ունենար։ Սակայն, փաստական վկայություն չունենք այն ցույց տալու համար։ Թողնելով այս հարցը բաց, մենք թույլ ենք տալիս մեզ անել հետևյալ ենթադրությունը, թե արդյոք սկզբնաղբյուրներում հիշատակվող «ձեռնատոր»-ը չէ՞ կառավարիչ-գործակատարը։

Հողային ռենտայի երկրորդ ձևը մթերային ռենտան է (рента продуктами)[1]։ Այս ձևի ժամանակ գյուղացին այլևս չի գնում կալվածատիրոջ հողի վրա աշխատելու, նա աշխատում է իրեն հատկացված հողի վրա և իր արտադրանքի որոշ մասը բնամթերքի ձևով, ձրի տալիս է հողատեր կալվածատիրոջը։ Իր էությամբ մթերային ռենտան ոչնչով չի տարբերվում աշխատավճարային ռենտայից, շահագործումը մնում է նույնը։ Կ. Մարքսը նշում է, որ «աշխատավճարային ռենտայի փոխարկումը մթերային ռենտայի, տնտեսական տեսակետից ոչնչով չի փոխում հողային ռենտայի էությունը։ Եթե նախկինում կալվածատերը յուրացնում էր գյուղացու անմիջականորեն հավելյալ աշխատանքը, ապա այժմ անմիջականորեն յուրացնում է նրա հավելյալ արդյունքը՝ բնամթերքի ձևով»[2]։

Հողային ռենտայի երրորդ ձևը դրամական ռենտան է։ Սա մթերային ռենտայի պարզ ձևափոխությունն է։ «Դրամական ռենտայի տակ,— ասում է Մարքսը,— մենք այստեղ հասկանում ենք հողային ռենտա, որը ծագում է մթերային ռենտայի պարզ մետամորֆոզից, որն իր հերթին միմիայն փոփոխված

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 211։

2 Նույն տեղում։

1 Թարգմանում են նաև «նատուրալ բահրա», «արդյունավճար ռենտա», «բնաարդյունքային ռենտա»։ Մենք գերադասում ենք «մթերային ռենտա» թարգմանությունը, որովհետև Մարքսն ու Լենինը այն անվանում են Producten rente, рента продуктами։

2 К. Маркс, Капитал, т. III, ч. II, էջեր 269, 270։ Տես նաև Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 185։

աշխատավճարային ռենտա է»[1]։ Մթերքների փոխարեն այժմ գյուղացին հողատիրոջը տալիս է մթերքների գինը։ «Դրամական ռենտան,— ասում է Լենինը,— ամբողջ հավելյալ արդյունքի գինն է, որ գյուղացին վճարում է հողատիրոջը»[2]։

Նշենք, որ ռենտայի այս երեք ձևերը իրար հաջորդում են ոչ այնպիսի կտրականությամբ, որ հաջորդ ձևի մեջ նախորդ ձևն արդեն գոյություն չունենար։ Մարքսը ցույց է տալիս, որ ռենտայի այս ձևերը կարող են հանդես գալ իրար հետ կողք կողքի, խառն կերպով.— «ռենտայի տարբեր ձևերը կարող են զուգորդվել, վերաստվերվել և ձուլվել»[3]։

Արդ, գոյություն ունեի՞ն արդյոք ռենտայի վերջին այս երկու ձևերը Սյունիքում՝ մեր ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանում։ Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է ուսումնասիրենք այդ շրջանի Սյունիքի հարկային սիստեմը։

Աշխարհիկ իշխանության հարկային սիստեմը։— Սյունիքում 9—10-րդ դարերում հիշվում են մի շարք հարկեր։

Վավերագրերում մենք հանդիպում ենք՝ ա) «աշխարհական հարկեր» (830 թ., 874—901 թվերի արանքում և այլն), բ) «նեպակ» (839 թ. և 871 թ.), գ) «արքունական ծանրություն» (850—901 թվերի արանքում), դ) «արքունի հարկեր» (938 թ.), ե) «արքունի չար»։ Առաջին իսկ հայացքից կարելի է այս հարկերը խմբավորել հետևյալ կերպ. ա) «աշխարհական հարկեր», բ) «նեպակ», գ) «արքունի հարկեր» (նաև «արքունի չար» և «արքունական ծանրություն»)։ Վերջին այս խմբավորումն էլ սեղմվում է. «նեպակը» մտնում է արքունի հարկերի մեջ։ Այդ պարզ երևում է վավերագրի հետևյալ կտորից. «Առաք զԲեխ իւր սահմանովն և արքունի նեպակովն եւ տուաք զԱրուքս իւր սահմանովն և արքունի նեպակովն որ էր 12 դրամ»[4]։ Այսպիսով, վերոհիշյալ բոլոր հարկերը խմբավորվում են երկու խմբի մեջ՝ ա) աշխարհական հարկեր և բ) արքունի հարկեր։

---

1 Կ. Մարքս, Капитал, т. III, ч. II, էջ 271։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 186 ծան.։

3 Կ. Մարքս, Капитал, т. III, ч. II, էջ 271։

4 Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 218։

Որ սրանք տարբեր խմբի, կարգի հարկեր են, երևում է վավերագրերում նրանց առանձին գործածությունից՝ «աղատ յամենայն աշխարհական հարկաց»[1], «աղատ են զոքա յամենայն արքունի հարկաց»[2], «յամենայն արքունի չարէն»[3]։ Մի քանի վավերագրերում գյուղն ազատված է «աշխարհական հարկերից», իսկ մի քանիսներում՝ «արքունի հարկերից»։ Իսկ երբ գյուղն ազատվում է և՛ մեկից, և՛ մյուսից, այդ դեպքում գրում են՝ «աղատ յամենայն հարկաց»[4]։ Այնուհետև, ինչպես երևում է, գոյություն է ունեցել ոչ թե մի աշխարհական հարկ և կամ մի արքունի հարկ, այլ աշխարհական հարկեր և արքունի հարկեր. այդ պարզ երևում է տվյալ հարկերի ամենուրեք հոգնակի գործածությունից՝ «աշխարհական հարկաց», «արքունի հարկաց»։

Այն փաստը, որ վավերագրերում գյուղերն ազատվում են այս երկու կարգի հարկերից գահակալ իշխանների կողմից, ցույց է տալիս, որ դրանք մուծվում էին ֆեոդալ իշխաններին, հետևապես, դրանք աշխարհիկ ֆեոդալ հողատերերի գանձած հարկերն էին[5]։

Ի՞նչ հարկեր էին դրանք իրենց իմաստով, բովանդակությամբ։

«Աշխարհական» կոչված հարկերը, մեր կարծիքով, այն հարկերն էին, որոնք կալվածատեր իշխանները ստանում էին գյուղացիներից նրանց տված իրենց հողի դիմաց[6]։ Ուրեմն, գանձված «աշխարհական» հարկերի բուն իմաստը, ըստ մեզ, հողային ռենտան է, որը արտաքուստ, իշխանների հասկացողությամբ, իրենց տված հողի դիմաց տրված հարկն է։ Որ

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 204, նաև 174։

2 Նույն տեղում, էջ 270։

3 Նույն տեղում, էջ 281, նաև 292։

4 Նույն տեղում, էջ 229, նաև 261, 292 և այլն։

5 Եկեղեցին էլ ուներ իր հարկերը, որոնց մասին խոսք կլինի ստորև։

6 «Աշխարհական» տերմինը պետք է ստուգաբանել «աշխարհ» և «ական», «աշխարհ»=«հող», հող-ական, այսինքն՝ հողի դիմաց ստացված։

մեր այս ենթադրությունը հավանական է, երևում է հետևյալ փաստից. «ազատ արարի յարքունական ծանրութիւնէ և բեկարէ»[1]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ «բեկարը» տարբերված է «արքունական» հարկից։ Վավերագրերում սովորական սիստեմ է՝ երբ մի կարգի բոլոր հարկերից են ազատում, իսկ մյուս կարգի ոչ բոլոր հարկերից, այդ դեպքում նշում են բոլոր հարկերից ազատված խմբի ընդհանուր անունը, իսկ մյուս խմբի միայն այն հարկի անունը, որից որ ազատ[illegible] են։ Այստեղ էլ նույնն է. ամբողջապես զիջվում են «արքունական» հարկերը, իսկ «աշխարհական» հարկերից միայն «բեկարը»։ Ուրեմն, «բեկարը» աշխարհական հարկերի մի ձևն է, մի տեսակը։ Իսկ մենք արդեն գիտենք, որ «բեկարը» աշխատավճարային ռենտան է, կորը, հետևապես, «աշխարհական» հարկերն էլ ամբողջությամբ վերցրած ռենտան է, նման այն բանի, որ եթե ամբողջության մի մասը մի որոշակի բան է, ապա նրա ամբողջությունն էլ այդ նույն բանն է[2]։

Մենք ասացինք, որ «աշխարհական» հարկը գործ է ածվում հողնակի։ Հողնակի գործածությունը ցույց է տալիս ոչ թե բաղմաթիվ ռենտաների գոյությունը, ռենտան մեկն էր, այլ ռենտայի տարբեր ձևերը։

Հետագայում, երբ հանդես են գալիս նաև ռենտայի 2-րդ և 3-րդ ձևերը, այսինքն՝ ռենտան վճարվում է նաև մթերքով և դրամով, դրանց էլ անվանում են, իշխաններին արդեն վաղուց ծանոթ, «աշխարհական» հարկ անունով։ Ուստի 9—10-րդ դարերի Սյունիքում իրար հետ կողք կողքի գոյություն ունեցող հողային ռենտայի երեք ձևերը միասին վերցրած կոչվել են «աշխարհիկ հարկեր» հավաքական տերմինով։

Արքունի հարկ խմբի մեջ, ինչպես տեսանք, մտնում են «արքունի հարկ», «արքունի ծանրություն», «նեպակ» և «արքունի չար» կոչված հարկերը։ Մեր կարծիքով «արքունի հարկը»

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 178։

[2] Եթե անգամ ընդունենք Հ. Մանանդյանի կարծիքը, համաձայն որի «բեկարը» հողային հարկ է, դարձյալ մեր հետևությունը մնում է ուժի մեջ։ Այդ դեպքում էլ «բեկարը» է «աշխարհական» հարկ, այսինքն՝ հողային հարկ, որը հենց ինքը հողային ռենտան է։

և «արքունի ծանրությունը» նույն բաներն են։ «Արքունի ծանրությունն» ունի հավաքական իմաստ։ Բոլոր տեսակի արքունի հարկերը միաժամանակ կոչվում էին «արքունի ծանրություն»։

Արքունի հարկի հողնակի գործածությունը ցույց է տալիս, որ ոչ թե մեկ, այլ մի քանի հարկեր կային, որոնք միացյալ տերմինով կոչվում էին «արքունի հարկեր»։ Ինչպես բառն ինքը ցույց է տալիս, այդ հարկերը պետությանը, արքունիքին մուծվող հարկեր էին։ Բայց այս շրջանի Սյունիքում «արքունիք» էին կոչվում նաև բոլոր գահակալ, ինչպես և դահերեց իշխանների քաղաքական ապարատը, ապարանքները[1]։ Հետևապես, «արքունի» հարկ էին կոչվելու նաև բոլոր այն հարկերը, որոնք ֆեոդալ իշխանը, բացի հողային ռենտայից, գանձում էր լրացուցիչ կերպով գյուղացիներից։ Նման լրացուցիչ հարկերի գանձումը հատուկ է բոլոր երկրների ֆեոդալական միջավայրին։ Լրացուցիչ այդ հարկերը կարող էին լինել բազմազան և բազմաձև։ Այսպիսով, մեր ենթադրությամբ, «արքունի հարկաց» մեջ մտնում էին ոչ միայն պետության օգտին գանձվող հարկերը, այլ նաև անմիջականորեն ֆեոդալ իշխանների օգտին գանձվող լրացուցիչ հարկերը։

Աղբյուրների պակասության հետևանքով դժվար է պարզել, թե ինչպիսի հարկեր էին գանձվում պետության օգտին և ինչպիսի լրացուցիչ հարկեր ֆեոդալ իշխանների օգտին։ Մեզ հայտնի է միայն երկու տերմին՝ «արքունի չար» և «նեպակ»։ Սրանցից առաջինն առայժմ անբացատրելի է[2]։ Դժվար է ասել, թե «արքունի չարը» պետությա՞ն օգտին գանձվող հարկ էր, թե՞ ֆեոդալ իշխանի օգտին գանձվող լրացուցիչ հարկ, ինչպես նաև դժվար է ասել, թե ինչ հարկ էր այն իր բովանդակությամբ։ Իսկ երկրորդը, «նեպակը», պետության օգտին գանձվող հարկ էր։

Որ հնարավոր է «նեպակը»[3] գանձվում էր ոչ թե կալվածա-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 192, 193, 199, 203, 242, 259 և այլն։

[2] «Չար» բառը, իբրև ածական բացատրելը կասկածելի է։

[3] Հայկազյան բառարանում «նեպակը» բացատրված է—«ճճի բազմատոհմի»։ Աճառյանը արմատական բառարանում մատնացույց անելով Օրբելյանի Բեխ և Արուքս գյուղերի փոխանակման փաստը «նեպա-

տիրոջ օգտին, այլ ավելի բարձր կանգնած մեկի, հավանաբար Բագրատունյաց Թագավորի (մինչև 10-րդ դարի առաջին քառորդը նաև խալիֆաթի) օգտին, երևում է հետևյալից։ Վերևում մեջ բերված Արուքս և Բեխ գյուղերի փոխանակման մասին Տաթևի վանքի և Ջևանշեր իշխանի միջև կնքված վավերագիրը ցույց է տալիս, որ այդ երկու գյուղերն էլ փոխանակվել են իրենց «արքունի նեպակովն»։ Այստեղ «արքունի» բառը չպետք է հասկանալ իշխանի արքունիքի իմաստով, որովհետև եպիսկոպոսն էլ իր Արուքս գյուղը տվել է «իր սահմանովն ու արքունի նեպակովն», իսկ ինչպես հայտնի է, եկեղեցին երբեք իրեն «արքունիք» չի կոչել։ Մյուս կողմից, եթե այդ գյուղերի «նեպակը» իրենց (իշխանի և վանքի) օգտին գանձվող հարկ լիներ, ապա ի՞նչ կարիք կար նշելու նրանց փոխանակումը, քանի որ այդ ինքնին հասկանալի կլիներ։ Բացի այդ, գյուղերից մեկի «նեպակը» 12 դրամ է, հավանաբար, նույնքան էր նաև մյուս գյուղի «նեպակը», այդ տրամաբանական է, որովհետև սովորաբար փոխանակվում են հավասար մեծությունները, և բացի այդ, եկեղեցական հարկացուցակում էլ այդ գյուղերը հավասար մեծությամբ (6 միավոր) հարկ են տալիս[1]։ «Նեպակի» մեծության, քանակի նշումը նույնպես ցույց է տալիս, որ այն գանձվում էր ոչ թե իրենց, փոխանակողների (Ջևանշերի և վանքի) օգտին, այլ մի ուրիշի օգտին, հակառակ դեպքում չէր նշվի նրա քանակը, որովհետև նրանցից յուրաքանչյուրն իր ցանկացածի չափով կգանձեր իր սեփականությունը հանդիսացող գյուղից[2]։

կը» բացատրում է անորոշ ձևով՝ «մի տեսակ հարկ»։ Իսկ մատնացույց անելով Թ. Արծրունու վկայությունը, «նեպակը» բացատրում է իբրև վնասակար միջատներ ոչնչացնելու հարկ։ Ամեն գյուղացի որոշակի քանակությամբ վնասակար միջատ էր հավաքելու և արքունիք ուղարկելու։ Նույն բացատրությունն է տալիս նաև Մալխասյանը։ Մեր կարծիքով այս բացատրություններն անբավարար են։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 518, 519։

[2] Մեզ կարող են առարկել, թե ինչու ֆեոդալ իշխանները իրավունք են վերապահում իրենց «նեպակից» ազատել գյուղը։ Նման մի դեպք ունենք։ Հավանաբար, այդ արդյունք է այն բանի, որ այս կամ

Ամփոփելով մեր բոլոր ասածները տեսնում ենք, որ «աշխարհական հարկերը» հողային ռենտան է, նրա երեք ձևերը միասին վերցրած, իսկ «արքունի հարկերը» քաղաքական սյուզերենի, պետության օգտին գանձվող և ֆեոդալ իշխանների օգտին լրացուցիչ գանձվող հարկերն են։

Ի դեպ, մենք համաձայն չենք պրոֆ. Խ. Սամվելյանի այն կարծիքի հետ, համաձայն որի, իբր թե Հայաստանում «ռենտան և հարկը միևնույն էությունն են պարունակում»[1], իբր թե հողային ռենտան Հայաստանում գյուղացուց անցնում էր մինչև թագավորը և իբր թե այս բանը հանդիսանում է ասիական տնտեսության բնորոշ գծերից մեկը։ Պրոֆ. Խ. Սամվելյանն իրեն օգնության է կանչում Կ. Մարքսի մի դրույթը։ Կ. Մարքսի այդ դրույթը վերաբերում է ասիական այնպիսի երկրների, ուր իրոք հողը պետական սեփականություն էր, ուր գյուղացու հանդեպ կանգնած էր ոչ թե մասնավոր հողատեր-կալվածատերը, այլ ինքը՝ պետությունը[2]։ Մենք արդեն նշեցինք, որ Հայաստանում հողը պետական սեփականություն չէր, այլ կալվածատիրական, ուստի այստեղ գյուղացու հանդեպ կանգնած էր ոչ թե պետությունը, այլ կալվածատերը և վերջինս էլ ստանում էր ռենտան։ Հետևապես, այստեղ ռենտան ոչ թե համընկնում է պետական հարկին, այլ տարբերվում է նրանից։ Պրոֆ. Խ. Սամվելյանի այս սխալը ևս բխում է նրա հողի սեփականության պետական լինելու մասին ունեցած կոնցեպցիայից, Հայաստանը սխալ կերպով ասիական նման երկրների շարքը դասելուց։ Կ. Մարքսը շարունակության մեջ ասում է, որ ասիական նման երկրներում, ռենտայի և պետական հարկի համընկնումով «կախվածության հարաբերությունն ունի քաղաքական և տնտեսական ոչ ավելի դաժան ձև»[3]։ Այնինչ մեզ մոտ և, հատկապես, 9—10-րդ դարե-

---

այն իշխանից պահանջվում էր որոշակի «նեպակ»։ Նա ինքն այն բաշխում էր իր գյուղերի վրա, ուստի նա էլ կարող էր մի գյուղի «նեպակը» հանել և նրա ծանրությունը դնել մյուս գյուղերի վրա։

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջեր 249, 250։

[2] Կ. Маркс, Капитал, т. III, ч. II, էջ 267։

[3] Նույն տեղում։

ռում, ռենտայի ու պետական հարկի ոչ համընկնումով, հայ աշխատավոր ժողովրդի շահագործումը կրկնապատկվում և եռապատկվում էր, իսկ նրա կախվածությունը քաղաքականապես ավելի դաժան ձև ընդունում։

Եկեղեցու հարկային սիստեմը.— Սյունյաց եկեղեցու հարկերի մասին մենք ունենք Ս. Օրբելյանի մոտ պահպանված մի հարկացուցակ և նրա ձեռագրին հետագայում կցված Տաթևի թեմի «պտուղ» և «հուլավարն» կոչված ցուցակները, որոնք հայտնի են Քեռթուկ անունով[1]։ Ունենք նաև Ս. Օրբելյանի 18-րդ դարի ձեռագրին կցված մի այլ «պտուղ», որը հրատարակված չէ[2]։ Այս չորս ցուցակներից և ոչ մեկի ժամանակը որոշակիորեն հայտնի չէ մեզ։ Սկսենք հենց այդ հարցից։

Ամենահին ցուցակը Ս. Օրբելյանի պատմության մեջ պահպանված ցուցակն է։ Հարցն այն է, թե այդ ցուցակը վերաբերում է իր՝ Օրբելյանի շրջանին՝ 13-րդ դարին, թե՞ ավելի վաղ շրջանի։ Մենք հակված ենք կարծելու, որ այն վերաբերում է ավելի վաղ շրջանի, և մեր այդ ենթադրությունը ունի հետևյալ հիմքը։ Ս. Օրբելյանի ցուցակը վերնագրված է «Սիւնեաց երկոտասան դաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին»[3]։ Ուշադրություն ենք հրավիրում վերջին երեք բառի վրա։ Դրանք ցույց են տալիս, որ Ս. Օրբելյանն իր ցուցակը կազմել է կամ հնում սահմանված ցուցակի (դուցե և ցուցակների) հիման վրա, կամ հնում սահմանված հարկերի չափերի հիման վրա։

Արդ, եղե՞լ է արդյոք հնում սահմանված որևէ հարկացուցակ։ Ս. Օրբելյանի մի ուշագրավ վկայությունը դրական պատասխան է տալիս այս հարցին։ Խոսելով Սյունյաց եպիսկոպոսության ստեղծման ժամանակաշրջանի մասին Ս. Օրբելյանը հայտնում է, որ իբր թե Գողթան գավառը քրիստոնեությունն ընդունել է Գրիգոր Լուսավորչից առաջ և ունեցել է իր հոգևոր ինքնուրույն կենտրոնը՝ տեսչությունը, որը հետագայում, երբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով 4-րդ դարում (ըստ Ս. Օրբելյանի) ստեղծվում է Սյունյաց եպիսկոպոսությունը, ենթարկվում է նրան։ Այդ բանի իսկության մասին Ս. Օրբելյանը վկայակոչում է՝ «Որում վկայ առաջին կաթողիկոսացն շրջաբերական թուղթք և հին գաւազան գաւառացն, որ վասն հարկաց եկեղեցւոյն, զի լիով ունի գրեալ յինքեան զբովանդակ գաւառն Գողթան»[1]։ Ինչպես տեսնում ենք, դեռ շատ վաղուց, Ս. Օրբելյանից շատ առաջ, եղել է գավառների եկեղեցական հարկերի մասին մի գավազան (հարկացուցակ), որի մեջ գրված է եղել բովանդակ Գողթան գավառը։ Հավանաբար, գրված են եղել և մյուս գավառները։

Ուշագրավ այս վկայությունը, որը վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից, անժխտելիորեն ապացուցում է եկեղեցական հարկացուցակի գոյությունը հնում։ Եթե Ս. Օրբելյանը վկայակոչում է այդ հին գավազանը, նշանակում է նա տեսել է այն, ունեցել ձեռքի տակ և օգտվել է նրանից։ Այս հանգամանքը որոշակի լույս է սփռում Ս. Օրբելյանի «ըստ հին սահմանին» արտահայտության վրա, և որոշակիորեն ապացուցում է նրա պահպանած հարկացուցակի ունեցած աղերսը հին այդ գավազանի հետ։

Բայց ո՞ր ժամանակ է գոյություն ունեցել այդ հին գավազանը։ Ըստ Ս. Օրբելյանի այն գոյություն պետք է ունեցած լինի 4-րդ դարում, որովհետև այդ ժամանակ էր, որ, ըստ նրան, ստեղծվեց Սյունյաց եպիսկոպոսությունը և Գողթանն էլ մտավ նրա վիճակի մեջ։ Ս. Օրբելյանը ճիշտ չէ։ Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Սյունյաց եպիսկոպոսությունը հիմնվել է 5-րդ դարում և ամենագլխավորն է, Գողթանը Սյունյաց եպիսկոպոսության մեջ է մտել միայն 8-րդ դարից հետո։ Ասողիկը վկայում է, որ Եսայի կաթողիկոսը մինչև կաթողիկոս դառնալը եղել է Գողթանի եպիսկոպոսը— «Լինի նախ եպիսկոպոս Գողթան և ապա կաթողիկոս Հայոց»,

---

1 Քեռթուկը գտնվում է Ս. Օրբելյանի պատմության ամենավաղագույն ձեռագրում (տես ՀՍՍՌ Պետական մատենադարանի № 6271 ձեռագիրը), որ զետեղված է պրոֆ. Ա. Աբրահամյանի հրատարակած «Ժամանակագրութիւն Ս. Օրբելյանի» (Երևան, 1942 թ.) գործի վերջում։

2 Տես ՀՍՍՌ Պետական մատենադարանի № 1488 ձեռագիրը, էջեր 218բ, 219բ։

3 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 509։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 23։

իսկ կաթողիկոս դառնում է Հայոց ՄԻԱ թվականին (772 թ.)[1]։ Նույն բանն է ասում նաև Հ. Դրասխանակերտցին՝ «Զսա նախ կարգեալ էին եպիսկոպոս ի գաւառին Գողթան և զկնի ապա կացուցեալ ի հայրապետական աթոռն»[2]։ Ուրեմն դեռ մինչև 8-րդ դարի 2-րդ կեսը Գողթանը չէր մտնում Սյունյաց եպիսկոպոսության մեջ, նա ուներ իր առանձին եպիսկոպոսությունը։ Միայն 8-րդ դարից հետո, ինչպես իրավացի կերպով նշում է Ալիշանը, Գողթանի եպիսկոպոսությունը ենթարկվեց Սյունյաց եպիսկոպոսությանը[3]։ Ուրեմն, այն գավառանը, որի մասին խոսում է Ս. Օրբելյանը, և որն ինքը տեսել է, եղել է ոչ թե 4-րդ կամ 5-րդ դարերում, այլ, հավանաբար, 8-րդ դարի վերջում և 9-րդ դարի սկզբում։ Սա մոտավորապես այն ժամանակն է, երբ Սյունիքի եպիսկոպոսության կենտրոնը դառավ Տաթևը։ Ուստի պետք է եզրակացնել, որ Տաթևում ամրանալուց հետո եպիսկոպոսները կազմել են վերոհիշյալ գավառանը և նրա մեջ մտցրել նաև Գողթան գավառը։ Սա Տաթևի վանքի առաջին հարկացուցակն էր, որը և մնացել էր Տաթևի արխիվում, մինչև Ս. Օրբելյանի ժամանակը[4]։ Հասկանալի է, որ Տաթևի վանքը միշտ այդ առաջին հարկացուցակով չէր առաջնորդվելու։ Հետագա ժամանակաշրջանում, հատկապես 9—10-րդ դարերի ընթացքում, երբ Տաթևի վանքի հողատիրությունը, նրա վիճակը, տնտեսական ու քաղաքական դիրքը աճեց ու մեծացավ, բնականորեն, նա այդ առաջընթացի ժամանակ չէր ղեկավարվելու հարկահանման հին չափերով. փոփոխության պիտի ենթարկվեին նաև նրա հարկահանության չափերը, այսինքն՝ պետք է կազմվեր նոր հարկացուցակ։ Հարկավ, Ս. Օրբելյանը տեսել է նաև այդ նոր ցուցակը։ Այդ երևում է նրանից, որ նա վերև մեջբերված վկայության մեջ իր հիշած գավառանը համարում է «հին գա-

1 Ս. Ասողիկ, էջ 105։

2 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 107

3 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 312։

4 Չենք բացառում, Շաղատում եղած ժամանակ էլ նրանք կարող էին ունենալ հարկացուցակ, բայց դա հավանաբար խղճուկ բան էր, որովհետև Սյունյաց եպիսկոպոսությունը դեռ որպես խոշոր հողատեր չէր ձևակերպվել։

ւազան գաւառացն», նշանակում է կար նաև նոր «գաւազան գաւառաց»։ Այստեղից դժվար չէ հետևցնել, որ Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակն աղերս ունի ոչ միայն 8-րդ դարի վերջում և 9-րդ դարի սկզբում կազմված «հին գաւազանի» հետ, այլ նաև 9—10-րդ դարերում կազմված հարկացուցակի հետ։ Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Ս. Օրբելյանի գրքում տրված հարկացուցակը, հիմնականում, 10-րդ դարի ցուցակ է, քանի որ Տաթևի վանքը, որպես հողատեր կալվածատեր, իր ամենամեծ ծաղկմանը հասավ այդ դարում և այդ հիման վրա էլ ստեղծեց ավելի բարձր չափեր հարկահանության մեջ։ Հետագա եպիսկոպոսները, ինչպես և ինքը՝ Ս. Օրբելյանը, փարվեցին հենց այդ ցուցակին, որպես մեծ եկամուտ ապահովող ցուցակի, այն սրբագործեցին և համարեցին անառարկելի՝ «ըստ հին սահմանին»։ Որ մեր այս ենթադրությունը հիմնավոր է, երևում է նաև հետևյալ փաստերից։ ա) Նախիջևանի գավառը չի մտնում Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակի մեջ։ Ս. Օրբելյանի վկայությունից գիտենք, որ 1006 թվին Սարգիս կաթողիկոսը իր շրջաբերական նամակով Նախիջևանը մտցնում է Սյունյաց վիճակի մեջ[1]։ Եթե հարկացուցակը 1006 թվից հետո լիներ կազմված, ապա այն կմտներ նրա մեջ։ Նշանակում է այդ հարկացուցակը դրանից վաղ շրջանի, 10-րդ դարի ցուցակ է։ բ) Սարգիս կաթողիկոսի շրջաբերականում հիշվում են գավառներ, որոնք չկան Ս. Օրբելյանի հարկացուցակում. օրինակ՝ Որդուատ, Արքուլիք, Փորակ, Երիշատ և այլն[2]։ գ) Ս. Օրբելյանի հարկացուցակի գավառների անունները համապատասխանում են 9—10-րդ դարերի գավառների անուններին, այնինչ այդ նույն գավառների մի քանիսի անունները 13-րդ դարում, հենց իր՝ Ս. Օրբելյանի ապրած ժամանակ, փոփոխված էին։ Օրինակ՝ Աղահեջը կոչվում էր Քաշուիթաղ կամ Խոժոռաբերդ, Բաղքը՝ Աճէն, Կովսականը՝ Գհամ և այլն[3]։ Բացի այդ 13-րդ դարում, իր իսկ Ս. Օրբելյանի վկայությամբ, Սյունիքի նախկին գավառ-

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 310, ի դեպ, գավառների վարչական պատկանելությունը չպետք է շփոթել նրանց եկեղեցական պատկանելության հետ։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 12։

ները տերիտորիալ փոփոխությունների էին ենթարկվել, փոքրացել ու մեծացել, որոշ գավառներ ուրիշների վրա բաժանվել, անունները փոխվել, ըստ որում, արդեն մի քանիսը, ինչպես նաև գյուղերի զգալի մասը թուրք-մոնղոլական անուններ ընդունել[1]։ Եթե Ս. Օրբելյանի հարկացուցակը լիներ 13-րդ դարի ցուցակ, ապա նրա մեջ կարտացոլվեին մեր թված այս փոփոխությունները։ 700-ից ավելի գյուղերի մեջ միայն 3—4 հատ թուրքանուն գյուղ կա։ Հարկացուցակում չկան 1006 թվին արդեն Տաթևի վիճակի մեջ մտնող Որդուատ, Արքուլիք, Ջուղա, Երիշատ, Փորակ անունները ոչ միայն իբրև գավառներ, այլև իբրև գյուղեր էլ։ Ս. Ջալալյանցն իրավացի է, երբ նշում է, թե Ս. Օրբելյանի ժամանակ, 13-րդ դարում, Տաթևի վիճակը այդքան գյուղեր (720)՝ չուներ, ինչքան կա հարկացուցակում[2]։ Սրանք փաստեր են, որոնք հիմնավորում են մեր ենթադրությունը այն մասին, որ Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակը 10-րդ դարի հարկացուցակ է։

Վերը նշված մյուս հարկացուցակները ավելի ուշ շրջանի հարկացուցակներ են։ № 6271 ձեռագիր «պտուղ» և «հուվարն» ցուցակների (Քեոթուկի) հրատարակիչ պրոֆ. Ա. Աբրահամյանը ոչինչ չի ասում նրա ժամանակի մասին։ Այդ ձեռագիրը պատկանում է 14-րդ դարի վերջին և 15-րդ դարի սկզբին, ուստի նրան կցված ցուցակները պետք է կազմված լիներին այդ շրջանում, քանի որ նրանից առաջ եղած ձեռագրերում այդ ցուցակները չկան։ Ինչ վերաբերում է երրորդ՝ «պտուղ» կոչվող հարկացուցակին, որը մինչև այժմ չի հրապարակված և գտնվում է № 1488 ձեռագրում, ապա այն պատկանում է 18-րդ դարին։

Այս վերջին ցուցակները, իրենց հերթին, աղերսվում են Ս. Օրբելյանի պահպանած 10-րդ դարի հարկացուցակի հետ։

Ս. Օրբելյանն իր պատմությունը գրել և թողել է վանքում, որը հետագա սերունդների համար դիտվել է իբրև կոնդակ։ № 6271 ձեռագրի վերջում կա մի հիշատակարան, որը գրել

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 12, 306—307, 310 և այլն։

2 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն 2-րդ, Թիֆլիս, 1858 թ.։

է նույն ձեռագիրը գրող գրիչը։ Այդ հիշատակարանն այժմ անընթեռնելի է։ Մեզ հաջողվեց ընթերցել նրա միայն առաջին մասը — «Տէր Ստեփանոս եպիսկոպոս սուրբ աթոռին ըստ-մասը — «Տէր Ստեփանոս եպիսկոպոս սուրբ աթոռին ըստ-թէի սուրբ առաքելոցս կազմել տվի զկոնդակս յիշատակն ինձ և ծնողաց իմոց...»[1]։ № 5501 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք՝ «Արդ գրեցաւ գիրքս այս մատեանք, որ է կոնտակ Տաթևոյ»։ № 6271 ձեռագրում կան 16-րդ դարում Գեղաքունիքի տանուտերերի կողմից գրված երեք հիշատակարաններ, որոնց մեջ նրանք հայտնում են, որ իրենք եկել են Տաթևի վանքը, իրենց աչքերով կարդացել են «զկոնդակս» և տեսել ու համոզվել են, որ իրենց գավառը մտնում է Տաթևի վիճակի մեջ, որ իրենք հարկատու են Տաթևի վանքին, որ նրանք այդ հիման վրա նորից դաշինք են կնքում եպիսկոպոսի հետ և հանձն առնում հարկը վճարել[2]։ Այս բոլորը ցույց են տալիս, որ Ս. Օրբելյանի աշխատությունը դիտվել է իբրև վանքի կոնդակ, որպես հայրապետական մի գիր, կանոն, որի խոսքն ու բովանդակությունն օրենքի ուժ են ստացել։ Բայց այդ աշխատության մեջ ինչը կարող էր օրենքի ուժ ստանալ հարկահանության տեսակետից, իհարկե, նրա հարկացուցակը։ Երևում է, որ ամեն անգամ, երբ կասկած է հարուցվել այս կամ այն գավառի, կամ գյուղի Տաթևի վանքի վիճակի մեջ մտնելու և նրան հարկատու լինելու մասին, դիմել են Տաթևի վանքի կոնդակին՝ Ս. Օրբելյանի հարկացուցակին։ Կարդալով այն, համոզվել են իրենց հարկատու լինելու գործում և նորից «յուխտ ու դաշինք» կնքել տվյալ ժամանակի եպիսկոպոսի հետ՝ փոփոխված իրականության համապատասխան փոփոխություններ մտցնելով հարկերի չափերի մեջ, որի հետևանքով գոյացել են նոր հարկացուցակներ։ Այդպիսի նոր ցուցակներ են և 15—17-րդ դարերի Քեոթուկը և 18-րդ դարի «պտուղը»։

Եվ այսպես, Օրբելյանի պահպանած հարկացուցակը կազմվել է 10-րդ դարում, իր հիմքում աղերսվելով մինչ այդ

1 Տես ՀՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 6271, էջ 673

2 Տես նույն ձեռագիրը, էջ 13. տեղի սղության պատճառով մեջ չենք բերում։

եղած հարկացուցակների հետ։ Նա Տաթևի վիճակի ամենածաղկուն շրջանի ավարտուն հարկացուցակն է, որը, ստանալով օրենքի ուժ, գործել է նաև հետագա դարերում, ինչպես նաև իր՝ Օրբելյանի դարում, համեմատաբար ավելի անաղարտ ձևով։ Իսկ ավելի ուշ տեղի ունեցող քաղաքական, տընտեսական և Տաթևի հողատիրական իրավունքների մեջ եղած փոփոխությունների հիման վրա կրել է փոփոխություն, վերածվելով Քեռիկ անունով մեզ հայտնի հարկացուցակի, իսկ ավելի ուշ՝ (18-րդ դարում) «պտուղ» կոչված հարկացուցակի։

Ս. Օրբելյանի հարկացուցակը մի առեղծվածային փաստաթուղթ է։ Նրանում հերթով հիշվում են 14 գավառների 701 գյուղերի անուններ, որոնց դիմաց դրված են թվանշաններ։ Վերնագրում այն համարվում է «հարկ եկեղեցւոյ», բայց ի՞նչ հասկանալ դրա տակ և ի՞նչ հասկանալ թվերի տակ, այդ մասին քար լռություն են պահպանում աղբյուրները։ Արդյոք դա միայն հողային ռենտա էր, որը իբրև հողատեր ֆեոդալ վանքը պիտի քամեր իր անմիջական սեփականությունը կազմող գյուղերի բնակիչներից, թե՞ միայն լրացուցիչ այն հարկն էր, որը նա, իբրև հոգևոր տեր, ստանում էր իր վիճակի մեջ մտնող բոլոր գյուղերի բնակիչներից, որպես եկեղեցական հարկ։ Այդ հարցին պատասխանելու համար մենք զուգահեռ ենք գցելու Ս. Օրբելյանի հարկացուցակի և Քեռիկի միջև։

Ինչպես ասացինք, Քեռիկում կա երկու ցուցակ՝ «պտուղ» և «հուլավարն»։ «Պտուղ»-ի մեջ հերթով հիշվում են 14 գավառների 265 գյուղեր և դրանց դիմաց տառերով արտահայտված երկշարք թվեր։ Ձևի տեսակետից այս բանը խիստ նման է Օրբելյանի պահպանած հարկացուցակին, տարբերությունն այն է միայն, որ այստեղ փոփոխված են գավառների անունները, քչացել է գյուղերի քանակը։ Իսկ «հուլավարն» այլ ձևով է։ Նա առանձին հերթականությամբ գավառներն ու նրանց գյուղերը չի հիշում, այլ խառն ու խուռն ձևով հիշում է շատ ավելի քիչ քանակությամբ գյուղեր, ավելի հաճախ՝ առանձին հողերի, հողակտորների անուններ և ստացվելիք պարտավորությունները, որոնք հիմնականում արտահայտված են մթերքով և կոռային աշխատանքով։

Մեր ըմբռնումով Քեռիկի այս երկու ցուցակները տարբեր բաներ են։ «Պտուղը» եկեղեցական այն հարկն է, որ Տաթևի վանքը, իբրև հոգևոր տեր, ստանում էր իր վիճակի մեջ մտնող բոլոր գավառների բոլոր գյուղերից, անկախ նրանից, թե ում էին պատկանում այդ գյուղերը՝ ֆեոդալ իշխանին, թե ուրիշին։ Իսկ «հուլավարն» եկեղեցու (Տաթևի վանքի) անմիջական սեփականությունը կազմող գյուղերի և հողերի վրա նստած գյուղացիներից (ճորտերից) քամվող հողային ռենտան է, որը, ինչպես ասացինք, վճարվում էր թե մթերքով (ցորեն, բրինձ, մեղր, ոչխար, ընկույզ և այլն), և թե կոռային աշխատանքով[1]։ Այդ երևում է նաև վերնագրից՝ «հուլավարն այսինքն՝ վանքական գիւղօրէից հողոց տասնորդք». ուրեմն տասնորդի ձևով քամվող հողային ռենտա։

Մեր համոզմունքով Ս. Օրբելյանի մոտ պահպանված հարկացուցակը համապատասխանում է «պտուղ»-ին։ Դա 10-րդ դարում Տաթևի վանքի կողմից իր վիճակի մեջ մտնող գավառների բոլոր գյուղերից հավաքված եկեղեցական հարկն է, անկախ գյուղի պատկանելությունից։ Այդ ցուցակի մեջ չի մտնում Տաթևի վանքի անմիջական սեփականությունը կազմող գյուղերից տասնորդ —«հուլավար»-ի ձևով վերցրած հողային ռենտան։ Հավանաբար, դրա համար էլ եղել է հատուկ ցուցակ 10-րդ դարում, բայց Ս. Օրբելյանը մեջ չի բերել, կամ չի հանդիպել։ Ուշագրավ է նաև, որ Տաթևի վանքի անմիջական սեփականությունը կազմող գյուղերը ևս, քիչ բացառությամբ, մտնում են Օրբելյանի պահպանած հարկացուցակի մեջ։ Այդ նշանակում է, որ վանքն այդ գյուղերից, բացի ռենտայից («հուլավար»-ից) լրացուցիչ կերպով ստանում էր նաև եկեղեցական հարկ («պտուղ»)[2]։

Ամփոփելով մեր ասածները, հանգում ենք հետևյալին։ Եկեղեցու հարկային սիստեմը հար ու նման է աշխարհիկ հարկային սիստեմին։ Այսպես, աշխարհիկ իշխանների հողե-

---

1 Օրինակ՝ Տաթև գյուղը պարտավոր էր տալ «ԻԴ բեռ ցորեն և Գ լիտր մեղր տան, և գլխովին բոլոր գեղովն մէկ օր վար անեն, Բ օր հունձ անեն, և մէկ օր այ ջառ անեն ինչ բան որ լինի. և մէկ օր եղնարածքն վանքի համար խոտ հարեն»։

2 Այդպես է նաև Քեռիկում. «հուլավարի» մեջ մտնող գյուղերը մտնում են նաև «պտուղ»-ի մեջ։

ռում նստած գյուղացիները իրենց կալվածատեր իշխանին տալիս էին և՛ ռենտա («աշխարհական հարկ») և լրացուցիչ հարկեր («արքունի» կոչված հարկերի մի մասը), եկեղեցու հողերում նստած գյուղացիները իրենց հոգևոր կալվածատիրոջը (վանքին) տալիս էին նույնպես և՛ ռենտա («հուլավար»—տասնորդի ձևով), և՛ լրացուցիչ հարկեր։ Բացի այդ, բոլոր գյուղերը, թե եկեղեցական և թե կալվածատիրական, տալիս էին նաև պետական հարկ («նեպակ»), որն իշխանների ձեռքով գանձվում և տրվում էր Բագրատունյաց թագավորին, և եկեղեցական հարկ («պտուղ»), որը գնում էր հոգևոր սյուղերենի, Տաթևի վանքի օգտին։

Ի դեպ, չենք կարող հաշտվել Ի. Ջավախիշվիլու հետևյալ դրույթի հետ։ Խոսելով խոշոր կալվածատեր իշխանների կողմից եկեղեցիներին նվիրաբերված գյուղերի մասին, նա գրում է՝ «Այսպիսի դեպքերում նվիրաբերված գյուղին կամ մենակյաց ճորտ-գյուղացուն սովորաբար անձեռնմխելիություն էին շնորհում և պետական հարկերից անգամ ազատում», կամ «նրանց (եկեղեցական ճորտերի — Հ. Ուր.) նյութական դրությունը, իբրև ապահարկային ճորտերի, իհարկե, ավելի լավ էր, քան մնացած ճորտերինը»[1]։ Ի. Ջավախիշվիլուն թյուրիմացության մեջ է գցել այն, որ գյուղեր օտարող իշխաններն իրենց վավերագրերում գրում են. «ազատ յամենայն աշխարհական հարկաց», «ազատ արարի յարքունական ծանրութենէ և բեկարէ», «ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց» և այլն։ Սա ապահարկում չէր։ Նախ այն պատճառով, որ այս հարկերը պետական հարկեր չէին (բացառությամբ «նեպակի»), ինչպես կարծում է Ի. Ջավախիշվիլին, այլ իշխանների իրենց օգտին գանձվող հարկեր։ Պետական հարկեր նշանակում ու ստանում էր կենտրոնական պետությունը (Բագրատունյաց թագավորը, սկզբնական շրջանում նաև խալիֆաթը), ուստի նա միայն կարող էր ազատել պետական հարկից որևէ մեկին և ոչ թե տեղական իշխանը։ Երկրորդ, կալվածատեր իշխանը եկեղեցուն նվիրելով որևէ գյուղ,

[1] Ի. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանում սոցիալական շարժման պատմության համար, էջեր 12—13 (ընդգծումները մերն են —Հ. Ուր.)։

այսինքն՝ նրա նկատմամբ իր ունեցած սեփականության գերագույն իրավունքը, դրա հետ միասին եկեղեցուն էր տալիս նաև իր հարկահանման իրավունքը։ Մինչ այդ տվյալ գյուղից ռենտա ու լրացուցիչ հարկ ստանում էր աշխարհիկ կալվածատեր իշխանը, որպես նրա գերագույն սեփականատերը, իսկ այժմ այդ իրավունքը տրվում էր եկեղեցուն։ Հողում նստած գյուղացին ոչինչ չէր շահում, փոփոխվում էր միայն նրա հարկահան և ռենտա ստացող տերը՝ կալվածատերի փոխարեն եկեղեցին։ Գյուղացու վիճակը ոչնչով չէր թեթևանում։ Չպետք է մոռանալ, որ եկեղեցին էլ նույն տիպի գիշատիչ հարկահան էր, ինչ որ աշխարհիկ ֆեոդալը։ Սովորաբար եկեղեցու կամ եկեղեցական կալվածքների ապահարկություն ասելով, հասկանում ենք նրանց ազատությունը պետական հարկերից։ Մենք վերևում արդեն ցույց տվեցինք, որ «նեպակը» պետական հարկ էր և գանձվում էր նաև եկեղեցական կալվածքներից. ուստի եկեղեցական կալվածքները ապահարկված չէին։ Այս տեսակետից ուշագրավ է հիշել, որ դեռ նախարարական շրջանում եկեղեցական, ինչպես և ֆեոդալ նախարարների կալվածքներից արքունի հաս էր գանձվում։

Ինչպե՞ս էին մուծվում 9—10-րդ դարերի Սյունիքում ռենտան և հարկերը։ Այս հարցի պարզաբանման համար խիստ ուշագրավ է Ս. Օրբելյանի հարկացուցակի թվերի բովանդակության լուսաբանումը։ Այդ մասին հայագիտության մեջ արտահայտված են տարբեր կարծիքներ։ Ղ. Ալիշանի կարծիքով այդ թվերը նշանակում են բեռ ցորեն։ Իսկ Մ. Սմբատյանցը գրում է՝ «Այս ցուցակի մեջ յիշած հարկերը դրամական են երևում»։ Այս երկու հեղինակներն էլ իրենց կարծիքները չեն հիմնավորում փաստերով, ուստի նրանք մնում են իբրև ենթադրություններ միայն։ Եթե այս հարցում էլ զուգահեռ անցկացնենք Քեոթուկի հետ, կտեսնենք հետևյալը։ Քեոթուկի «պտուղ» կոչված հարկացուցակում հարկերը մուծվում էին և դրամով, և մթերքով, իսկ «հուլավար» կոչված ցուցակում ռենտան մուծվում էր և կոռ ու բեկարով, և մթերքով, և դրամով։ Օրինակ՝ Տանձատափ գյուղը, որը դեռ 906 թվին տրվել էր վանքին, տալիս էր՝ «Զ բեռն և Ե մարդան ցորեն և ԱՌ դեան հուլավար տան, Ա օր վարեն, Գ օր ճնձեն, Ա օր խոտ հարեն

և Ա օր ինչ բան որ հանդիպի ջառ անեն վանքիս»։ Ինչ խոսք, որ մենք Քեոթուկը չենք նույնացնում Ս. Օրբելյանի մոտ պահպանված 10-րդ դարի հարկացուցակի հետ, բայց քանի որ այդ ցուցակները, ինչպես տեսանք վերևում, աղերսվում են միմյանց հետ, կարող ենք ենթադրել, որ 10-րդ դարում էլ հարկերը ու ռենտան գանձվում էին այս երեք ձևով էլ։ Մեր այս ենթադրությունը, բացի այս աղերսային ապացույցից, ունի նաև փաստացի որոշ հիմք։ ա) Ինչպես վերևում տեսանք 9—10-րդ դարերում, թե իշխանների, և թե եկեղեցական հողերում գոյություն ուներ կոռ ու բեկար։ բ) Տեսանք նաև, որ 9-րդ դարում, թե եկեղեցական գյուղից, և թե իշխանական գյուղից «նեպակը» գանձվում էր դրամով (Արուքս և Բեխ գյուղերի նեպակը 12 դրամ էր), գ) Բոլոր գյուղերի համար «նեպակը» և եկեղեցական «պտուղը» ընդհանուր հարկեր էին։ Եթե ընդհանուր այս հարկերից առաջինը գանձվում էր դրամով, ապա կարելի է ենթադրել, որ մյուսը ևս գանձվեր դրամով[1]։ դ) Ինչպես կտեսնենք, 9—10-րդ դարերի Սյունիքը ևս

[1] Ի դեպ, Մատենադարանի մեզ համար կողմնակի № 3409 ձեռագրում (1735 թվագիր) կա մի հիշատակարան հետևյալ բովանդակությամբ. «Սիւնեաց երկոտասան դաւառաց վանքի պտուղն, այսինքն՝ Տաթեւու, վեց հազար եօթն հարիւր ոսկի է։ Թող զհոգեբաժինն և աթոռահանկն (կարդա աթոռահարկն— Հ. Ուր.) և այլն նոյնպէս»։ (Տես այդ ձեռագրի էջ 104 ա)։

Ուրեմն Սյունիքի 12 գավառների վանքին տված «պտուղը» կազմում էր 6700 ոսկի։ Ո՞ր շրջանին է վերաբերում այս պատկառելի թիվը, պարզ չէ։ Հետաքրքիր է, որ այս վերնագիրը՝ «Սիւնեաց երկոտասան դաւառաց վանքի պտուղն» չի համապատասխանում ոչ Քեոթուկի պտղի և ոչ էլ 18-րդ դարի պտղի վերնագրին, այլ համապատասխանում է Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակի վերնագրին։ Եվ ապա, թե Քեոթուկի պտղի, և թե 18-րդ դարի պտղի գումարները հասնում են հարյուր հազարների, էլ չասած Քեոթուկի «հուլավարի» գումարը։ Իսկ Ս. Օրբելյանի հարկացուցակի թվերի գումարը կազմում է 6389, այսինքն՝ 311 միավորով պակաս։ Արդյոք այս հիշատակարանը հեռավոր անցյալի (9—10-րդ դարերի) մի բեկոր չէ՞։ Եթե այդպես լինի, ապա կհաստատի վերը մեր արած երկու հետևությունը, որոնք են՝

ա) Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակը «պտուղն» է՝ եկեղեցական հարկը,

բ) այն գանձվել է փողով։

ապրեց դրամական հարաբերության զարգացում. մի բան, որը նույնպես տերերին ստիպելու էր հարկերն ու ռենտան գանձել դրամով։ ե) Ստորև կտեսնենք նաև, որ դրամական հարաբերության զարգացման հետևանքով Սյունիքում զարգանում է նաև կապալավարձը, որն արտահայտվում էր դրամով և մոտենում էր դրամական ռենտային։

Ահա այս բոլորի հիման վրա մենք համոզվում ենք այն բանում, որ Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակի թվերն արտահայտում են դրամի միավոր։ Համոզվում ենք նաև, այն բանում, որ 9—10-րդ դարերի Սյունիքում թե հարկերը, և թե ռենտան մուծվում էին դրամով, մթերքով և կոռ ու բեկարով, որ ռենտայի երեք ձևերն էլ կողք-կողքի առկա էին։

Այս հետևությունները ավելի հավանական կդառնան, եթե մենք դիտենք 9—10-րդ դարերի Սյունիքի ապրած տնտեսական վերելքը։

4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔԸ 9—10-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Ակադ. Հ. Մանանդյանն իր «О торговле и городах Армении» արժեքավոր աշխատության մեջ ցույց է տվել, որ արաբական տիրապետության առաջին շրջանում տնտեսական կյանքը Հայաստանում անկում ապրելով և ետ մղվելով իր առաջավոր դիրքերից, զարգանում էր բնական տնտեսության ետադարձ հիմքերի վրա[1]։

Այս բանը առավել ևս վերաբերում էր այդ ժամանակվա Սյունիքին, որը մինչ այդ էլ չէր փայլում իր տնտեսական կյանքի զարգացումով։ Լինելով լեռնոտ աշխարհ, հեռու ընկած առևտրական խոշոր ճանապարհներից, չունենալով սեփական ներքին, առավել մատչելի ճանապարհներ, 8-րդ դարում Սյունիքը, իրոք, ապրում էր փակ նատուրալ տնտեսություն։ Այս շրջանում լեռնածերպերում, խոր ձորերում և գետահովիտներում ընկած գյուղերը գերազանցապես վարում էին

[1] А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, էջ 133—140։

փակ նատուրալ կյանք։ Իրենք էին արտադրում իրենց սպառման անհրաժեշտ ապրանքները, իրենք էլ սպառում։ Հիմնական զբաղմունքն էր անասնապահությունը, երկրագործությունը և այգեգործությունը։ Ցանում էին ցորեն, գարի, հաճար, բրինձ, մշակում էին խաղողի և մրգատու այգիներ, բուծում էին մանր ու խոշոր եղջյուրավոր անասուններ, ընտանի թռչուններ։ Սայլը, ձին, ջորին և էշը հանդիսանում էին փոխադրության հիմնական միջոցները։ Արտադրության մեջ իշխում էր արորը իր երկաթյա խոփով։ Գոյություն ունեին արհեստավորներ՝ ջուլհակ, դարբին, հյուսն և այլն, որոնք մեծ մասամբ կենտրոնացած էին իշխանական նստատեղիներում։ Մինչև 9—10-րդ դարերը Սյունիքում ապրանքային փոխանակությունը, ներքին շուկան, ինչպես և դրամական հարաբերությունը չափազանց թույլ էին զարգացած։

Ինչպես հայտնի է 9-րդ դարից սկսած Հայաստանի տնտեսական կյանքի մեջ զգալի բեկում առաջացավ։ Ակադ. Հ. Մանանդյանը իր մի այլ աշխատության մեջ ցույց է տալիս, որ 9-րդ դարից սկսած և հատկապես 10—11-րդ դարերում, Հայաստանն ապրեց տնտեսական ու կուլտուրական վերելք, որի առանցքը կազմում էին «քաղաքների արագ բարգավաճումը, առևտրի ու ապրանքային տնտեսության բուռն զարգացումը...»[1]։

Տնտեսական այս վերելքին Հայաստանում խթանեց ոչ միայն միջազգային իրադրության փոփոխման հետևանքով Հայաստանի դիրքի և վիճակի կայունացումը, ինչպես նաև առևտրական տրանզիտ ճանապարհի փոխադրումը Հայաստան ու առևտրի զարգացումը, այլ նաև 9-րդ դարի 2-րդ կեսից սկսած երկարատև խաղաղությունը, որը տևեց հարյուր տարուց ավելի։

9-րդ դարի փոփոխված իրադրությունների մեջ սկսված այս տնտեսական վերելքն իր շրջագծի մեջ վերցրեց նաև Սյունիքը։ Դրանում համոզվելու համար բավական է նշել մի քանի փաստեր։

---

1 Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 5։

Տաթևի վանքը 10000 դրամով ագարակներ է գնում։ Մարիամ իշխանուհին մի դյուղ գնում է 60000 դրամի, իսկ մի ուրիշը՝ 3000 դահեկանի։ Սուփան իշխանը քահանաներին նշանակում է 50-ական դրամ վարձ, Մաքենացոց վանքին տալիս է կապալային եկամուտ 1250 դրամ։ Շապուհ Բագրատունին տալիս է 2430 դրամ։ Սողոմոն եպիսկոպոսը մի դյուղ գնում է 1200 դրամի, ոսկուց շինել է տալիս մի խաչ ու այն զարդարում է «մեծագին ակամբք և մարգարտով»։ Հակոբ եպիսկոպոսը Վարարակի ջուրը գնում է 12000 դրամի և մի թանկագին գոհարի։ Սյունյաց իշխաններն իրենց գանձարանը բաց են անում Տաթևի կաթողիկեի շինարարության համար։ Սահակ իշխանը գերությունից ազատվելու համար վճարում է «բազում կշիռս ոսկւոյ»[1]. Գրիգոր Սուփան 2-րդը «շատածախ գանձիւք» գնումներ է կատարում[2] և այլն։ Դրամական շրջանառության զարգացման զուգընթաց զարգանում էր նաև առևտուրը, իրև նրա պատճառն ու հետևանքը, ինչպես և զարգանում էր ապրանքային հարաբերությունը։

Առևտրի զարգացմանը Սյունիքում, մեծ չափով խթանեց այդ դարերում Սյունիքով անցնող առևտրական մի կարևոր ճանապարհ։ Դա Դվին—Պարտավ ճանապարհն էր։ Ակադ. Հ. Մանանդյանն առաջինը պարզեց այս ճանապարհի ուղին և նշեց, որ այդ ճանապարհը փաստորեն կենդանացավ ու աշխուժացավ 10-րդ դարում[3]։ Այդ ճանապարհի մասին առաջին տեղեկությունները հաղորդում է 10-րդ դարի արաբական աշխարհագիր Իստախրին։ Այդ մասին կարևոր աղբյուր է նաև հայկական «մղոնաչափը»։

Դվին—Պարտավ ճանապարհը, ըստ Մանանդյանի, ուներ երկու ճյուղ, որոնք դուրս գալով Դվինից և տարբեր կողմերով մտնելով Սյունիք, իրար էին միանում Կոթ կայանում, և ապա իրար ձուլված շարունակվում էին որպես մի ուղի մինչև

---

1 Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 174, 178, 179, 182, 200, 204, 215, 223, 254։

2 Տես Ղ. Այիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 289, նաև Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 6։

3 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 175—204։

Պարտավ։ Ճյուղերից մեկն էր՝ Դվին — Երևան — Ելենովկա — Բերդկունք — Նոր-Բայազետ — Կոթ, իսկ մյուսը՝ Դվին—Բաշ-նորաշեն — Սիսաջան — Աղքենդ—Սելիմի լեռնանցքով—Կոթ[1]։ Կոթից այն կողմը, արդեն մի ճյուղ կազմած՝ Կոթ — Մաքենիս — Ջոթ — Հաթերք — Կաղանկատույք — Պարտավ»[2]։

Առևտրական այս ճանապարհի վրա, բնականորեն, գոյանալու էին առևտրական կայաններ։ Ակադ. Հ. Մանանդյանը 10-րդ դարի արաբական (իբն-Ֆադլյ, Յակուտ) և հայկական (Ասողիկ, Դրասխանակերտցի) աղբյուրների հիման վրա ցույց է տալիս, որ 10-րդ դարում բազմաթիվ ավաններ աճել, զարգացել և վեր են ածվել գյուղաքաղաքների։ «Նմանապես,— գրում էր նա,— Դվին — Պարտավ ճանապարհի վրա... նաև այժմ գտնվում են հին Բերդկունքի և Մաքենիսի ընդարձակ ավերակները, որոնք կոչվում են «աղատ քաղաք»-ներ և որոնք նշանավոր կենտրոնավայրեր են եղել Բագրատունյաց թագավորության ժամանակ»[3]։

Բերդկունքի ավերակները, ինչպես ցույց է տալիս ակադ. Հ. Մանանդյանը, իսկ նրանից էլ առաջ Հ. Շահխաթունյանցը, Մ. Սմբատյանցը և Դ. Ալիշանը, գտնվում են Սևանա լճի արևմտյան ափին, Նոր Բայազետից հյուսիս, այժմյան Աղկալա գյուղի և Հայրեվանքի մոտ։ Ավերակներին ականատես հեղինակներ Շահխաթունյանցի և Սմբատյանցի վկայությամբ Բերդկունքի ավերակները փռված են մեծ տարածության վրա, որը բավական էր երկու հազար զերդաստանների համար։ Նա թողնում է քաղաքի տպավորություն։ Ավերակների մեջտեղում, մի փոքրիկ բարձունքի վրա «կային կանգուն ուղղաբերձ որմունք քարամբք և կրով ձուլեալք»։ Այդ ավերակները փռված են մինչև ընդհուպ լճի ափը, ջրերը շոյում են ավերակ տների հիմքերը»[4]։ «Տանց ու կրպակաց, կա-

[1] Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 194-ի և էջ 197-ի քարտեզը։

[2] Նույն տեղում, էջեր 195-ի, 204-ի և 203-ի քարտեզները։

[3] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջեր 8, 9։

[4] Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 242, տես նաև Դ. Ալիշան, Սիսական, էջ 40։

բավանոցաց և պանդոկաց ավերակներն ահագին տարածությամբ փռված են դաշտի երեսին՝ դեպի ծովը խոնարհված գառիվայրում»[1]. «և զքաղաքատեղին աւերակ՝ աղատ քաղաքդիւղ, յորում նշմարին պարիսպք իջևանից կամ կարաւանատանց, անչիշատակ առ ի նախնեաց»[2]։

Մաքենիսի ավերակները, Դ. Ալիշանի և Մ. Սմբատյանցի բացատրությամբ, գտնվում են Սևանա լճի հարավ-արևելյան ափի մոտերքում, նախկին Մաքենացոց վանքի շրջակայքում, իսկ այժմյան (Ալիշանի և Սմբատյանցի ժամանակ—Հ. Ուր.) Գզլ-Վանք, Ջամուրլու, Գզլ-Դաշ գյուղերի արանքում ընկած տարածության վրա։ «Ընդ մեջ գէօղիցս յիշեցելոց երևին ընդարձակ տեղիք աւերակաց, պարսպօք և աշտարակօք և եկեղեցեաւ, զոր տեղացիքն ասեն՝ ի հնումն Աղատ քաղաք կոչեցեալ ըստ գրութեան ինչ Պետրոսեան Պօղոս վարդապետի, որում ասէին Սիւնեցիք՝ աղատագիր ևս ունել ի շահից պարսից վասն ապահարկութեան տեղւոյն, և պահիւր յէջմիածին»[3]։ Հ. Մանանդյանի կարծիքով այս ավերակները Մ. Կաղանկատուացու հիշած «մեծ Մաքենոցոց մայրաքաղաքն» է։ Ավերակների այս նկարագրություններից երևում է, որ «աղատ» կոչված այդ քաղաքներն եղել են ընդարձակ ու մեծ. ունեցել են պարիսպներ, պանդոկներ կրպակներ, քարավանների համար իջևաններ։ Նշանակում է, դրանք եղել են կարևոր կայաններ Դվին — Պարտավ առևտրական ճանապարհի հյուսիսային ճյուղի վրա։ «Վերոհիշյալ «աղատ քաղաքներ»-ը,—գրում է ակադ. Հ. Մանանդյանը,— որոնք գտնվում էին Դվին—Պարտավ ճանապարհի վրա, եղել են նշանավոր միջնադարյան կենտրոնավայրեր և ունեցել են քաղաքային հատուկ իրավունքներ ու արտոնություններ։ Իմ կարծիքով, «աղատ քաղաք» անունները ոչ թե տեղանուն են, այլ սոցիալական հատուկ մի տերմին, որով մատնանշվում է վերոհիշյալ վայրերի աղատ

[1] Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունիքի ծովազարդ գաւառի, էջ 33։

[2] Դ. Ալիշան, Սիսական, էջ 40։

[3] Նույն տեղում։ Տես նաև Սմբատյանց, Գեղաքունի, էջ 597։

լինելը որոշ հարկերից և նրանց քաղաքային արտոնյալ դրությունը»[1]։

Մենք մեր կողմից ավելացնում ենք, որ առևտրական այդ ճանապարհի վրա, բացի ակադ. Հ. Մանանդյանի հիշած այս երկու «ազատ քաղաքներից» եղել են նաև ուրիշ գյուղաքաղաքներ։ Այդպիսիներից է Կոթը։ Սա Հ. Մանանդյանի քարտեզի վրա Բերդկունքին հաջորդող երկրորդ կայանն է (Gelakuni)[2]։ Գրիգոր Սուփան 2-րդն իր կառուցած Կոթի Աստվածածին վանքի վրա թողած արձանագրության մեջ գրում է.— «ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգեւոր ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ՝ ի կացուածի իմոց նախնեացն, զոր նախքան զայս պարսպափակ շրջապատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ»[3]։ Մի այլ տեղ ևս Սուփանը Կոթը անվանում է գյուղաքաղաք[4]։ Կոթը Գեղարքունի իշխանների նստատեղին էր, որը, ինչպես տեսնում ենք, եղել է պարսպապատ։ Մ. Սմբատյանցն այս Կոթի ավերակների մասին պատմում է հետևյալը։ Ներքին Աղեաման գյուղի շրջապատում կան բազմաթիվ ավերակներ և յոթ եկեղեցու ավերակներ։ Ավերակների շատությունը ցույց է տալիս, որ սա քաղաքատեղի է։ Սա հենց հին Կոթ քաղաքն է, որը եղել է իշխանանիստ։ Այստեղ է Կոթի Աստվածածին վանքը, որն այժմ (Սմբատյանցի ժամանակ—Հ. Ուր.) տեղացիներն անվանում են Կոթավանք։ Սմբատյանցն այդ ավերակներում գտնված մի խաչքարի և եկեղեցիներից մեկի որմի վրա կարդացել է ԹՂ և ԾՁ թվերը, որոնք նրա վկայությամբ իրենց ձևով շատ հին տառեր են, 6—7-րդ դարերին վերաբերող։ Գյուղի արևելյան բլրի վրա եղած վանքի ավերակների տառեր ունեցող քարերը հավաքելով ի մի, Սմբատյանցը կարդացել է և գտնում է, որ այդ եղել է Գրիգոր Սուփան 2-րդի վերոհիշյալ արձանագրության բեկորը։ Նրա նկարագրությունից նաև երևում է, որ այդ ավերակը հնում եղել է մեծադիր քաղաք, պարսպապատ։ Գյուղի արևելյան ծայրում գտնվող Ամենափրկիչ անունը կրող մատուռի մեջ եղած խաչքարի զարդածաղիկների մեջ Սմբատյանցը գտել է տառանման մի զարդ, որը նա կարդում է 3է (307+551=858 թ.)[1]։

Երկրորդ կարևոր կենտրոնն էր Սոթը (Սոդ) կամ Ծոթը (Զոթ)։ Սա Սոթ գավառի իշխանանիստ կենտրոնն է, որը Սեբեոսի մոտ անվանվում է «Քաղաքագիւղն Սաւդայ»[2]։ Մ. Սմբատյանցը սրա ավերակների մասին գրում է. «Ընդարձակ ավերակներն բացահայտ ցույց են տալիս քաղաքատեղ լինելը» (էջ 34)։ Հ. Մանանդյանը Դվին — Պարտավ ճանապարհի վրա դնում է Զոթ կայանը, բայց գտնում է, որ նրա տեղադրությունը «հավանական կլինի ենթադրել ոչ թե «Սաւդայ քաղաքագիւղ»-ում, այլ հատուկ մի այլ կարավանավայրում»[3]։ Մեզ համար, տվյալ դեպքում, կարևոր չէ Սոդի և Զոթի (Ծոթի) տեղադրության համընկնումը, այլ այն, որ մենք Սոթում էլ ունենք քաղաք, կամ քաղաքագյուղ, որն ավելի աճած ու զարգացած պետք է լիներ 9—10-րդ դարերում՝ առևտրական այդ ճանապարհի շնորհիվ։

Մ. Սմբատյանցը Գեղարքունիքի հին քաղաքների թվում հիշում է երկու քաղաք ևս։

ա) Գաւառ կամ Ծմակ կոչված քաղաքը, որի ավերակները տեսնում է Նոր Բայազետի տեղում։ Հ. Մանանդյանի մոտ Նոր Բայազետը Բերդկունքին հաջորդող առաջին կայանն է։

բ) «Գեղամարակ կոչված քաղաքը, որ հետո Գարուն Վա-

---

1 Հ. Մանանդյան, «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 191։

2 Նույն տեղում։

3 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 177։

4 Նույն տեղում, էջ 180։

1 Մ. Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունի...», էջ 34, 530—536։ Ի միջի այլոց Սմբատյանցը վիճում է «Մասյաց Աղաւնի» ամսագրի 1858 թ. (էջ 59—63) հոդվածագրի հետ, որը պնդում է, թե Կոթը կառուցված է եղել հին Կնիք կոչված քաղաքի տեղում։ Սմբատյանցը գտնում է, որ Կնիք անունով քաղաք չի եղել, այդ թյուրիմացության արդյունք է։ Խաչքարերը կարդացողները «ես Մարկոս կնկցի, ես Մաթոս կնկեցի» (կանգնեցի) բառերը կարդացել են կնիքեցի, և այստեղից հետևցրել, որ եղել է Կնիք քաղաք, որի տեղում հետագայում կառուցվել է Կոթը։ Տես Սմբատյանցի աշխատության էջ 528—529։

2 Սեբեոս եպիսկոպոս, «Պատմութիւն ի հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 78։

3 Հ. Մանանդյան, Հին Հայաստ. գլխ. ճանապարհները, էջ 199։

սակ իշխանը նորոգելով՝ անուանեալ է Վասակաշեն (Բասար Գեչար)»[1]։ Այս ևս Բերդկունք — Կոթ ճյուղի վրա էր։

Հավանաբար, քաղաքներ և կամ քաղաքատիպ վայրեր էին գոյացել նաև Դվին — Պարտավ ճանապարհի երկրորդ ճյուղի վրա։ Այդպիսիներից էր օրինակ՝ Եղեգիքը։ Սա որպես գյուղ հիշվում է դեռ շատ վաղուց, բայց որպես գյուղաքաղաք հիշվում է Վայոց Ձորի իշխանների կենտրոնանիստ դառնալուց հետո։ 10-րդ դարի սկզբում Սմբատ դահիրեց իշխանի ապարանքները գտնվում էին «Ի գիւղաքաղաքն յԵղեգիս»[2]։ Հ. Մանանդյանը նշում է, որ Դվին — Պարտավ ճանապարհի երկրորդ ճյուղը անցնում էր Վայոց Ձորով և հենց Խատախբրի ժամանակ (951 թ.) այստեղ «Եղեգիք գիւղաքաղաք»-ում էին գտնվում Սյունյաց գահագլուխ իշխանների «արքունական ապարանք»-ները»[3]։ Ինչպես տեսնում ենք Հ. Մանանդյանը Եղեգիսը ևս կապում է առևտրական ճանապարհի հետ։

Այսպիսով, առևտրական այդ ճանապարհի երկարությամբ 10-րդ դարում ի հայտ են գալիս մի շարք գյուղաքաղաքներ, որոնք նախկին գյուղեր են, բայց որոնք 9—10-րդ դարերի տնտեսական առևտրական կյանքի զարգացումով վեր են ածվել քաղաքատիպ վայրերի։ Հասկանալի է, որ Սյունիքի այս քաղաքատիպ վայրերը Անիի, Արծնիի և այլ քաղաքների նման մեծ ու ծաղկուն չէին և չէին էլ կարող լինել, բայց ուշագրավն այն է, որ Սյունիքի նման հեռավոր ու ավելի նատուրալ աշխարհում ևս, 10-րդ դարում գոյանում են քաղաքատիպ վայրեր, ուր կենտրոնանում է առևտրական, հավանաբար նաև արհեստավորական կյանքը։ Բնական է, որ փոխանակությունը մեկուսացած չէր կարող մնալ այս քաղաքատիպ վայրերում. նա այդ կենտրոններից աստիճանաբար թափանցում էր ավելի ու ավելի շատ իշխանական դղյակներ, դավառական կենտրոններ։ Չնայած կոնկրետ փաստերի պակասության, մեր

---

1 Մ. Սմբատյանց, նույնը, էջ 34։

2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 199, տես նաև 259։

3 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի դլխավոր ճանապարհները, էջ 195։

կարծիքով, կարելի է պնդել, որ անգամ առևտրական այդ ճանապարհից հեռու ընկած իշխանների՝ Հաբանդի, Կովսականի, Քաշունիքի, Բաղքի և այլ կենտրոնատեղերը ևս, այս շրջանում, աճում ու մեծանում են, և որ այս վայրերում նույնպես աստիճանաբար ներթափանցում է փոխանակությունը և փողը։ Հայտնի է, որ Կապանը 10-րդ դարում, այդ դարի արաբ հեղինակ Հուդուդ ալ-Ալամի վկայությամբ, ծաղկուն քաղաք էր։ Վերոհիշյալ առևտրական ճանապարհով Սյունիք էր բերվում ոչ միայն Անիից, Դվինից, ինչպես և հեռավոր երկրներից բերված պերճանքի իրեր, արհեստագործության զանազան արտադրանքներ, այլև հենց այդ ճանապարհով պետք է ենթադրել, որ Սյունիքից արտահանվում էր տեղական հումքի, հատկապես գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկը։ Կարծում ենք, որ Սյունիքն արտահանում էր իշխան ձուկ, անտառանյութ, անասուններ, հատկապես ձի, ջորի, ինչպես և մրգեր և այլն։

Ինչպես տեսնում ենք, քաղաքատիպ վայրեր ավելի շատ գոյանում են Բերդկունք — Մաքենիս ճանապարհի վրա, Գեղաքունիքում։ Այս փաստը ցույց է տալիս, որ Գեղաքունիքում առևտուրը և արհեստագործությունը ավելի էր զարգացած, քան Սյունիքի մյուս դավառներում։ Այդ գծի քաղաքատիպ վայրերում մենք տեսնում ենք կրպակների, իջևանների գոյությունը։ Կրպակներ են ունեցել ոչ միայն առևտրականներն, այլ նաև իշխաններն ու եկեղեցին։ Գրիգոր Սուփան իշխանը Մաքենացոց վանքին նվիրում է 5 կրպակ Անի քաղաքում։ Այս փաստը խոսում է նաև այն մասին, որ թե իշխանները, և թե եկեղեցին կրպակներ են ունեցել ոչ միայն իրենց քաղաքներում ու քաղաքատիպ առևտրական կայաններում, այլև Անիում։ Այդ խոսում է նաև այն մասին, որ հատկապես 10-րդ դարում Գեղաքունիքը տնտեսապես ավելի սերտ կապ ուներ Բագրատունյաց կենտրոնի հետ, քան Սյունիքի կենտրոն Վայոց Ձորի և այլ դավառների հետ։ Դրան նպաստում էր ոչ միայն Գեղաքունիքի մոտիկ լինելը Հայաստանի առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոններին՝ Դվինին ու Անիին, այլև առևտրական առավել նպաստավոր Եղենովկա — Կոթ ճանապար-

հը[1]։ Այս հանգամանքն անշուշտ խոշոր կերպով մերձեցնում էր Գեղարքունիքը Հայաստանի կենտրոնական նահանգների հետ։

Տնտեսական այս վերելքը երկրի իշխաններին զցում է ցոփ ու շվայտ կյանքի մեջ։ Ս. Օրբելյանը Սյունյաց իշխանների կանանց անվանում է «փափուկ արքայազուն», որոնք թավալվում էին «փափուկ հեշտոցների» և «ոսկեթել գահոյքների» մեջ[2]։ Մետաքսն իշխանների և իշխանուհիների համար հայրենի հագուստ էր—«զգեցուցին զհայրենի հանդերձն յարքունական մետաքսից»[3]։ «Նյութական հարստությունների անընդհատ աճումը,— ասում է Հ. Մանանդյանը,— և դրամական մեծ միջոցների կուտակումը իշխանական տոհմերի, խոշոր առևտրականների և եկեղեցու ձեռին, արտակարգ նպաստավոր պայմաններ ստեղծեցին համատարած շինարարության համար»[4]։ Նույն երևույթը նկատելի է նաև Սյունիքում, ուր ևս 9—10-րդ դարերում ծավալվեց եկեղեցական շենքերի, ջրանցքների, հավանաբար նաև քաղաքացիական շենքերի (պալատներ, բերդեր և այլն) շինարարություն։ Տնտեսության վերելքի տեսակետից խիստ ուշագրավ են 10-րդ դարի ընթացքում ջրանցքների կառուցման, ոռոգման ցանցի լայնացման, նոր անմշակ հողերի յուրացման փաստերը։

---

[1] Մ. Սմբատյանցը գրում է. «Ըստ բնական դրից և մերձաւորութեանն Գեղարքունի գաւառը աւելի հաւանական է Արարատեան նահանգի մասն հաշուել, քան Սիւնեաց. ըստ որում ձիաւորը մի օր Գեղարքունուց Գեղաման լերանց վերայովն անցնելով կհասնի ի յերևան քաղաքը. բայց մինչև Սիւնեաց մայրաքաղաքն Շաղաթ (Բաղարչայ) 3 օր հագիւք հասնի, իսկ մինչև Տաթևու վանքը 4 օր, մինչև Բաղաբերդ Կապանու 5 օր և մինչև Արևիք գաւառի Մեղրի գիւղը, Սիւնեաց հարաւային սահմանածայրը 6 օր. ուրեմն ինչ հարկ կար այնքան մոտիկ նահանգը թողուլ՝ մի հեռու նահանգի հետ միաւորել Գեղարքունին» («Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի»— էջ 424)։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 192։

[3] Նույն տեղում, էջ 242։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 241։

[4] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 13։ «Համատարած շինարարություն» արտահայտությանը մենք մոտենում ենք վերապահումով։

Դրամական հարաբերության զարգացման հետևանքով մենք ականատես ենք Սյունիքում մի հետաքրքիր երևույթի ևս. այդ կապալավարձի գոյությունն է։ Այս մասին մենք ունենք երկու վկայություն.—

ա) Գրիգոր Սուփան 2-րդն իր վերոհիշյալ արձանագրությունում Մաքենացոց վանքին ուրիշ նվերների թվում տալիս է նաև «700 դրամ ի Դեղձանագետոյ ղապալէն, 200 դրամ ի Կաթկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ»[1]։

բ) Շապուհ Բագրատունին Վանեվանի վանքին ուրիշ նվերների թվում տալիս է նաև «260 դրամ ի Կոթաքարէն, 530 ի Բրտենեացն, 660 յԱղաբոյ վանացն ծովէ, 990 ի Կարբին գետերէն և ի նաւերէն»[2]։

Երկրորդ վկայությունում թեև «ղապալէն» (կապալից) չի գրված, բայց արձանագրության ձևից երևում է, որ այդ դրամներն էլ հիշյալ գյուղերի, գետերի և նավերի կապալից են։ Ակադ. Հ. Մանանդյանը մեջ բերելով այս և այլ վկայությունները, որպես ամփոփում գրում է. «10—11-րդ դարերում նույնիսկ գյուղական հարկերը ստացվել էին դրամով»[3]։

«Կապալ» բառը, որ առաջին անգամ հիշվում է վերոհիշյալ առաջին վկայության մեջ, մեր բառարաններում ունի հետևյալ բացատրությունը։ Հ. Աճառյանի Արմատական բառարանում— արաբ. gabala «կապալով առնելու գործողությունը և կապալագիր», որից tagalbul «կառավարության կողմից տուրքի կամ հարկի հաւաքումը կապալով տրուելը»։ Ս. Մալխասյանի Բացատրական բառարանում — «1. պայմանագիր, որով մեկը յանձն է առնում, որոշ վարձատրությամբ, որոշ աշխատանք կատարել։ 2. Պայմանագիր, որով մեկը, որոշ վարձ տալով, իրավունք է ձեռք բերում մի կալուած կամ շինության օգտագործելու վարձակալութիւն»։ Հայկազյան բառարանում— «տուրք՝ որպես կաշառ, և սիմոնականութիւն, վճարք. բաժ. վարձք»։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179։ Տես նաև Դ. Ալիշան, Սիսական, էջ 68։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 182։

[3] Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր քաղաքները 10—11-րդ դարերում, էջեր 36, 37։

Վերոհիշյալ վկայություններում կապալը ամենևին էլ կապալագրի, որևէ պայմանագրի, ինչպես նաև տուրքի ու կաշառքի իմաստ չունի։ Նա չունի նաև գյուղական հարկի իմաստ, ինչպես կարծում է ակադ. Հ. Մանանդյանը։ Այդ երևում է նրանից, որ կապալ է վերցվել ծովից, գետերից և նավերից։ Մենք արդեն գիտենք, որ ծովը, գետերը (ջուրը) իշխանական սեփականություն էր, հետևապես գյուղացին իրեն չպատկանող ծովի ու գետերի համար պարտավոր չէր հարկ տալ։ Մեր կարծիքով, այստեղ կապալն ունի վարձակալության իմաստ։ Դժվար չէ գուշակել, որ իշխաններն իրենց կալվածքները, ծովերը (լճի այն մասը, որի ափին գտնվում էր իշխանի կալվածքը, գյուղը), գետերն ու նավերը տվել են վարձակալության, կապալով օգտագործելու, փոխարենը ստանալով որոշակի գումար։ «Կապալը» վերոհիշյալ վկայությունների մեջ նշանակում է վարձագին։ Բայց ով էր վարձակալողը։ Այս հարցին դժվար է որոշակի պատասխան տալը։ Հող կարող էր վարձակալել, թե «աղատը», և թե գյուղացին, անգամ ճորտ գյուղացին, մանավանդ դրամական հարաբերությունների աշխուժացման պայմաններում։

Գյուղացիների կողմից կալվածատիրոջ հողի վարձակալումը շահագործման նոր աղբյուր էր կալվածատեր իշխանի համար։ «Երբեմն հողի գյուղացիական վարձակալությունն էլ,—ասում է Վ. Ի. Լենինը,—մոտենում է դրամական ռենտային, երբ հողի բարձր վարձագինը գյուղացուն բաժին է թողնում ոչ ավելի, քան խղճուկ աշխատավարձը»[1]։ Լենինի այս բացատրության իմաստն այն է, որ գյուղացու իր վարձակալած հողի դիմաց տված վարձագինը երբեմն այնքան բարձր է լինում, որ գյուղացին ոչ միայն իր հավելյալ արդյունքն է տալիս, այլ նաև անհրաժեշտ արդյունքի մի մասը։ Այդ դեպքում վարձագինը «մոտենում է դրամական ռենտային»։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Սյունիքը 9—10-րդ դարերում հեռու չի մնացել Հայաստանի ընդհանուր տնտեսական վերելքից։ Այստեղ ևս նկատելի է որոշակի հեղաբեկում առևտրի և արհեստագործության զարգացման ուղղությամբ։ Բնական է, որ այսպիսի պայմաններում ֆեոդալ իշխանները և եկեղեցին պետք է ձգտեին իրենց հարկերի ու ռենտայի մի մասը դանձել դրամով։ Հենց այս հանգամանքը մեզ իրավունք է տալիս պնդելու, որ Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակի թվերն արտահայտում են դրամի քանակություն, որ այս շրջանում մթերային ռենտայի մի մասը փոխարինվել էր դրամական ռենտայի. և այդ ձևով գոյություն ուներ իր նախորդ ձևերի հետ միասին կողք-կողքի, ինչպես արդեն նշեցինք վերևում։

Ամփոփելով վերջին երկու ենթաթեմաները, նկատում ենք, որ Սյունիքում 9—10-րդ դարերի ընթացքում ֆեոդալիզմի զարգացումն ու խորացումը զուգորդվել է տնտեսական կյանքի վերելքին, առևտրի զարգացմանը։

Անասելի չափերով մեծացել է աշխատավոր ժողովրդի՝ գյուղացիության և քաղաքային ստորադաս բնակչության շահագործումն ու հարստահարումը մի բուռն հարստահարիչների՝ եկեղեցու, ֆեոդալ իշխանների և առևտրա-վաշխառուական տարրերի կողմից, որոնց ձեռքում գնալով ավելի ու ավելի շատ հարստություններ էին կուտակվում։ Ակադ. Ն. Մարը ցույց տալով 11-րդ դարի առաջին կեսի Հայաստանի աշխատավոր մասսաների ունեզրկված ու աղքատիկ վիճակը նշում է, որ այդ շրջանի ֆեոդալական Հայաստանի կյանքի հիմքը հարստության կուտակումն էր տիրող դասի փոքրաթիվ ներկայացուցիչների ձեռքում[1]։ Գույքային այս խորացող անհավասարությունն ու շահագործման սաստկացումը, բնականորեն, խորացնում ու ակնհայտ էր դարձնում ներքին դասակարգային հակամարտությունը և դուռ բաց անում դասակարգային բացահայտ պայքարի համար։ Եվ իրոք, 10-րդ դարի ընթացքում, Հայաստանում, ընդ որում և Սյունիքում, ուժեղանում և սրվում է դասակարգային պայքարը։

---

[1] Վ. Ի. Լենին, Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, հ. 3, էջ 186 ծանոթ.։

[1] Н. Я. Марр, Ани, Ленинград-Москва, 1934, էջ 29։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 10-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Սյունիքի պատմության մեջ 10-րդ դարը նշանավորվում է դասակարգային սուր պայքարով։ Ամբողջ դարի ընթացքում Սյունյաց գյուղացիությունը համառ պայքար ծավալեց տիրող դասակարգի դեմ։ Այդ պայքարն ունեցավ երեք էտապ։ Առաջին էտապն ընդգրկում է 10-րդ դարի երկրորդ տասնամյակը, երկրորդ էտապը՝ չորրորդ տասնամյակը, երրորդ էտապը՝ վերջին տասնամյակը։

Թեև մեր նպատակն է տալ դասակարգային պայքարը Սյունիքում, բայց այնքանով, որքանով նրա առաջին էտապը զուգորդվում է Բագրատունյաց շրջանի ողջ Հայաստանում ծավալվող գյուղացիական շարժման հետ, մեզ հարկ կլինի հարակից տալ նաև այդ շարժման ընդհանուր պատկերը։ Նման մոտեցումը խիստ անհրաժեշտ է, որովհետև, ինչպես կտեսնենք, Սյունիքում ծավալվող պայքարի առաջին էտապը ոչ թե կրոնական անջատ պայքար էր, այլ այդ ժամանակվա ամբողջ Հայաստանում ծավալվող դասակարգային պայքարի մի անբաժանելի մասը, ընդհանուր շղթայի մի օղակը։

Խոսելով այս շարժումների մասին, անհրաժեշտ է նախ և առաջ դիտել դրանք ծնող պատճառները։ Հիմնական երկու պատճառների հետ մենք արդեն ծանոթացանք նախորդ գլխի վերջին ենթաթեմաներում. դրանք են՝ ճորտացման շարունակվող պրոցեսի սաստկացումը և աշխատավոր մասսաների շահագործման ու հարստահարման սաստկացումը։ Բացի սրան-

ցից, գոյություն ուներ նաև մի երրորդ հանգամանք, որը մի կողմից արագացրեց, մյուս կողմից հնարավոր դարձրեց գյուղացիների ընդվզումը։ Այդ արտաքին արշավանքն էր։

Ինչպես տեսանք վերևում, 909 թվին Հայաստանը ենթարկվեց Ատրպատականի էմիր Յուսուֆի ավերիչ արշավանքին։ Սա դեպի Հայաստան կատարված ամենաավերիչ արշավանքներից մեկն էր։ Դեպքերին մասնակից պատմիչն այն գնահատել է «իբրև զմրրիկ հողմոց շնչեալ ի մեզ մահառիթ Իսմայելեան օդն դառնաշունչ»[1]։ Դա հրո մի ալիք էր, որը յոթ տարիների ընթացքում սահում էր մեր երկրով մեկ և թիկունք ու ճակատ իրար խառնած ամեն տեղ, ամեն ինչ այրում ու մոխիր դարձնում։ «Իբրև զհուր կայծակնահարեալ ընդ ոլորտս երկրիս մերոյ ի վեր բարձրացուցին զրոցն տոչորիչ առ ի ցնդել և ի հնձել և ի մաշել զԱրամեան ազգիս բնակիչս»[2]։ Դա հայ ժողովրդի մղձավանջային այն օրերից էր, երբ անկաշկանդ թագավորում էր սուրը և սովը։ Ավերվում են քաղաքներն ու գյուղերը, դադարում են գյուղատնտեսական աշխատանքները, ոչնչանում են արտադրության միջոցներն ու արտադրողական ուժերը, գահավեժ անկման հասնում ժողովրդի կենսամակարդակը։ «Անմարդացեալ և անզաւակացեալ, խոպանացեալ և անշքեղացեալ այնուհետև ատանք և շէնք մեր եղեն իբրև զանդաստան մացառախիտ. և ցամաքեցան բողբոջք բուսոց արտավարաց և արօտից. և քաղաքք մեր կործանեցան, առ ի չգոյէ բնակչաց, և երկրագործք մեր սպառեցան և սուգ զգեցան»[3]։ «Սերմանեցաք և ոչ հնձեցաք. տնկեցաք և ոչ կթեցաք։ Թզենի ոչ ետ զպտուղ իւր. որթ և ձիթենի ոչ ետուն զզօրութիւնս իւրեանց. թէ շտեմարանեցաք ինչ, և զայն ևս այլոց թողաք»[4]։ «Մեք վաստակեցաք, և այլք ի վաստակս մեր մտին», ասում է պատմիչը։ Այս ավերածությունները լինում են հավասարապես նաև Սյունիքում, ուր Յուսուֆը մտավ հենց սկզբից[5]։

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 220։
2 Նույն տեղում, էջ 231, տես նաև էջ 232։
3 Նույն տեղում, էջ 257։
4 Նույն տեղում, էջ 260։
5 Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 186, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 214։

Հասկանալի է, որ այս բոլորից ամենից շատ տուժեց, գոհվեց ու տառապեց հայ աշխատավոր գյուղացիությունն ու քաղաքային չքավոր բնակչությունը, շահագործվող դասակարգը, որը, բացի օտարի սրի այս դառն պտուղները ճաշակելուց, դեռ շարունակում էր կերակրել իր սեփական տիրող դասակարգին[1]։

Աշխատավոր մասսաների գոյավիճակի դահավեժ անկմանը նպաստում էին, այս բոլորի հետ միասին, նաև երկրի իշխանների գժտություններն ու ընդհարումները։ Թերևս հնարավոր լիներ թույլ չտալ արաբական հրոսակներին անպատիժ մոլեգնել Հայոց աշխարհում, եթե ֆեոդալ իշխանները համախմբված իրենց թագավորի շուրջը, միասնական գործողության կանչեին երկրի կենսական ուժերը և կազմակերպեին դիմադրություն։ Բայց հենց այդ էլ պակասում էր։ Ֆեոդալական իշխանները ելնելով իրենց ինքնուրույն, առանձին նեղ շահերից, զուրկ բարոյական և հայրենասիրական զգացմունքներից, անցան թշնամու կողմը՝ տարված թագադիր դառնալու այն պատրանքով, որն առատորեն խոստանում էր Յուսուֆն իր կողմն անցած ամեն մի իշխանի։ Հիշենք Արծրունի եղբայրների սեպարատ դաշնակցությունը Յուսուֆի հետ և իրենց գնդերով նրան աջակցելը, Գրիգոր Սուփան Հ-րդի, թագավորի եղբոր որդի Աշոտի և այլոց կամավոր անցումը Յուսուֆի կողմը, Սյունյաց մյուս երկու իշխանների լքումը և երկրից փախչելը և այլն։

Յուսուֆի և նրա կամակատար հայ իշխանների ահարկու ուժի դիմաց միայնակ մնաց Սմբատ թագավորը, որը հուսահատ, մի քանի փորձերից հետո նույնպես անձնատուր եղավ Յուսուֆին։ Երկրի և ոչ մի աչքի ընկնող իշխան դուրս չեկավ յուր նեղ շահերից։ Տիրող դասակարգի այս բարոյալքվածության մասին անգամ խոստովանում է ժամանակակից կաթողիկոս պատմիչը։ Նա կշտամբանքով գրում է, որ մեր իշխաններն ու թագավորները փոխանակ հասարակ եղբայրությամբ միանալու միմյանց հետ և իբրև մի մարդ սրով թշնամու ճամբարը վանելու, ճիշտ հակառակը կատարեցին[1]։ Իսկ ըստ Ս. Օրբելյանի, Յուսուֆի շարագործությունները «եղև յապստամբութենէ իշխանացն, որք ճեղքեցան ի մի միաբանութենէ սնոտի յուսով, և ածին խաւար մեջ ինքեանց և աշխարհիս Հայոց»[2]։ Ավելին, բարոյալքված «թագակիր» և ոչ թագակիր իշխանները Յուսուֆի սադրանքով Հայաստանը ողողեցին նաև ներքին միջֆեոդալական արյունահեղ կռիվներով (Գագիկ Արծրունու և Սմբատի, ապա Աշոտների կռիվները), որոնց ընթացքում ամենից շատ տուժում էին հայ աշխատավորները։

Հայաստանն անօգնական փռված էր օտար նվաճողի ոտքերի տակ, իսկ հարստահարված ժողովուրդը ենթարկված օտարի բռնություններին ու կեղեքումներին։ Բնական է, որ հայ աշխատավոր ժողովուրդը չէր կարողանալու հանդուրժել այս դրությունը և դիմելու էր զենքի։ Եվ իրոք, նա դիմեց զենքի, այն գործադրելով թե օտարի, և թե իր սեփական կեղեքիչների դեմ։ Ժողովուրդն ինքն իր ձեռքը վերցրեց իր և երկրի բախտը։

Ինչպես տեսնում ենք, օտար այդ արշավանքը մի կողմից իր ավերածություններով արագացրեց ապստամբությունը, իսկ մյուս կողմից՝ թուլացնելով և ջլատելով հայ ազնվականության դիկտատուրան, նպաստավոր պայման ստեղծեց հայ գյուղացուն իր սեփական կեղեքիչների դեմ զենք բարձրացնելու համար։

* *
*

Գյուղացիական շարժման դրոշը, Սյունյաց լեռներում, առաջինը բարձրացրեց Ցուր գյուղը։ Մենք արդեն գիտենք, որ Տաթևի վանքը 906 թ. ստանալով Ցուր, Տամալեկք և այլ գյուղերը, անմիջապես ձեռնամուխ եղավ նրանց բնակչության սեփականազրկման գործին, որը և դառավ այդ գյուղացիների ու

---

[1] Զմոռանանք, որ արշավանքի նախօրյակին և սկզբին հարկերը կրկնապատիկ ծանրացան՝ 908 թ. Սմբատ թագավորը տասից մեկի փոխարեն հարկ դանձեց հնգից մեկը և տվեց Յուսուֆին ու խալիֆին, 909 թ. գարնանը նույն տարվա հարկը հապճեպորեն միանվագ հանձնեց Յուսուֆին։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 257, 258, նաև 234։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 187։

վանքի սոցիալական հակամարտությունների հիմքը և քորոքեց դասակարգային պայքարը, որը մի ամբողջ դար տևեց։

Ուսումնասիրողները, համարյա բոլորը[1], Ցուրի շարժման սկիզբը համարում են 915 թիվը, հիմք ունենալով մի նզովագիր։ Այդ Հովհաննես եպիսկոպոսի նզովագիրն է։ Իսկ Ա. Աբրահամյանն այդ շարժման սկիզբը դնում է 909 թիվը, կապելով այն Յուսուֆի արշավանքի հետ[2]։ Մենք համաձայն չենք թե մեկի, և թե մյուսի հետ։

Հիշյալ նզովագիրը նախ վերաբերում է շարժման պարտությանը, նրա ճնշմանը, և երկրորդ հենց այդ նզովագրից երևում է, որ շարժումը ծագել էր մինչ այդ (915 թ.) և տևել էր բավականաչափ երկար։ Ուստի պետք է ենթադրել, որ այդ շարժումը ծագել էր 915 թվից առաջ։ Ա. Աբրահամյանի հետ համաձայն չենք այն բանում, որ նա Ցուրի շարժումը կապում է Յուսուֆի արշավանքի հետ։ Մենք արդեն նշեցինք, որ Յուսուֆի Սյունիք կատարած արշավանքի սկզբում Սյունիքի բնակչությունը, իշխանները կազմակերպեցին դիմադրություն՝ փակելով իրենց կիրճերն ու լեռնանցքները թշնամու առաջ։ Ենթադրել, որ այդ միասնական պաշտպանության պահին ծագել է դյուղացիական շարժում վանքի և ֆեոդալ իշխանների դեմ, հավանական չէ։ Մեր կարծիքով, շարժումը սկսվել է ավելի ուշ, հավանաբար 913—914 թվերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Սյունիքի տպիկար, բարոյալքված իշխանները, երկիրը և ժողովուրդն անպաշտպան թողնելով, հեռացել էին Սյունիքից կամ անձնատուր եղել թշնամուն և կամ քաշվել իրենց անմատչելի ամրոցները։

Ս. Օրբելյանը հատուկ մի գլուխ է նվիրել Ցուրի ապստամբությանը «Վասն Ցուրայ բերդին աւերելոյն. եւ նզովիցն որ այլ ոչ շինի» խորագրով[3], որը, ցավոք սրտի, ոչ թե ապստամբության ընթացքի պատմությունն է, այլ նրա ճնշման և Ցուրի ավերման պատմությունը։ Այդ գլխում Ս. Օրբելյանը ոչ միայն

---

1 Գ. Ալիշան, Ի. Զավախիշվիլի և ուրիշներ։

2 А. Абраамян, Крестьянское движение в Сисакане в X веке (տես „Исторические записки“, Москва, 1938, № 5, էջ 64)։

3 Ս. Աբրահամյանը սխալմամբ «Խէ» էջերում (տես նույն տեղում)։

ինքն է պատմում, այլ մեջ է բերում իր աղբյուրը՝ 915 թվին գրված Հովհաննես եպիսկոպոսի նզովագիրը։ Վերջինիս մեջ մենք կարդում ենք. «Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գրեցի զայս վճիռ իմով ձեռամբս հրամանաւ աստուածազօր իշխանին Սիւնեաց Սմբատայ. զի եհաս մեզ վտանգ տաղնապի ի չար և յանաստուած ելուզակացն որ բնակեալ էին ի Ցուրայ բերդ անուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ի ծերոցն»[1]։ Իսկ ինքը, Ս. Օրբելյանը գրում է, որ Հովհաննեսի եպիսկոպոսության և Սմբատի գահերեցության ժամանակ «բազում և մեծամեծ վիշտս հասուցանէին սուրբ ուխտին Տաթևոյ բնակիչք Ցուրայ բերդին, որք էին անաստուածք, ժպիրհք և ելուզակք։ Եւ յաւուր միում եկեալ ի գիշերի յեղակարծ ժամու, սկսան կողոպտել զեկեղեցին և զգործատներն և զյարկսն կրօնաւորաց. և խնդրէին զեպիսկոպոսն զի սպանցեն, և ոչ գտին. ապա զոմանս ի ծերոցն սրով հարին և զայլսն փախստական արարին. զոր ինչ գտին ինքեանք՝ առեալ գնացին ի բերդն (Ցուրայ). տարան և արծաթի սափորով զմեռոնն և վայթեցին ընդ քարն»[2]։

Այս վկայությունները հիմնականում նույնն են, որոշ մանրամասնություններ ունի Օրբելյանը, որը, հավանաբար, բացի Հովհաննեսի նզովագրից, օգտագործել է նաև այլ աղբյուր։ Արժեքավոր այս վկայությունները բացահայտում են Ցուրի գյուղացիների ապստամբության ամբողջ պատկերը։ Եթե կենտրոնական գավառներում ծավալվող ապստամբությունների գործելակերպն աղոտ պատկերներով է տրված մեզ և մենք ավելի շուտ հետևցնում ենք պատմիչի կցկտուր արտահայտություններից, ապա այստեղ ապստամբ գյուղացիների գործելակերպը տրված է որոշակի կերպով։ Նրանք խմբովին գիշերը հարձակվում են վանքի վրա, սպանում են հոգևորականներին, մի մասին փախուստի մատնում, որոնում են եպիսկոպոսին՝ սպանելու համար, որը հավանաբար պատահականորեն այդ գիշեր

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 248։

2 Նույն տեղում, էջ 247։

վանքում չէր։ Ապստամբ գյուղացիները խլում են վանքի հարստությունները, ավերում են գործատները ու ետ իրենց կենտրոնավայրը դառնում։ Ինչպես տեսնում ենք, սա նախորոք մտադրված զինված ելույթ է, զինված ելույթ, որով սովորաբար միջնադարյան գյուղացին, ցասման պահին, իր հաշիվն էր տեսնում իրեն հարստահարող ազնվականության հետ։ Նման հաշվեհարդարի դեպքեր սակավ չեն այլ ժողովուրդների պատմության մեջ։ Եկեղեցու կողոպտումը, գործատների ավերումը, գործատներ, որոնց մեջ, հավանաբար, նրանք հաճախ կատարում էին հարկադրական աշխատանք, խոսում է այն մասին, որ գյուղացիների ցասումն ուղղված էր կոռային աշխատանքի, շահագործման ու ճորտացման դեմ։ Նրանք, հանձինս Տաթևի վանքի սեպագրերի, տեսնում էին իրենց կեղեքողներին ու հարստահարիչներին, ուստի առանց ափսոսանքի սրի ճարակի մատնում նրանց։

Որոշ չափով կազմակերպված այս ելույթը, անշուշտ, միայն Ցուրի գործը չէր։ Ապստամբությանը մասնակցում էին նաև ուրիշ գյուղեր։ Այդ ոչ միայն տրամաբանական է, քանի որ նման շահագործման ու ճորտացման էին ենթարկվում վանքին պատկանող նաև մյուս գյուղերը, այլ փաստացի իրողություն։ Մենք ստորև կտեսնենք, որ Տամալեկք ու Բերդ գյուղերը բազմաթիվ նեղություններ են պատճառել վանքին դեռ Հովհաննես եպիսկոպոսի (890—918) ժամանակ, այսինքն՝ դեռ Ցուրի այս ապստամբության ժամանակ։

Ուշագրավ է նաև Ս. Օրբելյանի այն վկայությունը, որ ապստամբ գյուղացիներն իրենց հետ տանում են արծաթյա սափորով մեռոնը և խփելով քարին, ջարդում ու գետին թափում մեռոնը։ Ի. Ջավախիշվիլին գտնում է, որ այդ «սրբապղծությունը» չի կատարվել Ցուրի ապստամբների կողմից, որ դա «հետագայում հյուսված բանավոր ավանդություն է հարձակվող գյուղացիների կատարյալ անաստվածությունն ու ավազակությունը հաստատելու նպատակով[1]։ Այս մտքի հետ հաշտվել չենք կարող։ Իրավացի են պրոֆ. Ա. Աբրահամյանը

[1] Ի. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանում սոցիալական շարժումների պատմության համար, էջ 15։

և այլ ուսումնասիրողներ, որոնք ընդունում են այդ փաստի իսկությունը։ Բայց չենք կարող համաձայնվել նաև Ա. Աբրահամյանի այդ փաստին տված բացատրության հետ։ Նա գտնում է, որ այդ փաստը խոսում է այն մասին, թե ապստամբ գյուղացիները կապված էին Հայաստանի մյուս մասերում ելույթ ունեցող հերետիկոս գյուղացիների հետ և բացի այդ, Սյունիքում գտնվող նեստորական ու քաղկեդոնական հերետիկոսների հետ[1]։ Թե ում նկատի ունի Ա. Աբրահամյանը Հայաստանի մյուս մասերում ելույթ ունեցող «հերետիկոս գյուղացիներ» ասելով, մենք չգիտենք։ Եթե նկատի ունի թոնդրակեցիներին, ապա պետք է նրանց ուղղակի իրենց անունով կոչել։ Առավել սխալ է վերոհիշյալ դեպքի հիման վրա Սյունիքի ապստամբներին նեստորականների և քաղքեդոնականների հետ կապելը։ Որ իրոք Սյունիքում եղել են նեստորականներ և քաղքեդոնականներ, անառարկելի է։ Սակայն մի՞թե 10-րդ դարում նեստորականներն ու քաղքեդոնականները սոցիալական պայքարի տեսակետից որևէ գնահատելի դաղափար տալիս էին աշխատավոր մասսաներին։ Մի՞թե նեստորականներն ու քաղքեդոնականները ընդհանրապես ժխնեստորականներն ու քաղքեդոնականները ընդհանրապես ժխտել են եկեղեցու դոգմաները, որի ազդեցության տակ էլ Ցուրի ապստամբները մեռոնը գետին են թափել։ Մի՞թե քաղքեդոնականի հայացքով մեռոնը «սուրբ» հեղուկ չէ և այն չի գործածվում քաղքեդոնական եկեղեցում։

Մեր կարծիքով Ցուրի ապստամբների այդ քայլը կապ ունի թոնդրակեցիների դաղափարների հետ։ Թոնդրակեցիներն էին, որ խստագույնս քննադատության էին ենթարկում եկեղեցու

[1] „Это говорит не только о ненависти, питаемой крестьянами к монастырью, но и о том, что они безусловно были связаны с восставшими крестьянами—„еретиками", выступающими в других частях Армении. О том же говорит существование еретиков (несторианцев и халкедонидов) в Сисаканской области еше в VII-веке", և էլի „Приведенное у Орбеляна выражение „безбожные разбойники" в отношении напавших на монастырь цурабердцев является доказательством того, что последние действительно были связаны с еретиками" (տես А. Абраамян, Крестьянское движение в Сисакане в X веке, էջեր 65, 66)։

դոգմաները, ծեսերը (ընդ որում և կնունքը) ու ժխտում դրանք։ Թոնդրակյան շարժումը սոցիալական և դեմոկրատական շարժում էր։ Նրանց «գաղափարախոսությունը,— ինչպես ճիշտ գնահատել է ակադ. Հ. Մանանդյանը,— հիմնականում մի սուր բողոք էր ոչ միայն հղփացած ու այլասերված տիրող եկեղեցու դեմ, այլ նաև հայկական ֆեոդալիզմի և իշխող դասերի հարստահարությունների և ճնշման դեմ»[1]։ Անտարակուսելի է, որ Սյունիքի ապստամբ գյուղացիները գտնվել են Թոնդրակեցիների և ոչ թե նեստորականների ու քաղքեդոնականների գաղափարների ազդեցության տակ։

Ճիշտ չէ նաև Ա. Աբրահամյանի այն հարցադրումը, որ ապստամբներին «անաստված», «ելուզակ» անվանումը նրանց հերետիկոսների (նեստորականների ու քաղքեդոնականների) հետ կապ ունենալու արդյունք է։ Միթե՞ Թոնդրակեցիներին, ինչպես նաև նրանց հետևողներին, մեր աղբյուրները «անաստված» ու «ելուզակ» և դեռ ավելին չեն անվանում։ Միթե՞ բոլոր ժողովուրդների պատմության մեջ տիրող դասակարգի ներկայացուցիչները սոցիալական շարժման ելած գյուղացիներին չեն անվանում նման պիտակներով։ Եվ վերջապես, միթե՞ վանքի վրա հարձակվելը, այն ավերելը, հոգևորականներին սպանելը և այլն պակաս «սրբապղծություններ» չէին Հովհաննես եպիսկոպոսի և եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի տեսանկյունով, որպեսզի դրա հիման վրա նրանք ապստամբներին «անաստված» և «ելուզակ» չանվանեին։

Սյունիքի գյուղացիների ապստամբությունը գիշերային այդ արշավանքով չի վերջանում։ Շատ հետագայում Ցուրի այս դեպքերի մասին գրող մի վարդապետ իր պատմության մեջ գրում է.- «Զայս (այսինքն՝ հարձակում վանքի վրա — Հ. Ուր.) եղեսն երկիցս անգամ կրկնեալ։ Ի վերջ բանիս սրբակենցաղ միաբանքն և եպիսկոպոսքն հսկեալ և ուժնեալ են զքանի ինչ գիշերս»[2]։ Առաջին հարձակումից հետո այն կրկնվել է։ Հոգևորականները և եպիսկոպոսը մի քանի գիշեր մնացել են անքուն ու սարսափահար։ Ինքն Հովհաննես եպիսկոպոսն իր նեղվագրի շարունակության մեջ գրում է. «Իսկ մեք կոպոսն իր նեղվագրի շարունակության մեջ գրում է. «Իսկ մեք տեսեալ զայնպիսի աղէտս՝ առեալ զսուրբ խաչն հալածական եղաք յայլ աշխարհ»[1]։ Իսկ Ս. Օրբելյանը դեպքերի շարունակությունը պատմում է հետևյալ կերպ։ Առավոտյան եպիսկոպոսը գալիս է և տեսնում կատարվածը, վերցնում է խաչը և անիծում բերդն (Ցուրը) ու նրա բնակիչներին, որի հետևանքով երկրաշարժ է լինում և քարը (Ցուրա բերդը) ճեղքվում է, փլվում են բոլոր շինությունները, բնակչության մեծ մասը անհետ կորչում է փլատակների տակ, որից հետո եպիսկոպոսը «ոչ իշխեաց բնակիլ ի տեղւոջն. այլ առեալ զխաչն և ամենայն պաշտօնէիքն ել և գնաց յօտար աշխարհ»[2]։ Մի կողմ թողնելով Ս. Օրբելյանի ավանդությունը՝ երկրաշարժի, քարի ճեղքման մասին և այլն, երևում է, որ ապստամբները չեն սահմանափակվել իրենց առաջին հարձակումով։ Մի քանի օր շարունակ, հատկապես գիշերները, կատարել են նորանոր հարձակումներ վանքի վրա։ Ոչ թե մեկ, այլ շատ անգամներ են «բազում նեղութիւնս» պատճառել «սուրբ ուխտին»։ Գործը հասել է այնտեղ, որ թե եպիսկոպոսը, և թե հինգհարյուր հոգուց բաղկացած վանքի անձնակազմը թողել են վանքը և հեռացել օտար աշխարհ, նրանք այլևս չեն համարձակվել ապրել վանքում («ոչ իշխեաց բնակիլ ի տեղւոջն»)։ Փաստորեն ապստամբների կողմից վտարվել են վանքից («հալածական եղաք յայլ աշխարհ»)։ Ապստամբները, բացի սուրբ Նշան վանքից, ավերել են նաև մյուս եկեղեցիները։

---

1 Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 44։

2 Այս խոսքերը Գոչո վանքի միաբան Առաքել վարդապետինն են։ Այս վարդապետը, իր իսկ հավաստիացումով, գրել է Աղվանից երկրի մուշ շրջանի պատմությունը։ Այդ պատմությունը գտնվում է ՀՍՍՌ Մատենադարանում, ձեռագիր № 7822։ 44-րդ էջից սկսվում է մի գլուխ, որը նվիրված է Սյունիքի Ցուր և Դիզակ գավառի հետագա շրջանի Ցոր գյուղի մասին։ Ցուրին վերաբերող մասը, որից վերցրել ենք վերոհիշյալ կտորը, գտնվում է էջ 44—45-ում։ Առաքել վարդապետը առաջաբանում հավաստիացնում է, որ ինքն իր պատմությունը գրել է հին աղբյուրների հիման վրա։ Հենց այս պարագան մեզ հիմք է տալիս օգտագործելու նրա պատմությունը։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 248։

2. Նույն տեղում, էջ 247։

Այս բոլորը ակնհայտորեն խոսում են ապստամբ գյուղացիների հաղթանակի մասին։ Նրանց հաջողվել է զենքի ուժով ճզմել ու ցրիվ տալ պարագիտների այդ որջը, որը տարիներ շարունակ ծծել էր աշխատավոր ժողովրդի արյունը։ Իր իսկ՝ եպիսկոպոսի խոստովանությամբ, ապստամբները կապանք («հանդույց») էին դրել վանքի եկեղեցիների և իրենց հոգևորականների վրա։ Ավելին. Ցուրի գյուղացիներին հաջողվել է ետ խլել վանքից իրենց հողերը («հայրենիքները»), անգամ համայնքը։ Հովհաննես եպիսկոպոսն իր նզովագրի վերջում ասում է, որ Սմբատ գահերեցը հալածելով ապստամբներին, կրկին «աւանդեաց ի ձեռս մեր զտեղին», իսկ Ս. Օրբելյանը գրում է «և զտեղին իւր սահմանովն ետ ի սեպհական ժառանգութիւն եկեղեցւոյն»[1]։ Դա ապստամբ գյուղացիների ժամանակավոր հաղթանակն էր կալվածատեր եկեղեցու և իրենց ճորտացնող «հոգևոր հոր» նկատմամբ։ Սա մի բացառիկ երևույթ էր, որ նախադեպը չուներ ֆեոդալական Հայաստանի դասակարգային պայքարի պատմության մեջ։

Թե ինչ միջոցառումներ ձեռք առան ապստամբ գյուղացիներն իրենց ժամանակավոր հաղթանակից հետո, անհայտ է։ Թե Հովհաննես եպիսկոպոսը, թե Ս. Օրբելյանը ավելորդ են համարել այդ մասին որևէ բան հաղորդելը։

Նզովագրի հեղինակի ոչ այնքան պարզ մի ակնարկից երևում է, որ ապստամբ գյուղացիները գործել են նաև աշխարհիկ իշխանների դեմ։ Խոսելով Սմբատ գահերեց իշխանի ձեռքով Ցուրի ավերման մասին, Ս. Օրբելյանն ասում է, որ Սմբատն այդպես է վարվել, որովհետև նրա համոզմունքով Ցուրը «չէ ումեք շահ ինչ և ոչ նեղէ զոք՝ ոչ ի Բաղացեաց, և ոչ յայլ կողմանց բայց միայն՝ զսուրբ եկեղեցիս և զիւր իշխանութիւնս (այսինքն՝ Սմբատի — Հ. Ուր.) տագնապաւ վրշտացուցանէ, զորս իւր և իւր հարանցն բազմատատ և անչափելի ծախիւք և աշխատութեամբ պայծառահրաշ վայելչացուցեալ էին և ցանկալի յօրինեալ»[2]։ Եթե այդպես է, ապա ապրստամբների գործողության շառավիղը, համաձայն այս վկայության, ձգվում էր նաև Սմբատի իշխանության տերիտորիայում, նրա դեմ։ Այս տեսակետից ուշադրավ է Ս. Օրբելյանի մի այլ վկայությունը։ Նա վկայում է, որ երբ Սմբատ գահերեցն ու իր եղբայրները փախուստից վերադարձան Սյունիք, տեսան, որ իրենց «արքունական ապարանքները» քանդված են, ցորենի ամբարները դատարկված և «խորտակեալ զգուբս գինւոյ»[1]։ Մեր կարծիքով, այս գործում, բացի Յուսուֆի հրոսակներից, մասն ունեն նաև ապստամբ գյուղացիները։

Եթե ընդունելի է մեր այս դիտողությունը, ապա ուրեմն, վանքի դեմ տարած իրենց հաղթանակից հետո ապստամբ գյուղացիները հաշվեհարդար են տեսել նաև աշխարհիկ իշխանների հետ՝ ավերելով նրանց դղյակները, ունեցվածքը, դատարկելով նրանց ամբարները ու գինու կարասները։ Բնական է, որ այդ գործում նրանց օգնել են նաև իշխանական կալվածքների գյուղացիները, որոնք հավանաբար հարած պիտի լինեին վանքապատկան գյուղացիների շարժմանը։ Այսպիսով, մեր առաջ ներկայանում է ոչ թե միայն Ցուր գյուղի բնակիչների շարժումը, այլ ավելի ծավալուն գյուղացիական մի շարժում։

Շարժման պարտությունը.— 915 թվին Սյունիք են վերադառնում երկրից փախած իշխանները, ընդ որում նաև Սմբատ գահերեց իշխանը, որը կտրուկ միջոցների է դիմում շարժումը ճնշելու համար։ Նզովագրի երկրորդ մասում կարդում ենք. «Ապա ազդ եղեալ աստուածապահ տեառն Սմբատայ, և եկեալ դարձոյց զմեզ այսրէն (այսինքն՝ օտարությունից — Հ. Ուր.) և ըստ քաջ սրտին և մեծայոյս հաւատոյն, իբրև զառիւծ մրրմրռեալ ի վերայ չարացն՝ ցան և ցիր կացոյց զամենեսեան... և զերծուցեալ հանգոյց զսուրբ նշանս և զեկեղեցիքս և զմեզ. և ահան յանդորր ի զառն նեղութենէ. և աւանդեաց ի ձեռս մեր զտեղին»[2]։ Նույնի մասին Ս. Օրբելյանի մոտ կարդում ենք. «Ազդ լինի ապա այս փառաւորեալ իշխանին Սմբատայ, և յարուցեալ այլովք ազատօքն գնաց զկնի եպիսկոպոսին և

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 248, նաև էջ 249։

[2] Նույն տեղում, էջ 249։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 193։

[2] Նույն տեղում, էջ 248, 249։

սուրբ խաչին. և բազում թախանձանօք էած անդրէն ի տեղի իւր՝ ի մեծ հայրապետարանն Տաթև. և հալածական արարեալ զանիծեալ բնակիչս Յուրայ քարին, զոմանս ի մեծամեծ պատիժս և պատուհասս արկանէր, և առ հասարակ ջնջեալ հեռացոյց յաշխարհէս. և զտեղին իւր սահմանովն ետ ի սեպհական ժառանգութիւն եկեղեցւոյն»[1]։

Հիշյալ վկայությունները ցույց են տալիս, որ փախուստից վերադառնալուց հետո Սմբատ իշխանի առաջին հոգսը եղել է վերադարձնել ապստամբներից հալածված և օտար աշխարհ փախած եպիսկոպոսին, վերականգնել ավերված Տաթևի վանքը ու նրա ռամիկի կողմից ոտնահարված դիրքն ու հեղինակությունը։ Նա ազատների և այլոց ուղեկցությամբ գնում է եպիսկոպոսի գտնված վայրը, թախանձագին խնդրում է նրան վերադառնալ, հավանաբար, խոստանալով վերացնել սպառնացող վտանգը, ճնշել ապստամբությունը, ապահով և անդորր կյանք ստեղծել վանքի ու եպիսկոպոսի համար, նրանց ազատել ապստամբների պատճառած «դառն նեղութենէ»։

Եվ իրոք, օտար նվաճողի, Յուսուֆի առջևից երկչոտաբար փախչող Սմբատը, այժմ առյուծանում է ապստամբ գյուղացիների հանդեպ, «կատաղի մռնչյունով», անշուշտ, զորական ուժով հարձակվում ապստամբների վրա։ Նախ ազատում է վանքը և մյուս եկեղեցիները, որոնք հավանաբար, ապստամբների ժամանակավոր հաջողությունից հետո գտնվում էին նրանց վերահսկողության ներքո, և ապա հարձակվում է «Յուրա քարի» վրա։ Դաժան միջոցներով, «մեծամեծ պատիժներով» և «պատահարներով», բնաջնջումներով հալածում է և ցիրուցան անում ապստամբներին և Յուրը կրկին իբրև «սեպհական ժառանգութիւն» հանձնում վանքին։ Վանքը, եկեղեցիները, ինչպես և եպիսկոպոսին ու հոգևոր եղբայրներին ազատում է ապստամբ ցուրեցիների կապանքներից. «զերծուցեալ հանգոյց զսուրբ Նշանս և զեկեղեցիքս և զմեզ»— բացականչում է ուրախացած եպիսկոպոսն իր նզովագրի վերջում։ Այս բոլորից հետո ապստամբության դահիճը, Սմբատ իշխանը, հրամայում է Հովհաննես եպիսկոպոսին՝ գրել մի նզովագիր,

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 248։

կնքել ու դնել վանքում, որպես սպառնալիք գալիք սերունդներին, որպեսզի նրանք չհանդգնեն «զնոյն ոճիրս գործել»։ Նզովագրի վերջում կարդում ենք. «Արդ՝ եթէ ոք հրամանիս մերոյ հակառակի. և առնու զՅուր ի սուրբ եկեղեցւոյս. և կամ կամի զսուտ քարդ բերդ անուանել և շինութիւն խորհիլ, և կրկին հալածումն յուրացնել սուրբ եկեղեցւոյս, այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ ամենակալէ և յամենայն սրբոց և ի մէնջ»։ «Եղև այս ի թուականիս Հայոց 364 (=915 թ.)»[1]։

Այսպիսով, աշխարհիկ իշխանների ընդհանուր ջանքերով, Սմբատ գահերեց իշխանի անմիջական ղեկավարությամբ, ճնշվում է 10-րդ դարի 2-րդ տասնամյակում Տաթևի վանքի և աշխարհիկ իշխանների դեմ բարձրացած գյուղացիական ապստամբությունը։ Այն ճնշվեց 915 թվին։

Սյունիքի այս գյուղացիական շարժումը եզակի դեպք չէր։ Վերը մեր թված պատճառներն ընդհանուր էին, որոնք կարող էին գյուղացիական շարժումներ առաջացնել նաև ուրիշ նահանգներում ու գավառներում։ Ակադ. Ն. Մառն իրավացի կերպով նշում է, որ եթե հայ աշխատավոր բնակչության նյութական ճնշվածությունը Սյունիքում վերածվեց գյուղացիական շարժման և ֆեոդալ եպիսկոպոսի դեմ մղվող արյունահեղ պայքարի, ապա այդ չի խոսում տվյալ մարզի (Սյունիքի) յուրահատուկ պայմանների մասին, նրա ինչ-որ առանձնահատկության մասին։ Նույնը կարող էր տեղի ունենալ նաև Հայաստանի մյուս մարզերում։ «Ֆեոդալական հին Հայաստանի բոլոր մարզերի հայ գյուղացիությունը,— շարունակում է Մառը,— կարող էր առանց չափազանցելու կրկնել... «մենք աշխատում ենք և մենք էլ սոված ենք»։ Իսկ իշխանները՝ աշխարհիկ թե հոգևորական, բարօրության շնորհակալություն էին ուղարկում առ երկինք և աղոթում էին Քրիստոս-Աստծուն՝ պահպանել քրիստոնեական Հայաստանի նման ծաղկումը»[2]։

Սյունիքի գյուղացիական շարժման ճնշումից մոտ մի տարի

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 249, 250։

[2] Н. Я. Марр, Ани, էջ 29։

առաջ ժողովրդական ապստամբություններ բռնկվեցին Հայաստանի կենտրոնական գավառներում։ Այդ շարժման ժամանակը սովորաբար դնում են 914—918 թվերի արանքում։ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու նկարագրությունից, իրոք, երևում է, որ այդ սկսվել է Սմբատ Բագրատունի թագավորի նահատակությունից (914 թ.) հետո։ Այս շարժումների մասին մենք ունենք Դրասխանակերտցու կցկտուր մի քանի ասույթները։

Խոսելով մեր հարևանների՝ հույների, եկեղեցիների, դուզարացիների, ուղիների և հյուսիսային ցեղերի Հայաստան կատարած արշավանքի (թիվը չի նշում) մասին, նա ավելացնում է՝ «և ապա խառն ընդ նոսին ևս աւազակք[1] և սրիկայք ելին ի մարտս ընդ երկրի մերում. և բազում ինչ այն էր՝ որ ի նմամարտի են ելնում «աւազակք» և «սրիկայք», որոնք «եղծում», և ի խոպանումն և յապականումն վարակեալ»[2]։ Ուրեմն հարևանների և հյուսիսային ցեղերի՝ Հայաստան կատարած արշավանքի ժամանակ, նրանց հետ միասին մեր երկրի դեմ մարտի են ելնում «աւազակք» և «սրիկայք» որոնք «եղծում», «խոպանում» և «ապականում» են ասուռածաշեն եկեղեցիները։ Ուսումնասիրողներից ոմանք այդ «աւազակք»-ի և «սրիկայք»-ի տակ հասկանում են թոնդրակեցիներին։ Մենք չենք պաշտպանում այդ կարծիքը։

Այդ վկայությունից հետո Հ. Դրասխանակերտցին շարունակում է հետևյալ կերպ. մեր երկիրը վերածվեց անապատի՝ անջրդի ու խոպան, արյան հեղեղ էր հոսում, երկրի երեսը ծածկվեց դիակներով, հարձակվողներից յուրաքանչյուրը ավար է վերցնում ու տանում իր երկիրը. անմարդացավ և անդամակացավ մեր երկիրը, շեն ավանները դառան մացառախիտ անդաստաններ, քաղաքները կործանվեցին, երկիրն ավերակ, քաղաքները հրձիգ, օտարները մեր աչքի առաջ ուտում են մեր երկիրը։ Երբ այսպիսի տագնապներ էինք կրում օտարներից, մենք ակնկառույց էինք մեր թագավորներից, իշխաններից, այլ նաև պետերից և նախարարներից։ Հույսով սպասում էինք, որ սրանք ջանք կգործադրեն, կմիանան միմյանց հետ և միացյալ ուժով կխփեն թշնամու ճամբարներին. բայց այդ չհաջողվեց տեսնել մեզ, այլ ճիշտ դրա հակառակը կրեցինք մենք, «Վասնզի նուազունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեարս տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուսցեն և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաթուր հարողս՝ խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ։ Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք, զորս ի բնէ նախարարութիւնքն էին՝ ջանային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասալարս»[1]։

Եթե Հ. Դրասխանակերտցու տասծները մեր խոսքերով ամփոփենք, կստացվի հետևյալ պատկերը։ Սմբատ 1-ին թագավորի նահատակությունից հետո Հայաստան են արշավում հարևան ժողովուրդները և հյուսիսային ցեղերը (չմոռանանք, որ Յուսուֆն իր հերթին շարունակում էր ասպատակումը)։ Նրանց հետ նաև մարտի են ելնում «աւազակք» և «սրիկայք»։ Ավերվում է երկիրը, կողոպտվում է ժողովուրդը։ Կաթողիկոսն սպասում է, որ օտար թշնամիների դեմ կմիանան մեր երկրի թագավորները, իշխանները, պետերը, մի խոսքով՝ տիրող դասակարգը, բայց այդ տեղի չի ունենում, նրանց փոխարեն ձեռներեց են լինում «նուազունք», այսինքն՝ նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում ժողովուրդը և ապստամբում։ Մեր ըմբռնումով վերևի «սրիկայք» և «աւազակք»-ները հենց ներքևի «նուազունք»-ներն են, որոնք երկրի այդ ճակատագրական պահին, տերերի ապիկարության ու բարոյալքվածության պայմաններում, ձեռներեցություն են ցուցաբերում և երկրի ու իրենց բախտը վերցնում իրենց ձեռքը։ Մենք չենք ժխտում թոնդրակեցիների գաղափարների ազդեցությունն այս շարժման վրա (այդ մասին խոսք կլինի ստորև), մեր պնդումն այն է միայն, որ այս շարժումը թոնդրակյան չէր։

---

[1] Մի այլ օրինակում՝ «ռամիկք»։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 256, 257։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 258—259։

Ինչպես տեսնում ենք, շարժման հիմնական շարժիչ ուժը «նուազումք»-ներն են, այսինքն՝ ինքը ժողովուրդը։ Իսկ որովհետև, ինչպես կտեսնենք, շարժումը տարածված էր գյուղում ու քաղաքում, ուստի նրա շարժիչ ուժը և՛ քաղաքի «նուազումք»-ն է և՛ գյուղի «նուազումք»-ը, այլ կերպ ասած՝ շահագործվող գյուղացիությունը և քաղաքային դասը։ Պայքարի սլաքն ուղղված էր տիրող դասակարգի՝ ֆեոդալ ազնվականների և ֆեոդալ եկեղեցու դեմ, այդ պատճառով էլ կաթողիկոս պատմիչն ապստամբներին անվանել է «ասաղակք» և «սրիկայք»։

Հ. Դրասխանակերտցու վերոհիշյալ վկայություններից երևում է, որ «նուազումք» և «ծառայք» խրոխտանալով իրենց տերերի դեմ, նրանց ցած են բերում ձիերից, տրեխներ հագցրնում և ստիպում ոտքով քայլել, իսկ իրենք նստում են նրանց ամեհի նժույգների վրա։ Նրանք խրոխտանում են, փքվում մեծ ապստամբությամբ։ Ավելին. նրանք հարձակվում են իշխանների, պետերի բնակավայրերի վրա, դուրս քշում տերերին, հալածում և չեն ճանաչում նրանց իշխանությունը, ղեկավարությունը և իրենք իրենց հայեցողությամբ, հավանաբար իրենց շարքերից, նշանակում են նոր «պայազատս» (կառավարողներ) և «սպասալարս» (զորավարներ)։ Դառնացած կաթողիկոս պատմիչը շարունակում է՝ «եղբայր ընդ եղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ ի նախանձ և ի չարակնութիւն և զրգռութիւն և ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին։ Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք՝ հակառակութիւն և ի կռիվ պայքարէին. և միշտ սուր յազդեր ունելով՝ բաղում ևս քան զթշնամիսն հեղուին ի միմեանց զարեան ճապաղիս. և առհասարակ զքաղաքս և զգեօղս և զտունս և զաղարակս, այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց»[1]։

Եթե մի կողմ դցենք կաթողիկոս պատմիչի աշխարհայացքային ըմբռնումը[2], կտեսնենք, որ երկու ուժեր հակադիր անդիջում ատելությամբ բախվում են իրար։ Սուրը միշտ ազգերին պահած ապստամբները խփում էին իրենց կեղեքիչներին թե՛ գյուղում, թե՛ քաղաքում։ Ինչպես երևում է, ապստամբները նաև ավերում ու ոչնչացնում էին իրենց տերերի դղյակները, սպանում նրանց՝ «զի ըմբռնեալք ի ձեռոց նոցա («խռովչացն») ի հարուածս անհնարին չարչարանաց տանջեալ լինէին»[1]։ «Եւ այսպիսի խոր խռովութիւն պատէր զմաղամօք, և գիշեր լի մահուամբ զգիտիւք և զգերդաստանօք»[2]։ Դժվար չէ եզրակացնել, որ այստեղ մենք գործ ունենք դասակարգային սուր պայքարի հետ։ Շահագործվող մասսաների ցասումը հորդառատ է։ Նրանք դիմում են ռադիկալ միջոցների, կացինը ավելի համարձակ է գործում այստեղ։ Դրդյակների ավերումը, տերերին տանջանքի ենթարկելն ու սպանելը, նրանց ունեցվածքի խլումը և այլն խոսում են անողոք հաշվեհարդարի մասին։ Իշխաններին ու պետերին քշելը իրենց կալվածքներից և նրանց փոխարեն, իրենց հայեցողությամբ նորերի նշանակումը, խոսում է ապստամբների ժամանակավոր հաղթանակի մասին։ Եկեղեցիների «եղծումն» ու «ապականումը» խոսում է թոնդրակեցիների գաղափարախոսության մասին։

Դասակարգային այս պայքարն ուներ, թերևս ավելի շեշտված կերպով, նաև ժողովրդա-ազատագրական կողմ։ Ժողովուրդը, իբրև իսկական հայրենասեր, չէր կարող խուլ մնալ իր երկրի բախտի նկատմամբ։ Արաբական հորդաները ասպատակում էին երկիրը՝ մահ ու սով սփռելով ամենուրեք, մոխրակույտերի էին վերածում գյուղերն ու քաղաքները, մեռցնում էին այն, ինչ կենսական էր։ Եվ որովհետև այդ բոլորի նկատմամբ տիրող դասակարգը ոչ միայն ապիկարություն էր հանդես բերում, այլև նրա ներկայացուցիչները դավաճանաբար անցնում էին թշնամու կողմը, միջֆեոդալական ընդ-

---

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 259։

2 Կաթողիկոս պատմիչի ըմբռնումով հայ ժողովուրդը մի հոտ, մի հովիվ էր, առանց դասերի ու դասակարգերի, բոլորը եղբայրներ են միմյանց, բոլորն ազգակից։ Եթե հայ ճորտ գյուղացին խփում էր հայ հարստահարողին, ապա այդ կաթողիկոսի աչքում եղբոր կռիվն էր եղբոր դեմ, ազգակցի կռիվը ազգակցի դեմ։

1 Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 263, 264։

2 Նույն տեղում, էջ 264։

հարումներով սաստկացնում երկրի ծանր վիճակը, ժողովուրդն ինքը իր հայրենիքի պաշտպանության գործը վերցրեց իր ձեռքը իբրև նրա իսկական տերը։ Նա իր զենքն ուղղեց ոչ միայն իր «սեփական» կեղեքիչների—հայ ֆեոդալ ազնվականության դեմ, այլև արաբական զավթիչների դեմ՝ իր հայրենիքն ազատագրելու համար։ Դասակարգային պայքարն ընդունեց նաև ժողովրդա-ազատագրական պայքարի բնույթ[1]։

Ցավոք սրտի, մենք աղբյուրներում չունենք մանրամասն տեղեկություններ միջնադարյան Հայաստանի դասակարգային այս պայքարի տեղության, ընթացքի, նրա ղեկավարների, նրա կազմակերպվածության աստիճանի, նպատակների ու ձգտումների մասին։ Չգիտենք նաև, թե ո՞ր գավառներում էր նա տարածված, բայց Դրասխանակերացու նկարագրությունից պարզ երևում է, որ այն ընդգրկած պետք է լիներ ողջ Բագրատունյաց Հայաստանը, ինչպես նաև Սյունիքը։ Այն տարածված էր ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում, ուստի մենք գործ ունենք ոչ թե տեղական մի նեղ շարժման հետ, այլ մի ընդհանուր, կարելի է ասել համաժողովրդական բնույթ կրող (թերևս բացառություն էր կազմում Վասպուրականը) շարժման հետ։ Մենք տեղեկություններ չունենք նաև ժողովրդական այդ շարժման պարտության մասին, բայց դժվար չէ Սյունիքի օրինակով նկատել, որ այստեղ ևս այն ճնշվեց ֆեոդալ իշխանների ու եկեղեցու միասնական ջանքերով՝ դաժան հալածանքների և ոչնչացումների միջոցով։ Հիշենք Ֆ. Էնգելսի ցուցումն այն մասին, որ գյուղացիական ապստամբությունների (ռևոլյուցիայի) ժամանակ տիրող դասակարգի բոլոր խավերը, մոռանալով իրենց միմյանց նկատմամբ ունեցած հակասությունները, միանում են իրար հետ ընդդեմ ապստամբ գյուղացիների. «Իշխանները, ազնվականներն ու քահանաները, Լութերն ու պապը,—ասում է Էնգելսը,—

[1] Վիպասան Մուրացանը հիշատ է բմբռնել իրերի ընթացքը և պատմության համար ոչ այնքան ծանոթ մի իշխանի կանգնեցրել ժողովրդի այդ ձգտումների գլուխն ու ազատագրել երկիրը։ Բայց նա չի տեսել այդ պայքարի ներքին դասակարգային կողմը։

միանում են «գյուղացիների արյունարբու և ավազակաբարո խմբերի դեմ»[1]։

Ի՞նչ անմիջական հետևություններ կարելի է անել այս բոլորից։ 10-րդ դարի 2-րդ տասնամյակի դասակարգային պայքարը, նախորդ դարերի դասակարգային պայքարի համեմատությամբ, ունի տարբերիչ կողմեր։

1. Այս տասնամյակի դասակարգային պայքարը ոչ թե շահագործող գյուղացիության առանձին, տեղական ըմբոստացում էր, այլ այս կամ այն չափով համաժողովրդական բնույթ կրող գյուղացիական շարժում էր, տիրող ֆեոդալական դասակարգի դեմ։ Ընդ որում, շարժմանը մասնակցում էր նաև քաղաքային պլեբսը («նուազունք»), որը թերևս առաջին դեպքերից մեկն էր միջնադարյան Հայաստանի դասակարգային պայքարի պատմության մեջ և որը շարժմանը տալիս էր համաժողովրդական բնույթ։ Դժվար է պնդել, իհարկե, որ տարբեր գավառների, ասենք Սյունիքի, Արարատյան և այլ գավառների ապստամբությունները կապված էին միմյանց հետ գիտակցական և կազմակերպչական կապերով, բայց հենց այն փաստը, որ բոլոր տեղերում «նուազունք» «խրոխտացեալ» էին տերերի դեմ «մեծաւ ապստամբութեամբ», խոսում է նրանց թեկուզ տարերային կապի ու միասնության մասին։ Մեր պնդումն այն է, որ վերոհիշյալ պատճառներն ամենուրեք ստորներին («նուազունք») ոտքի էին հանել տերերի դեմ և հյուսել «անարգի» կռիվը «պատուականի» դեմ։

2. Դասակարգային պայքարն ավելի հետևողական էր և իր գործողության մեջ ավելի հեռու գնաց։ Նա ժամանակավոր հաղթանակ ձեռք բերեց տերերի նկատմամբ։ Սյունիքի ապստամբները պարտության մատնեցին վանքի հոգևոր տերերին, այլ գավառների ապստամբ «նուազունք» ոչ միայն տրեխավորեցին տերերին, այլև դուրս վանեցին իշխաններին ու պետերին իրենց բնակավայրերից և իրենց հայեցողությամբ նոր կառավարիչներ ու զորավարներ նշանակեցին։

3. Դասակարգային պայքարը մղվում էր թոնդրակեցինե-

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 57։

րի գաղափարախոսության ազդեցության ներքո, գաղափարախոսություն, որը, չնայած իր կրոնական արտաքին շղարշին, իր ժամանակի շահագործվող դասակարգի սոցիալական ձգտումների ու դասակարգային շահերի արտահայտությունն էր, իր ժամանակի համար ռևոլյուցիոն։

4. Դասակարգային պայքարը վարվում էր օտար նվաճողների ավերիչ արշավանքների պայմաններում։ Այս հանգամանքը դիմակազերծ է անում կղերա-ֆեոդալական ու բուրժուական պատմագրության այն պնդումը, որ օտար նվաճումների ժամանակ Հայաստանում դասակարգային պայքար տեղի չի ունեցել։ Օտարի արշավանքը, ինչպես տեսանք, այս շրջանում ոչ միայն չկանխեց, այլ արագացրեց դասակարգային պայքարը, որն ընդունեց նաև ազատագրական պայքարի բնույթ։ Ժողովուրդը պայքարում էր երկու ճակատով՝ սեփական տերերի և օտար նվաճողների դեմ։

* *
*

Նախքան այս տասնամյակի պայքարի պարտության պատճառներն ու գնահատականը տալը, դիտենք Սյունիքում եղած գյուղացիական ապստամբությունների մյուս էտապները ևս։

Ցուրի շարժումը ճնշելուց հետո Տաթևի վանքը տոնում էր իր հաղթանակը. բայց այդ հաղթանակը լիակատար ու վերջնական չէր։ Շատ շուտով նա նորից տեսնելու էր իր շահագործմանը հանձնված գյուղացիների իր դեմ ուղղված նոր ապստամբություններ։

Օրբելյանը, խոսելով Հակոբ եպիսկոպոսի (918—958 թթ.) 930-ական թվերի գործունեության մասին, գրում է. «Դարձեալ յայնմ ժամանակի աւազականոցն, որ հանդէպ վանիցն կայր ի վերայ ուսոյն որ Աւելադաշտն կոչեն, զոր վերագոյն ասացաք (խոսքը 906—918 թվերի դեպքերի մասին է — Հ. Ուր.)[1] լի էր ելուզակ մարդովք որք բազում ոճիրս գործէին և յոլով նեղութիւնս հասուցանէին եղբարցն և այլ շրջակայ սահմանացն»[1]։ Ուրեմն 906—918 թվերին «աւազականոց» համարվող Բերդ (Աւելադաշտ) գյուղը այժմ, 930-ական թվերին, նորից լի է «ելուզակ» մարդկանցով, որոնք բազմաթիվ ոճիրներ են գործում և շատ նեղություններ պատճառում վանքի եղբայրներին ու շրջակա այլ սահմաններին։

Այդ նույն 930-ական թվերի մասին խոսելիս Ս. Օրբելյանը հիշում է նաև Տամալեկք գյուղի մասին. «էր և հանդէպ վանիցն,— գրում է նա,— տեղի մի ապստամբանոց, որ Տամալեկս կոչէին. և բազում և մեծամեծ վիշտս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն, զոր Տէր Յովհաննէս, թէ և բազում անգամ ջանաց, ոչ կարաց հալածել զընակիչսն և սեպհականել զտեղին»[2]։ Այդ գյուղը նաև այժմ վշտալից դառնություններ է պատճառում վանքի եղբայրներին[3]։ Հակոբ եպիսկոպոսն այս Տամալեկքը սեպհականելու մասին թողած նըզովագրի մեջ գրում է. «բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի զՏամալեկս որ բազում նեղութիւն էին հասուցեալ ի տանս. և Տեառն Յովհաննիսի ջանացեալ էր և չէր կարացեալ թափել»[4]։ Ուրեմն Տամալեկքը, որը Բերդի նման դեռ Հովհաննեսի ժամանակ (906—918 թվերի տարանքում) ապստամբանոց է եղել ու նեղություններ պատճառել վանքին, այսինքն՝ մասնակցել Ցուրի գլխավորաց շարժմանը, ինչպես ցույց տվեցինք վերևում, այժմ ևս (930-ական թվերին) վշտալից նեղություններ է պատճառում վանքին։

Մեջբերված այս փաստերը ցույց են տալիս, որ 930-ական թվերին հիշյալ գյուղերը նորից ապստամբել են։ Դժվար է ասել, թե այդ գյուղերը միևնույն տարին, միասնակա՞ն կերպով են ապստամբել, թե՞ առանձին ժամանակներում, գուցե և մի քանի տարիների տարբերությամբ՝ նախ՝ մեկը և, ապա՝ մյուսը։ Կարելի է պնդել միայն այն բանի վրա, որ նրանք

---

1 Այս Ավելադաշտ գյուղը Բերդ գյուղն է։ Ս. Օրբելյանն ինքը վկայում է, որ նրա անունը Բերդ է։ բայց այն կոչում են նաև Ավելադաշտ (տես էջ 230)։ Մենք դերագասում ենք գործածել նրա Բերդ անունը։ Նա այդ անունով էլ մտել է Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակի մեջ։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 257։
2 Նույն տեղում, էջեր 270, 271։
3 Նույն տեղում, էջ 271։
4 Նույն տեղում։

ապստամբել են 930-ական թվերին[1]։ Տպավորությունն այնպես է, որ նախ ապստամբել է Բերդը (Աւելադաշտ)։ Անշուշտ նա մենակ չէր. Ս. Օրբելյանի «լի էր ելուզակ մարդովք» խոսքերից երևում է, որ, ինչպես ճիշտ նշում է Ա. Աբրահամյանը, Բերդում կենտրոնացել էին նաև ուրիշ գյուղերից հավաքված ապստամբներ, այն է՝ վանքի շուրջ ընկած Տամալեկք, Հարժիք, Տանձատափ և այլ գյուղերից։ Ուրեմն Բերդը տվյալ դեպքում շարժման կետրոնն էր, ինչպես նախկինում եղել էր Ցուրը։ Այդ հաստատվում է և նրանով, որ Ս. Օրբելյանը, ինչպես կտեսնենք, խոսելով ապստամբ մարդկանց մասին, Բերդը համարում է «ապստամբանոց նոցին»։ Բերդի (Աւելադաշտի) ճնշումից հետո, շարժման կենտրոնը, հավանաբար, դառնում է Տամալեկքը, որը Ս. Օրբելյանը անվանում է «ապստամբանոց մի»[2]։

930-ական թվերի այս գյուղերի ապստամբական շարժման մանրամասնությունները, նրա ընթացքը մենք չգիտենք։ Աղբյուրները մի քանի պիտակներով բնորոշելով ապստամբ-

[1] Չի կարելի համաձայնվել Ա. Աբրահամյանի հետ, որը պնդում է, թե Տամալեկքը ապստամբել է 10-րդ դարի կեսին (Տես Աբրահամյանի վերոհիշյալ աշխատությունը, էջ 68)։ Այդ անհնար է։ Նախ այն պատճառով, որ Օրբելյանի վկայությամբ Հակոբ եպիսկոպոսը Տամալեկքի ապստամբությունը ճնշեց իր՝ Հայոց կաթողիկոսի դեմ բարձրացրած «ապստամբությունից» առաջ, իսկ նրա «ապստամբությունը», ինչպես տեսանք, 940-ական թվերի սկզբին էր (940—41 թթ.)։ Հակոբ եպիսկոպոսը բանադրվեց և գնաց Բաղք, թափուր թողնելով Տաթևի վանքի աթոռը մինչև 958 թիվը։ Երկրորդ այն պատճառով, որ Հակոբ եպիսկոպոսը կաթողիկոսի դեմ կարող էր «ապստամբել» միայն այն բանից հետո, երբ կճնշեր ապստամբության օջախներ հանդիսացող հիշյալ գյուղերի դիմադրությունը, կլայնացներ ու կամրացներ իր դիրքերն եպիսկոպոսական աթոռում։ Այդ բոլորը նա կատարեց և ավարտեց 930-ական թվերի վերջում։

[2] Բրոսեն Ս. Օրբելյանի ֆրանսերեն թարգմանության մի ծանոթության մեջ այն կարծիքն է հայտնում, որ Տամալեկքի բնակչությունը մուսուլմանական մի ցեղ էր։ Այս պնդումը պետք համարել սխալ, սկզբնաղբյուրներով չապացուցված։ Ի. Ջավախիշվիլին իրավացի կերպով Տամալեկքի բնակիչների մասին գրում է. «Նրանք էլ ուրիշների նման հողի ու կալվածքի տեր էին և բնիկ ժողովուրդ» (Տես «Նյութեր Հայաստանում սոցիալական շարժումների պատմության համար», էջ 20)։

ների գործունեությունը անցնում են շարժման պարտության նկարագրությանը։ Բայց հենց այդ պիտակներից էլ դժվար չէ ենթադրել, որ ապստամբների կատարած «ոճիրներին» հավանաբար մասնակից է եղել կացինը։

Պայքարի սուր սլաքը, այժմ էլ, ուղղված էր անմիջականորեն վանքի դեմ։ Հավանաբար հոգևորականներին նորից հալածել են։ Այդ մասին է խոսում թերևս հետևյալ փաստը։ 936 թվին Սմբատ իշխանը Եղեգեաց ձորում, Քարեվանս կոչված վայրում հանդիպում է քարայրներում ապրող հոգևորականների (Ճգնավորների)։ Նրան այն հարցին, թե ի՞նչ են անում այստեղ, նրանք պատասխանում են՝ «Հալածեալ փախստական եղաք յաշխարհէ թերևս կարասցուք ապրել ի դառն ալեկոծութենէ սորա»[1]։ Ո՞ւմ կողմից էին հալածվել այդ հոգևորականները, այդ ի՞նչ «դառն ալեկոծություն» էր նրանց քշել այդ լեռնածերպերը, չէ՞ որ այդ ժամանակ Սյունիքի քաղաքական կյանքում ոչ մի ալեկոծում (նվաճում, պատերազմական գործողություն և այլն) չկար։ Մեր կարծիքով նրանց՝ հալածել էին ապստամբ գյուղացիները։ «Դառն ալեկոծություն» արտահայտությունը նրանց շրթերում գյուղացիական շարժումն էր։

Ուշադրավ է նաև այն, որ պայքարի այս էտապում էլ այն ուղղված է եղել ոչ միայն եկեղեցու, այլ նաև շրջակա աշխարհիկ ազնվականության դեմ։ Այդ երևում է Ս. Օրբելյանի հետևյալ վկայությունից՝ ապստամբ գյուղացիները «նեղութիւնս հասուցանէին եղբարցն և այլ շրջակայ սահմանացն»[2]։

930-ական թվերի գյուղացիական այս շարժումների ճնշման գործում դարձյալ մեծ դեր են խաղացել աշխարհիկ իշխանները և հատկապես Սմբատ դահերեց իշխանը։ Բերդի ճնշման մասին մենք Ս. Օրբելյանի մոտ կարդում ենք. «յայնժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց. և հրաման առեալ՝ հալածական արար զարսն (այսինքն՝ ապստամբ մարդկանց — Հ. Ուր.). և քանդեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ արար. և զտեղին սահմանովն սեպհական-

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 259։
[2] Նույն տեղում, էջ 267։

նեաց եկեղեցւոյն, և մեծամեծ և ահագին նզովիւք փակեաց զի մի ոք այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինութիւն առնել»[1]։ Թեև այստեղ ուղղակի ասված չէ Սյունյաց իշխանների զորական միջամտության մասին, բայց այդ ինքնին հասկանալի է։ Ապստամբ մարդկանց հալածելը և նրանց շարժման կենտրոնի, «ապստամբանոցի» հիմնախիլ անելը «սուրբ հայրը», ինչպես և իր ստորադաս «եղբայրները», չէին կարող կատարել առանց զենքի, բռնի ուժի։ Սյունյաց իշխաններից «հրաման առնել» բառերը պետք է հասկանալ զորական աջակցություն ստանալու իմաստով։

Իսկ Տամալեկքի ճնշման մասին Ս. Օրբելյանը պատմում է, որ Սմբատի կին Սոփիան գալիս է Տաթևի սուրբ խաչին երկրպագելու, լսում է Տամալեկքի պատճառած վնասների մասին և «գուն գործեալ ի վերայ և հազիւ ուրեմն ածեալ ընդ բռամբ զտեղին ընդ գնոյ հազար դահեկանի. և տայ ի ձեռն Տեառն Յակոբայ և բառնայ զայն խոչ ի նոցանէ. և այնուհետև լինէին յապահով»[2]։ Իսկ Հակոբ եպիսկոպոսի նզովագրում այդ մասին կարդում ենք. «Արդ՝ հնազանդեալ մեր հրամանացս տէր Սմբատ և Սոփիա տիկին՝ առին ընդ գնոյ 1000 դահեկանի, և եառն ի սուրբ նշանս. և հոգով և մարմնով զինքեանս մեզ յանձնեցին»[3]։ Այսպես, ինքը եպիսկոպոսն էլ խոստովանում է, որ դիմել է Սմբատի օգնությանը, որը մեծ ջանք գործ դնելուց հետո միայն կարողացել է ճնշել ու հավաքել վանքի բռան մեջ։ Այս անգամ զորական ուժի հետ միասին գործի է դրվում նաև դրամը։

Սյունիքում դասակարգային պայքարը չվերջացավ նաև այս գյուղերի շարժման ճնշումով։ Պայքարի մի նոր ալիք մենք տեսնում ենք դարավերջում, որը և կազմում է երրորդ էտապը։

Ս. Օրբելյանը վկայում է, որ Ցուրի բնակիչները կրկին «յարուցին մեծամեծ հալածումն եկեղեցւոյն յաւուրս Վասակայ Թագաւորեցելոյն և Սեադայի և Շահանդխտոյ մօր նոցայ. և

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 257, 258։

[2] Նույն տեղում, էջ 271։

[3] Նույն տեղում։

կրկին աւերեցին զվանսն»[1]։ Ցուրի այս երկրորդ ապստամբությունը թեև առաջինի համեմատությամբ կարճ տևեց, բայց կրեց ավելի հանդուգն ու համառ բնույթ։ Ապստամբները նորից հարձակվում են վանքի վրա ու ավերում այն։ Հավանաբար նորից խլում են վանքի հարստությունները, ավերում արհեստանոցները և այլն։ Նորից և ավելի վճռաբար գործի է դրվում կացինը։

Այս անգամ ընդվզած ցուրեցիների արդար վրիժառության ցասումից չի ազատվում ժամանակի եպիսկոպոսը, որի անունը նույնպես Հակոբ էր, ըստ եպիսկոպոսների կարգի Հակոբ 2-րդը։ Ի դեպ Ի. Ջավախիշվիլին շփոթում է այս Հակոբին նախորդ Հակոբի հետ և այդ պատճառով էլ նա Ցուրի երկրորդ ելույթը դնում է ոչ թե 10-րդ դարի վերջին տասնամյակում, այլ 30—40-ական թվերին։ Ցավոք սրտի անվանի դիտնականը այս հարցում թյուր ըմբռնում է ցուցաբերել դեպի սկզբնաղբյուրները[2]։ Ցուրի երկրորդ ելույթը տեղի է ունեցել Հակոբ

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 250։

[2] Մենք ավելորդ համարեցինք աշխատությունում տալ Տաթևի եպիսկոպոսների հաջորդական մանրամասն պատմությունը։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ դնել միայն 10-րդ դարի եպիսկոպոսների ցուցակն իրենց տարեթվերով, որը մենք հանել ենք Ս. Օրբելյանի վկայություններից։ Օրբելյանի վկայությամբ Տաթևի կաթողիկեն շինող Հովհաննես եպիսկոպոսը մահացել է Հայոց թվականության 367 թվին (= 918 թ.). տես էջ 252։ Իսկ մի այլ տեղում վկայում է, որ նա եպիսկոպոսել է 38 տարի (էջ 163)։ Ուրեմն նա եպիսկոպոսել է 880—918 թվերին։ Օրբելյանի վկայությամբ սրան հաջորդում է Հակոբ 1-ին եպիսկոպոսը (էջ 253), որը մահանում է 958 թվին (էջ 283)։ Ապա՝ Վահանը (էջ 284), որը եպիսկոպոսել է 6 տարի (էջ 288)։ Եվ ապա հաջորդաբար Աշոտը՝ 17 տարի, Հովհաննեսը՝ 6 1/2 տարի, երկրորդ անգամ նորից Աշոտը՝ 5 1/2 տարի, Սամվելը՝ 5 տարի և Հակոբը՝ ? (տես էջ 290—291)։

Այսպիսով՝

1) Հովհաննես	— 880—918	թվերին
2) Հակոբ 1-ին	— 918—958	»
3) Վահան	— 958—964	»
4) Աշոտ	— 964—981	»
5) Հովհաննես	— 981—987 1/2	»
6) Աշոտ (2 անգամ)	— 987 1/2—993	»
7) Սամվել	— 993—998	»
8) Հակոբ 2-րդ	— 998— ?	»

2-րդի եպիսկոպոսության ժամանակ, որը եպիսկոպոս է եղել 998 թվից։ Եվ բացի այդ, Ի. Ջավախիշվիլու աչքից վրիպել է Ս. Օրբելյանի վերոհիշյալ վկայությունը, որի մեջ պարզ ասված է, թե ելույթը տեղի է ունեցել Վասակ թագավորի և նրա եղբայր Սևադայի ժամանակ։ Հայտնի է, որ Բաղաց թագավորությունն ստեղծվեց 970-ական թվերին, իսկ Վասակը Բաղաց թագավորներից երկրորդն էր։

Հակոբ 2-րդ եպիսկոպոսի մասին Ս. Օրբելյանը գրում է. «այս Յակոբ կացեալ ամս սակաւ վաճխանի. զսա կարծեմ սպանեալ դաւաճանութեամբ Յուրացեացն ի վերայ խոռոյն Յուրայ»[1]։ Սպանությունը կատարվում է հետևյալ կերպ։ Երբ նա Բաղքից վերադառնում է Տաթև, ապստամբ գյուղացիները ճանապարհը կտրում են ու սպանում նրան, հանձին նրա, հավանաբար, տեսնելով իրենց շահագործող ու հարստահարող մեքենայի կենդանի մարմնացումը։ «Եւ եպիսկոպոսն Տէր Յակոբ,— պատմում է Օրբելյանը,— երթեալ էր ի Բաղս. և դարձեալ գայր անտի, իսկ շնաբարոյքն գաղտ պահեալ զճանապարհն որ անցանէ ընդ խոռն Յուրայ, յարեան ի վերայ և սպանին զեպիսկոպոսն, որ և Թաղեցաւ ի յիշատակ չար գործոյն»[2]։

Այս սպանությունը, ինչպես տեսնում ենք, մի քիչ ուշ է տեղի ունեցել, քան վանքի վրա կատարված գրոհը, նրա ավերումը։ Ուրեմն ապստամբությունը չի վերջացել վանքի վրա մի անգամ հարձակում կատարելով. նա երկարել է։ Նրա երկրորդ ելույթը, կամ արտահայտությունը պետք է համարել եպիսկոպոսի սպանումը։ Եվ վերջապես, Յուրի այս ընդվզումը, ինչպես կտեսնենք, ճնշվել է հաջորդ Գրիգոր եպիսկոպոսի ժամանակ։ Մինչև նոր եպիսկոպոսի նշանակումը, անշուշտ, պահանջում էր որոշ ժամանակ, նշանակում է, որ Յուրի ընդվզումը չի մարել նաև եպիսկոպոսի սպանությամբ, այն շարունակվել է նաև նրանից հետո։ Ուստի դժվար չէ պատկերացնել, որ Յուրի բնակիչների այս երկրորդ ելույթը մի էպիզոտիկ ըմբոստացում չէր, այլ շարժում տևական ժամանակի մեջ։ Չենք սխալվի, եթե ասենք նաև, որ Յուրն այս անգամ

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 294։
[2] Նույն տեղում, էջ 250, տես նաև էջ 294։

էլ մենակ չէր, թեև աղբյուրներում ոչ մի ակնարկ չունենք այդ մասին։ Ահա այն ամենը, ինչ կարելի է ասել Յուրի այս երկրորդ ելույթի մասին, ըստ մեզ հասած չափազանց կցկտուր, պատահական վկայությունների։

Գյուղացիների այս շարժումը ևս ճնշվում է տիրող դասակարգի ընդհանուր ջանքերով։ Նորաստեղծ Բաղաց թագավորության երկրորդ թագավոր Վասակը, նրա եղբայր Սևադան և սրանց մայր Շահանդուխտը հրամայում են Գրիգոր եպիսկոպոսին հիմնահատակ ոչնչացնել Յուրը։ Այդպես էլ արվում է։ Այդ կապակցությամբ Գրիգոր եպիսկոպոսի թողած նզովագրում կարդում ենք. «Եվ ոչ ինչ շահեալ (այսինքն՝ Յուրը վերակենդանացնելուց ոչինչ չշահելով — Հ. Ուր.) որդնալից սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան (խոսքը ցուրեցիների մասին է — Հ. Ուր.)։ Իսկ ի ժամանակս մեր հրամայեցին աւերեալ յատակել»[1]։ Իսկ Ս. Օրբելյանը գրում է,— «և քակեաց (Գրիգոր եպիսկոպոսը — Հ. Ուր.) զնիծաբնակ քարն Յուրայ և բնաջինջ յատակեաց»[2]։ Ինչպես տեսնում ենք զենքն ու խաչը գործել են համատեղ ու համերաշխ։

Այսպիսով, Տաթևի վանքի շուրջն ընկած գյուղերը համառ ու երկարատև պայքար են ծավալել վանքի դեմ նաև առաջին պարտությունից հետո։ Ի. Ջավախիշվիլին, ելնելով իր սխալ հաշվից, այդ մասին գրում է. «հակառակորդների կողմից գրեթե 30 տարվա ընթացքում տարվում էր կործանարար պայքար»[3]։ Բայց ինչպես տեսանք, ոչ թե 30, այլ գրեթե հարյուր տարի տևեց այդ պայքարը հակադիր կողմերի միջև։

* * *

10-րդ դարի վերև հիշատակված շարժումները տարբեր գնահատականների են արժանացած պատմագիրների և պատմաբանների կողմից։ Առաջին գնահատողները եղել են մեզ համար սկզբնաղբյուրներ հանդիսացող, ժամանակակից Հայոց

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 251։
[2] Նույն տեղում, էջ 294։
[3] Ի. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանում սոցիալական շարժումների պատմության համար, էջ 22։

կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին և դեպքերին մասնակից Սյունյաց Հովհաննես, Հակոբ և Գրիգոր եպիսկոպոսները։ Սրանք այդ շարժումները դնահատել են որպես ստորների «չար» և «անօրեն» գործ, իսկ ապստամբներին համարել՝ «ելուզակներ», «պիղծք», «անաստվածներ», «սրիկաներ», «գողեր» և այլն։ Ճիշտ նույն ձևով է մոտեցել հարցին նաև ոչ ժամանակակից եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը։ Սրանք որպես տիրող դասակարգի, որի դեմ ուղղված էին այդ շարժումները, ներկայացուցիչներ, այլ կերպ չէին էլ կարող բնութագրել։ Նրանք ելնում էին իրենց դասակարգի բարոյականությունից և իրենց աշխարհայացքից։ Շահագործվող դասակարգի ամեն մի ըմբոստացում չէր դնահատվի այլ կերպ, քան «չար» ու «անօրեն» գործ։ Ճորտ գյուղացու և քաղաքային չքավորի կողմից նրանց դղյակների ավերումը, կուտակված հարկերի և ունեցվածքի խլումը չէր դնահատվի այլ կերպ, քան «գողություն», «սրիկայություն»։ Եկեղեցու ավերումն ու մեռոնի թափումը չէր դնահատվի այլ կերպ, քան «պղծություն» և «անաստվածություն»։ Այս ամենը ժամանակի տիրող ֆեոդալական և քրիստոնեական բարոյականության ու աշխարհայացքի դեմ բաներ էին։

Հենց այս նույն ոգով են բնութագրել հետագայում կղերա-ֆեոդալական պատմագրության բոլոր ներկայացուցիչները՝ սկսած Գոչո վանքի միաբան Առաքել վարդապետից մինչև Մխիթարյան աբբաների վերջին ներկայացուցիչը։ Բավական է որպես օրինակ նշել միայն մեկին։ Ս. Ջալալյանցը գրում է. «Քանզի Ցուրեցի խժդժագոյն և դաղնամիտ արք յաբեան ի վերայ ցիր և ցան արարին զսխրալի միաբանութիւնս, և յաւարի առին զամենայն զկայս և զկարասիս, բարձին զլուսաճաճանչ խաչն՝ զմասնաւորեալն ի կենաց փայտէն և զընդելուզեալն զանազան թանկագին ակամբք և մարգարտովք, սպանին ի միաբանից չարաչար մահուամբ զորս և գտին, ի վայր հեղին ի գետին զսրբալոյս Մեռոնն անարժան ձեռօք, այս ոչ մի և եթ անգամ, այլ բազմիցս կրկնեցին յորդորեալ ի դժնդակ կրից և ի մախանաց»[1]։

[1] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն 2, էջեր 303, 304։

Մոտավորապես նույն ոգով ընթացավ նաև բուրժուական պատմագրությունը, որի ներկայացուցիչները, սակայն, շատ հազվագյուտ դեպքում անդրադարձան այս հարցին։

Առաջին լուրջ ուսումնասիրողը նշանավոր գիտնական Ի. Ջավախիշվիլին էր, որը մի փոքրիկ մենագրությամբ վեր հանեց Սյունիքում ծավալված 10-րդ դարի այս շարժումները։ Նա առաջինը այդ շարժումները համարեց սոցիալական։ Այդ նրա անգնահատելի վաստակն է։ Բայց նրա մոտ սոցիալական հակասությունները ճիշտ չեն պատճառաբանված։ Նրա պատկերացմամբ Տաթևի վանքին նվիրված հողերի գյուղացիության վիճակն անհամեմատ բարվոք էր, քան կալվածատերերի հողերի գյուղացիությանը, դրա համար էլ,— գրում է նա,—«կալվածատերերի ճորտերը, եկեղեցական ճորտ դառնալուց ոչ միայն չէին խուսափում, այլև ընդհակառակն՝ սովորաբար ուրախ էին լինում»[1]։ Եթե այդպես է, ապա ինչո՞ւ ապըստամբեցին այդ բարվոք վիճակի մեջ եղած գյուղացիները։ Ի. Ջավախիշվիլին սոցիալական այդ կոնֆլիկտի միակ պատճառը համարում է այն, որ եպիսկոպոսները «ցանկանում էին, որ աթոռին կից ոչ մի բնակչություն չլինի, և դրա համար հարևան գյուղերի բնակիչներին ստիպում էին թողնել իրենց տեղը և փոխադրվել ուրիշ տեղ։ Իհարկե, սա գյուղացիներին բնավ դուրեկան չէր։ Գյուղացիներն երբեք չէին ցանկանում տեղահան լինել... և եպիսկոպոսներին դիմադրություն էին ցույց տալիս։ Այս հողի վրա երկու կողմից էլ մեծ ու անշեջ թշնամություն առաջացավ»[2]։

Մեզ թվում է, որ տեղափոխման այդ առաջարկը գյուղացիների համար այնքան էլ ծանր գործ չէր, որի համար ամբողջ մի դար մաքառեին։ Եթե եկեղեցին բարվոք վիճակ էր ապահովում իր ճորտերին այս գյուղում, ապա նույնը նա կապահովեր նրանց համար նաև մի այլ գյուղում բնակվելիս։ Ի. Ջավախիշվիլին չի նկատել, որ սոցիալական այդ կոնֆլիկտի հիմքը եկեղեցու կողմից կատարվող շահագործումն

[1] Ի. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, էջ 12։

[2] Նույն տեղում, էջեր 12, 13։

ու ճորտացումն է, այլ ոչ թե սոսկական տեղափոխման պահանջը։

Ի. Զավախիշվիլու մոտ նաև անհաջող տերմինոլոգիայով է պատկերված բուն շարժումը։ Նա գրում է. «Ցուրտ ավանի բնակիչները... կանխապես համաձայնվելով և դավադրություն կազմելով, մի գիշեր անակնկալ կերպով հարձակվում են վանքի վրա, վանականներից մի քանիսին սպանում, իսկ վանքն ամբողջապես կողոպտում»[1]։ Ցուրի ելույթը դավադրություն չէր և ոչ էլ վանքի ժողովրդից հավաքածի ետ խլումը՝ կողոպուտ։

Հայագիտության մեջ փորձեր են արվել այս շարժումները գնահատել իբրև կրոնական բնույթ կրող շարժումներ, իսկ ոմանք էլ, ինչպես Լեոն իր «Հայոց պատմության» 2-րդ հատորում, անցել են այդ շարժումների կողքով, ոչ մի խոսք չասելով նրանց մասին։

Հ. Զորյանի կարծիքով 10-րդ դարի 2-րդ տասնամյակում կենտրոնական գավառներում բարձրացած ժողովրդական շարժումն ուներ կրոնական բնույթ. նա այդ «հիմնավորում» է Հ. Դրասխանակերցու այն վկայությամբ, որ «աղազակ» և «սրիկայք» ապականել են աստվածաշեն եկեղեցիները։

Իրականությանը չհամապատասխանող այս կարծիքը պարզապես պատմական իրողությունը կեղծել է, շարժման սոցիալական իմաստի սքողում։ Կրոնական բնույթ կրող միջնադարյան ամեն մի շարժման դրոշի վրա գրված էր իր, շարժման կրոնական նշանաբանը։ Ի դեպ, թեկուզ այդ դեպքում, ինչպես ուսուցանում է Ֆ. Էնգելսը, այդ շարժումը դասակարգային պայքար էր, որը պետք է բացատրի յուրաքանչյուր ուսումնասիրող՝ ցույց տալով կրոնական այդ շղարշի տակ թաքնված դասակարգային շահերն ու ձգտումները, մի բան, որը չի անում Հ. Զորյանը։ Բայց մի՞թե երկրորդ տասնամյակի շարժման դրոշի վրա գրված էր որևէ կրոնական նշանաբան, մի՞թե այն մղվում էր որևէ կրոնական բարենորոգումների և այլնի համար։ Իհարկե, ոչ։ Շարժման ելած շահագործվող

[1] Ի. Զավախիշվիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, էջ 14։

մասսաների դասակարգային շահերը, ձգտումները, կարիքներն ու պահանջները հանդես էին գալիս առանց կրոնական շղարշի, բացահայտ և ուղղակի։ Մի՞թե հենց այդ մասին չի խոսում ապստամբների կողմից առանց կրոնական ծեսերի տերերի տրեխավորումը, իշխանների ու պետերի քշումը և իրենց հայեցողությամբ նոր կառավարիչներ նշանակելը, դղյակների ավերումը, եկեղեցիների ապականումը։ Մի՞թե պարզ չէ, որ անգամ Տաթևի վանքի դեմ ըմբոստացած Սյունյաց դյուղացիությունը չէր պահանջում կրոնական որևէ բարենորոգում, իր ձգտումները չէր քողարկում կրոնական շղարշով, այլ ուղղակի գրոհում էր վանքի վրա, ավերում այն, եպիսկոպոսին ու հոգևորականներին սպանում։

Ինչպես նշեցինք, սխալ է նաև այս շարժումները նեստորականության և քաղկեդոնականության հետ կապելը։

Չպետք է երբեք շփոթել թոնդրակեցիների գաղափարների ազդեցության առկայությունը հենց իրեն՝ թոնդրակյան շարժման հետ։ 10-րդ դարի 2-րդ տասնամյակի շարժումները կրում էին թոնդրակյան գաղափարների ազդեցությունը, բայց այն թոնդրակյանների շարժում չէր։

Մեր ըմբռնումով այս շարժումները գնահատելիս պետք է ելնել նրանց շարժիչ ուժերից և նրանց ձգտումներից։ Եթե հարցին մոտենանք այս ձևով, ապա 10-րդ դարի 2-րդ տասնամյակի շարժումները քաղաքային չքավորության ու աշխատավոր գյուղացիության սոցիալական կռիվն էր տիրող ֆեոդալ ազնվականների, ֆեոդալ եկեղեցու և այլ կարգի շահագործողների դեմ։ Դա ժողովրդական ապստամբություն էր տիրող դասակարգի շահագործման ու ճորտացման դեմ։ Պայքարի սլաքն այստեղ, հատկապես կենտրոնական գավառներում, անմիջականորեն ուղղված էր ֆեոդալ իշխանների, պետերի և այլ աշխարհիկ շահագործողների դեմ։ Իսկ Սյունիքի շարժումները գյուղացիական ապստամբություններ էին շահագործման ու ճորտացման դեմ։ Պայքարի սլաքն այստեղ, Սյունիքում, անմիջականորեն ուղղված էր վանքի, իբրև հոգևորական ֆեոդալ կալվածատիրոջ դեմ, բայց միաժամանակ ուղղված էր, նաև, աշխարհիկ ֆեոդալ կալվածատերերի դեմ։ «Ֆեո-

դալիզմի դեմ եղած օպոզիցիան... հանդես է գալիս իբրև սոսկ հոգևորական ֆեոդալիզմի դեմ ուղղված մի օպոզիցիա»[1]։

Գյուղացիական ու ժողովրդական այդ շարժումները պարտվեցին հենց այն պատճառով, որ չէին կարող հաղթանակել։ Մարքսիզմի կլասիկները միջնադարյան գյուղացիական ապստամբությունների պարտությունների մասին նշել են հետևյալ, պարզաբանումներ չպահանջող պատճառները.

«Միջնադարի բոլոր խոշոր ապստամբությունները ելնում էին գյուղից, բայց և նրանք մասնատվածության և դրա հետ կապված գյուղացիների ծայրաստիճանի հետամնացության պատճառով մնում էին բոլորովին անարդյունք»[2]։

«Գյուղացիներն ի վիճակի չէին մեն մենակ ռևոլյուցիա կատարել, քանի դեռ նրանց դեմ ծառացած էր իշխանների ազնվականության և քաղաքների կազմակերպված և սերտորեն միախմբված ուժը։ Միմիայն դաշնակցելով մյուս դասերի հետ՝ նրանք կարող էին հաղթության որևէ շանս ունենալ. բայց ի՞նչպես կարող էր գյուղացիությունը միանալ մյուս դասերի հետ, երբ նրանք բոլորն էլ հավասարապես շահագործում էին նրան»[3]։

Դեռևս չէր ծնվել քաղաքային այն դասակարգը՝ բանվոր դասակարգը, որի հետ կարող էր դաշնակցել գյուղացիությունը և նրա ղեկավարությամբ հաղթանակի հասնել ռևոլյուցիոն պայքարում։

---

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 49։

[2] К. Маркс, Ф. Энгельс, Немецкая идеология, Соч., т. IV, էջ 42։

[3] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 44։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Հետագա ուսումնասիրողների գործը հեշտացնելու, Սյունիքում տեղի ունեցած պատմական դեպքերի ժամանակագրությունը, ֆեոդալական տների ունեցած կալվածքների տեղադրությունը և նրանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները ճշտելու նպատակով սույն հավելվածում տվել ենք իշխանական տների ներկայացուցիչների հաջորդականությունը, նրանց իշխանական տարեթվերը և նրանց գրված կալվածքները («աշխարհները»)։ Պատկերը պարզ դարձնելու համար կազմել ենք նրանց, այսպես կոչված, տոհմածառերի սխեման։ Սույնը կատարելիս նկատի ենք ունեցել Ղ. Ալիշանի և Լորանի կազմած տոհմածառերը, որոնց սակայն մոտեցել ենք քննադատաբար և կատարել, մեր կարծիքով, անհրաժեշտ ուղղումներ։ Մեր վերլուծումը տարբերվում է նրանց տոհմածառերից նրանով, որ սկզբնաղբյուրների մանրազնին ուսումնասիրության հիման վրա տվել ենք անհրաժեշտ բացատրություններ, որպիսիք չեն արել հիշյալ հեղինակները։

Սկզբնաղբյուրների հիման վրա մեզ հաջողվեց վերականգնել գահակալ իշխանների հինգ ճյուղ։ Այս հավելվածը նվիրված է հենց այդ հինգ ճյուղերի վերլուծմանը։ Կազմել ենք նաև իշխանական այդ տների գրաֆիկ-սխեման[1]։

---

[1] Տես հավելվածի վերջը։

ԱՌԱՋԻՆ ՃՅՈՒՂ

ԳԱՀԵՐԵՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ

1. ՎԱՍԱԿ

«Իշխանաց իշխեցող», մահացել է 821 թ.

9-րդ դարասկզբի մեզ հայտնի առաջին իշխանը Վասակն է։ Աղբյուրները նրան անվանում են «Սիւնեաց տեր և իշխանաց իշխեցող», «նահապետ բոլոր ազգին Սիսականոց»[1], «Վասակ Սիւնեաց տէր»։ Չնայած աղբյուրներում Վասակն ուղղակի կերպով գահերեց չի անվանված, բայց ինչպես ցույց տվեցինք աշխատության մեջ, նա գահերեց էր, մանավանդ, որ նրա մահվանից հետո գահերեց դառավ նրա Փիլիպպե որդին, որը գահերեց հորջորջումը, հարկավ, ժառանգեց հորից։

Սկզբնաղբյուրներում ոչ մի վկայություն չկա Վասակի իշխանության սկզբի մասին։ Մովսես Կաղանկատուացուց գիտենք, որ նա մահացել է 821 թվին[2]։ Մոտավորապես նույնն է ասում և Ս. Օրբելյանը[3]։

Վասակ «իշխանաց իշխեցողի» կալվածքների մասին կան միայն կողմնակի վկայություններ։ Ս. Օրբելյանը վկայում է, որ Վասակի մահվանից հետո, նրա հայրենի ժառանգությունը բաժանում են իր երկու որդիները՝ Փիլիպպեն և Սահակը։ Վերջինս ստանում է «բաժին զգաւառն Գեղամայ բոլոր»[4]։ Այս Սահակի ժառանգների մասին խոսելիս Ս. Օրբելյանը վկայում է, որ Գեղաքունի գավառը «շուրջ զծովակովն նոցա էր հասեալ ի բաժին ժառանգութեան»[5]։ Իսկ Փիլիպպեի ժառանգների մասին խոսելիս վկայում է, որ նրանք իբրև ժառանգություն ունեին «բուն գահ իշխանացն Սիւնեաց», որը «էր Բաղք, Վայոց ձոր և այլ շրջակայքն»[1]։ «... զՇահապատնան որ է Ճահուկ գաւառ», «զՍիւնիս և զԲաղս», «Շնհեր և զՀաբանդ»[2]։

Այսպիսով, Վասակ մեծ նահապետը 9-րդ դարի սկզբում իր իշխանության տակ ուներ՝ 1) Գեղաքունի գավառը՝ Սևանա լճի ողջ շրջակայքով, 2) Բաղքը, 3) Վայոց ձորը, 4) Սյունիքը (Ծղուկ), 5) Ճահուկը, 6) Հաբանդը և 6) Շնհերը։ Ինչպես տեսնում ենք, Սյունիքի զգալի մասը գտնվում էր նրա տիրապետության ներքո, մի հանգամանք, որը նրա համար ապահովում էր գահերեց իշխանության թագը։

Վասակ «իշխանաց իշխեցողն» ունեցել է 3 տղա՝ Փիլիպպե, Սահակ, Ատրներսեհ և 2 աղջիկ՝ Քուպդիդուխտ և Բաբեկի կինը, որի անունը հայտնի չէ։

2. ՓԻԼԻՊՊԵ 1-ԻՆ

Գահերեց իշխան, 821—848 թթ.

Փիլիպպեն Վասակ «մեծ նահապետի» երեց որդին էր։ Այդ երևում է Ս. Օրբելյանի բացի վերոհիշյալ վկայությունից նաև «... և որդւոյն Վասակայ Փիլիպպէի», «տէառն Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, նահապետի բոլոր ազգին Սիսական», «ես Փիլիպպէ՝ որդի Վասակայ, Սիւնեաց տէառն», «կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ»[3] վկայություններից։ Հորից հետո սա դառնում է գահերեց իշխան. «և լինի Փիլիպպէ գահերեց իշխան Սիւնեաց»[4]։ Անվանվում է նաև մեծ Փիլիպպե[5]։

Ինչպես տեսանք, հոր մահվանից հետո հայրական ժառանգությունը բաժանում են իրար մեջ այս Փիլիպպեն և Սահակ եղբայրը։ Փիլիպպեին է անցնում կալվածքների մեծ մասը, և այն էլ բուն կենտրոնական մասը՝ Բաղք, Վայոց ձոր, Սյունիք (Ծղուկ), Ճահուկ, Հաբանդ գավառները և Շնհերը։ Սրա օրոք իշխանանիստ է դառնում Վայոց ձորի Եղեգիսը։

Գահերեց իշխան է դառել 821 թվին, հոր մահվանից հե-

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 158, 204։

2 Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 375։

3 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 158։

4 Նույն տեղում, էջեր 296, 297։

5 Նույն տեղում, էջեր 176, 195, 223։

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 176։

2 Նույն տեղում, էջ 298։

3 Նույն տեղում, էջեր 170, 177, 204, 205, 206 և այլն։

4 Նույն տեղում, էջ 266։

5 Նույն տեղում, էջեր 155, 296։

տո, և իշխել է մինչև 848 թիվը։ Նրա մահվան մասին Ս. Օրբելյանը վկայում է «և ինքն վախճանեալ գնի անդեն ի դրան... Եւ այս լինէր յ 297 թուականին Հայոց (=848 թ.)»[1]։

Փիլիպպեն թողել է երեք որդի՝ Բաբգեն, Վասակ և Աշոտ։ «Մեռանի Փիլիպպէ և թողու երից որդիս՝ զԲաբգեն, զՎասակ և զԱշոտ». «... վախճանեալ՝ թողու ժառանգ զԲաբգեն..., և զՎասակ որ և իշխանիկ կոչիւր, և զԱշոտ»[2]։ Իսկ ինքը իր թողած սիգելում գրում է «... տէր Բաբգեն, և տէր Վասակ և տէր Աշոտ՝ իմ Փիլիպպէի որդիք»[2]։

Լորանն իր տոհմածառում, բացի այս երեքից, նշում է նաև չորրորդ որդի՝ Ներսեհ անունով։ Սխալ է։ Սկզբնաղբյուրների տվյալներով Փիլիպպե 1-ինը Ներսեհ անունով տղա չի ունեցել։

3. ՔՈՒՊՂԻԴՈՒԽՏ

Սրա մասին Ս. Օրբելյանը վկայում է՝ «գայ և Քուպղիդուխտ առ տէր Սողոմոն, անորդի գոլով, որ էր դուստր Վասակայ՝ Սիւնեաց տեառն, և քոյր Փիլիպպէի և կին Հրահատայ իշխանի»[3] և Մաճ գյուղը նվիրում է Ս. Խաչին։ Այդ նվիրատվության մասին իր գրած պայման-վճռի մեջ ինքն իր մասին գրում է՝ «Ես Քուպղիդուխտ՝ դուստր Վասակայ՝ Սիւնեաց տեառն, մերձեցայ ի ժամանակս ծերութեան, զմտաւ ածելով զերկրաւոր կենաց ոչնչութիւնն... և վասն զի ի մարմնաւոր կենացս զրկեալ էի զաստակէ մասանց..... և շէն մի Մաճ անուն ի Բաղաց գաւառի, որ նախ տեառն Ատրներսեհի՝ Սիւնեաց տեառն և իմ եղբօր ինձ էր տուեալ, և յետ այնորիկ Հրահատայ իմ տեառնն գնեալ էր յիմ եղբօրէն և ինձ վաճառեալ և հոգեցատուր արարեալ։ Եւտու ես Քուպղիդուխտ զայդ շէնդ լերամբք և դաշտով...։ Եւ մի ես և մի իմ եղբօրորդիք և այլ խոստակդարք պայքարել և համիմատ կալ մի իշխեսցեն...»։ «Եւ գրեցի յ316 (=867 թ.) թուականութեանս Հայոց վկայութեամբ իմ եղբօրորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց աղատաց և ամենայն Շնհէրեցեաց»[1]։

Ինչպես տեսնում ենք, Քուպղիդուխտի հայրը Վասակն է։ Դա Վասակ «մեծ նահապետն» է, իսկ նրա եղբայրներն են Ատրներսեհն ու Փիլիպպեն։ Վերջինս մեզ հայտնի Փիլիպպե 1-ինն է, Վասակ մեծ նահապետի որդին։ Բացի այդ, նա վկայակոչում է չորս եղբորորդիներին, որոնցից առաջին երկուսը Փիլիպպե 1-ինի որդիներն են՝ Վասակ Իշխանիկը և նրա եղբայր Աշոտը, իսկ մյուս երկուսը Քուպղիդուխտի անմիջական եղբորորդիները չեն, այլ նրա Սահակ եղբոր ծոռները՝ Գրիգոր Սուփան 2-րդը և նրա եղբայր Սահակը, որոնք 867 թ. Գեղաքունիքի իշխաններ էին։ Եղբոր ծոռներին եղբորորդի անվանելը բնական է։ Փակագծերում նշենք, որ Քուպղիդուխտը չէր կարող լինել Վասակ Իշխանիկի դուստրը և Փիլիպպե 2-րդի քույրը. նախ այն պատճառով, որ եթե այդպես լիներ, ապա նա 867 թվին պետք է լիներ երիտասարդ կին, այնինչ նա ինքը վկայում է, որ հասել է ծերության, երկրորդ այն պատճառով, որ այդ դեպքում նա չէր ունենա հիշյալ չորս եղբորորդիները, որովհետև մեզ հայտնի չէ, որ Փիլիպպե 2-րդը ունեցել է չորս որդի։ Այսպիսով, այս միակ վկայությունը Վասակ մեծ նահապետի ժառանգների ցանկում ավելացնում է Ատրներսեհի և Քուպղիդուխտի անունները։ Այդ ընդունում է նաև Դ. Ալիշանն իր տոհմածառում։ Լորանն ընդունում է միայն Ատրներսեհին, իսկ Քուպղիդուխտին՝ ոչ, որն ակներևաբար սխալ է։

Քուպղիդուխտն իր մասին ասում է, որ ինքը Հրահատ իշխանի կինն էր։ Մենք ստորև կտեսնենք, որ այդ Հրահատը Կովսականի և Քաշունիքի իշխանն էր, ուրեմն Քուպղիդուխտը հարս էր գնացել Քաշունիքի իշխանական տունը։ Մեր այս ենթադրությունը հիմնավորվում է նաև նրանով, որ Քուպղիդուխտի նվիրած Մաճ գյուղը գտնվում էր Քաշունիքում։ Եվ երկրորդ, ստորև կտեսնենք, որ ինչպես Քուպղիդուխտը, այնպես էլ նրա ամուսինը գանգատվում են անզավակությունից։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 211 և 211—214։

[2] Նույն տեղում, էջեր 204, 208, 211, 297 և այլն։

[3] Նույն տեղում, էջ 218։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 218—220։

4. ԱՏՐՆԵՐՍԵՀ

Բուպղիդուխտի թողած պայման-վճռից տեսանք, որ Ատրներսեհը նրա եղբայրն էր, հետևապես Վասակ մեծ նահապետի որդին։ Այդ ընդունում են նաև Ղ. Ալիշանն ու Լորանը իրենց տոհմածառերում։

Մեր կարծիքով, Փիլիպպե 1-ինի թողած սիգելներից երկուսի մեջ՝ վկաների ցուցակներում հիշված Ատրներսեհը — «վկայութեամբ Ատրներսեհի՝ Սիւնեաց տեառն, Վասակայ որդւոյ» և «վկայք լիցին... տէր Ատրներսեհ՝ Վասակայ որդի»[1], հենց ինքը այս Ատրներսեհն է։

Այս Ատրներսեհի կալվածքների մասին ոչինչ չգիտենք. ո՞րտեղ էր իշխում նա, պարզ չէ։ Չգիտենք նաև նրա գործունեությունը և ժամանակը։ Գիտենք միայն այն, որ նա հիշվում է 839, 844 և 867 թվերի փաստաթղթերում։

5. ԱՆԱՆՈՒՆ ԱՂՋԻԿԸ

Վասակ մեծ նահապետի աղջիկը, որին 821 թվին կին վերցրեց Բաբեկը. «և եառ Բաբան զդուստրն Վասակայ Սիւնեաց տեառն ի կնութիւն»[2]։ «Եւ նոյն ժամոյն առնու Բաբան զդուստրն նորա (Վասակի — Հ. Ուր.) ի կնութիւն իւր»[3]։

6. ԲԱԲԳԵՆ 1-ԻՆ

(գահերեց իշխան, 848—851/2 թթ.)

Փիլիպպե 1-ինի երեց որդին. «Բաբգեն՝ երեց որդի Փիլիպպէի»[4]։ Ս. Օրբելյանը մի տեղ Բաբգենին համարում է «եղբայր Փիլիպպէի»[5]։ Բայց այդ պարզապես սխալ է, կամ գուցե գրչի՞ սխալ։ Ղ. Ալիշանը, հիմնվելով այս վկայության վրա, Բաբգենին համարում է Փիլիպպե 1-ինի եղբայրը և նրա

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 205 (839 թ. սիգելը) և 207 (844 թ. սիգելը)։

[2] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 375։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 158։

[4] Նույն տեղում, էջ 297, տես նաև վերև, էջեր 341, 342։

[5] Նույն տեղում, էջ 168։

մոտ ստացվում է երկու Բաբգեն, մեկը Փիլիպպե 1-ինի եղբայրը (այսինքն Վասակ մեծ նահապետի որդին), մյուսը իր՝ Փիլիպպե 1-ինի որդին։ Վերևում հիշված փաստերից դժվար չէ հետևցնել, որ Ալիշանի կարծիքը հիմնովին սխալ է, մանավանդ, որ Փիլիպպեն իր թողած սիգելի մեջ Բաբգենին համարում է իր որդին[1]։

Մենք աշխատության մեջ ցույց տվեցինք, որ հոր՝ Փիլիպպե 1-ինի մահվանից հետո Բաբգենը ընդհարվեց Գեղաքունիքի Գրիգոր Սուփան 1-ինի հետ տերիտորիալ տարաձայնության և գահերեցության իրավունքի պատճառով։ Նա, որ քաղաքական ու ռազմական կյանքում գործում էր դեռ՝ իր հոր կենդանության ժամանակ, նրա մահվանից հետո իրեն համարում էր գահերեց։ Բայց երկու-երեք տարվա կռիվներով լի կյանքից հետո զոհ է գնում դավադրության[2]։ Թերևս այս է պատճառը, որ Ս. Օրբելյանը Բաբգենին ոչ միայն գահերեց կոչում չի տալիս, այլ նրան ֆշխան անգամ չի անվանում։ Այս գործում, ի միջի այլոց, դեր է խաղացել և իր՝ Ս. Օրբելյանի՝ Բաբգենի նկատմամբ շափազանց վատ տրամադրված լինելը, որը բխում էր նրանից, որ Բաբգենը 851 թվին սպանեց Գրիգոր Սուփան 1-ինին[3]։ Հ. Դրասխանակերտցին նրան միայն մի տեղ անվանում է «Բաբգեն Սիսական նահապետ»[4]։ Մեր կարծիքով, Բաբգենը հոր մահվանից հետո եղել է գահերեց 2—3 տարի և զոհ գնացել դավադրության 851—852 թվերին։ Նրա իշխանությունը տարածված է եղել իր հորը պատկանող կենտրոնական գավառներում։ Նա թողել է մի տղա՝ Վահան անունով, և, հավանաբար, մի աղջիկ՝ Համասպրուհի անունով։

7. ՎԱՀԱՆ

Սրա մասին ունենք միայն Ս. Օրբելյանի մի վկայությունը։ Գրիգոր Սուփանին սպանելուց հետո Բաբգենը «փութապէս

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 206—208։

[2] Նույն տեղում, էջեր 168, 169։

[3] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 380։

[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 118։

ջնջի ի կենաց թողլով որդի մի Վահան անուն»[1]։ Թե ի՞նչ եղավ նա, ունե՞ր արդյոք ինքնուրույն կալվածքներ ու իշխանություն, ե՞րբ մահացավ, մեզ հայտնի չէ։

8. ՀԱՄԱՍՊՐՈՒՀԻ

Սրա մասին Ս. Օրբելյանն ունի միայն մի վկայություն։ Խոսելով 906 թվի նավակատիկին Տաթևի վանքին տրված նվերների մասին, գրում է. «դարձեալ և կին մի բարեպաշտօն Համասպրուհի անուն՝ դուստր Բաբգենի իշխանի, տայ նախ զայդին մեծ որ ի Հալիսից գետառին և յետոյ՝ զգիւղն իսկ զՀալիս իւր ամենայն սահմանօքն. և զրէ կտակ հաստատութեան մեծամեծ դաշամբք զի մի իշխեսցեն խախտել»[2]։ Այս Համասպրուհուն Դ. Ալիշանն իր տոհմածառում համարում է Բաբգեն 2-րդի դուստրը։ Սակայն այդ ճիշտ չէ հենց այն պատճառով, որ Բաբգեն 2-րդը 906 թվին, հավանաբար, երիտասարդ էր և չէր կարող ունենալ արդեն բարեպաշտ կին դառած դուստր։ Մեր կարծիքով, այդ Համասպրուհին Բաբգեն 1-ինի դուստրն էր, որն այն ժամանակ՝ 906 թվին, կլիներ շուրջ 60 տարեկան, և այդ հասակին, իրոք, համապատասխանում է «կին մի բարեպաշտօն» անվանումը։

9. ՎԱՍԱԿ 2-ՐԴ ԻՇԽԱՆԻԿ

(գահերեց իշխան, 851—892/3 թթ.)

Վասակ 2-րդ Իշխանիկը Փիլիպպե 1-ինի միջնակ որդին էր։ Այդ երևում է ո՛չ միայն վերև մեջբերված վկայություններից, այլև «Վասակայ որ Իշխանիկ կոչիւր, որդւոյ մեծ Փիլիպպէին»[3] վկայությունից։

Աղբյուրներում Վասակը ոչ միայն փաղաքշաբար կոչվում է «Իշխանիկ», այլ նաև «Մեծին Վասակայ Սիւնւոյ», «Մեծ իշխանն Սիւնեաց Վասակ»[4]։ Թեև ոչ մի տեղ նրան գահերեց չեն

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 297։

[2] Նույն տեղում, էջ 230։

[3] Նույն տեղում, էջ 255, տես նաև էջեր 170, 223, Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջ 110։

[4] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 170,

անվանում, բայց նրա ողջ գործունեությունը և «Մեծ իշխանն Սիւնեաց» հորջորջումը ցույց են տալիս, որ նա եղել է գահերեց։

Վասակ Իշխանիկը գահերեցության գահում հաջորդել է եղբորը՝ Բաբգեն 1-ինին 851/52 թվերին։ Հ. Դրասխանակերտցու, Ս. Օրբելյանի և Վարդան Արևելցու վկայություններից պարզ երևում է, որ Բուղայի արշավանքի ժամանակ Սյունիքի մեծ իշխանը Վասակ Իշխանիկն էր[1]։ Աշխատության մեջ նշեցինք, որ Բուղայի արշավանքից հետո կարճ ժամանակով գահերեցությունն անցավ Գեղաքունիքի իշխան Վասակ Գաբուռին, բայց գերությունից վերադառնալուց հետո Վասակ Իշխանիկն այն նորից վերցրեց իր ձեռքը։

Վասակ Իշխանիկի, ինչպես նաև նրա մոտիկ հաջորդների տիրապետության տակ գտնվում էին նույն գավառները, ինչ որ Փիլիպպե 1-ինի տիրապետության տակ։ Այդ մասին Ս. Օրբելյանի մոտ կարդում ենք. «Բուն գահ իշխանացն Սիւնեաց էր Բաղք, Վայոց ձոր և այլ շրջակայքն՝ Վասակայ և Աշոտոյ և որդւոց Աշոտոյ՝ Սմբատայ, Սահակայ և Բաբգենի և Վասակայ, և որդւոյն Վասակայ Փիլիպպէի»[2]։ Այդ բուն գահի մեջ մտնում էին նաև Սյունիքը (Ծղուկը), Ճահուկը, Հաբանդը և Շնհերը[3]։ Վասակի նստավայրը ևս Վայոց ձորն էր։ Վարդանը նրան անվանում է ուղղակի Վայոց ձորի տեր։

Վասակ Իշխանիկի մահվան մասին վկայություններ են պահպանել Հ. Դրասխանակերտցին և Ս. Օրբելյանը։ Հ. Դրասխանակերտցու շարադրանքից երևում է, որ նա մահացել է Բագրատունյաց Աշոտ 1-ինի թագավոր օծվելուց հետո[4]։ Ս. Օրբելյանը նշում է, որ 885 թվին Աշոտը թագավոր օծվեց և «Յետ

172, 175, 297, 298, տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 136, 142։

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 126 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 170, Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջ 110։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 176 177։

[3] Նույն տեղում, էջեր 197, 298։

[4] Տես Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 139—142։

այսր մեծ իշխանն Վասակ որ և Իշխանիկ կոչիւր, փոխի յաստեացս և դնի ընդ հարս իւր»[1]։ Բայց կոնկրետ ո՞ր թվին։ Այստեղ օգնության է գալիս մի այլ փաստ։ Հ. Դրասխանակերտցին վկայում է, որ Բագրատունյաց Սմբատ 1-ին թագավորի թագավորության առաջին տարիներում, հավանաբար օծման տարում, Սյունյաց «մեծ Իշխանը» փորձում է լքել Սմբատ 1-ին թագավորին և անցնել Աֆշինի կողմը[2]։ Նույն բանը հայտնում է նաև Ս. Օրբելյանը և տալիս է այդ «մեծ իշխանի» անունը՝ Վասակ[3]։ Ինչ խոսք, որ սա Վասակ Իշխանիկն է, որովհետև այդ ժամանակ ուրիշ Վասակ չկար։ Ուրեմն Վասակ Իշխանիկը կենդանի էր նաև Սմբատ 1-ինի (թագավոր է օծվել 890 թվին) առաջին տարիներում։ Ստորև կտեսնենք, որ 895 թվին գահերեց էր Աշոտը, ուստի Վասակ Իշխանիկը մահացած պետք է լիներ 890—895 թվերի արանքում, հավանաբար, 892/3 թվերին։

Վասակ Իշխանիկը թողնում է երկու որդի՝ Փիլիպպե (2-րդ) և Գրիգոր, բայց գահերեցության գահում նրան հաջորդում է ոչ թե որդիներից մեկը, այլ եղբայրը՝ Աշոտը։

10. ՓԻԼԻՊՊԵ 2-ՐԴ

(կամ կրտսեր)

Փիլիպպե 2-րդը Վասակ Իշխանիկի որդին, իսկ մեծ Փիլիպպեի (1-ինի) թոռն է։ Սրա մասին Ս. Օրբելյանն ունի հետևյալ վկայությունները. «Ի տեառն Փիլիպպէ՝ որդւոյ Վասակայ Սիւնեաց իշխանի», «Իշխանին Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, որ Իշխանիկ կոչիւր...». իր ձեռքով գրված մի վճռի (սիգելի) մեջ ինքը գրում է իր մասին. «Ես Փիլիպպէ՝ որդի տեառն Վասակայ, Սիւնեաց տեառն, ... վաճառեցի ջուրն սուրբ Գրիգորին, որ իմ պապուն տէր Փիլիպպէին շինեալ էր». «այս Փիլիպպէ որդի էր Վասակայ՝ թոռն մեծ Փիլիպպէի»։ «Եւ ապա, էր մեծ Վասակայ որդի մի Փիլիպպէ անուն»[4]։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 175։
[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 172։
[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 299։
[4] Նույն տեղում, էջեր 253, 255, 255—256, 268, 269, 298 և այլն։

Ինչպես տեսնում ենք, Փիլիպպե 2-րդին «գահերէց» կամ «մեծ իշխան» կոչումը չեն տալիս։ Այդ հասկանալի է, որովհետև սա չէ, որ հաջորդեց հորը գահերեցության գահում, այլ հորեղբայրը՝ Աշոտը։ Փիլիպպե 2-րդը, սակայն, ժառանգում է իր հոր կալվածքների մի մասը և կազմում առանձին գահակալ իշխանություն, իր հոր մահվանից (892/3 թթ.) հետո։ Նրա տիրապետության տակ էին, Ս. Օրբելյանի վկայությամբ, Հաբանդ գավառը և Շնհերը[1]։ Այսպիսով, Վասակ Իշխանիկի մահվանից հետո, ինչպես նշել ենք, գահերեցության կալվածքները ենթարկվում են տրոհման։ Փիլիպպեն իր այդ կալվածքներում, իբրև գահակալ իշխան, իշխեց մինչև իր մահը։ Մենք նրա մահվան մասին որոշակի բան չգիտենք։ Նրա մասին մեր վերջին տեղեկությունը վերաբերում է 943 թվին։ Այդ թվին նա երկու գյուղ է նվիրում վանքին ու այդ կապակցությամբ թողնում արձանագրություն[2]։

Այս Փիլիպպեն ունեցել է նաև զավակներ։ Նա ինքը Վարազակի ջուրը վաճառելու կապակցությամբ թողած գրավոր պայմանի մեջ ասում է. «Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանէս ստեմք»[3]։ Սակայն նրա զավակների մասին նույնպես ոչինչ չգիտենք։

11. ԳՐԻԳՈՐ

Սողոմոն եպիսկոպոսի 881 թվագիր սիգելում վկաների թվում Հաբանդ գավառի Խոտ գյուղի տեր է հիշվում ոմն «Գրիգոր՝ Վասակայ որդի»։ Այդ սիգելում խոսվում է Խոտի կոռավարի մասին[4]։

Մեր կարծիքով, սա Վասակ Իշխանիկի որդին է, այդ այդպես է ոչ միայն այն պատճառով, որ այդ ժամանակ ուրիշ Վասակ չգիտենք գահերեցների ճյուղում, այլև այն պատճառով, որ Խոտ գյուղը գտնվում է Հաբանդ գավառում։ Ղ. Ալիշանն ու Լորանը իրենց տոհմածառերում չեն նշել այս Գրիգորին։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298։
[2] Նույն տեղում, էջեր 269, 270։
[3] Նույն տեղում, էջ 256։
[4] Նույն տեղում, էջեր 215, 216։

12. ԱՇՈՏ

(գահերեց իշխան, 892/3—908 թթ.)

Աշոտը Փիլիպպե 1-ինի կրտսեր որդին և Վասակ Իշխանիկի եղբայրն էր։ Վերջինիս մահվանից հետո հաջորդում է նրան գահերեցության գահում։ «Եւ գահերէց իշխանին Սիւնեաց Աշոտոյ՝ եղբօր Վասակայ, որդւոյ Փիլիպպէի», «Աշոտ՝ գահերէց իշխանն Սիւնեաց». «Մեծ իշխան գահագլուխ», «Մեծ նախարարն Սիւնի և գահերէց իշխանն Աշոտ»[1]։ «... զիշխանսն Սիսական՝ զՎասակ և զեղբայր նորա զԱշոտ»[2]։ «Ապա հրոսակս առաքէ Վասակայ Սիսական իշխանի և եղբօր նորա Աշոտոյ»[3]։ «Աշոտոյ գահերէց իշխանին Սիւնեաց»[4]։ «Մեռանի և Վասակ և պայազատէ զտէրութիւն նորա Աշոտ՝ եղբայր իւր»։ «Եւ եղբայր նորին Աշոտ պայազատէ զտէրութիւն նորա»[5]։

Ինչպես տեսնում ենք, Աշոտն իր եղբորից հետո դառնում է գահերեց։ Ուստի նրա մահվան տարին՝ 892/3 թիվը, պետք է համարել սրա իշխանության սկիզբը։ Գահերեցության հետ միասին նա ժառանգում է եղբոր կալվածքները, բացառությամբ Հարանդի և Շնհերի, որոնք, ինչպես տեսանք, անցան եղբորորդի Փիլիպպե 2-րդին։ Աշոտի տիրապետության տակ էին նախկին 6 գավառներից 4-ը միայն՝ Վայոց ձորը, Բաղքը, Ճահուկը (Շահապանս) և Սյունիքը (Ծղուկը)[6]։

Աշոտի իշխանության տևողության մասին ունենք հակասական վկայություններ։ Մ. Կաղանկատուացին վկայում է, որ երբ «տաճիկն երկրորդ անգամ» (խոսքը Աֆշինի մասին է երևի — Հ. Ուր.) արշավեց Հայաստան, մեռան «մեծ հայրապետն Հայոց Գէորգ և իշխանն Սիւնեաց Աշոտ». և այդ տեղի է ունեցել «հայ թուականն էր երեքհարիւր քառասուն և վեց (=897 թ.)»[1]։ Ս. Օրբելյանն Աշոտի մահը կապում է Յուսուֆի 909 թ. արշավանքի հետ։ Նա մանրամասն նկարագրում է, որ Յուսուֆն ամիրապետի դեմ ապստամբելուց և նրա հետ հաշտվելուց հետո պատրաստվում էր գարնանը արշավել Հայաստան, և հենց նույն ձմռանը մահանում է Աշոտը։ Այդ «եղև յ358 թուականին Հայոց (909)»[2]։ Ս. Օրբելյանի այս վկայությունից պարզ երևում է, որ Աշոտը մահացել է 908 թվի վերջում, ձմռանը։ Մեր կարծիքով, ճշմարտությունը Ս. Օրբելյանի կողմն է, և ոչ թե Մ. Կաղանկատուացու։ Ահա թե ինչու։

Ինչպես գիտենք, Տաթևի Կաթողիկե եկեղեցու կառուցումը, որի գլխավոր օժանդակողներից մեկն էր Աշոտը, ավարտվեց 906 թվին և այդ թվին էլ տեղի ունեցավ նավակատիքը։ Նավակատիքին ուրիշների թվում ակտիվ մասնակցություն ուներ նաև Աշոտ գահերեց իշխանը, որը վանքին նվիրեց մի քանի գյուղեր և իր ձեռքով գրեց ու ստորագրեց Տաթևի նոր սահմանները որոշող փաստաթուղթը՝ սիգելը[3]։ Այդ փաստաթղթի վավերականությունը կասկածից դուրս է, ուստի Աշոտը 906 թվին կենդանի էր։ Ս. Օրբելյանը մեջ է բերում նաև Աշոտ գահերեցի կնոջ՝ Շուշանի 910 թվին գրած արձանագրությունը, որից երևում է, որ նրա ամուսինը՝ Աշոտը մահացած է և որ կինը նրա հոգու հիշատակին վերաշինել է տալիս Խոտակերաց վանքը[4]։ Ուշադրավ է, որ թե՛ Թովմա Արծրունին, և թե՛ Ասողիկը հիշում են, որ 897 թվին մահացել է Գևորգ կաթողիկոսը, բայց չեն հիշում Աշոտ գահերեցի մահը[5]։ Հետաքրքիր է և այն, որ Ս. Օրբելյանն Աշոտի մասին ասում է. «սա կացեալ

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 183, 184, 223, 229, 236 և այլն։

[2] Վարդան, Պատմութիւն տիեզերական, էջ 10։

[3] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 125։

[4] Նույն տեղում, էջ 226։

[5] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 297, 175, տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 142։

[6] Նույն տեղում, էջեր 176, 177, 297, 298. հիշենք, որ 9-րդ դարի վերջում և 10-րդ դարի սկզբում գահերեցներին անցան նաև Երնջակն ու Նախիջևանը։

---

[1] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 384։

[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջեր 184—186։ Հովհ. Դրասխանակերտցին վկայում է, որ Յուսուֆի արշավանքը Սյունիք տեղի է ունեցել 909 թվի գատկին։ Տես էջ 214։

[3] Նույն տեղում, էջեր 230, 231։

[4] Նույն տեղում, էջեր 236—238։

[5] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 390։ Ասողիկ, էջեր 159, 160։

բաղում աւուրս՝ մեռանի»[1]։ Եթե նա մահացած լիներ 897 թվին, իշխան պետք է լիներ 4—5 տարի, որի համար կիրառելի չէ «բաղում աւուրս» դարձվածքը։

Այս բոլորի հիման վրա կարելի է համոզված ասել, որ Աշոտ գահերեցը մահացել է ոչ թե 897 թվին, ինչպես վկայում է Մ. Կաղանկատուացին, այլ 908 թվի ձմռանը, ինչպես ճիշտ նշում է Ս. Օրբելյանը։ Մ. Կաղանկատուացին պարզապես շփոթել է Աֆշին տաճիկի 897 թվի արշավանքը, որի ժամանակ իրոք մահացավ Գևորգ կաթողիկոսը, Յուսուֆի 909 թվի արշավանքի հետ, որի նախօրյակին մահացավ Աշոտ գահերեցը։ Որ Մ. Կաղանկատուացին իսկապես շփոթել է այս երկու դեպքերը իրար հետ, երևում է իր իսկ վկայությունից։ Նա շարունակության մեջ ասում է, որ Աշոտի մահվանից քիչ ժամանակ հետո Բագրատունի Սմբատ 1-ին թագավորը «աստուածահաս պատուհասի» մատնվեց[2]։ Անշուշտ ակնարկում է Սմբատի գլխատումը Յուսուֆի ձեռքով 914 թվին։ Եթե Աշոտը մահացած լիներ 897 թվին, ապա «յետ սակաւ ժամանակի» դարձվածքը կիրառելի չէր լինի, որովհետև Սմբատը գլխատվեց 17 տարի հետո։

Աշոտ գահերեցը մահվանից հետո թողել է չորս որդի՝ «Աշոտ... մեռանի և թողու չորս որդիս՝ զՍմբատ, զՍահակ, զԲաբգեն, զՎասակ»[3]։

13. ՍՄԲԱՏ 1-ԻՆ

(գահերեց իշխան, 909—940-ական թվերը)

Սմբատ 1-ինը Աշոտ գահերեցի երեց որդին է և հաջորդը։ «Ինքն Սմբատ առեալ զգահերէց իշխանութիւնն». «յիշխանութեան Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ». «գահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ»։ Ինքն իր թողած

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 297։

[2] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, էջ 385։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 297, տես նաև էջեր 184, 185։

սիգելում գրում է. «Կամ եղև ինձ Սմբատայ իշխանի՝ որդւոյ Աշոտի»[1]։ «Իսկ գահերէց գլխաւոր իշխանն Սիւնեաց» (խոսքը Սմբատի մասին է—Հ. Ուր.)։ «Մեծ իշխանին Սիւնեաց Սմբատայ». «մեծ իշխանն Սիսական տոհմին»[2]։ Հոր մահվանից հետո, նրա հուղարկավորությանը հավաքված Բագրատունյաց թագավորը և այլք Սմբատին նշանակում են «գահագլուխ իշխան Սիւնեաց և տէր ի վերայ ամենայն Սիսական աշխարհին»[3]։ Նա գահերեց է դառնում 909 թվին։ Ինչպես տեսնում ենք, նա հորջորջվում է նաև «մեծ իշխան», «գահագլուխ իշխան»։

Սմբատը և նրա երեք եղբայրներն իրար մեջ բաժանում են հայրական ժառանգությունը, կալվածքները։ Այսպիսով, նոր տրոհման է ենթարկվում Սյունյաց գահերեցների տիրապետությունը։ Սմբատն ստանում է «զՎայոց ձոր բոլոր և զՇահապատնն որ է Ճահուկ գաւառ», իսկ Սահակը և մյուս եղբայրները ստանում են «զՍիւնիս և զԲաղս և զայլսն»[4]։ Իսկ մի այլ տեղ «Հարթ և հաւասար վայելչութեամբ կային իշխանքն Սիւնեաց Սմբատ և Սահակ, և բաժանեալ էին զհայրենի ժառանգութիւնս աշխարհին, աւադն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արևմուտս կողմն և զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժին. իսկ Սահակ՝ ընդ արևելս մինչ ի Հակարի. բայց փոքրիկն Բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի»[5]։

Ինչպես տեսնում ենք, բաժանումն անհավասար էր. մեծը մեծ բաժին էր ստացել, միջնակը՝ միջին, փոքրը՝ փոքրիկ բաժին։ Այժմ Սմբատ գահերեցի կալվածքներն են Վայոց ձորը, Ճահուկը և Սյունիքի արևմտյան մասերը։ Հավանաբար նրան էր պատկանում, առժամանակ, նաև Երնջակն ու Նախիջևանը, որոնք սակայն շուտով դուրս ընկան նրա ձեռքից։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 240, 252, 267, նաև 177, 183, 195, 199, 204, 223, 247, 268 և այլն։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 213, 237, 241, 242, 270, 294, 307 և այլն։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185։

[4] Նույն տեղում, էջ 298։

[5] Նույն տեղում, էջ 197։

Նրա գահատեղին եղել է Վայոց ձորի Եղեգիս գյուղաքաղաքը[1]։

Անհայտ է Սմբատի մահվան տարին։ Նրա գործունեությանը վերաբերող վերջին երկու փաստը որոշ կռվաններ են տալիս նրա մահվան մոտավոր թիվը որոշելու համար։ 936 թվին նա շինել է տալիս մի եկեղեցի[2]։ 930-ական թվերին մասնակցում է Տամալեկքի և Բերդի գյուղացիական շարժման ճնշմանը։ Ս. Օրբելյանի վկայությամբ 941 թվին կաթողիկոս դառած Անանիա Մոկացին գալիս է Սյունիք, Հակոբ եպիսկոպոսին հնազանդեցնելու նպատակով։ Նրան դիմավորում է Սմբատ գահերեց իշխանը։ Իսկ երբ նա երկրորդ անգամ 949 թվին գալիս է Սյունիք, նրան դիմավորում է արդեն ոչ թե Սմբատը, այլ նրա տղան և ուրիշ իշխաններ, որովհետև Սմբատն արդեն մահացել էր[3]։ Ուրեմն, Սմբատ մեծ գահերեցը մահացած պետք է լինի 941—949 թվերի արանքում։

Սմբատն ունեցել է որդիներ։ «... Ի տէրութեանն Սիւնեաց Սմբատայ և եղբարց իւրոց և որդւոց»[4]։ Սմբատի կին Սոփին Գնդեվանքի արձանագրության մեջ գրում է. «Շինեցի եկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարևշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց»[5]։ Սակայն մեզ հայտնի են նրա միայն երկու տղաները՝ Վասակը և մի ծծկեր մանուկ, որը մահացավ Դվինի բանտում 913/14 թվերին։

14. ՍԱՀԱԿ

Սահակը Աշոտ գահերեց մեծ իշխանի երկրորդ որդին[6] և Սմբատ առաջին գահերեցի եղբայրն էր։ «Յետ սակաւուց եկին և փախստականքն Սահակ՝ Սիւնեաց տէր՝ եղբայր Սմբատայ»[1]։ «Սահակայ եղբօր Սմբատայ»[2]. «Մայրն Սմբատայ... զկին եղբօր նորոն Սահակայ՝ Սիւնեաց տեառն»[3]։ «Տէրն Սիւնեաց Սահակ»[4]։

Մեջբերված փաստերից, ինչպես նաև Սահակի ամբողջ գործունեությունից պարզ երևում է, որ Սահակը գահերեցություն չի ունեցել։ Նա գործում էր իր ավագ եղբայր Սմբատ առաջինի գահերեցության ժամանակ։ Նա գահերեց չդառավ նաև եղբոր մահվանից հետո, որովհետև գահերեցությունը ժառանգեց Սմբատ առաջինի որդին՝ Վասակը։

Աղբյուրները Սահակին անվանում են «տէր Սիւնեաց»։ Այդ կոչման իրական հիմքն այն էր, որ նա լինելով գահերեց իշխանական տան երկրորդ դեմքը, հոր մահվանից հետո, հայրենական ժառանգությունից ստացել էր իր բաժինը և իշխում էր նրա վրա ինքնուրույն, իբրև գահակալ իշխան։ Մենք տեսանք արդեն, որ հայրենական ժառանգության մեծ մասը (արևմտյան մասը) բաժին ընկավ ավագ եղբորը՝ Սմբատին, իսկ Սահակին և մյուսներին՝ փոքր մասը, արևելյան մասը՝ Սյունիք, Բաղք մինչև Հակարի։ Սահակը ժառանգությունից զրկեց Բաբգեն եղբորը, իսկ նրա Վասակ եղբայրը սպանվեց կռվում, ուստի սրանց բաժին ընկած արևելյան մասում միաժամանակ իշխում էր Սահակը։ Այսպիսով, Սահակի տիրապետության տակ էր Սյունիք (Ծղուկ), Բաղք գավառները և հարակից շրջանները մինչև Հակարի։ Նշենք, որ այս Բաղքը բուն Բաղքն էր (Ս. Օրբելյանի հարկացուցակի 8-րդ գավառը) և ոչ թե «միւս Բաղք, որ անուանի Քաշունիք» (Ս. Օրբելյանի հարկացուցակի 9-րդ գավառը)։

Սահակի իշխանական շրջանի մասին ոչինչ չգիտենք։ Ունենք միայն Ս. Օրբելյանի հետևյալ ժլատ վկայությունը։ «Մեռանէր և Սահակն. դնէր ի դրան Նորատուսայ եկեղեց-

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 259, 199, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 359։
[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 259։
[3] Նույն տեղում, էջեր 275, 276։
[4] Նույն տեղում, էջ 258։
[5] Նույն տեղում, էջ 262։
[6] Նույն տեղում, էջ 297, նաև էջեր 177, 185, 223։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 193, 258։
[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 237, 259։
[3] Նույն տեղում, էջ 241, նաև էջեր 242, 297։
[4] Նույն տեղում, էջեր 332, 333, 354։

տյն»[1]։ Գիտենք միայն, որ 963 թվին գահակալ իշխանական գահում նրան հաջորդել է իր որդին՝ Սմբատ 2-րդը, որը, ինչպես կտեսնենք ստորև, դառնում է գահերեց և ապա՝ թագավոր։

15. ԲԱԲԳԵՆ 2-ՐԴ

Բաբգեն 2-րդը Աշոտ գահերեց մեծ իշխանի երրորդ որդին, Սմբատ 1-ինի և Սահակի եղբայրն էր։ «Բաբգեն կրտսեր եղբայր Սմբատայ Սիսական իշխանին»[3]։ «զՍիսական տեառնն՝ զՍահակ և զԲաբգէն»[4]։

Մենք արդեն նշեցինք, որ Բաբգենը Սահակ եղբոր հետ ժառանգություն էր ստացել արևելյան մասը, որից, սակայն, նա ուներ չնչին մաս իր իշխանության ներքո։ «Բայց փոքրիկն Բաբգէն,— վկայում է Ս. Օրբելյանը,— սակաւ ինչ ունէր մասն բաժնի»[5], որի համար նա թշնամացավ եղբոր՝ Սահակի հետ և դիմեց Նսրին (տե՛ս գլուխ 1)։ Աղբյուրները հնարավորություն չեն ընձեռում մեզ պարզելու, թե որտեղ էին ընկած Բաբգեն 2-րդի այդ փոքր ծավալի կալվածքները։ Պարզ է միայն, որ դրանք արևելյան մասում էին։ Հենց իր այդ փոքր ծավալի կալվածքների վրա էլ նա իշխում էր իբրև ինքնուրույն իշխան, որի համար էլ աղբյուրներում նա կոչվում է «տէր Սիսական»։ Սրա զավակ ունենալու մասին ոչ մի վկայություն չունենք։ Ղ. Ալիշանը, ինչպես տեսանք, սխալ կերպով սրա աղջիկն է համարել Համասպրուհուն։

16. ՎԱՍԱԿ 3-ՐԴ

Վասակ 3-րդը՝ Աշոտ գահերեց մեծ իշխանի չորրորդ և ամենակրտսեր որդին, Սմբատի, Սահակի և Բաբգենի կրտսեր եղբայրն էր[6]։ «Իսկ գեղուշէշ պատանին մանուկն Վասակ՝ եղբայր Սմբատայ»[1]։ «Տեսեալ զայն ու համազգուշն նորա՝ մանկանն Վասակայ»[2]։ «Սմբատայ եղբայրն կրտսեր Վասակ»[3]։ «Պատանի մանուկն Վասակ ևս՝ որդի Աշոտոյ գահերէց իշխանին Սիւնեաց»[4]։

Ինչպես տեսնում ենք, սա դեռ մանուկ էր և շատ երիտասարդ հասակում էլ սպանվեց Դողթանի էմիրի դեմ մղվող կռվում, 920-ական թվերի սկզբին։ Թերևս այդ էր պատճառը, որ հայրենի ժառանգությունը եղբայրների (Սմբատի, Սահակի, Բաբգենի) միջև բաժանելիս սրան առանձին բաժին չի հասնում։ Թվում է, թե նրան հասանելիք կալվածքը Սահակի և Բաբգենի բաժնի մեջ էր։ Աղբյուրներում ոչ մի տեղ Վասակին «տէր», «իշխան» չեն անվանում, այդ հասկանալի է, որովհետև նա չուներ իր առանձին կալվածքը, առանձին իշխանությունը։

17. Ա. Ա.

Սմբատ 1-ինի փոքրիկ տղան, որը Յուսուֆի արշավանքի (909 թ.) ժամանակ ծծկեր երեխա էր և մոր՝ Սոփիի հետ գրտնվում էր Երնջակի բերդում։ Այդ բերդի անկումից հետո Սյունյաց տիկինների հետ միասին գերեվարվեց և տարվեց Դվին և Դվինի բանտում էլ մահացավ[5]։ Լորանն իր տոհմածառում չի հիշում այս երեխային։

18. ՎԱՍԱԿ 4-ՐԴ

(գահերեց իշխան, ?—?)

Վասակ 4-րդը Սմբատ 1-ին գահերեց իշխանի որդին և հաջորդն էր։ «Իսկ երջանիկ և փառաւորեալ իշխանն Սմբատ... փոխի յաստիացս... և թողու զաւակ ժառանգութեան իւրոյ

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298։

2 Նույն տեղում, էջ 297, նաև էջեր 177, 185, 223, 193, 197, 198, 199, տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 297։

3 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 332, նաև էջեր 333, 359։

4 Նույն տեղում, էջ 354։

5 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 197։

6 Նույն տեղում, էջեր 177, 185, 193, 297։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185։

2 Նույն տեղում, էջեր 186, 187։

3 Նույն տեղում, էջ 298։

4 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 226, նաև 308։

5 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 185, 191, 192, Հովհ. Դրասխանակերտցի, էջեր 241, 242։

դարի վհանճարեղ իշխանն Վասակ»[1]։ «Ինքն Սմբատ... վախճանի և թողու ժառանգ իւրոյ պայազատ տէրութեան զորդի իւր Վասակ»[2]։ «Նմանապէս և եկեալ գահերէց իշխանն Սիւնեաց Վասակ՝ որդի Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ»[3]։

Ինչպես տեսնում ենք, Սմբատ 1-ին գահերեցի մահվանից հետո, թեև կենդանի էին նրա Սահակ և Բաբգեն եղբայրները, բայց գահերեցության գահում նրան հաջորդում է որդին՝ Վասակը։ Հասկանալի է, որ դրա հետ միասին Վասակը ժառանգեց նաև հայրական կալվածքները՝ իր հորը բաժին հասած արևմտյան մասը։ Այժմ սրա ձեռքում փաստորեն մնացել էին Վայոց ձոր ու Ճահուկ գավառները։

Սրա իշխանության շրջանը դժվար է որոշակիորեն ցույց տալ։ Ինչպես նշեցինք, նրա հայրը, Սմբատ 1-ին գահերեցը, մահացավ 941—949 թվերի արանքում, հենց այդ ժամանակ էլ սա դառավ գահերեց։ Երբ 958 թվին Անանիա կաթողիկոսն երրորդ անգամ եկավ Սյունիք, նրա մոտ մեղայի է գալիս նաև այս Վասակ գահերեցը[4]։ Մահվան մասին ունենք մի ժլատ վկայություն՝ «Իսկ Վասակ՝ որդի Սմբատայ, յետ բազում իշխանութեանց և գովելի գործոց մեռանի»[5]։ Հավանաբար մահացել է 960-ական թվերին։ Վասակ գահերեցն ունեցել է երկու որդի՝ Սմբատ և Գագիկ[6]։

19. ՍՄԲԱՏ 2-ՐԴ

(գահերեց իշխան և ապա բագավոր)

Սմբատ 2-րդը Սմբատ 1-ինի եղբայր Սահակի որդին էր։ «Իսկ Սահակայ՝ եղբօր Սմբատայ, էր որդի Սմբատ անուն»[7]։ Նա հաջորդում է իր հորը գահակալ իշխանության գահում.

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 200, 201։

2 Նույն տեղում, էջ 298։

3 Նույն տեղում, էջ 284։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 299։

6 Տես նույն տեղում, էջ 329։

7 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298։

«Մեռանի Սահակ և առնու զիշխանութիւնն իւր Սմբատ՝ որդի իւր»[1]։ «Աստուածասէր տէր Սմբատ՝ Սիւնեաց իշխան, որդի Սահակայ՝ որդւոյ Աշոտոյ և եղբայր մեծ Սմբատայ»[2]։ Իր թողած սիգելում գրում է՝ «Ես Սմբատ՝ որդի տեառն Սահակայ»[3]։ Հասկանալի է, որ նա ժառանգեց նաև իր հոր կալվածքները՝ Ծղուկը (Սյունիք), Բաղքը մինչև Հակարի և իշխել է իբրև գահակալ իշխան։

Թե ե՞րբ է Սմբատ 2-րդը հաջորդել իր հորը՝ Սահակին, չգիտենք։ Գիտենք միայն, որ 963 թվին նա արդեն հիշվում է որպես իշխան։ Նա այդ թվին երկու գյուղ է նվիրում Տաթևի վանքին և այդ կապակցությամբ թողնում մի սիգել[4]։ Որոշ ժամանակ անց, երբ մահանում է Սմբատ 1-ին գահերեցի որդի՝ Վասակ գահերեց իշխանը, իր հորեղբոր տղան, նա՝ Սմբատ 2-րդը, ողջ Սյունիքը համախմբում է իր տիրապետության տակ ու դառնում գահերեց իշխան. «... և տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ»[5]։ Գահերեցությունը Վայոց ձորից անցնում է Բաղք։ Թե ե՞րբ է եղել այս տեղաշարժը, նույնպես կոնկրետ չգիտենք. գիտենք միայն, որ այդ եղել է 963 թվից հետո։ Սմբատ 2-րդը չի սահմանափակվել նաև գահերեց դառնալով։ Շուտով, ավելի ամրացնելով իր դիրքերը, իրեն հայտարարում է թագավոր և հիմնադրում է «Սյունյաց-Բաղաց» թագավորությունը[6]։

Այստեղ մենք ընդհատում ենք գահերեց ճյուղի տոհմածառի մեր վերլուծումը, որովհետև շարունակությունը մեր նյութի մեջ չի մտնում։ Գահերեց իշխանների մեր նշած հաջորդականության ընդհանուր ճշտությունը հաստատում է Ս. Օրբելյանի մի սեղմ վկայությունը ևս[7]։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298։

2 Նույն տեղում, էջ 288։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 299։

6 Նույն տեղում, էջեր 291, 300, 301։

7 Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 317։

ԵՐԿՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԳԵՂԱՔՈՒՆՅԱՑ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Գահակալ իշխանների այս ճյուղը, ինչպես տեսանք, անջատվեց (821 թ.) գահերեց իշխանների ընտանիքից։ Այս ճյուղի առաջին իշխանը Սահակն է, բայց, ըստ համարակարգի, սխեմայում մենք նրան համարում ենք երկրորդը՝ Վասակ մեծ նահապետից հետո։

2. ՍԱՀԱԿ

(գահակալ իշխան, 821—831/2 թթ.)

Սահակ գահակալ իշխանը Վասակ մեծ նահապետի որդին էր։ «Յետ Վասակայ բաժանեն զհայրենի ժառանգութիւն իւրեանց երկու որդիքն՝ Փիլիպպէ և Սահակ»[1]։ «Եւ առնու Սահակ բաժին զգաւառն Գեղամայ բոլոր»[2]։ Բաժանվելով գահերեցների ճյուղից, Սահակը հիմնադրում է Գեղաքունյաց առանձին իշխանական ճյուղը, որի կալվածքներն էին Սևանա լճի շուրջ բոլորքն ընկած գավառները։

Աղբյուրներում Սահակին անվանում են՝ «իշխան Սիւնեաց մեծ նահապետն Սահակ»[3], «Սահակայ՝ Սիւնեաց տեառն», «զգեղեցկադիտակ իշխանն Սիւնի Սահակ»[4], «Սիւնեաց տէր»[5]։

Ինչպես ցույց ենք տվել աշխատության մեջ, չնայած Սահակը գահերեց չէր, բայց ուժեղ ու հեղինակավոր իշխան էր։ Նրա իշխանության սկիզբը և, ընդհանրապես, Գեղաքունի իշխանական տան տիրապետության սկիզբը պետք է համարել 821 թիվը։ Նա սպանվեց 831/32 թվերին, Կավակերտի ճակատամարտում՝ Հոլի դեմ բարձրացված ապստամբության ժամանակ[6]։

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 296։
2 Նույն տեղում, էջ 297։
3 Նույն տեղում, էջ 166։
4 Նույն տեղում, էջ 167։
5 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 113, 114, 115։
6 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 167, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 114։

Սահակն ունեցել է երեք տղա՝ Գրիգոր Սուփան, Հրահատ և Գագիկ։ Ալիշանն իր տոհմածառում Հրահատի փոխարեն նշում է Արոման, որն ակներևաբար սխալ է։ Սկզբնաղբյուրներից չի երևում, որ Սահակն Արոման անունով տղա է ունեցել։ Ավելի հեռու է գնում Լորանը. նա իր տոհմածառում, բացի մեր նշած երեք տղաներից, իբրև Սահակի տղաներ նշում է նաև Ջևանշեր, Արոման, Գրիգոր, Ատրներսեհ անուններով այլ որդիների։ Սահակի ժառանգներին վերաբերող սկզբնաղբյուրների վկայություններով չեն հաստատվում Լորանի, ինչպես նաև Ղ. Ալիշանի կարծիքները։ Ստորև ամեն մի կոնկրետ դեպքում ցույց կտանք նրանց սխալներն ու դրանց հիմքը։

3. ԳՐԻԳՈՐ ՍՈՒՓԱՆ 1-ԻՆ

(գահակալ իշխան, 831/32—851 թթ.)

Գրիգոր Սուփան 1-ինը Սահակի ավագ որդին և հաջորդն էր գահակալական գահում. «Յետ սակաւուց մեռանի և Սահակ... մերձ Կաւակերտոյ ատանին. և թողու ժառանգ ինքեան զԳրիգոր՝ որդի իւր Սուփան կոչեալ»[1]։ «Իսկ զկնի սորա (Սահակի—Հ. Ուր.) պայազատէ զիշխանութիւն սորա որդին իւր Գրիգոր որ փաղաքշական անուամբ Սուփան յորջյորջիւր»[2]. «և միւս Գրիգորոյ՝ որդւոյ Սահակայ, որ Սուփան յորջյորջիւր... առաջին Սուփանն»[3]. «և Գրիգորի Սուփանայ՝ մեծ նահապետին Սիւնեաց, որդւոյ Սահակայ»[4]։ «Մեծին Սուփանայ Սիւնւոյ»[5]։

«Իսկ զկնի Սահակայ պայազատէ զտէրութիւնն զայն Գրիգոր որդի նորուն, որ փաղաքշական անուամբ Սուփան անուանիւր»[6]։ «Գրիգոր Սիւնեաց տէր, որ Սուփանն յորջյորջիւր»[7]։

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 297։
2 Նույն տեղում, էջ 167։
3 Նույն տեղում, էջ 204։
4 Նույն տեղում, էջ 162։
5 Նույն տեղում, էջ 168։
6 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 115։
7 Նույն տեղում, էջ 118, նաև 116։

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Սուփան 1-ինն անվանվում է «Սիւնեաց տէր» և «մեծ նահապետ Սիւնեաց»։ Այս հորջորջումների իմաստն այն է, որ Գրիգորը Գեղաքունիքի գահակալ իշխանն էր։ Գեղաքունիքը լայնածավալ գավառ էր և, անշուշտ, բացի այս իշխող գահակալ իշխաններից, կարող էին լինել նաև այլ իշխաններ, որոնք վասալային հպատակությամբ կապված էին այս գահակալ իշխանների հետ։ Մենք վեր ենք լուծում միայն գահակալ իշխանների տունը։

Գրիգոր Սուփանը ժառանգեց, հարկավ, իր հոր կալվածքները՝ Գեղաքունին։ Այդ մասին ունենք Ս. Օրբելյանի մի ուղղակի վկայությունը՝ «ունէր զԳեղաքունի»[1]։ Սրա անձնամոռության և գործունեության մասին Ս. Օրբելյանը խոսում է մեծ գովեստով[2]։

Գրիգոր Սուփան 1-ինը գահակալ իշխան է դառնում 831/32 թվերին, հոր սպանությունից հետո, և սպանվում Վայոց ձորում 851 թվին[3]։ Ուրեմն նա իշխել է 831/32 թվից մինչև 851 թիվը։

Գրիգոր Սուփան 1-ինը թողնում է երկու որդի՝ Վասակ Գաբուռ և Հրահատ։ Ղ. Ալիշանն իր տոհմածառում, բացի այս երկուսից, նշում է նաև Գագիկ և Հրահատ անունները։ Ըստ նրա ստացվում է չորս տղա, ընդ որում նրանցից երկուսի անունն էլ Հրահատ է։ Ղ. Ալիշանը սխալվում է։

4. ՀՐԱՀԱՏ ԵՎ ԳԱԳԻԿ

Սրանք Սահակ գահակալ իշխանի որդիներն են, Գրիգոր Սուփան 1-ինի եղբայրները։ Այդ մասին ունենք Ս. Օրբելյանի մի ուղղակի վկայությունը։ Նա նշում է, որ Գրիգոր Սուփան 1-ինի մահվանից հետո մնացին ոչ միայն նրա երկու որդիները՝ Վասակ Գաբուռն ու Հրահատը, այլ նաև նրա երկու եղբայրները՝ Հրահատն ու Գագիկը։ Ահա այդ վկայությունը՝ «Գրիգոր թողեալ երկուս որդիս զՎասակ, որ Գաբուռ կոչիւր, և զՀրահատ։ Բայց էին և նորա երկու եղբարք՝ Հրահատ և Գագիկ»[1]։

Մենք այս Հրահատին հանդիպում ենք մի այլ տեղ ևս։ Տաթևի Դավիթ եպիսկոպոսի Արծիվ գյուղի գնման կապակցությամբ 839 թվին գրած կտակում, վկաների ցուցակում, հիշվում է նաև՝ «զվկայութեամբ... և տեառն Հրահատայ՝ տեառն Սահակայ որդւոյ»[2]։ Մեր կարծիքով, այս Հրահատը Գրիգոր Սուփան 1-ինի եղբայր Հրահատն է, Սահակ իշխանի միջնակ որդին։ Մի այլ տեղ էլ հանդիպում ենք Գագիկին։ Տիկին Մարիամը 874 թ. կառուցում է Շողուագա սուրբ Առաքյալի եկեղեցին և գնում է Շողուագ ու Գներ (Մազազ գավառում) գյուղերը և նվիրում եկեղեցուն. այդ կապակցությամբ «հաստատէ արձան անջինջ յիշատակի առաջի Գեորգեայ կաթողիկոսի և Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի և Գագկայ՝ Սիւնեաց տեառն և Հրահատայ՝ եղբօր Վասակայ...»[3]։ Մեր կարծիքով, այս Գագիկը հենց Գրիգոր Սուփան 1-ինի եղբայր Գագիկն է, Սահակ իշխանի կրտսեր տղան։ Այդ երևում է նրանից, որ, նախ՝ թե Գներ գյուղը, և թե Շողուագ գյուղն ու եկեղեցին Գեղաքունիքում էին և երկրորդ՝ Մարիամը Գեղաքունիքի իշխան Վասակ Գաբուռի կինն էր, որն ամուսնու մահվանից հետո կատարեց վերոհիշյալ կառուցումն ու նվիրատվությունը։ Հասկանալի է, որ իբրև վկաներ նա կոչելու էր Գեղաքունիքի իշխաններին, և իրոք, իբրև վկաներ հիշում է իր ամուսնու եղբայր Հրահատին (տե՛ս ստորև) և ամուսնու հորեղբայր Գագիկին (տե՛ս սխեման)։ Ժամանակի տեսակետից էլ այս Գագիկը համապատասխանում է մեր ասածին։ Գագիկը Սահակի կրտսեր որդին էր։ Եթե ընդունենք անգամ, որ Սահակի սպանության ժամանակ (831/32 թթ.) Գագիկը 15 տարեկան էր, ապա այժմ՝ 874 թվին, նա կլիներ 56—57 տարեկան։

Մենք ասացինք, որ Ղ. Ալիշանը իբրև Սահակի որդիներ նշում է Գրիգոր Սուփան 1-ինին, Գագիկին և Արոմանին, այ-

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 204։
2 Նույն տեղում, էջեր 167, 168։
3 Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջեր 379, 380։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 207։
2 Նույն տեղում, էջ 205։
3 Նույն տեղում, էջեր 174, 175։

սինքն նա՝ Հրահատը փոխարինում է Արումանով։ Նա պարզապես զանց է առնում Ս. Օրբելյանի վերոհիշյալ ուղղակի վկայությունն այն մասին, որ Գրիգոր Սուփան 1-ինի մահվանից հետո մնացել էին նրա եղբայրներ Հրահատն ու Գագիկը։ Ս. Օրբելյանն իր պատմության 207 և 208 էջերում հիշում է ոմն Արուման, բայց ստորև կտեսնենք, որ այդ Արումանը բոլորովին ուրիշ անձնավորություն է, ոչ մի կապ չունի Գեղարքունիքի հետ։ Ղ. Ալիշանին շփոթության մեջ է գցել այն հանգամանքը, որ այդ Արումանի հոր անունը Սահակ է։ Ավելին, Ղ. Ալիշանի հիշած Գագիկը ևս Ս. Օրբելյանի վերոհիշյալ վկայության մեջ եղած Գագիկը չէ, սխալ նույնացում է։

Ինչպես տեսանք, Սահակի մահվանից հետո գահակալական գահում նրան հաջորդեց ավագ որդին՝ Գրիգոր Սուփան 1-ինը։ Նրա մյուս որդիները, Հրահատն ու Գագիկը Գեղարքունիքի գահակալներ չդառան։ Չի բացառված, որ սրանք ունեցել են իրենց սեփական կալվածքները և իշխել նրանց վրա իբրև առանձին իշխաններ՝ ավելի փոքր դիրքով և իշխանությամբ։

5. ՎԱՍԱԿ ԳԱԲՈՒՐ

(գահակալ իշխան, 851—859 թթ.)

Վասակ Գաբուրը Գրիգոր Սուփան 1-ինի որդին և հաջորդն էր գահակալական գահում։ «Գրիգոր թողեալ երկուս որդիս զՎասակ, որ Գաբուր կոչիւր, և զՀրահատ»[1]։ «Վասակ Գաբուր՝ որդի Գրիգոր Սուփանայ»[2]։ «Եւ պայազատէ զտէրութիւն նորա Վասակ՝ որդի իւր, որ ըստ գգուանաց փաղաքշականին, Գաբուր կոչիւր»[3]։

Ուրեմն Գրիգոր Սուփան 1-ինին հաջորդել է իր ավագ որդին, Վասակ Գաբուրը, թեև դեռ կենդանի էին նրա երկու եղբայրները՝ Հրահատն ու Գագիկը։ Ինչպես գիտենք, այս Վասակ Գաբուրը փեսայանում է Բագրատունիներին։

Վասակ Գաբուրը ժառանգում է իր հոր ողջ տերությունը,

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 297։
[2] Նույն տեղում, էջ 298։
[3] Նույն տեղում, էջ 169, նաև 172, 173, 174, 297, Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 118, 135։

կալվածքները՝ Գեղամա ծովի շուրջն ընկած գավառները[1]։ Վասակ Գաբուրի իշխանության առաջին տարին պետք է համարել հոր սպանության տարին, 851 թիվը։ Մահվան մասին ունենք հետևյալ վկայությունները. «Իշխանն Սիսական՝ Վասակ, որ Գաբուրն փաղաքշաբար անուանիւր՝ յայսմ ժամանակի վախճանեալ և եդեալ ի շիրիմս հարց իւրոց»[2]։ «Իշխանն Սիւնի Վասակ Գաբուր՝ տղայ հասակաւ յերիտասարդութեան տիս վախճանի»[3]։

Ինչպես երևում է, նա մահացել է բոլորովին երիտասարդ հասակում։ Մահվան կոնկրետ թիվը չեն տալիս ո՛չ Հ. Դրասխանակերտցին, և ո՛չ էլ Ս. Օրբելյանը, բայց նրանց նկարագրությունից երևում է, որ նա մահացել է Բուղայի արշավանքից հետո, Բագրատունի Աշոտ իշխանաց իշխանի իշխանության սկզբում, երբ Բուղայի կողմից դերեվարված իշխաններն ազատվում ու գալիս են Հայաստան։ Վերադարձել էր արդեն Սյունյաց գահերից Վասակ Իշխանիկը իր մոր և եղբոր, Աշոտի հետ միասին[4]։ Մ. Կաղանկատուացին վկայում է, որ Վասակ Գաբուրը մահացել է Բուղայի արշավանքից չորս տարի հետո[5]։ Բուղայի արշավանքը, ինչպես հայտնի է, վերջացավ 855 թվին, հետևապես Վասակ Գաբուրը մահացել է 859 թվին։

Վասակ Գաբուրը թողել է երեք որդի՝ Գրիգոր, որը նույնպես ունի Սուփան մականունը, Սահակ և Վասակ։

6. ՀՐԱՀԱՏ 2-ՐԴ

Հրահատ 2-րդը Գրիգոր Սուփան 1-ինի կրտսեր որդին և Վասակ Գաբուրի եղբայրն էր։ «Գրիգոր թողեալ երկուս որդիս զՎասակ... և զՀրահատ»[6]։ Ինչպես վերևում տեսանք, Վասակ

[1] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 176։
[2] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 136։
[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 172։
[4] Տես Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 134—136։ Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 172։
[5] Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 380։
[6] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 297։

Գաբուռի կին Մարիամի սիգելում վկաների շարքում թվում է «և Հրահատայ՝ եղբօր Վասակայ»[1]։ Մենք վերևում ասացինք, որ Մարիամը իբրև վկա հիշել է իր ամուսնու եղբորը՝ Հրահատին։

Սրա առանձին կալվածքներ ունենալու մասին ոչ մի վկայություն չունենք։

7. ԳՐԻԳՈՐ ՍՈՒՓԱՆ 2-ՐԴ

(գահակալ իշխան, 859—912/13 թթ.)

Գրիգոր Սուփան 2-րդը Վասակ Գաբուռի ավագ որդին էր։ «Իշխան Սիւնի Վասակ Գաբուռ... վախճանի. և թողու երիս որդիս, որոց երէցն՝ Գրիգոր որ և Սուփան կոչեցաւ»[2]։ Վասակ Գաբուռից հետո նրան հաջորդում է այս երեք որդին. «Եւ պայազատէ զտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր Սուփան»[3]։ Հ. Դրասխանակերտցին ևս վկայում է, որ Վասակ Գաբուռից հետո «պայազատէ զհայրենի տէրութիւնն, Գրիգոր որդի նորա, որ Սուփանն յորջյորջէր»[4]։ Իր թողած արձանագրության մեջ նա իր մասին գրում է. «Ես Սուփան՝ Սիւնեաց իշխան»[5]։ «... Գրիգորի՝ Սիւնեաց տեառն»[6]։ Ս. Օրբելյանի մոտ նաև ուրիշ շատ տեղերում հիշվում է ուղղակի Գրիգոր Սուփան ձևով[7]։

Եվ այսպես, Գեղաքունիքի գահակալական գահում Վասակ Գաբուռին հաջորդել է իր ավագ որդին, Գրիգոր Սուփան 2-րդը։ Նա գործել է իր մյուս եղբայրների, Սահակի և Վասակի հետ միասին, բայց միշտ իշխանական առաջնորդությունը պահել է իր ձեռքում։ Նրանք համարվել են միայն «կուսակալք»[8]։

Նա իր եղբայրների հետ միասին ժառանգել է ողջ հայրա-

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 175։
2 Նույն տեղում, էջ 172, նաև 298։
3 Նույն տեղում, էջ 133, նաև 298։
4 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 136։
5 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 179, նաև 236։
6 Նույն տեղում, էջ 159, նաև 189։
7 Նույն տեղում, էջեր 175, 176, 177, 186—187, 223, 231 և այլն։
8 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 298։

կան ժառանգությունը։ Նրանց կալվածքների մասին աղբյուրներում կարդում ենք՝ «Իշխանն Գրիգոր և նորին եղբարք՝ Սահակ և Վասակ, որք հայրենական սեպհականութեամբ տիրէին գաւառացն, որք շրջապատեալ կան շուրջ զեղերը ծովակին Գեղամայ»[1]։ Նույնը վկայում է նաև Ս. Օրբելյանը[2]։ Ինչպես տեսնում ենք, Գրիգորի և իր եղբայրների կալվածքները, տիրապետությունը կազմում էին Սևանա լիճը շրջապատող գավառները։ Ուստի Գեղաքունի գավառի անվան տակ պիտի հասկանալ լիճը շրջապատող բոլոր գավառները։

Գրիգոր Սուփան 2-րդի իշխանության սկիզբը պետք է համարել հոր մահվան առաջին տարին, այն է՝ 859 թիվը, իսկ նրա մահը տեղի ունեցավ Յուսուֆի արշավանքի ժամանակ։ Յուսուֆը նրան թունավորեց Նիգ գավառի ճակատամարտից հետո, հավանաբար, 912/13 թվերին։ «Դեղրմպութեամբ մահու ողողեալ զորովայն նորա»[3]։

Հ. Դրասխանակերտցու վկայությամբ Գրիգոր Սուփան 2-րդը զավակ չի ունեցել։ Նա նրա մասին գրում է. «մանկազուտ իշխան Գրիգոր»[4]։ Բայց Թովմա Արծրունուց գիտենք, որ նա Աշոտ անունով մի տղա է ունեցել։ Ղ. Ալիշանն իր տոհմածառում, անհիմն կերպով, Գրիգոր Սուփան 2-րդին վերագրում է Սահակ անունով մի որդի ևս, որը ճիշտ չէ, և սկզբնաղբյուրներով չի հաստատվում։

3. ԱՇՈՏ

Աշոտը Գրիգոր Սուփան 2-րդի որդին էր։ Սրա մասին մի վկայություն ունի միայն Թովմա Արծրունին։ Նա, խոսելով Թուխ գետի ճակատամարտում սպանվածների մասին, նրանց թվում հիշում է նաև «Աշոտ Հայկազնեաց Գեղաքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր»[5]։ Թուխ գետի ճակատա-

1 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 199։
2 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 176, 223։
3 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 224, նաև 228, 229, 214 և 225, տես նաև Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 186, 187, 188, 298։
4 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 294։
5 Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 382։

մարտը տեղի ունեցավ Սմբատ 1-ին թագավորի ժամանակ, 9-րդ դարի վերջում։ Այդ ժամանակ Գեղաքունիքի գահակալ իշխանն էր Գրիգոր Սուփան 2-րդը. ուստի անկասկած է, որ Աշոտը նրա որդին էր։

9. ՍԱՀԱԿ ԵՎ ՎԱՍԱԿ

Սահակը և Վասակը Վասակ Գաբուռի միջնակ և կրտսեր որդիները և Գրիգոր Սուփան 2-րդի եղբայրներն էին։ «Իշխանն Սիւնի Վասակ Գաբուռ... վախճանի... և թողու երիս որդիս, որոց երէց՝ Գրիգոր որ և սա Սուփան կոչեցաւ, և Սահակ և Վասակ»[1]։ «Իսկ եղբայր Գրիգորի Սահակ»[2]։ «Վասակ՝ եղբայր Գրիգորոյ Սուփանայ»[3]։

Իրենց հոր, Վասակ Գաբուռի մահվան ժամանակ, հավանաբար, սրանք երեխաներ էին. ուստի նրանք ապրել ու գործել են իրենց գահակալ եղբոր, Գրիգոր Սուփան 2-րդի հովանուտակ, միասին ժառանգելով հայրենական ժառանգությունը։

Այս Սահակն ու Վասակը Յուսուֆի արշավանքի ժամանակ հալածվեցին ֆրենց երկրից։ Եվ երբ Գրիգոր Սուփան 2-րդի սպանությունից հետո վերադարձան իրենց հայրենի կալվածքները, Գեղաքունիքի գահակալությունը Աշոտ Երկաթից ստացավ Վասակը, ինչպես այդ, հակառակ Դ. Ալիշանի կարծիքի, ցույց ենք տվել աշխատության մեջ։

Նրանք միասին տիրում են Գեղաքունիքում. «բայց և Հայկազուն ևս եղբարքն Սահակ և Վասակ՝ բնաբար կուսակալք գաւառացն որ շուրջ զեղերք Ծովակին Գեղամայ, յայսմ ի սոյն աւուրս եկեալք ի հեռաստանէ հալածանացն՝ տիրէին պայազատեալք զաշխարհս տէրութեան ֆրեանց»[4]։ Եվ էլի՝

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 172, նաև 298։

[2] Նույն տեղում, էջ 181, նաև 189, 194 և այլն։ Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 199, 229, 297, 298 և այլն։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193 նաև 189, 194 և այլն։ Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 199, 229, 294 և այլն։

[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 298։

«Իշխանն Սիւնեաց Սահակ որ սեպհականաբար պայազատէր զգաւառսն առ ծովեզերբն Գեղամայ»[1]։ «Վասակ, որ սեպհականաբար պայազատէր զտէրութիւն Գեղարքունւոյ»[2]։

Այս վկայությունները ցույց են տալիս, որ թեև Սահակն ու Վասակը միասին տիրում էին ողջ Գեղաքունի գավառին, բայց իշխանական առաջնությունը պատկանում էր Վասակին։ Սահակը տիրում էր ծովեզերքի գավառներին, ֆսկ Վասակը՝ ողջ «Գեղարքունւոյ տէրութեան»։ Սահակը վերադարձից հետո «սակաւ ինչ կեցեալ վախճանի»[3], թողնելով «ուստր մի մանկիկ տղայ փոխանորդ»[4]։ Քիչ անց նաև Վասակը զրկվում է իշխանությունից՝ Բագրատունի Աշոտ Երկաթի կամքով, և Գեղաքունին դրավվում է հարքունիս։ Վերջանում է Գեղաքունիքի գահակալական իշխանության իշխանների ճյուղը։

ԵՐՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՒՆԸ

Մենք արդեն նշել ենք, որ Վասակ մեծ նահապետի ժամանակ, 9-րդ դարի առաջին կեսին, կար նաև Սյունյաց մի այլ իշխան՝ Գրիգոր անունով, որով սկսվում է գահակալ իշխանների երրորդ ճյուղը։

1. ԳՐԻԳՈՐ

Հարկ ենք համարում մեջ բերել այս Գրիգորի մասին եղած վկայությունները.

1. Իր պատմության «Համառօտ զրոյցք եւ կարդ իշխանացն Սիւնեաց...» խորագիրը կրող գլխում Ս. Օրբելյանը խոսելով այն մասին, որ 9-րդ դարի սկզբներում առաջին գահակալ իշխանն էր Վասակ մեծ նահապետը և ապա նրա որ-

[1] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 301։

[2] Նույն տեղում, էջ 305։ Տես նաև Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 195։

[3] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 194։ Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 301։

[4] Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305, նաև 301։

դիներ՝ Փիլիպպեն ու Սահակը, ավելացնում է՝ «Եվ միւս իշխանն Գրիգոր ի նոյն ցեղէ, որ ունէր մասնաւոր ժառանգութիւն ի սեպհական հայրենեացն»[1]։ Ինչպես տեսնում ենք, այս Գրիգորը կապ չունի Վասակ մեծ նահապետի և նրա որդիներ Փիլիպպեով ու Սահակով սկսվող իշխանական ճյուղերի հետ։ Նա ունեցել է իր մասնավոր ժառանգությունը, ստացած իր սեփական նախնիներից։ Ս. Օրբելյանը հիշյալ գլխում այլևս չի անդրադառնում այս Գրիգորին, չի խոսում նրա ժառանգ ունենալու կամ չունենալու մասին, նրա տիրապետության վայրի մասին։

2. Ս. Օրբելյանը վկայում է, որ Սյունյաց եպիսկոպոս Դավիթը եպիսկոպոս էր «Յաւուրս Գրիգորոյ՝ Սիւնեաց գահերէց իշխանի, և միւս Գրիգորոյ՝ որդւոյ Սահակայ, որ Սուփան յորջորջիւր, որ զԳեղաքունի ունէր, առաջին Սուփանն, և աստուածապահ տեառն Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, նահապետի բոլոր ազգին Սիսականաց»[2]։

Արդեն գիտենք, որ Դավիթը եպիսկոպոս էր 836—853 թվերին, Գրիգոր Սուփան 1-ինը՝ 831/2—851 թվերին, Փիլիպպե 1-ինը՝ 821—844 թվերին։ Ահա սրանց ժամանակակից է եղել և կամ 821—851 թվերի ընթացքում ապրել ու գործել է «Գրիգոր՝ Սիւնեաց գահերէց» իշխանը, որն ուրիշ ոչ ոք չէ, եթե ոչ վերոհիշյալ Գրիգորը, որն ուներ «մասնաւոր ժառանգութիւն ի սեպհական հայրենեացն»։

3. Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելի վկաների ցուցակի մեջ կարդում ենք. «և վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւնեաց տէր, տէր, Ատրներսեհ՝ Վասակայ որդի, ...տէր Գրիգոր՝ Սահակայ որդի...» և այլն[3]։

Այստեղ նույնպես նշվում է իրար ժամանակակից երկու Գրիգոր, որոնցից առաջինը վերոհիշյալ մեր ասած Գրիգորն է, իսկ երկրորդը՝ Գրիգոր Սուփան 1-ինը։ Այս փաստերը կասկածի տեղ չեն թողնում մեր ուսումնասիրության ենթակա Գրիգորի, իբրև առանձին, գահերեցների և Գեղաքունյան ճյուղերի հետ կապ չունեցող իշխանի գոյության մասին։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 296։
[2] Նույն տեղում, էջ 204։
[3] Նույն տեղում, էջ 207։

Վերոհիշյալ վկայություններում այս Գրիգորն անվանվում է «իշխան», այնուհետև՝ «գահերէց իշխան», «Սիւնեաց տէր»։ Ուշադրավ է գահերեց կոչումը։ Մենք գիտենք, որ գահերեցների ճյուղը Փիլիպպե 1-ինի ճյուղն էր։ Արդ, արդյո՞ք բացի այդ ճյուղից Սյունիքում գահերեցություն ուներ նաև Գրիգորը, թե՞ մի առժամանակ գահերեցությունն անցել էր այս Գրիգորին։ Այս հարցը մնում է բաց, առայժմ փաստերը հնարավորություն չեն ընձեռում պարզաբանելու այն։ Կարելի է միայն ասել, որ ֆեոդալական խոշոր մի քանի տների առկայության դեպքում ենթադրելի է նրանց միջև մրցակցություն՝ գահերեցության համար։

Փաստական նյութի պակասության պատճառով հնարավոր չէ պարզել նաև Գրիգոր իշխանի տիրապետության վայրը։

Ի՞նչ եղավ այս Գրիգորը։ Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք Թովմա Արծրունու մոտ։ Վերջինս Բուղայի կողմից գերեվարված իշխանների թվում հիշում է Սյունյաց երեք իշխան, որոնք են՝ «Գրիգոր Սիւնեաց տէր, ... և իշխանական Վասակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց...»[1]։

Այստեղ հիշված Վասակը Վասակ Իշխանիկն է[2]. «Գրիգոր Սիւնեաց տէրը», կամ Գրիգոր Սուփան 1-ինը պիտի լիներ, կամ մեր քննության ենթակա այս Գրիգորը։ Առաջինը չէր կարող լինել, որովհետև նա, ինչպես տեսանք, մահացել էր դեռ 851 թվին, այսինքն՝ մինչև Բուղայի գալը։ Հետևապես, Արծրունու հիշած Գրիգորը մեր ուսումնասիրության ենթակա հենց այս Գրիգորն էր, որը 844 թվի սիգելում այդպես էլ ստորագրել էր՝ «Գրիգոր Սիւնեաց տէր»։ Հավանաբար, նա Բուղայի գերեվարությունից չվերադարձավ, քանի որ նրա մասին մենք այլևս տեղեկություն չունենք։

Այս Գրիգորն ունեցել է երկու որդի՝ Հրահատ և Գագիկ։

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 310։
[2] Տես նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջեր 125, 126, Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 171։

2. ՀՐԱՀԱՏ ԵՎ ԳԱԳԻԿ

Որ իրոք սրանք վերոհիշյալ Գրիգորի որդիներն են, երևվում է հետևյալից. Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելի վկաների ցուցակում հիշվում են նաև «տէր Հրահատ և տէր Գագիկ՝ Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն որդիք»[1]։ Մենք գիտենք արդեն, որ 840-ական թվերին հայտնի են երկու Գրիգոր՝ Գրիգոր Սուփան 1-ինը և վերոհիշյալ Գրիգորը։ Հրահատն ու Գագիկը սրանցից ո՞րի որդիներն էին։ Նրանք չէին կարող լինել Գրիգոր Սուփան 1-ինի որդիները, որովհետև, ինչպես արդեն տեսանք, նրա որդիները՝ Վասակ Գարուն ու Հրահատն էին։ Մեր կարծիքով, սրանք վերոհիշյալ Գրիգորի որդիներն էին, մանավանդ որ այստեղ ասված է «Գրիգորոյ Սիւնեաց տեառն որդիք» և ոչ թե «Գրիգորոյ Սուփանայ որդիք», կամ «Գրիգորոյ՝ որդւոյ Սահակայ, որդիք» և կամ մի այլ ձևով։

Բացի այդ, Հրահատին հանդիպում ենք մի այլ տեղ ևս։ Տաթևի Սողոմոն եպիսկոպոսը 881 թվին Դարատափ գյուղը գնում է ոմն Հրահատ իշխանաց իշխանից։ Այդ կապակցությամբ կնքված սիգելում նա գրում է. «Առի զԴարատափ ի Հրահատայ՝ Սիւնեաց տեառն, ի Գրիգորոյ որդւոյն, յիշխանաց իշխանէ... յ330 թուիս է»[2]։

Այս Հրահատը չէր կարող Գրիգոր Սուփան 1-ինի որդի Հրահատը լինել այն պատճառով, որ Գեղաքունիքի և ոչ մի իշխան, անգամ 881 թվի շրջանում ապրող ինքը՝ Գրիգոր Սուփան 1-ին գահակալ իշխանը, չի կոչվել «իշխանաց իշխան», էլ ուր մնաց, որ նրա որդին իր հոր կենդանության ժամանակ կոչվեր «իշխանաց իշխան»։ Ուստի մնում է ենթադրել, որ այս Հրահատը վերոհիշյալ Գրիգորի որդին է։ Հիշենք, որ նրա հայրն էլ կոչվել է «գահերէց»։ Հավանաբար, հոր մահվանից (գերեվարումից) հետո նրան հաջորդել է Հրահատ որդին և կոչվել «իշխանաց իշխան», որն, ինչպես ցույց ենք տվել, գահերեցին հավասար կոչում էր։

Սրանց, և ընդհանրապես իշխանական այս տան կալվածքների տեղադրության մասին մենք որոշ գաղափար կկազմեինք, եթե իմանայինք, թե ո՞ր գավառում է գտնվել Դարատափ գյուղը, բայց այդ հնարավոր չեղավ պարզել։

Հրահատի և Գագիկի, ինչպես նաև այս ճյուղի հետագա շառավիղների մասին մենք ուրիշ վկայություններ չունենք։

ՉՈՐՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԿՈՎՍԱԿԱՆ-ՔԱՇՈՒՆԻՔԻ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Ս. Օրբելյանի մոտ հանդիպում ենք մի այլ իշխանական տան։ Խոսելով Փիլիպպե 1-ինի կողմից Տաթև գյուղը վանքին նվիրելու մասին, շարունակության մեջ նա գրում է. «Ապա տեսեալ և զայս մեծ իշխանին Հրահատայ Սահակայ որդւոյ, և Գրիգորի՝[1] Արումանայ եղբօր, Հայկազնի՝ ի նոյն Սիսական տոհմէ, որ ունէր ի բաժնի ժառանգութեան զԿովսական գաւառ և զՔաշունիք, մոլեալ զբարիոք մոլութիւն. և եկեալ առ տէր Դաւիթ և յիւրոց հայրենեացն սեպհական ընծայէ զգիւղն Նորաշինիկ (ի) Կովսական գաւառի»[2]։ Այդ կապակցությամբ գրած նամակ-վճռի մեջ Հրահատը գրում է. «Ի յերկերիւր ինն-նասուն և երեք (=844 թ.) թուականիս Հայոց, ես Հրահատ բազմամեղ՝ երանելի տեառն Սահակայ որդի. վասն իմ շար և անիրաւ գնացից... զմտաւ ածեալ զանզգաւակութիւնս իմ...։ Եւ գեօղ մի ի Կովսական գաւառի Նորաշինիկ անուն, որ... յարդար վաստակոց ստացեալ գնոց արծաթայ, ... ի սուրբ խաչդ ապսպուարեցի, իւր բոլոր սահմանօք, լերամբ և դաշտաւ...։ Եւ այսուհետև ոչ ես Հրահատ և ոչ իմ եղբարք կամ իւրեանց որդիք չունիմք իշխանութիւն բանս ու պայքար առնել...»[3]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ մենք գործ ունենք ֆեոդալական իշխանական մի նոր տան հետ, որի տիրապետությունը տարածվում էր Կովսական և Քաշունիք գավառներում։ Ֆեոդալական այս տան 9-րդ դարում մեզ հայտնի իշխան պետք

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 207։
[2] Նույն տեղում, էջ 215։

[1] Այս բառը պետք է փոխարինել կամ ստորակետով կամ «և»-ով։
[2] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 208—209։
[3] Նույն տեղում, էջեր 209, 210։

է համարել Սահակին, որն 844 թվին արդեն մահացել էր և նրա փոխարեն իշխան էր դարձել, հավանաբար, ավագ որդին՝ Հրահատը։ Այն հանգամանքը, որ այդ Սահակը 844 թվին մահացած էր, ցույց է տալիս, որ նա գործել է 9-րդ դարի սկզբին, այսինքն Վասակ մեծ նահապետի ժամանակ, իբրև առանձին դահակալ իշխան Կովսականում և Քաշունիքում։ Նրա որդին՝ Հրահատը կոչվել է «մեծ իշխան», հավանաբար, ինքը Սահակը ևս կրել է այդ կոչումը։

Հրահատ «մեծ իշխանը» զավակներ չի ունեցել, վարել է հանցավոր կյանք, բայց ունեցել է եղբայրներ, որոնցից երկուսի անունները, ըստ վերոհիշյալ վկայությունների, Գրիգոր և Արուման էր։ Եվ այսպես, մեզ համար ակնհայտորեն պարզ են Կովսական-Քաշունիքի տեր Սահակի երեք որդիները՝ Հրահատ, Գրիգոր և Արուման։

Այս Հրահատը, ինչպես ակնարկեցինք վերևում, Փիլիպպե 1-ին գահերեց իշխանի դուստր Քուպղիդուխտի ամուսինն էր։ Այդ երևում է նրանից, որ Քուպղիդուխտի նվիրած Մաճ գյուղը, որը նա հոգեցատուր էր ստացել Հրահատ ամուսնուց, գտնվում էր Քաշունիքում, այսինքն՝ այս Հրահատի հայրենական ժառանգության մեջ։ Այդ երևում է նաև նրանից, որ թե՛ Քուպղիդուխտը, և թե՛ այս Հրահատը իրենց սիգելներում բողոքում են անվավակությունից։

Այս Հրահատին և իր Արուման եղբորը հանդիպում ենք մի այլ փաստաթղթի մեջ ևս։ Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելում վկաների ցուցակում կան նաև «տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակայ որդիք»[1]։ Սխալ են Ղ. Ալիշանն ու Լորանը, որոնք հոր անունից ելնելով, սրանց համարում են Գեղաքունիքի դահակալ իշխան Սահակի որդիներ՝ Ալիշանը Արումանին, Լորանը թե՛ Արումանին, թե՛ Հրահատին։ Սրանք ուրիշ ոչ այլ ոք են, եթե ոչ Կովսական-Քաշունիքի տեր Սահակի որդիները։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 207։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ սիգելում այս անուններից առաջ գրված «տէր Գրիգոր՝ Սահակայ որդի»-ն սրանց եղբայր Գրիգորը չէ, այլ Գեղաքունիքի Գրիգոր Սուփան 1-ինն է։ Եթե սրանց եղբայրը լիներ, չէր առանձնացվի և կգրվեր «տէր Գրիգոր, տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակայ որդիք»։

Քուպղիդուխտի սիգելից երևում է, որ 867 թվին նրա ամուսինը՝ այս Հրահատը, մահացած է եղել։

Կովսական-Քաշունիքի տեր այս Սահակը, ըստ մեզ, բացի այս երեք տղաներից ունեցել է նաև մի չորրորդ տղա՝ Ջևանշեր անունով։ Ս. Օրբելյանը գրում է. «Յայսմ ժամանակի իշխան մի Սիսական Ջևանշէր անուն՝ որդի Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գայ առ Տէր Սաղոմոն. է խնդրէ ի նմանէ դգիւղն Բեխ որ ի Կովսական գաւառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին... փոխանակէ զիւր սեպհական գիւղն Արուքս որ ի Բաղք գաւառի»[1]։ Սողոմոն եպիսկոպոսը համաձայնվում է. կատարվում է փոխանակությունը և այդ կապակցությամբ «յ320 (=871 թ.) թուականութեանս Հայոց» գրում են վճիռ-պայման, որի մեջ կարդում ենք. «Կամ եղև ինձ Ջուանշէրի՝ աստուածապահ տեառն Սահակայ Սիւնեաց տեառն որդւոյ, զիմ զշէն մի որ ի Բաղք գաւառի Արուքս անուն, որ յիմ հօրէն և եղբարց յիս հրիտակ հասեալ. և իմ հայրենի ժառանգութիւն էր անհամիմատ տեղի, փոխանակել ընդ Բեխոյ շինոյն որ ի Կովսական գաւառի էր»[2]։ Իսկ վերջում ավելացնում է. «և է վկայք վճռիս... և իմ եղբայրն Արուման, և իմ որդի Տիգրան»[3]։

Մեր կարծիքով, այստեղ հիշված Արումանը վերոհիշյալ Արումանն է։ Ուստի Ջևանշերը նրա, ինչպես նաև Հրահատի ու Գրիգորի եղբայրն է։ Այդ նույնության համար կովաններ են. ա) սրանց հոր անվան՝ Սահակի, նույնությունը, բ) Արուման անվան նույնությունը, գ) սրանց տերիտորիայի նույնությունը և դ) ուշագրավ է, որ Ջևանշերը հայտնում է, թե ինքը այդ գյուղը ժառանգություն է ստացել հորից և եղբայրներից։ Ուրեմն նա, բացի վկայակոչած Արումանից, ունեցել է նաև ուրիշ եղբայրներ։ Նա վկայակոչում է մի եղբորը, որովհետև մյուսները, հավանաբար, մահացած էին։ Ինչպես նշել ենք արդեն, Հրահատը մահացել էր 867 թվին, 871 թվին մահացած պիտի լիներ և Գրիգորը։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 216։
[2] Նույն տեղում, էջ 217։
[3] Նույն տեղում, էջ 218։

Այսպիսով, Կովսական-Քաշունիքի տեր Սահակն ունեցել է չորս որդի՝ Հրահատ, Գրիգոր, Արոման և Ջևանշեր, որոնցից վերջին երկուսը 871 թվին կենդանի էին։

Ջևանշերը, ինչպես ինքն է վկայում, ունեցել է Տիգրան անունով մի տղա։ Ի միջի այլոց, Լորանը այս Արոմանին, Գրիգորին և Ջևանշերին, նրանց հոր անվան Սահակ լինելու հիման վրա, համարում է Գեղաքունիքի գահակալ իշխան Սահակի որդիներ։ Իսկ Ղ. Ալիշանը, նույն հիման վրա, Արոմանին համարում է Գեղաքունիքի Սահակի որդին։ Մեր կարծիքով, հիշյալ հեղինակները սխալվում են։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԲԱՂՔԻ ԶԱԳԻԿՅԱՆՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Գահակալ իշխանների մի այլ տուն, 9-րդ դարի վերջերից, հանդես է գալիս Բաղքում։ Ղ. Ալիշանը, խոսելով Բաղք գավառի աշխարհագրության մասին, կազմել է նաև իշխանական այդ տան ներկայացուցիչների հաջորդական սխեման, որը սակայն ունի ակնառու սխալներ։ Այդ տան մեղ հայտնի իշխաններից առաջինը Զագիկն է։

1. ԶԱԳԻԿ 1-ԻՆ

Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Զագիկ 1-ինի մասին եղած բոլոր վկայությունները ժամանակագրական կարգով։

1. Խոսելով Տաթևի կաթողիկեի կառուցման նախապատրաստությանը մասնակից իշխանների մասին (895 թվին), Աշոտ գահերեց և Սուփան 2-րդ իշխաններից հետո Ս. Օրբելյանը նշում է՝ «Եվ միւս իշխանին, որ Բաղա՝ Զագիկ կոչեցելոյ՝ հօր Ջևանշէրի»[1]։

2. Տաթևի նոր սահմանները որոշող 906 թվի սիգելի սկզբում Աշոտ գահերեցի և այլ իշխանների թվում հիշվում է նաև «տէր Զագիկ և որդի Ջևանշէր», իսկ վերջում, մյուս

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 223։

իշխանների թվում կա նաև Զագիկի ստորագրությունը. «մէք Զագիկ և Հրահատ Սիւնի վկայեմք այսմ վճռի»[1]։

3. Խոսելով 10-րդ դարի սկզբների մասին, Ս. Օրբելյանը գրում է. «Պայծառանայր և յայն աւուրս... ի Սիսական տոհմէ Զագիկ՝ մեծ իշխանն, ամենայն բարեպաշտութեամբ, որ ունէր ի բաժնի զԲաղաց գաւառն և զԿապան քաղաք, որ յետ բազում բարեկարգութեանց վախճանի. և դնի ընդ հարս փիր»[2]։

Ինչպես տեսնում ենք, Զագիկը, որպես Բաղքի իշխան, առաջին անգամ հիշվում է 895 թվին, իսկ վերջին անգամ 906 թվին։ Այս վկայություններից չի երևում, թե Զագիկը երբ է դառել Բաղքի իշխան և ովքեր են նրա նախնիները։ Ղ. Ալիշանն առաջարկում է մի անընդունելի ծննդաբանություն։ Նրա կարծիքով, այս Զագիկից առաջ եղել են, իբրև նրա նախնիներ, էլի երեք իշխաններ։ «Զայնու ժամանակաւ (821 թվի մասին է խոսքը—Հ. Ուր.),— գրում է Ալիշանը,— ի բաժանել իշխանացն Սիսականաց զգաւառս Սիւնեաց՝ երեսի Վահան ոմն ժառանգորդ գաւառիս Բաղաց, ժամանակակից Վասակայ տեառն Սիւնեաց և նոր նահապետի Սիսակեանց. քանզի որդի նորին Զագիկ իշխան Բաղաց յիշի յամի 844. այս յետին անուն (Զագ) և Ջուանշէր՝ յաճախ լսին ի պայազատս տոհմին ցվերջ Ժ դարու, և մարթի կարգել ծննդաբանութիւն այսու օրինակաւ»[3]։ Եվ ապա նա տալիս է ծննդաբանության սխեման, որի առաջին երեք իշխաններն են՝ Վահան, Զագիկ 1-ին (կողքը դնում է 844 թ.), և Ա. Ա.։ Ալիշանը, իբրև Ա. Ա-ի որդին է համարում Զագիկ 2-րդին, որը և է մեր քննության ենթակա Զագիկը[4]։

Ղ. Ալիշանը սխալվում է. նախ այն պատճառով, որ սկզբնաղբյուրներով չի ապացուցվում այդ դրույթի ճշտությունը, ըստ որի իբր թե Վասակ մեծ նահապետի ժամանակ (821

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 231, 234. Հրահատը կապ չունի Զագիկի հետ, նրանք, իբրև այունեցիներ, միասին են հիշված, որպեսզի տարբերվեն իրենցից առաջ և հետո ստորագրած՝ Ազվանքի և Գարդմանի իշխաններից։

[2] Նույն տեղում, էջ 200։

[3] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 273։

[4] Նույն տեղում։

թվին) Սյունիքը բաժանվել է Սիսական իշխանների միջև։ Նման բաժանումը եղած պետք է լիներ մինչ այդ, նախարարական սիստեմի քայքայման ընթացքում։ Երկրորդ, այն պատճառով, որ Ալիշանի մատնացույց արած Վահանի որդի Զագիկ 1-ինը, որը, իրոք, հիշվում է 844 թվին, իշխան չէ։ Նա հիշվում է Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելի երկրորդ կարգի վկաների, ազատների ցուցակում. «... նոյնպէս և յիմ ազատաց Հոռ, Քուրդոյ..., Զագիկ՝ Վահանայ որդի...»[1]։ Ուրեմն, այստեղ հիշված Վահանի որդի Զագիկը ոչ թե իշխան է, այլ «ազատ»՝ և այն էլ Վայոց ձորի գահերեց իշխանի ազատներից։ Եթե Ղ. Ալիշանը ելնում է այն բանից, որ Փիլիպպեի այս «ազատ»-ի անունը նման է հետագայում Բաղքում հանդես եկած իշխանների Զագիկ անվանը, ապա նա այդ նույնը կարող էր անել Փիլիպպեի ազատների այդ նույն ցուցակում նշված ոմն «Ջևանշէր՝ Թեոդորոսի որդի» անվան հետ, քանի որ Ջևանշեր անունն էլ բնորոշ է Բաղքի իշխանական այս տան համար։

Այս բոլորի հիման վրա ժխտվում է Ալիշանի նաև այն պնդումը, որ Վահանը (ըստ նրա՝ Զագիկ 1-ինի հայրը) Վասակ մեծ նահապետի ժամանակ (821 թ.) Բաղքը ստացել է իբրև ժառանգություն։ Պարզ հասկանալի է, որ եթե 844 թվին Զագիկը Վայոց ձորի իշխանի «ազատն» էր, ապա նրա ազատներից էր նաև նրա հայրը՝ Վահանը։ Հետևապես, չենք կարող ընդունել Ալիշանի այն պնդումը, որ իր սխեմայի առաջին երեք անձնավորությունները՝ Վահան, Զագիկ 1-ին և Ա. Ա. իշխաններ էին։

Մեր կարծիքով, Բաղքի իշխանական այս տան առաջին իշխանը Ալիշանի նշած Զագիկ 2-րդն է, Ա. Ա-ի որդին, որին մենք անվանում ենք Զագիկ 1-ին, և որին սակայն մենք չենք համարում Ալիշանի նշած Ա. Ա-ի որդին։ Այլ կերպ ասած, մենք այս տան իշխանների հաջորդականությունը սկսում ենք Ղ. Ալիշանի սխեմայի 4-րդ իշխանից, համարելով նրան առաջին իշխանը։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 207, 208։

Համաձայն չենք Ալիշանի հետ նաև այն բանում, որ նա այս Զագիկի իշխանության շրջանը դնում է 895—906 թվերը։ Ս. Օրբելյանի վերոհիշյալ վկայություններում չի ասվում այն մասին, որ Զագիկը իշխան է դառել 895 թվին և մահացել է 906 թվին։ Այդ թվերին մենք նրան տեսնում ենք միայն գործի մեջ։ Անշուշտ, դեռ 895 թվից առաջ էլ Զագիկն իշխան էր և այն էլ բավականաչափ ազդեցիկ իշխան, որ կաթողիկե եկեղեցու կառուցման համար եպիսկոպոսը դիմել է նրան՝ խորհուրդ և օժանդակություն ստանալու համար։ Իսկ նրա մահվան տարեթիվն ընկնում է 906—911 թվերի արանքը, որովհետև, ինչպես կտեսնենք, 911 թվին իշխան էր նրա որդին՝ Ջևանշերը։

Այս Զագիկ 1-ին իշխանի և ընդհանրապես այս տան կալվածքների մասին ունենք վերև մեջբերված 1-ին և 3-րդ վկայությունները միայն։ Մենք գիտենք արդեն, որ 9-րդ դարում, Վասակ մեծ նահապետի, նրա որդի Փիլիպպե 1-ինի և հաջորդների ժամանակ Բաղքը հանդիսանում էր գահերեցների կալվածքը։ Իսկ այժմ, ինչպես տեսնում ենք, այն համարվում է Զագիկյանների կալվածք։ Այնուհետև, 9-րդ դարի ընթացքում Բաղքի մի մասը, Քաշունիքը պատկանում էր Կովսականն գավառի իշխաններին (տե՛ս չորրորդ ճյուղը)։ Բացի այդ, ինչպես գիտենք, 10-րդ դարում, երբ գահերեց Սմբատ 1-ին իշխանը հայրենական ժառանգությունը բաժանեց իր եղբայրների հետ, Սահակին և մյուս եղբայրներին բաժին ընկավ նաև Բաղքը (տե՛ս Սահակի բաժինը)։ Ուրեմն, Բաղք կոչված գավառը 9-րդ դարի վերջերում բաժանվել է երկու մասի, որոնցից մեկը կոչվել է Բաղք, իսկ մյուսը՝ «միւս Բաղք», վերջինս կոչվում էր նաև Քաշունիք։ Բաղքն այս բաժանված ձևով էլ մտել է Ս. Օրբելյանի հարկացուցակի մեջ[1] (տե՛ս նրա հարկացուցակի 8-րդ և 9-րդ գավառները)։

Այս բոլորը մեզ հանդեցնում են հետևյալ հետևության. 9-րդ դարի ընթացքում Բաղքի մի մասը (հարավ-արևելյան), որը կոչվել է Քաշունիք, պատկանել է Կովսականի գահակալ

[1] Ի միջի այլոց այս հանգամանքը ևս ապացույց է այն բանի, որ Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակը 10-րդ դարի հարկացուցակ է։

իշխաններին, իսկ բուն Բաղքը (հյուսիս-արևմտյան մասը) պատկանել է գահերեցներին։ Հետագայում, 9-րդ դարի վերջում, երբ հզորանում են Զագիկյանները, Քաշունիքը (մյուս Բաղքը) Սահակյաններից անցնում է Զագիկյաններին, ընդ որում Սահակյանները ետ են մղվում, իսկ բուն Բաղքը նորից մնում է գահերեցների ճյուղի (Սահակի) սեփականությունը։

Այսպիսով, Զագիկյանների կալվածքներն էին՝ Կապան քաղաքը (Զորք գավառում) և մյուս Բաղքը — Քաշունիքը։ Ստորև կտեսնենք, որ Զագիկյանների նստավայրը Կապան քաղաքն էր։

Այս Զագիկ իշխանն ունեցել է երկու որդի՝ Ջևանշեր և Վահան. «Թողու ժառանգ զքաջազօրն Ջևանշէր և զՎահան»[1]։

2. ՋԵՎԱՆՇԵՐ 1-ԻՆ

Ջևանշեր 1-ինը Զագիկ 1-ինի ավագ որդին էր, ինչպես այդ ցույց է տալիս վերոհիշյալ վկայությունը։ Ս. Օրբելյանը շարունակության մեջ վկայում է, որ Զագիկին հաջորդել է Ջևանշեր որդին. «որ և պայազատէր զտէրութիւն նորա Ջևանշէր բազում ժամանակօք»[2]։ Թե ե՞րբ է տեղի ունեցել այս հաջորդումը, որոշակի դժվար է ասել, քանի որ Ս. Օրբելյանը ոչինչ չի հայտնում այդ մասին։ Բայց գիտենք, որ 911 թվին, երբ սրա եղբայր Վահանը կառուցեց Վահանավանքը, Բաղքում իշխան էր Ջևանշեր 1-ինը (տե՛ս ստորև)։ Ուրեմն, նա իր հորը հաջորդել է 906—911 թվերի արանքում։ Ս. Օրբելյանն այս Ջևանշերին անվանում է քաջազոր. կարելի է ենթադրել, որ նա իր քաջազորությունը ցուցադրել է Յուսուֆի 909—915 թվերի ասպատակումների ժամանակ։

Ղ. Ալիշանն այստեղ ևս, մեղանչելով փաստերի առաջ, այս Ջևանշերին իշխան է համարում 906 թվից, իսկ 911 թվին իշխան է նշում Զագիկ 2-րդին։ Ալիշանը պարզապես անտեսել է Ս. Օրբելյանի այն վկայությունը, որ 906 թվին իշխան էր Ջևանշերի հայրը՝ Զագիկ 1-ինը և ոչ թե այդ Ջևանշերը, իսկ 911 թվին, երբ Ջևանշերի եղբայրը շինում էր Վահանավանքը, Բաղքում իշխան էր ոչ թե Զագիկ 2-րդը, այլ հենց ա՛յս Ջևանշերը[1]։

Ս. Օրբելյանի մի վկայությունից իմանում ենք, որ Ջևանշեր 1-ինը ունեցել է Վահան անունով մի տղա, որը, ինչպես կտեսնենք, դարձել է հոգևորական։ Բայց, հավանաբար, Ջևանշերն ունեցել է նաև Զագիկ անունով մի այլ տղա։

3. ՎԱՀԱՆ 1-ԻՆ

Վահան 1-ինը Զագիկ 1-ինի կրտսեր որդին, և Ջևանշեր 1-ինի եղբայրն[2] էր։ Ս. Օրբելյանը վկայում է, որ Ջևանշեր 1-ինի եղբայր այս Վահանը «յանկարծակի ի չար դիւէ բախեալ և լըլկեալ»[2]։ Այդ պատճառով էլ Վահանը հրաժարվում է աշխարհիկ կյանքից, դառնում է կրոնավոր և երկար ժամանակ ճգնելուց հետո, իր «պղծեալ հոգին» մաքրելու համար շինում է մի եկեղեցի[3]։ Մի այլ տեղ Ս. Օրբելյանը գրում է. «Որպէս ի վերագոյնն ասացաք, Վահան ոմն՝ որդի Զագիկ իշխանի, եղբայր Ջևանշերի, վասն դիւաբախ մոլեգնելոյն եղև կրօնաւոր, և կամեցաւ շինել վանս...»[4]։ Նա Բաղաբերդի հանդեպ, մի հարթության վրա կառուցում է մի վանք և այն «կոչէ Վահանավանք»[5] իր անունով։ Շինության ժամանակի մասին Ս. Օրբելյանը վկայում է՝ «Եվ շինութիւն սուրբ ուխտին յ360 (=911 թ.) թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ, յիշխանութեանց Սիմեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, ի Բաղաց Ջևանշերի, յեպիսկոպոսութեան Սիմեաց՝ տեառն Յովհաննիսի»[6]։

Ինչպես տեսնում ենք, այս վկայությունն ուղղակի ասում է, որ 911 թ. Բաղքում իշխան էր Ջևանշերը և ոչ թե Զագիկ 2-րդը, ինչպես սխալ կերպով կարծում է Ալիշանը։ Ղ. Ալիշանի

---

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական։
2 Նույն տեղում։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 231—234 և 240։
2 Նույն տեղում, էջ 200։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում, էջ 238։
5 Նույն տեղում, էջ 239։
6 Նույն տեղում, էջ 240։

սխեմայում հիմնական սխալը սա է, որից բխում են նրա բոլոր հետագա սխալները։

Այս վկայությունները նաև ցույց են տալիս, որ Զագիկ 1-ինի Վահան որդին դառնում է կրոնավոր և շինում է Վահանավանքը։ Ալիշանը, հակառակ այս փաստերին, կամայականորեն այս Վահանին էլ տեղահանում է իր այս տեղից և տանում ստորև ու դարձնում Զագիկ 2-րդի որդին և Ջևանշեր 2-րդի եղբայրը։

4. ՎԱՀԱՆ 2-ՐԴ

Վահան 2-րդը Ջևանշեր 1-ինի որդին էր։ Այդ երևում է Ս. Օրբելյանի հետևյալ վկայությունից. «Բայց յետոյ միւս Վահան՝ եղբօրորդի սորա, այսինքն Ջևանշերի որդի, սնեալ և ուսեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային իմաստիւքն ի սոյն տան, քահանայացաւ և եղև առաջնորդ սուրբ ուխտին»[1]։

Ուրեմն, Վահանավանքում Վահան 1-ինին, իբրև վանահայր, հաջորդում է նրա եղբոր Ջևանշեր 1-ինի որդին՝ Վահանը, որին, ըստ հերթականության, մենք անվանում ենք Վահան 2-րդ։ Թվում է, թե Ս. Օրբելյանի մոտ շատ պարզ է ասված, բայց Ալիշանը դարձյալ, իր հիմնական սխալի հետևանքով, այս Վահան 2-րդին տեղաշարժում է և դարձնում Ջևանշեր 1-ինի ծոռը, ոմն Ա. Ա-ի որդին։

Ս. Օրբելյանը վկայում է, որ երբ 958 թվին Անանիա կաթողիկոսը գալիս է (3-րդ անգամ) Սյունիք, Տաթևում եպիսկոպոս է նշանակում Վահան 2-րդին։ «Եվ ժողովեալ զամենայն արս խաչակրօն և ճգնազգեաց վանականաց՝ խնդրէին վերստին առաջնորդ ինքեանց, որոց լուեալ կացոյց յեպիսկոպոսութիւնն Սիւնեաց զՎահան՝ որդին Ջևանշերի, որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանավանից»[2]։ Վեց տարի Սյունյաց եպիսկոպոսական աթոռում մնալուց հետո 963/64 թվերին դառնում է կաթողիկոս ամենայն Հայոց[3]։ Հինգ տարի

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 240։
[2] Նույն տեղում, էջ 284, նաև 287, 288։
[3] Նույն տեղում, էջեր 288, 289, նաև 241։

կաթողիկոս լինելուց հետո մահանում է Վասպուրականում, ուր ապաստանել էր քաղկեդոնականության հարելու պատճառով[1]։

5. ԶԱԳԻԿ 2-ՐԴ

Զագիկ 2-րդի մասին Ս. Օրբելյանն առաջին անգամ խոսում է ԾԱ գլխում։ Սյունյաց եպիսկոպոս Հակոբը Տաթևի վանքի գյուղերից մեկը փոխում է այս Զագիկի Տաշտակերտ գյուղի հետ. «...փոխանակէ տէր Յակոբ տեառն Զագկայ՝ իշխանի Սիւնեաց որդւոյն Ջէվանշէրի»։ Այդ կապակցությամբ իր գրած վճիռ-պայմանի մեջ Հակոբ եպիսկոպոսը գրում է. «Ես տէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, արարի փոխանակս ընդ աստուածապահ տեառն Զագկայ՝ Սիւնեաց իշխանի, ... ի թուին Հայոց 374 (=925) հաստատէ կամաւն Աստուծոյ»[2]։ Այդ կապակցությամբ ինքը Զագիկը գրում է՝ «Եւ ես Զագիկ իշխան իմ կամօք արարի զայս վաճառս...»[3]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ չի ասված, որ Ջևանշերի որդի այս Զագիկը Բաղքի իշխան է[4]։ Ղ. Ալիշանն իրավամբ նրան համարում է Բաղքի իշխանական տնից, Ջևանշեր 1-ինի որդին։ Բայց անիրավացի կերպով Ալիշանն այս Զագիկի իշխանության շրջանը համարում է 911—925 թվերը։ Մենք վերևում տեսանք, որ 911 թվին իշխան էր Ջևանշեր 1-ինը, հավանաբար, սրա հայրը, ուստի նրա որդի Զագիկ 2-րդը երբեք չէր կարող 911 թվին իշխան եղած լինել։ Ալիշանին թյուրիմացության մեջ է գցել այն, որ նա Օրբելյանի ԼԸ գլխի վկայությունը[5] վերագրել է այս Զագիկին, փոխանակ այն վերագրելու սրա պապին՝ Զագիկ 1-ինին։

Մեր կարծիքով, այս Զագիկ 2-րդի իշխանության սկիզբը

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր, 289։ 290։
[2] Նույն տեղում, էջեր 272, 273։
[3] Նույն տեղում, էջ 273։
[4] Այդ գործում մեզ կօգներ այն, եթե պարզվեր, թե Տաշտակերտ գյուղը որ գավառում էր. բայց, ցավոք սրտի, հնարավոր չեղավ պարզել այդ։
[5] Տես Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 209։

պետք է փնտրել 911 թվից հետո։ Սկզբնաղբյուրները մեզ հնարավորություն չեն տալիս ճշգրիտ ասելու, թե ե՞րբ է Զաքարիկ 2-րդը փոխարինել իր հորը՝ Ջևանշեր 1-ինին։ Պետք է ենթադրել միայն, որ այդ տեղի է ունեցել 910-ական թվերի 2-րդ կեսին։

Մենք չգիտենք նաև սրա մահվան տարին։ Վերոհիշյալ վկայություններից պարզ է միայն այն, որ նա 925 թվին իշխան էր և գործարք է կնքել Հակոբ եպիսկոպոսի հետ, բայց այդ չի նշանակում, որ այդ թիվը նրա իշխանության վերջին տարին էր, ինչպես կարծում է Ղ. Ալիշանը։ Մենք կտեսնենք ստորև, որ 941 թվին արդեն իշխան էր սրա որդի Ջևանշեր 2-րդը։

6. ՋԵՎԱՆՇԵՐ 2-ՐԴ ԵՎ ՎԱՍԱԿ

Զաքարիկ 2-րդը ունեցել է երկու որդի՝ Ջևանշեր և Վասակ։ Հակոբ եպիսկոպոսի և Զաքարիկ 2-րդի միջև գյուղերի փոխանակման մասին գրված վերև մեր հիշած պայման-վճռի տակ, որպես վկաներ, հիշված են Զաքարիկ 2-րդի որդիներ՝ Ջևանշերն ու Վասակը։ «Եւ մեք Ջևանշէր և Վասակ՝ որդիք տեառն Զաքարայ վկայ եմք այս արարուածիս»[1]։ Ղ. Ալիշանն իրավացի կերպով սրանց հայր Զաքարիկին, համարում է հենց գործարք կնքող Զաքարիկը։ Սյունիքում ընդունված է, որ հայրերի կատարած գործարքների առթիվ կնքված սիգելների տակ, փբրև վկաներ, ստորագրում են նաև որդիները։

Ս. Օրբելյանը խոսելով 940—50-ական թվերի մասին, երբև Բաղքի իշխան հիշում է Ջևանշերին, բերում ենք այդ վկայությունները.

1. Երբ Անանիա կաթողիկոսը 941 թվին գալիս է Սյունիք. «ընդ առաջ ելանեն նմա իշխանքն Սիւնեաց աստուածապահ տէր Սմբատ և Ջևանշէր որ ի Բաղս»[2]։

2. «Ապստամբ» Հակոբ եպիսկոպոսը կաթողիկոսի հալածանքներից ապավինում է Ջևանշերի մոտ։ Կաթողիկոսը «յոլով թղթովք և պատգամաւորք հայցէր ի դուրս զՅակոբ ի

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 273։
[2] Նույն տեղում, էջ 276։

հեռացն Ջևանշիրի. և ոչ տայր ի դուրս»[1]։ Կաթողիկոսը բանադրում է Հակոբին և Ջևանշերին։ Այս տեղի է ունենում 949 թվին[2]։

3. Անանիա կաթողիկոսը 958 թվին երրորդ անգամ գալիս է Սյունիք, Տաթև և ապա «գնայր ի Կապան քաղաք։ Ընդ որում առաջ ելեալ բանադրեալ իշխանն Ջևանշէր՝ մեծաւ զղջմամբ զմեղայ խոստովանէր»[3]։

4. Երբ Սմբատ 1-ին գահերեց իշխանի եղբայր Սահակը մահանում է և իշխանությունն անցնում է որդուն՝ Սմբատ 2-րդին (տե՛ս վերև), այդ ժամանակ «էր եւ ի Բաղս իշխան մի ի սոյն ցեղէ Ջևանշէր անուն՝ որդի Զաքարայ իշխանին»[4]։

Մեջբերված վկայությունները կասկածի ոչ մի տեղիք չեն տալիս, որ 941թ., 949 թ., 958 թ., գուցե և 960-ական թվերին Բաղքում իշխան էր Ջևանշերը՝ Զաքարիկի որդին, այսինքն՝ 925 թվի իշխան Զաքարիկ 2-րդի որդի Ջևանշեր 2-րդը։ Փաստերի պակասության պատճառով դժվար է ցույց տալ, թե երբ է Ջևանշեր 2-րդը հաջորդել իր հորը։ Ղ. Ալիշանը շփոթելով փաստերը, այս Ջևանշեր 2-րդի իշխանության տարիները դնում է 911—958 թվերի միջև։ Նա չէր կարող 911 թվին իշխան լինել, որովհետև, ինչպես տեսանք, այդ թվին իշխան էր նրա պապը՝ Ջևանշեր 1-ինը։ Նա չէր կարող իշխան լինել անգամ 925 թվին, որովհետև, ինչպես տեսանք, այդ թվին դեռ իշխան էր նրա հայրը՝ Զաքարիկ 2-րդը։ Նա կարող էր իշխան դառնալ միայն 925 թվից հետո։

Ջևանշեր 2-րդի գահանիստն էր Կապան քաղաքը։ Այդ երևվում է ոչ միայն վերոհիշյալ վկայություններից, այլև Ս. Օրբելյանի հետևյալ ուղղակի վկայությունից. «Եվ տարեալ մեծապէս շքով (խոսքը Անանիա կաթողիկոսի մասին է—Հ. Ալբ., հանգուցին յարքունական գահոյս ի Կապան քաղաքի»[5]։

Վասակի մասին, բացի վերոհիշյալ ժլատ տեղեկությունից, ուրիշ ոչինչ չգիտենք։

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 283։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 284։
[4] Նույն տեղում, էջ 298։
[5] Նույն տեղում, էջ 284։

950-ական թվերի վերջերից հետո մենք այլևս տեղեկություններ չունենք Բաղաց այս իշխանական տան մասին։ Հավանական է թերևս Ղ. Ալիշանի այն պնդումը, որ, երբ Բաղքում ստեղծվեց Սյունյաց թագավորություն, սրանք դառան Սյունյաց թագավորների տատարը և, մեր կարծիքով, դառան ինքնուրույն ֆեոդալ իշխանական ընտանիք՝ Սյունյաց-Բաղաց թագավորության մեջ։

* * *

Վերջում նկատենք, որ 9—10-րդ դարերի Սյունիքում իշխանական այս տներից բացի, անշուշտ, կային նաև այլ իշխանական տներ, որոնց մասին, փաստերի պակասության պատճառով, կոնկրետ ոչինչ չենք կարող ասել։ Ստորև մենք կնշենք մի քանի անհայտ իշխաններ, որոնք, հարկավ, իշխանական առանձին տների ներկայացուցիչներ էին։

ԱՆՀԱՅՏ ՄԻ ՔԱՆԻ ԻՇԽԱՆՆԵՐ

1. «Սիսնեաց իշխան», անունն անհայտ է։

Ս. Օրբելյանը ԽԶ գլխի վերնագրում հիշում է Սյունյաց մի իշխան, որի անունը չի տալիս։ Այդ գլխի տակ պատմում է, որ Վասակ Իշխանիկի իշխանության ժամանակ, այս անանուն իշխանի որդին՝ Գևորգը անից փախչում է ու կորչում[1]։ «Ապա ճիշ բարձեալ մօր նորա Համամուհեայ՝ մեծահաւատ տիկնոջն, և կնոջ նորա և եղբարց և ծառայից՝ և շրջէին խնդրել զԳեորգ և ոչ գտանէին»[2]։ Հետո Գևորգը դառնվում է ու դառնում հոգևորական։

Ինչպես տեսնում ենք, այդ անանուն իշխանն ունեցել է և այլ որդիներ, որոնցից և ոչ մեկի անունը չի պահպանված, պահպանված է միայն կնոջ անունը։ Նրա տան մասին ասված է, որ մետաքսյա հագուստ էին հագնում, ունեին ծառաներ։ Հանձին այդ անանուն իշխանի, մեր առաջ կանգնած է մի ֆեոդալ իշխանի ընտանիք իր ցոփ կյանքով ու ծառաներով։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 241։
2 Նույն տեղում, էջ 242։

Այս Գևորգի որդին, Ստեփանոսը նույնպես դառնում է հոգևորական ու շինում Նորավանքը՝ Բղեն գավառի մեջ[1]։

2. Այդ վանքը շինելիս նրան աջակցում է Հրահատ իշխանը, որը հավանաբար այդ Բղեն գավառի իշխանն էր[2]։

3. Փիլիպպե.— Թովմա Արծրունին վկայում է, որ Բուղան Հայոց իշխաններին գերեվարելիս (853—55 թթ.) գերեվարել է նաև մի «Փիլիպպէ իշխանն Սիսնեաց»[3]։ Ս. Օրբելյանը, Հ. Դրասխանակերտցին, Վարդանը և Կաղանկատուացին Բուղայի կողմից նման Փիլիպպեի գերեվարման մասին չգիտեն։ Եթե սա սխալմունք չէ Թովմա Արծրունու մոտ, ապա այս Փիլիպպեն չէր կարող լինել Փիլիպպե 1-ինը, որովհետև նա մահացել էր 848 թվին։ Նա չէր կարող լինել նաև Վասակ Իշխանիկի որդի Փիլիպպե 2-րդը հետևյալ նկատառումով։ Այս Փիլիպպեն Բուղայի կողմից գերեվարվելիս առնվազն 20-ից ավելի տարիք պիտի ունենար, նշանակում է նա ծնված պիտի լիներ մոտավորապես 830—33 թվերին։ Ինչպես տեսանք, Փիլիպպե 2-րդը կենդանի էր դեռ 943 թվին։ Եթե մենք այս Փիլիպպեին նույնացնենք Փիլիպպե 2-րդի հետ, ապա նրան հասնում է առնվազն 110 տարվա կյանք, որն անհավանական է։ Սա անհայտ Փիլիպպե է։

4. Տիգրան՝ մեծ նահապետ.— Սրա մասին ևս ունենք մի վկայություն միայն։ «Դարձեալ էր դիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սոդից սահմանին, Վաղաւէր անուն, զոր տուեալ էր վաղ ժամանակօք Տիգրան մեծ նահապետ ի Սիսական տոհմէ, ի սուրբ եկեղեցին Տաթևոյ...»[4]։

Այս Տիգրանը, ինչպես երևում է փաստաթղթից, գործում էր 9-րդ դարում։

5. Տեր Վարդան և տեր Ատրներսեհ.—Փիլիպպեի 839 թվագիր սիգելի մեջ հիշվում է իբրև վկա. «և տեառն Ատրներսեհի՝ տեառն Վարդանայ որդւոյ...»[5]։

1 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 244, 245, 246։
2 Նույն տեղում, էջ 245։
3 Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 310։
4 Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսա՛ան, էջ 272։
5 Նույն տեղում, էջ 203։

6. Տեր Վահան,— Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելի մեջ իբրև վկա հիշվում է՝ «... տէր Վահան՝ Վարդանայ որդի...»[1]։ Ոչ իր և ոչ հոր մասին ուրիշ տեղեկություն չունենք։

7. Կարիճ իշխան.— 925 թվի մի վճիռ-պայմանի վկաների մեջ հիշվում է՝ «... և ես Կարիճ իշխան վկայ եմ այս վերագրելոցս»[2]։

8. Ապուշամբ.— Վայոց ձորի իշխան։ Հավանաբար Աշոտ գահերեց իշխանի վասալներից մեկը[3]։

---

[1] Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 207։
[2] Նույն տեղում, էջ 273։
[3] Շապուհ Բագրատունի, էջ 81։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1939։
2. Կ. Մարքս, Էնտիր երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1941։
3. К. Маркс, Капитал, том III, часть II, Госиздат, Москва, 1929.
4. Маркс-Энгельс, Немецкая идеология, տես Маркс и Энгельс, Сочинения, том IV.
5. Ф. Энгельс, Из рукописного наследства Энгельса, տես Маркс и Энгельс, Сочинения, том XVI, ч. I.
6. Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940։
7. Ֆ. Էնգելս, «Մարքը», տես «Սոցիալիզմի զարգացումը utopիայից գեպի գիտություն», Երևան, 1933։
8. Վ. Ի. Լենին, Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1938։
9. Ի. Վ. Ստալին, Զրույց գերմանական գրող Էմիլ Լյուդվիգի հետ, Երևան, 1933։

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայկական

1. Անանիա Շիրակացի, Աշխարհացույց (տես Ա. Աբրահամյանի «Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944 թ.)։
2. Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։
3. Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։

4. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910:
5. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
6. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
7. Ղևոնդ Վարդապետ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:
8. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
9. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913:
10. Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, Էջմիածին, 1921:
11. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911:
12. Ստեփանոս Օրբելյան, Ողբ, Թիֆլիս, 1885:
13. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրութիւն (Ա. Աբրահամյանի հրատարակությամբ), Երևան, 1942:
14. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
15. Սեբեոս եպիսկոպոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913:
16. Վարդան Արևելցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:

Ձեռագրեր

17. Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական»-ի ձեռագրեր № № 5501, 6271, 1488 (մնացած 6 ձեռագրերը ոչ մի նորություն չեն տալիս):

Այլ ձեռագրեր

18. ՀՍՍՌ Պետական մատենադարանի № 7822 ձեռագիր
19. » » » № 3409 »
20. » » » № 7584 »

№ ը/կ	Փաստաթղթի բովանդակությունը	Ցարեթիվ	Հեղինակ	Էջեր
1	Գյուղերի վաճառքի պայմանագիր.	839	Դավիթ եպիսկոպոս և Փիլիպպե 1-ին իշխան.	Ս. Օրբելյան, էջ 205—206.
2	Տաթև գյուղի նվիրատվության «գիր-վճիռ».	844	Փիլիպպե 1-ին իշխան.	Ս. Օրբելյան, էջ 206—208.
3	Նորաշենիկ գյուղի նվիրատվության «նամակ-վճիռ».	844	Հրահատ իշխան.	Ս. Օրբելյան, էջ 209—211.
4	Մաճ շենի նվիրատվության «վճիռ-պայմանագիր».	867	Քուպղիդուխտ.	Ս. Օրբելյան, էջ 218—220.
5	Բեխ և Արուքս գյուղերի փոխանակման մասին կնքված «վճիռ-պայմանագիր».	871	Սողոմոն եպիսկոպոս և Ջհանշեր իշխան.	Ս. Օրբելյան, էջ 217—218.
6	Դարատափը գնելու մասին թողած «կտակ-հիշատակ».	881	Սողոմոն եպիսկոպոս.	Ս. Օրբելյան, էջ 215—216.
7	Կոթավանքի արձանագրությունը.	860-901	Գրիգոր Սուփան 2-րդ.	Ս. Օրբելյան, էջ 177—179, Ալիշան, «Սիսական», էջ 55, Կոստանյան, «Վիմ. տարեգիր», էջ 4-5, Շահխաթունյանց, «Ստորագրություն...», հ. 2, էջ 243—244, Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունի...», էջ 534.
8	Մաքենացոց ուխտի արձանագրությունը.	860-901	Գրիգոր Սուփան 2-րդ.	Ս. Օրբելյան, էջ 179—181, Ալիշան, «Սիսական», էջ 68, Կոստանյան, «Վիմ. տարեգիր», էջ 5.
9	Վանեվանի վանքի արձանագրությունը.	903	Շապուհ Բագրատունի.	Ս. Օրբելյան, էջ 181—182, Ալիշան, «Սիսական», էջ 60—61, Կոստանյան, «Վիմ. տարեգիր», էջ 6, Շահխաթունյանց, «Ստո-

Ն/կ	Փաստաթղթի բովանդակությունը	Տարեթիվ	Հեղինակ	Էջեր
				բադր.», հ. 2, էջ 251, Ջալալյանց, «Ճանապարհորդ.», մասն 2-րդ, էջ 120.
10	Տաթևի վանքի սահմանները որոշող «գիր-վճիռ».	906	Սյունյաց իշխաններ.	Ս. Օրբելյան, էջ 230—234, Ջալալյանց, «Ճանապարհորդ.», մասն 2-րդ, էջ 270—272.
11	Արձանագրություն.	907	Գրիգոր Սուփան 2-րդ.	Կոստանյան, «Վիմ. տար.», էջ 6, Ալիշան, «Այրարատ», էջ 289.
12	Խոտակերաց (Քարակոփի) վանքի արձանագրություն.	910	Շուշան իշխանուհի.	Ս. Օրբելյան, էջ 236—238, Ջալալյանց, «Ճանապարհորդ.», մասն 2-րդ, էջ 168—169, Կոստանյան, «Վիմ. տար.», էջ 6—7.
13	Կակույս գյուղը Տաթևի վանքին նվիրելու «գիր-վճիռ».	920	Սմբատ դահերեց իշխան.	Ս. Օրբելյան, էջ 267—268.
14	Վաղավեր և Տաշդակերտ գյուղերի փոխանակման վճիռ.	925	Զագիկ իշխան.	Ս. Օրբելյան, էջ 272—273.
15	Վարարակի ջուրը գնելու արձանագրությունը մագաղաթի վրա.	932	Հակոբ եպիսկոպոս.	Ս. Օրբելյան, էջ 254—255.
16	Վարարակի ջուրը վաճառելու մասին վճիռ.	932	Փիլիպպե 2-րդ իշխան.	Ս. Օրբելյան, էջ 255—256.
17	Գնդեվանքի արձանագրություն.	936	Սոփիա.	Ս. Օրբելյան, էջ 261—262, Ալիշան, «Սիսական», էջ 104—105, Կոստանյան, «Վիմ. տար.», էջ 7—8: (Օրբելյանը լրիվ ընթերցել է իր ժամանակի այս

№ ը/կ	Փաստաթղթի բովանդակությունը	Տարեթիվ	Հեղինակ	Էջեր
				արձանագրությունը ու մեջ բերել. այժմ այդ արձանագրությունից մի բեկոր է մնացել. տես Ալիշան, «Սիսական», էջ 105).
18	Ագուերծ և Ցուբականխոռ գյուղերը նվիրելու մասին «արձան.-հիշատակ».	943	Փիլիպպե 2-րդ իշխան.	Ս. Օրբելյան, էջ 269—270.
19	Տամալեկք ապրստամբ գյուղի գնման մասին «արձան.-վճիռ».	940-ական թվեր	Հակոբ եպիսկոպոս.	Ս. Օրբելյան, էջ 271—272.
20	Հաժիս և Ծածարդ գյուղերը նվիրելու մասին «վճիռ-պայման».	963	Սմբատ 2-րդ իշխան.	Ս. Օրբելյան, էջ 288.
21	Տեղ գյուղը և 6000 դրամ Տաթևի վանքին նվիրելու մասին «վճիռ».	988	Շահանդուխտ թագուհին և իր որդիները.	Ս. Օրբելյան, էջ 291—292.

ՕՏԱՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Աբու-Թահիր ալ-Մակդիսի
2. Աբու-Մանսուր Աբդուլկահիր իբն-Թահիր
3. Ալի-աբու-լ-Հասան ալ-Մասուդի
4. Ահմեդ իբն-Դաուդ ադ-Դինավարի
5. Գրիգորի Աբու-լ-Ֆարաջ իբն-Ահրուն իբն-լ-Իբրի
6. Իբն-Մուհամմեդ Բաղդադցի
7. Մասուդ
8. Մուհամմեդ Տաբարի

} Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ, գույք № 578, „Материалы о Бабеке (арабские авторы) выдержки. Перевод П. К. Жузе, տես նաև գույք № № 577, 1088:

9. Զաքարյա Հռետոր, «Ժամանակագրութիւն», տես Н. Пигулевская, „Сирийские источники по истории народов СССР“ Москва, 1941 г.
10. Կուդայամա, «Գիրք խարաջի մասին», տես Караулов-ի „Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане“, տես „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, Тифлис, выпуск XXXII, 1903 г.
11. Յակոբի, տես Մարկվարտի «Բագրատունեաց ծագումը», Վիեննա, 1913 թ.:
12. Ստեփան Տարեցի, «Դորբոնի վկայութիւն», տես Մելիքսեթ-բեկի «Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին», հ. 1, Երևան, 1934 թ.:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղևոնդ, Սիսական, Վենետիկ, 1893 թ.:
2. Ալիշան Ղևոնդ, Այրարատ, Վենետիկ, 1890 թ.:
3. Ակինյան, Հայ Բագրատունիների տոհմածառը, Վիեննա, 1830 թ.:
4. Աճառյան Հր., Արմատական բառարան:
5. Բարխուդարյան Մակար եպիսկոպոս, «Պատմութիւն Ազուանից», հ. 1, Վաղարշապատ, 1902 թ.:
6. Ինճիճյան Հ. Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822 թ.:
7. Ինճիճյան Հ. Ղ., Հնախոսութիւն Հայաստանեայց Աշխարհի, հ. 1, Վենետիկ, 1835 թ.:
8. Ինճիճյան Հ. Ղ., Հնախոսութիւն Հայաստանեայց Աշխարհի, հ. 2, Վենետիկ, 1835 թ.:
9 Լեո, Հայոց Պատմություն. հ. 2, Երևան, 1947 թ.:
10. Լեո, Կոմունիզմը Հայոց Պատմության մեջ, տես «Նորք», 1922 թ., № 1:
11. Լալայան Երվանդ, Զանգեզուր իգաւառ, հ. 2, «Զանգեզուր», Թիֆլիս, 1899 թ.:
12. Լալայան Երվանդ, Զանգեզուրի գաւառ, հ. 1, «Սիսական», Թիֆլիս, 1898 թ.:
13. Կոստանյան Կ., Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913 թ.:
14. Հայկազյան բառգիրք:
15. Մանանդյան Հակոբ, Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939 թ.:
16. Մանանդյան Հակոբ, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934 թ.:
17. Մանանդյան Հակոբ, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936 թ.:

18. Մանանդյան Հակոբ, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում (ձեռագրի իրավունքով), Երևան, 1922 թ.:
19. Մանանդյան Հակոբ, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940 թ.:
20. Մանանդյան Հակոբ, Հայաստանի արքունի հարկերը Մարզպանության շրջանում, տես «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1926 թ., № 1:
21. Մանանդյան Հակոբ, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին Մարզպանության շրջանում, Երևան, 1925 թ.:
22. Մարկվարտ, Բագրատունեաց ծագումը, Վիեննա, 1913 թ.:
23. Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, Երևան, 1934 թ.:
24. Մալխասյան Ս., Բացատրական բառարան:
25. Շահումյան Ստեփան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1957 թ.:
26. Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842 թ.:
27. Չամչյանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վենետիկ, 1785 թ.:
28. Պալասանյան, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1890 թ.:
29. Ջավախիշվիլի Ի., Մի էջ գյուղացիական շարժման պատմությունից հին Հայաստանում, տես «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար», Երևան, 1937 թ.:
30. Ջալալյանց Սարգիս, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն 2, Թիֆլիս, 1858 թ.:
31. Սամվելյան Խաչիկ, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939 թ.:
32. Սեղբակյան Արիստակես վարդապետ, Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակայ, Վաղարշապատ, 1872 թ.:
33. Սմբատեանց Մեսրոպ արքեպիսկոպոս, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1895 թ.:
34. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912 թ.:
35. Адонц Н., Армения в эпоху Юстиниана, С. Петербург, 1908 г.
36. Абраамян А., Крестьянское движение в Сисакане в X веке, տես „Исторические записки“, Москва, 1938 г., № 5.
37. Джавахов И., „Государственный строй древней Грузии и древней Армении, том I, С. Петербург, 1905 г.
38. Марр Н. Я., Ани, Ленинград-Москва, 1934 г.
39. Манандян А., О торговле и городах Армении, Ереван, 1930 г.
40. Манандян А., Проблемы общественного строя доаршакидской Армении, տես „Исторические записки“, 1945 г., № 15:

41. „Очерки по истории Азербайджана", ملى „Известия Академии наук Азербайджанской ССР" (Отдел обшеств. наук), выпуск № 1, 1946 г., Баку.
42. Шахназарян А., Двин, историко-географический очерк, Ереван, 1940 г.
43. Ямпольский З. И., Восстание Бабека, Баку, 1941 г.
44. I. Lourent, „L'armenie entre Byzance et l'islam", Paris, 1919.

РЕЗЮМЕ

В изучении истории армянского народа периода царствования Багратидов в целом весьма важное значение имеет марксистское освещение истории отдельных земель («ашхаров») Армении того времени. В этой области мы до сих пор имеем серьезные пробелы.

В глубокой древности Сюникская земля («Сюняц ашхар») представляла собой цельное нахарарство. В период марзпанства, Аршакидов и арабского господства Сюник имел значительный удельный вес и обладал крупным военным потенциалом. Однако в первоисточниках (армянских и иностранных) мы не находим никаких сведений, касающихся жизни Сюника VIII в. Он вновь появляется на общественно-политической арене в IX в., но уже с иным политическим строем.

В указанный период Сюник представлял собой страну уже не цельного нахарарства, а отдельных княжеств. В результате центробежных стремлений «сепухов» (членов нахарарского дома по мужской линии) нахарарская система распадалась. Не подлежавшие раздроблению и отчуждению земли, которые составляли собственность нахарарского рода, были разделены между сепухами, каждый из которых, став единоличным собственником доставшихся ему земель, превращался в отдельного, самостоятельного «ишхана» (князя). Сепухи выпадали из родовой связи и образовывали особое сословие дворян-землевладельцев. Вот почему в Сюнике

начала IX в. мы имеем не одного «нахапета» (нахарара), а целый ряд самостоятельных правителей-«ишханов». Так рушилась нахарарская система и на ее развалинах возникало большое количество самостоятельных княжеств, правители которых подчинялись в порядке вассальной зависимости одному из наиболее сильных и влиятельных ишханов. Последний становился их сюзереном и назывался «гахерец», т. е. старший по престолу. В начале IX в. гахерецом был ишхан Васак.

Известная нам политическая история IX века начинается с похода арабского полководца Севады Авараншана в Армению в 821 г. Гахерец ишхан Васак, заключив союз с Бабеком, с помощью его мощной военной поддержки изгоняет Севаду из страны. Этим закладывается фундамент для установления дружественных взаимоотношений между Бабеком и Сюникским княжеством.

Вопрос о взаимоотношениях между Сюником (и вообще Арменией) и вождем хуррамитского движения Бабеком до настоящего времени считался запутанным и не находил должного освещения в советской армянской историографии. Более того, взаимоотношения братских народов — армянского и азербайджанского — в рассматриваемый период искажались и затуманивались клерикально-феодальной и буржуазной историографией. Здесь мы впервые пытаемся дать новое освещение этого вопроса. В результате обстоятельного изучения армянских и арабских первоисточников мы пришли к следующим выводам.

Предводитель развернувшегося в Атропатене хуррамистского движения Бабек был приглашен в Сюник, а также в Арцах и Албанию местными князьями.

Наиболее мощной из сил, действовавших в 820—830 гг. против арабского господства, было бабекидское движение. Князья, владевшие Сюником, Арцахом, Албанией и изнывавшие под арабским игом, примыкают к

возглавляемой Бабеком освободительной борьбе, с целью использовать его военные силы против арабов. Васак Сюникский первый вступает в переговоры с Бабеком и приглашает его в Сюник для борьбы против араба Севады Авараншана, после чего Бабек женится на дочери Васака и распространяет свое влияние на Цгукский округ (821 г.). В 821—825 гг. с Бабеком заключают союз, приглашают к себе и устанавливают с ним родственные связи также князья Арцаха и Албании (Сахл, Степан Аблабас).

Бабекидское (хуррамитское) движение являлось освободительной борьбой, направленной прежде всего против господства арабов, но одновременно оно являлось и социальным движением, направленным как против чужеземных, так и против собственных угнетателей, против феодальной знати.

Вместе с бабекидами в Сюник, Арцах и Албанию проникают социально-политические идеи об общем владении, о равенстве в использовании даров природы, о ликвидации крупного землевладения, имущественном равенстве, религиозной свободе, наивные попытки объяснения мира.

Трудящиеся крестьяне указанных областей увлекаются этими идеями и проявляют свои симпатии к бабекидам. Феодальные князья-владетели Сюника, Арцаха и Албании, видя в бабекидском движении социальную угрозу своим классовым интересам, идут на разрыв союза с Бабеком, перестают подчиняться «нечестивому Бабану» (Бабеку) и исполнять его «законы и приказы». Силой оружия Бабек приводит к повиновению взбунтовавшихся против него князей Багка, Гелакуни, Балласакана и, укрепив свой тыл, вновь обращает оружие против арабов.

В первой половине 830-х годов движение бабекидов достигает высшей точки своего развития. В эти же годы, вдохновляемые победоносным хуррамитским движени-

ем, подъем освободительной борьбы переживают Армения, Албания и Грузия.

Феодальные князья, в надежде на скорое низвержение арабского ига, временно забыв о социальных противоречиях между бабекидским движением и своими собственными интересами, поддерживают тыл Бабека путем освободительных движений (восстание против Хола в Армении в 831—832 гг. и смутное положение в стране в последующие годы, восстание Сахла в Албании в 836 г., повторное выступление цанов в Грузии).

С 836 года положение меняется. Бабек терпит поражение за поражением, после чего бежит в Армению — в Сюник. Здесь он пытается восстановить армию и, перенеся освободительное движение в Армению, освободить ее от арабского владычества. Однако господствовавшее дворянство, усматривая в этом движении социальную опасность для своих интересов, выступило против этих планов. Более того, будучи подкуплены арабами, князья Сюника и Арцаха помогли арабам окончательно разгромить бабекидское движение и расправиться с самим Бабеком. Предательски арестовав Бабека, князь Сахл бросил ему в лицо: «Ты простой пастух баранов и коров, какое тебе дело до управления государством и ведения политики?» В этих словах выразилась вся ненависть феодальных князей к движению хуррамитов и к их отважному вождю.

В середине IX века разгорелась межфеодальная война между гахерецом и представителями княжеской ветви Гелакуника. Эту межфеодальную войну Лео ошибочно обуславливает внешними причинами — страхом перед походом Бугая. Подвергая критике это ошибочное положение, мы показываем, что эта межфеодальная война представляла собой явление, вытекавшее из сущности феодального общественного строя, из внутриклассовых противоречий и заслуживала осуждения с

точки зрения интересов народных масс и обороны страны.

Во второй половине IX в. Сюникские князья вовлекаются в сферу политики ширакских Багратидов, становятся их друзьями и подчиненными, оказывают им всяческое содействие в создании и укреплении централизованной власти царства Багратидов.

После создания царства Багратидов Сюник признает его сюзереном и становится его вассалом. Ошибаются те историки, которые считают, что при Смбате I Багратуни Сюник был завоеван и включен в состав владений Багратидов. Сюник находился лишь в вассальной зависимости от Багратидов, что задерживало распад его внутренней иерархии.

Вполне естественно, что в начале X в. (903 г.) произошло столкновение между царем Багратидов и ишханом гахерецом Сюникским, т. е. между сюзереном и вассалом. Единственной причиной столкновения явилось невыполнение вассалом гахерец-ишханом Сюникским (Ашотом) своих налоговых обязанностей, а ближайшим поводом послужил Нахичеванский конфликт. Это восстание Сюника явилось регрессивным актом, поскольку оно представляло борьбу центробежных сил против централизованной власти. Восстание было подавлено центральной властью и Сюник продолжал оставаться в феодальном подчинении Багратидам, в качестве их налогоплательщика.

Походы атрпатаканских «востиканов» (эмиров) в Армению в первые десятилетия X в. вызвали значительные территориальные изменения и внутриполитические сдвиги в жизни Сюника. Достигнув в 909 г. Нахичевана, Юсуп наступает оттуда на Сюник, с тем, чтобы вывести из строя этого верного и сильнейшего вассала Багратидского царя. Сюнийцы организуют сопротивление, которое, однако, подавляется превосходящими силами врага. Гахерец ишхан Смбат и брат его Саак бегут из

страны, владетельный князь Гелакуника Григор Супан II сдается Юсупу, а его братья, Саак и Васак, бегут в Гардман и Арцах. Остальные Сюникские князья укрываются в неприступных замках, бросив страну и народ на расправу врагам.

Когда опасность, в основном, миновала, Сюникские ишханы вернулись в свою страну. Первым вернулся гахерец ишхан Смбат, который, как вассал Багратидов, поехал к новопомазанному Багратидскому царю Ашоту II Еркату (Железному) для заверения его в своей покорности. Вскоре он был восстановлен в своих правах гахереца. Примеру Смбата последовал ишхан Гелакуника Васак, которого Ашот Еркат «поставил во главе его государства». В этот период Гелакуни вышел из-под суверенитета Сюникского гахереца и самостоятельно подчинился политическому и административному суверенитету Багратидов. Однако, вскоре, в 919—920 гг., Ашот Еркат арестовал последнего Гелакунинского ишхана Васака и, ликвидировав его самостоятельное княжество, присоединил Гелакунинский округ к своим владениям. Из состава Сюникской территории выпали также Ернджакский округ и Нахичеван, которые перешли к Гохтанскому эмирату арабов. Сократились владения и княжеского дома самих гахерецов. Распадение территории гахерецов и ослабление власти подорвало их авторитет и политическую позицию, вследствие чего политическая гегемония вскоре перешла из Вайоц на юго-восток — в Багк.

В конце IX и в первой половине X вв. в Сюнике усиливается княжеский дом Дзагикянов, которым принадлежали округ «Другой Багк» (Кашуник) и город Капан. Вообще в 40—50 гг. X в. Сюник переживает процесс децентрализации политической власти, процесс политического распыления. Однако, в 60—70 гг. того же века, мы наблюдаем новую консолидацию, новое сплочение политических сил, которое приводит к новому политическому объединению. В середине 970-х годов организовалось Сюникско-Багское царство.

Марксизм учит, что главной формой собственности в эпоху феодализма являлась земельная собственность. По мнению проф. Х. Самвеляна, в Армении Багратидского периода право собственности на землю и воду принадлежало государству, царю, а земельное право ишханов выражалось в праве на пользование, т. е. в dominium utile.

Подвергая критике эту ошибочную концепцию, мы, на основе документальных данных, показываем, что в Сюнике IX—X вв. высшее право собственности на землю и воду принадлежало не государству, а самим Сюникским ишханам и церкви и, что право последних на землю и воду выражалось не в dominium utile, а в dominium directum.

В результате роста социального и политического положения сепухов после распада нахарарской системы меняется также их звание. Теперь они называются по-новому—«гахакалами» (владетельными князьями). Распад нахарарской системы изменил также внутреннее содержание ряда древних титулов, присущих этой системе («гахерец ишхан» — старший по престолу князь, «ишхан-ац-ишхан» — князь князей, «тер» — владетель, господин и пр.), а часть титулов лишилась своего содержания и вышла из употребления («нахарар», «нагапет», «сепух»).

Все виды земель владетельных князей назывались «айреник» (вотчина). «Айреник» является древней формой землевладения, существовавшей еще со времени Аршакидов (I—V вв.). Н. Адонц и академик Я. А. Манандян отождествляют «айреник» с allod-ом периода Меровингов и считают, что это были земли вроде русской вотчины, которые переходили из поколения в поколение по наследству на правах полной собственности, что они представляли собой не условные feod-ы, а

полную и безусловную собственность, наподобие вотчин. Вопреки этим ученым, проф. Самвелян считает, что понятие «айреник» периода Аршакидов не соответствует allod-у периода Меровингов, а идентично с feod-ом; другими словами, «айреник» представляет собой нахарарское владение, полученное за заслуги от царя в пользование на правах неполной, условной собственности и переходившее по наследству из поколения в поколение.

Н. Адонц и Я. А. Манандян здесь правы, но с некоторой оговоркой. Понятие «айреник» нахарарского периода было близко к allod-у Меровингского периода постольку, поскольку обе эти формы владения, наподобие русской вотчины, являлись полной и безусловной собственностью князей-землевладельцев (нахараров). Но отличие «айреника» от allod-а заключалось в том, что, как указывает Энгельс, allod Меровингов являлся «свободно отчуждаемой земельной собственностью», служил предметом купли и продажи, «товаром» и, как таковой, являлся делимым. «Айреник» же в период нахарарства не мог быть свободно отчуждаем, не мог служить предметом купли и продажи, не был превращен в товар и, как собственность нахарарского дома, не подлежал разделу между «сепухами» (на правах собственности). Различие между указанными формами владения заключалось еще и в том, что покупные земли («гандзагинк») в период нахарарства не входили в состав земельных площадей «айреника», между тем как они не могли не включаться в состав allod-а в период Меровингов. Таково было понятие «айреника» в нахарарском Сюнике.

Однако с распадом нахарарской системы принадлежавший нахарарскому дому «айреник» стал уже подвергаться разделу между сепухами, каждый из которых, на правах полной частной собственности, становился хозяином доставшейся ему земельной площади, которая свободно могла быть отчуждаема и подвержена дальнейшему разделу, несмотря на то, что такие владения продолжали обозначаться прежним термином «айреник». Покупные земли («гандзагинк») прежде не входили в состав «айреника», в период же ишханства в него включались не только покупные участки, но и земли, приобретенные иными путями (путем захвата и т. п.), хотя такое владение и продолжало носить название «айреник». Следовательно, понятие нахарарского «айреника» претерпевает как внутреннее, так и внешнее изменение.

В результате имевших место изменений «айреник» IX—X веков уже не соответствовал, как по содержанию, так и по составу, «айренику» нахарарского периода. Однако вследствие этих изменений он вполне и целиком соответствовал allod-у Меровингского периода. Если нахарарский «айреник» имел сходство с allod-ом Меровингов, то ишханский «айреник» был с ним тождественен.

Не заметив указанные выше изменения и сдвиги, проф. Х. Самвелян ошибочно обособляет покупные земли («гандзагинк») средневековой Армении, включая и Сюник, от «айреника» и считает их схожими с allod-ом, «айреник» же ишханского периода (унаследованные земли) он тем более ошибочно считает feod-ом.

Церковь в Сюнике также являлась феодалом-землевладельцем. Несмотря на то, что после объявления христианства официальной религией Армении, оно проникло через господствующий класс и в Сюник, но окончательную победу среди народных масс Сюника одержало гораздо позднее. Лишь в VIII веке был создан религиозный центр в Татеве. Приспособляясь к феодальной среде, сюникская церковь стала крупным землевладельцем и, как таковая, достигла своего расцвета в IX—X вв. Высшее право собственности на церковные земли принадлежало Татевскому монастырю на правах dominium directum. Все земельные угодья церкви («ган-

дзагинк», «хогецатур») также назывались «айреником».

Как светские землевладельцы — ишханы, так и церковь раздавали участки земли, составлявшей их собственность («айреник»), отдельным мелким дворянам («азатам») и духовным служителям за оказанные им услуги на правах dominium utile. Такой, сданный землевладельцам участок, назывался «хостак» (feod, Lehn), а владелец его, будь он светским или духовным лицом, — «хостакдаром» (Lehnshalter). Однако не все свои земли князья и церковь отдавали «хостакдарам». Часть земель они оставляли себе для ведения собственного хозяйства. В IX—X вв., как церковь, так и владетельные князья Сюника, вели свое собственное хозяйство. Эти хозяйства назывались «агараками».

Господствующий в Сюнике класс состоял из двух сословий, каждое из которых имело свою особую политическую структуру — светскую и духовную иерархию. У подножья светской иерархической пирамиды стояли мелкие дворяне — «азаты», вторую ступень занимали владетельные князья — «ишхан гахакалы», а на вершине восседал старший по престолу князь — «гахерец ишхан». Когда же Сюник подчинился суверенитету Багратидов, к его иерархической лестнице прибавилась еще четвертая ступень — царь Багратуни, в качестве политического сюзерена. Эта четырехступенчатая иерархия Сюника отличалась от прежней иерархии нахарарского периода.

Вассальное подчинение на нижней ступени базировалось на земельной зависимости, а на остальных ступенях — на личной зависимости. По ошибочному же мнению Х. Самвеляна, вассальное подчинение на всех ступенях базировалось на земельной зависимости.

По отношению к сюзерену у вассалов было три основных вида обязательств: военное, служебное («горцакалакан») и налоговое.

Духовная иерархия состояла, считая сверху вниз, из

католикоса, епископов отдельных провинций, духовных хостакдаров всех провинций, включая и земли патриаршества. Эта духовная иерархия отличалась от светской: во все периоды она была трехступенчатой и всеармянской.

Обстоятельное изучение первоисточников и документов показывает, что в IX—X вв. сюникское крестьянство делилось в правовом и социальном отношении на три слоя, а именно: на крестьян крепостных, полусвободных **зависимых** («хин айрени тер») и **свободных**. Эти слои крестьянства, образовавшиеся в результате распада сельской общины в течение веков, сосуществовали рядом. Но в указанный период тенденция к закабалению крестьянства все более возрастала. На примере Сюника мы видим, что между свободным крестьянином и крепостным стоит категория крестьян — «хин айрени тер».

Процесс закабаления свободного и полусвободного, зависимого крестьянства в изучаемый период продолжался, что вызывало сопротивление с его стороны, толкало его на путь классовой борьбы.

Основное средство производства — земля в Сюнике IX—X веков являлась в руках феодальных князей орудием, с помощью которого они присваивали себе продукт крестьянского труда в виде земельной ренты. Как известно, земельная рента при феодальном строе выражалась в трех формах: обработочной (барщины), продуктовой и денежной ренты, которые сменяют друг друга, но одновременно могут и сосуществовать, в смешанном виде. «Различные формы ренты, — пишет Маркс, — могут сочетаться, затушевываться и сливаться». Факты показывают, что в Сюнике указанного периода, существовала не только первая форма ренты, а она переходила также во вторую и третью формы, причем все они существовали рядом.

В Сюнике изучаемого периода светские землевла-

580—23

дельцы — ишханы взимали налоги двух видов: «ашхаракан» и «аркуни». Подлинный смысл налога «ашхаракан» — это земельная рента («ашхар» означает «земля»), взятая в трех ее формах. В общее понятие налогов «аркуни» входили как налоги, взимаемые в пользу государства (Багратидского царства, а до начала X века также халифата), так и дополнительные налоги в пользу Сюникских ишханов (которые также называли свой политико-административный аппарат и ишханский дворец «аркуником»). Налоги, взимавшиеся в пользу государства, назывались «непаком». Х. Самвелян ошибается, утверждая, что в средневековой Армении «рента и налог заключают в себе одну и ту же сущность». Рента в Сюнике не совпадает с налогом, а отличается от него, заключая в себе иную сущность.

Церковь также взимала налоги двоякого рода. С деревень, составлявших ее собственность, она выжимала ренту в виде десятины («хулавар») и плюс к этому со всех деревень взимала особый церковный сбор «птух». Сохранившийся у Орбеляна налоговой список, который по фактическим данным является документом X века, представляет собой налоговый список по «птуху»; рента («хулавар») в него не входила. «Непак» и «птух» являлись налогами, общими для всех деревень.

В IX и особенно в X веке Сюник также переживал свой период развития городской жизни, период оживленных товарных и товарно-денежных отношений. На торговом пути Двин — Партав, пролегавшем через Сюник, возникли торговые пункты, города и поселки (Бердкунг, Макенис, Кот, Сот, Цмак, Гегамабак, Ехегис), в которых существовали лавки, постоялые дворы, гостиницы. Цветущим городом X века был также Капан. О существовании денежных отношений говорят и содержащиеся в разных документах факты многочисленных крупных сделок, совершавшихся посредством денег. Об этом же говорит наличие арендной системы,

которая «приближалась к денежной ренте» (Ленин). Вполне понятно, что в этих условиях налоги и рента должны были взиматься деньгами. Имеются факты, говорящие о том, что «непак» и «птух» взимались деньгами.

В результате продолжавшегося процесса закабаления крестьян, оживления торгово-денежных отношений, возникновения денежной ренты усиливались эксплуатация и угнетение, с одной стороны, и углублялось имущественное неравенство, шло дальнейшее накопление имущества и богатства в руках малочисленных представителей господствовавшего класса, с другой. Эти общественные процессы естественно должны были вызвать углубление классового антагонизма и продолжить путь к беспощадным классовым битвам. И, действительно, в начале X века Багратидская Армения, в том числе и Сюник, содрогались от потрясений классовой борьбы; повстанческих движений крестьян.

Борьбу сюникских крестьян в течение X века можно разбить на три периода. Первый период охватывал второе десятилетие X века, второй — четвертое десятилетие, третий — последнее десятилетие. Хотя мы задались целью дать историю классовой борьбы в Сюнике, но ввиду ее связи с крестьянским движением, развернувшимся по всей Багратидской Армении, попутно излагаем также историю последнего.

Подробно изложив (по данным первоисточников) историю классовой борьбы, развернувшейся во втором десятилетии X века в Сюнике и во всей Багратидской Армении, подвергнув критике допущенные в армянской историографии ошибочные толкования или положения, мы пришли к следующим выводам:

1. Классовая борьба второго десятилетия X века являлась крестьянским движением, носившим в той или иной мере всеобщий характер (в относительном смысле), причем в этом движении принимал участие также

городской плебс («нвазунк»). Это обстоятельство явилось, пожалуй, первым случаем в истории классовой борьбы средневековой Армении и придало движению общенародный характер.

2. Классовая борьба в отмеченное десятилетие представляла собой более последовательное и далеко идущее в своих действиях движение. Восставшие массы добились временной победы над своими хозяевами. В Сюнике повстанцы нанесли поражение духовным хозяевам Татевского монастыря, изгнали их оттуда и наложили «узы» («хангуйц») на монастырь и церкви, а восставшие в центральных округах плебсы («нвазунк») изгнали своих ишханов и начальников из их владений и по своему усмотрению назначили новых правителей и полководцев, по всей вероятности, из своих рядов. Восставшие крестьяне с оружием в руках жестоко расправлялись с феодальными князьями и духовными хозяевами, убивали их, громили замки, захватывали их богатства.

3. Классовая борьба в указанное десятилетие носила на себе влияние идеологии тондракийцев, которая, несмотря на завуалированность ее религиозными элементами, являлась выражением социальных стремлений и классовых интересов эксплуатировавшегося в то время класса и революционной идеологией своего времени.

4. Вопреки разглагольствованиям клерикально-феодальной и буржуазной историографии о том, что во время чужеземных нашествий классовой борьбы в Армении якобы не было, отмеченная классовая борьба второго десятилетия велась именно в условиях опустошительных нашествий чужеземных завоевателей. Чужеземное нашествие не только не предупредило, но, напротив, ускорило ее. Трудящиеся массы, вставшие на путь классовой борьбы против своих хозяев, одновременно боролись и против вторгшихся в их страну чужеземных

завоевателей. Эта классовая борьба заключала в себе также элементы освободительной борьбы.

Излагая историю второго и третьего периода крестьянских движений в Сюнике, в заключении работы мы подвергаем критике «оценки» классовой борьбы X века, данные клерикально-феодальными и буржуазными историками.

Исходя из движущих сил и стремлений движения, оцениваем его как социальную борьбу трудящегося крестьянства против господствующей феодальной знати и феодальной церкви. На основе положений классиков марксизма мы показываем также неизбежность поражения этих крестьянских восстаний.

В конце работы мы даем пространное приложение, посвященное анализу родословных ветвей Сюникских ишханов. Основываясь на первоисточниках, мы вносим необходимые поправки в родословную князей, составленную Алишаном и Лораном. Мы составили свою собственную схему княжеских ветвей.

UTMAZIAN H.

SUNIK DURING THE IX—X CENTURIES

(*Summary*)

The present book, bearing the title «Sunik during the IX—X centuries», is devoted to the enlightenment of the history, in the mentioned period, of one of the greatest provinces, known by the name of Sunik, of medieval Armenia. This study relies essentially upon the Armenian, and partly, upon the foreign original sources.

The structure and fundamental theses of this work, in a strictly abridged form, are as follows:

Firstly, it deals with the theory of the original sources and literature. In the opening chapter, explanation is given to the political history of Sunik, during the IX—X centuries, up to the creation of the «Baghats kingdom». In Sunik, in the early IX century, the nakhararic system, which was a characteristic feature of the early feudalism of Armenia, had already been dwindled. The territories, which were regarded as the indivisible ownership of the nakhararic house, had been divided among the Sepouhs (the male members of the nakhararic house) and had become their ownership. The sepouhs had risen socially and politically and had become independent princes. A new class of landlord aristocrats, the class of the «Gahakal»

(=holder of power) princes had come into existence. Feudalism had entered into a new, a higher phase of development.

The «gahakal» princes, as vassals, were subjected to the «Gaherets» (=the eldest holder of power) prince of Sunik.

Sunik, Artsakh, Aghvank and some other provinces, during the 820-ies and thirties were closely supporting the rising movement of the so called «Khurramits», in Aterpatakan.

The successes of that movement, headed by Babek, against the Arabic domination, were stimulating the struggle for emancipation, in Armenia and Georgia, too.

The ideas set forth by the khurramits, such as, the equal and common use of the benefits of nature, the annihilation of the big ownership, the freedom of religion, had seized the hearts of the Armenian peasantry, as well.

After the defeat of the khurramits movement, Babek had attempted to organize a new army in Armenia, aiming to develop a new drive of social and emancipatory struggle, but the Armenian feudal princes hampered his aims, arrested him and handed him over to the Arabs.

On the basis of factual material, it has been shown the political history of Sunik, the interrelations of the gahakal princes not only in among themselves, but also those in among them and the princes of the other provinces of Armenia. The princes ofSunik have wholeheartedly supported and helped up to restore the central state of Armenia, represented by the Bagratid dynasty, and have become the vassals of the Bagratids.

In about the middle of the tenth century, the overwhelming power of the gaherets princes of Vaiots Dzor (=Valley of vice) is weakening, the political centre is gradually moving to Baghk, and in the seventies of that same century a new political consolidation takes place, and «the kingdom of Sunjats-Baghats» is created.

In the second chapter clarification is given to the social economic relations concerning the right and shapes of the landownership, the exploiting classes, the religious and secular hierarchy, the vassalic dependence, the social-juris tical state of the peasantry, forms of feudal exploitation, and other questions.

In Sunik, the exploiting classes, that is, the gahakal landlord princes and the church, were the sole owners of the land and water, by the dominium directum right. Those lands of theirs were called «hairenik» (=fatherland) as in the nakhararic period, but this «hairenik», with its new characteristics, differed from that of the nakhararic period. It had undergone changes, both internal and external, in consequence of which, it now fully coincided with the «Allod» of the Merovingian period, thus, similar to it, being dividable, freely alienable, and subject to being bought and sold. There was an essential difference between the «hairenik» of the landlord princes and that of the church.

If the «hairenik» of the landlord prince could be divided among his heirs, thus being subjected to a process of parcelling, the «hairenik» of the church, however, sould not be divideb, and therefore, was free from parcelling. Reasonably enough, the church was considered to be a far bigger landowner, than the laic landlords were.

Due to the decay of the nakhararic system, and the development and deepening of feudalism, in the IX—X centuries, such specific terms of the nakhararic system, as—«Ter», «Nahapet», «Nakharar» (all with the same meaning of first lord of the feudal house), «Ishkhanats Ishkhan» (=prince of princes) «Kaherets Ishkhan» (=eldest holder of power), «Sepouh» (=male member of the nakhararic house), had undergone a radical change in meaning.

The landlord gahakal princes imparted a portion of their lands («hairenik») to the so called «azats», in the form of «Khostak», with the dominium utile right. «Khostak» is the equivalent of what is known to be «feod» or «Lehn» in Western Europe. The receiver of «khostak» was called «Khostakdar». The «azats» were those petty landlord aristocrats who constituted the lowest degree of the feudal hierarchy, and of whom the so called «azatagund» or the cavalry was formed. They were, judging from their external features, alike the «chevalier» order of Medieval France, and that of the «Ritter» in Germany.

In Sunik, the church too, had the same kind of «Khostakdaric» ownership. It was the middle and the upper layer of the clergy, that in return to the services offered by them in the church organization, received «Khostak» from the church, with the right of dominium utile.

Both the laic and the clerical khostakdars, apart from the «khostak», owned other lands, as well, with the right of dominium directum.

The laic and the clerical landowners were managing their own household on part of their lands («hairenik).

Such a household of theirs was called «agarak» (=Farm).

The secular and clerical hierarchy has been clearly determined and explained, as well as, the duties of the vassals towards their suzerain, and so on.

The decomposition of the village community, beginning from times immemorial, the corresponding transformation of the feudal environment, had reached to such a degree, that in the IX—X centuries, in Sunik, there existed side by side, free, dependent and under serfdom village communities, and accordingly, there were free, dependent («Hin haireni terk=old peasant landowners) and peasants under serfdom. The process of serfdom continued.

The exploitation of the peasants was carried out by means of collection of taxes and getting land-rent. The land-rent was called «ashkharakan hark», and the tax collected for the benefit of the political suzerain, the state, was called «Nepak», while the tax collected additionally

for the benefit of the feudal princes was called «Arkunj harker».

The land-rent drained bitterly by the landowner church was called «houlavar» (=tithe) and the supplementary tax was called «Ptugh».

«Nepak» and «Ptugh» were regarded as universal taxes, and were collected not only from free villages, but also, from all those, belonging both to the feudal princes and the church.

The land-rent was collected in its three forms, as well, while «Nepak» and «Bdugh» mostly in cash.

In Sunik, during the IX—X centuries, the economic life noticeably takes an upward trend, a certain revival in the commercial, monetary and barter relations is obvious. This upward trend was the result of the development in conformity with the internal natural laws of the whole of medieval Armenia, aided, as well, by the «Dvin-Partav» commercial route crossing the Sunik.

In the third chapter it has been disclosed in detail, the history of the class struggle of the peasantry of Sunik, against the landlord church and the feudal princes. That struggle was an uprising of the peasantry under serfdom against the exploiting feudal classes. It had three stages.

In the supplementary part there follows the analysis of the gahakal princely houses, their congeneric branches, that is, the successiveness of the representatives of the princely houses, their princely data, and the estates (=ashkharner) they occupied.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ԲԱՂՔԻ ՋԱԳԻԿՅԱՆՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ



ԵՐՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՒՆԸ



ՉՈՐՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԿՈՎՍԱԿԱՆ-ՔԱՇՈՒՆԻՔԻ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃՅՈՒՂ

ԲԱՂՔԻ ՋԱԳԻԿՅԱՆՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ



— ԳԱՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐ

— ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՆ ՀԱՍՆՈՂ ԻՇԽԱՆՆԵՐ

— ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՋՀԱՍԱԾ և ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՆԵՐ


ԱՌԱՋԻՆ ԺՑՈՒՂ
ԳԱՇԵՐԵՑ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ
ԵՐԿՐՈՐԴ ԺՑՈՒՂ
ԳԵՂԱՔՈՒՆՅԱՑ ԳԱՇԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ
1
ՎԱՍԱԿ (I)
ՍԵՐ ՆԱՇԱՊԵՏ
2
ՓԻԼԻՊՊԵ (I)
3
ՔՈՒՊՊԼԻ-ԴՈՒԽՏ
4
ԱՏՐՆԵՐ-ՍԵՂ
5
Ա. Ա.
2
ՍԱՀԱԿ
6
ԲԱԲԳԵՆ (I)
9
ՎԱՍԱԿ (II) ԻՇԽԱՆԿ
12
ԱՇՈՏ
3
ԳՐԻԳՈՐ ՍՈՒՓԱՆ (I)
4
ՀՐԱՇԱՏ
4
ԳԱԳԻԿ
7
ՎԱՀԱՆ
8
ՀԱՄԱՍ-ՊՈՒՐԻՑ
10
ՓԻԼԻՊՊԵ (II)
11
ԳՐԻԳՈՐ
5
ՎԱՍԱԿ ԳԱՐՈՒՆ
6
ՀՐԱՇԱՏ
13
ՍՄԲԱՏ (I)
14
ՍԱՀԱԿ
15
ԲԱԲԳԵՆ (II)
16
ՎԱՍԱԿ (III)
7
ԳՐԻԳՈՐ ՍՈՒՓԱՆ (II)
9
ՍԱՀԱԿ
9
ՎԱՍԱԿ
8
ԱՇՈՏ
17
Ա. Ա.
18
ՎԱՍԱԿ (IV)
19
ՍՄԲԱՏ (II) ԹԱԳԱՎՈՐ
ԳԱԳԻԿ
ՍՄԲԱՏ
ՎԱՍԱԿ ԹԱԳԱՎՈՐ
— ԳԱՇԵՐԵՑ ԻՇԽԱՆՆԵՐ
— ԳԱՇԱԿԱԼ ԻՇԽԱՆՆԵՐ
— ԳԱՇԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՆ ՀԱՄՆՈՂ ԻՇԽԱՆՆԵՐ
— ԳԱՇԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՉՀԱՍԱԾ ԵՎ ԻԳԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՆԵՐ
— ԳԱՇԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԸ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա.

Աբդուլլան, *Բաբեկի եղբայրը, 72։*

Աբլեհեր Զահասպ, *արաբ նվաճող, 78։*

Աբրահամյան Ա. Գ. *97, 232, 256, 258, 259, 260, 274։*

Աբու-Թահիր ալ-Մակդիսի, *տե՛ս Ալ-Մակդիսի։*

Աբու-լ-Ֆարաջ, *արաբ պատմիչ, 16, 73, 50, 66, 71։*

Աբու-լ-Ֆարաջ, իբն-Ահրուն, իբն-լ-Իբրի, *տե՛ս Աբու-լ-Ֆարաջ։*

Աբու-Մանսուր, *արաբ պատմիչ, 17, 37, 39, 42, 45։*

Աբու - Մանսուր Աբդուլ - Կահիր, իբն-Թահիր իբն-Մուհամմեդ Բաղդադցի, *տե՛ս Աբու-Մանսուր։*

Աբուսեթ, *արաբ ոստիկան, 80, 82։*

Ագաբանգեղոս *7, 154։*

Ադ-Դինավարի, *արաբ պատմիչ, 16, 28, 64, 69։*

Ադոնց Ն. *18, 28, 29, 135, 159, 167, 168, 170, 217, 218, 219։*

Ալի-աբու-լ-Հասան ալ-Մասուդ, *տե՛ս Ալ-Մասուդ։*

Ալի-ալ-Բադդիսի, *արաբ ոստիկան, 63։*

Ալի իբն-Եահիա-ալ Արմանի *60, 61։*

Ալիշան Ղևոնդ *17, 23, 24, 25, 30, 72, 78, 97, 98, 117, 230 237, 241, 242, 243, 249, 256, 285, 289, 290, 291, 292, 295, 302, 307, 308, 309, 310, 313, 314, 320, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332։*

Ալ-Մակդիսի, *արաբ պատմիչ, 17, 36, 37, 38, 39, 40, 41, 43, 45, 67, 69, 71, 74։*

Ալ-Մասուդ, *արաբ պատմիչ, 17, 38, 46, 74։*

Ահարոն, *վանական, 180։*

Ահմեդ Ամդացի *93։*

Ահմեդ իբն-Դաուդ ադ-Դինավարի, *տե՛ս Ադ-Դինավարի։*

Ահառյան Հ. *216, 219, 225, 249։*

Ամիր-Ահմատ, *ամիրապետ, 92։*

Անանիա Մոկացի, *կաթողիկոս, 127, 128, 129, 131, 132, 133, 300, 304, 328, 330, 331։*

Անանիա Շիրակացի *97։*

Անանուն Աղջիկ, *Վասակ (I) մեծ նահապետի աղջիկը, 290։*

Անդոկ, *Սյունիքի նախարար, 23, 154։*

Աշոտ, *գահերեց իշխան, 78, 85, 86, 87, 88, 93, 94, 95, 96, 100, 102, 106, 124, 137, 139, 140, 153, 156, 163, 179, 288, 289, 293, 294, 295, 296—298, 299, 300, 302, 303, 304, 305, 322։*

Աշոտ, *Գրիգոր Սուփան II-ի որդին, 313—314։*

Աշոտ, *եպիսկոպոս, 277։*

Աշոտ, *սպարապետ, 109, 110, 111, 114, 118։*

Աշոտ Արծրունի, *Վասպուրականի իշխան, 92, 97, 100, 101, 103։*

Աշոտ Բագրատունի, *թագավոր, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 184, 293, 311։*

Աշոտ II (Երկաթ) *16, 109, 114, 115, 116, 117, 118, 119, 191, 314, 315։*

Աշոտ Կույր *25։*

Աշոտ Մսակեր *61, 87։*

Ապուշամբ, *Վայոց ձորի իշխան, 94, 334։*

Առաքել, *Գտչո վանքի միաբան, 260, 280։*

Ավառանշան Սևադա, *արաբական զորքի հրամանատար, 31, 48, 58, 62, 63, 75։*

Ատրներսեհ, *վրաց բդեշխ, 92։*

Ատրներսեհ, *Վասակ մեծ նահապետի որդին, 31, 179, 194, 288, 289, 290, 316։*

Ատրներսեհ, *ըստ Ղ. Ալիշանի, Փիլիպպեի որդին, Սյունիքի իշխան, 24։*

Ատրներսեհ, *ըստ Լորանի, Սահակ մեծ նահապետի որդին, 307։*

Արիստակես Վարդապետ Սեդրակյան *76, 112։*

Արումաե, *Քաշունիքի իշխան, 307, 309, 319, 320, 321, 322։*

Աֆշին, *արաբ զորավար, 50, 54, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 73, 74, 92, 93, 100, 103, 294, 296, 298։*

Աֆշին Հայդար իբն-Կաուս, *տե՛ս Աֆշին։*

Բ

Բաբգեն I, *գահերեց իշխան, Փիլիպպե I-ի որդին, 78, 79, 80, 84, 288, 290—291, 292, 293։*

Բաբգեն II, *Աշոտ գահերեցի որդին, 107, 133, 137, 292, 293, 298, 299, 301, 302, 303, 304։*

Բաբեկ, *գյուղացիական շարժման ղեկավար, 25, 34, 35, 36, 37, 38, 39, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 290։*

Բարիկ, *Սյունիքի իշխան, Անդոկի որդին, 23։*

Բագրատ Բագրատունի, *Տարոնի իշխան, 76։*

Բարխուդարյանց Մակար, *եպիսկոպոս, 50, 65, 68։*

Բարտոլդ Վ., *պատմաբան, 47։*

Բուղա, *արաբ զորավար, 80, 81, 83, 84, 85, 86, 87, 91, 293, 311, 317, 333։*

Գ

Գագիկ, *Սահակ մեծ նահապետի որդին, 75, 193, 307, 308—310։*

Գագիկ, *Գրիգորի որդին, 317, 318—319։*

Գագիկ I *215, 216։*

Գագիկ Արծրունի, *Վասպուրականի իշխան, 97, 101, 105, 106, 109, 110, 111, 113, 137, 255։*

Գրիգոր, *դրան երեց, 180։*

Գրիգոր, *Կովսական-Քաշունիքի իշխան, Սահակ գահակալ իշխանի որդին, 319, 320, 321, 322։*

Գրիգոր, *Սյունիքի գահակալ իշխան, 25, 26, 148, 315—317, 318։*

Գրիգոր, *Վասակ իշխանիկի որդին, 217, 295։*

Գրիգոր, *քահանա, 180։*

Գրիգոր Դերենիկ, *Արծրունյաց իշխան, 92։*

Գրիգոր Լուսավորիչ *229։*

Գրիգոր, *Սյունիքի եպիսկոպոս, 6։*

Գրիգոր, *Սյունիքի եպիսկոպոս, 278, 279, 280։*

Գրիգոր Սուփան I, *գահակալ իշխան, 33, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 84, 149, 150, 179, 291, 307—308, 309, 310, 316, 318, 320։*

Գրիգոր Սուփան II, *գահակալ իշխան, 88, 91, 92, 96, 108, 109, 110, 115, 116, 118, 137, 153, 161, 163, 179, 184, 216, 241, 244, 247, 249, 254, 289, 311, 312, 314, 322։*

Գուրգեն, *վրաց բդեշխ, 118։*

Գուրգեն Արծրունի, *Վասպուրականի իշխան, 97, 101, 105, 106, 113, 137։*

Գևորգ, *անանուն իշխանի որդին, 332, 333։*

Գևորգ, *եպիսկոպոս, 138, 160։*

Գևորգ, *կաթողիկոս, 92, 297, 298։*

Դ

Դավիթ Կակաղեցի, *կաթողիկոս, 58, 60, 61, 62, 76։*

Դավիթ Կյուրապաղատ *94։*

Դավիթ, *Տաթևի վանքի եպիսկոպոս, 141, 142, 162, 185, 309 316, 319։*

Ե

Եզեկիել *11։*

Եղիշե *7, 11։*

Եսայի, *Արցախի իշխան, 68։*

Եսայի, *կաթողիկոս, 229։*

Զ

Զորյան Հ. *282։*

Է

Էնգելս Ֆ. 10, 11, 135, 159, 169, 170, 171, 186, 196, 197, 202, 206, 207, 212, 270, 271, 282, 284։

Թ

Թովմա Արծրունի 5, 88, 92, 94, 100, 101, 102, 103, 109, 192, 226, 297, 313, 317, 333։

Ժ

Ժուզե 16։

Ի

Իբն-Ֆազիյ, արաբ պատմիչ, 242։

Ինճիճյան Ղ. 32, 63, 149, 194։

Իսա իբն-Մուհամմեդ իբն-Աբու-Խալիդ, արաբ ոստիկան, 58։

Իստախրի, արաբ աշխարհագիր, 241 246։

Լ

Լալայան Ե. 160, 164։

Լենին Վ. Ի. 214, 215, 221, 222, 250։

Լեո 43, 47, 48, 49, 55, 62, 70, 80, 81, 82, 95, 101, 282։

Լորան Ժ. 24, 25, 30, 285, 288, 289, 290, 295, 303, 307, 320, 322։

Լուքեր 270։

Խ

Խալիդ իբն-Եզիդ իբն-Մազիադի, տե՛ս Հոլ։

Խոսրով, եպիսկոպոս, 127։

Խուբեցի Հովնան, գյուղացիական ապստամբության ղեկավար, 82։

Կ

Կարաուլով Ն. Ա. 16, 193։

Կիրակոս Գանձակեցի 5, 127, 128, 129, 131։

Կոստանյան Կ. 184։

Կորին, Գարդմանի իշխան, 85։

Կորին իշխան, 925 թ. մի վճիռ-պայմանագրում հիշատակված, 334։

Կրիստենսկի 43։

Կուդայամա, արաբ պատմիչ, 16։

Հ

Հակոբ, ավագերեց, 180։

Հակոբ I, Սյունիքի եպիսկոպոս, 126, 127, 128, 129, 131, 133, 146, 163, 164, 182, 183, 186, 194, 208, 209, 210, 241, 272, 273, 274, 276, 277, 280, 300, 329, 330, 331։

Հակոբ II, եպիսկոպոս, 277, 278։

Համամ, Աղվանքի իշխան, 92։

Համամուն, անանուն իշխանի կինը, Գևորգի մայրը, 332։

Համասպուրեի, Բարգեն I-ի դուստրը, 291, 292, 302։

Հայկ 33։

Հասան-ալ-Մասուդ, արաբ պատմիչ, 69, 73։

Հալլ, տե՛ս Հոլ։

Հոլ, արաբ ոստիկան, 57, 59, 60, 61, 62, 63, 64, 66, 75, 76, 306։

Հովհաննես Դրասխանակերտցի 5, 7, 14, 15, 21, 24, 32, 57, 60, 61, 62, 63, 75, 76, 79, 80, 85, 86, 87, 88, 89, 91, 92, 93, 99, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 121, 122, 123, 192, 230, 242, 253, 255, 265, 266, 267, 268, 269, 270, 280, 299, 300, 301, 302, 303, 306, 307, 311, 312, 313, 314, 315, 317, 333։

Հովհաննես, Սյունիքի եպիսկոպոս (981—987), 277։

Հովհաննես, Սյունիքի եպիսկոպոս (880—918), 92, 163, 200, 206, 207, 257, 258, 261, 262, 264, 273, 277, 288։

Հովհաննես, կաթողիկոս, 108, 118, 138։

Հովհաննես Օվաեցի, կաթողիկոս, 76։

Հրահատ, Բղեն գավառի իշխան, 333։

Հրահատ I, Գեղաքունիքի իշխան, Սահակի որդին, 75, 307, 308, 309։

Հրահատ II, Գրիգոր Սուփան I-ի որդին, 84, 308, 309, 311—312։

Հրահատ, Կովսական-Քաշունիքի իշխան Սահակի որդին, 141, 142, 163, 167, 288, 289, 319, 320, 321, 322։

Հրահատ, Սյունիքի գահակալ իշխան Գրիգորի որդին, 317, 318, 319։

Հուդուդ ալ-Ալամի, արաբ պատմիչ, 247։

Հուռ 194, 324։

Ձ

Ձագիկ I 96, 153, 163, 182, 322—326, 328, 329։

Ձագիկ II 137, 323, 324, 328, 329—330, 331։

Ղ

Ղազար Փարպեցի 7, 11։

Ղևոնդ 7, 22, 24, 97։

Մ

Մալխասյան Ս. 216, 219, 226, 249։

Մամուն, արաբական խալիֆ, 51, 63, 64։

Մանանդյան Հ. 18, 28, 29, 47, 135, 144, 150, 168, 169, 170, 171, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 184, 185, 192, 194, 195, 202, 203, 204, 216, 217, 218, 219, 220, 224, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 248, 249, 250, 259, 260։

Մանկիկ, քորեպիսկոպոս, 180։

Մառ Ն. 251, 265։

Մասուդ, արաբ պատմիչ, 17, 37, 39, 54։

Մարիամ, Աշոտ Բագրատունու դուստրը, 85, 89, 91, 110, 161, 241, 309, 312։

Մարկվարտ Յ. 16, 58, 59, 60, 65, 74։

Մարխ Կ. 135, 214, 215, 221, 222, 227, 284։

Մեսրոպ Մաշտոց 7։

Մեսրովբ Աշեպիսկոպոս Սըմբատյանց 95, 96։

Մյուլլեր Ա. 43։

Մովսես Խորենացի 7, 11, 24, 32։

Մովսես Կաղանկատուացի 5, 24, 48, 49, 50, 51, 52, 53, 66, 68, 80, 81, 243, 286, 290, 291, 296, 297, 298, 308, 311, 333։

Մրվան, արաբ զորավար, 52։

Մուհամմեդ Բ Սուլեյման-ալ-Ազդի ան Սամարքանդի, Հայաստանի արաբ կառավարիչ, 65, 66։

Մուհամմեդ Տաբարի, տե՛ս Տաբարի։

Մուշեղ, Սմբատ Թագավորի որդին, 109, 110։

Մուսթասիմ, արաբական խալիֆ, 64, 67։

Մուրացան 270։

Յ

Յակոբի, արաբ պատմիչ, 16, 58, 60, 61, 63, 64, 65, 66։

Յակուտ, արաբ պատմիչ, 242։

Յամպոլսկի Զ. Ի. 39, 44։

Յուսուֆ, արաբ զորավար, 33, 82, 99, 101, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 114, 119, 120, 122, 126, 132, 191, 253, 254, 255, 256, 263, 264, 267, 297, 298, 303, 313, 314, 326։

Ն

Ներսեհ 52։

Ներսես 7։

Նար, արաբ զորավար, 122, 302։

Շ

Շահանդուխտ, Աղվանքի գահերից իշխանի դուստրը, 33, 276։

Շահանդուխտ, Բաղքի Վասակ Թագավորի մայրը, 279։

Շահխաթունյաց Հ. 242։

Շահնազարյան Ան. 61։

Շահումյան Ստեփան 83։

Շապուհ Ամատունի 21։

Շապուհ Բագրատունի, պատմիչ, 5, 241, 249, 334։

Շիրվան, արաբական էմիր, բաբեկյանների կրոնի սկզբնավորող, 39, 40։

Շուշան, Աշոտ գահերեցի կինը, 107, 113, 194, 297։

Չ

Չամչյանց Մ. 33, 59, 70, 79, 80։

41

Պ

Պետրոսյան Պ. 243։

Պետրոս, Սյունիքի եպիսկոպոս, 7։

Ջ

Ջալալյանց Ս. 232, 280։

Ջավախիշվիլի Ի. (Ջավախով) 151, 183, 184, 194, 199, 209, 236, 258, 274, 277, 278, 279, 281, 282։

Ջավիտան, խուրամիդների շարժման ղեկավար, 35, 36, 39։

Ջևանշեր I, Ջագիկ I-ի որդին, 137, 163, 167, 322, 223, 325, 326, 328, 329, 331։

Ջևանշեր II, Ջագիկ II-ի որդին, 128, 129, 133, 131, 328, 330—332։

Ջևանշեր, Կովսական-Քաշունիքի գահակալ իշխան Սահակի որդին, 321, 322։

Ջևանշեր, ըստ Հորանի Սահակ մեծ նահապետի որդին, 307։

Ռ

Ռոստոմ, Բաբեկի զորքի հրամանատարներից մեկը, 68։

Ս

Սադուկ իբն-Ալի (Զուրայֆ), Հայաստանի և Ատրպատականի արաբ կառավարիչ, 51։

Սահակ, Աղվանքի կաթողիկոս, 126, 128։

Սահակ, Արշակունյաց եպիսկոպոս, 216։

Սահակ, գահակալ իշխան, Աշոտ գահերեցի որդին, 95, 107, 113, 116, 119, 121, 122, 123, 132, 133, 134, 137, 298, 299, 300—302, 303, 304, 305, 325, 326։

Սահակ, Գեղաքունիքի գահակալ իշխան, Վասակ I-ի որդին, 25, 26, 31, 32, 58, 60, 62, 63, 74, 75, 77, 148, 149, 152, 179, 286, 287, 306—307, 308, 309։

Սահակ, Վասակ Գարուռի որդին, 33, 88, 108, 110, 116, 117, 118, 137, 179, 289, 311, 312, 313, 314—315։

Սահակ, Կովսական-Քաշունիքի գահակալ իշխան, 33, 319, 320, 321, 322։

Սահակ Սևադա, Գարդմանի իշխան, 119։

Սահլ, Աղվանքի իշխան, 38, 65, 66, 71, 72, 73, 74։

Սամվել, եպիսկոպոս, 277։

Սամվել Կամրջաձորեցի, պատմիչ, 7։

Սամվելյան Խաչիկ 18, 135, 136, 137, 139, 140, 141, 143, 145, 146, 169, 170, 172, 174, 177, 187, 188, 189, 190, 191, 196, 227։

Սրուկն, տե՛ս Նսր։

Սեբեոս, պատմիչ, 24, 245։

Սենեքերիմ, Բաղքի Թագավոր, 34։

Սիմեոն, Շաղատի վանական, 180։

Սիսակ, ըստ Մ. Խորենացու, Սյունիքի առաջին նահապետ, 33։

Սմբատ Բագրատունի, հայոց սպարապետ, 58, 60, 61, 62, 63, 75, 76, 85, 87։

Սմբատ I, Բագրատունյաց թագավոր, 16, 92, 93, 94, 95, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 136, 139, 140, 192, 254, 266, 267, 294, 298, 314, 327։

Սմբատ I, Սյունիքի գահերեց իշխան, 95, 99, 100, 101, 102, 106, 107, 108, 110, 113, 115, 116, 119, 121, 122, 123, 125, 128, 129, 131, 132, 136, 137, 165, 191, 194, 207, 210, 246, 257, 262, 263, 264, 265, 276, 291, 293, 298—300, 301, 302, 303, 304, 305, 325, 327, 331։

Սմբատ Բագրատունի, Սմբատ I թագավորի եղբոր որդին, 109, 110։

Սմբատ, Գաբավոնցի իշխան, 121։

Սմբատ II, Սյունիքի գահերեց իշխան, ապա թագավոր, 34, 132,, 134, 151, 302, 304—305, 331։

Սմբատ Զարեհավանցի 55։

Սմբատյանց Մ. 197, 237, 242, 243, 244, 245, 246, 248։

Սմբատ Օրբելյան 5։

Սողոմոն, մաքենացոց վանքի առաջնորդ, 7։

Սողոմոն, Տաթևի վանքի եպիսկոպոս, 163, 175, 215, 241, 318։

Սոփի, Սմբատ I գահերեցի կինը, 107, 194, 276, 300, 303։

Ստալին Ի. Վ. 43։

Ստեփանոս Աբլասադ, Բաղասականի իշխան, 38, 49, 53, 68։

Ստեփանոս Ասողիկ 126, 230, 242, 297։

Ստեփանոս, անանուն իշխանի որդին, Գևորգի եղբայրը, 333։

Ստեփանոս, եպիսկոպոս, 160, 233։

Ստեփանոս, Մեծոփոնի վանական, 180։

Ստեփանոս Օրբելյան 5, 6, 7, 8, 9, 12, 13, 14, 22, 23, 24, 25, 26, 27, 29, 31, 32, 33, 34, 48, 49, 52, 53, 56, 58, 73, 75, 76, 77, 78, 79, 80, 84, 85, 86, 87, 88, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 98, 102, 103, 106, 107, 108, 109, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 145, 146, 150, 151, 152, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 167, 175, 176, 178, 182, 183, 184, 185, 193, 194, 197, 198, 200, 207, 208, 210, 215, 216, 217, 222, 223, 224, 225, 226, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 237, 238, 239, 241, 244, 246, 248, 249, 253, 255, 256, 257, 258, 260, 261, 262, 263, 265, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318,

319, 320, 321, 322, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334։

Սևադա իբն-Աբդըլ-Համիդ ալ-Գաննաֆ. տե՛ս Ավառանչան Սևադա։

Սևադա, Բաղքի Վասակ թագավորի եղբայրը, 278, 279։

Վ

Վահան, Բաբգեն I-ի որդին, 84, 291—292։

Վահան, Գողթն գավառի իշխան Խոսրովի որդին, 97։

Վահան I, Զաքիկ I-ի որդին, 323, 324, 326, 327—328։

Վահան II, Ջևանշեր I-ի որդին, 132, 277, 327, 328—329։

Վաչագան, Աղվանքի թագավոր, 177, 178, 180։

Վասակ I, 23, 24, 25, 26, 27, 30, 31, 32, 33, 38, 48, 49, 50, 52, 74, 146, 148, 152, 158, 286—287, 288, 289, 290, 291, 306, 315, 316, 320, 323, 325։

Վասակ (II) Իշխանիկ 78, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 93, 100, 179, 217, 276, 288, 289, 292—294, 296, 311, 317, 332, 333։

Վասակ III 107, 108, 110, 116, 119, 121, 293, 298, 301, 302—303։

Վասակ IV 131, 132, 133, 134, 300, 301, 303—304, 305։

Վասակ Գաբուռ 84, 86, 87, 88, 151, 246, 308, 310—311, 312, 314։

Վասակ, Բաղքի թագավոր, 278, 279։

Վասակ, Զաքիկ II-ի որդին, 330—332։

Վասակ, Վասակ Գաբուռի որդին, 88, 108, 110, 115, 116, 117, 118, 119, 137, 191, 311, 312, 313, 314—315։

Վասակ, Նախարար, 154։

Վարազ-Տրդատ 52։

Վարդան Արևելցի 5, 34, 52, 58, 60, 70, 78, 94, 293, 296, 333։

Վեստ Սարգիս Սյունեցի 191։

Տ

Տաբարի, արաբ պատմիչ, 16, 35, 36, 37, 50, 51, 64, 67, 69, 71, 72, 73։

Տեր Աստեփանոսեան, Փիլիպպե I-ի 839 թվակիր սիգելում հիշատակված վկա, 333։

Տեր Վահան, Փիլիպպե I-ի 839 թվակիր սիգելում հիշատակված վկա, 334։

Տեր Վարդան, Փիլիպպե I-ի 839 թվակիր սիգելում հիշատակված վկա, 333։

Տիգրան, Կովսական-Քաշունիքի գահակալ իշխան, 321, 322։

Տիգրան մեծ նահապետ 333։

Տուռնեբիզ Ֆ. 135։

Ց

Ուխտանես 7։

Փ

Փավստոս Բյուզանդ 154։

Փիլիպպե I 24, 25, 31, 32, 77, 80, 137, 138, 141, 142, 148, 152, 153, 162, 163, 286, 287, 288, 289, 290, 291, 293, 296, 306, 316, 317, 318, 319, 320, 324, 325, 333, 334։

Փիլիպպե II 93, 125, 142, 146, 164, 165, 167, 178, 179, 180, 185, 294—295, 296, 333։

Փիլիպպե, *եպիսկոպոս*, 160։

Ք

Քուպղիդուխտ, *Սյունիքի Վասակ I իշխանի դուստրը*, 31, 163, 178, 179, 288, 289, 290, 320, 321։

Քուրդ, *Սյունիքի իշխան*, 23, 24։

Քուրդ, *սիգելում նշված վկա*, 194, 324։

Օ

Օրմանյան Մ. 197։

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ադրբեջան 17։

Ագատ, *գյուղաքաղաք*, 243։

Աղաբ, *գյուղ*, 249։

Աղահեջ (Քաշուրաղ կամ Խոժոռաբերդ), *գավառ*, 66, 124, 231։

Աղկալա, *գյուղ*, 242։

Աղվանք, 49, 50, 53, 54, 55, 56, 57, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 74, 137, 140, 178, 192, 260, 323։

Աղուերծ, *գյուղ*, 142, 165։

Ամարաս, *գավառ Պարսկաստանում*, 50, 68, 69։

Ամենափրկիչ, *մատուռ*, 245։

Անգլիա 177։

Անի, *քաղաք*, 246, 247։

Անմեռ, *գյուղ*, 249։

Առան (*Աղվանք*), 193։

Ավելադաշտ, *տե՛ս Բերդ*։

Ատրպատական, 22, 35, 36, 47, 48, 51, 53, 55, 57, 65, 70, 71, 92, 94, 100, 103, 104, 113, 122, 124, 125, 130, 193, 253։

Արարատյան նահանգ 95, 248, 271։

Արագած 16։

Արաքս, *գետ*, 122։

Արծիվ, *գյուղ*, 77, 162, 185, 309։

Արծնի *քաղաք* 246։

Արճեշ, *բաղաք*, 193։

Արցախի լեռներ 49։

Արցախի նահանգ 35, 50, 54, 55, 57, 66, 67, 68, 70, 110։

Արուսի, *գյուղ Բաղք գավառում*, 163, 167, 225, 226, 238, 321։

Արքուլիք, *գավառ*, 231, 232։

Արևիք, *գավառ*, 95, 124, 140, 248։

Բ

Բազ (Բաղդ), *քաղաք-ամրոց*, 35, 36, 37, 42։

Բազարչայ, *գյուղ*, 248։

Բաղաբերդ (Կապանի) 248, 327։

Բաղասական, գավառ, 49, 50, 52, 53։

Բաղդադ 52, 55, 65։

Բաղմ, գավառ, 26, 34, 51, 52, 66, 85, 89, 95, 96, 113, 119, 122, 124, 125, 128, 133, 134, 158, 160, 163, 231, 247, 274, 278, 286, 287, 288, 293, 296, 299, 301, 305, 321, 322, 323, 325, 326, 327, 330, 331, 332։

Բաղմ (մյուս), տե՛ս Քաշունիք։

Բեխ, գյուղ, 163, 225, 226, 238, 321։

Բերդ, գյուղ, 208, 210, 211, 258, 272, 273, 274, 275, 300։

Բերդկաներեշ, գյուղ, 77, 162, 185։

Բերդկունք, գյուղաքաղաք, 242, 244, 245։

Բերդկունք — Մամեենիս, հանապարհ, 247։

Բերդկունք — Կոր, հանապարհ, 246։

Բերգեղ 193։

Բերձոր, գավառ, 50, 68։

Բոեն, գավառ, 332։

Բյուզանդիա 21, 64, 71, 72։

Բոդաշեն, ձկնորսական կայան Սևանա լճի ափին, 184։

Բոսեձոր, գավառ, 130։

Բոտեն, գյուղ, 249։

Բուսա, գավառ, 130։

Գ

Գառնի 161, 164։

Գավառ (Ծմակ), քաղաք, 245։

Գարդման, գավառ, 85, 110, 323։

Գեղամքակ, տե՛ս Վասակաշեն։

Գեղամա գավառ, տե՛ս Գեղարքունիք։

Գեղամա երկիր, տե՛ս Գեղարքունիք։

Գեղամա լեռներ 248։

Գեղամա ծով, տե՛ս Սևանա լիճ։

Գեղարքունիք, գավառ, 26, 27, 32, 33, 34, 51, 52, 56, 62, 63, 70, 74, 75, 77, 78, 84, 85, 86, 87, 88, 89, 91, 95, 96, 107, 108, 110, 115, 117, 118, 119, 124, 125, 130, 148, 150, 161, 162, 233, 245, 247, 248, 286, 287, 293, 306, 308, 309, 312, 313, 314, 315, 316, 318, 333։

Գզլ-Գաղ, գյուղ, 243։

Գզլ-վանք, գյուղ, 243։

Գյուտ քահանայի եկեղեցի, 159։

Գնդեվանք 162, 166։

Գներ, գյուղ, 161, 309։

Գողթն, գավառ, 97, 98, 120, 121, 124, 125, 130, 228, 229, 230, 303։

Գոչո վանք, 260, 280։

Գրիգոր Լուսավորչի («Ս. Նշան») եկեղեցի 163։

Գուգարք 107, 113։

Դ

Դաբիլ, տե՛ս Դվին։

Դարատափ, գյուղ, 163, 175, 318։

Դեղձաձոր, գյուղ, 249։

Դիզակ, գավառ, 68, 261։

Դվին 63, 64, 85, 86, 88, 106, 108, 109, 110, 112, 113, 122, 123, 126, 193, 220, 241, 247, 300, 303։

Դվին—Երևան—Ելենովկա—Բերդ-կունք — Նոր Բայազետ — Կոր, հանապարհ, 242։

Դվին— Բաշնորաշեն —Սիսաջան—Աղթեղ—Կոր (Սելիմի լեռնանցքով), հանապարհ, 242։

Դվին—Պարտավ, հանապարհ, 241, 242, 243, 245, 246։

Ե

Ելենովկա—Կոր, հանապարհ, 247,

Եղեգյաց ձոր, գյուղ, 165, 166, 275։

Եղեգիք (Եղեգիս), գյուղաքաղաք, 123, 246, 300։

Եվրոպա, 144, 168, 175, 185, 196։

Երասխ, գետ, 68, 103, 108։

Երասխաձոր, գյուղ, 111։

Երիշատ, գավառ, 231, 232։

Երնջակ, բերդ, 76, 303։

Երնջակ, գավառ, 95, 107, 120, 121, 124, 125, 130, 296, 299։

Երևան 161, 248։

Է

Էջմիածին 65, 74, 243։

Թ

Թալիշի լեռներ 35, 36։

Թանհադի եկեղեցի 159։

Թիֆլիս, 64, 66, 104։

Թուխ, գետ, 94, 313։

Ի

Իսպահան 37, 64։

Իրան 57, 65։

Լ

Լեհաստան 182։

Լեռնային Համադանի մարզ 37։

Խ

Խլաթ 193։

Խոտ, գյուղ, 138, 211, 217, 220 295։

Խոտակերաց վանք 162, 166, 297։

Ծ

Ծաձաղ, գյուղ, 132, 134։

Ծղուկ, գավառ, 33, 34, 48, 49, 55, 75, 89, 119, 124, 125, 133, 134, 140։

Ծոր, տե՛ս Սոթ։

Կ

Կանգար 111։

Կոսպան, քաղաք, 124, 131, 132, 133, 247, 323, 326, 331։

Կավակերտ, գյուղ, 63, 75, 306, 307։

Կարբին, գետ, 249։

Կարճավան, գյուղ, 140։

Կիլիկիա 5։

Կղարջ, գավառ, 108։

Կնիք, *քաղաք, 245։*

Կոր, *գյուղաքաղաք, 161, 241, 244, 249։*

Կոթավանք *(Կոթի Աստվածածին վանք) 162, 244։*

Կոթաքար, *տե՛ս Կոթ։*

Կոր—Մաքենիս—Զոր—Հաթերք—Կաղանկատույք—Պարտավ, *հանապարհ, 242։*

Կովսական (Գեամ), *գավառ, 26, 113, 124, 142, 163, 231, 247, 319, 325։*

Կոկուս (Կոկուկ), *գյուղ, 165, 167։*

Կորդված լեռներ *113։*

Հ

Հաբանդ, *գավառ, 26, 50, 88, 93, 124, 165, 217, 287, 295, 296։*

Հաբանդ, *գյուղաքաղաք, 247։*

Հալիս, *գետ, 292։*

Հակարի *301, 305։*

Համադան *57, 61, 64, 65, 66։*

Հայաստան *17, 18, 19, 28, 47, 48, 51, 54, 55, 57, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 69, 70, 74, 81, 83, 88, 90, 91, 96, 106, 108, 114, 115, 122, 126, 135, 136, 140, 144, 149, 157, 158, 159, 169, 170, 171, 172, 177, 181, 182, 185, 189, 192, 193, 196, 202, 203, 204, 212, 216, 227, 239, 240, 247, 248, 251, 252, 253, 255, 259, 262, 265, 266, 267, 270, 271, 272, 296, 297, 311։*

Հայրեվանք *242։*

Հարժիք (Հաժիս), *գյուղ, 132, 140, 274։*

Հովանու վանք *162։*

Հրազդան *62, 63։*

Հուրբականխոռ, *գյուղ, 142, 165։*

Զ

Զագեձորի գավառ *146, 164։*

Զկնավանառ, *վայր, 109։*

Զոր, *տե՛ս Սոթ։*

Զորք, *գավառ, 124, 326։*

Ղ

Ղարադաղ *35։*

Ճ

Ճանուկ (Ջանուկ, Շանապանս), *գավառ, 26, 89, 119, 124, 125, 132, 134, 296, 299, 304։*

Մ

Մաճ, *գյուղ, 163, 288, 289, 320։*

Մանազկերտ *100։*

Մաքենացոց վանք *159, 243, 247, 249։*

Մաքենիս, *գյուղ, 242։*

Մեղրի, *գյուղ, 248։*

Մերձավոր Արևելք *125։*

Միափոր, *գավառ, 110։*

Մխանք, *գավառ, 50։*

Մոզան, *վայր, 160։*

Մրեն, *գյուղաքաղաք, 215, 216, 217։*

Մուղան *67, 68, 69։*

Ն

Նախչևան *95, 96, 97, 98, 99, 102, 122, 124, 125, 130, 137, 216, 217, 231, 296, 299։*

Ներքին Ադիաման, *գյուղ, 244։*

Նիգ, *գավառ, 109, 313։*

Նորատուսի վանք *301։*

Նորաշեն, *գյուղ, 112։*

Նորաշինիկ, *գյուղ, 149, 163, 167, 319։*

Նորավանք, *վանք Բզեն գավառում, 333։*

Նոր Բայազետ *242, 245։*

Շ

Շախատի եկեղեցի *159։*

Շանապավանք (Ճանուկ), *գավառ, 287։*

Շաղատ, *գյուղաքաղաք, 248։*

Շարուրի դաշտ *103։*

Շամ, *քաղաք, 38։*

Շիրակ, *գավառ, 56, 75, 82, 84, 85, 94, 104, 114, 119, 126։*

Շեներ, *գյուղ, 89, 93, 124, 287, 295, 296։*

Շողագա վանք *162։*

Շողուագ, *գյուղ, 161, 309։*

Շոռ, *Վարարակ գետի վտակը, 164։*

Ո

Ուդուատ (Օդուատ), *գավառ, 130, 231, 232։*

Զ

Զամուրլու, *գյուղ, 243։*

Պ

Պազկանք, *գավառ, 50։*

Պարսկաստան *52 68։*

Պարտավ *242։*

Ջ

Ջուղա *232։*

Ջուրզան, *մարզ, 193։*

Ռ

Ռուսաստան *182։*

Ս

Սամարա *86։*

Սասուն *80, 82։*

Սիսաջան, *մարզ, 193։*

Սիրաջտայր, *մարզ, 193։*

Սյունաց լեռներ *49։*

Սոդ, *տե՛ս Սոթ։*

Սոթ, *Սոթ գավառի իշխանանիստ կենտրոն, 245, 333։*

Սևանի եկեղեցի *184։*

Սևանա լիճ *111, 184, 243, 287, 306, 311, 313։*

Սևանա կղզի *110, 161։*

Վ

Վանանավանք, վանք Բաղրի գավառում, 326, 328։

Վաղարշակերտ 111։

Վայկունիք, գավառ, 50, 68։

Վայոց ձոր, գավառ, 26, 27, 34, 78, 80, 84, 89, 95, 102, 119, 121, 123, 124, 125, 130, 132, 133, 134, 246, 247, 287, 293, 296, 299, 300, 304, 305։

Վանեվանի վանք 249։

Վասակաշեն (Բասար-գեղար), գյուղաքաղաք, 245, 246։

Վասպուրական, նահանգ, 25, 82, 83, 85, 97, 98, 101, 105, 107, 113, 114, 126, 137, 138, 196, 329։

Վարարակ, գետ, 146, 164, 182, 241, 295։

Վրաստան. 57, 64, 66, 67, 74, 192։

Տ

Տաթև, գյուղ, 6, 77, 130, 138, 141, 142, 156, 160, 162, 167, 209, 230, 235, 257, 278, 319, 331։

Տաթևի վանք 8, 130, 131, 132, 134, 136, 138, 140, 142, 146, 153, 162, 163, 164, 165, 166, 175, 182, 183, 185, 186, 199, 200, 203, 208, 226, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 241, 248, 255, 258, 264, 265, 274, 276, 277, 279, 281, 283, 292, 305, 309, 318, 328, 329։

Տամալեկ (Տամալես), գյուղ, 200, 205, 206, 207, 208, 210, 255, 258, 273, 274, 276, 300։

Տանձատափ, գյուղ, 139, 237, 274։

Տաշտակերտ, գյուղ, 329։

Տաշիր 111։

Տարոն, գավառ, 70, 76, 82, 83, 85։

Տրի, գավառ, 50։

Յ

Յաֆուտ, վայր, 165, 182։

Յոր, տե՛ս Յուր։

Յուր, գյուղ, 139, 200, 205, 206, 207, 208, 210, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 272, 273, 274, 276, 277, 278, 279, 280, 282։

Յուրաբերդ, տե՛ս Յուր։

Յուրմար, տե՛ս Յուր։

Ռ

Ռոտիֆ, նահանգ, 103։

Փ

Փայտակարան, քաղաք, 38։

Փորակ, գավառ, 231, 232։

Ք

Քաշունիք, գավառ, 26, 124, 247, 301, 319, 320, 325, 326։

Քարեվանք, գյուղ, 165, 275։

Քարեվանքի եկեղեցի 166։

329-1958

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հեղինակի կողմից 3

Աղբյուրների համառոտ տեսություն 5

Գլուխ առաջին

Սյունիքի հաղթական պատմությունը 9—10-րդ դարերում . . . 20

1. Սյունիքի ներքին կացությունը 9-րդ դարի սկզբին 22
2. Սյունիքը և բարեկյան շարժումը 34
3. Սյունիքը 9-րդ դարի կեսերին 74
4. Սյունիքը հայկական պետականության վերականգնման շրջանում (9-րդ դարի երկրորդ կեսին) . . 84
5. Սյունիքը 10-րդ դարի առաջին քառորդում 103
6. Սյունիքը Բագրատ թագավորության կազմավորման նախօրյակին 125

Գլուխ երկրորդ

Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Սյունիքում 9—10-րդ դարերում 135

1. Հողատիրության իրավունքն ու ձևերը 135
2. Գյուղացիության սոցիալական և իրավական վիճակը 197
3. Ֆեոդալական շահագործման ձևերը 214
4. Տնտեսական կյանքի վերելքը 9—10-րդ դարերի Սյունիքում 239

Գլուխ երրորդ

Դասակարգային պայքարը Սյունիքում 10-րդ դարում 252

Հավելված

Իշխանական տների վերլուծումը 285

Առաջին ճյուղ— Գահերեց իշխանների տունը 286

Երկրորդ ճյուղ— Գեղաքունյաց դահակալ իշխանների տունը 306

Երրորդ ճյուղ— Գահակալ իշխան Գրիգորի տունը . . 315
Չորրորդ ճյուղ— Կոմսական-Բաշունեքի գահակալ իշխանների տունը 319
Հինգերորդ ճյուղ— Բաղքի Զաքիկյանների գահակալ իշխանների տունը 322
Անհայտ մի քանի իշխաններ 332
Օգտագործված գրականություն 335
Сюник в IX—X веках 358
Sunik during the IX—X centuries 358

Անձնանունների ցանկ 363
Տեղանունների ցանկ 373

ՀԱՅԿԱՐԱՄ ՄՈՒՐԱԴԻ ՈՒԹՄԱՋՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԸ IX—X ԴԱՐԵՐՈՒՄ

Գրատ. խմբագիր՝ Արմ. Շ. Հակոբյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովսեփյան
Սրբագրող սրբագրիչ՝ Խ. Պ. Ղարիբյան

ՎՖ 07147 Պատվեր 580 Տիրաժ 3000

ԵրՊՀ Խմբ.— հրատ. խորհ-ի որոշում № 2, 14/II 58թ.: Իջեցված է արտադրություն 7/V 1958 թ.: Ստորագրված է տպագրության 29/IX 1958 թ.: Թուղթ՝ 84×108 1/32: Տպ. 23,75 մամ. = պայմ. 19,40 մամ.: Հաշվ. հրատ. 18,15 մամ., հեղ. 17,82 մամուլ: Գինը 12 ռ. 90 կ.:

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91:

ՍՅՈՒՆԻՔԱՄԱ Է 1971 Թ.
329—1958